

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРАРАТ АКОПЯН

СТАНОВЛЕНИЕ ОДНОПАРТИЙНОГО РЕЖИМА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(1920-е ГОДЫ)

ЕРЕВАН
ИНСТИТУТ ИСТОРИИ
2016

1012810 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա 102448

ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
143

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
143

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2016

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 177

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Հ. Մ. Հարությունյան**

Հակոբյան Արարատ
Հ 177 Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ) / Ա. Հակոբյան, խմբ.՝ Հ. Հարությունյան.- Եր.: Պատմության ինստիտուտ, 2016. – 366 էջ:

Աշխատության մեջ փորձ է արված Խորհրդային Ռուսաստանի օրինակով ներկայացնել բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի (ռեժիմի) ձևավորման գործընթացը Հայաստանում 1920-ական թվականներին: Քննության են առնված այդ համակարգին բնորոշ մի շարք հարցեր՝ մենիշխանության առաջացման նախադրյալները, խորհրդային իշխանության բնույթն ու կառուցվածքը, ընտրական համակարգը, իշխանության թևերի սահմանազատման խնդիրը, կուսակցական նոմենկլատուրայի ձևավորումը, ներկուսակցական բանավեճերը, դրանց դրսևորումներն ու առանձնահատկությունները Հայաստանում և այլն:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին, քաղաքագետներին, իրավագետներին, սոցիոլոգներին և առհասարակ ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-32-9

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016
© Ա. Հակոբյան, 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ինձ կարելի է պարտադրել մի օտարոտի ռեժիմ, բայց ինձ չի կարելի դարձնել հասկանալի և ընդունելի»[1]:

Գ. Նժդեհ

Մեր ժամանակներում ԽՄԿԿ և խորհրդային պետության պատմության պատմագիտական նոր պահանջներով ու մեթոդաբանությամբ նորովի, օբյեկտիվ և անկողմնակալ դիրքերից լուսաբանման անհրաժեշտություն կա: Խոսքը վերաբերում է առաջին հերթին մի հզոր կուսակցության, որը 20-րդ դարում Ռուսաստանի և համաշխարհային պատմության մեջ ճակատագրական դեր է խաղացել: ՌՍԴԲԿ - ՌԿ(բ)Կ - ՀամԿ(բ)Կ - ԽՄԿԿ անվանումներով հանդես եկող այդ կուսակցությունն իր անցած բարդ ու հակասական, սովորական կուսակցություններին ոչ բնորոշ ծայրահեղ արմատական, ոչ ստանդարտ ռազմավարության ու մարտավարության ընթացքում հսկայական փորձ է կուտակել, ինչը օգտակար և ուսանելի կարող է լինել 21-րդ դարում նոր մարտահրավերներին դիմակայելու տեսակետից:

ԽՍՀՄ փլուզումով և կոմունիստական ամբողջատիրության վերացումով խորհրդային նախկին տարածքի երկրները, այդ թվում նաև Հայաստանը թևակոխել են պատմական զարգացումների մի նոր ժամանակաշրջան: Հետխորհրդային երկրներում քաղաքական նոր վարչակարգերի ընտրության ու հաստատման խնդիր է ծառացած: Քաղաքական նոր համակարգերի փնտրտուքի ճանապարհին անհրաժեշտ է անդրադառնալ նախորդ համակարգերի հետազոտմանը, դրանց պատմական փորձի վերհանմանը, թույլ տրված ձախողումների պատճառների բացահայտմանը և այլն:

---

[1] *Նժդեհ* Գ., Հատընտիր. Ե., 2006. էջ 663–664:

Այն վարչակարգը, որի մասին խոսք կլինի ստորև, վերաբերում է 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում ձևավորված խորհրդային-կոմունիստական կամ բոլշևիկյան վարչակարգին, որը ժամանակակից պատմագիտական ու քաղաքագիտական չափանիշներով որակվում է ոչ ժողովրդավարական: Խնդրի ուսումնասիրությունը որոշակի հետաքրքրություն է իրենից ներկայացնում նաև ռեգիոնալ մակարդակով՝ ԽՄԿԿ ազգային կազմակերպությունների, մեր պարագայում Հայաստանի կոմունիստական կուսակցության (Հայկոմկուսի) ու Խորհրդային Հայաստանի պետական ու քաղաքական համակարգերի պատմության հարցերին նոր ժամանակների պահանջներով լուսաբանելը: Անշուշտ, լենինյան կուսակցությունն է եղել խորհրդային բազմազգ երկրի միակ ու անբաժան ղեկավար և ուղղություն տվող քաղաքական ուժը: Բայց միաժամանակ այդ քաղաքականությունը փոխասվել, կրկնօրինակվել ու տեղայնացվել է տվյալ հանրապետության կոմկուսի՝ իբրև մարզային կազմակերպության կողմից՝ առանձին դեպքերում հաշվի առնելով իրենց տեղական պայմաններն ու առանձնահատկությունները:

Հարց է ծագում՝ ինչ կարիք կա անդրադառնալ արդեն պատմություն դարձած կոմունիստական միակուսակցական վարչակարգի պատմության ծալքերի լուսաբանմանը: Մեր կարծիքով՝ թե՛ նախկին Միության և թե՛ ռեգիոնալ առումով թեմայի հետազոտումը հույժ արդիական է այն իմաստով, որ ներկա փուլում կուսակցական ու անձնիշխանական մենատիրության վերահաստատման վտանգ կա հետխորհրդային տարածքի մի շարք երկրներում, այդ թվում, ցավոք, նաև Հայաստանում: Վերջին տասնամյակներում ՀՀ պետական իշխանության ղեկին հայտնված կուսակցությունները հանդես են գալիս ժողովրդավարական արժեքների հաստատման կարգախոսներով, սակայն նրանց կողմից ձևավորված պետական կառավարման համակարգի ու վարվող քաղաքականության բովանդակությունը շատ կողմերով կաղում է, մնում է հինը: Այստեղ խնդրի բարդությունն այն է, որ տասնամյակներ շարու-

նակ ամբողջատիրական համակարգին սովոր ու վարժված հայ հասարությունը և նրա ներկայիս քաղաքական ղեկավարությունը իներցիայի ուժով, դարձյալ ժողովրդավարության կեղծ կարգախոսներով շարունակում են նախկին մտածելակերպը և գործելակերպը, ինչը երկիրը կարող է տանել հնի ռեստավրացիայի: Այդ իսկ պատճառով հույժ անհրաժեշտ է պատմագիտության ժամանակակից պահանջներով, մոտեցումներով ու մեթոդաբանությամբ վեր հանել հին վարչակարգի էությունը, բացերն ու թերությունները, հաշվի առնել անցյալի փորձն ու դասերը, որպեսզի դրանք այլևս չկրկնվեն մեր ժամանակներում:

Սույն աշխատանքում խնդիր ենք դրել ընդհանուր գծերով հետևել 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանում կոմունիստական մենատիրության ձևավորման գործընթացներին: Հասկանալի է, որ Հայաստանում հաստատված կուսակցական մենատիրությունը հիմնականում կրկնել ու պատճենահանել է Ռուսաստանի ու ԽՍՀՄ-ի օրինակը և չէր էլ կարող այլ կերպ լինել, որովհետև Հայաստանը համարվում էր այդ միության օրգանական մասը, այնտեղ ընդունված օրենքները, որոշումները, կիրառված քաղաքականությունը տեղայնացվում էր Հայաստանում՝ իհարկե, հաշվի առնելով տեղական պայմանները ու առանձնահատկությունները: Մի խոսքով՝ առանց Խորհրդային Ռուսաստանում հաստատված բոլշևիկյան մենատիրական համակարգի ձևավորման ու հաստատման պատմության իմացության՝ անհնար է հասկանալ ու ներկայացնել Հայաստանում կատարվածը:

Խորհրդային ժամանակաշրջանում կոմկուսի պատմության տեսաբանները, խորհրդային պատմաբանները, հասարակագետները, կուսակցական գործիչները կոմունիստական գաղափարախոսության ու մեթոդաբանության դիրքերից կանգ են առել խորհրդային պետական ապարատի ստեղծման, միակուսակցական քաղաքական համակարգի (վարչակարգի) ձևավորման ու

հաստատման հիմնահարցերին՝ դրանք ներկայացնելով որպես միակ հնարավոր և օրինաչափ գործընթաց[1]:

ԽՍՀՄ փլուզումը և խորհրդային-կոմունիստական վարչակարգի վերացումը հրատապ դարձրեց քաղաքական նոր համակարգերի փնտրտուքի ճանապարհին ապակուսակցական դիրքերից, գիտական հիմունքներով անդրադառնալու նախորդ համակարգի հետազոտմանը, խորհրդային միակուսակցական վարչակարգի պատմական փորձի ուսումնասիրմանը, նրա ձախողման պատճառների բացահայտմանը և այլն: Ռուսաստանի և հետխորհրդային պատմաբանները, փիլիսոփաները, քաղաքագետները վերջին տասնամյակներին հաջողությամբ ուսումնասիրում են Ռուսաստանի խորհրդային քաղաքական համակարգի պատմության փորձն ու դասերը: Լույս են տեսել բազում մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, պաշտպանվել ատենախոսական թեզեր[2]:

---

[1] *Чугаев Г. А.*, Слом буржуазной государственной машины и создание советского государственного аппарата (см. Победа Великой Октябрьской социалистической революции, сборник документов, М., 1957, *Морозов Б. М.*, Создание и укрепление советского государственного аппарата (ноябрь 1917 г. – март 1919 г.), М., 1957, *Гимпельсон Е. Г.*, Из истории строительства Советов (ноябрь 1917 г. – июль 1918 г.), М., 1958, *Калинин Г. С.*, Великая Октябрьская социалистическая революция и создание Советского государства, М., 1959, *Ирошников М. П.*, Создание советского центрального государственного аппарата (октябрь 1917 – январь 1918 г.) М., 1966, Непролетарские партии России. Уроки истории, под ред. И. Минца, М., 1984 и др.

[2] *Восленский М. С.*, Номенклатура. Господствующий класс Советского Союза, Бонн, 1980, М., 1991, *Верт Н.*, История Советского государства. 1900–1991, М., 1992, *Трукан Г. А.*, Путь к тоталитаризму, М., 1994, *Павлова И. В.*, Сталинизм, Новосибирск, 1994, *Олех Г. Л.*, Партийная машина РКП(б) в начале 20-х годов, Новосибирск, 1995, *Николаевский Б. И.*, Тайные страницы истории, М., 1995, «Сталинское Политбюро в 30-е годы», М., 1995, «Большевистское руководства. Переписка (1912–1927)», сборник документов, М., 1996, *Латышев А. Г.*, Рассекреченный Ленин, М., 1996, *Ивницкий Н. А.*, Коллективизация и раскулачивание (начало 30-х годов), М., 1996, Политическая история Российского государства, под. ред. Ш. М. Мунчаева, М., 1998, *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, *Павлов Д. Б.*, Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 – середина 1950-х годов, М., 1999, *Арутюнов А.*, Досье Ленина без ретуши. Документы. Факты. Свидетельства, М., 1999, *Гимпельсон Е. Г.*, НЭП и советская политическая система, М., 2000, Политбюро ЦК РКП(б) – ВКП(б) и Европа. Решения «Особой папки», 1923–1939, М., 2001, «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в

Տեղին է արձանագրել, որ հետխորհրդային պատմաբանների մոտ հիմնականում միասնական կարծիք է ձևավորվել խորհրդային պետության քաղաքական պատմության շրջափուլերի վերաբերյալ. 1. Քաղաքացիական կռիվների շրջան՝ 1917-1920 թթ., (Հայաստանի պարագայում այդ շրջանը կարելի է համարել 1921 թ. փետրվար-հուլիս ամիսները), 2. ՆԷՊ-ի պայմաններում միակուսակցական վարչակարգի ձևավորում՝ 1921-1928 թթ., 3. ՆԷՊ-ի փակում և մենատիրական համակարգի ու Ստալինի ավտորիտար (անձնիշխանության) հաստատում՝ 1929-1936 թթ., 4. Ստալինի անձի պաշտամունքի պայմաններում ամբողջատիրական (տոտալիտար) համակարգի ձևավորում՝ 1930-ական թվականների կեսերից - 1950-ական թվականների սկիզբ և 5. կուսակցական-բյուրոկրատական ամբողջատիրական վարչակարգի հետագա կատարելագործում՝ 1950-ական թվականների կեսերից մինչև ԽՍՀՄ փլուզումը ու ԽՄԿԿ մենաշնորհի իշխանության վերացումը՝ 1990-1991 թթ.: Հասկանալի է, որ ՀՍԽՀ և Հայկոմկուսի մենատիրական ու ամբողջատիրական վարչակարգերի պատմությունը տեղավորվում է վերը նշված պարբերացման մեջ:

Եթե 1920-ական թվականներին ձևավորված վարչակարգը բնորոշվում էր որպես կուսակցական մենատիրություն, ապա 1930-ական թվականների կեսերից հաստատվում է կուսակցական-բյուրոկրատական ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ: Ընդ որում՝ 1930-1950-ական թվականների կոմկուսի ամբողջատիրությունը և Ստալինի անձի պաշտամունքի երևույթը հանդես եկան միասնաբար՝ փոխլրացնելով իրար: Հետագա տասնամյակներին կոմունիստական ամբողջատիրական համակարգը, իր դժվարություններով ու սոցիալական որոշակի ձեռքբերումներով հանդերձ, շարունակվեց մինչև 1990-ականի սկիզբը:

стране (1922–1934 гг.), т. 1–8, М., 2001–2004, История России XX век (1894–1939), ответст. ред. Зубов А. Б., М., 2009, ***Туфанов Е. В.***, Формирование советской политической системы в 1917–1920 гг., (диссертация к.и.н., автореферат), Рязан, 2013, История Коммунистической партии Советского Союза, ответст. ред. Безбородов А. Б., М., 1014 и др.

Արդյունքում՝ ԽՍՀՄ փլուզումով վերջ տրվեց նաև կոմունիստական ամբողջատիրությանը:

Հետխորհրդային վերջին տասնամյակներին Հայաստանում ևս որոշ աշխատանք կատարվել է (չենք խոսում քաղաքագետների, փիլիսոփաների, իրավագետների, սոցիոլոգների աշխատությունների մասին) խորհրդային միակուսակցական վարչակարգի ձևավորման պատմությունը ժամանակակից պատմագիտության պահանջներին ու չափանիշներին համապատասխան գիտական մշակման ուղղությամբ[1]: Սակայն նշված հետազոտողները հատուկ խնդիր ու նպատակ չեն դրել իրենց առջև ուսումնասիրելու Խորհրդային Հայաստանի քաղաքական վարչակարգը: Նման խնդրի բարձրացումը բարդ է ու տարողունակ, որովհետև այն դրսևորվել է խորհրդային պետության ու հասարակության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, նույնիսկ մարդկանց սոցիալական կյանքում, մտածելակերպում, հոգևոր-մշակութային ոլորտներում, խնդիրներ, որոնք կարող են ուսումնասիրության առանձին նյութ դառնալ սոցիոլոգների, փիլիսոփաների, մշակութաբանների և այլոց համար: Այդ իսկ պատճառով մենք խնդիր ենք դրել կանգ առնել ՀՍԽՀ քաղաքական վարչակարգի ձևավորման մի քանի հարցերին: Դրանք են՝ միակուսակցական իշխանության բնույթը, խոր-

---

[1] *Ղազախնցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, Հայոց պատմություն, նախնագիտ Բարխուդարյան Վ. Բ., հ. 4, գ. 1, Ե., 2010, *Մանուկյան Ա. Ս.*, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում (1920–1953 թթ.), Ե., 1999, Մանուկյան Ա. Ս., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Ե., 2002, Հայոց պատմություն. 1900-1939, նյութերի ժողովածու (Ամնոիսյան Հ., Ղազախնցյան Վ., Սահակյան Ռ., Գասպարյան Ռ.), Ե., 1993, *Ստեփանյանց Ս.*, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994, *Խաչատրյան Կ.*, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, *Սուքիասյան Հ.*, ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գործունեությունը 1920–1922 թթ., (ատենախոսություն), Ե., 2009, *Մանուկյան Ա. Ս.*, Քաղաքական կուսակցությունների լուծարումը խորհրդային Հայաստանում 1920-ական թթ. (ատենախոսության սեղմագիր), Ե., 2012, *Ժամհարյան Գ.*, Աջորեականության պատմության բովանդակությունն ու խնդիրները, Հայոց պատմության հարցեր, (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2012, *Աբրահամյան Հ.*, Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցության ՀՀ-ում որպես ժողովրդավարության կարևոր գործոն (1991–2012), Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես), Ե., 2013, *Հարությունյան Հ. Մ.*, Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Ե., 2015 և ուրիշներ:

հրդոայինն ընտրական համակարգը, կուսակցական անվանակարգի (նոմենկլատուրայի) ձևավորումը, իշխանության թևերի սահմանազատման ու հակակշռման խնդիրը, ներկուսակցական բանավեճերը (դիսկուսիաները) և այլն: Հետազոտվող խնդիրը լավ պատկերացնելու համար հարկ եղած դեպքում անդրադարձ ենք կատարել Ռուսաստանում կոմունիստական վարչակարգի առաջացման պատմաքաղաքական ակունքներին և բոլշևիկյան կուսակցության մենատիրության ձևավորման գաղափարական-ծրագրային հիմքերին (նախադրյալներին):

Մեր առջև դրված խնդիրները վեր հանելու և լուծում տալու համար որպես պատմագիտական-աղբյուրագիտական հիմք օգտագործել ենք մեծաքանակ արխիվային ու վավերագիր նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ, կուսակցական պետական համակարգի աշխատող գործիչների հուշագրություններ, հաշվետվություններ, զեկուցագրեր ու ամփոփագրեր, հին ու հատկապես ժամանակակից տեսական-մեթոդական նոր դիրքերից շարադրված պատմագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական գրականություն, ժամանակաշրջանի պարբերական մամուլ և այլն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԷՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. Մենիշևիանության առաջացման պատմաքաղաքական նախադրյալները

Մեր առջև դրված խնդիրը լավ հասկանալու համար պարզաբանման կարիք ունեն խորհրդային-կոմունիստական վարչակարգի ձևավորման պատմաքաղաքական հիմքերը և գաղափարական նախադրյալները: Բոլշևիկյան վարչակարգի ձևավորումն ու հաստատումը, անշուշտ, ունեցել է իր պատմական ակունքներն ու նախադրյալները: Ռուսաստանցի պատմաբան հետազոտողները նկատել են, որ Ռուսաստանի պատմական զարգացման յուրահատուկ ու ծանր ընթացքը՝ վարյագներ, Ոսկե հորդա, Լիվոնյան օրդեն, Լիտվա-լեհական ներխուժում, ցարական միահեծան վարչակարգ, ճորտային համակարգ, գյուղացիական ապստամբություններ, դեկաբրիստական և հեղափոխական նարոդնիկական շարժումները և այլն, դրանք, անշուշտ, իրենց դրոշմն են թողել նաև Խորհրդային Ռուսաստանի բռնատիրական բնույթի վրա[1]: Այս կապակցությամբ հարց է ծագում. ի՞նչ կապ կա նախընթաց դարերի ռուսական միապետության (դեսպոտիզմի) և 20-րդ դարում Ռու-

[1] Политическая история Российского государства, под ред. Мунчаева Ш. М., М., 1998, с. 25, Политические партии России, под ред. проф. Завелева А. И. и др., М., 2000, с. 484, История России XX век (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 897, 899 и др.

սաստանում հաստատված բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի միջև: Առաջին հայացքից թվում է, թե՝ ոչ մի կապ, որովհետև դրանք տարբեր ժամանակների, հասարակական-տնտեսական տարբեր ֆորմացիաների երևույթներ են: Բայց երբ խորքային ենք նայում, ապա, այնուամենայնիվ, տեսնում ենք դրանց միջև առկա ներքին ընդհանրական կապ: Արդ փորձենք մի քանի ընդհանրական գծերով ցույց տալ դա:

Ռուսաստանի քաղաքական պատմության ամենաբնորոշ կողմերից մեկը ցարական իշխանական, ապա ինքնակալական-կայսերական, կարելի է ասել, ասիական, կիսամոնոպոլ-թաթարական բոնապետական կառավարման գծեր ժառանգած վարչակարգի առկայությունն էր: Ինքնակալական համակարգը պաշտոնապես ներկայացվել է որպես Ռուսաստանի կառավարման բնորոշ միակ ձև ու քաղաքական արժեք: Այսպես՝ ինքնակալական համակարգի գաղափարական հիմնավորմանն էր նվիրված Ռուսաստանի 1830-1840-ական թվականների Լուսավորության նախարար կոմս Սերգեյ Ուվարովի առաջ քաշած եռմիասնական հիմնադրույթը ինքնակալության, ուղղափառության և ժողովրդայնության մասին, որը ստացել է «**պաշտոնական ժողովրդայնություն**» տեսություն անվանումը: 1833 թ. նոյեմբերին կայսր Նիկոլայ I-ին ուղղված զեկուցագրում նա զարգացնում էր այն միտքը, որ «**Ինքնակալությունը** (ընդգծումը հեղինակինն է - Ա. Հ.) Ռուսաստանի քաղաքական գոյության գլխավոր պայմանն է»,[1] և, որ «Ռուսաստանի յուրահատկությունն այն է, որ ինքնակալությունը համարվում է նրա կառավարման միակ հնարավոր ձևը»[2]:

Դարերի ընթացքում ռուս հասարակայնության սոցիալական տարբեր խմբեր ու խավեր հարմարվել ու ընտելացել էին այդ համակարգին՝ **իբրև բնական վիճակ**: Նման պայմաններում ռուսական ցարերն ու կայսրերը հակայածավալ այդ երկիրը համարել են որպես իրենց **սեփականություն**՝ ուղել, վոտչինա կամ կալվածք

---

[1] Орлов А. С. и др., Хрестоматия по истории России, М., 2009, с. 245.
[2] Орлов А. С. и др., История России, М., 2002, с. 231.

Պատմությունից հայտնի է, որ նրանք ոչ թե կառավարել են երկիրը, այլ տիրել, իշխել են որպես տոհմական ուղեղային կալվածք: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիր **Գ. Վ. Պլեխանովը** ՌՍԴԲԿ 4-րդ (Միավորիչ) համագումարում (1906 թ. ապրիլ), ելույթ ունենալով սոցիալ-դեմոկրատների ագրարային ծրագրի մասին, նշում էր. «Մեզ մոտ գործը դասավորվել է այնպես, որ հողը հողագործների հետ միասին ամրացվեց պետությանը և դրա հիման վրա էլ զարգացավ **ռուսական դեսպոտիզմը** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[1]: Խոսելով ցարական միապետության դերի մասին՝ փիլիսոփա Անդրեյ Մեդուշևսկին եզրահանգում էր. «...միապետությունը Ռուսաստանում եղել է ոչ միայն խորհրդանիշ, այլև իշխանության իրական կրող»[2]: Նույն կերպ, պատմական թռիչք կատարելով դեպի 20-րդ դար՝ դեպի խորհրդային ժամանակաշրջան, կարելի է տեսնել, որ հողը, արտադրության մյուս միջոցները, հարստությունները և այլն ազգայնացնելու կամ պետականացնելու, տիրելու և յուրօրինակ «ուղեղային կալվածք»-ի վերածելու ձգտումը հեշտությամբ ընդօրինակվեց ու բնորոշ դարձավ խորհրդային-բոլշևիկյան վարչակարգին: Ինչպես ցարիզմի, այնպես էլ կոմունիստական կուսակցության օրոք իշխանությանը ամեն ինչ թույլատրելի էր, երկու դեպքում էլ նա կոպտորեն միջամտում էր հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին: Օրինակ՝ խորհրդային պետությունում բավականին տևական ժամանակ (1930-ականներից մինչև 1950-ական թվականների սկզբները) կոլտնտեսականները չեն ունեցել անձնագիր, այլ խոսքով՝ գործնականում գրկված են եղել սոցիալական տեղաշարժի հնարավորությունից ու այդպիսով՝ մինչոեֆորման Ռուսաստանի բազմամիլիոն ճորտերի նման, ըստ էության, ամրացված էին հողին, կախված կուսակցական-պետական վարչակարգից: Շատ ավելի դաժան ու մասշտաբային է եղել կոմկուսի բռնաճնշիչ (ռեպրեսիվ) մեքենան:

---

[1] Четвертый (Объединительный) съезд Р.С. – Д. Р. П., М., 1934, с. 61.

[2] *Медушевский А. Н.,* Причины крушения демократической республики в России 1917 года, «Отечественная история», М., 2007, N 6, с. 24.

Դրա համար էլ ժամանակակից շատ հեղինակներ խորհրդային պետության բնույթը համարում են ոչ պակաս բռնապետական, քան ցարականը[1]:

Ռուս ժողովրդի սոցիալական հոգեկերտվածքի բնորոշ գծերից է «**համայնքը**», կոլեկտիվ համակեցությունը: Ռուս հանրույթը դարերով ապրել է համայնական կյանքով: «Համայնք» արժեքային համակարգը գտնվել է առաջին պլանում, որը պաշտպանել է մարդուն, ապահովել հավասարություն ու արդարություն կոլեկտիվում, ձևավորել ռուս մարդու վարքագիծն ու իդեալները: Այստեղից էլ՝ առաջնային են եղել համայնքի, կոլեկտիվի շահերը, իսկ կոնկրետ անձի, մարդու շահը կարծես մղվել է երկրորդական պլան: Եվ ռուսաստանցու ավանդական հոգեբանության մեջ արմատացել է այն գիտակցությունը, որ անձնականը պետք է զոհաբերվի կոլեկտիվի, ընդհանուրի, ինչու՞ չէ, նաև պետականի շահերին: «Մեզանում,- խորհում էր 19-րդ դարի ռուս մեծ մտածող, ռուսական ուտոպիական սոցիալիզմի հիմնադիր **Ալ. Գերցենը**,- անձը միշտ եղել է ճնշված, կլանված, չի ձգտել նույնիսկ հանդես գալ: Մեզանում ազատ խոսքը միշտ համարվել է հանդգնություն, ինքնուրույնությունը՝ դավադրություն. մարդը կորչում էր պետության մեջ, լուծվում համայնքի մեջ»[2]: Բոլշևիկ առաջնորդները իրենց գաղափարախոսությունը նյութականացնելիս և վարչակարգը ձևավորելիս, ըստ ամենայնի, հաշվի են առել նաև ռուս մարդու մեջ նստած համայնքային, կոլեկտիվ մտածողության գիտակցությունը, անձնականը պետական շահին զոհաբերելու պատրաստակամությունը և այլն: Եվ այս իմաստով հսկայական են վելիկոռուս ժողովրդի ծառայությունն ու զոհաբերությունները իր հայրենիքի, պետականության ամրակայման, ծավալման ու հզորացման գործում: Սակայն մյուս կողմից՝ նա իր անսպառ, անձնազոհ ծառա-

---

[1] История Отечество. Краткий очерк, вып. 2, М., 1992, с. 2, 18, *Ивницкий Н. А.*, Коллективизация и раскулачивание в начале 30-х годов. По материалам Политбюро ЦК ВКП(б) и ОГПУ, М., 1996, с. 33–34, Политическая история Российского государства, под ред. Мунчаева Ш. М., М., 1998, с. 25.

[2] *Գերցեն Ա. Ի.*, Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. 2, Ե., 1950, էջ 14:

յությունների դիմաց, իր անձնական, ստեղծագործ կյանքի, իր ազատության ու իրավունքների համար բավարար հատույց չի ստացել: Այս կապակցությամբ դիպուկ է ռուս մեկ այլ մեծ մտածող և փիլիսոփա **Նիկոլայ Բերդյաևի** հետևյալ միտքը. «Ռուս ժողովուրդը ռուսական պետության ստեղծման համար մեծ զոհողություններ կրեց, շատ արյուն հեղեց, սակայն ինքը մնաց առանց իշխանության իր անծայրածիր պետությունում»[1]: Ռուսական հազարամյա պետության գերնպատակը եղել է **պետականության ամրապնդումը**: Ռուսաստանցի մարդը համարվել է այդ պետական մեքենայի մի պտուտակը (վինտիկը): Փաստորեն այդպես էր ցարիզմի շրջանում, գործնականում այդպես մնաց նաև խորհրդային համակարգում:

19-րդ դարի երկրորդ կեսից Արևմտյան Եվրոպայից Ռուսաստան թափանցող սոցիալիզմի գաղափարները ռուսական իրականության մեջ պարարտ հող գտան, որովհետև, ինչպես արդեն նշվեց, սոցիալիզմին բնորոշ համայնական, սոցիալական արդարության կեցության ձևը այնտեղ ունեցել է հազարամյա պատմություն: Եվ պատահական չէ, որ ռուսական նարոդնիկները ռուս մուժիկին համարում էին ի ծնե սոցիալիստ: Եթե ռուս ուտոպիստ սոցիալիստ նարոդնիկները իրենց բոլոր չափավոր ու ծայրահեղ թևերով ու դրսևորումներով այդ գործոնը չկարողացան օգտագործել, ապա այն հաջողությամբ օգտագործեցին ու կյանքի կոչեցին ռուսական հեղափոխական մարքսիստ-բոլշևիկները՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ: 20-րդ դարասկզբին նրանք, մարքսիզմի գաղափարները ձևափոխելով, հարմարեցրին ռուսական իրականությանը և միաժամանակ որդեգրելով նարոդնիկների հեղափոխական-ահաբեկչական (կացնի) գործելակերպը, որին կարծես վարժվել ու սովոր էր ռուս մուժիկն ու հանրույթը. մի քանի փորձերից հետո, ի վերջո, կարողացան 1917 թ. գրավել իշխանությունը և պահել իրենց ձեռքում:

---

[1] *Бердяев Н.*, Судьба России, М., 1990, с. 7.

Ռուսաստանում, այդ թվում նաև Հայաստանում մենիշխանության հաստատման ոչ պակաս կարևոր նախադրյալներից մեկն էլ բնակչության քաղաքական ցածր կուլտուրան էր, կրթական ցածր մակարդակը: Ուշագրավ է նաև, որ Ռուսաստանում 1917 թ. իշխանությունը ստանձնեց մի կուսակցություն, որը հատկանշվում էր նրա անդամների կրթական թերևս ամենացածր մակարդակով: Այսպես, օրինակ, Սահմանադիր ժողովում բոլշևիկյան խմբակցության ընդամենը 44 տոկոսն ուներ բարձրագույն կրթություն, 15-ը՝ միջնակարգ և 41-ը՝ տարրական: Համեմատության համար փաստենք, որ այդ նույն ժամանակ էսէռներն ունեին համապատասխանաբար 51, 17 և 31 տոկոս, մենշևիկները՝ 90, 5 և 5, իսկ կադետները՝ 91 տոկոս բարձրագույն, 9 տոկոս՝ միջնակարգ, իսկ տարրական՝ 0 տոկոս[1]: Ավելի ուշ շրջանի վերաբերյալ տվյալներ կան, որ, օրինակ, 1925 թ. ՀամԿ(բ)Կ շարքերի միայն մեկ տոկոսն է ունեցել բարձրագույն կրթություն[2]: Հայաստանում ևս կոմունիստները առանձնապես աչքի չեն ընկել կրթական բարձր ցենզով: 1924 թ. ՀՍԽՀ ընդամենը 4032 կոմունիստներից բարձրագույն կրթություն են ունեցել 53 մարդ կամ 1,3 տոկոս, միջնակարգ՝ 427 կամ 10,6, տարրական՝ 3037 կամ 75,3, ոչ տառաճանաչ՝ 506 մարդ կամ 12,6 տոկոս, իսկ 9 հոգու կամ 0,2 տոկոսի վերաբերյալ ոչինչ չի նշված[3]: Պատկերը շատ ավելի տխուր էր կոմկուսի ռեզերվ համարվող կոմերիտմիության շրջանում: ՀԼԿԵՄ ԿԿ-ի 1922 թ. աշնանը ներկայացված հաշվետվությամբ հանրապետության ընդամենը 6987 կոմերիտականներից (14-ից մինչև 28 տարեկան) անգրագետ էր 2911-ը կամ 41,7 տոկոսը[4]: Ստացվում էր, որ 1920-ական թվականներին սոցիալիզմ էր կառուցվում մի երկրում, ուր առավել ևս շարքային բնակչության կեսից ավելին անգրագետ էր: Մինչդեռ հայտնի է, որ անգրագիտության գերիշխման ու քաղաքական

[1] История Коммунистической партии Советского Союза. отв. ред. Безбородов А. Б., М., 2014, с. 150.
[2] *Щетинов Ю. А.*, նշվ. աշխ., էջ 156:
[3] Компартия Армении в цифрах и документах, 1920–1980. Е., 1980, с. 20.
[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 488, ց. 1, գ. 25, թ 75:

ցածր մշակույթի պայմաններում կարելի է հասարակությանը հեշտությամբ համոզել ու պարտադրել ցանկացած արտաքուստ հրապուրիչ թվացող գաղափար կամ սոցիալական մոդել: Այդ նույն սոցիալական ու քաղաքական մոդելը հեշտությամբ պարտադրվեց հայ ժողովրդին, որը կապված էր ոչ այնքան ժողովրդի գաղափարական համոզմունքի, որքան՝ 1920 թ. աշնանը նրա գլխին կախված ֆիզիկական բնաջնջման նոր վտանգի հետ:

Մեր կարծիքով՝ 1917 թ. իշխանությունը գրաված բոլշևիկների կուսակցությունը կարողացավ օգտագործել ռուս էթնիկ հանրությանը բնորոշ այդ յուրահատկությունները և վերահաստատել մի վարչակարգ, որն այնքան էլ խորթ ու հեռու չէր ռուս մարդու ընկալումներից: Այդ վարչակարգի գաղափարախոսությունը առավել գրավիչ էր նաև այն իմաստով, որ ծավալապաշտական էր, քանզի հանդես էր գալիս համաշխարհային հեղափոխության և համաշխարհային սոցիալիզմի հաղթանակի կարգախոսներով, որի կենտրոնը, ինչպես կասեր Ե. Չարենցը, լինելու էր «Աշխարհի կենտրոն Մոսկովը», իսկ կառավարությունը՝ «Համաշխարհային Սովնարխոզը»: Ռուսական հասարակության համար ընդունելի համարվեց կոմունիստական գաղափարախոսությունը հիմնականում այն պատճառով, որովհետև բոլշևիկ առաջնորդները կարողացան ստեղծել ԽՍՀՄ տիպի կայսրություն, հետագայում կոմինտերնական ծրագրերով հույս էր փայփայվում հասնելու համաշխարհային հեղափոխության և ռուս ժողովրդի առաջնորդությամբ՝ համաշխարհային սոցիալիստական ու կոմունիստական հասարակարգի հաղթանակի: Այս իմաստով Լենինը, Ստալինը, Տրոցկին, Բուխարինը և բոլշևիկ մյուս առաջնորդները լավ հասկանում էին, թե ինչ է հարկավոր ռուս հանրությանը: Դրա համար էլ վերականգնեցին նախկին կայսրությունը նոր՝ ԽՍՀՄ անվանումով: Սրանք գաղափարներ ու կարգախոսներ էին, որոնք արտահայտում էին վելիկոռուս ժողովրդի ազգային մեծապետական ձգտումները և շահերը:

Ահա՛, սրանցում է կապը հնի և նորի միջև: Հայտնի է, որ ռուս մուժիկը հավատ ու պաշտամունք է ունեցել ցարի հանդեպ և իբրև աղոթք ու օրհներգ երգել է՝ «Աստված պահի ցարին»: Ռուսաստանի պատմությունից կարելի է բազմաթիվ նահատակված ցարեր ու թագաժառանգներ մատնանշել, ովքեր սրբացվել են: Բնականաբար այլ կերպափոխմամբ պաշտամունքի այդ երևույթը պետք է փոխանցվեր խորհրդային պետության ղեկավարներին՝ Վ. Լենինին, Ի. Ստալինին և կոմունիստական կուսակցության մյուս առաջնորդներին, մանավանդ որ այդ կուսակցությունն ու նրա առաջնորդները կարողացան ապահովել խորհրդային պետության ծավալապաշտական նկրտումներն ու գերհզորությունը ամբողջ աշխարհում: Սրանք ինքնին պետք է հիմք հանդիսանային կոմկուսի և նրա առավել վաստակ ունեցած ղեկավարների առանձնահատուկ բարձր դիրքի ու պաշտամունքի համար: Դրա ապացույցներից մեկը տակավին պահպանվող Լենինի մումիան է: Վերը բերվածից հետևում է, որ եթե ցարը ծավալապաշտ էր, Լենին-Ստալինը՝ նույնպես՝ այլ կարգախոսներով, կնշանակի՝ ռուսական ցարերը և Լենին-Ստալինը ռուս ժողովրդի հոգում ու գիտակցության մեջ, ըստ էության, նույնացվում են: Հայ գրող, հասարակական և պետական գործիչ Լ. Շանթը ևս Արևմտյան Եվրոպայից Ռուսաստան ներմուծված սոցիալիզմի գաղափարներից, փոխակերպված (տրանսֆորմացված) ռուսական իրականության ու հոգեբանության շաղախով, առաջացած **բոլշևիզմը** նույնացնում էր **ցարիզմի** հետ: Նա շատ բնական և անխուսափելի էր համարում «**բոլշևիզմի**, այսինքն՝ **սոցիալական ցարիզմի** (ընդգծումները հեղինակինն է - Ա. Հ.) երևան գալը Ռուսաստանում»[1]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանի համար պատմական սահմանագիծ էր, անցում դասային հասարակությունից դեպի քաղաքացիական հասարակության և միապետական համակարգից՝ հանրապետական կառավարման: Փետրը-

[1] *Շանթ Լ.,* Մեր անկախությունը, Ե., 2011, էջ 13:

վարյան հեղափոխության հռչակած իդեալները քաղաքացիական հասարակության, իրավական պետության, շուկայական տնտեսության, մարդու հիմնարար իրավունքների սահմանադրական երաշխիքների և այլնի վերաբերյալ համամարդկային արժեքներ էին: Սակայն Փետրվարին սկսված այդ գործընթացը մի քանի ամիս անց՝ Հոկտեմբերին, կասեցվեց: 19-րդ դարում ձևավորված ռուսական բուրժուազիան, ազատական ժողովրդավարական ուժերը ինչպես ռուսաստանյան 1-ին, այնպես էլ 2-րդ հեղափոխության ժամանակ քաղաքական առումով երկչոտ գտնվեցին և իրենց դիրքերը զիջեցին. 1-ին դեպքում միապետական-պահպանողական, իսկ 2-րդ դեպքում՝ «ձախ» արմատական ուժերին: Արդյունքում՝ Ռուսաստանը բռնեց կոմունիստական, ոչ ժողովրդավարական ուղի՝ դրանով աշխարհը բաժանելով երկու բևեռների: Այս կապակցությամբ կարելի է համաձայնել ռուս փիլիսոփա Սերգեյ Գավրովի այն եզրահանգմանը, որ սկսած Պետրոս 1-ի ժամանակներից (300 տարուց ավելի է)՝ Ռուսաստանը փորձել է **արդիականացվել**, սակայն որքան էլ ձգտել է հետապնդել, հասնել եվրոատլանտյան երկրներին (Արևմուտքին - Ա. Հ.), շարունակ հետ է մնացել: Ըստ հեղինակի՝ Ռուսաստանի համաշխարհային զարգացման շատ գործընթացներից հետ մնալու գլխավոր պատճառներից մեկն այն է, որ նրա արդիականացման գործընթացներում՝ **կայսերական** թե **ազատական** մոդելներից նա մշտապես նախապատվությունը տվել է առաջինին, որովհետև ռուսական հասարակական գիտակցության մեջ և սոցիալ-մշակութային հոգևկերտվածքում ավանդաբար նստած են կայսերապետական ձգտումները[1]: Ո՞րն էր պատճառը, որ ժողովրդավարական համակարգը չկարողացավ քննություն բռնել Ռուսաստանում: Այստեղ, անշուշտ, ինչպես արդեն ասվեց, իր դերն է խաղացել, Ռուսաստանի նախընթաց պատմաքաղաքական անցյալը, որը օբյեկտիվորեն նպաստել է բոլշևիկների ծրագրերի ու պլանների իրա-

[1] www.dissercat.com/content/modernizatsionnye-protsessy-y-rossit-sotsiokulturnyeaspekty

գործմանը: Բացի գործադրած բռնի ուժից ու քաղաքական դեմա գոգիայից՝ ռուս մեկ այլ հեղինակ Յու. Բեգունովի կարծիքով. «Ռուս մուժիկին ավելի գրավիչ էին հաշտության, հողի և սոցիա լիստական դրախտի մասին բոլշևիկյան կարգախոսները, քան ժամանակավոր կառավարության ազատական-դեմոկրատական գաղափարները»[1]: Խորհրդային վարչակարգը ընդօրինակեց նաև ցարական Ռուսաստանում գերիշխող հողի պետական սեփական նատիրության ձևը: Կայսրությունում մասնավոր հողային սեփա կանատիրական ինստիտուտը զարգացած չէր: Ռուսաստանի գյու ղացիական տնտեսությունների մեծամասնությունը պետական գյուղացիներ էին: Դրա համար էլ «Հողի մասին» բոլշևիկյան հան րահայտ դեկրետով առանց բարդությունների հողը ազգայնաց վեց կամ պետականացվեց: Ռուսաստանը եվրոպական բնույթի դասական կապիտալիզմ չապրեց: Դրա համար էլ նեպական Ռու սաստանում երկար ժամանակ՝ ընդհուպ մինչև համատարած կո լեկտիվացումը, երկրում պահպանվում էր տնտեսության բազմա կացութաձևությունը:

Բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի հաստատման նպաստող գործոններից էին նաև ցարիզմից ժառանգած ուռճա ցած **բյուրոկրատական ապարատը**, ժողովրդի սոցիալ-քաղա քական ու կրթական հետամնացությունը, սահմանադրության բա-ցակայությունը, ժողովրդավարական ինստիտուտների և ընտրա կան համակարգի չզարգացվածությունը, քաղաքական կուսակ-ցությունների, արհմիությունների և այլ հասարակական կազմա կերպությունների թույլ լինելը և այլն, որոնց մասին խոսք կլինի իր տեղում:

Չի կարելի ասել, թե Ստալինն է ստեղծել խորհրդային բյու ռոկրատական ապարատը: Հանդես բերելով պատմականության մոտեցում՝ կարելի է հավաստել, որ բյուրոկրատիայի երևույթը ևս գալիս է Ռուսաստանի պատմական անցյալից. ռուսական պետու թյան ու հասարակության անցյալի ավանդույթներից ու կառուց

---

[1] *Бегунов Юрий.* Тайная история масонов. М., 2007, с. 166.

վածքից, որոնք խորհրդային վարչակարգի պայմաններում Ի. Ստալինը զարգացրեց ու ավարտուն տեսքի բերեց: Հայտնի է, որ ցարական կայսրությունը պահվում էր մի վիթխարի բյուրոկրատական ապարատի, ոստիկանական և ռազմական ուժի միջոցով, ասել է թե, ռուսաստանյան ժողովուրդը մինչև խորհրդային վարչակարգը արդեն վարժվել էր բյուրոկրատական-ոստիկանական նման ապարատի: Կան տվյալներ, որ միայն 19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանի պետական չինովնիկների (պաշտոնյաների) թիվը մեծացել էր ավելի քան չորս անգամ[1]:

Բոլշևիկյան մենիշխանության հաստատման համար, անշուշտ, եղել են օբյեկտիվ պայմաններ: Կուսակցական մենիշխանության ու դիկտատուրայի հաստատումը պայմանավորված չէր Լենինի, Տրոցկու կամ Ստալինի ինչ-որ չար կամքով, այլ դա կարելի է բացատրել նաև տվյալ ժամանակաշրջանում առկա արտաքին ու ներքին պատմական բարդ գործոնթացներով, կապիտալիստական շրջապատման պայմաններում սոցիալիզմի շինարարության դժվարություններով, որոնք պահանջում էին կուսակցության և պետության կառավարման գերկենտրոնացում՝ ներքին սուր պայքար, բաղաքացիական պատերազմ, կապիտալի շրջափակում և այլն:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ պատահական չէր բոլշևիզմի հաղթանակը Ռուսաստանում: Մեր կարծիքով, Ռուսաստանի և ռուս մարդու հազարամյա պատմության փորձը ցույց է տալիս, որ նրանք վարժվել ու սովոր են եղել նվաճումների, ճնշումների, խառնակ ժամանակների, պայքարի, ապստամբությունների ու հեղափոխությունների: Եվ բոլշևիկյան կուսակցությունը կարողացավ օգտվել, Ալ. Գերցենի խոսքերով ասած, «Կացնի միջոցով» Ռուսաստանը վերափոխելու ռազմավարությունից: Բոլշևիկները եկան փոխարինելու ցարական-ինքնակալական վարչակարգին՝ կերպափոխված այլ կարգախոսներով, գաղա-

[1] Политическая история Российского государства, под ред. Мунчаева Ш. М., М., 1998, с. 28.

փարական ու քաղաքական այլ կառուցակարգերով՝ դարձյալ դրանք ծառայեցնելով Ռուսաստանի և ռուս ժողովրդի ազգային շահերին:

Հասկանալի է, որ այն վարչակարգը, որ խորհրդային իշխանության ձևով ստեղծվեց Ռուսաստանում, բնականաբար, պարտադրվեց այն երկրներին ու երկրամասերին, այդ թվում նաև Հայաստանին, որոնցում հաստատվեցին խորհրդային կարգեր ու կոմունիստական կուսակցության մենատիրական համակարգ: Վերջին հաշվով խորհրդային Ռուսաստանի գերիշխանություն և բոլշևիկյան վարչակարգ ընդունած ժողովուրդները, այդ թվում նաև խորհրդահայ ժողովուրդը հարմարվեցին ու հիմնական մասով ընդունեցին այդ վարչաձևը այն պատճառով, որ այդ բազմազգ ու հզոր պետության մեջ իրեն ավելի ապահով, անվտանգ ու պաշտպանված էր զգում, պետությունը կանգնած էր նրա թիկունքին, նա լավատես էր վաղվա օրվա նկատմամբ և այլն: Եվ այդ մտայնությունը Հայաստանի ներկայիս անկախացումից նույնիսկ տասնամյակներ անց՝ մինչ օրս էլ, շարունակվում է պահպանվել մարդկանց մտքում՝ հաճախ կարոտախտ առաջացնելով ոչ վաղ անցյալի բաղձալի օրերի հանդեպ:

2. *Պրոլետարիատի՞, թե՞ կուսակցության դիկտատուրա*

Բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի հաստատման ճանապարհին գլխավոր հիմնաքարը ամենքին հայտնի **պրոլետարիատի դիկտատուրայի** մասին հիմնադրույթն է: Ինչպես հայտնի է, պրոլետարիատի դիկտատուրայի մասին գաղափարը առաջին անգամ ընդհանուր ձևով առաջ են քաշել Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը 1845 թ. «Գերմանական գաղափարախոսություն» աշխատության մեջ: Այնուհետև այդ տեսադրույթը զարգացվել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» (1848 թ.), Կ. Մարքսի «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848-1850 թթ.» (1850 թ.), Կ. Մարքսի՝ Ի. Վայդեմայերին ուղղված 1852 թ. մարտի 5-ի նամա-

կում, նույնի՝ «Գոթայի ծրագրի քննադատությունը» (1875 թ.) և այլն: Վ. Լենինը վերցրեց պրոլետարիատի դիկտատուրայի մասին մարքսյան դրույթը և փորձեց կիրառել Ռուսաստանի պայմաններում:

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների պատկերացումով թե՛ դիկտատուրան և թե՛ դեմոկրատիան կրում են դասակարգային բնույթ: Պրոլետարիատի դիկտատուրայի տեսությունը ավելի կոնկրետ ու հանգամանորեն մշակել է Վ. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին՝ 1917 թ. օգոստոս-սեպտեմբերին՝ գրված «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ, որում, դեմ կանգնելով պետության մահացման մասին անարխիստական թեզին, պաշտպանեց կապիտալիզմից կոմունիզմի անցման շրջանում սոցիալիստական պետության անհրաժեշտությունը՝ պրոլետարիատի դիկտատուրայի ձևով: Ռուս ականավոր փիլիսոփա և հրապարակախոս Ն. Բերդյաևը իրավացիորեն նշում է, որ Վ. Լենինի համար մարքսիզմի տեսությունից ամենագլխավորը **պրոլետարիատի դիկտատուրայի** գաղափարն է[1]: Ըստ Լենինի՝ պրոլետարիատի դասակարգային դիկտատուրան իրականացվում է կոմունիստական կուսակցության միջոցով և նրա ղեկավարությամբ: «Պրոլետարիատի դիկտատուրան,- գրել է Վ. Լենինը,- հնարավոր է միայն կոմունիստական կուսակցության միջոցով և ոչ այլ կերպ»[2] Բոլշևիկ լենինականների համար պրոլետարիատի դիկտատուրան անհրաժեշտ էր՝ անխնա ճնշելու շահագործողների (բուրժուազիայի, կապիտալի, կալվածատերերի) դիմադրությունը և սոցիալիզմի կառուցման ճանապարհին վարելու հաղթական բաղաքացիական պատերազմ ու արմատախիլ անելու կապիտալիզմը[3]: Պրոլետարական հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի ծրագրային պլատֆորմով հանդես եկող բոլշևիկյան կուսակցությունը, բնականաբար, առաջնորդվել է **հեղափոխա-**

---

[1] *Бердяев Н. А.*. Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 103.

[2] *Լենին Վ. Ի.*, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետ՝ ԵԼԺ), հ. 43, Ե., 1982, էջ 50:

[3] *Մարքս Կ., Էնգելս Ֆ., Լենին Վ.*, Պրոլետարիատի դիկտատուրայի մասին, Ե., 1981, էջ 230-231:

կան բարոյականությամբ, որն ինքնին ենթադրում էր ամենից առաջ ուժի գործադրում, բռնություն: «Մենք ուզում ենք կազմակերպել բռնություն հանուն աշխատավորության շահերի,- ձևակերպել է Վ. Լենինը Համառուսաստանյան ԿԳԿ-ի 1917 թ. նոյեմբերի 21-ի (դեկտեմբերի 4-ի) նիստում տրված զեկուցման մեջ»[1]: Եվ այդ բռնության բարոյականությունը, ավելի ճիշտ, անբարոյականությունը դասակարգային պայքարի անվան տակ գործադրվեց ամբողջ երկրում, սոցիալական լայն շերտերի հանդեպ՝ իր հետևից բերելով սեփականազրկում, քայքայում, բռնություն ու կոտորած: Եվ սա այն դեպքում, երբ մարքս-լենինյան ուսմունքում պրոլետարիատի դիկտատուրան ներկայացվում է որպես «դեմոկրատիայի բարձրագույն տիպ»[2]: Ինչ խոսք կարող է լինել դեմոկրատիայի մասին, երբ պրոլետարիատի և ունեզրկվածների անունից հանդես եկող քաղաքական ուժը իր ստեղծած նոր՝ բռնության պետական մեքենայի միջոցով սեփականազրկում է սեփականատերերին, հաստատում է իր միակուսակցական քաղաքական իշխանությունը, հասարակական առանձին խավերին զրկում երկրի կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքից և այլն:

Ռուսաստանի հազարամյա պատմության փորձը ցույց է տալիս, որ դեմոկրատիայի և դիկտատուրայի երկընտրանքի հարցում ռուս ժողովուրդը գրեթե միշտ նախապատվությունը տվել է դիկտատուրային: Դրա հետևանքով էր, որ ցարիզմի տապալումից հետո կասեցվեց 1917 թ. Փետրվարյան ժողովրդավարական հեղափոխության հետագա ընթացքը և հոկտեմբերին ճանապարհ հարթվեց բոլշևիկյան միակուսակցական դիկտատուրայի համար: Դարձյալ ռուս մեծ մտածող Ն. Բերդյաևը, մեկնաբանելով Վ. Լենինի մտքերը դեմոկրատիայի և դիկտատուրայի հարցերում, նշում էր. «Լենինը գտնում էր, որ հետամնաց Ռուսաստանում, քաղաքացիների անազատ ու իրավազուրկ պայմաններում, ավելի հեշտ է

---

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 35, Ե., 1981, էջ 128:
[2] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 33, Ե., 1980, էջ XIX:

իրագործել պրոլետարիատի դիկտատուրան, քան արևմուտքի դեմոկրատիայի պայմաններում»[1]: Վ. Լենինի և բոլշևիկ մյուս ղեկավարների կարծիքով պրոլետարիատի դիկտատուրայի ձևով ուժեղ իշխանություն ստեղծելու համար բարեբախտություն է, որ Ռուսաստանը բոլոր առումներով հետամնաց է, քաղաքացիները դարերով սովոր են անազատությանը և իրավազրկությանը, և դրանք կհեշտացնեն իրագործել պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը բոլշևիկյան կուսակցության ավտորիտար մենիշխանության ձևով, մի բան, որ բոլորովին անհնարին էր իրագործել Արևմուտքի ժողովրդավարական և ազատության սովոր երկրների պայմաններում: Եվ դրանում Վ. Լենինը չէր սխալվում: Այստեղ նրան օգնության էին հասնում ռուսական նարոդնիկների տեսաղրույթները ռուսական հեղափոխության և սոցիալիզմի ինքնատիպության մասին: Վ. Լենինը ավելորդ էր համարում դեմոկրատական ազատությունները: Ըստ նրա՝ դրանք, ընդհակառակը, կխանգարեն Ռուսաստանում սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործին:

Ո՞ւմ էր ծառայելու պրոլետարիատի դիկտատուրան: Վ. Լենինի ընկալումով պրոլետարիատի դիկտատուրան՝ իբրև հարկադրանքի գործիք, մեծամասնության՝ աշխատավորության ճնշումն ու հարկադրանքն էր փոքրամասնության՝ նախկին շահագործողների հանդեպ: Իրոք, խորհրդային իշխանությունը պայքարում էր նախկին շահագործող դասակարգերի ու խավերի դեմ հանուն աշխատավորության շահերի: Խորհրդային իշխանության առաջին տարիներին իսկապես կատարվեց սեփականատերերի սեփականազրկում՝ հողի, գործարանների, բանկերի, տրանսպորտի և այլն, ու դրանց **ազգայնացում** կամ ավելի ստույգ **պետականացում**: Ընդ որում, պետականացվում էին ոչ միայն արտադրության միջոցները, նյութական ոլորտը, այլ նաև հոգևոր կյանքի ոլորտները: Հողի և արտադրության մյուս հիմնական միջոցների պետականացումը դարձավ կուսակցական դիկտատուրայի ու մենիշխանութ-

[1] *Бердяев Н. А.*, նշվ. աշխ., էջ 104:

յան հաստատման տնտեսական հիմքը: Սակայն մյուս կողմից էլ՝ այնպես չէ, որ միայն բոլշևիկներն են արտահայտել աշխատավորության շահերը: Բոլշևիկ-լենինյանների հակառակորդ համարվող քաղաքական կուսակցություններից շատերի սոցիալական հենարանը նույնպես համարվել են նաև բանվորներն ու գյուղացիները: Օրինակ, Սոցիալիստ հեղափոխականների (Էսէռների) կուսակցությունը, որն ամենախոշորն էր նախահեղափոխական Ռուսաստանում, ունեցել է գյուղացիների ու աշխատավորական զանգվածների շատ ավելի լայն հենարան, քան բոլշևիկները և անկեղծորեն արտահայտել է աշխատավոր գյուղացիության շահերն ու ձգտումները: Եվ պատահական չէ, որ բոլշևիկների կուսակցությունը Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո 1918 թ. հունվարին խորհուրդների Համառուսաստանյան 3-րդ համագումարում առերես ընդունեց էսէռների հողի **սոցիալիզացիայի** կամ համայնացման մասին ծրագիրը, բայց այն չկենսագործեց կյանքում: Նրանք սկզբում հողի սոցիալիզացիայի մասին օրենքը ընդունեցին տակտիկական նկատառումով, որովհետև գյուղացուսրտին ավելի մոտ էր այդ սկզբունքը, և հարկավոր էր ապահովել բանվորագյուղացիական դաշինքը: Իսկ երբ հետագայում էսէռների հետ «հաշիվները մաքրեցին» և իրենց քաղաքական դիրքերը ամրապնդեցին, գործողության մեջ դրվեց հողի ազգայնացման (պետականացման) սկզբունքը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հետագայում Հայաստանում: Նույնը կարելի է ասել մենշևիկների կուսակցության հարցում, որոնք բոլշևիկներից ոչ պակաս արտահայտել են բանվոր դասակարգի շահերը: Բայց հետագայում՝ 1920-ական թվականներից, երբ ազգայնացված այդ սեփականությունը սկսեց տնօրինել ու կառավարել միակուսակցական բյուրոկրատական ապարատը, արդյունքում խորհրդային երկրում ձևավորվեց **պետական կապիտալիզմ**,[1] և աշխատավորությունը՝ բան-

[1] Իր աշխատություններում Վ. Լենինը բանից ցնդգծել է պետական կապիտալիզմի կարևորությունը: Նա գրում էր, որ ՆԷՊ-ի պայմաններում «մենք ճանաչել ենք և կճանաչենք լոկ պետական (ընդգծումն Լենինինն է – Ա.Հ.) կապիտալիզմը, իսկ պե-

վորը, գյուղացին և այլն, սկսեց շահագործվել քողարկված ձևով, միակուսակցական ավտորիտար բյուրոկրատական-նոմենկլատուրայի կողմից՝ վերից վար: Քանի որ սոցիալիզմի խորհրդային մոդելի պայմաններում հողը, ընդերքը, արտադրության հիմնական միջոցները, հիմնարկները, բանկերը, տրանսպորտը և այլն համարվում են պետական սեփականություն, ուստի նման տնտեսակարգը հնարավոր չէ անվանել այլ կերպ, քան «պետական կապիտալիզմ»: 1917 թ. սեպտեմբերին Վ. Լենինը գրում էր. «Սոցիալիզմը ոչ այլ ինչ է, եթե ոչ **պետական-կապիտալիստական մոնոպոլիա** (ընդգծումը մերն է - Ա. Հ.), որն ուղղված է հօգուտ ամբողջ ժողովրդի»[1]: Այստեղ հանրային արտադրության մեջ շահագործողի և այդ բարիքի կամ, Կ. Մարքսի խոսքերով ասած, «հավելյալ արժեքի» հիմնական կորզողի ու յուրացնողի դերում գործնականում հանդես է գալիս կուսակցական-պետական վարչաբյուրոկրատական ապարատը: Պրոլետարիատի կամ բանվորագյուղացիական դաշինքի անունից վարչական իշխանությանը տնօրինող կուսակցությունը, պետականացնելով գրեթե ամեն ինչ, փաստորեն դարձավ դրա տերն ու տնօրենը: Զևի տեսակետից նա ներկայանում էր որպես համաժողովրդական սեփականություն, իսկ բովանդակության առումով դրա գերագույն սեփականատերը երկիրը կառավարող տվյալ կուսակցության վարչախումբն էր: Եվ որքան ամրապնդվում էր կուսակցական-պետական վարչակազմի դիրքերը, այնքան նրա ձեռքում էին կենտրոնանում երկրի տնտեսական, նյութական կարողությունները, իսկ աշխատավորները դառնում էին խորհրդային համակարգի, Վ. Լենինի բնորոշած, «պետական կապիտալիզմի» վարձու աշխատողներ: Ն. Բերդյաևը, բնութագրելով 1930-ական թվականներին Ռուսաստանում հաստատված վարչակարգը, այն համարում էր «պետական կապիտա-

---

տությունը դա մենք ենք, մենք՝ գիտակից բանվորներս, մենք՝ կոմունիստներս»: Իսկ մեկ այլ տեղ նա ուղղակի պնդում է, որ «Մենք ընդունում ենք միայն պետական կապիտալիզմ» (տես *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 44, Ե., 1982, էջ 469, 471 և այլն):

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 34, Ե., 1981, էջ 243–244:

լիզմի երկիր, որը կարող է շահագործել մասնավոր կապիտալիզ-մից ոչ պակաս»[1]: Դրա համար էլ նրա բնորոշմամբ՝ «Կոմունիզմը Ռուսաստանում ընդունեց ծայրահեղ **էտատիզմի** ձև՝ ընդգրկելով վիթխարի երկիրը երկաթյա ճնշման տակ»[2]:

Կուսակցական մենատիրական համակարգի հաստատման տնտեսական-կառավարչական հիմքերից էր **Պետպլանի** ստեղ-ծումը: Տնտեսությունը պլանավորում էր, որպեսզի նրա կառա-վարման բարձունքները կենտրոնացվեն պետության, այսինքն՝ պրոլետարիատի դիկտատուրայի անունից հանդես եկող կուսակ-ցության ձեռքում: Հայտնի է, որ տնտեսության պլանավորման առաջնեկը դարձավ 1920 թ. դեկտեմբերին ընդունված երկրի էլեկտրաֆիկացման՝ ԳՈԷԼՌՈ-ի պլանը: Ի դեպ, պետպլանի ստեղծ-ման մասին գաղափարով առաջինը հանդես է եկել Լև Տրոցկին[3] Նույն կերպ նա է առաջարկել արտաքին առևտրի պետական մե-նաշնորհ մտցնել և այլն: Այս ամենը, անշուշտ, պետական կապի-տալիզմի մենատիրական դրսևորումներ էին:

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում զուգահե-ռաբար տեղի է ունենում պետական-կուսակցական կառավարման համակարգի կենտրոնացման ուժեղացում: Հարկ է նշել, որ կու-սակցության կազմակերպական կառուցվածքի **դեմոկրատական ցենտրալիզմի (դեցիզմի)** լենինյան սկզբունքն իր մեջ ներառում էր ոչ միայն ներկուսակցական կարգապահության հարցերը, այլև փաստորեն քաղաքական համակարգի մյուս բոլոր օղակները՝ կառավարումը, էկոնոմիկան, ազգամիջյան հարաբերությունները և այլն: Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը թե՛ կուսակցու-թյան ներսում և թե՛ երկրի կառավարման ոլորտում, տուրք տալով ցենտրալիզմի ու անձնիշխանության մեթոդին, ավելի նպաստեց վարչաբյուրոկրատական ապարատի ուժեղացմանը:

---

[1] *Бердяев Н. А.*, Истоки и смысль русского коммунизма, М., 1990, с. 105.
[2] *Бердяев Н. А.*, նշվ. աշխ., էջ 117:
[3] *Белади Ласло, Краус Томаш.* Сталин, Л., 1990, с. 174.

Պրոլետարիատի դիկտատուրայի պետության տիպը ենթադրում է ամբողջ իշխանության կենտրոնացում կուսակցության ղեկավար ընտրախավի (էլիտայի) ձեռքում: Կուսապարատին է ենթարկվում պետապարատը: Պետապարատը ձուլված է կուսապարատի մեջ, որը կենտրոնացած է կուսակցական էլիտայի ձեռքում: Պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը ներկայանում է որպես կուսակցություն-պետություն կամ կուսակցապետություն, իսկ պրոլետարիատ բառի գործածությունը դառնում է տոկ որպես շիրմա (քող): Պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ աստիճանաբար ձևավորվում է բյուրոկրատական նոմենկլատուրային (անվանակարգային) ապարատը վերից վար՝ սկսած ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյից մինչև հանրապետությունների ԿԿ, երկրամասային, մարզային, շրջանային ու քաղաքային կոմիտե:

Ընթերցողներին կարող է հետաքրքրել խորհրդային իշխանության առաջին տարիներին կուսակցական-պետական բարձրագույն մարմինների քաղաքական ղեկավար կազմի ազգային պատկերը: 1920 թ. Նյու Յորքում լույս տեսած «Ովքե՞ր են կառավարում Ռուսաստանում» գրքույկում (հավանաբար կազմել են ռուսական վտարանդիները), ցույց է տրված, որ 1918-1919 թթ. Ռուսաստանի բարձրագույն ղեկավար 500 պաշտոնական անձանցից 447-ը կամ 83 տոկոսը եղել են հրեաներ: Դրանց մի զգալի մասը՝ Լ. Տրոցկին, Գ. Զինովևը, Ա. Լունաչարսկին և ուրիշներ, մասոններ էին: Թող զարմանալի չթվա, որ նշված 500 բարձրագույն պաշտոնատար անձանցից ռուսները կազմել են ընդամենը 30 մարդ կամ 5 տոկոս, իսկ հայերը՝ 12 մարդ կամ 2 տոկոս և այլն[1]: Թեև 1920-ական թվականներից ԿԿ-ի գլխավոր քարտուղար Ի. Ստալինը պայքարեց իր հակառակորդ ներքին հրեա մասոնականների դեմ՝ նրանց արտաքսելու կամ ոչնչացնելու միջոցով, սակայն 1930-ական թվականներին նա դարձյալ իրեն շրջապատեց արդեն հավատարիմ հրեա մասոններով (որմնադիր վարպետներով)[2]: Բեր-

---

[1] *Бегунов Юрий.* Тайная история масонства, М., 2007, с. 263.
[2] *Бегунов Юрий.* նշվ. աշխ., էջ 167:

վածից դժվար չէ տեսնել, թե պրոլետարիատի, բանվորագյուղացիական ճնշված ու հարստահարված զանգվածների անունից իրականում ովքեր են իրականացրել պրոլետարիատի դիկտատուրան:

Պրոլետարիատի դիկտատուրայի պետությունում արգելված էր աշխատավորին անգամ ինքնուրույն բողոք արտահայտելու, ցույց ու գործադուլ անելու: Աշխատավորների գործադուլի իրավունքի արգելմանը ի պատասխան՝ պրոլետարիատի առաջնորդ Վ. Լենինը պարզաբանում էր՝ անհեթեթ բան է, որ աշխատավորական երկրում աշխատավորը գործադուլ անի: Չի կարելի ասել, թե ԽՍՀՄ-ում, այդ թվում նաև Հայաստանում գործազրկություն չի եղել: Այն հատկապես ուժեղ է արտահայտվել 1920-ական թվականներին: Օրինակ, 1925 թ. դրությամբ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Մ. Լուկաշինի հայտնած տվյալներով Հայաստանի գյուղերում կար 50 հազարից ավելի գործազուրկ[1]: Սակայն 1930 թ. Ի. Ստալինի հրամանով փակվեցին 1918 թ. հունվարի 31-ին ժողկոմխորհի դեկրետով գործազրկության դեմ պայքարելու նպատակով Աշխատանքի ժողկոմատին կից ստեղծված աշխատանքի բիրժաները (շուկաները), և հայտարարվեց, որ ԽՍՀՄ-ում գործազրկություն չկա[2]: Այնինչ իրականում գործազրկություն միշտ էլ եղել է, սակայն քողարկված կերպով:

Ինչ վերաբերում է ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում դիսկուսիոն նյութ դարձած արհմիությունների դերի ու խնդիրների մասին պլատֆորմներին, ապա, մեր կարծիքով, իրավացի էր Լ. Տրոցկին, երբ սոցիալիզմի պայմաններում առաջ էր քաշում արհմիությունների պետականացման խնդիրը, որովհետև դա համապատասխանում էր պրոլետարիատի դիկտատուրայի բնույթին: Եվ, իրոք, արհմիությունները պետականացվեցին, որովհետև շատ շուտով պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում դրանք վերածվեցին կուսակցության և պետական իշխանության կցորդի կամ

---

[1] ՀԱԱ. ֆ. 1, ց. 5, գ. 6, թ. 63:

[2] *Восленский М. С.*, Номенклатура. Господствующий класс Советского Союза. М., 1991, с. 157.

հավելուկի: Ինչ վերաբերում է արհմիությունների դերի մասին լենինյան հանրահայտ դրույթներին, արհմիությունները՝ որպես «կոմունիզմի դպրոց», «համոզման ու դաստիարակության միջոց», «շարժափոկ կուսակցության և զանգվածների միջև» և այլն, ապա դրանք ընդամենը բարոզչական հնարքներ էին:

Հարց է ծագում՝ 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում հռչակված իշխանությունը և նրա օրինակով երեք տարի անց՝ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, նաև Հայաստանում «**դասակարգի՞, թե՞ կուսակցության դիկտատուրա էր**»: Տուրք չտալով ձևականությունների՝ կարելի է վստահաբար ասել, որ Ռուսաստանում ստեղծված իշխանությունը **բոլշևիկյան կուսակցության դիկտատուրա** էր: Դասակարգի՞, թե՞ կուսակցության դիկտատուրայի երկընտրանքի պարզաբանման հարցում մեզ դարձյալ օգնության է հասնում խորհրդային պետության հիմնադիր Վ. Լենինն իր մեկնաբանություններով ու դատողություններով: Այսպես՝ 1919 թ. հուլիսի 31-ին նա, հանդես գալով լուսավորության աշխատողների 1-ին համագումարում, մասնավորապես նշել է. «Երբ մեզ նախատում են **մեկ կուսակցության դիկտատուրայի համար** և առաջարկում են, ինչպես դուք լսեցիք, միասնական սոցիալիստական ճակատ, մենք ասում ենք. «**Այո՛, մեկ կուսակցության դիկտատուրա**»: Մենք դրա վրա ենք կանգնած և այդ հողից շեղվել չենք կարող»[1]: Սակայն, կուսակցության դիկտատուրա ասելով, չպետք է հասկանալ ամբողջ կուսակցությունը: Դրա տակ, ինչպես արդեն ասվել է, պետք է հասկանալ կուսակցության ղեկավար մարմինները՝ վերևից ներքև ու հատկապես նրա էլիտար մասը՝ Քաղբյուրոն, կազմբյուրոն, ԿԿ-ը, նրա քարտուղարությունը և այլն: Այս կապակցությամբ չեչեն այլախոհ պատմաբան և քաղաքագետ Ա. Ավտորխանովը թե՛ դասակարգին, թե՛ կուսակցությանը վերագրվող դիկտատուրաները համարում է վերացական: Նա հարց էր տալիս՝ ո՞վ է իրականացնում կուսակցության դիկտատուրան, և պատաս-

---

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 39, Ե., 1982, էջ 168:

խանում է. «Ինքնին ակներև է, որ այն իրականացնում է կուսակցության ղեկավար միջուկը, իսկ այդ միջուկը համարվում է ԿԿ-ը, ավելի նեղ իմաստով՝ Քաղբյուրոն, կազմբյուրոն ու քարտուղարությունը: Ստացվում է իսկական օլիգարխիա»[1]: Այդ հիման վրա էլ նա խորհրդային-կոմունիստական կառավարման ձևը անվանում էր **կոմունիստական պարտոկրատիա** (կուսակցապետություն): Ինքնին հասկանալի է, որ կուսակցության դիկտատուրայի օլիգարխիկ կառավարման մոդելը տեղական մակարդակով գործում էր նաև հանրապետություններում, այդ թվում՝ նաև Խորհրդային Հայաստանում:

ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում տրված հաշվետու զեկուցման եզրափակիչ մասում Վ. Լենինը վերահաստատում էր Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում արտահայտած հետևյալ միտքը, որ «առանց կուսակցական ղեկավարման չի կարող լինել պրոլետարիատի դիկտատուրա»[2]: Կնշանակի՝ պրոլետարիատի իշխանության անունից հանդես եկող կուսակցությունը, ավելի ստույգ՝ նրա ընտրախավն էր իրականացնում այդ դիկտատուրան (իշխանությունը): Այսինքն՝ հենց կուսակցությունն էր ներկայացնում պրոլետարիատի դիկտատուրան: Վ. Լենինը, քննադատելով «ձախ» կոմունիստներին, սովորեցնում էր, որ ոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպական հարց չի կարող լուծվել առանց կուսակցության ղեկավար ցուցումի: 1920 թ. նոյեմբերի 3-ին կրթության նահանգական և գավառական բաժինների քաղլուսվարների համառուսաստանյան խորհրդակցությունում արտասանած ճառում նա հայտարարում էր. «Սակայն մենք պետք է իմանանք և հիշենք, որ Սովետական հանրապետության ամբողջ իրավական և փաստական սահմանադրությունը կառուցվում է այն բանի վրա, որ **կուսակցությունը ամեն ինչ ուղղում է, նշանակում է և կառուցում է մի սկզբուն-**

---

[1] *Авторханов А. Г.*, Происхождение партократии, т. I, Франкфурт-на-Майне, 1973 (Constitutions.ru /archives/ N 4571.

[2] История КПСС, т. 4, кн. 1 (1921–1929 гг.), М., 1970, с. 68.

քով»[1]: Վ. Լենինի երկերից բերված քաղվածքները կրկին վերահաստատում են այն միտքը, որ կուսակցությունը վեր է ամեն ինչից: Կուսակցական դիկտատուրայի կարևորության մասին է խոսել նաև Քաղբյուրոյի անդամ Գ. Զինովևը: ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարում (1923 թ. ապրիլ) նրա տված հաշվետու զեկուցման կապակցությամբ (ծանր հիվանդության պատճառով Վ. Լենինը համագումարին չէր մասնակցում) ընդունված բանաձևում կարդում ենք. «Բանվոր դասակարգի դիկտատուրան չի կարող ապահովված լինել այլ կերպ, քան իր առաջավոր ավանգարդի, այսինքն՝ **կոմկուսակցության դիկտատուրայի** ձևով»[2]: Այս կապակցությամբ կարելի փաստել, որ Զինովևը ընդամենը կրկնել է Լենինի հայտնի միտքը, որ այդ դիկտատուրան իրականացնում է կուսակցությունը: Սակայն նշված նույն էջի տողատակի ծանոթագրությունում, որը կազմել են ժողովածուի հեղինակները, հանիրավի մեղադրվում է զեկուցող Զինովևը, որ իբր «կուսակցության դիկտատուրայի մասին» այդ սխալ, հակալենինյան ձևակերպումը նա անց է կացրել համագումարում տված ԿԿ-ի հաշվետու զեկուցման և ընդունված բանաձևի մեջ[3]: Իրականում Զինովևը ոչ մի սխալ էլ թույլ չի տվել, այլ ընդամենը վերահաստատել է Լենինի արտահայտած մտքերը:

Չի կարելի ասել, թե կուսակցության ղեկավար շրջանակներում բնական-ատություն չի եղել կուսակցական դիկտատուրայի հաստատման վտանգավորության հարցում: Միակուսակցական վարչակարգի հաստատման ճանապարհին պայքար է մղվել ոչ միայն օտար կուսակցությունների ու հոսանքների, այլև իր իսկ կուսակցության ներսում ի հայտ եկած տարբեր խմբերի ու պլատֆորմների դեմ՝ իբրև հանուն կուսակցության միասնության և գաղափարական անաղարտության: Այդ նպատակով բոլշևիկյան

---

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 41, Ե., 1982, էջ 482:

[2] ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, (այսուհետ՝ ՍՄԿԿ բանաձևերում), հ. 3, (1922–1925 թթ.), Ե., 1987, էջ 68:

[3] Նույն տեղում:

կուսակցությունը շարունակ գտել է իր շարքերը անհավատարիմ համարվող տարրերից: Այս իմաստով ուղենշային պետք է համարել ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարը: Համագումարի նախօրյակին ու ընթացքում երկրի ու կուսակցության հետագա զարգացման ուղիների ու հեռանկարի շուրջ կուսակցության ներսում առաջացած դիսկուսիոն քննարկումների ժամանակ, օրինակ, «Բանվորական օպոզիցիայի» պլատֆորմի ներկայացուցիչները (ԿԿ-ի անդամներ Ա. Շլյապնիկովը, Ա. Կոլլոնտայը և ուրիշներ) առաջարկում էին ժողովրդական տնտեսության կառավարումը հանձնել արհեստակցական միությունների գործադիր մարմիններին: Սակայն Լենինի կողմակից մեծամասնությունը կտրականապես դեմ արտահայտվեց նման առաջարկին՝ այն որակելով «Սինդիկալիստական և անարխիստական թեքում», որովհետև դրանում տեսնում էին կուսակցության ղեկավար դերի նսեմացում: Լենինը և նրան կողմակից մեծամասնությունը տնտեսության կառավարումը արհմիություններին հանձնելու մեջ տեսնում էին քաղաքական վտանգ և կուսակցության մենիշխանության սահմանափակում: Դրա համար էլ ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարը խստորեն դատապարտեց ընդդիմադիր համարվող այդ խմբի գաղափարները և լուծարեց խումբը[1]: Խորհրդային երկրում չէր կարող խոսք լինել արհմիությունների, կոմերիտմիության կամ որևէ այլ հասարակական կազմակերպության անկախության մասին: Երբ 1921 թ. մայիսին արհմիությունների համառուսաստանյան 4-րդ համագումարում Մ. Տոմսկին և Դ. Ռյազանովը հանդես եկան կուսակցությունից անկախ արհմիությունների գաղափարի օգտին, տեսակետ, որը պաշտպանում էին նաև «Բանվորական օպոզիցիայի» ներկայացուցիչները, սակայն կուսակցության 10-րդ համագումարի որոշումների ոգով դա համարվեց կուսակցության գծից շեղում: Արդյունքում՝ Տոմսկին և Ռյազանովը պաշտոնազրկվեցին[2]:

---

[1] ՍՄԿԿ բանաձևերում, հ. 2, (1917–1922 թթ.), Ե., 1986, էջ 446:
[2] История КПСС, т. 4, кн. 1, (1921–1929), М., 1970, с. 113–114.

ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի նախօրյակին ու ընթացքում ի հայտ եկած մեկ այլ ընդդիմադիր հոսանք, այսպես կոչված, «Դեմոկրատական ցենտրալիստների» խումբը (Ա. Բուբնով, Ն. Օսինսկի, Տ. Սապրոնով և այլք) համագումարի ամբիոնից ուղղակի հայտարարեց «**կուսակցական չինովնիկների դիկտատուրայի**» մասին՝ իբրև իրողություն պաշտոնապես հռչակված «**պրոլետարիատի դիկտատուրայի**» փոխարեն[1]: Ինչպես տեսնում ենք, «Մեծ Հոկտեմբերից» անցել էր ընդամենը մի քանի տարի, և արդեն կուսակցության ներսում որոշ առողջ ուժեր համագումարի բարձր ամբիոնից ահազանգում էին **կուսակցական բյուրոկրատների դիկտատուրայի** առաջացման մասին: Հենց կուսակցական չինովնիկների բյուրոկրատական ապարատն իր դասական ձևավորումը ստացավ Ի. Ստալինի ԿԿ-ի գլխավոր քարտուղարի (գենսեկության) պաշտոնավարության օրոք՝ սկսած 1920-ական թվականների սկզբներից: Երկրում հաստատվեց կրկնակի դիկտատուրա: Խոսքը Ի. Ստալինի անձնական (ավտորիտար) իշխանության մասին է: Կուսակցության և շուտով դրան գումարած Ստալինի անձնական դիկտատուրաների հաստատումը, կարծում ենք, պետք է բացատրել ոչ այնքան նրա սուբյեկտիվ, անձնական նախասիրությամբ, որքան կոմունիստական-բոլշևիկյան գաղափարախոսությամբ, կուսակցության ծրագրերով, գործելու կիսաքրեական մեթոդներով, աշխարհին տիրելու ռազմավարությամբ, կազմակերպական-կառուցվածքային կիսառազմականացած կանոններով և այլն:



Այժմ փորձենք այդ նույն չափանիշներով բնորոշել ռուսական կարմիր բանակի օգնությամբ 1920 թ. Հայաստանում հաստատված իշխանությունը: Եթե 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում հիմնված իշխանությունը դասակարգային բովանդակության տեսակե-

[1] Политические партии России. История и современность, под ред. проф. Завелева А. И. и др., М., 2000, с. 400.

տիզ քիչ թե շատ կարելի է անվանել բանվորական, որովհետև, ինչպես հետո ցույց կտրվի, Ռուսաստանում, այնուամենայնիվ, կար մի քանի միլիոն արդյունաբերական բանվորություն, որի անունից էլ հանդես էր գալիս բոլշևիկյան կուսակցությունը[1], ապա Հայաստանում դրսի ուժերի օգնությամբ հռչակված իշխանությունը բավարար հիմքեր չկան կոչելու բանվորական կամ պրոլետարական, որովհետև Հայաստանի խորհրդայնացման փուլում և նրա առաջին մի քանի տարիներին, ըստ էության, չի եղել նման դասակարգ: Այդ մասին խոստովանում են նաև իրենք՝ բոլշևիկ գործիչները[2]: Մինչ խորհրդայնացումը՝ 1919 թ., Հայաստանի Հանրապետությունում հաշվվում էր ընդամենը 10 հազար բանվորություն, այն էլ ոչ իր իսկական բովանդակությամբ[3]: Արդեն խորհրդայնացումից հետո՝ 1923 թ. ապրիլին, պաշտոնական տվյալներով ՀՍԽՀ արդյունաբերական բանվորների թիվը կազմել է ընդամենը 1700 մարդ, իսկ 1925 թ.՝ 5000[4]: Խոսքը որակյալ արդյունաբերական բանվորության մասին է: 1925 թ. մարտի 1-ի դրությամբ հանրապետության կուսքջիջների ընդհանուր թիվը կազմել է 377, որից բանվորական՝ ընդամենը 6, գյուղացիական՝ 265, վարչական՝ 67 և այլն[5]: Կուսքջիջների կազմն էլ է ցույց տալիս, որ 1925 թ. դրությամբ Հայաստանում, ըստ էության, բանվոր դասակարգ չի եղել այն դեպքում, երբ բանվոր դասակարգն էր հանդիսանում կոմկուսի սոցիալական հիմքը: Կրկին հարց է ծագում, այնուամենայնիվ, նշված բանվոր դասակարգը ինչպե՞ս պետք է կառավարեր երկիրը, եթե նա չուներ բավարար չափով անգամ տարրական կրթություն: Հասկանալի է, որ կառավարման գործը իր վրա է վերցնում կուսակցությունը, թեև սկզբնական տարինե-

---

[1] Տե՛ս История КПСС, т. 4, кн. 1, (1921–1929), М., 1970, с. 8, *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 30, *Орлов А. С.* и др., История России, М., 2002, с. 331.

[2] Տե՛ս ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), Ե., 1922, էջ 98, *Հովհաննիսյան Ա. Գ.*, Հայաստանի հեղափոխության հույսն ու հոկտեմբերը, Ե., 1923, էջ 45, *Орджоникидзе Г. К.*, Избранные статьи и речи, М., 1939, с. 117 и др.

[3] «Հայաստանի աշխատավոր», Ե., 16 սեպտեմբերի 1919 թ.:

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 59:

[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 53, թ. 59:

ին կոմկուսի անդամների մի զգալի մասը ևս անգրագետ էր: Այս կապակցությամբ դժվար է համաձայնել Խորհուրդների համահայաստանյան 1-ին համագումարի բացման խոսքում Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի արտահայտած այն մտքին, որ «իշխանության ղեկը անսասան կերպով գտնվում է բանվորների և գյուղացիների երկաթե ձեռքում»[1]: Իրականում իշխանության ղեկը, ինչպես արդեն բանիցս ասվեց, գտնվում էր կուսակցության ձեռքում, որը բանվորի և աշխատավոր գյուղացու անունից ղեկավարում էր երկիրը: Սակայն, ինչպես տեսնում ենք, Հայաստանում, ըստ էության, բանվոր դասակարգ չկար, իսկ գյուղացիական հսկա մեծամասնության հանդեպ չի եղել բավարար քաղաքական վստահություն: Հայկոմկուսին մնում էր հենվել կարմիր բանակի վրա: Այս կապակցությամբ չի կարելի չհամաձայնվել Հայաստանի բանակային գործի կազմակերպիչներից Վահան Բալյանի հետ, ով Խորհուրդների 1-ին համագումարում ներկայացրած զեկուցման մեջ անկեղծ փաստում էր. «Քանի որ մենք չունենք Հայաստանում պրոլետարական բազա, մեր անմիջական հենարանը մեր Կարմիր բանակն է»[2]: Այսինքն՝ խորհրդային իշխանությունը պահվում է կարմիր բանակի միջոցով: Այդպիսով՝ ստացվում է, որ եթե Հայաստանում, ըստ էության, չկար նման դասակարգ, կնշանակի՝ չկար նաև պրոլետարիատի դասակարգային պայքարի որևէ հիմք, ուստի և՝ բոլշևիկների պատկերացրած սոցիալիզմին անցման բավարար նախադրյալ:

Հայաստանում «պրոլետարիատի դիկտատուրան» մարմնավորող Հայհեղկոմը, տեղում չունենալով բավարար սոցիալական հենարան, այդ բացը լրացրեց կարմիր բանակով: Հարկ է նշել, որ Հայհեղկոմը, թիկունքին ունենալով ռուսական կարմիր բանակի անվերապահ աջակցությունը, այնքան ինքնավստահ էր զգում իրեն, որ անգամ չկամեցավ նոր կառավարության մեջ ընդգրկել երկու ձախ դաշնակցականի: 11-րդ կարմիր բանակի զորամասն ու

---

[1] ՀՍՍՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 98:

Հայհեղկոմի անդամներ Ս. Կասյանն ու Ավիսը դեկտեմբերի 4-ին Երևան հասնելուն պես հայտնեցին իրենց դժգոհությունը, անգամ զայրույթը, որ Բ. Լեգրանը համաձայնություն է կնքել (նկատի ունեին Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը) դաշնակցականների հետ, որի կետերից մեկով նախատեսվում էր խորհրդային կառավարության կազմում ընդգրկել երկու «ձախ» դաշնակցականի՝ Դրոյին և Տերտերյանին: Նման քայլը անգամ տեսական-գաղափարական առումով անընդունելի էր հայ բոլշևիկ ղեկավարներին, քանզի հնարավոր չէր պատկերացնել, որ պրոլետարիատի դիկտատուրան մարմնավորող Հայհեղկոմում, որը նույն Հայաստանի կառավարությունն էր, հայտնվեին իրենց համար ատելի այնպիսի կուսակցության ներկայացուցիչներ, ինչպիսին Դաշնակցությունն էր: Նման զիջումը հայ բոլշևիկների պատկերացմամբ կնշանակեր աղավաղել պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը: Այս կապակցությամբ Ս. Վրացյանն իր հուշերում հեգնում էր. «Էլ ի՞նչ բրոլետարիատի տիկտատուրա, երբ ինչ որ կօալիցիա պիտի կազմուի «դաշնակների» հետ»[1]:

Բացի կարմիր բանակից՝ Ռուսաստանի նմանությամբ պրոլետարիատի դիկտատուրայի ուժային գործառույթները իրականացնում էին նաև «բանվորագյուղացիական հեղափոխության անդուլ պահապան» Արտակարգ հանձնաժողովը (Չեկան),- Պետական քաղաքական վարչությունը (ՊՔՎ)-(ՄՊՔՎ) - Ն. Գ. մարմինները, արդարադատությունը, խորհրդային միլիցիան, դատարանները, դատախազությունը, Հատուկ խորհրդակցությունները, Հատուկ նշանակության զորամասերը (ՀՆԶ) կամ ռուսերեն՝ Части особого назначения (ЧОН)[2], եռյակները և այլն: Այս բոլոր ուժային կառույց-

---

[1] *Վրացյան Ս.*, Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, հ. Ե, Բէյրութ, 1966, էջ 213:

[2] Հատուկ նշանակության զորամասերը հիմնականում կոմունիստներից ու կոմերիտականներից կազմված զինված ջոկատներ էին, որոնք գործում էին գավառային, տեղամասային կուսմարմիններին կից՝ պայքարելու համար խորհրդային իշխանության հակառակորդների դեմ: Սրանք գործում էին Չեկայի հետ համագործակցած: Հետագայում ՀՆԶ-ները ներառվեցին Կարմիր բանակի ոստիկանական զորամասերում:

ները կրկնօրինակում էին Խորհրդային Ռուսաստանի համանման կառույցներին և համարվում էին վերջինիս հայաստանյան ստորաբաժանումն իր կառուցվածքով, խնդիրներով ու գործառույթներով: Վերը թվարկված խորհրդային վարչակարգի բռնաճնշիչ մեքենան կոչված էր ոչ թե Կենտրոնում և ազգային շրջաններում պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու, այլ այդ անվան տակ բոլշևիկյան միակուսակցական, ավտորիտար վարչակարգը հաստատելու և ամրապնդելու համար:

Հայհեղկոմի օրենսդրական հանձնաժողովի անդամ, իրավաբան Աբրահամ Խանդամիրյանը 1921 թ. կեսերին Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին ուղղված մի ամփոփագիր զեկուցագրում, բնութագրելով հանրապետության իշխանության կառուցվածքը, Հայհեղկոմը դիտում էր որպես **պրոլետարիատի դիկտատուրայի մարմին**, իսկ «պրոլետարական հեղափոխությամբ ծնված այդ դիկտատուրան ղեկավարում է բոլշևիկների կուսակցությունը»[1]: Հեղկոմներից անցում կատարելով խորհուրդներին՝ ձևի տեսակետից դրանք դարձան պրոլետարիատի դիկտատուրայի նոր մարմնավորողները: Հայաստանի խորհրդայնացումից հետո «Սովետական իշխանության առջև Հայաստանում ծառացած խնդիրներից անհետաձգելի և ամենակարևորը՝ **պրոլետարիատի դիկտատուրայի**, սովետական իշխանության օրգանների ստեղծումն ու ամրապնդումն էր»[2]: Սակայն կոմկուսի խնամակալության պայմաններում խորհուրդները չկարողացան իրացնել պրոլետարիատի դիկտատուրայի իրենց տրված գործառույթը: 1920-ական թվականների առաջին կեսին մաքրելով երկրի քաղաքական դաշտը ոչ պրոլետարական համարվող կուսակցություններից և աստիճանաբար ամրապնդելով իր սոցիալական ու քաղաքական դիրքերը՝ նենգափոխվեցին խորհուրդները, և կոմկուսը դարձյալ սկսեց իրականացնել պետական գործառույթներ՝ վերածվելով պետություն-կուսակցության:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 5-6:
[2] Հայ ժողովրդի պատմություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967, էջ 123:

«Կուսակցության մենատիրության հաստատումը և ամրապնդումը հանգեցնում էր նրան,- նշում է պատմաբան Վ. Ղազախեցյանը,- որ նա աստիճանաբար յուրացնում էր պետական իշխանության մարմինների իրավունքներն ու գործառույթները»[1]: Դա արվում էր ինչպես խորհրդային ամբողջ տարածքում, այնպես էլ կրկնօրինակելով ու տեղայնացնելով դրանք կիրառվում էին նաև Հայաստանում: Խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ գրված է, որ պրոլետարիատի դիկտատուրայի պետության ձևը խորհուրդներն են, որոնց քաղաքական ղեկավարությունը իրականացնում է կոմկուսը: «Դիկտատուրան,- գրում էր Վ. Լենինը,- իրականացնում է սովետների մեջ կազմակերպված պրոլետարիատը, որին ղեկավարում է բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը»[2]: Ստացվում է, որ իրականում ոչ թե բանվոր դասակարգն է կառավարում խորհրդային պետությունը, այլ նրա անունից՝ կոմկուսը: Այդ նույն գրականության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի հասկացությանը համարժեք, հաճախ նշվում է նաև **բանվորագյուղացիական իշխանություն** եզրույթը: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այդ իշխանությունը ո՛չ բանվորական էր, ո՛չ էլ գյուղացիական: Օրինակ, 1923 թ. դրությամբ ՀՍԽՀ բարձրագույն իշխանության մարմին հանդիսացող Կենտգործկոմի (խորհրդարանի) 76 անդամ և 43 անդամության թեկնածուների շատ փոքր մասն էր սոցիալապես բանվոր կամ գյուղացի: Նրանց ճնշող մեծամասնությունը կուսակցական, պետական, տնտեսական և այլ ոլորտների ծառայողներ ու մտավորականներ էին[3]

Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումից մեկ տարի անց Ռուսաստանի օրինակով «պրոլետարիատի դիկտատուրայի» գաղափարը սահմանադրորեն ամրագրվեց նաև ՀՍԽՀ Հիմնական օրենքում[4]: ՌՍՖԽՀ 1918 թ. և ՀՍԽՀ 1922 թ. սահմանադ

---

[1] *Ղազախեցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 327:
[2] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 41, Ե., 1982, էջ 36:
[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1, թ. 139–140:
[4] ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 3–4:

ությունների որոշ տարբերությունների մասին առաջինը խոսել է բոլշևիկ պատմաբան Բ. Բորյանը իր հայտնի աշխատության մեջ՝ սահմանադրության 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների առնչությամբ «պրոլետարիատի դիկտատուրա» հասկացության սոցիալական բովանդակության շուրջ՝ իրավացիորեն փաստելով, որ այդ դիկտատուրան չի ունեցել բավարար սոցիալական հենարան [1]: Եթե նորահռչակ սահմանադրությամբ բարձրագույն իշխանությունը համարվում էին խորհուրդները՝ նրա համագումարը, ԿԳԿ-ը, գործադիր, կառավարող և կարգադրիչը՝ ժողկոմխորհը, և այլն, և ոչ մի խոսք չկա կուսակցության դերակատարության մասին այն դեպքում, երբ երկրի պետական ու հասարակական ողջ կյանքը ղեկավարվում, կառավարվում ու ուղղորդվում էր կոմկուսի ապարատի կողմից, կնշանակի, որ վերջինիս գործունեությունը պետք է որակել որպես հակասահմանադրական: Կարելի է ենթադրել, որ խորհրդային իշխանության առաջին շրջանում հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի տարերքով ոգեշնչված բոլշևիկ ղեկավարները կուսակցության դերակատարության մասին ոչինչ չեն ամրագրել՝ հավանաբար հասկացնելով, որ պրոլետարիատի դիկտատուրան հենց կոմկուսն է: Կուսակցության ղեկավար միջուկը չգրված օրենքով համարվել է վերադաս սմեն ինչից: Անգամ Ռուսաստանի լուսժողկոմ Ա. Լունաչարսկին է խոստովանել, որ «Սահմանադրության օրենքները չեն տարածվում ԿԿ-ի վրա»[2]:

Տեղին է հիշեցնել, որ Հայաստանի պայմաններում իշխանության (կառավարության) կուսակցականացման առաջին փորձը տեղի է ունեցել Հայաստանի առաջին հանրապետության օրոք, երբ աննպաստ դեպքերի բերումով 1920 թ. մայիսին ՀՅԴ Բյուրոն իր ամբողջ կազմով՝ 7 անդամ և 3 փոխանդամ, կազմեց կառավա-

---

[1] *Борьян Б. А.*, Армения, международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929, с. 174.

[2] *Земцов Б. Н.*, Конституционные основы большевистской власти (первая совстская Коституция 1918г.), (см. «Отечественная история», М., 2006, N 5, с. 71).

թություն, միաժամանակ հարկադիր արձակուրդ ուղարկելով խորհրդարանը՝ ստանձնեց նաև օրենսդիր մարմնի գործառույթներ: Սկզբունքի տեսակետից սա, իհարկե, բոլշևիկյան կուսակցությանը բնորոշ մենատիրական քայլ էր, երբ կառավարությունն ամբողջովին կուսակցականացվում է: Հայտնի է, որ նման պրակտիկա առաջինը գործադրել են Ռուսաստանի բոլշևիկները 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակով և Սահմանադիր ժողովի ցրումով: Իհարկե, ՀՅԴ պատմագիտական և հուշագրական գրականության մեջ Բյուրո-կառավարության ստեղծման հանգամանքը բացատրվում էր հակապետական շարժումներով՝ Մայիսյան ապստամբությամբ, թուրք-թաթարական խռովությունների ուժեղացմամբ, մայիսի վերջին Ադրբեջանի հեղկոմի՝ Հայաստանին ներկայացրած վերջնագրով և այլն: Նույն կերպ, իբրև փաստարկ, ոմանք կարող են բոլշևիկյան մենիշխանության հաստատումը բացատրել Ռուսաստանին պատուհասած օտարերկրյա ինտերվենցիայով և քաղաքացիական կռիվներով: Սակայն բոլշևիկների պլատֆորմում իրականությունն այլ էր: Բանն այն է, որ նրանց մենիշխանությունը հաստատվեց՝ իրենց ծրագրերին ու ռազմավարությանը համապատասխան, հոկտեմբերյան հեղաշրջման առաջին իսկ օրից, երբ դեռ քաղաքացիական կռիվները չէին սկսվել: Այնպես որ քաղաքացիական կռիվների հանգամանքը բավարար հիմնավորում չէ կառավարության կուսակցականացման և կուսակցական դիկտատուրայի հաստատման կապակցությամբ: Եթե, իրոք, ՌԿ(բ)Կ-ն մենիշխանություն հաստատելու նպատակ չի ունեցել, և հանգամանքներն են ստիպել դրան, ապա այստեղ օրինական հարց է ծագում. քաղաքացիականի հաղթական ավարտից հետո ինչու՞ շարունակվեց նույն մենատիրությունը, որը ուժգնանալով, ի վերջո, հանգեցրեց ավտորիտարիզմի ու ամբողջատիրության: Դաշնակցություն կուսակցության պարագայում ժողովրդավարական սկզբունքներից շեղումն այն էր, որ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում (1919 թ. աշուն) փոփոխված կազմակերպական կանոնադրությամբ, ի տարբերություն բոլշևիկների, «Կառա-

վարության դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որևէ, մարմնի անդամ չեն կարող լինել»[1]: Բայց նրանք չհետևեցին կանոնադրական այդ սկզբունքին: Մյուս կողմից ժողովրդավարական կառավարման սկզբունքի շեղում էր նաև այն, որ Բյուրո-կառավարությունը ստանձնեց նաև օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի իրավասություններ և ամիսներ շարունակ այն ուղարկեց հարկադիր արձակուրդ: Եվ նման քայլերի հիմնավորումը համարվեց այն, որ երկրում ստեղծվել էր արտակարգ իրավիճակ և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ էր դիմել արտակարգ միջոցների՝ կառավարությանը օժտելով դիկտատորական իրավասություններով՝ ներգրավելով նաև կուսակցական կառույցները: Երկրի ներքին ծանր դրությանը շուտով գումարվեցին արտաքին տագնապները և առաջին հերթին թուրք-բոլշևիկյան մերձեցումը և դաշինքը, որն իր սուր ծայրով ուղղված էր ՀՀ անկախ պետականության դեմ: Եվ նման իրավիճակում ՀՅԴ մենիշխանությունը շարունակվեց մինչև 1920 թ. նոյեմբերի 23-ը՝ մինչև երկրորդ կոալիցիան, սակայն արդեն բանը բանից անցել էր, Հայաստանի խորհրդայնացումը ընդամենը օրերի հարց էր:

Ինչպես Խորհրդային Ռուսաստանում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում պետական կառավարման համակարգի (վարչակարգի) կուսակցականացման, պետական իշխանության մարմինների իրավունքների ու գործառույթների յուրացման միջոցով աստիճանաբար հաստատվում էր կուսակցական մենատիրություն կամ դիկտատուրա:

---

[1] ՀՅԴ կազմակերպական կանոններ, Ե., 1919, էջ 13:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

1. *Ռուսաստանի և Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկությունները*

Հայաստանի և, ընդհանրապես, ռուսաստանյան նախկին կայսրության ազգային մյուս շրջանների խորհրդայնացումը ուղղակիորեն կապված է բուն Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած համաշխարհային պատմական նշանակության իրադարձությունների հետ, երբ բոլշևիկների կուսակցությանը հաջողվեց գինված ապստամբության միջոցով տապալել կադետա-էսէռա-մենշևիկյան ժամանակավոր կառավարությունը, իշխանությունը վերցնել իր ձեռքը ու փորձել «պրոլետարիատի դիկտատուրայի» անվան տակ հաստատել մի վարչակարգ և կառուցել մի հասարակարգ որոնք իրենց բնույթով ու բովանդակությամբ աննախադեպ էին համաշխարհային պատմության մեջ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից կամ, ինչպես այժմ ընդունված է, հեղաշրջումից ուղիղ երեք տարի անց դեպքերի և իրադարձությունների տրամաբանական, իսկ երբեմն էլ անսպասելի զարգացումները հանգեցրին նրան, որ այդ նույն բոլշևիկյան գինուժի Կարմիր բանակի օգնությամբ խորհրդայնացվեց նաև Հայաստանը:

Հայոց պատմության այդ ժամանակաշրջանի ճշմարտացի լուսաբանման տեսանկյունից այժմ փորձենք քննության առնել Ռու-

սաստանի և Հայաստանի խորհրդայնացման գործընթացների, հաստատված իշխանությունների (վարչակարգերի) ընդհանրությունը և տարբերությունը, ցույց տալ, թե ինչն էր դրանցում օրինաչափ, ինչը արհեստական, որոնք էին Հայաստանում կատարվածի դրսևորումները և առանձնահատկությունները: Այդ երևույթների պատմահամեմատական քննությունն ու զուգահեռների անցկացումը՝ հնարավորություն կտան ավելի լավ հասկանալու Խորհրդային Հայաստանի 70-ամյա պատմության իրական պատկերն ու նշանակությունը:

Պատմական ակնարկի ձևով հիշեցնենք Ռուսաստանի նախկին կայսրության ազգային շրջանների փաստական խորհրդայնացումը սկսվել է 1918 թ. վերջին - 1919 թ. սկզբին Ուկրաինայից ու Բելոռուսից և, որպես կանոն, խաղաղ ճանապարհով հեղկոմներ ստեղծելու և դրսից կարմիր բանակ հրավիրելու միջոցով բռնի ուժով տեղերում ազգային պետական վարչակարգերը փոխարինելով խորհրդայինով: Խորհրդայնացման գործընթացները հաջող ընթացան նաև Հյուսիսային Կովկասում, Անդրկովկասում և Միջին Ասիայում: Կարմիր բանակի օգնությամբ 1920-1921 թթ. ընթացքում իրար հետևից խորհրդայնացան Չեչնիան, Դաղստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը: 1922 թ. խորհրդայնացումը ավարտվեց Միջին Ասիայում Թուրքեստանում և Հեռավոր Արևելքում: Միայն Լեհաստանի խորհրդայնացման փորձը ձախողվեց, որովհետև Կարմիր բանակը 1920 թ. ամռան վերջին ծանր պարտություն կրեց լեհերից: Դուրս գալով նախկին կայսրության սահմաններից բոլշևիկ առաջնորդները փորձ արեցին համաշխարհային հեղափոխության կարգախոսներով խորհրդայնացնել Թուրքիան, Իրանը, Աֆղանստանը և այլ երկրներ, սակայն անհաջողության մատնվեցին:

Հայաստանում խորհրդային համակարգին անցման դժվարությունն այն էր, որ այնտեղ սոցիալիստական կոչվող հեղափոխությունը և խորհրդային կարգերի հաստատումը տեղի էր ունենում ոչ թե հասարակության բնականոն զարգացման ու օրինաչափ

զարգացումների շնորհիվ, օբյեկտիվ գործընթացների արդյունքում, այլ արտաքին ուժերի միջամտությամբ: Սոցիալիստական համարվող համակարգը Հայաստանին և նախկին կայսրության մյուս ժողովուրդներին պարտադրվեց 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով: Ուստի այսպիսի օրինաչափության տեսակետից խորհրդային իշխանության և սոցիալիստական կարգերի հաստատումը ռուսական կայսրության նախկին ծայրագավառ, հետամնաց Հայաստանում տնտեսական և հասարակական զարգացման առումով անբնական էր ու արհեստական: Դա միաժամանակ նշանակում է, որ ժողովրդին և հասարակությանը անծանոթ խորհրդային-սոցիալիստական համակարգի հաստատումը պետք է առաջ բերեր տնտեսական, հասարակական-քաղաքական անօրինաչափ, հիվանդագին երևույթներ ու գործընթացներ, որոնց հետևանքները, ցավոք, դրսևորվում են մինչ օրս: Հարկ է նշել, որ հասարակության պատմական զարգացման ոչ բնականոն գործընթացների հետևանքով առաջացած հիվանդագին երևույթները ավել կամ պակաս ձևով ընթացան նաև բուն Ռուսաստանում և հետխորհրդային մյուս հանրապետություններում:

1917 թ. Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության դեռևս հասունացած չլինելու մասին է խոսել ռուսական մարքսիզմի ու սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիր Գ. Վ. Պլեխանովը: Նրա պատկերավոր արտահայտությամբ՝ «Ռուսական պատմությունը դեռ չի աղացել այն ալյուրը, որից կթխվեր սոցիալիզմի փքուն կարկանդակը»[1]: Այդ կապակցությամբ հայ բոլշևիկ գործիչներից, թերևս, կարելի է առանձնացնել ազգային նկարագիր ունեցող Արշավիր Մելիքյանին, ով Ռուսաստանի 1917 թ բոլշևիկյան հեղափոխությունը որակել է ոչ սոցիալիստական և համոզմունք հայտնել, որ սոցիալիզմը պետք է գա Արևմուտքի զարգացած կապիտալիստական երկրներից[2]:

---

[1] *Щетинов Ю.А.*, История России XX век, М., 1999, с. 41.
[2] «Ժողովուրդ», Երևան, 29 փետրվարի 1920 թ.:

Խոսելով Հայաստանի խորհրդայնացման գործընթացի մասին հարկ է փաստել, որ իշխանության անցած **Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն** (ՀՌՀԿ կամ **Հայհեղկոմը**) չի ունեցել բավարար սոցիալական հենարան: Այս առնչությամբ իրավացի է պատմաբան Վ.Ղազախեցյանը, երբ նշում է, որ խորհրդային իշխանությունն իր հաստատման պահին «չուներ տեղական ամուր բազա և ներմուծվել էր դրսից՝ Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի սվիններով կամ օգնությամբ»[1]:

Ռուսաստանի և Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկություններից մեկն այն է, որ Ռուսաստանում ի սկզբանե այն տեղի է ունեցել բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորական **խորհուրդների** (սովետների) առկայության պայմաններում, իսկ բուն Հայաստանում սկզբում խորհուրդներ, ըստ էության, չեն ստեղծվել և որպես իշխանության մարմին ժամանակավորապես հանդես են եկել ոչ ընտրովի **հեղկոմները**: Ի տարբերություն Ռուսաստանի՝ որտեղ 1917 թ. հետփետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում երկիրը պատված էր հարյուրավոր խորհուրդների լայն ցանցով (Հոկտեմբերի նախօրյակին միայն Համառուսաստանյան խորհուրդների 2-րդ համագումարը ներկայացնում էին 402 բանվորների և զինվորների տեղական խորհուրդների պատգամավորներ, իսկ ամբողջ երկրում հաշվվում էր 974 նման խորհուրդ[2]), դրան հակառակ Հայաստանում 1920 թ աշնանը խորհրդայնացման նախօրյակին, բանվորագյուղացիական պատգամավորական խորհուրդներ գրեթե բացակայել են. Իսկ եթե տեղերում կային նման խորհուրդներ, ապա դրանք գտնվում էին դաշնակցականների, էսէռների, մենշևիկների և այլոց ազդեցության տակ[3].

---

[1] *Ղազախեցյան Վ. Ն.,* Զեկույցի գործունեության առաջին տարին Հայաստանում, (Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), Ե., 2011, թիվ 1, էջ 45):

[2] *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 70, «Правда», 19 мая 1989 г.

[3] *Սահրադյան Ս. Մ.,* Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեները Հայաստանում (1917–1922 թթ.), Ե., 1961, էջ 170:

Եթե նորահռչակ Խորհրդային Ռուսաստանում պետական իշխանության ձևը բանվորների, զինվորների և գյուղացիների ընտրովի խորհուրդներն էին, ապա Հայաստանում այդպիսիք չլինելու պատճառով իշխանության ձև դարձան բոլշևիկյան կուսակցության կողմից ստեղծված ոչ ընտրովի հեղկոմները: Այդ տարբեր մակարդակի հեղկոմներն էլ մեզանում ներկայացան որպես **պրոլետարիատի դիկտատուրա**: Ուշագրավ է, որ Խորհրդային Ռուսաստանի օրինակով Խորհրդային Հայաստանում պրոլետարիատի դիկտատուրա էր հռչակվում բացարձակապես չունենալով արդյունաբերական պրոլետարիատ: Ինչպես արդեն ասվել է, այդ մասին իրենք բոլշևիկ գործիչներն են խոստովանում[1]: Ինչ վերաբերում է բուն Ռուսաստանին, ապա չնայած նրա կապիտալիստական թույլ զարգացվածությանը, այնուամենայնիվ, 1917 թ. հոկտեմբերի նախօրյակին ռուսական պրոլետարիատը (քաղաքային և գյուղական) չէր գերազանցում ընդհանուր բնակչության մեկ հինգերորդ մասը (20 տոկոսը), որից արդյունաբերական բանվորները 3,6 մլն մարդ[2]: Մեկ այլ տվյալով դարձյալ 1917 թ., Ռուսաստանի բանվոր դասակարգը, քաղաքային և գյուղական պրոլետարները միասին վերցված, կազմել է 18 մլն մարդ[3]: Իհարկե, մարքսյան չափանիշներով այդ քանակը ամենևին բավարար չէր 170 միլիոնանոց Ռուսաստանյան կայսրությունում սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ նախադրյալ դառնալու համար:

Այդուհանդերձ, բանվորական շարժման փորձով հարուստ Ռուսաստանին հակառակ Հայաստանում ի սկզբանե ստեղծվեցին ռազմահեղափոխական կոմիտեներ (ՌՀԿ-ներ): Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ՌՀԿ-ներ ստեղծվել են

---

[1] «Մտոսք», Երևան, 19 հոկտեմբերի 1918 թ., ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), Ե., 1922, էջ 98; *Կոփանիսյան Ա. Գ.*, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1923, էջ 9, 45, *Ամիրխանյան Շ.*, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920 թ.), Մ., 1926, էջ 75, *Орджоникидзе Г.К.*, Избранные стати и речи, М., 1939, с. 117 и др.

[2] *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 30.

[3] *Орлов А. С.* и др., История России, М., 2002, с. 331.

բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբության շրջանում: Դրանցից կենտրոնականը Ալեքսանդրապոլում ստեղծված ՀՌՀԿ-ն էր: Սակայն ապստամբության պարտությունից հետո ապստամբական այդ մարմինները վերացվեցին:

Հայաստանում ՌՀԿ ստեղծման հաջորդ փորձը տեղի ունեցավ 1920 թ. նոյեմբերին, երբ օրակարգ բարձրացվեց Հայաստանի խորհրդայնացման հարցը: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո 1920 թ աշնանը հերթը հասավ Հայաստանին: ՌԿ (բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն հոկտեմբերի 14-ին Հայաստանի խորհրդայնացման անհրաժեշտության վերաբերյալ որոշում կայացրեց: Այդ գործընթացը արագացնելու նպատակով ՌՍՖԽՀ կառավարությունը Մոսկվա-Բաքու-Անգորա կապով հասկացնում էր իր դաշնակից թուրքերին անցնելու վճռական գործողությունների Հայաստանի դեմ, որպեսզի թուրքական մահաբեր սպառնալիքով հեշտացվի Հայաստանի խորհրդայնացումը: Մոսկվայում ՀՀ ժամանակավոր դիվ ներկայացուցիչ Եղ. Եղիազարյանը հոկտեմբերի 20-ին վարչապետ Հ. Օհանջանյանին ահազանգում էր, որ «հնարավոր է; շատ ակտիվ ռազմական ելույթ ամենամոտ ժամանակներում»[1]. Եվ, իրոք, դրան հետևեց հոկտեմբերի վերջին թուրքերի ուժեղ հարձակումը և գրեթե առանց դիմադրության Կարսի գրավումը, իսկ նոյեմբերի սկզբին Ալեքսանդրապոլի հանձնումը: Այդ նույն օրերին Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանին և Արևելյան ռազմաճակատում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ Մդիվանուն հրահանգված էր հայ-թուրքական հակամարտությունում հանդես գալ միջնորդի դերով: Իսկ այդ միջնորդության գինը թուրքերի հետագա առաջխաղացումը կանգնեցնելու դիմաց պետք է; լիներ Հայաստանի անկախացումը և խորհրդայնացումը:

1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում գումարված ՌԿ (բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կ (բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի միացյալ նիստում, գործնականում մերժելով հայ-ռուսական հոկ-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 101, թ. 2:

տեմբերի 28-ի նախաստորագրված համաձայնագիրը, կրկին օրա կարգ է բարձրացվում Հայաստանի խորհրդայնացման հարցը Նոյեմբերի 11-ին ՀԿ (բ)Կ ԿԿ-ի կազմի մեջ լրացուցիչ կերպով մտցվեցին Ս. Կասյանը, Ա. Բեկզադյանը և Ս. Տեր-Գաբրիելյանը Վ. Լենինի ցուցումների և Կովկասյան ռազմաճակատի ՌՀԽ-ի նոյեմբերի 8-ի հրամանի հիման վրա 11-րդ բանակի հրամանատարությունը նոյեմբերի 12-ից սկսեց զորամասերի կենտրոնացումը Ղազախի ընագծում[2]: Նոյեմբերի երկրորդ կեսին Բաքվում ստեղծվում է Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ) Ս Կասյանի նախագահությամբ: Նոյեմբերի վերջերին Հայկոմկուսի ԿԿ-ը և Հայհեղկոմը Բաքվից հատուկ գնացքով մեկնում են Ղազախ: Ճանապարհին գնացքում կազմվում է Հայաստանի խորհրդայնացման մասին դեկլարացիա (հռչակագիր) և նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան Հայհեղկոմը 11-րդ կարմիր բանակի զորամասերի և Մայիսյան ապստամբության անհաջողությունից հետո Ադրբեջանի տարածքում ձևավորված հայկական Հատուկ գնդի ուղեկցությամբ Ղազախից մտնում են Քարվանսարա (Իջևան) և հայտարարություն անում Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ: Ղազախ-Իջևան-Դիլիջան առաջընթացի ճանապարհին ոչ մի ապստամբություն էլ տեղի չի ունեցել, իսկ Հայաստանի զորքին ռազմական նախարար Դրոն հրահանգած է եղել կարմիր բանակին դիմադրություն ցույց չտալ: Ղազախ-դիլիջանյան հայկական զորախմբի հրամանատար Սեպուհը (Արշակ Ներսիսյանը, ենթարկվելով Դրոյի հրամանին, խոսափում է դիմադրություն ցույց տալուց և նոյեմբերի 30-ին, իր գնդերը թողնելով Ելենովկայում (Սևան) և Ախտայում (Հրազդան), իր թիկնապահ մարտիկներով անցնում է Ապարան, այնտեղից էլ Լոռիի վրայով Վրաստան

---

[1] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 299:

[2] Մեծ Հոկտեմբերի ուղիով (հոդվածների ժողովածու), Ե., 1977, էջ 167:

[3] *Ստեփանի Կ.*, Փետրվարյան ապստամբությունը, «Հայրենիք», Պոսթոն, 1925, թիվ 12 (հոկտեմբեր), էջ 92:

Գ. Օրջոնիկիձեն ճիշտ էր կռահել, որ նոյեմբերի վերջին Հայաստանի խաղաղ խորհրդայնացման համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Նոյեմբերի 26-ին կամ 27-ին, երբ Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում էր Մոսկվա Ստալինին, որ «Հայ ընկերների (նկատի ունի հայ բոլշևիկներին - Ա. Հ.) և Նարիմանովի կարծիքով չարժի այլևս սպասել ... Այժմ նույնիսկ «Մշակ» թերթն է սպասում մեր գալստյան»[1]: Սակայն հաջորդ օրը նոյեմբերի 28-ի իր պատասխան հեռագրում Ստալինը Օրջոնիկիձեին զգուշացնում էր՝ «**չշտապել**»[2]: Մոսկվան, հանձինս Ստալինի, Լենինի, Տրոցկու, Չիչերինի և մյուս ղեկավարների, վաղաժամ էին համարում Հայաստան զորք մտցնելը, սպասում էին թուրք-հայկական պատերազմի վերջաբանին: Կենտրոնը նախընտրում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը լուծել բացառապես քաղաքական միջոցներով: Դրա համար էլ նա խորհրդայնացման իր պլանը քողարկում էր Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդական առաքելությամբ:

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի նոյեմբերյան արագընթաց խորհրդայնացումը իրականացվել է, անձամբ Գ. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ: Ուշագրավ է՝ Մոսկվա Լենինին և Ստալինին դեկտեմբերի 2-ին ուղղված հեռագրում Օրջոնիկիձեն մասնավորապես առաջարկում էր Մոսկվային Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ կատարել հետևյալ պաշտոնական ձևակերպումը, որ 1/ Մոսկվան Հայհեղկոմի հրավերի համաձայն է, պաշտոնապես թույլատրել մեզ կարմիրբանակային զորամասեր մտցնել Հայաստան և 2/ անհրաժեշտ է այսօր ևեթ ստանալ Լենինի պատասխան նամակը՝ հասցեագրված Հայհեղկոմին[3]: Ստացվում է, որ թեև 11-րդ կարմիր բանակի զորամասերը արդեն մի քանի օր է, ինչ (սկսած նոյեմբերի 29-ից) Հայաստանի տարած-

---

[1] Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ (այսուհետ՝ ՌՍՔՊՊԱ), ֆ. 85, ց.14, գ. 30, թ. 1:

[2] Նույն տեղում, գ. 33, թ. 1:

[3] *Арутюнов А.*, Досье Ленина без ретуши. Документы. Факты. Свидетельства, М., 1999, с. 228.

բում էին, դիվանագիտական այդ անհարմարությունը հարթելու համար, Օրջոնիկիձեի դեկտեմբերի 2-ի հիշեցումից հետո միայն Կենտրոնը ձևակերպում է պաշտոնական մի հրահանգ, որ իբր Հայհեղկոմի խնդրանք-հրավերով է 11-րդ կարմիր բանակը մուտք գործել Հայաստան: Եվ այս անհարմարության գլխավոր «մեղավորը» ոչ այնքան Մոսկվան էր, որքան Գ. Օրջոնիկիձեն, ով, առանց Կենտրոնին նախապես տեղյակ պահելու, կարմիր զորք էր մտցրել Հայաստան և օր առաջ խորհրդայնացրել այն: Օրջոնիկիձեի հեռագրից հետո միայն դեկտեմբերի 3-ին Մոսկվան պաշտոնապես հրահանգում է Բաքու Գ. Օրջոնիկիձեին՝ «սահմանափակ բանակով զորք մտցնել Հայաստան և դա այն դեպքում, երբ կարմիր բանակի զորամասերը այդ ժամանակ Դիլիջանից շարժվել էին դեպի Սեմյոնովկա»[1]: Ինչ վերաբերում է երկրորդ կետին, ապա նույն օրը դեկտեմբերի 2-ին, հետևում է Վ. Լենինի շնորհավորական պատասխան հեռագիրը՝ ուղղված Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին[2]: Ստացվել է այնպես, որ անգամ Երևանում գտնվող Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը մինչև նոյեմբերի 30-ի կեսօրը տեղյակ չի եղել, որ նոյեմբերի 29-ին կարմիր զորք է մտել Հայաստանի տարածք, և կարծել է, թե դա թյուրիմացություն է[3]: Բանն այն է, որ մինչ այդ ՌԿ (Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն Վ. Լենինի կազմած նախագծով (զեկ. Ի. Ստալին) նոյեմբերի 27-ին որոշում էր կայացրել «չարշավել ո՛չ Վրաստան, ո՛չ Հայաստան, ո՛չ էլ Պարսկաստան, տարածաշրջանում վարել առավելագույն չափով հաշտարար քաղաքականություն: Գլխավոր խնդիր համարել Ադրբեջանի պաշտպանությունը և ամբողջ Կասպից ծովին ամուր տիրելը: Այդ նպատակով արագացնել ոչ պակաս, քան

---

[1] *Խուրշուդյան Լ.*, Հայաստանի բաժանումը 1920 թ., Ե., 2002, էջ 311-312:

[2] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (այսուհետև՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն), Ե., 1960, էջ 408:

[3] Հայոց պատմություն (նախագահ Բարխուդարյան Վ.), հ. 4, գիրք 1-ին, Ե., 2010, էջ 272:

7 դիվիզիայի փոխադրումը Ադրբեջան»[1]: Սակայն մինչև Քաղբյուրոյի որոշումը երկօրյա ուշացումով նոյեմբերի 29-ի կեսօրին, կիսաներ Բաքու Գ. Օրջոնիկիձեին, Հայհեղկոմը կարմիր զորամասերի հետ արդեն գտնվում էր Քարվանսարայում, և դրանով Հայաստանի խորհրդայնացման ակտը կարելի էր համարել կատարված փաստ: Իր հերթին Հայաստանի խորհրդայնացման գործընթացը արագացնելու գործում իրենց դերն են խաղացել Հայհեղկոմի ու հատկապես Հայկոմկուսի ԿԿ-ի ներկայացուցիչները: Վերոշարադրյալից կարելի է հետևեցնել, որ Հայաստանի խորհրդայնացման գործընթացը ժամկետի առումով հստակ չի համաձայնեցվել Մոսկվայի հետ, և Կովկասի բոլշևիկ ղեկավարները Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ, արագացրել են Հայաստանի խորհրդայնացումը և Կենտրոնին կանգնեցրել արդեն կատարված փաստի առաջ:

Այդ տեսակետից Ռուսաստանում մինչև հոկտեմբերյան զինված ապստամբության կուրս վերցնելը բոլշևիկները 1917 թ. հետփետրվարյան փորձությունների ու քաղաքական վայրիվերումների փետրվար-հոկտեմբեր ինչպիսի մի ամբողջ շղթա անցան: Հայտնի է, որ զինված ապստամբությունը մայրաքաղաքում աչքի է ընկել մանրազնին նախապատրաստվածությամբ շնորհիվ Վ. Լենինի և Լ. Տրոցկու վճռականության ու թափած կազմակերպչական ջանքերի: Ինքնին հասկանալի է, որ Պետրոգրադում կատարվածն իր մասշտաբայնությամբ, բնույթով, բովանդակությամբ ու նշանակությամբ անհամեմատելի է 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հայաստանում կատարվածի հետ: Թեև այստեղ ևս դժվար է խոսել հոկտեմբերյան հեղաշրջման օրինաչափության մասին:

Հայաստանի պարագայում խորհրդայնացումը իրավիճակային լուծում ստացավ: Օրջոնիկիձեի նախաձեռնողական քայլը Հայաստանի արագընթաց խորհրդայնացման հարցում պետք է բացատրել ոչ թե հայությանը թուրքական հետագա աղետներից

---

[1] Большевистское руководство. переписка (1912–1927), сборн. док., М., 1996, с. 167, ՀԱԱ, ֆ. 4050, ց. 1, գ. 6, թ. 1, *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 42, Ե., 1982, էջ 56:

փրկելու մտահոգությամբ, այլ այն հանգամանքներով, որ ա/ Գ. Օրջոնիկիձեն ավելի մոտ ու իրազեկ էր տարածաշրջանում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններին, բ/ թեմայական կանոններն արդեն գրավել էին թուրքական «Ազգային ուխտով» նախատեսված հայկական տարածքները, հավելյալ նաև Սուրմալուի և Ալեքսանդրապոլի գավառները, ուստի սպասելն այլևս ավելորդ էր, գ/ Հայաստանի խորհրդայնացման հարցում շտապեցնում էին ոչ միայն հայ կոմունիստները, այլ, թող զարմանալի չթվա, նաև թուրքերը:

Հարց է ծագում, ինչու՞ թուրքերը Նոյեմբերի կեսերին Էրզրումի ռազմական երկաթուղու Ռուսաստանի ներկայացուցիչ (կցորդ) Վ. Տրիֆոնովը Օրջոնիկիձեի հետ ունեցած հեռախոսազրույցում հայտնում էր. «Թուրքերը պնդում են մեր զորքերի՝ Հայաստան մտցնելու վրա խորհրդային իշխանություն հաստատելու համար՝ համարելով այն երաշխիք իրենց թիկունքի ապահովության տեսակետից, որպեսզի նման պայմաններում կարողանան իրենց զորքերը տեղափոխել արևմուտք Անտանտի դեմ: Դրությունը միանգամայն պարզ է և անվտանգ»[1]: Բառացիորեն այս նույն միտքն է հաստատում մեկ այլ վավերագիր. Խորհրդային զորքեր Հայաստան (թուրքերի կողմից ոչ գրավյալ շրջաններ) մտցնելու վերաբերյալ համապատասխան հայտարարություն էր արել նաև Արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրը դարձյալ նույն հիմնավորմամբ: Ըստ Կարաբեքիրի Կարմիր բանակը Հայաստան մտցնելով ապահով կդառնա Թուրքիայի Արևելյան թիկունքը և դրանով իրենք հնարավորություն կստանան զորքեր տեղափոխելու Արևմտյան ճակատ հույների դեմ կռվելու համար[2]: Հայաստան Կարմիր զորք մտցնելու թուրքերի շահագրգռության մասին է վկայաբերում նաև Արևելյան ռազմաճակատում Ռուսաստանի լիազոր Բ. Մդիվանին նոյեմբերի 29-ին Գ. Օրջոնիկիձեին ուղղված իր ռադիոգրում: Մդիվանու փոխանցմամբ թուրքերն իրենց

---

[1] ՌՍԲՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 34, թ. 2:
[2] Նույն տեղում, գ. 22, թ. 11:

այդ շահագրգռությունը հիմնավորում էին նրանով, որ իրենց թիկունքը ապահով լինի դեպի Արևմուտք Անտանտի դեմ զորք փոխադրելու համար[1]:

Հայաստան Կարմիր բանակ մտցնելու վերաբերյալ թուրքերի հայտարարությունը սկզբում խորհրդային կողմը կասկածանքով է ընդունել՝ մտավախություն ունենալով, որ դա կարող է առիթ տա ներքաշվելու Անտանտի հետ վաղաժամ հակամարտության մեջ, և վերջիններս դեսանտ իջեցնեն Բաթում[2]. Այս մտավախությունների հիման վրա էր, որ, ինչպես արդեն ասվեց, Մոսկվան չէր շտապում Հայաստան զորք մտցնել՝ զգուշանալով հատկապես Անգլիայի միջամտությունից: Բայց երբ համոզվում են, որ թուրքերի հայտարարությունը լուրջ է, իսկ անգլիական ափիջեցման վերաբերյալ որևէ վտանգ չկա, միայն դրանից հետո Մոսկվան Բաքվի միջոցով հրաման է տալիս Ղազախի սահմանագլխին կանգնած Կարմիր բանակի զորամասերին մուտք գործել Հայաստան և խորհրդայնացնել իրեն «հասանելիք» հատվածը:

Հայաստանի խորհրդայնացման իրավական ձևակերպումը եղավ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ հինգշաբթի օրը, ստորագրված Դրո-Լեգրան համաձայնագիրը: Հայ-ռուսական միջպետական այս համաձայնագիրը խորհրդային շատ հեղինակներ զանց են առել, չտեսնելու են տվել: Այս փաստաթուղթը անգամ տեղ չի գտել Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակին նվիրված փաստաթղթերի և նյութերի հայտնի ժողովածուում[3]: Ի դեպ, այս նույն ժողովածուի նախնական 1957 թ. ռուսերեն հրատարակությունում տեղ է գտել Երևանի համաձայնագիրը, իսկ հայերեն ժողովածուից հանվել է: Անտեսվել է Հայաստանի խաղաղ խորհրդայնացման վերաբերյալ այդ համաձայնագիրը, որպեսզի ցույց տան, թե Հայաստանում խորհրդային իշխանության հաստա-

---

[1] Геноцид армян (док. и ком.), сост. проф. Ю. Г. Барсегов, (впред՝ Геноцид армян), т. 2, ч. 2, М., 2005, с. 397.
[2] ՌՍՔՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 22, թ. 11:
[3] Տես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, Ե., 1960:

տումը տեղի է ունեցել «ժողովրդական ապստամբության» միջոցով. Դրա համար էլ խորհրդային և խորհրդամետ հեղինակները Հայաստանի խորհրդայնացման օր են համարում նոյեմբերի 29-ը Հայհեղկոմի այդ օրվա հռչակագիրը համարելով Հայաստանի բանվորագյուղացիական ապստամբության հետևանք: Բացի այդ, դեկտեմբերի 2-ի համաձայնագրի մասին խոսելը (հիշատակելը) ցանկալի չէր այն իմաստով, որ բոլշևիկյան քարոզչության տեսակետից թույլատրելի չէր, որ խորհրդային կողմը սեղան նստեր ու բանակցեր «ժողովրդի ոխերիմ թշնամի և բանդիտ» դաշնակների հետ.

Այս համայնապատկերի վրա Ռուսաստանի և Հայաստանի խորհրդայնացումների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն Հոկտեմբերյան հեղաշրջման, կրել է լավ ծրագրված ու նախապատրաստված զինված ապստամբության բնույթ. Հայաստանի պարագայում, ինչպես ասվեց, խորհրդայնացումը կատարվել է արտաքին ուժերի կոպիտ միջամտության, թուրքական սպառնալիքով, սակայն ռուսական կողմից խաղաղ ճանապարհով, առանց կարմիր բանակի կողմից որևէ փամփուշտ արձակելու, երկկողմ համաձայնությամբ:

Ռուսաստանի Հոկտեմբերյան և Հայաստանի Նոյեմբերյան (պայմանականորեն կարելի է անվանել «նոյեմբերյան», որովհետև 70 տարի շարունակ պաշտոնապես այդպես է տոնվել) հեղափոխություններում ընդհանրականն այն է, որ երկու դեպքում էլ դրանք հաղթանակել են **անարյուն**: Վ.Ի. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը մայրաքաղաքում բնորոշել է «... հազվադեպ անարյուն և հազվադեպ հաջող»[1]: Որքան էլ զարմանալի է, գրեթե անարյուն է եղել Ժամանակավոր կառավարության տապալումը և իշխանության գրավումը մայրաքաղաք Պետրոգրադում: Կառավարության շենքի Ձմեռային պալատի գրավման ժամանակ զոհվել է ընդամենը 6 մարդ (5 նավաստի և մեկ զին-

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 35, Ե., 1981, էջ 4:

վոր)[1]: Եթե Հոկտեմբերյան հաղթանակին բոլշևիկները հասան գինված ապստամբության լավ նախապատրաստության դրան վերաբերելով որպես արվեստի ժողովրդին տված բարոզչական առատ խոստումների՝ հաշտության, հացի, հողի, ազատությունների, ազգերի ինքնորոշման և այլ կարգախոսներով, ինչպես նաև ժամանակավոր կառավարության և կառավարող կուսակցությունների թույլ տված սխալներից ու հապաղումներից օգտվելու շնորհիվ, ապա Հայաստանի «Նոյեմբերյան» չկայացած հեղափոխության հաղթանակը պայմանավորված էր հանրապետությունում ստեղծված ռազմաքաղաքական անել իրավիճակով, Ս. Վրացյանի պատկերավոր արտահայտությամբ «ռուսական մուրճի և թուրքական սալի միջև» հայտնվելու հանգամանքով, որն էլ հարկադրեց Հայաստանի իշխանություններին ու ժողովրդին ընդունելու չարյաց փոքրագույնը՝ խորհրդային վարչակարգը: Քեմալականների մահարեր սպառնալիքով և կարմիր բանակի օգնությամբ իշխանությունը ստանձնեց Բաքվում ձևավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ):

Եթե ռուսական հեղափոխությունն իր հիմքում, այնուամենայնիվ, ուներ հիմնականում ներքին նախադրյալներ ու պատճառներ, թեև չպետք է, անտեսել Առաջին աշխարհամարտի և գերմանական բազմամիլիոն մարկերի գործոնները (տվյալներ կան, որ Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման համար կայզերական Գերմանիան «օգնության» կարգով հատկացրել է 40-ից մինչև 50 մլն գերմանական մարկ ոսկով[2]), ապա սոցիալ-տնտեսապես և քաղաքականապես առավել հետամնաց Հայաստանի խորհրդայնացումը հարկադրական բայլ էր պայմանավորված բացառապես արտաքին ուժերով ու գործոններով: Եվ այդ արտաքին գործոնի գլխավոր դերակատարներն էին Խորհրդային Ռուսաստանը և թե-

---

[1] Страницы истории КПСС. Факты, Проблемы, Уроки, М., 1988, с. 194–195, *Арутонов А.*, Досье Ленина без ретуши. Документы. Факты. Свидетельства, М., 1999, с. 102. *Старцев В. И.*, Немецкие деньги и русская революция, СПБ., 2006, с. 10, *Бегунов Ю.*, Тайная история масонства, М., 2007, с. 190 и др.

մալական Թուրքիան: Վերջինս առաջինի լուռ համաձայնությամբ ու թողտվությամբ ծանր պարտության մատնեց ՀՀ-ը և բռնագավթեց թուրքական «Ազգային ուխտով» իրեն «հասանելիք» հայկական տարածքները Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը էլ չենք խոսում Արևմտյան Հայաստանի մասին: Իսկ Ռուսաստանն էլ, օգտվելով Հայաստանի ջախջախիչ պարտությունից, զորքով մուտք գործեց Հայաստանի հյուսիսային գավառներ և ստիպեց առանց որևէ դիմադրության ու կրակոցի խորհրդայնացնել իրեն «հասանելիք» տարածքները: Եվ այս իմաստով միանգամայն իրավացի են հանգուցյալ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը և պատմաբան Կ. Սարգսյանը, ովքեր Թուրքիայի և Ռուսաստանի միջև 1920-1921 թթ. կատարվածը համարել են Հայաստանի հերթական ու վերջին բաժանում[1]: Իսկ մյուս կողմից այդ ամենը կատարվեց Սևրի պայմանագիրը ստորագրած Հայաստանի «դաշնակից» Անտանտի տերությունների քար անտարբերության պայմաններում:

2. *Հեղկոմների և խորհուրդների որպես իշխանության ձևերի բնույթի ու բովանդակության հարցերը*

Հեղկոմները որպես պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմին, ռուսական երևույթ էին և բնավ կապ չունեն ո՛չ հայ և ո՛չ էլ անդրկովկասյան իրականության հետ: Իբրև պրոլետարիատի դիկտատուրայի բուղաբական իշխանության կարևորագույն մարմին՝ առաջին անգամ ռազմահեղափոխական կոմիտե անվանումով կառույց ստեղծվել է 1917 թ. հոկտեմբերի 12-ին Պետրոգրադի խորհրդի (սովետի) նիստում, խորհրդին կից որն էլ գործնականում դարձավ ապստամբության նախապատ

[1] *Խուրշուդյան Լ.*, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Ե., 2002, էջ 230-314; *Սարգսյան Կ.*, Պատմություն և իրականություն, Ե., 1991, էջ 86-89: Հետաքրքիր է, որ դեռ 1920 թ. գարնանը թուրք գորավար Խալիլ փաշան առաջարկել էր վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին՝ համառոտ ռազմական գործողություններով գրավել ամբողջ Հայաստանը և բաժանել Ռուսաստանի և Թուրքիայի միջև (*Арутюнов А.*, նշվ. աշխ., էջ 226): Եվ, ի վերջո, այդպես էլ արվեց:

բաստման կենտրոն (շտաբ): Այդ ժամանակ Խորհրդի նախագահը Լ.Ա Տրոցկին էր: Հոկտեմբերի 16-ին կայացած բոլշևիկյան կուսակցության ԿԿ-ի պատմական ընդլայնված նիստում հիմնված **Ռազմահեղափոխական կենտրոնը** մտավ Պետրոգրադի խորհրդին կից ստեղծված **Ռազմահեղափոխական կոմիտեի** (ՌՀԿ-ի) մեջ[1] Ռուսաստանի մյուս քաղաքների ՌՀԿ-ները անվերապահորեն ենթարկվում էին ընտրովի մարմին համարվող իրենց խորհուրդներին և ենթակա էին նրանց: Ռուսաստանի կենտրոնական ռազմահեղափոխական կոմիտեն Պետրոգրադինն էր: Եվ ապստամբության նախօրյակին նրա տրամադրության տակ գտնվում էին Պիտերի կայազորը 150 հազար զինվոր, կարմիր գվարդիան 20 հազար մարդ, Բալթյան նավատորմի հազարավոր նավաստիները և այլն: ՌՀԿ նպատակը հեղափոխության իրականացումն էր ու կարգի պահպանումը: Սակայն Պետրոգրադում ՌՀԿ գործունեությունը շատ կարճ տևեց: Մայրաքաղաքում իշխանությունը հեշտությամբ նվաճելուց հետո, երբ խորհուրդների Համառուսաստանյան 2-րդ համագումարում (հոկտեմբերի 26-ին) ձևավորվեց կառավարություն (Ժողկոմխորհ), ՌՀԿ-ն դեկտեմբերի 5-ին դադարեցրեց իր գործունեությունը[2]:

Հարկ է նշել, որ Պետրոգրադի ՌՀԿ-ն իբրև իշխանություն, առանձնապես մեծ դերակատարություն չունեցավ, որովհետև ա/ ապստամբությունը մայրաքաղաքում հեշտությամբ հաղթանակեց և բ/ հեղափոխության հաղթանակի հաջորդ հոկտեմբերի 26-ի օրը ձևավորվեց կառավարություն Ժողկոմխորհ, և բարձրագույն գործադիր իշխանության գործառույթներն անցան նրա ձեռքը:

Այդ նույն բանը չի կարելի ասել Հայաստանի պարագայում, որովհետև մեզանում առհասարակ բանվորագյուղացիական խորհուրդներ չստեղծվեցին, իսկ Ադրբեջանի տարածքում ստեղծված Հայհեղկոմը (ՀՌՀԿ) կուսակցության կողմից ստեղծված մարմին էր, որն արտաքին ուժի օգնությամբ դարձավ կառավարություն և

---

[1] ԽՄԿԿ պատմություն, Ե., 1981, էջ 278:
[2] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 35, Ե., 1981, էջ 525:

մնաց իշխանության դեկին ուղիղ մեկ տարի, մինչև որ խորհուրդների Համահայաստանյան ընտրությունների միջոցով կիրավիր վեր խորհուրդների համագումար և կձևավորվեր օրինական կառավարությունը:

Կնշանակի՝ իրավական առումով Ռուսաստանում Վ.Ի. Լենինի գլխավորած ժողկոմխորհի ստեղծումը ավելի օրինական էր, քանի որ այն ձևավորվել էր բանվորների և զինվորների ներկայացուցչական մարմնի խորհուրդների Համառուսաստանյան 2-րդ համագումարի կողմից: Իհարկե, համագումարի պատգամավորների մի զգալի մասը աջ էսէռները, մենշևիկները և այլն, համաձայն չլինելով մեծամասնություն կազմող բոլշևիկ-ձախ էսէռ խմբակցության ընդունած որոշումներին, մինչ այդ արդեն հեռացել էին համագումարից: Ստեղծված կառավարությունը կոչվեց ժամանակավոր, որովհետև սպասվում էր առաջիկա համաժողովրդական ընտրություններով ձևավորված Սահմանադիր ժողովում ընտրել հիմնական կառավարություն:

Ինչ վերաբերում է Հայհեղկոմին իբրև բարձրագույն իշխանություն, ապա նա իրավական ու օրինական ուժ չուներ այն մասով որ ամենևին ժողովրդական ապստամբության արդյունք չէր և ժողովրդական ներկայացուցչական մարմին լինելու որևէ հիմք չուներ: Սակայն նա իրավական ուժ ստացավ այն մասով, որ Երևանի արդեն հիշատակված հայ-ռուսական դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 2-րդ կետով, «Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմվում է ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում»[1]: Հայհեղկոմին իշխանություն և ուժ տվող միակ հենարանը, թերևս, 11-րդ կարմիր բանակն էր: Այստեղ է ասված «ուժն է ծնում իրավունքը»:

---

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (բաղաբական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 383, *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 533:

Հայաստանում խորհուրդների բացակայության պայմաններում ՌՀԿ-ները նշանակվում էին բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմնի կողմից և ենթակա էին նրան: Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ) իր կազմով փաստորեն նույն ինքը Հայկոմկուսի ԿԿ-ի անդամներն էին: Եվ պետական իշխանության ու կուսակցության այդ երկու մարմինները, կարելի է ասել, գրեթե նույնանում էին իրար: Խորհրդային իրավագետ Վլ. Նազարյանը, չգիտես ինչու, չի ընդունում, որ Հայհեղկոմը կազմվել է Հայկոմկուսի ԿԿ-ի կողմից[1]: Վերջինս էլ իր հերթին համապատասխան հրահանգ էր ստացել իր անմիջական վերադաս մարմնի ՌԿ (բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի ու անձամբ նրա ղեկավար Գ.Օրջոնիկիձեի կողմից: Հենց միայն այն փաստը, որ նոյեմբերի 30-ին Դիլիջանից հեղափոխության առաջնորդ Վ. Լենինին ուղղված ողջույնի հեռագրում մասնավորապես ասված էր «Հայաստանի Կոմունիստական պարտիան իսկույն ևեթ ստանձնեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և **ստեղծեց Հայաստանի Ռևկոմ** (ընդգծումը մերն է - Ա. Հ.) հայտարարելով Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա»,[2] ինքնին երևում է, որ Հայկոմկուսն է ստեղծել Հայհեղկոմը: Վլ. Նազարյանը անհաջող փորձ է, անում Հայհեղկոմը չհամարել իբրև նշանակովի մարմին: Դրա փոխարեն նա հայտարարում է, «Իրականում Հայհեղկոմը **ինքնաբուխ հեղափոխական** և՛ պետական իշխանության, և՛ կառավարման մարմին էր Սովետական Հայաստանում»[3]: Բայց նրա ասածից այդպես էլ պարզ չի դառնում, թե ում կողմից էր ստեղծվել այդ մարմինը: Այդ իսկ պատճառով Վլ. Նազարյանը դժվարանում է տալ Հայհեղկոմի որպես պետական բարձրագույն իշխանության մարմնի իրավական կարգավիճակի գնահատականը:

---

[1] *Նազարյան Վ. Ռ.*, Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920–1922 թթ.), Ե., 1974, էջ 54–55:
[2] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 406:
[3] *Նազարյան Վ. Ռ.*, նշվ. աշխ., էջ 55:

Մեկ ուրիշ իրավագետ Շ. Պետրոսյանը, խոսելով Հայհեղկոմի իրավասությունների մասին, նշում է, որ «Հայաստանի ռևկոմն իր մեջ մարմնավորում էր պետական իշխանության և կառավարման բարձրագույն օրգանի գործառույթներ: Նա հանդիսանում էր **օրենսդիր** և **գործադիր** օրգան: Երկրի կառավարումը բոլոր գծերով կենտրոնացված էր Ռևոլյուցիոն Կոմիտեի ձեռքում»[1]: Այսինքն Հայհեղկոմը ներկայանում էր ոչ միայն օրենքներ մշակող և ընդունող մարմին, այլև այդ օրենքները կյանքի կոչելու գործառույթներ իրականացնող: Ավելին, իրավաբան Վլ. Նազարյանի մեկնաբանությամբ Հայհեղկոմի համար բնութագրական է եղել ոչ միայն երկու **օրենսդրական** և **պետական կառավարման** գործառույթներ, այլև երրորդ «**Գերագույն պետական հսկողության**» գործառույթ[2]: Կարելի է ասել, որ խորհրդայնացած Հայաստանում դատահրավական համակարգի դեռևս չկայացվածության պայմաններում Հայհեղկոմը իրականացնում էր նաև դատական և դատախազական հսկողության գործառույթներ: Բավական է փաստել, որ հին օրենքները, դատարաններն ու դատական համակարգը լուծելուց հետո, դարձյալ ՌՍՖԽՀ օրինակով, ՀՍԽՀ հեղկոմի 1921 թ հունվարի 15-ի դեկրետով հեղկոմին կից ստեղծվում է հատուկ դատական մարմին **Գերագույն Հեղափոխական տրիբունալ**, իսկ Արդարադատության ժողկոմատին կից **Հեղափոխական տրիբունալ**[3]: Բերվածը կասկած չի թողնում, որ Հայհեղկոմն ունեցել է նաև գերագույն դատական ատյանի իրավասություններ

Խոսելով Հայհեղկոմի որպես խորհրդային բարձրագույն իշխանության մարմնի մասին վերոնշյալ իրավագետները կատարել են մեկ այլ դիտարկում: Հիմք ընդունելով Հայհեղկոմի (Ս Կայանի ստորագրությամբ) 1921 թ. հունվարի 25-ի հրամանը որում խոսվում էր Հայհեղկոմի կազմում **Ժողովրդական կոմիսարների**

---

[1] *Պետրոսյան Շ. Ն.*, Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Ե., 1961, էջ 43:

[2] *Նազարյան Վ. Ռ.*, նշվ. աշխ., էջ 70:

[3] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1. Էջմիածին, 1921, էջ 70, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, էջ 605:

խորհուրդ ստեղծելու և նրա գործառույթների մասին, (ի դեպ, երկու իրավաբաններն էլ վրիպել են հրամանի ամսաթվի ստույգ նշման հարցում. Շ. Պետրոսյանը նշում է, որ 1920 թ. դեկտեմբերի 12-ին ձևավորվեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդ[1], իսկ Վ. Նազարյանը թվագրում է, 1921 թ. հունվարի 21-ը, որը դարձյալ ճիշտ չէ[2]), երկու հեղինակներն էլ իրավացիորեն վերապահումով են խոսում Հայհեղկոմի կազմում ստեղծված այդ մարմնի մասին, որովհետև, ինչպես նշվում էր Ս.Կասյանի ստորագրած այդ հրամանում, այսպես կոչված, այդ ժողկոմխորհը գործելու էր Հայհեղկոմի ներսում իբրև մի ենթակա ստորաբաժանում և համակարգելու էր տնտեսական բնույթի մի քանի կոմիսարիատների գործունեության առանձին ոլորտներ[3]: Հունվարի 26-ով թվագրված, հավանաբար նախորդ օրվա հրամանը պարզաբանող որոշման մեջ խոսվում է Ժողովրդական կոմիսարների խորհրդում կոմիսարների գործերը լսելու կարգի մասին: Ընդ որում, նիստերը պետք է հրավիրվեին շաբաթական երկու անգամ՝ սկսած երեկոյան ժամը 8-ից: Որոշման 5-րդ կետով սահմանվում էր, որ յուրաքանչյուր ժողկոմիսար կամ նրա տեղակալ երկու շաբաթը մեկ Խորհրդի նախագահությանն էր ներկայացնելու գրավոր կարճ զեկուցում՝ կոմիսարիատի գործունեության վերաբերյալ: Վերջում ծանոթագրված է, որ առաջին զեկուցումը պետք է լսվի փետրվարի 1-ին և այլն[4]:

Մեզ կասկածելի է թվում, թե նման ստորաբաժանում առհասարակ գործած լինի, որովհետև հունվարի 25-ի հրամանից ու հունվարի 26-ի որոշումից հետո տվյալ ժողկոմխորհի վերաբերյալ որևէ այլ փաստական-գործնական տեղեկության չենք հանդիպում, մանավանդ որ շուտով սկսված Փետրվարյան ապստամբությունից հետո ամեն ինչ տակնուվրա եղավ: Այնպես որ Հայհեղկո-

---

[1] *Պետրոսյան Շ. Ն.*, նշվ. աշխ., էջ 43-44:
[2] *Նազարյան Վ. Ռ.*, նշվ. աշխ., էջ 157:
[3] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 96-97:
[4] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 5, թ. 76:

մի ներսում ստեղծված (եթե, իրոք, ստեղծվել է) այդ ժողկոմխորհը ամենևին էլ չպետք է շփոթել 1921 թ մայիսի 21-ից Հայհեղկոմին պաշտոնապես անվանափոխված Ժողովրդական կոմիսարների խորհրդի հետ, չնայած էության տեսակետից սա էլ շարունակում էր իրականացնել Հայհեղկոմի գործառույթները, քանզի դեռևս պահպանվում էին բոլոր մակարդակի ոչ ընտրովի հեղկոմները: Հայաստանում բաղաքացիական կոիվների ավարտից հետո այդ անվանափոխությունը կատարվեց ձևի առումով Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը նմանվելու և մյուս կողմից կառավարությանը ավելի ժողովրդավարական տեսք հաղորդելու համար:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո մի շարք դեկրետներով ու հրամաններով վերացնելով Առաջին հանրապետության պետական ապարատը, Հայհեղկոմը ձեռնամուխ եղավ իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ձևավորմանը: Համապատասխան ակտերով հիմնվեցին կենտրոնական իշխանության մարմիններ ժողկոմատներ, որոնք գործում էին ՌՍՖԽՀ ժողկոմատների օրինակով[1]: Դեկտեմբերի 7-ին կազմվեց ՀՍԽՀ կառավարությունը (ժողովրդական կոմիսարիատը) որի նույն ինքը Հայհեղկոմի անդամներն էին բաղկացած ինը ժողկոմիսարներից: Հայհեղկոմ-կառավարությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը՝ Ս. Կասյան (նախագահ), Ի. Դովլաթյան, Ա. Բեկզադյան, Ա. Նուրիջանյան, Հ. Կոստանյան, Ս. Բաղդասյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Երզնկյան և Ռ. Ոսկանյան[2]:

Այսպիսով Հայաստանի կառավարությունը նույն ինքը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն էր (ՀՌՀԿ) ժողկոմխորհի բարձրագույն կոլեգիալ մարմնի գործառույթը կատարում էր Հայհեղկոմը, որն օժտված էր թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր և թե՛, ինչպես արդեն ասվեց, նույնիսկ դատական վերահսկողության գործառույթներով: Իսկ Հայհեղկոմի անդամները ներկայաց

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 15:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 2:

նում էին պետական կառավարման որևէ ոլորտի ժողովրդական կոմիսարի պաշտոնը: ՀՍԽՀ հեղկոմների վերաբերյալ կանոնադրությունը ընդունվել է ավելի ուշ ժողկոմխորհի 1921 թ. հուլիսի 20-ի դեկրետով[1]:

Տեղական իշխանության գավառական, գավառակային և գյուղական հեղկոմների կազմակերպման գործում լայն լիազորություններ տրվեցին Ն.Գ. ժողկոմատին: 1920 թ. դեկտեմբերի 14-ի դեկրետով Ն.Գ. ժողկոմատը հանդիսանում էր «ՀՍԽՀ բարձրագույն վարչական մարմինը, որի միջոցով Հայհեղկոմը կառավարում էր երկիրը»[2]: Հետաքրքրական է, որ վարչական կառավարման իրավասությունների ծավալի մեծության առումով կարելի է ընդհանրություն տեսնել Առաջին հանրապետության Ն.Գ. նախարարության և ՀՍԽՀ Ն.Գ. կոմիսարիատի միջև: Հիմնականում Ն.Գ. ժողկոմատի վրա էր դրված հին պետապարատի նախկին նախարարությունների, նահանգապետությունների, քաղաքային ինքնավարությունների, դատական համակարգի և այլնի վերացումը ու նոր խորհրդային վարչապարատի ձևավորումը: Եվ այս աշխատանքներում ևս կրկնօրինակվում էին Ռուսաստանի փորձն ու մեթոդները: Միակ առևտրատնտեսական կառույցը, որն ամբողջությամբ պահպանվեց և փոխանցվեց խորհրդային համակարգին, թերևս, Հայկոոպն էր: Ի դեպ, դաշնակցականներից ժառանգած Հայկոոպի բարվոր վիճակի մասին շեշտել է ժողկոմխորհի նախագահ Ավ. Մյասնիկյանը[3]:

Խորհրդային-կոմունիստական պետական վարչակարգի անբաժանելի մասը դարձավ Արտակարգ հանձնաժողովը: Չեկան, որը Ռուսաստանի օրինակով ուղիղ երեք տարի անց 1920 թ. դեկտեմբերի 6-ին, հիմնվեց նաև Հայաստանում և այլն: Կարելի է

---

[1] Հայկ. ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկ. ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու (1920–1938 թթ.), Ե., 1963, էջ 56–63:

[2] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 426, *Ղազախեցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 15:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 19:

ասել, որ 1920 թ. վերջին Հայաստանի խաղաղ իշխանափոխության ընթացքում հին պետական մեքենան կազմակերպական ինստիտուցիոնալ, կառուցվածքային առումով էական մեծ փոփոխություններ չի կրել: Սկզբունքորեն փոխվել են իշխող (կառավարող) քաղաքական ուժը, ընտրախավը (էլիտան), գաղափարախոսությունը և պետաիրավական ու տնտեսավարման սկզբունքներն ու նորմերը:

Ամփոփելով կարելի է ասել, որ խորհրդայնացված Հայաստանի համար բնութագրականը Հայհեղկոմն էր իր ստորաբաժանումներով (հատկապես իր գլխավոր պատժիչ մեքենայով՝ Չեկայով), որը հանդես էր գալիս իբրև պրոլետարիատի դիկտատուրա գործնականում պրոլետարիատ չունեցող Հայաստանում՝ իր մեջ ներառելով ամբողջ իշխանությունը գործադիր, օրենսդիր, կարելի է ասել նաև դատական, մինչև որ տեղի կունենային բանվորների և գյուղացիների պատգամավորական խորհուրդների ընտրություններ և կձևավորվեր ընտրովի իշխանություն: Բայց հետագայում պարզվում է, որ վերջինս էլ էր ձևական, որովհետև այն ձևավորվում, ղեկավարվում և ուղղորդվում էր բացառապես կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության կողմից:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանին (ՌՍՖԽՀ), ապա այնտեղ ի սկզբանե պետական իշխանության բարձրագույն մարմինը համարվում էին սոցիալ-դասակարգային, խտրական սկզբունքով ընտրված խորհուրդները: Սակայն սրանք նույնպես նույն սկզբունքով ձևավորվում և անվերապահ ղեկավարվում էին նույն բոլշևիկյան կուսակցության ապարատի կողմից: Այս կապակցությամբ դժվար է համաձայնել խորհրդահայ պատմաբան Հ. Էլչիբեկյանի այն պնդմանը, որ իբր «խորհուրդների ձեռքում էր կենտրոնացված ամբողջ պետական իշխանությունը»[1]: Չևի առումով այդպես էր, բայց ոչ բովանդակության: Այնպես որ իրական ու փաստական ամբողջ իշխանությունը անբաժան կերպով պատկանում էր

[1] *Эльчибекян А. М.*, От ревкомов к советам (создание советов в Армении). Ер., 1976, с. 7.

կոմկուսին, նրա ընտրախավին (էլիտային)։ Ընդ որում գնալով այդ գործընթացը ավելի է խորացել հանգեցնելով կուսակցական մենատիրության, իսկ ավելի ուշ՝ բաղաբական ամբողջատիրության (տոտալիտարիզմի)։

3 *Կոալիցիոն իշխանության հարցը Ռուսաստանում և Հայաստանում*

Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման ու հաստատման առանձնահատկություններից է, այն, որ ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ բոլշևիկները 1917-1918 թթ. ժամանակավորապես կոալիցիայի մեջ մտան Ձախ էսէռների կուսակցության հետ, մասամբ էլ համագործակցեցին ՌՍԴԲԿ «ձախ» մենշևիկ ինտերնացիոնալիստների ու անարխիստների հետ։ Այս կապակցությամբ տեղին է հիշել, որ Անդրկովկասում միայն վրաց բոլշևիկները 1921 1923 թթ կոալիցիա կազմեցին վրաց «ձախ» մենշևիկների հետ։ Հայաստանում նման գործընթաց, թեկուզ ձևական, բնավ տեղի չունեցավ։

Մանրամասնելով հարցը Ռուսաստանի վերաբերյալ պետք է ասել, որ բաղաբական կոալիցիայի հարցը մի քանի դրսևորումներ է, ունեցել։ Հարկ է նշել, որ 1917 թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1918 թ հունվարի 6-ը Ռուսաստանի սոցիալիստական կողմնորոշման կուսակցություններից կոալիցիոն կառավարություն ստեղծելու այլընտրանք կար։ Հեփհոկտեմբերյան շրջանում Ռուսաստանի ընդդիմադիր կուսակցությունները հնարավորություն են ունեցել միաժամանակ լեգալ գործունեություն վարել։ Իշխանության ղեկին անցած բոլշևիկները այն պահելու հրամայականով, անկախ իրենց կամքից տալիս էին նման հնարավորություն, որովհետև Էսէռները, մենշևիկները, կադետները և այլն դեռևս շատ մեծ կշիռ ունեին տարբեր տիպի ու մակարդակի խորհուրդներում, բաղա

բային դումաներում, արհմիություններում, հրավիրվելիք Սահմանադիր ժողովում և այլուր:

Այն բանից հետո, երբ պարզվեց, որ նորահռչակ բոլշևիկյան վարչակարգը արտահայտում է ոչ թե խորհուրդների, այլ իր կուսակցության կամքը, էսէռները և մենշևիկները, միանալով արհեստակցական միությունների, գործարանային կոմիտեների և բանվորական շատ խորհուրդների հետ, հանդես եկան սոցիալիստական լայն ճակատով ու պահանջ դրեցին ստեղծել միատարր սոցիալիստական կոալիցիոն կառավարություն: Եվ այդ պայքարն իր ձեռքը վերցրեց երկաթուղայինների արհեստակցական միությունների Համառուսաստանյան գործադիր կոմիտեն (այսպես կոչված ՎԻԿԺԵԼ-ը): Այն իր մեջ ներառում էր սոցիալիստական բնույթի 8 կուսակցությունների ներկայացուցիչներ: Նրանում բոլշևիկները կազմում էին փոքրամասնություն: Հոկտեմբերի 29-ին ՎԻԿԺԵԼ-ը վերջնագիր ներկայացրեց ժողկոմխորհին՝ պահանջելով ստեղծել սոցիալիստական պլատֆորմի վրա հիմնված կոալիցիոն (միատարր) կառավարություն հակառակ դեպքում սպառնալով անցկացնել Համառուսաստանյան երկաթուղայինների համընդհանուր գործադուլ[1]:

Հեղափոխության հաղթանակի առաջին օրերին ՌՍԴԲ (բ)Կ ԿԿ-ի չափավոր թևը, որի ղեկավար կարելի է համարել ԿԿ-ի անդամ Լ. Բ. Կամենևին, ով հոկտեմբերի 27-ին ընտրվել էր Խորհուրդների Համառուսաստանյան ԿԳԿ-ի նախագահ, Գ. Սոկոլնիկովի հետ հոկտեմբերի 29-ին բանակցեց ՎԻԿԺԵԼ-ի ներկայացուցիչների հետ, և միատարր սոցիալիստական կառավարություն (անգամ առանց Վ. Լենինի և Լ. Տրոցկու) ստեղծելու վերաբերյալ նախնական համաձայնության եկավ:

Լ. Կամենևի այդ քայլի իմաստն այն էր, որ նորահռչակ խորհրդային իշխանության համար ստեղծվեր սոցիալական և քաղաքական հնարավորին լայն հենարան կանխելու քաղաքացիա-

---

[1] Политические партии России: история и современность, под ред. проф. Завелева А. И. и др., М., 2000, с. 389.

կան եղբայրասպան պատերազմը երկրում: Իսկ հայտնի է, որ հոկտեմբերի վերջի այդ օրերին հեղափոխական Պիտերի վրա շարժվում էր գեներալ Պյոտր Կրասնովի կոզակային հեծյալ կորպուսը և տակտիկական՝ ժամանակ շահելու, հակառակորդի շարքերում պառակտումներ առաջացնելու նկատառումներով բոլշևիկների համար ձեռնտու էր բանակցել Էսէռա-մենշևիկյան ղեկավարների հետ միատարր սոցիալիստական կառավարություն ձևավորելու շուրջ: Ի դեպ, ռուս ներկա պատմագիտական գրականության մեջ քաղաքացիական կռիվների սկիզբը գործնականում համարվում է Կերենսկի-Կրասնով կոչված այդ հարձակումը:

Եվ մեր կարծիքով, անկախ բոլշևիկ առաջնորդների հետին հաշվարկների, ճիշտ էր վարվում Համ. ԿԳԿ-ի նախագահ Լ. Կամենևը բանակցելով ՎԻԿԺԵԼ-ի ղեկավարության հետ: Սակայն բոլշևիկ «կարծրաբարները» ՌՍԴԲ(բ)Կ ԿԿ-ի նոյեմբերի 1-ի նիստում Վ. Լենինի և Լ. Տրոցկու գլխավորությամբ, ընդդատեցին Կամենևին ու նրա կողմնակիցներ Գ. Զինովևի, Վ. Նոգինի, Ա. Ռիկովի և մյուսների «կապիտուլյանտական» գիծը և մերժեցին սոցիալիստական կոալիցիայի պլանը[1]: Այն բանից հետո, երբ ձախողվեց գեներալ Պ. Կրասնովի արշավանքը, չեղյալ համարվեց նախնական համաձայնությունը, իսկ Լ. Կամենևը ԿԿ-ի նոյեմբերի 8-ի որոշմամբ հեռացվեց Համ. ԿԳԿ-ի նախագահի պաշտոնից[2]: Ծագած ճգնաժամի կապակցությամբ ԿԿ-ի կազմից դուրս եկան Լ. Կամենևը, Գ. Զինովևը, Ա. Ռիկովը, Վ. Միլյուտինը, Վ. Նոգինը, իսկ ժողովրդական կոմիսարներից մի քանիսն էլ կառավարությունից: Բայց բոլշևիկների ներկուսակցական պայքարը (ճգնաժամը) բերեց նրան, որ կոալիցիան կայացավ միայն Ձախ էսէռների կուսակցության հետ:

1917 թ. աշնանը Էսէռների կուսակցության վերջնական պառակտումով նրա ձախ թևը սկսեց ավելի ու ավելի մերձենալ ու

---

[1] Протоколы центрального комитета РСДРП/б/. август 1917 – февраль 1918, М., 1958, с. 124–129.

[2] Политические партии России, с. 390, Протоколы ..., с. 146.

համագործակցել բոլշևիկների կուսակցության հետ: Նրանք պաշտպանեցին բոլշևիկյան լոզունգը «Ամբողջ իշխանությունը սովետներին», մասնակցեցին Համառուսաստանյան խորհուրդների 2-րդ համագումարին: Նրանում ընտրված ՀԿԳԿ-ի անդամներից 29-ը ձախ էսէռներ էին: Նրանք ընդունեցին բոլշևիկյան շատ դեկրետներ: Բացի այդ՝ էսէռները ընդգրկված էին տեղական և կենտրոնական ռազմահեղափոխական կոմիտեներում, Համառուսաստանյան Չեկայում (ՀՉ) և այլուր: Անգամ Պետրոգրադի խորհրդին կից ստեղծված ՌՀԿ-ի նախագահը ձախ էսէռ Պ. Լազիմիրն էր[1] Ի դեպ, ձախ էսէռների կուսակցության առաջնորդներ Բ. Կամկովի, Վ. Կարելինի, Մ. Սպիրիդոնովայի կողքին էսէռ ակտիվ գործիչներից էր նախկին տեռորիստ, բաղբանտարկյալ, խառնվածքով բռնկուն Պոռշ Պոռշյանը:

Խորհուրդների Համառուսաստանյան 2-րդ համագումարում հոկտեմբերի 26-ին ձևավորված բանվորագյուղացիական ժամանակավոր կառավարությունը բաղկացած էր միայն բոլշևիկներից ընդամենը 13 կոմիսար Վ. Լենինի գլխավորությամբ: Սակայն հենց այդ օրերին բոլշևիկ ղեկավար շրջանակներում անհրաժեշտություն ծագեց ձախ էսէռների հետ ստեղծել կոալիցիոն կառավարություն: Հաշվի առնվեց, որ ապստամբությանը աջակցել էին ձախ էսէռները, մասամբ նաև ձախ մենշևիկ-ինտերնացիոնալիստները և անարխիստները: Բոլշևիկները շահագրգռություն հանդես բերեցին կոալիցիայի հարցում, քանի որ նրանք իշխանությունը պահելու խնդիր ունեին: Ինչպես արդեն ասվել է, նրանց հարկավոր էր քիչ թե շատ ամուր սոցիալական և քաղաքական հենարան: Բոլշևիկները պատրաստ էին Համ. ԿԳԿ-ի կազմում հրավիրել նաև մենշևիկների և աջ էսէռների, սակայն նրանք հրաժարվեցին Հարկ է փաստել, որ գյուղացիական պատգամավորական

[1] Политические партии России, с. 366, Страницы истории КПСС. Факты, Проблемы, Уроки, под ред. проф. Кушова В. И., М., 1988, с. 193.

խորհուրդների Համ. ԿԳԿ-ը մինչև 1918 թ. հունվար գտնվում էր բացառապես էսէռների ձեռքում[1]:

Ի վերջո, բոլշևիկ-ձախ էսէռ բաղաբական կոալիցիայի սկզբունքային համաձայնությունը կայացավ 1917 թ. նոյեմբերի 18-ին փոխզիջման միջոցով: Դեկտեմբերի 9-ին կազմվեց բոլշևիկ-էսէռական խառը կառավարությունը: Ձախ էսէռները, բլոկ կազմելով բոլշևիկների հետ, ստացան 7-ը կոմիսարական պորտֆել: Բացի այդ ՀԿԳԿ-ում նրանց խմբակցությունը գբաղեցնում էր ձայների 1/3-ը: Կառավարական կոալիցիա կազմելու դիմաց բոլշևիկները պարտավորվեցին ընդունել գյուղացիական 242 պատվիրանների (նակազ) հիման վրա կազմված Հողի սոցիալիզացիայի (համայնացման) մասին էսէռական օրենքը: Այն ընդունվեց 1918 թ. հունվարին բանվորների, զինվորների և գյուղացիների միացյալ խորհուրդների Համառուսաստանյան 3-րդ համագումարում: Սակայն հետագայում այդ օրենքը չկիրառվեց: Գործադրվեց Հողի ազգայնացման կամ պետականացման մասին բոլշևիկյան հողային օրենքը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ հետագայում Հայաստանում:

Հարկ է նշել, որ կոմկուսի ղեկավար մի հատվածի (Լ. Տրոցկի, Ն. Բուխարին և ուրիշներ) ու ձախ էսէռների միջև կար գաղափարական որոշ ընդհանրություն: Բանն այն է, որ երկուսն էլ տարված էին համաշխարհային պերմանենտ հեղափոխության տեսությամբ, որը, սակայն, չիրականացավ:

Բոլշևիկ-ձախ էսէռ կոալիցիան գործեց 1917 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1918 թ. մարտ խորհուրդների Համառուսաստանյան 4-րդ համագումարը, երբ Բրեստի հաշտության, «ռազմական կոմունիզմի» բաղաբականության և մի բանի այլ հարցերում առաջացած տարաձայնությունների պատճառով հետ կանչեցին իրենց ներկայացուցիչներին կառավարությունից, իսկ վերջնական խզումը տեղի ունեցավ հուլիսի 5-6-ի ձախ էսէռների հայտնի խռովության ճնշումով: Նրանք հեռացան Ժողկոմխորհից, սակայն մնացին

[1] *Верт Н.*, История Советского государства. 1900-1991, М., 1992, с. 110.

Համ. ԿԳԿ-ում (որպես պառլամենտ), Չեկայում և այլ հիմնարկներում: Եթե խորհուրդների Համառուսաստանյան 5-րդ համագումարում (1918 թ. հուլիս) ձախ էսէռները ստացել էին 30-ից ավելի պատգամավորական մանդատ, ապա հուլիսյան պետական հեղաշրջման փորձի ձախողումից հետո նրանք մեծապես հեղինակազրկվեցին: Արդեն 1918 թ. նոյեմբերին Խորհուրդների 6-րդ համագումարում ձախ էսէռներն ունեին ընդամենը մեկ մանդատ նախկին 30-ի փոխարեն[1]: Քաղաքացիական կռիվների ավարտից հետո այս կուսակցությունը նույնպես քայքայվեց

Այդպիսով, կարելի է ասել, որ, սկսած 1918 թ հուլիսից, Ձախ էսէռներին կուսակցության քաղաքական իշխանությունից վերջնականորեն հեռացնելուց հետո Ռուսաստանում հաստատվեց միակուսակցական կառավարում պրոլետարիատի դիկտատուրայի ձևով:

Հետաքրքրական է, որ Հոկտեմբերյան փուլում և դրանից հետո բոլշևիկներին մերձենալու ձգտում ցուցաբերեցին և որոշ համագործակցություն տեղի ունեցավ նաև անարխիստական կազմակերպությունների հետ: Անարխիստները որոշ մասնակցություն էին հանդես բերել Ժամանակավոր կառավարության տապալմանը և բոլշևիկների հաղթանակին: Նրանց ներկայացուցիչները, բոլշևիկների և ձախ էսէռների հետ միասին ընդգրկված էին Պետրոգրադի ու տարբեր քաղաքների ՌՀԿ-ներում[2]: Անարխիստների համար իբրև գաղափարախոսական հենք ձգողական ուժ ուներ մարքս-լենինյան հայտնի դրույթը պետության որպես բռնության մեքենայի վերացման մասին, ինչպես նաև նրանց հոգեհարազատ էին բոլշևիկյան պայքարի կիսաքրեական գործելակերպն ու մեթոդները ահաբեկչությունը, բռնագրավումները և այլն: Սակայն խորհրդային կառավարությունը ռազմաքաղաքական նկատառումներով սրանց «օգտագործելուց» հետո քաղաքացիական պատերազմի ավարտին նրանց հանդեպ վարվեց որպես քրեական

---

[1] Политические партии России, с. 377.

[2] *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 70.

հանցագործների Կարմիր բանակն ու Չեկան ոչնչացրին անարխիստների մանանոյատիպ միավորումները:

Քաղաքացիական պատերազմի տարիներին ստեղծված ծանր վիճակի թելադրանքով բոլշևիկները հանդուրժողական ու սիրաշահման վարքագիծ դրսևորեցին նաև ձախ մենշևիկ ինտերնացիոնալիստների հանդեպ, ինչին վերջիններս պատասխանեցին փոխադարձ համագործակցությամբ: Այդ մասին խոսք կլինի այլ հարցի կապակցությամբ:

* * *

Այժմ պարզենք, թե ինչպիսին էր կուլիցիայի հարցը խորհրդայնացված Հայաստանի պարագայում: Հայաստանում կուլիցիոն սոցիալիստական կառավարություն ստեղծելու հնարավորություն էր տալիս երիցս հիշատակված Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական (Դրո-Լեգրան) համաձայնագիրը: Համաձայնագրի 6-րդ կետում ասվում էր. «Ռազմահեղափոխական կոմիտեի կազմի մեջ մտնում են 5 անդամ կոմունիստական կուսակցության կողմից նշանակված և 2 անդամ՝ ձախ դաշնակցականների խմբից համաձայնեցնելով կոմունիստական կուսակցության հետ»[1]: Այսինքն նախատեսվում էր, որ Հայհեղկոմը կազմված էր լինելու 5 կոմունիստներից (Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Բեկզադյան և Ա. Նուրիջանյան) և 2 «ձախ» դաշնակցականներից Դրո և Հ. Տերտերյան[2]: Սակայն դեկտեմբերի 4-ին կայանական հեղկոմը տակավին ոչ լրիվ կազմով Երևան հասնելուն պես կտրականապես դեմ արտահայտվեց Դաշնակցության հետ ցանկացած գործակցությանը ու կուլիցիային անկախ նրանից «ձաղ» են, թե՝ աջ[3]: Ավելին, նրանք կշտամբեցին Լեգրանին, թե նա ինչու

---

[1] *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 533-534, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն), Ե., 2000, էջ 383-384:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, թ. 476, *Ստեփանի Կ.*, Փետրվարյան ապստամբությունը, տես «Հայրենիք», Պոսթոն, 1925, թիվ 12 (հոկտեմբեր), էջ 94:

[3] «Դրոշակ», Պարիզ, 1930, թիվ 10, էջ 240:

լ, նման համաձայնության գնացել: Ս Վրացյանը վկայում է, որ Հայհեղկոմը չեղյալ հայտարարեց Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը[1]:

Պարզվում է, որ Բոլշևիկ-ՀՅԴ կոալիցիոն կառավարություն ստեղծելու նախաձեռնության հեղինակը Կովկասի կոմունիստների ղեկավար Գ. Օրջոնիկիձեն էր, որի նպատակը, որոշ մարտավարական զիջումների գնալով, հեշտացնել Հայաստանի խորհրդայնացման գործը: Տեղին է հիշեցնել, որ այդ օրերին բազմահրամուտ Օրջոնիկիձեի համանման հնարքներից մեկն էլ Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի ընդունած հռչակագիրն էր հայկական երեք գավառների Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի (վերջինիս լիակատար ինքնորոշման իրավունք տալու միջոցով) Հայաստանի անբաժանելի մասը ճանաչելու մասին: Բայց շատ շուտով պարզվեց, որ դա ընդամենը քարոզչական հնարք էր Հայաստանի խորհրդայնացումը հեշտացնելու նպատակով:

Հենց կոալիցիայի գաղափարն էլ Օրջոնիկիձեն հուշել էր Բ. Լեգրանին, որն էլ համաձայնվել էր Ս. Վրացյանի կառավարության առաջարկին երկու «ձախ» դաշնակցականի ՀՌՀԿ-ի մեջ ընդգրկելու վերաբերյալ: Բացի այդ, Գ. Օրջոնիկիձեն, նկատի ունենալով «Հայաստանում պրոլետարիատի բացակայությունը» և «գյուղացիական բնակչության քաղաքական հետամնացությունը կոմունիստական գաղափարների հանդեպ», կուսակցության անունից հանձնարարական էր տվել Հայհեղկոմի ընկերներին «Հայաստանում իշխանությունը գրավելուց հետո գգույշ քաղաքականություն վարել, ... ստեղծել հայկական ժողովրդական (այսինքն «կոալիցիոն» - Ա. Հ.) կառավարություն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները և այլն»[3]: Սակայն փաստերի ուսումնասիրությունը ընթերցողին բերում է այն համոզման, որ Հայկոմկուսի ԿԿ ր և նրա

---

[1] *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 543:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 67, թ. 1, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական ագրոմություն), Ե., 2000, էջ 377:

[3] *Օրջոնիկիձե Գ. Կ.*, Ընտիր հոդվածներ և ճառեր (1918-1937), Ե., 1950, էջ 58, նաև *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 528:

ձևավորած հեղկոմը ոչ միայն չգնացին փոխզիջման ու կոալիցիոն կառավարության, այլ գնալով ավելի ուժեղացրին ճնշումներն ու բռնությունները այլախոհ կուսակցությունների ու մտավորականության հանդեպ: Ահա այդ բացթողման մասին էր նաև հետագայում շեշտում Վ. Լենինը Կովկասի հանրապետությունների կոմունիստներին ուղղված իր 1921 թ. ապրիլի 14-ի հայտնի նամակում[1]:

Եթե Ռուսաստանի բոլշևիկ ղեկավարները ստեղծված սոցիալ-քաղաքական և ռազմական բարդ իրավիճակի թելադրանքով տակտիկական քայլ կատարեցին և ժամանակավորապես կառավարության մեջ հրավիրեցին ձախ էսէռներին, համեմատաբար մեղմ ու հանդուրժող վերաբերմունք ցուցաբերեցին սոցիալիստական մի քանի կուսակցությունների, մասնավորապես ձախ մենշևիկ ինտերնացիոնալիստների հանդեպ նրանց առաջնորդ Յու. Մարտովի գլխավորությամբ (խորհուրդների Համառուսաստանյան 7-րդ համագումարում վերջինս անգամ ընտրվել էր ՀԿԳԿ-ի անդամ), ապա Հայաստանի պարագայում Հայկոմկուսը և Հայհեղկոմը ի սկզբանե ցուցաբերեցին անհանդուրժողականություն առանց բացառության հայ բոլոր կուսակցությունների հանդեպ.

Հայաստանի խորհրդայնացումից հետո գործնականում արգելվեց մինչ այդ հանրապետությունում գործող շուրջ մեկ տասնյակի հասնող քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Եթե դրանցից մի քանիսը, այդ թվում ՀՅԴ, այնուամենայնիվ, կիսալեգալ գործում էին, ապա հրապարակավ դա ցույց չէին տալիս: Հայտնի է՝ ՀՅԴ Բյուրոն, դեկտեմբերի 1-ին, Հայաստանից հեռանալով, հրահանգել էր իր բազմահազար անդամ ունեցող կազմակերպություններին. «...իրենց տեղական պայմանների համաձայն գործել և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը»[2]: Նույն կարգավիճակում հայտնվեցին բոլշևիկներին ընդդիմադիր

---

[1] *Լենին Վ.Ի.*, ԵԼԺ, հ. 43, Ե., 1982, էջ 237–240:

[2] Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ. և կազմող Ղազախեցյան Վ. Ն., Ե., 1999, էջ 10:

և այլախոհ Հայաստանի մյուս կուսակցություններն ու կազմակերպությունները՝ ՀԺԿ, Ս. Դ. Հնչակ, ՀՍԴԲԿ, ՀՍՌԿ և ուրիշներ:

Հարց է ծագում. ինչու՞ Հայաստանի պարագայում չկայացավ կոալիցիա և բոլշևիկների կողմից չցուցաբերվեց քիչ թե շատ հանդուրժողական վերաբերմունք ոչ պրոլետարական, «մանրբուրժուական» որակվող հայ քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Մեր կարծիքով, սա առաջին հերթին պետք է բացատրել նրանով, որ իշխանության գլուխ անցած **Հայհեղկոմը Հայաստանում որևէ կուսակցության կողմից քաղաքական հենարանի ու աջակցության կարիքը չուներ, որովհետև նա այդ իշխանությունը ստացել էր Խորհրդային Ռուսաստանի ու նրա Կարմիր բանակի օգնությամբ** և անգամ անհրաժեշտ չհամարեց Օրջոնիկիձեի ու Լեգրանի մշակած քաղաքական սցենարով մի երկու «ձախ» դաշնակցականի, թեկուզ ձևական, ներառելու Հայհեղկոմի կառավարության կազմում: Խորհրդային Հայաստանի կառավարության թիկունքին էր Խորհրդային Ռուսաստանը Դրա համար էլ Հայաստանի բոլշևիկները իշխանությունը վերցնելու առաջին իսկ օրերից սկսեցին իրենց պահել սանձարձակ. փաստորեն վարել բռնությունների, ձնշումների ու «ռազմական կոմունիզմի», Մեծն Գ. Նժդեհի բնորոշմամբ «պետական բանդիտիզմի» և «զանգվածային ավազակության» քաղաքականություն[1]

Այսպիսով, ի տարբերություն Ռուսաստանի, Հայաստանում բոլշևիկյան իշխանությունը, ի սկզբանե, չընդունեց ոչ մի կոալիցիոն ձև:

Մյուս կողմից էլ հարկ է նկատել, որ 1920 թ վերջերին ՀՀ համար ստեղծված անել իրավիճակում հայ ժողովուրդը բավականին հեշտությամբ (ըմբռնումով) ընդունեց բոլշևիկյան Ռուսաստանի գերիշխանությունն ու կոմունիստական միակուսակցական, ավտորիտար մենիշխանական վարչակարգը, որովհետև Հայաստանի համար ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավի-

---

[1] *Նժդեհ Գ.*, Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 469:

ճակը. թուրքական մահացու վտանգը, արևմտյան կողմնորոշման (արևելման) հուսախաբությունները և այն ինքնին թելադրում էր ընդունել բոլշևիկյան Ռուսաստանի վարչակարգը՝ սակայն առանց տեղյակ լինելու նրա բնույթին ու բուն էությանը: Ասվածին պետք է, հավելել նաև այն հանգամանքը, որ նախընթաց դարերի փորձով արևելահայի գիտակցության մեջ ձևավորվել էր այն մտայնությունը (համոզմունքը), որ ռուսն ու Ռուսաստանը համարվում են իր ֆիզիկական անվտանգության ու ապահովության, թերևս, միակ հուսալի երաշխիքը: Հայ ժողովրդին բավական էր լսել «քրիստոնեա ռուս» անունը, որպեսզի որևէ խոչընդոտ չհարուցվի նրա ճանապարհին: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջմամբ պայմանավորված ռուսական բանակի հեռանալը տարածաշրջանից ցավով ու ափսոսանքով էր ընդունել ոչ միայն ժողովուրդը, այլև հայ քաղաքական գրեթե բոլոր շրջանակները: Իսկ դրանից հետո՝ երկու-երեք տարի անց, երբ արդեն բոլշևիկ դարձած այդ բանակը կրկին հայտնվեց Անդրկովկասում ու Հայաստանում, բնականաբար, ժողովուրդը նրան պետք է, ընդուներ բարյացակամորեն: Հայ գեղջուկը մտածում էր, որ եթե եկողը «ռուս» է, թեկուզ «բոլշևիկ», ուստի հայ ժողովրդի քաղաքական անվտանգության համար անհանգստանալու որևէ հիմք չկա: Այս գիտակցությունը պահպանվում է, նաև ներկայումս կապված Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) և Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) Հայաստանի անդամակցության հրամայականի հետ: Սակայն պատմության փորձը նաև ցույց է տալիս, որ **յուրաքանչյուր ազգի, պետության անվտանգության միակ հուսալի երաշխավորը միայն ինքը՝ տվյալ ազգը կարող է լինել**.

Հասկանալի է, որ այն ժամանակ հայ հանրության մեջ և նրա քաղաքական շրջանակներում կարմիր բանակի նոյեմբեր-դեկտեմբերյան մուտքը Հայաստան դիմադրության չհանդիպեց, որովհետև թուրքական մահացու սպառնալիքի պայմաններում

խորհրդայնացմանը և խորհրդային-բոլշևիկյան վարչակարգի ընդունմանը **այլընտրանք** չկար[1]

Եվ դա ոչ այն բանի համար, որ նա ծանոթ էր խորհրդային վարչակարգի էությանը կամ ամբողջությամբ կիսում էր կոմունիստական գաղափարախոսությունն ու քաղաքականությունը։ Այսպիսին էր Հայաստանի խորհրդայնացման սկիզբը։ Սակայն բոլորովին այլ վիճակ ստեղծվեց խորհրդայնացումից կարճ ժամանականց ...

Հայաստանի խորհրդայնացման փուլում և դրանից հետո աչք է ծակում հայ կոմունիստների անհանդուրժողականությունը այլախոհ կուսակցությունների հանդեպ, առավել ևս նախկին հիմնական կառավարող ՀՅԴ նկատմամբ, թեև երկուսն էլ համարվում էին սոցիալիստական կողմնորոշման կուսակցություն։ Համեմատության կարգով փաստենք, որ Հայաստանի առաջին Հանրապետության գոյության 2,5 տարիների ընթացքում Հայաստանի բոլշևիկները ոչ մի անգամ հանդես չբերեցին կառուցողական մոտեցում Հայաստանի իշխանությունների հանդեպ երկրի առջև ծառացած արտաքին ու ներքին բնույթի խնդիրների լուծման գործում։ Ավելին, դրսից ու ներսից նրանք դավում էին, որպեսզի ՀՀ-ը շուտ տապալվի։ Անգամ 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմի ճակատագրական օրերին Հայկոմկուսը միակ քաղաքական ուժն էր, որ ցանկանում էր Հայաստանի պարտությունը։ «Որքան էլ զարմանալի է,- գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը,- թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում հայ բոլշևիկ գործիչներից և ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու սեփական ժողովրդին ուղղված որևէ կոչով։ Նրանք իրենց քայքայիչ ու վնասակար գործողություններով փաստորեն կատարում էին «հինգերորդ շարասյան» դեր նպաստում

---

[1] *Հակոբյան Ա., Մարգսյան Ա.*, Հայոց պատմություն, Ե., 2010, էջ 288-289։

[2] *Սիմոնյան Հ. Ռ.*, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 401։

էին թուրքերի հաղթանակին, Հայաստանի պարտությանը և նրա շուտափույթ խորհրդայնացմանը[1]:

Իշխանության գլուխ անցած Հայկոմկուսն ու Հայհեղկոմը իրենց անհանդուրժող ու անհեռատես սոցիալ-տնտեսական քաղաքականությունը ի հայտ բերեցին կառավարման առաջին իսկ օրերից, որն Լ. ի վերջո, պետք է առաջացներ զանգվածների դժգոհությունը:

Իբրև պատմական զուգահեռ ի տարբերություն Հայկոմկուսի, որն այդպես էլ չհանդուրժեց ոչ մի կոմպրոմիս ու կոալիցիա, այնուամենայնիվ, ՀՅԴ-ը, Հայաստանի առաջին հանրապետության կառավարման շրջանում, հանգամանքների և քաղաքական իրավիճակի թելադրանքով երկու անգամ ձևավորել է կոալիցիոն (խառը) կառավարություն, առաջին դեպքում՝ Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ), իսկ երկրորդում Հայ սոցիալիստ-հեղափոխականների (Էսէռների) կուսակցության հետ: Բացի այդ, ՀՀ երկու գումարման խորհրդարաններում գործել են զանազան ընդդիմադիր խմբակցություններ, այդ թվում սոցիալ-դեմոկրատ մենշևիկ ու բոլշևիկ և այլն: Եվ սա այն դեպքում, երբ Խորհրդային Հայաստանի պատմության 70 տարիների ընթացքում նրա՝ խորհրդարան համարվող բազում գումարման Գերագույն խորհուրդներում բացառվել է այլախոհ որևէ կուսակցական խմբակցության գոյությունը:

Հայաստանի խորհրդայնացման առաջին փուլում Հայկոմկուսի անհանդուրժողական կեցվածքը այլ կուսակցությունների ու հատկապես ՀՅԴ նկատմամբ կարելի է ինչ-որ չափով բացատրել նաև Թուրքիայի գործոնով: Բանն այն է, որ այդ շրջանում Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների վրա ճնշումներ էր բանեցնում նաև բեմալական կառավարությունը: Նրանք դա բացատրում էին նրանով, որ իրենք քաղաքական առումով իբր չեն վստահում հայ կոմունիստներին և Հայաստանի խորհրդային կառավարությանը: Անգամ Դրոյին, ով Հայհեղկոմի կառավարության անդամ

---

[1] *Հակոբյան Ա.*, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ., Ե., 2005, էջ 313–316:

չէր, թուրքերը պահանջում էին հեռացնել Հայաստանի կարմիր բանակի հրամանատարի պաշտոնից, որն էլ շուտով (1921 թ հունվարի սկզբին) ի կատար է ածվում[1].

Դրոյի և Դաշնակցություն կուսակցության հանդեպ շատ ավելի անհաշտ ու անհանդուրժող վարքագիծ է դրսևորել թուրքերի անմիջական ենթակայության տակ գտնվող Ալեքսանդրապոլի հեղկոմը, որն իրեն հռչակել էր Հայաստանի ՈՀԿ: «Դրոյի և մյուս դաշնակ հրամանատարների առկայությունը,- նշվում է հեղկոմի նախագահ Նուշիկ Ջավարյանի և քարտուղար Ներսիկ Ստեփանյանի ստորագրությամբ 1920 թ դեկտեմբերի 23-ի ամսաթվով ընդունված բանաձևում,- վարկաբեկում է մեր կառավարությունը և իշխանությունը ինչպես բանվորագյուղացիական զանգվածների, այնպես էլ թուրք ասկյարների աչքերում»[2]

Տեղին է նաև փաստել, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրը անընդունելի վարքագիծ է դրսևորել նաև Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ Լեգրանը Զարմանալին այն է, որ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի ստորագրման օրը նույն ինքը Բ Լեգրանը, անտեսելով խորհրդային կողմի պարտավորությունը, որ չեն հետապնդվի ՀՅԴ-ու Հայաստանի մյուս ոչ պրոլետարական համարվող կուսակցությունների անդամները, ՀՀ նախկին կառավարության անդամները, նախկին սպաները և այլն, անձամբ կարգադրում է անհապաղ ձերբակալել Հայաստանի նախկին վարչապետ Հ Օհանջանյանին և նրա կաբինետի բոլոր անդամներին ու մի շարք «հակահեղափոխական այլ գործիչների»[3]: Այդպես էլ արվում է. Հասկանալի է, որ հասարակական-քաղաքական նման մթնոլորտը չէր

---

[1] *Դաշտախնցյան Վ. Ն.* Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 90; *Հակոբյան Ա.*, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010, էջ 123-124:

[2] ՀԱԱՀ, ֆ. 114, ց. 2c, գ. 18, թ. 3:

[3] *Վիրաբյան Ա.*, Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Նոր Ռանքեր Հայաստանի արխիվների», Ե., 2009, թիվ 1, էջ 107:

կարող հանդուրժողական միջավայր ձևավորել ընդդիմադիր ու այլախոհ կուսակցությունների ու մտավորականության նկատմամբ:

Ամփոփենք եթե ՌՍԴԲ (բ)Կ-ը և նրա ձևավորած կառավարությունը տակտիկական նկատառումներով, այնուամենայնիվ, դիմել են կոմպրոմիսների, կազմել է, կոալիցիա Ձախ էսէռների կուսակցության հետ, խորհուրդներում ու Համառուսաստանյան ԿԳԿ-ում համատեղ աշխատել են չափավոր սոցիալիստական կողմնորոշման այլ կուսակցությունների հետ և այլն, ապա Հայկոմկուսն ու նրա կառավարությունը համարվող Հայհեղկոմը, թեկուզ ձևական, չգնաց ոչ մի փոխզիջման ու կոալիցիայի: Եվ դա հավանաբար պետք է բացատրել նրանով, որ հայ բոլշևիկ ղեկավարությունը, իր թիկունքին ունենալով Խորհրդային Ռուսաստանի ու նրա կարմիր բանակի անվերապահ օգնությունն ու աջակցությունը, ի սկզբանե ավելորդ համարեց գնալ քաղաքական սակարկումների ու անմիջապես հաստատեց կոմկուսի մենիշխանական դիկտատուրան, որն անցած 70 տարիներին ընդմիջվել է, այն էլ ոչ բոլոր գավառներում, ընդամենը 1.5 ամսով 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքում: Հայաստանի նորահռչակ խորհրդային իշխանությունը, հանձինս Հայկոմկուսի և Հայհեղկոմի, իր երկամյա տիրապետության շրջանում դասակարգային պայքարի բորբոքման անվան տակ այնպիսի անհանդուրժողական քաղաքականություն վարեց, որ Փետրվարյան ժողովրդական ապստամբության և դրան հետևած բաղաքացիական կռիվների շրջանում Հայաստանում բացահայտ թե գաղտնի գործող ոչ մի կուսակցություն Հայաստանյաց առաքելական եկեղեցու հետ միասին որևէ աջակցություն ցույց չտվեց կոմունիստական իշխանություններին: Ընդհակառակը, ազատության և անկախության կարգախոսներով նրանք կռվում էին բոլշևիկյան վարչակարգի դեմ: Սակայն ապստամբությունը ճնշվեց դրսի ամենակարող ուժի Կարմիր բանակի միջոցով:

4. *Վերաբերմունքը մամուլի և մշակույթի ազատության հարցերում*

Համեմատություն և զուգահեռներ անցկացնելով Խորհրդային Ռուսաստանի կառավարության (Ժողկոմխորհի) և Հայհեղկոմի կողմից մամուլի, հրատարակչությունների և տեղեկատվության այլ միջոցների նկատմամբ վարած քաղաքականության հարցում փաստերը ընթերցողին բերում են այն համոզման, որ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը այս տեսակետից նույնպես համեմատության մեջ ավելի հանդուրժող (տոլերանտ) է եղել քան հայաստանյանը:

Ռուսաստանում ոչ բոլշևիկյան այլախոհ թերթերի և տեղեկատվական ու հրատարակչական այլ միջոցների փակումը կատարվել է աստիճանաբար: Տվյալներ կան, որ միայն Հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած առաջին օրերին Պետերի ՌՀԿ-ն հաստատել էր փակել ընդամենը 7 թերթ և վերահսկողություն սահմանել ռադիոյի և հեռագրի վրա[1]: Ուշադրության է արժանի Ժողկոմխորհի 1917 թ. հոկտեմբերի 27-ին ընդունած դեկրետը «Մամուլի մասին», որում սահմանվում էին, կարելի է ասել, իր ժամանակի համար բավականին չափավոր հետևյալ ընդհանուր դրույթները. 1/ փակման են ենթակա մամուլի այն օրգանները, որոնք բանվորագյուղացիական կառավարությանը բացահայտ դիմադրության ու անհնազանդության կոչ կանեն, 2/ փաստերի խեղաթյուրման և ակնհայտ զրպարտության միջոցով սերմանում են խռովություն և 3/ բացահայտ հանցավոր, քրեորեն պատժելի գործողությունների կոչ կարվի»[2]: Այդ նշանակում է, որ մնացած դեպքերում մամուլի միջոցները, անկախ կուսակցական և այլ պատկանելությունից, կարող էին ազատ գործել: Սակայն խորհրդային կառավարությունը մինչև վերջ հավատարիմ չմնաց մամուլի ազատության այդ կանոններին: Արդեն 1918 թ. հունվար-փետրվար

---

[1] *Верт Н.*, История Советского государства. 1900–1991, М., 1992, с. 110.
[2] *Орлов А. С.* и др., Хрестоматия по истории России, М., 2009, с. 417.

վարին միայն Պետրոգրադում և Մոսկվայում փակվել էին մոտ 70 թերթ[1]

Այդուհանդերձ, հետհոկտեմբերյան շրջանում տարբեր հաճախականությամբ, երբեմն էլ անվանափոխումներով լույս էին տեսնում էսէռական «Դելո նարոդա», «Զնամյա տրուդա», «Գյուղացիական ազատություն», մենշևիկյան «Նովայա ժիզն», «Դեն», կադետական «Ռեչ», «Ռուսսկոյե սլովո», անգամ պահպանողական «Ռուսսկիե վեդոմոստի» և համառուսաստանյան մասշտաբի այլ օրաթերթեր, մի հանգամանք, որը բացառված է եղել խորհրդայնացված Հայաստանի պարագայում:

Ուշագրավ է, որ բաղաքացիական պատերազմի գրեթե ողջ ընթացքում գործնականում լեգալ (ազատ) է գործել մենշևիկյան մամուլը, ինչը բացատրվում է նրանով, որ ՌՍԴԲԿ (մենշևիկները) ու հատկապես նրանց առաջնորդ Յու. Մարտովը մեղմ, ինչ-որ տեղ հաշտվողական դիրք էր գրավել բոլշևիկների հանդեպ և նույնիսկ առաջարկում էր Սահմանադիր ժողովը չհակադրել Սովետներին (խորհուրդներին)[2]: Բացի Յու. Մարտովից՝ մենշևիկյան ԿԿ-ի մյուս անդամներ Պ. Աքսելրոդը, Ֆ. Դանը, Ա. Պոտրեսովը և ուրիշներ հանդուրժող ու լոյալ դիրքորոշում ունեին խորհրդային իշխանության հանդեպ. Էսէռների պես մենշևիկ պատգամավորները զգալի տեղեր էին գրաղեցնում Ռուսաստանի տարբեր մակարդակի խորհուրդներում: Նրանք պաշտոններ էին վարում տարբեր բաղաքների ու մարզերի իշխանության մարմիններում, աշխատում էին արհեստակցական միություններում, հրատարակում էին թերթեր, ամսագրեր, գրքույկներ, բաղաքական ու գեղարվեստական գրականություն և այլն: Վստահաբար կարելի է ասել, որ ա/ խորհրդային կառավարության նման լոյալ բաղաքականությունը մենշևիկների և մյուս սոցիալիստական կողմնորոշման կուսակցությունների հանդեպ և բ/ ՌԿ (բ)Կ 8-րդ համագու-

---

[1] *Павлов Д. Б.*, Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 - середина 1950-х годов, М., 1999, с. 23.
[2] Политические партии России, с. 330.

մարի (1919 թ. մարտ) որոշումով շրջաղարձը միջակ գյուղացիության նկատմամբ հնարավորություն տվեցին խորհրդային կառավարությանը վերջին հաշվով հաղթել քաղաքացիական կռիվներում: Սակայն բոլշևիկների համեմատաբար մեղմ խուսանավողական քաղաքականությունը մենշևիկների և մյուս չափավոր սոցիալիստական կուսակցությունների հանդեպ, ինչպես արդեն ասվել է, ընդամենը իրավիճակային, մարտավարական բայլ էր: Այնքանից հետո, երբ նրանք ամրապնդեցին իրենց քաղաքական դիրքերը և ռազմական հաջողությունները քաղաքացիական պատերազմում, ուժեղացրին հետապնդումներն ու կազմալուծման գործընթացները ՌՍԴԲԿ-ի և մյուս սոցիալիստական ու «մանրբուրժուական» որակվող կուսակցությունների նկատմամբ: Այսպես օրինակ ՌԿ (բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն 1920 թ. մայիսին հատուկ որոշում կայացրեց վերջ տալ մենշևիկյան մամուլի լեգալ (հրապարակային) գործունեությանը[1]: Բոլշևիկները մենշևիկների դեմ վճռական հարձակման անցան արդեն 1921 թ. Կրոնշտատի խռովության առիթով:

Էսէռների և մենշևիկների մամուլից զատ, ինչպես արդեն ակնարկվեց, մինչև քաղաքացիական պատերազմի խորացումը (1918 թ. գարնան ավարտը) կիսալեգալ գործունեության և մամուլ ունենալու հնարավորություն է տրվել անգամ բուրժուական համարվող Սահմանադրական դեմոկրատների (կադետների) կուսակցությանը: Նրանց ԿԿ-ը մասնակի կիսալեգալ նիստեր է գումարել: Գործել են նրանց շրջանային և քաղաքային կոմիտեները: Շարունակվել են հրատարակվել կադետական պաշտոնական թերթեր Պետրոգրադում, Մոսկվայում և այլուր, տպագրվել են քաղաքական գրականություն, գրքույկներ և այլն[2]:

Մամուլի և ազատ խոսքի հարցում այլ պատկեր ենք տեսնում Հայաստանում: Ի տարբերություն Ռուսաստանի խորհրդային կառավարության Հայհեղկոմը ի սկզբանե շատ ավելի կոշտ ու անզիջող գիծ վարեց մամուլի, աշխարհիկ և հոգևոր հրատարակ

[1] Նույն տեղում, էջ 340:
[2] Նույն տեղում, էջ 302:

չությունների ու տեղեկատվական այլ միջոցների նկատմամբ: Սկըսած 1920 թ. դեկտեմբերի 2-ից Հայաստանում պաշտոնապես փակվեցին դաշնակցական, ՀԺԿ, էսէռական, բոլշևիզմին ընդդիմադիր ու անգամ լոյալ գրեթե բոլոր կուսակցական թերթերն ու հանդեսները: Հանրապետության տարածքում արգելվեց ցանկացած այլախոհ պարբերականի լույսընծայումը: Ի դեպ, մինչ Հայաստանի խորհրդայնացումը հանրապետության տարածքում տարբեր հաճախականությամբ հրատարակվել են 60 անուն բազմակուսակցական տարաբնույթ թերթեր ու ամսագրեր, այդ թվում մեկ տասնյակից ավելի՝ բոլշևիկյան[1]: ՀՅԴ գլխավոր պաշտոնաթերթ «Յառաջ»-ի վերջին համարը լույս տեսավ դեկտեմբերի 1-ին: Թերթի տպարանի, սարքավորումների հիման վրա դեկտեմբերի 5-ից սկսեց հրատարակվել ՀԿ (բ)Կ ԿԿ-ի և Երևանի կոմիտեի պաշտոնական օրգան երկլեզու (հայերեն և ռուսերեն) «Կոմունիստ»-ը՝ սկզբում Աշոտ Հովհաննիսյանի, իսկ 12-րդ համարից՝ լրագրող Եղիա Չուբարի խմբագրությամբ: 1921 թ. մայիսի 27-ից «Կոմունիստը» վերանվանվեց «Խորհրդային Հայաստան»: Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ. փետրվար-մարտ) մի առիթով Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը ակնարկել է, որ իրենք «թույլ են տվել, որ Հայաստանում տպվի «Մշակ» անկուսակցական թերթը, սակայն նա քոչեց այստեղից Թիֆլիս»[2]: Ալ. Մյասնիկյանը հավանաբար նկատի է ունեցել 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևանում հրատարակված «Մշակ Հայաստանի» անունով անկուսակցական թերթը (խմբ. Գ. Տեր-Ռուբինյան), որին խորհրդահայ պարբերական մամուլի պատմության մասնագետ Հ. Ֆելեքյանը բնորոշել է որպես «գաղափարապես շատ հեղհեղուկ մի հրատարակություն»[3]:

---

[1] *Հակոբյան Ա.*, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն 1918–1920 թթ., Ե., 2005, էջ 4:

[2] ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), Ե., 1922, էջ 16:

[3] *Ֆելեքյան Հ. Հ.* Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Ե., 1970, էջ 41:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հանրապետության տեղեկատվական բոլոր միջոցները մամուլը, հրատարակչությունները, տպարանները, գրադարանները, գրախանութները, փոստը, հեռագիրը, հեռախոսը, ռադիոն և այլն, դրվեցին կառավարության խիստ վերահսկողության ու կոշտ գրաքննության տակ։ Ամբողջ դրանց որոշ ոլորտներ հատուկ դեկրետներով ռազմականացվեցին, որպեսզի վերահսկվեր ու կանխվեր հակակոմունիստական, հակահեղափոխական, լրտեսական ցանկացած փորձ։

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1921 թ. հոկտեմբերի 31-ի նիստում լսվեց պետական հրատարակության մասին հարցը (զեկ. Լուսժողկոմ Ա.Հ. Հովհաննիսյան)։ Որոշվում է արձակել Պետհրատի կոլեգիան։ Այնուհետև հանձնարարվում է Լուսժողկոմատին ընդունել պետհրատի գործը և ԿԿ ներկայացնել հրատարակվող և հրատարակվելիք գրքերի, գրքույկների, ժողովածուների, պարբերականների և այլնի ցուցակները[1]։ Սա նշանակում էր, որ ԿԿ-ն իր հսկողության էր վերցնում լրատվության բոլոր միջոցները և հրատարակությունները։ Թույլատրվում էին միայն պաշտոնական պարբերականները՝ «Խորհրդային Հայաստան», «Ռաշպար», «Կարմիր գինվոր» և այլ պաշտոնաթերթեր, որոնք կոչված էին գովերգելու իշխանության մեծագործությունները։ Հարկ է նշել, որ կուսակցական, պետական լրատվամիջոցները ևս մշտապես գտնվում էին գրաքննության մամլիչի տակ, որպեսզի քաղաքականապես անթույլատրելի ու «վնասակար» նյութեր չտպագրվեն։

1922 թ. հունիսին հիմնվեց Գրականության և հրատարակչական գործերի գլխավոր վարչություն (**Գլավլիտ**)։ Այն իր մեջ միավորում էր գրաքննության բոլոր տեսակները, այդ թվում նաև վերահսկողությունը մշակույթի այլ ոլորտների՝ թատրոնի, գրական-գեղարվեստական, երաժշտաարվեստի, ռադիոհաղորդումների և այլ ոլորտների նկատմամբ։ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբաժնի գլխավոր քաղլուսվարի (քաղաքական լուսավորական բաժին) նախագահ Դանիել Դզնունու 1922 թ. դեկտեմբերի 1-ին ներկայացրած տարե-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 43։

կան հաշվետվության մեջ խոսվում է գրաքննության մասին և նշվում, որ բաժնի աշխատակիցների միջոցով գրաքննության են ենթարկվել տպարանների բոլոր հրատարակությունները, կինոյի ժապավենները, թատերական ներկայացումները և այլն՝ աշխատելով թողնել միայն այն, ինչը թույլատրելի է և՛ բաղաքական, և՛ գեղարվեստական տեսակետից[1]: Դրանից հետո՝ տասնամյակներ շարունակ, առանց գլավլիտի հավանության լույս չէր կարող տեսնել ոչ մի տպագիր հրատարակություն (ներառյալ քարտեզ, վիճակագրական աղյուսակ, ցուցապատառ, երաժշտական նոտա), թատերական ներկայացում կամ կինոֆիլմ և այլն: Գլավլիտը դառնում է գրաքննության (ցենզուրայի) նոր պետական մերենա: Գրաքննիչ մերենան սերտ համագործակցում էր պետանվտանգության մարմինների հետ: Մշակույթի կուսակցականության լենինյան ըմբռնումով՝ «շահագործողական հասարակության մեջ,- գրում էր խորհրդային տխրահռչակ գրաքննադատ Արտաշես Ոսկերչյանը,- արվեստն ու գիտությունը, ինչպես և հասարակական այլ երևույթներ, ունեն խոր դասակարգային բնույթ»[2]: Գրականության և արվեստի բնագավառում ցանկացած ազատ միտք կամ գաղափար, որպես կանոն, ենթակա էր արգելման ու հալածանքի: Պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, անշուշտ, իր արտահայտությունը պետք է, գտներ նաև հոգևոր-մշակույթի ոլորտում: Եվ դրա դրսևորումներից մեկը եղավ պրոլետարական կամ սոցիալիստական ռեալիզմի մեթոդը գեղարվեստի բնագավառում: Դրա չափանիշներն էին կուսակցականությունը գեղարվեստի բնագավառում, դասակարգային բովանդակությունը, սխեմատիզմը և այլն: «Գեղարվեստը բաղաքական ասպարեզից հեռու» բաց նամակում ոմն հոդվածագիր Հ. Մկրտչյանը ընդգծում էր երգահան Ռ. Մելիքյանին այն բանի համար, որ նա խնդիր է բարձրացրել, որ «գեղարվեստը պետք է հեռու լինի բաղաքականությունից»: Նա-

---

[1] ՀԱԱ. ֆ. 1, ց. 2, գ. 139, թ. 36–37:

[2] *Ոսկերչյան Ա.*, Հայ մարքսիստական քննադատության հիմնախնդիրները. Ե., 1962, էջ 371:

մակագիրը դա համարում էր բուրժուական մտածելակերպ և «սո վորեցնում էր» Երևանի պետական երաժշտական ստուդիայի ղե կավար, երաժշտագետ Ռ. Մելիքյանին, որ «չկա մի աշխատանք որ քաղաքականությունից դուրս լինի»: Վերջում հոդվածագիրը եզրակացնում էր, որ «Մեզ մնում է պայքարել Ռոմանոս Մելիք յանների դեմ»[1]:

Ի սկզբանե փական դրվեց հատկապես ազատ մտածող ու ստեղծագործող գրողների մտքի վրա: Արգելվում և խեղդվում էր մարքս-լենինյան գաղափարական-քաղաքական ուղուց ու չափա նիշներից ամեն մի փոքր իսկ շեղման փորձ: Եթե անգամ այս կամ այն ստեղծագործողի գործերում այդպիսիք չհայտնաբերվեին, ապա երբեմն հետևում էին ընդհուպ մինչև Կենտրոն ուղղված գր- պարտագրեր ու մատնագրեր: Բերենք այդպիսի մի օրինակ: Ուշա գրավ է, որ դեռ 1922 թ. Գլավլիտի գրաքննիչների տեսադաշտում են գտնվել երիտասարդ, հեղափոխական պաթոսով լեցուն, ոչ ստանդարտ, նորարար գրող **Եղիշե Չարենցը** ՀԱԱ ԿԿ-ի (թիվ 1) ֆոնդի գործերից մեկում մեր ուշադրությունը գրավեց նորահայտ մի դիմում-մեղադրագիր, որը Մոսկվայի «Մուրճ և մանգաղ» հրա տարակչության հայերեն գրականության գրաքննիչ Վ. Տեր-Գրի գորյանը 1922 թ. դեկտեմբերի 1-ի ամսաթվով հասցեագրել է իր վերադասին՝ Խորհրդային Ռուսաստանի Լուսավորության ժողկո- մատի կազմում գործող Գլավլիտի ղեկավար Պ. Լեբեդև-Պոլյանս- կուն: Մեր ձեռքի տակ գտնվող այդ փաստաթղթի մեքենագիր վավերացված պատճենում հաղորդվում էր հետևյալը. «Ինձ տե ղեկություն է հասել, որ սրանից մի քանի ամիս առաջ ՀՄԽՀ մի- ջոցներով հրատարակվել է Ե. Չարենցի բանաստեղծությունների երկհատորյակը, որը կոմունիստ իրազեկ ընկերների կարծիքով կրում է լիակատար հրահրող (погромный)-կղերական-ազգայնա կան բնույթ: Դրա համար խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ ծա նոթանալու նպատակով վերոնշյալ գրքից մեկ օրինակ ինձ հատ կացնելու համար, որպեսզի շտապ կարգով Ձեզ հաղորդեմ ման-

[1] «Խորհրդային Հայաստան», 14 նոյեմբերի 1922 թ.:

ռամասն տեղեկություններ այդ մասին: Չարենցի գիրքը դեռևս չի տարածվել»[1]. Ծանոթության կարգով նշենք, որ Չարենցի ստեղծագործությունների երկհատորյակը տպագրվել է Մոսկվայում 1922 թ. փետրվար-մայիսին ՀՍԽՀ պետական հրատարակչության կողմից՝ Խորհրդային Հայաստանի մշակույթի տան տպարանում[2]. Գրաքննիչ Վ. Տեր-Գրիգորյանի դիմումին պատասխանելու և համապատասխան գնահատական տալու նպատակով պատճենը Մոսկվայից Անդրերկրկոմի բարտուղարության միջոցով ուղարկվել է Երևան՝ ՀԿ(բ)Կ ԿԿ[3]: Սակայն ի պատիվ Հայկոմկուսի ԿԿ-ի, որի պատասխանատու բարտուղարը ազգային նկարագիր ունեցող Աշոտ Հովհաննիսյանն էր, իսկ ՀՍԽՀ Ժողկոմսորհի նախագահը՝ Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյանը) նախագահության 1923 թ. փետրվարի 22-ին տեղի ունեցած նիստում, քննության առնելով Չարենցի վերոնշյալ երկհատորյակի վերաբերյալ Վ. Տեր-Գրիգորյանի դիմումը, կտրուկ անհամաձայնություն է արտահայտում նման կարծիքին՝ այն որակելով «անհիմն և ակնհայտ սադրիչ», և անգամ հարց է բարձրացվում նշյալ գրաքննիչին ազատել զբաղեցրած պաշտոնից[4]: Հարկ է նշել, որ Աշոտ Հովհաննիսյանի ԿԿ-ի բարտուղարության շրջանում հավանաբար իր մեծ տաղանդի համար Ե. Չարենցը ստացել է ԿԿ-ի ու նրա թիվ մեկ քարտուղարի հովանավորությունը: Սակայն մյուս կողմից փաստն այն է, որ դեռ 1920-ական թվականների սկզբից նա հայտնվում է գրաքննչական մարմինների տեսադաշտում, դառնում միջակ ու անտաղանդ գրողների հարվածի թիրախ: Եվ նրա անձի ու ստեղծագործության հանդեպ հալածանքները նոր-նոր պետք է թափ առնեին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 35, թ. 58:

[2] *Չարենց Եղիշե*, Երկերի ժողովածու, հ. 1, 2, Մոսկվա, 1922:

[3] Խորհրդային գրաքննական համակարգը, ինչպես որ կուսակցական պետական ողջ կառավարման համակարգը, ունեցել է կենտրոնաձիգ կառուցվածք: Կարևոր կուսակցական-պաշտոնական գրությունները Մոսկվայից Հայաստան էին ուղարկվում ՌԿ(բ)Կ-ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի միջոցով:

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 9 շրջ:

Իհարկե, գրական-գեղարվեստական և առհասարակ հոգևոր ոլորտի նկատմամբ կուսակցության քաղաքականությունը ժամանակի ընթացքում դառնում է ավելի կոշտ, միասնական ու ղեկավարվում էր մեկ կենտրոնից: Ինքնին հասկանալի է, որ Հայկոմկուսն ու կառավարությունը ավելի կոշտ ու անհանդուրժող վարքագիծ պետք է դրսևորեին նաև մամուլի, ազատ խոսքի, մարդկանց հիմնարար իրավունքների ու ազատությունների հայցերում՝ անկախ նրանից, որ խորհրդային սահմանադրության մեջ խոսվում էին քաղաքացիների նման ազատությունների մասին: Սրանք Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից գործադրված առաջին քայլերն էին, որոնք պետք է Ռուսաստանի օրինակով ճանապարհ հարթեին պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ բոլշևիկյան միակուսակցական մենիշխանության հաստատմանը:

Այսպիսով՝ եթե հետհոկտեմբերյան Ռուսաստանում խորհրդային կառավարությունը ոչ պրոլետարական համարվող ընդդիմադիր մամուլի հրատարակչությունների, տեղեկատվական մյուս միջոցների փակման գործողությունների դիմեց աստիճանաբար, ինչը պայմանավորված էր նրա սոցիալ-քաղաքական դիրքերի թուլությամբ, խուսանավումների միջոցով իշխանությունը պահելու հրամայականով, ապա Հայաստանում ընդդիմադիր մամուլի և այլ միջոցների փակումը կատարվեց անմիջապես, մեկ հարվածով: Հետագայում մամուլի հարցում քաղաքականությունը Կենտրոնի և ազգային շրջանների միջև դարձավ միասնական: Փակվեցին հակակոմունիստական համարվող բոլոր պարբերականները: Հաստատվեց մամուլի, տեղեկատվության, գրականության ու արվեստի վրա գաղափարական մենաշնորհ, ամեն ինչ դրվեց կուսակցության խիստ վերահսկողության ու գրաքննության տակ:

5. *Կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների հարաբերությունները միակուսակցական կառավարման համակարգի հաստատման ճանապարհին*

Այժմ փորձենք համեմատել ՌԿ (բ)Կ և ՀԿ (բ)Կ վարած քաղաքականությունը ընդդիմադիր կուսակցությունների հանդեպ միակուսակցական ավտորիտար կառավարման հաստատման ճանապարհին:

Ռուսաստանցի պատմաբանների տվյալներով 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Ռուսաստանյան նախկին կայսրության սահմաններում հիմնվել ու գործել են ընդհանուր հաշվով մոտ 300 քաղաքական կուսակցություն, որոնցից 60-ը համառուսաստանյան մասշտաբի, իսկ մնացածը՝ ավելի քան 230-ը՝ իբրև ազգային բնույթի կուսակցություններ ու շարժումներ[1]: Կուսակցությունների նման պատկառելի քանակը զարմանալի չէ, որովհետև Ռուսական կայսրությունում ապրում էին 100-ից ավելի ազգեր ու ազգություններ, երկրի առջև ծառացած էին բազում հարցեր ու չլուծված խնդիրներ: 1917 թ. միայն Կովկասում գործում էին մոտ 50 տարաբնույթ կուսակցություններ: Դրանց թվում ամենաազդեցիկներից մեկը ՀՅԴ-ն էր: Նախահեղափոխական շրջանում նրա շարքերում տարբեր տվյալներով հաշվվում էր 160-165 հազար մարդ[2]:

1917 թ. փետրվար-հոկտեմբեր ամիսներին Ռուսաստանում ծավալվող հեղափոխությունների և իշխանության համար բուռն ու անհաշտ պայքարի արդյունքում ստացվեց այնպես, որ սկզբում ոչ մնծաթիվ բոլշևիկների կուսակցությանը հաջողվեց հասնել հաղթանակի և ստանձնել քայքայվող հսկայածավալ կայսրության կենտրոնական իշխանության ղեկը: Եվ այդ իշխանությունը նրանք կարողացան պահել ցուցաբերելով հստակ ռազմավարություն և ճկուն մարտավարություն:

---

[1] Политические партии России, с. 9.

[2] Նույն տեղում, էջ 275 և 291, ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 237, թ. 58:

Նախ հարց է ծագում. բոլշևիկները, վերցնելով իշխանությունը, արդյոք պատրա՞ստ էին այն կիսել այլ քաղաքական ուժի հետ. Բոլշևիզմի գաղափարախոսությանը և բնույթին գիտակ մարդը կպատասխանի՝ միանշանակ ոչ: Ինչպես արդեն ասվել է, եթե հանգամանքները չստիպեին, նրանք ժամանակավոր գործարքի չէին գնա նաև Ձախ էսէռների կուսակցության հետ:

Կոմունիստական կուսակցությունը տակտիկական նկատառումներով կարող է գնալ ժամանակավոր համաձայնությունների, գիջումների, նահանջի, կոմպրոմիսների, ինչի մասին խոսում էր Վ.Ի. Լենինը 1920 թ. գարնանը գրած իր ««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» հայտնի գրքում[1]: Սակայն ինչպես բոլշևիզմի պատմության փորձն է ցույց տալիս, այդ փոխգիջումային համաձայնություններն ու խուսանավումները կրել են ժամանակավոր ու ձևական բնույթ: Նրանք տևականորեն երբեք չեն ցանկանա իշխանությունը կիսել որևէ այլ քաղաքական ուժի հետ: Դա բխում էր այդ կուսակցության գաղափարախոսությունից, կազմակերպական կառուցվածքից, կանոնադրական սկզբունքներից, մաքսիմալիստական պահանջներից, մենիշխանական ձգտումներից, անհանդուրժողական գործելակերպից, համաշխարհային հեղափոխության ու կոմունիզմի հասնելու իր հավակնոտ ծրագրերից և այլն:

ՌՍԴԲ (բ)Կ-ը, գրավելով իշխանությունը, ի սկզբանե նպատակ ուներ ստեղծել միակուսակցական կառավարություն: Այդ մասին է վկայում Վ. Լենինի զեկուցումը 1917 թ. հոկտեմբերի 25-ի առավոտյան Խորհուրդների Համառուսաստանյան 2-րդ համագումարի բոլշևիկյան խմբակցության նիստի ժամանակ, որում նշվում էր, որ ապագա կառավարությունը պետք է լինի «**բացարձակապես միակուսակցական**»[2]: Եվ երբ խորհուրդների համագումարը հաստատեց բանվորագյուղացիական ժամանակավոր կառավարության ստեղծման մասին դեկրետը, այն կազմված էր միայն

---

[1] *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 41, Ե., 1982, էջ 22–23, 66, 69–70:
[2] Политические партии России, с. 388.

բոլշևիկյան կուսակցության 13 ներկայացուցիչներից Վլադիմիր Ուլյանով (Լենինի) գլխավորությամբ: Սակայն, ինչպես արդեն ասվել է, բոլշևիկներն իրենց հասարակական-քաղաքական խախտումների հրամայականով գնացին ժամանակավոր կառավարական կոալիցիայի Ձախ էսէռների կուսակցության հետ, իսկ իշխանության առանձին ոլորտներում որոշ համաձայնության «ձախ» մենշևիկ ինտերնացիոնալիստների խմբի ու սոցիալիստական դավանանքի առանձին հոսանքների հետ:

Որ բոլշևիկները հասարակության մեջ բավարար սոցիալական հենարան չունեին, երևաց Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի 1912 թ. նոյեմբերի 12-ի համաժողովրդական ընտրություններից: Համառուսաստանյան ընտրողների շուրջ 62 տոկոսն իր ձայնը տվել էր էսէռների, մենշևիկների ու դրանց հարող փոքր խմբերի օգտին: Ընդ որում, միայն էսէռները ստացել էին ՍԺ-ի ընդամենը 766 պատգամավորական տեղերից 374-ը: Մինչդեռ կառավարող կուսակցություն համարվող բոլշևիկների կուսակցությունը հավաքել էր ընդամենը մեկ քառորդից էլ պակաս ձայն ընդամենը 22,5-23 տոկոս[1]: Սակայն բոլշևիկները հենց որ իրենց ռազմաքաղաքական դիրքերը փոքր-ինչ ամրապնդեցին, աստիճանաբար ոչ պրոլետարական համարվող սոցիալիստական այդ կուսակցություններին լիովին դուրս մղեցին կենտրոնական ու տեղական իշխանության մարմիններից. ձախ էսէռներին 1918 թ. հուլիսին, իսկ մենշևիկներին 1920 թ. ամռանը (աշնանը Յու. Մարտովն անցավ արտասահման), և այդպիսով՝ փաստորեն հաստատեցին իրենց որդեգրած միակուսակցական կառավարման համակարգը: 1920-ական թվականներին նրանք սկսեցին լուծարել ու հաշվեհարդար տեսնել այդ «ոչ պրոլետարական», «հակահեղափոխական» ու «մանրբուրժուական» որակվող կուսակցությունների ու հոսանքների հանդեպ:

---

[1] Նույն տեղում, էջ 391, *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 41, էջ 89, *Орлов А. С.* и др., История России, М., 2000, с. 339, «Отечественная история», М., 2008, N 2, с. 43.

Ասվածից հետևում է, որ բոլշևիկները ի սկզբանե մտադրություն չեն ունեցել պետական իշխանությունը կիսել որևէ կուսակցության հետ: Ուստի այնպես չէ, որ Վ. Լենինի ընորոշած «ռուսական յակոբինները», իսկ Ի. Ստալինի «խաչակիրների օրդենը» (Երկու դեպքում էլ խոսքը բոլշևիկների կուսակցության մասին է) պատրաստ են եղել կիսել իշխանությունը:

Շատ ավելի կոշտ ու տարբերակված է եղել վերաբերմունքը բուրժուական (ազատական) և պահպանողական կուսակցությունների հանդեպ: Հարկ է նշել, որ ընդդիմադիր կուսակցությունների վերացման գործընթացը Ռուսաստանում իրականացվել է տարբեր ձևերով, տեմպերով ու չափերով կապված բոլշևիկների հանդեպ ունեցած վտանգավորության աստիճանից: Առավել անհաշտ ու թշնամական էր վերաբերմունքը միապետական-ազնվականական տիպի՝ «Ռուս ժողովրդի միություն», «Ռուսական ժողովրդական միություն» և խոշոր բուրժուական Օկտյաբրիստների՝ «Հոկտեմբերի 17-ի միություն» կուսակցությունների, անհաշտ «Սահմանադրական դեմոկրատների»՝ կադետների, աջ էսէռների և ժողովրդական սոցիալիստների (էսէռների), Մաքսիմալիստների և նմանատիպ կուսակցությունների ու խմբերի հանդեպ, կուսակցություններ, որոնք հիմնականում գտնվել են քաղաքացիական պատերազմի հակաբոլշևիկյան ճակատում, կազմակերպել ու ղեկավարել են Կամավորական շարժումը, Հայրենիքի փրկության կոմիտեները, գեներալ Ա. Դենիկինի Հատուկ խորհրդակցությունը, ծովակալ Ա. Կոլչակի Սիբիրյան ու Համառուսաստանյան կառավարությունը, Ուֆայի Դիրեկտորիան, Ցենտրոկասպյան կառավարությունը, Ն. Չայկովսկու և գեներալ Եվգ. Միլերի գլխավորած Հյուսիսային մարզերի, գեներալներ Ն. Յուդենիչի և Պ. Վրանգելի կառավարությունները և այլն: Սակայն քաղաքացիական պատերազմի արդյունքում «սպիտակ» շարժումը պարտություն կրեց «կարմիրներից»: Նրանց չփրկեց նաև օտարերկրյա ներխուժումը (ինտերվենցիան) երկրի ծայրամասերում: Բոլշևիկյան կուսակցությունը հաղթանակ տարավ քաղաքացիական պատերազմում: Նրան

ընդդիմադիր քաղաքական բոլոր ուժերն ու կուսակցությունները քայքայվեցին և աստիճանաբար դուրս մղվեցին քաղաքական արենայից: Ասպարեզում մնաց միայն գործեղացող ՌԿ (բ)ԿՀամԿ(բ)Կ-ը, որն էլ ճանապարհ հարթեց կուսակցական ավտորիտար մենիշխանության համար:

1920 թ. նոյեմբերին Ռուսաստանի վերջին գերագույն կուռավարիչ բարոն Պյոտր Վրանգելի ասպարեզից հեռանալուց հետո համառուսաստանյան մի շարք կուսակցություններ «սպիտակ» սպայության, գիտական ու ստեղծագործական մտավորականության հետ միասին դիմեցին զանգվածային էմիգրացիայի (վտարանդիության) փակելով Ռուսաստանում գործելու իրենց պատմության վերջին էջը: Քաղաքական տարագրության մեջ հայտնվեց ընդհանուր հաշվով 1-2 մլն մարդ[1], այն էլ՝ ռուսական բարձրաշխարհիկ հասարակության լավագույն մասը, հիմնականում մտավոր էլիտան: Դրսաշխարհում Փարիզում, Պրահայում, Բելգրադում, Բեռլինում, Կ.Պոլսում, Սոֆիայում, Վարշավայում, Նյու-Յորքում և այլուր նրանք ստեղծեցին հակաբոլշևիկյան պայքարի կենտրոններ, հիմնեցին մի քանի տասնյակ ռուսական բուհեր, կրթամշակութային այլ հաստատություններ ու հոգևոր կենտրոններ: Ռուսական էմիգրացիայի չափավոր թևը հույս էր տածում, որ խորհրդային վարչակարգը կվերասերվի: Մասնավորապես դրան էին տուրք տալիս, այսպես կոչված, **սմենովեխականները՝** կազմված կադետներից և օկտյաբրիստներից՝ Ն. Ուստրյալով, Յու. Կըլյուչնիկով, Ա. Բոբրիշչև-Պուշկին և ուրիշներ: Նրանք այդպես էին կոչվում Պրահայում 1921 թ. իրենց կողմից լույս տեսցրած «Смена вех»-ի (ուղենիշի փոփոխություն) հոդվածների ժողովածուի անունից, մանավանդ որ Ռուսաստանի հնարավոր վերասերման և հին կարգերի վերականգնման հույսը համընկավ ՆԷՊ-ի սկզբնավորման հետ: Սմենովեխականության գաղափարաքաղաքական պլատ-

---

[1] *Орлов А. С.* и др., История России, М., 2002, с. 351, История России XX век (1894-1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 723, Непролетарские партии России. Урок истории, под ред. И. Минца, М., 1984, с. 535.

Ֆորմն այն էր, որ առաջարկվում էր համագործակցություն խորհրդային իշխանության հետ Ռուսաստանի տնտեսական և մշակութային վերաշինության գործում: Մոտավորապես այդ նույն միտքն էին արտահայտում նաև հայ սմենովեխականներ համարվող նախկին դաշնակցական գործիչներ՝ Հովհաննես Քաջազնունին Արշակ Ղազարյանը, Սահակ Թորոսյանը և ուրիշներ: Սմենովեխականները հույս էին տածում, որ ժամանակի ընթացքում կյանքի բնականոն ընթացքով կհաղթահարվի բոլշևիզմի ծայրահեղականությունը (էքստրեմիզմը), և երկիրը կբարեշրջվի դեպի բուրժուադեմոկրատական կարգեր[1]

Ռուսաստանի խայտաբղետ քաղաքական էմիգրացիայի՝ միապետականների, օկտյաբրիստների, կադետների, աջ էսէռների և այլն, գաղափարակիր մի մեծ հատված հիմնականում հանդես էին գալիս բոլշևիզմի ու նրա հաստատած վարչակարգի դեմ գաղափարաքաղաքական, իսկ առանձին դեպքերում նույնիսկ զինված պայքարի և այդ նպատակով ռուսական սպայությունն ու բանակը պահելու պլատֆորմով: Մասնավորապես բարոն Պ Վրանգելը համոզմունքով լինելով միապետական, գտնում էր, որ պետք է շարունակել պայքարը Հայրենիքը բոլշևիկներից ազատագրելու համար: Այդ նպատակով նա ձգտում էր դրսաշխարհում պահպանել «սպիտակ» բանակը: Ղրիմից էվակուացված բանակի թիվը կազմել է 50 հազար մարդ: 1924 թ. հիմնվեց «Ռուսաստանյան համազորային միություն»[2]: Հարկ է նշել, որ «սպիտակ» շարժումը տարբեր դրսևորումներով իր գործելակերպը շարունակեց 1920-ական և հետագա տարիներին, որը, սակայն, ընթացավ աստիճանական մարման միտումով: Խորհրդային երկրի կացության կայունացմանը զուգընթաց՝ թուլացավ ռուսական վտարանդիական կուսակցությունների ու կազմակերպությունների ակտիվությունը Ռուսական քաղաքական վտարանդիությունը, հրաժարվելով

---

[1] *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 146.

[2] История России XX век (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 708–709, Непролетарские партии России. Уроки истории, под ред. И. Минца, М., 1984, с. 538.

խորհրդային իշխանության դեմ գինված պայքարից, շարունակեց մնալ ընդդիմություն կոմունիստական գաղափարախոսությանը և խորհրդային վարչակարգին, սակայն մինչև վերջ պահպանեց սերն ու նվիրումը մայր հայրենիքի հանդեպ: Դրա ամենավառ կերպարներից մեկն էր գեներալ Անտոն Դենիկինը:

Այլ էր վիճակը Հայաստանի պարագայում: Հայաստանի խորհրդայնացման փուլում քաղաքական դաշտում գտնվող նախկին կառավարող և ոչ կառավարող կուսակցությունները (իհարկե, բացառությամբ Հայկոմկուսի) մի տեսակ «գլուխները կորցրին»: Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի ծանր պարտությունը և կարմիր բանակի Հայաստանի հյուսիսային սահմանագրելին հայտնվելը պատակտում առաջացրեց հայ քաղաքական կուսակցությունների մեջ: ՀՅԴ-ն, Էսէռների, Ս.Դ. Հնչակի, Սոց.-Դեմ. մենշևիկների և «Սպեցիֆիկների» ներսում խորհրդամետ, «ձախ» ինտերնացիոնալիստական թևեր առաջացան, և նրանք սկսեցին հարմարվել նոր իրադրությանը ու «դուր» գալ բոլշևիկներին: Աջակողմյան ՀԺԿ-ը և Հայ Ս. Դեմկավարները չպատակտվեցին և ներքուստ շարունակեցին մնալ ընդդիմադիր: Այնպես որ նոր ստեղծված պայմաններում խոսք չէր կարող լինել հակաբոլշևիկյան ճակատով հայ ընդդիմադիր կուսակցությունների մերձեցման ու համագործակցության մասին:

Արդեն 1921 թ. Փետրվարյան ապստամբության շրջանում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները մի կարճ ժամանակով համագործակցեցին իրար հետ՝ ընդդեմ բոլշևիկյան բռնությունների ու վարչակարգի: Նրանք ժողովրդի մի հատվածի հետ միասին տարան ժամանակավոր հաղթանակ: Ապստամբության պարտությունից հետո ոչ սոցիալիստական համարվող ՀԺԿ-ը և Հայ Ս. Դեմկավարները հիմնական մասով հեռացան Հայաստանից, որոնք 1921 թ. հոկտեմբերին Կ.Պոլսում, միավորվելով Վերակազմյալների, Ամյուռքի ազատական ուղղության այլ միությունների ու հոսանքների հետ, հիմնեցին Դեմկավար Ազատական Կուսակ-

ցությունը (ՌԱԿ-ը)[1]: 1921 թ. ապրիլ-հուլիսյան մեծ գաղթով Պարսկաստան անցան ՀՅԴ, Էսէռ, Սոց.-Դեմ., նաև Ռամկավար և այլ կուսակցությունների հազարավոր գործիչներ, հայդուկներ, մտավորականության ներկայացուցիչներ, ովքեր համալրեցին Սիյուռքի իրենց հարազատ կուսակցությունների շարքերը:

Եթե համեմատում ենք քաղաքական վտարանդի ռուսական և հայ կուսակցությունների մարտավարությունն ու գործելակերպը համապատասխանաբար իրենց երկրների բոլշևիկյան վարչակարգերի հանդեպ, ապա կարելի է փաստել, որ **հայ քաղաքական կուսակցությունները ավելի մեղմ վարքագիծ են որդեգրել խորհրդային իշխանությունների հանդեպ**: Ռուսական «սպիտակ» վտարանդիությունը, բոլշևիկյան վարչակարգից հայրենիքը ազատագրելու հեռանկարով, բավականին երկար ժամանակ արտասահմանում պահում էր ռուսական բազմահազար սպայություն և կանոնավոր զորք:

Դրան հակառակ Սիյուռքի հայ քաղաքական կուսակցություններից Ռամկավարները և Հնչակյանները նույնիսկ փորձել են համագործակցել խորհրդային իշխանությունների հետ: Բայց և միաժամանակ եղել են նաև հնչակյանների արտասահմանյան մասնաճյուղեր, ովքեր հիմնականում զգուշավոր ու վերապահ են եղել խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության հանդեպ[3]:

Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա, սկսած հետփետրվարյան շրջանից, 1921 թ. ապրիլին Բուքրեշի (Բուխարեստի)[4], 1923 թ. ապրիլ-մայիսին Վիեննայի խորհրդաժողովների ու հատկապես կու-

---

[1] *Դեղբինյան Ա.*, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 9, 468, 495, *Յարիւնեան Ա.*, Համառոտ պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977, էջ 3, 48:

[2] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 244, թ. 1, գ. 245, թ. 1–2, *Կիտուր Ա.*, Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան (1887–1962), հատ Ա, Պէյրութ, 1962, էջ 486, 493, *Հակոբյան Ա.*, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ., Ե., 2005, էջ 341–345, 347–351:

[3] *Հակոբյան Ա.*, նշվ. աշխ., էջ 343:

[4] «ՎԷՄ», Ե., 2010, թիվ 4 (32), էջ 208–209:

սակցության 10-րդ և 11-րդ Ընդհ. ժողովների որոշումների համաձայն նրա ընդդիմությունն ու պայքարը համայնավար վարչակարգի դեմ դրսևորվել է զուտ **գաղափարական ու քաղաքական** դաշտում և չի կրել զինված ու ահաբեկչական պայքարի բնույթ: «Հայաստանի համայնավար վարչաձևը տապալելու նպատակաւ,- մասնաւորապես կարդում ենք Վիեննայի խորհրդաժողովի ընդունած բանաձևում,- բռնամիջոցներու եւ զէնքի պիտի չդիմուի: Ընդհակառակն. Դաշնակցութիւնը ամեն կերպով պիտի աջակցի Երկրի վերաշինութեան գործին»[1]: Միաժամանակ Դաշնակցությունը շարունակելու էր մնալ. «ընդդիմադիր պոլշեւիկեան ամբողջատիրութեան և անոր մեթոտներուն»[2]: Այդ նույն դիրքորոշումն է պաշտպանել ՀՅԴ 11-րդ Ընդհ. ժողովը (1929 թ. գարուն) իր ընդունած բանաձևում. «Հ.Յ. Դաշնակցութիւնը դեմ լինելով Հայաստանում խորհրդային կարգերին, միաժամանակ դեմ է այդ կարգերի բռնի վերացման փորձերին»[3]:

Ընդհանուր գծերով ահա՛ այսպիսին է եղել Սփյուռքի կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ բաղաքական կուրսը Խորհրդային Հայաստանի և բոլշևիկյան վարչակարգի նկատմամբ: Մինչդեռ խորհրդահայ պատմագրության մեջ տասնամյակներ շարունակ սևով սպիտակի վրա շատ մռայլ ու թշնամական դիրքերից են ներկայացվել ՀՅԴ-բոլշևիկ հարաբերությունները, որ դաշնակները Փետրվարից հետո էլ դրսից թե ներսից շարունակել են անհաշտ պայքարը խորհրդային-բոլշևիկյան վարչակարգի տապալման նպատակով: Փաստերը ցույց են տալիս, որ այդ անհաշտությունը և պայքարը բացահայտ զինված դիմակայության բնույթ չեն կրել, այլ հիմնականում ընթացել են զուտ գաղափարական ու քաղաքական հարթության վրա, ինչը միանգամայն

---

[1] *Տասնապետեան Հ.*, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890–1924), Աթէնք, 1988, էջ 165: Հարկ եղած դեպքում ՀՅԴ-ը փորձեր է արել ՀՕԿ-ի և այլ հասարակական կառույցների միջոցով օգտակար լինել Հայաստանի վերաշինության գործին:

[2] *Տասնապետեան Հ.*, նշվ. աշխ., էջ 166:

[3] «Դրօշակ», Պարիզ, 1929, թիվ 4-5 (մայիս), էջ 66:

ըմբռնելի ու ընդունելի մոտեցում է, ցանկացած միմյանց ընդդիմադիր կուսակցությունների պարագայում:

Բոլշևիկյան վարչակարգի նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումների տարբերությունը ռուսական կուսակցություններից պետք է բացատրել Հայաստանի պատմական ու աշխարհաքաղաքական առանձնահատկություններով, հայության ծանր անցյալով, կրած արհավիրքներով ու կորուստներով Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հանդեպ պատմականորեն ձևավորված հատուկ վերաբերմունքով, ազգային հոգեկերտվածքով և այլն:

Իբրև առանձնահատկություն պետք է հաշվի առնել ևս մեկ այլ հանգամանք: Հայ ազգային քաղաքական կուսակցությունները ի սկզբանե ոչ պակաս հաջողությամբ գործունեություն են ծավալել դրսաշխարհում (հայրենիքից դուրս) ՍԴ Հնչակը, ՀՅԴ-ը, Արմենական-Ռամկավարները, Վերակազմյալները ունեցել են կուսակցական կառույցների լայն ցանց: Իսկ 1920-ական թվականներին խորհրդային երկրից արտագաղթած հայ կուսակցությունների ներկայացուցիչները ընդամենը լրացրել են նրանց արտասահմանյան կառույցների շարքերը իրենց ուսերին կրելով Սփյուռքի հոգևոր ու նյութական բեռը իր կարոտի ու նահանջի խնդիրներով

Այս ամենով հանդերձ հայ քաղաքական կուսակցությունները իրենց քաղաքական դիրքորոշումների ու գործելակերպի տարբեր դրսևորումներով, այնուամենայնիվ, մինչև վերջ անհաշտ մնացին Բոլշևիկյան ավտորիտար մենիշխանական ամբողջատիրական կառավարման համակարգին:

Այսպիսով՝ Ռուսաստանի և Հայաստանի խորհրդայնացման գործընթացների պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ուղղորդվել են մեկ կենտրոնից, սակայն, ընդհանրական գծերի հետ մեկտեղ, ունեցել են նկատելի առանձնահատկություններ:

«Մեծ Հոկտեմբեր»-ից մի քանի տարի անց դեպքերի և իրադարձությունների զարգացումը բերեց նրան, որ Անդրկովկասյան

հանրապետությունների շարքում Հայաստանը ևս հարկադրաբար դարձավ ռուսական հեղափոխության օբյեկտ ու կազմեց խորհրդային-բոլշևիկյան վարչակարգի բաղկացուցիչ մաս:

- Եթե բուն Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումը տեղի է ունեցել ընտրովի բանվորագյուղացիական **Սովետներ** ստեղծելու և գինված ապստամբություն կազմակերպելու միջոցով, ապա Հայաստանում, առանց ապստամբության, ոչ ընտրովի **Հեղկոմներ** ստեղծելու և դրսից ռուսական կարմիր բանակ հրավիրելու ու խաղաղ խորհրդայնացվելու ճանապարհով:

- ՌԿ (բ)Կ-Ժողկոմխորհ և ՀԿ (բ)Կ-Հայհեղկոմ գործելակերպի ու գործունեության համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը (Հայհեղկոմը) սկզբնական փուլում վարել է շատ ավելի կոշտ ու անզիջող (բռնաճնշիչ) բաղաքականություն, քան ռուսականը (ժողկոմխորհը): Հայհեղկոմը բացառել է որևէ համաձայնության ու կոալիցիայի հնարավորություն այլ քաղաքական ուժի հետ:

- Ռուսաստանում բոլշևիկյան կառավարության քաղաքականությունը ընդդիմադիր, հատկապես սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական կողմնորոշման կուսակցությունների հանդեպ՝ պայմանավորված բոլշևիկների սոցիալ-քաղաքական դիրքերի թուլությամբ ու ծավալած երեքամյա քաղաքացիական պատերազմով, տակտիկական նկատառումներով, եղել է, ավելի հաճախ կոմպրոմիսային ու հանդուրժողական, քան Հայկոմկուսի ու Հայհեղկոմի վարած քաղաքականությունը հայ սոցիալիստական կուսակցությունների նկատմամբ: Հայկոմկուսի ու Հայհեղկոմի ծայր աստիճան կոշտ ու անհանդուրժողական քաղաքականությունը հայ քաղաքական մյուս կուսակցությունների հանդեպ պետք է բացատրել նրանով, որ նրանք, իրենց թիկունքին ունենալով դրսի Խորհրդային Ռուսաստանի ու նրա կարմիր բանակի մշտական օգնությունն ու զորակցությունը, հայ որևէ քաղաքական ուժի հետ փոխզիջման ու թեկուզ ժամանակավոր համաձայնության գնալու կարիք չեն ունեցել, միաժամանակ կոշտ ու բռնաճնշիչ գիծ վարե-

լով նրանք ցանկացել են ընդգծել իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը լենինիզմի ու կոմունիզմի գաղափարներին

- Այդ համատեքստում Անդրկովկասյան երեք հանրապետությունների կոմկուսների ղեկավարների գործելակերպի ու վարքագրծերի համեմատությունը ցույց են տալիս, որ հայ բոլշևիկ ղեկավարներին, ցավոք, ավելի շատ բնորոշ են եղել ազգային շահի երկրորդումը ու ազգային դիմագծի պակասը: Փաստերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստ ղեկավարների, հայ ղեկավարները անվերապահ ու անքննադատ ընդունել և կատարել են Կենտրոնից իջեցված բոլոր հրաման-որոշումները:

- Ե՛վ ՌՍՖԻՀ-ում, և՛ ՀՍԽՀ-ում ընդդիմադիր ու այլախոհ կուսակցությունների լուծարումը, դրանց քաղաքական ասպարեզից վերացումը և կոմունիստական մենիշխանության հաստատումը պետք է դիտել որպես մեկ կենտրոնից ուղղորդվող ընդհանուր գործընթաց միայն այն տարբերությամբ, որ Ռուսաստանում բազմակուսակցական համակարգի քանդումը սկզբունքորեն սկսվել է 1917 թ. հոկտեմբերից: Սակայն իր սոցիալ-քաղաքական դիրքերի թույլության պատճառով Ռուսաստանում այն ընթացել է դանդաղ քաղաքական մանևրներով, խուսանավումներով, կոմպրոմիսներով և այլն, իսկ Հայաստանում խորհրդայնացման առաջին իսկ օրերից՝ 1920 թ. դեկտեմբերից՝ միանգամից այլ կուսակցությունների համար ստեղծելով անհաշտ քաղաքական մթնոլորտ: Երկու դեպքում էլ կուսակցությունների հրապարակային դատերի և ինքնալուծարման համագումարների շքերթը շարունակվել է 1920 ականի թվականների ընթացքում և ավարտվել ՆԷՊ-ի կասեցումով (1929 թ.): Ընդ որում, երկու դեպքում էլ ընդդիմադիր կուսակցությունների վերացումը տեղի է ունեցել ոչ թե դրանց գաղափարական-քաղաքական սնանկացման ու կրախի ենթարկելու միջոցով ինչպես որ տասնամյակներ շարունակ տարածում էր խորհրդային պաշտոնական քարոզչամեքենան, այլ դա կատարվել է բռնի ուժով, ռեպրեսիաների ճանապարհով: Հասկանալի է, որ ուրարան

չյուր «ոչպրոլետարական» «հակահեղափոխական» և այլն որակված կուսակցության ասպարեզից վերացման ազդակը, ըստ դրա քաղաքական վտանգավորության աստիճանից, գալիս էր Կենտրոնից Մոսկվայից, որովհետև ՀՍԽՀ-ն էլ մասն էր կազմում խորհրդային այդ մեծ Միության:

- Ավելի ուշ արդեն 1930-ական թվականներին, ԽՍՀՄ-ը, ներառյալ ՀՍԽՀ-ը, միակուսակցական-մենիշխանական (ավտորիտար) կառավարումը վերաճեց ամբողջատիրական (տոտալիտար) համակարգի: Դրա իրավական ձևակերպումը եղան ԽՍՀՄ-ում 1936 թ. դեկտեմբերին, իսկ ՀՍԽՀ-ում 1937 թ մարտին ընդունված սահմանադրությունները:

- Եվ վերջապես 1920-ական թվականներին Հայաստանում լուծարված, սակայն Սփյուռքում իրենց գործունեությունը շարունակող հայ ազգային քաղաքական կուսակցությունների (Ս. Դ. Հնչակ, ՌԱԿ, ՀՅԴ) վերաբերմունքն ու դիրքորոշումը կոմունիստական վարչակարգի հանդեպ եղել են տարբերակված: Եթե Ս.Դ. Հնչակի և ՌԱԿ-ն վերաբերմունքը այդ վարչակարգի նկատմամբ ընդհանուր առմամբ կրել է բարյացակամ ու հանդուրժողական բնույթ, ապա ՀՅԴ-ը սկզբունքային ընդդիմադիր: Բայց, ի տարբերություն ռուսական «սպիտակ» վտարանդիության առանձին հատվածների, ինչպես արդեն ասվեց, ՀՅԴ ընդդիմությունն ու անհաշտությունը դրսևորվել են ոչ թե զինված պայքարի ծրագրեր մշակելով, այլ գերազանցապես գաղափարական հողի վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1. *Ընտրական համակարգի ձևավորումը*

Ժամանակակից չափանիշներով ժողովրդավարական համարվող յուրաքանչյուր երկրի ժողովրդավարության մակարդակը, նրանում առկա քաղաքական ազատությունների աստիճանը կարելի է չափել նաև նրա ընտրական համակարգով, ընտրությունների անցկացման ազատությամբ, թափանցիկությամբ, բովանդակությամբ, ընտրողների ազատ կամահայտնությամբ, դրանում հասարակության ներգրավվածությամբ և այլն: Ժողովրդավարական է, համարվում այն երկիրը, որտեղ իշխանությունը, իրոք, ձևավորում է ընտրողը, ժողովուրդը, որովհետև, ինչպես ամրագրված է ժողովրդավարական երկրների սահմանադրություններում, նա է համարվում **իշխանության աղբյուրը**: Չի կարելի խոսել արդար, ազատ, թափանցիկ, իրավահավասար ընտրությունների մասին, եթե տվյալ երկրում չկա **քաղաքական մրցակցություն**, գոյություն ունի մեկ կուսակցության քաղաքական մենաշնորհ, սոցիալ-դասակարգային խտրականություն, հաշվի են առնվում ունեցվածքային ու կրթական ցենզը, էլ չենք խոսում ազգային ու ռասայական խտրականության մասին:

20-րդ դարասկզբին Ռուսական կայսրության մի մասնիկը կազմող Արևելահայաստանն ու ռուսահայությունը ընտրությունների միջոցով պետական իշխանության ձևավորմանը առաջին անգամ մասնակցություն ունեցան Համառուսաստանյան առաջին (1905-1907 թթ.) հեղափոխության շրջանում՝ Պետական դումաների (խորհրդարանի) ընտրություններով: Սակայն ռուսական դումաների ընտրությունները չի կարելի դասել ժողովրդավարակա-

նի շարքը. բանգի այն տոցիալ-դասակարգային իմաստով բազմաստիճան էր, խտրական ու անհավասար: Ընտրությունների մասին 1905 թ. դեկտեմբերի օրենքով սահմանվել էր չորս անհավասար կուրիա (ընտրաշերտ)՝ հողատիրական, քաղաքային, գյուղացիական և բանվորական: Հողատիրական կուրիայից 2000 բնակչից ընտրվում էր 1 ընտրող (выборщик), քաղաքայինից՝ 4000 ընտրողն էր 1 ընտրող ընտրում, գյուղացիականից՝ 30 հազարը՝ 1 ընտրող իսկ բանվորական կուրիայից՝ 90 հազարը՝ 1 ընտրող: Բացի այդ, ընտրությունները համընդհանուր չէին, որովհետև կանայք, ուսանողները, զինծառայողները, որոշ ազգային փոքրամասնություններ զրկված էին ընտրելու իրավունքից, գյուղացիների և բանվորների համար ընտրությունները բազմաստիճան էին՝ եռաստիճան, բառաստիճան և այլն[1]

Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ իսկական, արդի եվրոպական չափանիշներով ընտրություններ անցկացվեցին 1917 թ. Ժամանակավոր կառավարության օրոք մշակված և ընդունված կանոնադրությամբ (Положение), որի շնորհիվ ձևավորվեց, իրոք, ժողովրդի կամահայտնությամբ, Սահմանադիր ժողով (ՍԺ): Սակայն 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջմամբ իշխանությունը բռնագավթած բոլշևիկների կուսակցությունը ուժի միջոցով 1918 թ. հունվարի 6-ին ցրեց Սահմանադիր ժողովը և հաստատեց իր մենիշխանությունը (վարչակարգը): Բոլշևիկների համար գաղափարապես և քաղաքականապես անընդունելի էր ՍԺ-ն, որը դիտարկվում էր որպես իր ժամանակն ապրած հետադիմական բուրժուական խորհրդարան: ՍԺ-ն ցանկալի չէր նաև այն իմաստով, որ նրա 707 պատգամավորներից միայն 175-ն էր բոլշևիկ[2]:

1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերից հետո նորահոչակ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որդեգրելով արև-

---

[1] Տես Советская историческая энциклопедия, т. 4, М., 1963, с. 610–611, Большая Советская энциклопедия, т. 7, М., 1972, с. 446, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 239:

[2] Տես *Верт Никола*, История Советского государства. 1900–1991 гг., М., 1992, с. 111.

մտյան արժեհամակարգին բնորոշ հանրապետական, պառլամենտական կառավարման համակարգ, 1919 թ. ամռանը համաժողովրդական ընտրությունների միջոցով ձևավորեց ընտրովի պառլամենտ՝ ընտրությունների հիմքում դնելով ռուսական Սահմանադիր ժողովի «Պոլոժենիան»՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ-ի) փոփոխություններով[1]: ՀՀ խորհրդարանական ընտրությունների մասին օրենքը (10 գլուխ և 111 հոդված) սահմանում էր ընտրությունների ժողովրդավարական համակարգ՝ ընդհանուր, ուղղակի, հավասար, համեմատական և գաղտնի քվեարկությամբ, առանց ազգի, կրոնի և սեռի խտրության[2]: Ընտրական օրենքը որևէ դասային, դասակարգային, սոցիալական ու գույքային խտրականություն չէր ճանաչում: Ավելին, ՀՀ ընտրությունների մասին օրենքը ընտրական իրավունք էր տալիս հանրապետության սահմաններում ապաստանած բյուրավոր արևմտահայ գաղթականներին՝ առանց որևէ սահմանափակման[3]:

Եվ վերջապես, 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Ռուսաստանի օրինակով ու պարտադրանքով Հայաստանում ևս հաստատվեց բոլշևիկյան միակուսակցական վարչակարգ, այսպես կոչված, **պրոլետարիատի դիկտատուրա:** Նորահռչակ խորհրդային պետությանը դեմոկրատական տեսք տալու համար կազմակերպվեցին խորհուրդների ընտրություններ, որոնք, ըստ էության, կրկնելով ՌՍՖԽՀ խորհուրդների ընտրությունների կանոնակարգը, իրենց բովանդակությամբ դասակարգային էին, հետևաբար նախորդի՝ Սահմանադիր ժողովի ընտրությունների համեմատ և սոցիալ-դասակարգային իմաստով նմանվում էին ցարական Պետական դումաների ընտրություններին, միայն այն տարբերությամբ, որ դումաների ընտրությունների ժամանակ հավելյալ տեղեր ու արտոնություն-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 43:
[2] Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.). Ե., 1998, էջ 212–217, *Հակոբյան Ա.*, Հայաստանի խորհրդարանը և բաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ), Ե., 2005, էջ 175 և 177:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 43:

ներ էին տրվում ազնվական-կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներին, իսկ խորհուրդների ընտրությունների դեպքում, ընդհակառակը, նախապատվությունը տրվում էր աշխատավորական-բանվորական շերտերին և նույն իրավունքից զրկում ոչ աշխատավոր շահագործող, հարուստ, կուլակային տարրերին: Բայց և այնպես, դումայական ընտրությունների ժամանակ, ի տարբերություն խորհուրդների ընտրությունների, գոնե քիչ թե շատ ապահովվում էր բազմակուսակցական համակարգի առկայությունը:

Հարց է ծագում՝ ինչ հարկ կա անդրադառնալու իննևկես տասնամյակ առաջ Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած ընտրություններին, որոնք իրենց բովանդակությամբ ու մեխանիզմներով դժվար է դասել ժողովրդավարականի շարքին: Սակայն, կարծում ենք, անհրաժեշտ է ուսումնասիրել խորհրդային ժամանակաշրջանի ընտրական համակարգն ու գործընթացները՝ լավ հասկանալու համար ներկա ընտրությունների ժամանակ ծագող խնդիրներն ու դժվարությունները, տեսնելու, թե հայ ընտրողն իր հասարակական-քաղաքական մտածելակերպով ու վարքագծով ի՞նչ էվոլյուցիա է ապրել, ի՞նչ փոփոխություններ է կրել, սոցիալ-հոգեբանական ի՞նչ կարծրատիպեր կան, ինչո՞ւ հայ շարքային ընտրողն իր մասնակցությամբ, ինչպես հարկն է, չի արժևորում ընտրությունների դերը, որտեղի՞ց է գալիս այդ անտարբերությունը, ինչո՞ւ չի հաղթահարվում ընտրակեղծիքների արատավոր գործելակերպը և այլն:

Այս իմաստով, ցավոք, մենք աղոտ պատկերացում ունենք ՀՄԽՀ 1920-ական թթ. ձևավորված ընտրական համակարգի և ընտրությունների գործընթացների վերաբերյալ, որի ուսումնասիրությունը ևս կարևոր է խորհրդային-կուսակցական վարչակարգի բացահայտման տեսակետից: Ակներև է՝ եթե չկան արդար ընտրություններ, ընտրողի ազատ կամահայտնություն, ապա ավելորդ է խոսել ժողովրդավարական պետության ու կառավարման համակարգի մասին: Քաղաքագիտական առումով հայտնի է, որ այս

կամ այն երկրի քաղաքական համակարգի կայացման կարևորագույն ինստիտուտներից են ընտրությունները:

Միակուսակցական ավտորիտար վարչակարգին ձևականորեն ժողովրդավարական բնույթ տալու համար ստեղծվեցին դասակարգային իշխանության մարմիններ՝ **խորհուրդներ**, որոնք, սակայն, ղեկավարվում և ծառայում էին պարտոկրատիային (կուսակցապետությանը): Եթե մարքս-լենինյան աշխարհայացքը և կոմունիստական գաղափարախոսությունը դասակարգային են, կընշանակի՝ նրա ձևավորած ընտրական համակարգն էլ պետք է դասակարգային ու խտրական լիներ:

Կրկին հարց է ծագում՝ ինչու Վ. Լենինի գլխավորած բոլշևիկյան կառավարությունը հրաժարվեց արևմուտքում, իսկ 1917 թ. նաև Ռուսաստանում ընդունված ընտրակարգից և ժողովրդավարական այլ սկզբունքներից: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ պրոլետարիատի անունից հանդես եկող նրանց իշխանությունը դասակարգային էր, ուստի և չէր կարելի հավասար ընտրական իրավունք և այլ ազատություններ ապահովել մյուս ոչ պրոլետարական, հակահեղափոխական որակվող դասակարգերի ու սոցիալական խմբերի համար: Վ. Լենինը գտնում էր, որ բավարար պրոլետարիատ չունեցող Ռուսաստանի պայմաններում **հավասար ընտրական իրավունքը**, դեմոկրատական ազատությունները և այլն, ընդհակառակը, **կխանգարեն սոցիալիզմի կառուցման գործին**:

Խորհրդային իշխանության ժողովրդավարության կարևորագույն ցուցանիշ էր համարվում աշխատավորների մասնակցությունը պետության կառավարմանը: Ըստ Լենինի՝ դա արտահայտվում էր ոչ միայն ընտրությունների ժամանակ քվեարկություններով, այլև կառավարմանն ամենօրյա մասնակցությամբ: «Սոցիալիզմի ժամանակ,- գրում էր Վ. Լենինը Հոկտեմբերի նախօրյակին,- ... առաջին անգամ բնակչության **մասսան** կբարձրանա այն աստիճանի, որ նա կկարողանա **ինքնուրույն** մասնակցել ոչ միայն քվեարկություններին ու ընտրություններին, այլև **ամենօրյա կա-**

ռավարմանը (ընդգծումները հեղինակինն է – Ա. Հ.)։ Սոցիալիզմի ժամանակ բոլորը կկառավարեն հերթով...»[1]։ Խորհրդային պետության 70-ամյա պատմության փորձը ցույց է տալիս, որ ձևի տեսակետից դա այդպես էր, սակայն բովանդակությամբ պատկերը բոլորովին այլ էր։

Բոլշևիկ առաջնորդների մշակած գաղափարական տեսադրույթների և Խորհրդային Ռուսաստանի խորհուրդների ընտրական փորձի հիման վրա հասկանալի է, որ պետք է նույնատիպ ընտրական համակարգ ձևավորվեր նաև Խորհրդային Հայաստանում։

1921 թ. կեսերին ՀՄԽՀ արտաքին և ներքին քաղաքական դրության քիչ թե շատ կայունացումից (Փետրվարյան ապստամբության ճնշում, Զանգեզուրի հնազանդեցում, Մոսկվայի և քիչ ավելի ուշ՝ Կարսի պայմանագրերի կնքում, անցում ՆԷՊ-ին, վարչատարածքային բաժանում և այլն), հետո անհրաժեշտություն զգացվեց իշխանության ոչ ընտրովի (նշանակովի) մարմիններ համարվող բոլոր մակարդակի **հեղկոմները** փոխարինել ընտրովի իշխանության մարմիններով՝ **խորհուրդներով**։ Հայաստանի ազգային արխիվի Ն. Գ. Ժողկոմատի (ֆոնդ 116-ում) պահպանվում է ուշագրավ մի գործ, որում 1920 թ. դեկտեմբերի 24-ի ամսաթվով և ՀՄԽՀ Ն. Գ. Ժողկոմի տեղակալ Սմոլենսկու ստորագրությամբ ներկայացված է մի կանոնադրական հրահանգ, թե ՌՍՖԽՀ օրինակով ինչպես պետք է Հայաստանում հեղկոմներ կազմակերպել և անցկացնել խորհուրդների ընտրություններ։ ՀԿ (բ)Կ 1-ին համագումարում (1922 թ հունվար) ընդունված բանաձևում, տալով Հայաստանում ոչ ընտրովի մարմինների (հեղկոմների) մեկամյա գործունեության գնահատականը, նշվում էր, որ «այդ մարմնի ստեղծումը պայմանավորված էր երկրում ստեղծված արտաքին ու ներքին արտասովոր հանգամանքներով»[3]։

---

[1] Տես *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 33, Ե., 1980, էջ 149։
[2] Տես ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 60, թ. 1–74։
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 41։

Ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու համար անհրաժեշտ էր ընդունել կանոնադրություն: Իսկ մինչ այդ՝ 1921 թ. Զանգեզուրի միացումից հետո, տեղի էր ունեցել հանրապետության տարածքների ամբողջացում և վարչական բաժանում: Ի հավելումն ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. հուլիսի 20-ի դեկրետի՝ կառավարության օգոստոսի 31-ի որոշմամբ կազմվում է Զանգեզուրի գավառը և այդպիսով՝ հանրապետության գավառների թիվը հասնում է 9-ի, իսկ գավառամասերինը (գավառակ)՝ 39-ի[1]: Դրանից հետո՝ ՀԿ (բ)Կ ԿԿ-ի հոկտեմբերի 31-ի նիստում, Ն. Գ. Ժողկոմ Ավիսի ներկայացմամբ հավանություն է տրվում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների **Ժամանակավոր կանոնադրության** նախագծին[2]: Այս կապակցությամբ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ՀՍԽՀ ՌՀԿ պաշտոնաթերթ «Խորհրդային Հայաստանը» նշում էր. «Խնդիրը Հեղկոմների վարչաձևից անցնել խորհուրդների վարչաձևին: Դրա համար մշակված է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների կանոնադրությունը»[3]:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 17-ի նիստում՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ, հաստատվում է ընտրությունների **ժամանակավոր կանոնադրությունը** և հրապարակվում «Խորհրդային Հայաստանի» նոյեմբերի 20-ի համարում: Այդ նույն նիստում ստեղծվում է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)՝ Ավիս Նուրիջանյանի նախագահությամբ: Նոյեմբերի 23-ին հետևում է նրա հրահանգչական նամակը՝ ուղղված բոլոր տեղական հեղկոմներին խորհուրդների ընտրությունների անցկացման կարգի մասին: Ընդամենը 22 հոդվածից և բազմաթիվ ենթակետերից կազմված ժամանակավոր կանոնադրությունը սահմանում էր ընտրությունների անցկացման կարգը, ըստ ընտրատարածքնե-

---

[1] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Ե., 1974, (այսուհետ՝ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում), էջ 71–73, 76:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 43:
[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18 նոյեմբերի 1921 թ.:

ռի ու վարչական միավորների՝ ընտրական քվոտաները (չափաբաժինները), բազմաստիճան ընտրական հանձնաժողովների գործառույթները, խորհուրդների համագումարների ձևավորման ու անցկացման, ընտրություններին բաղաքացիների մասնակցության կարգը, խորհուրդների անելիքները և այլն: Սույն կանոնադրության շատ դրույթներ դրվեցին ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարում՝ 1922 թ. փետրվարի 3-ին ընդունված Հայաստանի առաջին սահմանադրության հիմքում:

Կանոնադրության 1-ին հոդվածում հռչակվում էր, որ քաղաքի և գյուղի սահմաններում բարձրագույն իշխանությունը պատգամավորների խորհուրդն է: 2-րդ հոդվածով սահմանվում էր պատգամավորական խորհուրդների ձևավորման կարգը: Ընդ որում՝ քաղաքներում (այն ժամանակ նկատի էր առնվում միայն Երևանը և Ալեքսանդրապոլը)[1] յուրաքանչյուր 50 ընտրող տալիս էր 1 պատգամավոր, իսկ գյուղերում՝ բնակիչներից յուրաքանչյուր 50 հոգին՝ 1 պատգամավոր (ոչ բոլորն էին ընտրական իրավունքից օգտվում): Կանոնակարգում ծանոթության ձևով տեղեկացվում էր, որ 150-ից պակաս բնակիչ ունեցող գյուղն առանձին պատգամավորական խորհուրդ չի ընտրում, այլ կցվում է հարևան գյուղին կամ գյուղախմբի պատգամավորական խորհրդին[2]: Հարց է ծագում. ինչո՞ւ քաղաքների դեպքում 50 ընտրողին՝ 1 պատգամավոր, իսկ գյուղականին՝ 50 հոգուն նույնքան պատգամավոր: Դա հավասարար պետք է բացատրել քաղաքների բազմամարդությամբ, իսկ գյուղերի՝ սակավամարդության հանգամանքով: Այս դեպքում գյուղերին որոշ արտոնություն էր տրվում, որպեսզի դրանք կարողանան ձևավորել առնվազը երեք հոգուց կազմված պատգամավորական խորհուրդ:

Ընտրությունները տեղերում անցկացնելու համար ստեղծվում են քառաստիճան՝ գյուղական, քաղաքային, գավառամասային և

---

[1] Հետագայում 1926 թ., հանրապետության քաղաքների թիվը ավելացավ:

[2] Տես «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1921 թ., Հայկ. ՍՍՌ օրենքների ժողովածու (1920 թ. նոյեմբեր — 1938 թ. դեկտեմբեր), Ե., 1963, էջ 77:

գավառային ընտրական հանձնաժողովներ (ԸՀ): Հասկանալի է, որ դրանց աշխատանքների համակարգողն ու ուղղորդողը հանրապետական ԿԸՀ-ն էր: Իրականում խորհուրդների բառաստիճան ընտրություններում անմիջական ընտրությունների միջոցով խորհուրդների պատգամավորներ էին ընտրվում միայն գյուղական և քաղաքային խորհուրդների ընտրություններում: Այլ խոսքով՝ ընտրություններ կազմակերպվում և անցկացվում էին միայն քաղաքային և գյուղական ընտրաժողովներում: Մնացած մակարդակներում՝ գավառամասային, գավառային և հանրապետական ընտրական հանձնաժողովները փաստորեն խորհուրդների անմիջական ընտրություններ չէին անցկացնում: Բազմաստիճան ընտրակարգով գյուղական և քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից սահմանված չափաբաժնով (նորմայով) գավառամասային խորհուրդների համագումարին պատգամավորներ էին առաքվում: Ընդ որում, հանդես բերելով սոցիալ-դասակարգային խտրականություն՝ գյուղական խորհուրդների ներկայացուցիչներից (գավառամասի հաշվով) 500 բնակիչը գավառամասի համագումարի համար տալիս էր 1 պատգամավոր, մինչդեռ տեղական բանվորներից ու ծառայողներից յուրաքանչյուր 25 ընտրող՝ նույնպես 1 պատգամավոր տվյալ ձեռնարկության կամ միության կողմից: Սակայն սահմանված էր, որ գավառամասային համագումարի կազմը չպետք է գերազանցեր 75 պատգամավորից[1]:

Նման աստիճանակարգային սկզբունքով էր ձևավորվում նաև գավառային և հանրապետական խորհուրդների համակազմը: Գավառային համագումարը կազմվում էր գավառամասային համագումարների լիազորած ներկայացուցիչներից այն հաշվով, որ 1000 բնակիչը տալիս էր մի պատգամավոր, իսկ քաղաքների (Երևանի և Ալեքսանդրապոլի) բանվորներից յուրաքանչյուր 50 ընտրող՝ 1 պատգամավոր՝ ըստ ձեռնարկությունների կամ միութ-

[1] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 349, Հայկ. ՍՍՌ օրենքների ժողովածու, էջ 78, «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1921 թ.:

յունների: Սակայն գավառային համագումարի պատգամավորների ընդհանուր թիվը չպետք է գերազանցեր 150-ը՝:

Նկատվում է, որ թե՛ գավառամասային և թե՛ գավառային համագումարների պատգամավորական կազմի ձևավորման համար ցուցաբերվել է տոցիալ-դասակարգային մոտեցում. 1-ինի դեպքում՝ բանվորների և ծառայողների, իսկ 2-րդի դեպքում՝ բանվորների համար որոշակի նախապատվություն, արտոնություն էր տրվում: Պատգամավորների խորհուրդների գավառային համագումարների ձևավորման վերաբերյալ արդեն 1922 թ. փետրվարին ընդունված ՀՄԽՀ սահմանադրությամբ կատարվում է փոփոխություն այն հաշվով, որ քաղաքներում՝ ոչ թե բանվորներից յուրաքանչյուր 50 ընտրողն էր գավառամասից գավառային համագումարի համար տալիս 1 պատգամավոր, այլ քաղաքի 200 ընտրողն էր տալիս 1 պատգամավոր: Եվ, բացի այդ, գավառային համագումարի պատգամավորների թիվը հասցվում է 250-ի[2]: Իսկ ՀՄԽՀ **բարձրագույն իշխանություն** համարվող խորհուրդների համահայաստանյան համագումարը կազմվում էր գավառային համագումարի առաքած ներկայացուցիչներից: Ընդ որում, ընտրական կանոնադրությամբ 5000 բնակիչ տալիս էր 1 պատգամավոր այն հաշվով, որ խորհուրդների համահայաստանյան համագումարի ամբողջ կազմը չպետք է գերազանցեր 200 պատգամավորը[3]

Այսպիսով՝ ընտրությունների հետ կապված, ուղղակի էին միայն տեղական՝ գյուղական և քաղաքային խորհուրդների ընտրությունները, մնացածում՝ գավառամասային, գավառային և հանրապետական մակարդակներում, ընդամենը էտապային կարգով,

---

[1] Տես Հայկ. ՍՍՌ օրենքների ժողովածու, էջ 78, ՀԱԱ, ֆ. 1. ց. 1, գ. 39, թ. 43:

[2] Տես ՀՄԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենքը), Ե., 1922, էջ 10:

[3] Տես Հայկ. ՍՍՌ օրենքների ժողովածու, էջ 79, «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1921 թ.: Սակայն մի քանի ամիս անց՝ 1922 թ. փետրվարին, ընդունված ՀՄԽՀ Սահմանադրության մեջ խորհուրդների համահայաստանյան պատգամավորների ընդհանուր թիվը սահմանվեց 300 հոգի: Տես ՀՄԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 4, 10:

սահմանված չափաբաժնով լիազոր ներկայացուցիչներ էին առաքում համագումարին մասնակցելու: Այդ իսկ պատճառով գավառամասային, գավառային և հանրապետական համագումարներին պատգամավոր «ընտրել» հասկացություն գործածելը այնքան էլ տեղին չէ:

ԿԸՀ-ն հետևում և վերահսկում էր ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ողջ ընթացքը և բազմաստիճան ընտրությունների արդյունքով նախապատրաստում և հրավիրում էր բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների համահայաստանյան համագումարը:

1921 թ. նոյեմբերի 24-ին՝ Ալ. Մյասնիկյանի, Ավիսի և Միք. Ղարաբեկյանի ստորագրությամբ, լույս տեսավ ՀՍԽՀ ԺողկոմՍորհի հրահանգը ընտրությունների շուրջ և ընտրական հանձնաժողովների մասին[1]: Նրանում հանրությանը լրացուցիչ պայմանավորում էր ընտրությունների կազմակերպման և անցկացման մասին: Գավառներում ընտրություններ անցկացնելու համար ԿԸՀ գավիեղկոմների գիտությամբ նշանակում էին գավառային ընտրական հանձնաժողովներ (ԳԸՀ)՝ բաղկացած 5 հոգուց՝ իրենց նախագահներով: ԳԸՀ-ները աշխատելու էին քաղաքներում և իրենց հայեցողությամբ քաղաքը կարող էին բաժանել թաղերի (ընտրատարածքների) ու այդ թաղերում նշանակել թաղային ընտրական հանձնաժողովներ: Այնուհետև ԳԸՀ-ները իրենց ենթակա գավառամասերում նշանակում են գավառամասային ընտրական հանձնաժողովներ՝ բաղկացած 3-ական հոգուց, որոնցից 2-ը պետք է լինեին տեղացի, իսկ մեկն էլ՝ դրսից ուղարկված՝ իբրև գավառամասային ընտրական հանձնաժողովի նախագահ: Գավառամասային ԸՀ-ներն էլ իրենց հերթին յուրաքանչյուր գյուղում նշանակում են երեք հոգուց կազմված գյուղական ընտրական հանձնաժողով:

Նախընտրական փուլում բոլոր մակարդակի ընտրական հանձնաժողովները, բացի ընթացիկ կազմակերպչական աշխա-

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի 1921 թ.:

տանքներից, պետք է զբաղվեին ակտիվ քարոզչությամբ՝ կոչեր, թերթիկներ, պլակատներ, խորհրդային օրենքների պարզաբանումներ և այլն, որպեսզի հասարակությանը հասանելի դարձնեին ընտրությունները: Ընդ որում՝ ընտրությունների անցկացման ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր տվյալ մակարդակի հեղկոմի վրա, քանզի ընտրական հանձնաժողովները կազմվում էին հիմնականում հեղկոմի ապարատից կամ նրա լիազորած մարդկանցից: Օրինակ, գավառային ընտրական հանձնաժողովի 5 անդամներից 4-ին առաջադրում էր գավհեղկոմը[1]: Այնուհետև հրահանգում խոսվում էր ընտրական հանձնաժողովների գործառույթների, ընտրացուցակների (ընտրելու իրավունք ունեցող և ձայնազուրկ) կազմման, ընտրությունների անցկացման կարգի և այլնի մասին: Ընտրացուցակներում նշվում էին ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը, տարիքը, զբաղմունքը և նյութական դրությունը: Ընտրություններում խորհրդային իշխանության դասակարգային բնույթն ընդգծելու համար 50-ից ոչ պակաս բանվոր կամ ծառայող ունեցող արհեստակցական կազմակերպություն (միություն) ունեցող ձեռնարկությունները կամ հիմնարկությունները իրենք էին կազմում իրենց ընտրողների ցուցակները: Ընտրությունը կատարվում էր կոլեկտիվի ընդհանուր ժողովում, և ընտրված ներկայացուցիչների ցուցակը արհմիության միջոցով ուղարկվում էր գավառային ընտրական հանձնաժողով: Իսկ 50-ից պակաս անդամ ունեցող նման կոլեկտիվները միանում էին տվյալ արհեստակցական միության ուրիշ կոլեկտիվին:

Քաղաքներում և գյուղերում կազմված նախնական ցուցակները հայտարարվում կամ փակցվում էին ընտրություններից 72 ժամ (3 օր) առաջ: Մեկ օր ժամանակ էր տրվում ընտրացուցակը քննության առնելու և նկատված անճշտությունը շտկելու համար, որից հետո փակցվում էր վերջնական ցուցակը: Հետագայում, 3 օրը անբավարար համարելով, որոշվեց ընտրացուցակները փակցնել ընտրություններից մեկ շաբաթ առաջ:

---

[1] Տես Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 355:

Կապված բուն ընտրությունների հետ՝ Ժողկոմխորհի հրահանգում բացատրվում էր, որ ընտրություններն անցկացվում են բաղաքների և գյուղերի **ընտրական ժողովներում**: Ընտրաժողովը վարում է ՐՀ-ը կամ նրա լիազորը: Քաղաքային ընտրատարածքներում հրավիրվում են արհմիությունների մեջ չմտնող ընտրողների թաղային ժողովներ, իսկ գյուղերում՝ գյուղական ընտրաժողովներ: Ընտրաժողովը համարվում է օրինական, եթե ժողովին ներկա էր ընտրողների առնվազն 35 տոկոսը: Կրկնական ընտրաժողովն օրինական էր համարվում՝ անկախ մասնակիցների թվից[1]: Ընտրաժողովները սովորաբար հրավիրվում էին ուշ աշնանը կամ ձմռանը, երբ գյուղատնտեսական աշխատանքները ավարտված էին:

Ընտրացուցակներում ընդգրկվածները ընտրաժողովին մասնակցելու համար ծանուցագրեր էին ստանում մի քանի (մինչև 5) օր առաջ: Ընտրությունների օրը ընտրական հանձնաժողովները ստուգում էին ներկայացողներին և ժողովից հեռացնում նրանց, ովքեր սահմանված կարգով (այդ մասին հանգամանալի կխոսվի փոքր ավելի ուշ) ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին: Ընտրությունները կատարվում էին նախապես կազմված անդամության թեկնածուների ամբողջական ցուցակներով: Ցուցակներում, որպես կանոն, ընդգրկված էին կոմունիստներ, ծառայողներ, բատրակներ, չքավորներ, բանվորներ և միջակներ: Անհատական կարգով թեկնածության առաջադրում և քվեարկություն չէր թույլատրվում: Սկսած ամենաստորին օղակից՝ պատգամավորության թեկնածուների առաջադրումը հասարակական կազմակերպությունների ու աշխատավորության անունից իրականացնում էին կուսակցական կառույցները: 1925 թ. ընտրողների դժգոհությունների և ընտրակարգի որոշ մեղմացումների շնորհիվ թույլատրվեց նաև անհատական քվեարկություն:

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի 1921 թ., Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 357:

Հարկ է նշել, որ աստիճանաբար արմատավորվող միակուսակցական կառավարման համակարգի պայմաններում, երբ բոլոր տիպի խնդիրները կոմկուսն էր որոշում ու լուծում, հասկանալի է, որ կուսակցության մենաշնորհի մեջ էին մտնում նաև խորհուրդների ընտրությունները և դրանց մարմինների ձևավորումը: Այդ կապակցությամբ տեղին է վկայաբերել հին բոլշևիկ, դիվանագետ Ա. Իոֆֆեի 1919 թ. դեկտեմբերի 15-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ին ու անձամբ Վ. Լենինին ուղղված գաղտնի մի նամակում արած հետևյալ ակնարկը. «Մեր չգրված սահմանադրությամբ կուսակցական և խորհրդային կենտրոնական բոլոր տիպի հաստատությունների ընտրությունները փաստորեն անցկացվում են **ՌԿԿ ԿԿ-ի կազմած ցուցակներով** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»[1]: Իոֆֆեի խոստովանությունից կարելի է հետևեցնել, որ խորհրդային սահմանադրությունում գրված է եղել մի բան, իսկ մեկ այլ՝ «չգրված սահմանադրությամբ» արվել է բոլորովին այլ բան:

Ինքնին հասկանալի է, որ նման ցուցակներ իրենց հերթին կազմել են նաև կուսակցության ազգային կառույցների ու ավելի ստորին օղակների մարմինները իրենց շրջանակի՝ մարզային, նահանգային, գավառային, գավառամասային (ոլոստային), քաղաքային և անգամ գյուղական մակարդակի ընտրություններում թեկնածուներին անցկացնել տալու համար:

Իշխանությունների հսկողության տակ էր ընտրական ողջ գործընթացը: Ընտրություններն անցկացնելուց հետո ընտրական հանձնաժողովները հատուկ ձևաթղթերում, ժողովի նախագահի և քարտուղարի ստորագրությամբ, կազմում էին արձանագրություն՝ երկու օրինակից: Գյուղական ընտրական հանձնաժողովի արձանագրությունը տրվում էր գավառամասային ընտրական հանձնաժողովին: Վերջինս արձանագրությունները հաստատելուց հետո ուղարկում էր ավելի վերադաս՝ գավառային ԸՀ-ին, իսկ գավառայինն էլ՝ ԿԸՀ-ին: Արհեստակցական միությունների ԸՀ-նե-

---

[1] Большевистское руководство. переписка (1912–1927), сборник документов, М., 1996, с. 111.

րըն իրենց ընտրական ժողովների արձանագրությունները ՀԱՄԽ-ի միջոցով ուղարկում էին գավառային հանձնաժողով: Ընտրությունների և նրա արդյունքների հետ կապված բողոքարկումների համար տրվում էր երկու օր ժամանակ: Գյուղերում և գավառամասերում արված բողոքները քննարկվում էին տվյալ գավառային ընտրական հանձնաժողովներում, իսկ գավառայինի բողոքները՝ ԿԸՀ-ում[1]:

ՀՍԽՀ 1920-ական թթ. խորհուրդների ընտրական համակարգի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը ժամանակավոր կանոնադրությամբ սահմանված **ակտիվ** և **պասիվ** ընտրական իրավունքն էր (տե՛ս բաժին 3-րդ, հոդված 19 և 20)[2]: Վերոնշյալ հոդվածներով ընտրողների համդեպ հանդես էր բերվում սոցիալ-դասակարգային խտրականություն: Եվ դա ուներ իր բացատրությունը: Քանի որ խորհրդային պետությունը համարվում էր բանվորական ու աշխատավորական, ուստի ընտրելու և ընտրվելու իրավունք պետք է ունենային այդ շերտերը, իսկ վարձու աշխատանք շահագործող և անաշխատ եկամուտներով ապրող խավերը՝ մասնավոր առևտրականները, կուլակները, հոգևոր սպասավորները և այլն, զրկվում են նման իրավունքից: Ավելին, 1920-ական թթ. խորհրդային ընտրակարգը և նրա սահմանադրությունը ընդունում էր պրոլետարիատի (բանվոր դասակարգի) առավելությունը գյուղացիության նկատմամբ:

Հոդված 19-ով, իբրև ակտիվ հատված, ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում էին 18 տարին լրացած ՀՍԽՀ երկսեռ քաղաքացիները՝ անկախ դավանանքից, ազգությունից, նստակեցությունից և այլն, որոնք զբաղված են արտադրական կամ հանրօգուտ աշխատանքով և շահ ստանալու նպատակով չեն շահագործում վարձու աշխատանք և այլն: Կանոնադրության հոդված

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի և 3 դեկտեմբերի 1921 թ., Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 358–359:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1921 թ., Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 352–353:

20-ով ավելի հանգամանորեն, ըստ ենթակետերի, նշված են պասիվ կամ ընտրելու և ընտրվելու իրավունքից զուրկ քաղաքացիների կարգախմբերը, այն է՝ ովքեր շահ ստանալու նպատակով պահում են վարձու աշխատողներ, ապրում են անաշխատ եկամուտներով, այդ թվում՝ ձեռնարկատերերը, առևտրականները, կուլակները, հոգևոր ծառայողները, ինչպես նաև նախկին դաշնակցական կառավարության հատուկ գործակալներն ու ծառայողները, խմբապետներն ու մառզերիստները և, բնականաբար, ինչպես ընդունված է, դատական կարգով ազատազրկվածները, հոգեկան հիվանդ ու խելագար ճանաչվածները[1]: Այլ խոսքով՝ ընտրական իրավունքը չէր տարածվում ընտրական հասակի բոլոր քաղաքացիների վրա:

Ժամանակավոր կանոնադրության հիշյալ 19-րդ և 20-րդ հոդվածները նույնությամբ, ինչպես նաև ընտրակարգի և ընտրական իրավունքի շատ կանոններ ու դրույթներ տեղ գտան ՀՍԽՀ սահմանադրության և ի մասնավորի 8-րդ գլխի համապատասխանաբար 70-րդ և 71-րդ հոդվածներում[2]: Ինքնին հասկանալի է, որ ընտրական ողջ կանոնակարգը, այդ թվում՝ ակտիվ և պասիվ ընտրողների մասին խտրական կանոնները, Հայաստանի իշխանությունները վերցրել ու տեղայնացրել էին ՌՍՖԽՀ 1918 թ. Սահմանադրությունից: Ասվածը հիմնավորելու համար բերենք միայն մեկ օրինակ: ՌՍՖԽՀ և ՀՍԽՀ սահմանադրությունների պասիվ ընտրական իրավունքի վերաբերյալ համապատասխանաբար 65-րդ և 71-րդ հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք նույնական են և՛ ենթակետերով, և՛ մտքով, և՛ անգամ բառակապակցություններով: Միակ տարբերությունը, թերևս, այն է, որ ՀՍԽՀ սահմանադրության «և» ենթակետում ռուսկանի տեքստին ավելացված է այն ժամանակվա մեր իրականությանը ծանոթ

[1] Տես նույն տեղում:
[2] Տես ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 13–14:

«խմբապետներ ու մատուզերիստներ» բառակապակցությունը[1]: Եթե քաղաքացին ձայնազուրկ է, ապա խոսք չի կարող լինել իրավահավասարության մասին: Կազմվել և փակցվել են և՛ ընտրողների, և՛ ձայնազուրկների ցուցակները: Ձայնազուրկների ցուցակն ունեցել է ավելի բարդ կառուցվածք՝ բաղկացած ութ սյունակից: Մեկում նշվում էր ձայնազրկման պատճառը: Ձայնազուրկների հաշվառումը կատարվում էր հատուկ ձևաթղթերում՝ երեք օրինակից: Ցուցակը պետք է գրված լիներ թանաքով կամ քիմիական մատիտով: Կազմված ցուցակի օրինակներից մեկը մնում էր տեղում (գյուղում կամ քաղաքում), 2-րդը ուղարկվում էր գավառամասային, իսկ 3-րդը՝ գավառային ընտրական հանձնաժողով: Ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակները հրապարակվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում, կարող էր բողոք ներկայացվել վերադաս ընտրական հանձնաժողով, ընդհուպ ԿԸՀ: Գանգատ ստացած մարմինը պարտավոր էր 24 ժամվա ընթացքում պատասխանել դիմողին: ԿԸՀ-ի որոշման դեմ կարող էր բողոք ներկայացվել ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահություն[2]: Համենայն դեպս, ընտրությունների մասին կանոններում ու հրահանգներում այդպիսին էին պայմանները: Սակայն թե իրականում ինչպես են գործադրվել այդ կանոնները, դա արդեն այլ հարց է:

Ուշագրավ է նաև խորհուրդներից պատգամավորին **հետ կանչելու գործառույթը**, որի կիրառման դեպքում կարող է խոսք լինել տվյալ երկրի ներկայացուցչական մարմնի ժողովրդավարական բնույթի մասին: Ցավոք, խորհրդային համակարգում այս մեխանիզմը ևս չի գործել: Դեռևս խորհրդային իշխանության արշալույսին՝ 1917 թ. նոյեմբերի 21-ին, ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինը դեկրետ էր ստորագրել «Պատգամավորներին հետ կանչելու իրավունքի մասին»: Ըստ այդմ՝ ընտրողները իրավունք էին ստանում ցանկացած ընտրովի մարմնից (նաև՝ ՍԺ-ից) տվյալ ընտրական

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 44, թ. 55, ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 13–14, Декреты Советской власти, т. 2, М., 1959, с. 561–562.
[2] Տես ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 49, թ. 8 և 12, ց. 2, գ. 133, թ. 65 (շրջերես):

օկրուգի մեծամասնության պահանջով հետ կանչել իրենց ներկայացուցիչներին, եթե նրանք չեն արտահայտում ու չեն արդարացնում աշխատավոր բնակչության շահերը[1]: Խորհրդային հեղինակներից մեկի կարծիքով դեկրետի նպատակն էր խորհուրդները մաքրել «հակահեղափոխական և համաձայնողական տարրերից»: Գլխավոր խնդիրներից էր նաև հետկանչման միջոցով ՍԺ-ը ևս «բեռնաթափել» բոլշևիկների համար անցանկալի այլ կուսակցությունների պատգամավորներից: Սակայն այդ օրենքը «լավ չգործեց», և ՍԺ-ն իր ճնշող մեծամասնությամբ մնաց հակաբոլշևիկյան, որի համար էլ 1918 թ. հունվարին այն ուժով ցրվեց[2]: Բայց և այնպես հարկ է արձանագրել, որ հետագայում էլ, ինչպես ՌՍՖԽՀ 1918 թ. սահմանադրության, այնպես էլ դրանից, ըստ էության, արտատպված ՀՍԽՀ 1922 թ. սահմանադրության մեջ առանձին հոդված կա ընտրությունների բեկանման և պատգամավորների հետկանչման մասին[3]: 1920-ական թթ. խորհուրդների ընտրությունների վերաբերյալ նյութերի ուսումնասիրության հիման վրա կարելի է վստահաբար պնդել, որ պատգամավորի հետկանչման մեխանիզմ չի եղել, և սահմանադրական այդ նորմը չի գործել:

Խոսելով ընտրական համակարգի մասին՝ չի կարելի շրջանցել **համամասնական** (կուսակցական) և **մեծամասնական** (մաժորիտար) ընտրակարգի հարցը: Փաստենք, որ 20-րդ դարասկզբից զարգացած երկրներում նախապատվությունը տրվում էր համամասնականին՝ կուսակցական ցուցակներով ընտրություններին, որովհետև հասարակությունն արդեն բավականին հստակ ճանաչում էր քաղաքական կուսակցություններին, նրանց ծրագրերը, քաղաքական նպատակները և այլն: Ուշագրավ է, որ անգամ Վ. Լենինն է նկատել՝ համամասնական ընտրական համակարգը ավելի դեմոկրատիկ է, քան մեծամասնականը: Սակայն միաժա-

---

[1] Տես Декреты Советской власти, т. 1, М., 1957, с. 115–116.

[2] Տես Ирошников М. А., Создание советского центрального государственного аппарата. октябрь 1917 г. – январь 1918 г., М., 1966, с. 154.

[3] Տես Декреты Советской власти, т. 2, М., 1959, с. 562, ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 15:

մանակ նա իրավացիորեն ակնարկում էր, որ համամասնականի դեպքում շատ ավելի դժվար է հետևանչման իրավունքի իրացումը[1]: Հայտնի է, որ Ռուսաստանի 1917 թ. նոյեմբերի 12-ի ՍԺ-ի ընտրությունները անցկացվել են համամասնական կամ կուսակցական ցուցակներով: Հայաստանի առաջին հանրապետության 1919 թ. խորհրդարանական միակ ընտրությունները ևս անցկացվել են համամասնական սկզբունքով (որը կուսակցությունների և հասարակական-ազգային խմբերի մասնակցությամբ), որ հաղթել է ՀՅԴ կուսակցությունը: Արդեն Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920-ական թթ., երկրի իշխանության ընտրովի մարմին հանդիսացող խորհուրդների ընտրությունների ժամանակ գործնականում կար ընդամենը մեկ օրինական կուսակցություն՝ ՀԿ(բ)Կ, մյուսները մասամբ արտաքսվել էին, ընդհատակում էին կամ էլ կազմալուծված: Հալածանքի ու լուծարման գործընթացների մեջ հայտնված Հայաստանի ոչ պրոլետարական ու մանրբուրժուական, հակահեղափոխական որակված կուսակցությունների (ՀՅԴ, ՀԺԿ, Էսէռ, ՀՍԴԲԿ, Ս. Դ. Հնչակ և այլն) անդամ ներկայացուցիչները չէին կարող պատգամավորության թեկնածուներ առաջադրել և իբրև կուսակցություն օրինական մասնակցել խորհուրդների ընտրություններին: Դրա համար էլ տվյալ դեպքում չէր կարող գործել ո՛չ համամասնական և ո՛չ էլ մեծամասնական համակարգը: Ավելի ստույգ սահմանվեց միակուսակցական ընտրական մեթոդաբանություն բոլշևիկ պատգամավորական թեկնածուների, ինչպես նաև այդ կուսակցության համակրանքն ու վստահությունը վայելող անկուսակցական թեկնածուների համար, որոնք էլ ընտրություններից հետո ձևականորեն կազմելու էին կոմունիստների ու անկուսակցականների բլոկ և այդպես տասնամյակներ շարունակ:

Այդպիսով՝ խորհուրդների ընտրությունները դժվար է տեղավորել համամասնական և մեծամասնական ընտրակարգի մեջ, որովհետև միակուսակցական համակարգի պայմաններում անհեթեթություն է խոսել համամասնական ընտրակարգի մասին, իսկ

[1] Տե՛ս Декреты Советской власти, т. 1, М., 1957, с. 116.

մեկ կուսակցության քաղաքական մենաշնորհի առկայության դեպքում դարձյալ անիմաստ ու ավելորդ է խոսել մեծամասնական (անհատական) սկզբունքով ընտրվելու գործնական արդյունքի մասին: Այս կապակցությամբ, Հայաստանի ընտրական համակարգի հետ կապված, մեզ հայտնի է միայն, որ 1926 թ. ընդունվել է քաղաքային խորհուրդների վերաբերյալ մի կանոնադրություն, համաձայն որի՝ ընտրողների ոչ պակաս, քան 35 տոկոսի մասնակցությամբ կայացած ժողովը, ձայների պարզ մեծամասնությամբ, իրավասու է հետ կանչելու առանձին պատգամավորի և անգամ պատգամավորների ամբողջ կազմը: Սակայն միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում. ա) երբ տվյալ պատգամավորն անցնում է ոչ ընտրողի պաշտոնի, բ) երբ իր ցանկությամբ դուրս է գալիս քաղաքային խորհրդից և գ) երբ ինչ-ինչ պատճառով կորցնում է ընտրական իրավունքը[1]: Սակայն թվարկված պայմաններից դժվար չէ նկատել, որ հիշյալ կարգը որևէ աղերս չունի առհասարակ իրեն չարդարացրած պատգամավորին հետ կանչելու մեխանիզմի հետ:

Համանման գործող և չգործող ընտրական կանոնակարգի ու սահմանադրական նորմերի հիման վրա էլ տեղի ունեցան Հայաստանի խորհուրդների ամենամյա ընտրությունները և դրանց արդյունքում ձևավորվեցին խորհրդային իշխանության ընտրովի մարմինները: ՀՍԽՀ խորհուրդների 1-ին ընտրությունները և դրանց համագումարները տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբեր – 1922 թ. հունվարին: Ընտրվեցին երկու քաղաքային՝ Երևան և Ալեքսանդրապոլ, և ավելի քան 800 գյուղական խորհուրդներ: 1922 թ. հունվարի 30-ից մինչև փետրվարի 4-ը տեղի ունեցավ խորհուրդների համահայաստանյան 1-ին համագումարը՝ իբրև ՀՍԽՀ բարձրագույն իշխանություն: Մանդատային հանձնաժողովի ներկայացրած տվյալներով համագումարը ներկայացրել է 252 պատգամավոր, որից 239-ը վճռական ձայնով և 13-ը՝ խորհրդակցական: Ըստ կուսակցական պատկանելության՝ կոմունիստ՝ 218, անկուսակցա-

[1] Տես ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, գ. 90, թ. 17, և 30:

կան՝ 32, էսէռ՝ 1 և անարխիստ՝ 1[1]: Խորհուրդների համահայաստանյան համագումարները պետք է նախորդեին և համահունչ լինեին համամիութենական խորհուրդների համագումարներին: Եթե համամիութենական համագումարների հրավիրման ժամկետները փոփոխվում էին, բնականաբար, փոխվում էին նաև Հայաստանի խորհուրդների ընտրությունների և համագումարների հրավիրման ժամկետները: Այսպես, տեղեկություն կա, որ 1924 թ. աշնանը Կենտրոնի հրահանգով ժամանակավորապես հետաձգվել է խորհուրդների ընտրությունները Հայաստանում[2]: Պաշտոնական տեղեկանք կա, որ ԽՍՀՄ մասշտաբով կոոպերատիվների վերընտրությունների, հացամթերման դժվարությունների և այլնի զուգադիպման պատճառով խորհուրդների 1928 թ. ընտրությունները փոխադրվել են 1929 թ. և այլն[3]:

Հարկ է նշել, որ 1920-ական թթ. կեսերին (1925-1926 թթ.), ինչպես Միության, այնպես էլ Հայաստանի մասշտաբով ընտրական համակարգում որոշ մեղմացումների ու դրական փոփոխությունների փորձեր կատարվեցին: Դա կապված էր ՆԷՊ-ի գործընթացների հետագա խորացման, այսպես կոչված, Նոր ՆԷՊ-ի կուրսի հետ, որով խնդիր դրվեց խորհրդային իշխանության սոցիալական բազան ընդլայնելու համար որոշ չափով բարելավել տեղական խորհուրդների ընտրական ընթացակարգերը, ընտրողի մարմիններում ներգրավել նաև միջակ գյուղացիությանը, ինչպես նաև կրճատել ձայնազուրկների թիվը: Միջակ գյուղացիությանը խորհրդային իշխանության շուրջը համախմբելու կապակցությամբ ՌԿ(բ)Կ 14-րդ կուսկոնֆերանսում (1925 թ. ապրիլ) Ի. Ստալինը ընդգծում էր. «Գլխավորն այժմ այն է, որ պրոլետարիատի շուրջը համախմբենք միջակներին և նորից նվաճենք նրանց»[4]: «Նորից» ասելով՝ Ստալինը նկատի ուներ այն հանգամանքը, որ առաջին

---

[1] Տես ՀՄԽՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), Ե., 1922, էջ 128:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 6, թ. 81:
[3] «Խորհրդային Հայաստան», 8 հունվարի և 3 հոկտեմբերի 1928 թ.:
[4] *Ստալին Ի.*, Համառոտ կենսագրություն, Ե., 1949, էջ 109:

անգամ ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարի որոշմամբ (1919 թ. մարտ) հիմնականում միջակ գյուղացիությանը խորհրդային իշխանության կողմը ներգրավելու միջոցով իրենք կարողացան հաղթել բաղաքացիական կռիվներում: Արդեն 1925 թ. այն պատմաշրջանն էր, երբ Ն. Բուխարինը հանդես էր եկել «հարստացե՛ք, գյուղացիներ» կարգախոսով[1]: Տվյալներ կան, որ ԽՍՀՄ մասշտաբով 1925 թ. կոմունիստների թիվը գյուղական խորհուրդներում կրճատվել էր գրեթե կրկնակի[2]:

Այս համատեքստում հատկանշական է ՌԿ (բ)Կ ԿԿ-ի քարտուղար Լ. Կագանովիչի 1925 թ. փետրվարի 10-ի թիվ 87 շրջաբերականը՝ ուղղված ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների, երկրկոմների, մարզկոմների, նահանգների կենտկոմներին՝ խորհուրդների մասնակի ընտրություններ անցկացնելու վերաբերյալ: Հաշվի առնելով, որ 1924 թ. աշնանը տեղի ունեցած խորհուրդների ընտրությունների ժամանակ մի շարք վայրերում թույլ են տրվել անճշտություններ, կամ անբավարար է եղել ընտրողների մասնակցությունը՝ ԿԿ ը որոշում է ընդլայնել գյուղացիական զանգվածների մասնակցությունը ընտրություններին, այն է՝ առաջ քաշել նաև անկուսակցականների, չմերժել այն անկուսակցականների թեկնածությունների առաջադրումը, ովքեր այս կամ այն կերպ ընդունում են խորհրդային իշխանությունը, չպարտադրել ցուցակներով քվեարկություն և այլն[3]:

Խորհուրդների ընտրությունների մեղմացումների վերաբերյալ այդ նույն շրջանում հետևել է, նաև ԿԿ-ի քարտուղար Վ. Մոլոտովի հրահանգը տեղերին՝ «Խորհուրդների ընտրությունների ժամանակ չսահմանափակվել միայն բատրակներով, այլ, ըստ անհրաժեշտության, դրանցում ներգրավել նաև միջակ գյուղացիությանն ու անկուսակցականներին»[4]:

---

[1] Տես *Николаевский Б. И.*, Тайные страницы истории, М., 1995, с. 112.
[2] Տես *Щетинов Ю. А.*, История России XX век. М., 1999, с. 143.
[3] Տես ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 190, թ. 5:
[4] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 58:

ՀՍԽՀ պատգամավորների խորհուրդների 4-րդ համագումարը (1925 թ. մարտ), հիմք ընդունելով ԽՍՀՄ և ԱՍՖԽՀ սահմանադրություններում կատարված փոփոխությունները, վերանայեց ՀՍԽՀ սահմանադրության հին խմբագրության 6-րդ գլուխը «Տեղական իշխանության» մասին և համապատասխան փոփոխություններ մտցրեց այդ գլխի մեջ այն հաշվով, որ «ընդլայնվի խորհուրդների ընտրական չափը և աշխատավոր մասսաների լայն մասնակցությունը խորհրդային մարմինների աշխատանքներին»[1]: Այդ ամենի հիման վրա ՀՍԽՀ ԿԳԿ-ը 1925 թ. մարտի 16-ին ԿԳԿ-ի նախագահ Ս. Համբարձումյանի և քարտուղար Հ. Տատյանի ստորագրությամբ հաստատեց հանրապետության խորհուրդների և ի մասնավորի դրանց՝ ընտրություններին վերաբերող կանոնադրություն: Դրանում գյուղական խորհուրդների վերաբերյալ սահմանվում էր, որ խորհուրդը կազմվում է այն հաշվով, որ յուրաքանչյուր 50 բնակիչ տալիս է 1 պատգամավոր (նախկինի 100 բնակչի փոխարեն), բայց այն հաշվով, որ գյուղական խորհուրդն ունենա նվազագույնը 7 և առավելագույնը ոչ ավել, քան 50 պատգամավոր[2]: Սա նշանակում է, որ 300-ից պակաս բնակիչ ունեցող գյուղերը չեն կարող ինքնուրույն խորհուրդ կազմել, որովհետև չեն ապահովում նվազագույնը 7 պատգամավորի նորման: Ուստի այդպիսիները մասնակցում են հարևան գյուղի գյուղական խորհրդի ընտրությանը: Նախկինում 150-ից պակաս բնակիչ ունեցող գյուղն էր կցվում հարևան գյուղին ու նրա խորհրդին: Ակներև է, որ կատարվել է գյուղախմբերի ու գյուղխորհուրդների խոշորացում՝ կապված բնակչության թվի համամասնական աճի հետ:

Այնուհետև գավառամասային համագումարների ձևավորման համար տվյալ գավառամասի սահմաններում գտնվող բոլոր խորհուրդների ներկայացուցիչներից 300 բնակիչ տալիս է 1 պատգամավոր (նախկինում 500 բնակչի փոխարեն), իսկ գավառային

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 187, թ. 35:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 7, թ. 23, ց. 2, գ. 182, թ. 14, «Խորհրդային Հայաստան», 4 օգոստոսի 1926 թ.:

խորհուրդների համագումարի ձևավորման համար գյուղական խորհուրդներից 1000 բնակչի հաշվով ընկնում էր 1 պատգամավոր, ինչպես նաև նույն չափաբաժնով՝ քաղաքային խորհուրդներից: Այստեղ, ի տարբերություն ՀՍԽՀ սահմանադրության 51-րդ հոդվածի, քաղաքի 200 ընտրող կարող էր ընտրել 1 պատգամավոր, ըստ որի նոր կանոնադրությամբ գյուղերի նման 1000 բնակչին էր ընկնում 1 պատգամավոր: Սակայն երկու դեպքում էլ գավառային համագումարի պատգամավորների թիվը չպետք է գերազանցեր 250-ը[1]

Կուսակցության բարձրագույն ղեկավարության հրահանգների և ընտրությունների կանոնադրական մի քանի նոր փոփոխությունների շնորհիվ մեկ-երկու տարում եղան ընտրական որոշ մեղմացումներ, թույլատրվեց նաև անհատական քվեարկություն, կրճատվեց ձայնազուրկների թիվը և այլն: Սակայն սկսած արդեն 1927 թ.-ից՝ նկատվեցին ընտրական ընթացակարգերի խստացումներ, որոնք կապված էին ներկուսակցական ու ներքաղաքական կյանքի հայտնի նոր բարդացումների, այսպես կոչված, տրոցկիստական-զինովևական բլոկի, փոքր ավելի ուշ՝ «աջ թեքման» (բուխարինականների), կուլակային տարրերի դեմ պայքարի ուժեղացման ու նաև համատարած կոլեկտիվացման կուրսի կենսագործման հետ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ, Խորհրդային Ռուսաստանի օրինակով, 1920-ական թվականների սկզբներից ձևավորված ընտրական համակարգը. ա) տեղեր էր ապահովում միայն իշխող բոլշևիկների կուսակցության և նրա վստահությունը վայելող մարդկանց ու սոցիալական խմբերի համար, բ) ընտրությունները ուղղակի չէին, այսինքն՝ բազմաստիճան էին: Ընտրողը չէր կարող ուղղակի իշխանության բարձրագույն մարմնի՝ խորհուրդների համագումարի պատգամա-

[1] Տես ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 7, թ. 31, ՀՍԽՀ Սահմանադրությունը (հինական օրենք), Ե., 1922, էջ 10: 1921 թ. Ժամանակավոր կանոնադրությամբ գավառային համագումարի պատգամավորների թիվը սահմանվել էր առավելագույնը 150 հոգի:

վոր ընտրել: Նրա ընտրածը միջնորդավորված էր մի քանի աստիճանով: Ընտրությունները ուղղակի էին միայն գյուղական և քաղաքային մակարդակներում, իսկ այնուհետև վերջիններիս ձևավորված խորհուրդների միջոցով ներկայացուցիչներ էին առաքվում համապատասխանաբար գավառամասային և գավառային համագումարներ, իսկ վերջինս էլ կազմվում էր կուսակցությանը և խորհրդային իշխանությանը նվիրված մարդկանց այն ցանկը, որոնք պետք է ներկայացնեին խորհուրդների համահայաստանյան համագումարը: գ) ընտրությունները գաղտնի չէին, որովհետև ընտրական ժողովում կատարվում էր բաց քվեարկություն՝ ձեռք բարձրացնելու միջոցով, ինչը հսկվում էր ընտրաժողովի ընթացքում: Ընդ որում, գյուղական և քաղաքային պատգամավորության թեկնածուների ցուցակը կազմվում էր, այսպես կոչված, չքավորների ժողովում, ընտրական հանձնաժողովի, տեղական իշխանության և կուսակցական ու կոմերիտական ներկայացուցիչների կողմից: դ) ընտրությունները համընդհանուր չէին, որովհետև և՛ ընտրությունների մասին կանոնադրությամբ, և՛ ընդունված սահմանադրությամբ շահագործող և թշնամական տարր կոչվածները՝ շահագործողները, կուլակները, հոգևոր սպասավորները, նախկին խմբապետ-մաուզերիստները և այլն, օրենքով համարվում էին ձայնազուրկ, չունեին ընտրելու և ընտրվելու իրավունք: ե) թեև սահմանադրությամբ ամրագրված էր պատգամավորի հետկանչման դրույթ, սակայն համապատասխան գործուն մեխանիզմ չլինելու պատճառով այդ նորմը չի գործել: Եվ վերջապես՝ զ) ընտրությունները չէին տեղավորվում ո՛չ համամասնականի մեջ, որովհետև այլ, մրցակցային կուսակցություններ չկային, քանզի դրանք սրգելված, կազմալուծված ու քայքայված էին, և ո՛չ էլ՝ մեծամասնականի մեջ, որովհետև մեկ կուսակցության քաղաքական մենաշնորհի պայմաններում անիմաստ ու ավելորդ է խոսել անհատական կարգով ընտրված լինելու մասին:

1920-ական թթ. սկզբներին ձևավորված դասակարգային ու խտրական սույն ընտրական համակարգը գործել է մինչև 1930-ա-

կան թթ. կեսերը, երբ ԽՍՀՄ-ում 1936 թ. դեկտեմբերի 5-ին և դրա օրինակով նաև Հայաստանում 1937 թ. մարտի 23-ին ընդունվեցին հաղթանակած սոցիալիզմի սահմանադրությունները: Բոլշևիկների պատկերացրած սոցիալիզմի հիմքերի կառուցմամբ և շահագործողական տարրերի վերացմամբ ընդունվեց նոր սահմանադրություն, մտցվեց նոր՝ նախորդի համեմատ ավելի դեմոկրատական ընտրակարգ, վերացվեց ձայնազուրկների ինստիտուտը և այլն: Սակայն բովանդակության տեսակետից հաստատված միակուսակցական գաղափարական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ամբողջատիրական համակարգի պայմաններում ընտրությունները դարձան ավելի միօրինակ, ձևական ու ձանձրալի՝ առաջ բերելով ժողովրդի անտարբերությունը դրանց արդյունքների հանդեպ:

2 *Ընտրական գործընթացները*

Խորհրդային իշխանության հռչակումից հետո, ինչպես արդեն ասվել է, որպես անցումային շրջանի իշխանություն, երկիրը կառավարվում էր ոչ ընտրովի իշխանության մարմինների՝ հեղկոմների միջոցով՝ սկսած գյուղականից ավարտված բարձրագույն գործադիր, օրենսդիր և կարգադրիչ մարմին հանդիսացող Հայաստանի հեղկոմով (Հայհեղկոմ): 1921 թ. կեսերից, երբ հանրապետության քաղաքական վիճակը համեմատաբար կայունացավ (չնայած դեռևս մոլեգնում էին սովն ու քայքայումը), անհրաժեշտ էր հանրապետության մակարդակով ընտրություններ կազմակերպել և ձևավորել օրինական, խորհուրդների բովանդակությանը համապատասխան բանվորագյուղացիական ընտրովի իշխանություն: Այսինքն՝ խնդիր դրվեց **հեղկոմներից** անցում կատարել դեպի **խորհուրդները**:

Քանի որ նախորդ ենթագլխում արդեն խոսվել է ընտրական համակարգի իրավա օրենսդրական ձևավորման մասին, այժմ փորձենք գործնականում ներկայացնել ընտրարշավների և ընտ-

բական գործընթացների իրական պատկերը նշված ժամանակաշրջանում: Կարծում ենք, որ շուրջ մեկ դար առաջ ձևավորված խորհրդային ընտրական համակարգի ու ընտրական գործընթացների ուսումնասիրությունը, անշուշտ, արդիական է, և ուսանելի այն իմաստով, որ դրանցով կարելի է գաղափար կազմել, թե տասնամյակների այդ պրակտիկան ինչ ազդեցություն ու հետևանք է թողել ժամանակակից հայաստանցի ընտրողի վրա, ինչո՞ւ ներկայիս ժողովրդավարական ընտրական արժեհամակարգի պայմաններում մեզանում չեն հաղթահարվում ընտրակեղծիքները, և այդ իմաստով դեռևս դժվար է խոսել ՀՀ սահմանադրական այն հիմնադրույթի մասին, թե՝ «**իշխանությունը պատկանում է ժողովրդին**»[1]:

Ինչպես արդեն ասվել է, ՀԽՍՀ բոլոր մակարդակների խորհուրդների ամենամյա ընտրությունները, որպես կանոն, անցկացվում էին ուշ աշնանը կամ ձմռան ամիսներին՝ կապված գյուղատնտեսական աշխատանքների ավարտի և մարդկանց համեմատաբար ազատ լինելու հանգամանքի հետ: Ընտրական գործընթացները կազմակերպում և իրականացնում էր այդ նպատակով ստեղծված **Կենտրոնական ընտրական հանձնաժողովը** (ԿԸՀ)՝ իր տեղական՝ գյուղական, քաղաքային, գավառամասային և գավառային ընտրական հանձնաժողովների հետ: Նրանք քաղաքական ղեկավարություն և ուղղություն էին ստանում ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, տեղական կուսակցական և պետական մարմինների, համապատասխան աջակցություն՝ կոմերիտմիության, արհմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների կողմից: Հարկ է նշել, որ ընտրարշավների և ընտրական գործընթացների պրակտիկան առանց էական փոփոխությունների շարունակվեց ամբողջ 1920-ական թթ. ընդհուպ մինչև 1930-ական թթ կեսերը, երբ համարվեց, որ խորհրդային երկրում վերացել էին շահագործող տարրերը, և հաղթանակել էր սոցիալիզմը: Դրա հիման վրա էլ

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ե., 2005, էջ 8:

ընդունվեց նոր սահմանադրություն և սահմանվեց նոր՝ խորհրդային չափանիշներով ավելի ժողովրդավարական ընտրական համակարգ.

Կենտրոնական և տեղական ընտրովի իշխանության մարմինների (խորհուրդների) ձևավորման համար առաջնորդվում էին ընտրությունների մասին կանոնադրությամբ, ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրությամբ, կուսակցական և պետական մարմինների համապատասխան հրահանգներով ու շրջաբերականներով: Ամեն ինչ սկսվում էր ընտրությունների նախապատրաստական-կազմակերպչական աշխատանքներից:

Ընտրական գործընթացը բաղկացած էր երեք փուլից. 1/ կազմակերպական-տեխնիկական, 2/ նախընտրական-հաշվետու և 3/ բուն ընտրություններ:

Ընտրական գործընթացի 1-ին փուլը, որը կարելի է կոչել նաև նախապատրաստական փուլ, ներառում էր ընտրական հանձնաժողովների (ԸՀ) ստեղծումը, ընտրացուցակների՝ ընտրողների և ձայնազուրկների ցուցակների կազմումը և ճշտումը, խորհրդակցությունների հրավիրումը, խորհուրդների անդամության թեկնածուների առաջադրումը, քարոզարշավը և այլն: Ընտրական ամբողջ գործընթացը համակարգում էր ՀՍԽՀ Կենտգործկոմի նստաշրջանի կողմից հաստատված 5 հոգուց կազմված ԿԸՀ-ը: Հետագայում նրա անդամների թիվը հասցվեց 9-ի: ԿԸՀ-ն վերահսկում էր տեղական բոլոր ԸՀ-ների աշխատանքները, պատվիրում ընտրությունների համար անհրաժեշտ բոլոր ձևաթղթերը և այլ պարագաները: ԿԸՀ-ն էր անգամ մշակում և տեղերին ուղարկում ընտրական ժողովների ու գավառամասային ու գավառային համագումարների համար օրինակելի օրակարգերը և նույնատիպ հաշվետվությունների ձևերը[1]:

Գործընթացի 2-րդ՝ նախընտրական-հաշվետու փուլը տևում է շուրջ 20 օր: Լսվում էին գյուղխորհուրդների և գավառամասային գործկոմների հաշվետու զեկուցումները: Հաշվետվության ընթաց-

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 7, թ. 158:

քում լինում էին մտքերի փոխանակություն, արվում էին առաջարկություններ գյուղի կամ գավառակի խնդիրների շուրջ: Ընտրարշավը գտնվում էր կուսմարմինների ուշադրության կենտրոնում: Ընտրարշավի կազմակերպողներն էին կուսբջիջները (եթե գյուղերում կային այդպիսիք)[1] կոմերիտական, արհմիությունների, կանանց, բատրակների և այլ կազմակերպություններ: Խորհուրդների ընտրություններին՝ որպես պետական-քաղաքական նշանակության իրադարձության, հետևում էր ԿԿ-ի տեղեկատվական բաժինը: Նա օպերատիվ տեղեկատվություն էր ստանում գավառային և քաղաքային կուսկոմիտեների հրահանգիչների զեկուցագրերի միջոցով: Այդ զեկուցումներում տեղ էին գտնում նաև տեղեկություններ ընտրությունների ժամանակ թույլ տրված անկանոնությունների ու ընտրախախտումների վերաբերյալ: Ընտրարշավը հատուկ շրջաբերականներով հրահանգավորում էին գավկոմները և գավգործկոմները: Ընտրարշավի կապակցությամբ գավկոմների կողմից գյուղախմբերին կցվում էին կուսակցության պատասխանատու (լիազոր) ընկերներ, որոնք պարտավոր էին ղեկավարել ընտրարշավը իրենց հանձնարարված գյուղերում կամ բնակավայրերում: Հաշվետու փուլում անցկացվելու էին նախ չքավորների կամ բատրակների խորհրդակցություններ կամ ժողովներ, իսկ այնուհետև գյուղխորհրդի հաշվետու ժողովներ, որոնց ղեկավարությունը դարձյալ իրականացնում էր կուսակցությունը: Չքավորների ժողովում ընտրվում էին գյուղխորհրդի նախագահի և վերստուգիչ հանձնաժողովի նախագահի զեկուցումները, և այստեղ էլ ընդունվում էին պատվիրանները (նակազները): Գյուղական և թաղային խորհուրդների հաշվետու ժողովներում զեկուցումների, ելույթների ու քննարկումների ժամանակ կազմվում էին

[1] Սկզբնական տարիներին կուսբջիջների թիվը գյուղերում շատ քիչ էր: Այսպես, օրինակ, 1925 թ. հանրապետության 800-ից ավելի գյուղերից միայն 265-ն ունեին կուսբջիջ, այսինքն՝ մեկ երրորդից էլ պակաս (տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 405, թ. 39):Հարկ է նշել, որ քանի դեռ չէին ձևավորվել կոլտնտեսությունները և կոմբջիջների թիվն ու կշիռը մեծ չէր, այդ շրջանում տեղերում ավելի մեծ էր գյուղխորհրդի և նրա նախագահի դերը:

ապագա խորհրդին հասցեագրված անելիքների ու գործողությունների պատվիրանները, որոնք հաստատվում էին հաշվետու ընտրական ժողովում և հանձնվում նորընտիր խորհրդին ի կատարում. Իհարկե, ընտրությունների մասին կանոնադրությամբ (օրենսգրքով) կարգն այդպիսին էր, սակայն իրականում այլ էր պատկերը Այդ պատվիրաններ կոչվածը ընդհանրական ձևով փաստորեն կազմվում էին գավկոմներում և միգուցե ավելի բարձր մակարդակներում: Դրանք լույս էին տեսնում թերթերում ու հրահանգավորում տեղական ընտրական մարմիններին: Այդ նշանակում է, որ պատվիրանները, ըստ էության, գյուղական համայնքը չէր մշակում, ով ավելի լավ էր տեղյակ իր հոգսերին ու խնդիրներին, այլ դա կարգախոսների ձևով հրահանգավորվում էր վերևից՝ հաճախ առանց խորամուխ լինելու տվյալ գավառի, գավառամասի, գյուղի ու համայնքի օբյեկտիվ պայմաններին ու խնդիրներին: Կարելի է ասել, որ նակազներն արդեն պատրաստ են եղել ընտրաժողովներում՝ դեռ գյուղական խորհրդի հաշվետու զեկուցումը չլսած[1]

Ընտրական գործընթացի 3-րդ՝ ավարտական փուլը, ընդգրկում էր բուն ընտրությունների անցկացումը: Գավկոմների կողմից գյուղ մեկնած պատասխանատու (լիազոր) ընկերը ընտրությունների օրը՝ առավոտյան, պետք է լիներ գյուղում կամ քաղաքի տվյալ ընտրատարածքում: Տեղ հասնելով՝ իբրև վերադաս մարմնի կողմից լիազորված անձ՝ նա պետք է գումարեր ընտրական հանձնաժողովի նիստ, ծանոթանար հանձնաժողովի կատարած աշխատանքներին, ստուգեր ընտրացուցակները, տեղեկանար, որ ընտրություններից 5 օր առաջ ընտրողները տեղեկացված են եղել ընտրաժողովի օրվա մասին, և բոլորը ստացել են հիշեցման ծանուցագրեր, իսկ եթե դրանք չեն ուղարկվել, ապա լրացուցիչ

[1] Որոշ գավառներում, օրինակ, Դիլիջանի՝ նակազները մշակել են կոմբջիջները և հետո ներկայացրել չքավորական ժողովներին: Նույն կերպ, խորհրդի անդամության թեկնածուների ցուցակները կազմվել են նույն գավառի կոմբջիջների նիստերում, համաձայնեցվել չքավորական ժողովների հետ և ներկայացվել ընտրաժողովներին (տես ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 66):

ուղարկեր, որպեսզի ընտրաժողովից առնվազը 3 ժամ առաջ բոլորը դրանք ստացած լինեին: Այնուհետև կատարվում էր ընտրությունների մասնակիցների հաշվառում: Ընտրաժողովն անցկացնելու համար դահլիճի, ակումբի կամ տան սրահի մուտքի մոտ մեկ առ մեկ հավաքվում էին ընտրողների ծանուցագրերը և ներս թողնվում, որով էլ հաշվառվում էր ընտրաժողովի մասնակիցների ընդհանուր թիվը: Բայց և արձանագրվել են դեպքեր, երբ գյուղերում հարմար շենք չլինելու պատճառով ընտրաժողովները անցկացվել են բացօթյա՝ սովորաբար դպրոցի կամ եկեղեցու բակում: Ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորը հրավիրում էր ընտրաժողով: Կանոնադրությամբ նախատեսված էր ընտրողների ազատ արտահայտվելու իրավունք, լսվում էին գյուղխորհրդի և խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի նախագահների հաշվետու զեկուցումները, կազմվում արձանագրություն: Ընտրարշավի և ընտրությունների ժամանակ ընտրողներին սովորաբար հետաքրքրել են գյուղերում դպրոց, էլեկտրականություն, կոոպերատիվ խանութ ունենալու, հողային, ոռոգման, գյուղտեխնիկայի, ճանապարհների և համանման բազում այլ հարցեր: Ընտրություններում թեկնածուների քվեարկությունը կատարվում է կամ նախապես կազմված ցուցակներով, կամ ըստ առանձին թեկնածուների՝ ընտրական ժողովի հայեցողությամբ: Այսինքն՝ քվեարկության ձևը որոշում է տվյալ ընտրաժողովը: Ընտրական հանձնաժողովը իրավունք չուներ իր կողմից առանձին թեկնածուների ցուցակ առաջարկել: Ըստ կանոնադրության՝ **ընտրությունները կատարվում էին բաց քվեարկությամբ**[1]: Ոչինչ չի ասվում փակ (գաղտնի) քվեարկության մասին: Հասկանալի է, որ բաց քվեարկության դեպքում ամեն ինչ տեսանելի էր և հեշտ վերահսկելի: Կանոնադրության համաձայն՝ խորհրդի անդամության թեկնածու-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 84, թ. 14: Նույն կերպ, բոլոր մակարդակի խորհուրդներում, այդ թվում խորհուրդների համահայաստանյան համագումարներում քվեարկությունները անցկացվել են բաց՝ մանդատները բարձրացնելու միջոցով և, որպես կանոն, որոշումները ընդունվել են միաձայն ու ծափահարությունների ուղեկցությամբ:

ները կարող էին քվեարկվել անհատապես կամ ամբողջական ցուցակով. Ընտրված էր համարվում ժողովում ներկա ընտրողների պարզ մեծամասնության ձայները հավաքած անձը: Եթե ցուցակով էին քվեարկվում, ապա անցնում էին ցուցակում նշված բոլոր թեկնածուները Պատահել են դեպքեր, երբ ընտրաժողովի ժամանակ խորհրդի անդամության թեկնածուների ցուցակը թարմացվել է, հանվել են որոշ անուններ և ավելացվել նորերը: Սովորաբար ընտրաժողովները տևում էին մի քանի ժամ, երբեմն նույնիսկ 5-10 ժամ Ընտրաժողովի ընթացքի մասին կազմվում էր արձանագրություն, որը վավերացնում էին ժողովի նախագահն ու քարտուղարը:

Խորհրդի կազմը ընտրելուց հետո՝ նույն օրը կամ անպայման հաջորդ օրը, հրավիրվում էր խորհրդի անդրանիկ նիստը, որտեղ ընտրվում էին նախագահ, քարտուղար և գավառամասային համագումարին մասնակցելու համար պատգամավորներ: Վերջիններիս տրվում էր համապատասխան մանդատ՝ լիազորի ստորագրությամբ Ընտրական ժողովը ընտրում էր նաև վերստուգիչ հանձնաժողովի 3 անդամ, որի մեջ չէին կարող ընդգրկվել տվյալ խորհրդի անդամները և փոխանդամները[1]: Ընտրությունների ընթացքում թույլ տրված սխալների, խախտումների վերաբերյալ դիմումներն ու գանգատները գրավոր ձևով տրվում էին տվյալ ընտրական հանձնաժողովին ընտրությունների ավարտից հետո՝ 7 օրվա ընթացքում Տվյալ հանձնաժողովը ստացած բոլոր նյութերը իր բացատրությունների հետ միասին 3 օրվա ընթացքում ուղարկում էր իր վերադաս ընտրական հանձնաժողովին: Վերջինս էլ պարտավոր էր 5 օրվա ընթացքում քննել ու պատասխանել ստացված բողոքներին ու գանգատներին՝ այդ որոշման մասին հայտնելով համապատասխան գործկոմին և գանգատավորին. Լուրջ խախտումների դեպքում տվյալ ընտրությունները կարող էին բեկանվել և նորը նշանակվել: Այդ դեպքում փոխվում էր հին հանձ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 82, թ. 99–102:

նաժողովի կազմը, նշանակվում նորը և այլն[1]: Ընտրությունները կարող էին չեղյալ համարվել և նորը նշանակվել, եթե խախտվել էր ՀՍԽՀ Սահմանադրության կամ ընտրական կանոնակարգի համապատասխան որևէ կետ: Ընտրությունները բեկանվում են՝ ա/ եթե ընտրության մասնակիցների թիվն ընտրողների 35 տոկոսից պակաս է[2], բ/ եթե ընտրողների բողոքները հիմնավոր են, գ/ ընտրությունները կարող են բեկանվել ամբողջովին կամ մասամբ[3]: Այս կապակցությամբ մենք ունենք տվյալ, որ ընտրաժողովի անցկացման համար անհրաժեշտ քվորում չլինելու պատճառով կրկնական ընտրություն է անցկացվել (օրինակ՝ Նոր Բայազետի և Ելենովկայի (Սևանի) գավառամասերում), սակայն չենք հանդիպել որևէ փաստի, երբ ընտրողների բողոքների հիման վրա չեղյալ համարվեին հին ընտրությունները և նշանակվեր նորը: Ինչ վերաբերում էր ձայնազուրկներին, ապա նրանց չէին թողնում դահլիճ մտնել: Նրանց ցուցակները խորհրդի ընտրություններից մեկ շաբաթ առաջ (հետագայում՝ 1925 թ., այդ ժամկետը հասցվեց 20 օրվա) փակցված են լինում գյուղի կամ ավանի շենքերի պատերին՝ նկատվող վայրում: Դրանից հետո ձայնազուրկները կարող էին 3 օրվա (հետագայում այն հասցվեց 7 օրվա) ընթացքում այդ որոշման դեմ բողոք ներկայացնել վերադաս հանձնաժողովին, ընդհուպ մինչև ԿԸՀ-ին: Գանգատ ստացած մարմինը պարտավոր էր 24 ժամվա (հետագայում՝ 3 օրվա) ընթացքում պատասխանել դիմումատուին: Ինքնին հասկանալի է՝ ձայնազուրկների մասին

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 84, թ. 14, «Ժողովրդական Հայաստան», 1 նոյեմբերի 1925 թ.:

[2] Հարկ է նշել, որ մինչև 1925 թ. ընտրությունների կայացված լինելու վերաբերյալ ընտրողների մասնակցության որոշակի տոկոսային նորմ հավանաբար չի եղել, մասնակցության առնվազը 35-տոկոսանոց սահմանագծի վերաբերյալ որոշումը կայացրել է ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահությունը՝ նախագահ Մ. Կալինինի և քարտուղար Ա. Ենուկիձեի ստորագրությամբ, որն ուժի մեջ է մտել 1925 թ. հունվարի 16-ից: Ավելի ուշ՝ 1930 թ., ընտրությունների մասին նոր տեղեկանքով ընտրական ժողովը կայացած էր համարվում, եթե ներկա էր ընտրական իրավունք ունեցող անձանց առնվազը 40 տոկոսը (տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 84, թ. 14, ֆ. 112, ց. 8, գ. 7, թ. 41–42).

[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 7, թ. 41–42: «Ժողովրդական Հայաստան», 1 նոյեմբերի 1925 թ.:

խոսք կարող էր լինել միայն քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունների կապակցությամբ.

Նկատի ունենալով, որ խորհուրդների ընտրությունների և գործընթացների վերաբերյալ արխիվային ֆոնդերում և ժամանակի մամուլում պակասում են ամբողջական ու համահավաք տվյալներ, հանգամանալի մշակված հաշվետվություններ, ամփոփագրեր ու տեղեկություններ, ուստի ստորև կփորձենք ներկայացնել փաստական, թվական տեղեկություններ ու տվյալներ տարբեր գավառների, գավառամասերի ու գյուղերի 1920-ական թթ. ընտրական գործընթացների վերաբերյալ՝ միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով մարդկանց ձայնազրկելու երևույթին, ինչը համարվում է նշված ժամանակաշրջանի ընտրությունների ամենաէական կողմերից մեկը

ՀՍԽՀ բոլոր մակարդակի խորհուրդների 1-ին ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 1921 թ. դեկտեմբեր և 1922 թ. հունվար ամիսներին: Հասկանալի է, որ ընտրությունները ղեկավարում և ուղղորդում էր Կոմկուսը: 1921 թ. դեկտեմբերի 6-ին հետևեցին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, իսկ դեկտեմբերի 7-ին և 9-ին ԿԸՀ-ի կոչերը՝ ուղղված Հայաստանի բանվորներին և աշխատավոր գյուղացիներին: Դրանցով դիմում էին Հայաստանի աշխատավորներին, թե ում պետք է ընտրել խորհուրդներում: Հայտարարվում էր. «խորհուրդների ընտրություններին և դրանց գործունեությանը մասնակցել չի կարող ոչ մի շահագործող, ոչ մի կեղեքիչ, ոչ մի հակահեղափոխական»[1]: Կոչերում զգուշացնում էին աշխատավորներին, որ ընտրությունների ժամանակ **անկուսակցականի պիտակով** հանդես են գալու նախկին դաշնակցականներ, էսէռներ մենշևիկներ, հայ-ժողովրդականներ և այլն, որ չխաբվեն և իրենց քվեն չտան դրանց ներկայացուցիչներին, այլ տան՝ «իր շահերի իսկական թարգման ու իր հարազատ ծնունդ կոմունիստական կուսակցությանը»[2]: Ասվածից հետևում է, որ բոլշևիկները

---

[1] Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902–1921 թթ.), Ե., 1960, էջ 622:
[2] «Խորհրդային Հայաստան», 7 դեկտեմբերի 1921 թ.:

մտավախություն ունեին, թե ոչ պրոլետարական, հակահեղափոխական որակվող կուսակցությունները, որոնք դեռևս լիովին ջախջախված չէին, կարող էին անկուսակցականի անվան տակ թափանցել խորհուրդների մեջ և ներքուստ խարխլել խորհրդային իշխանության հիմքերը: Դեկտեմբերի 9-ի կոչում դարձյալ շեշտվում էր. «Խորհուրդների ընտրություններում ոչ կոմունիստներին, ոչ մի քվե չտալ», «ոչ մի ոչ կոմունիստ տեղ չունի խորհուրդների մեջ»[1]: Ստացվում է, որ քանի դեռ դաշնակների և մյուս «թափթփուկների» խորհուրդների մեջ ներթափանցելու վտանգ կար, ուստի ուղղակի չէր դրվում խորհուրդներում կոմունիստների և անկուսակցականների դաշինքի (բլոկի) մասին կարգախոսը: Եվ քանի որ սկզբնական շրջանում կոմունիստների թիվը համեմատաբար քիչ էր, իսկ բոլոր մակարդակի խորհուրդներում, ըստ ընտրությունների մասին կանոնադրության, պահանջվում էր ընդհանուր հաշվով մինչև մեկկեկես տասնյակ հազար անդամ-պատգամավոր, ուստի ակամա պատգամավորների մեծ մասը պետք է լիներ անկուսակցական: Այսպես, օրինակ, եթե հանրապետության միայն գյուղխորհուրդների անդամների թիվը 1926 թ. կազմել է 14232 մարդ այն դեպքում, երբ Հայկոմկուսի անդամների և թեկնածուների ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 6972[2]: Բայց երբ հետագայում քաղաքական դաշտը մաքրվում է այլախոհ կուսակցություններից ու հոսանքներից, միայն դրանից հետո առաջ է քաշվում կուսակցականների և անկուսակցականների բլոկի (դաշինքի) կարգախոսը, որը գործեց մինչև ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական ամբողջատիրության ավարտը:

Փաստենք, որ ընտրությունները՝ որպես քաղաքական կարևոր միջոցառում, կազմակերպել, ղեկավարել ու իրականացրել են կուսակցական-պետական մարմիններն ու կառույցները: Այդ գործընթացներին աչալուրջ հետևել են պետական անվտանգության մարմինները: Այսպես, օրինակ, 1921 թ. դեկտեմբերի առաջին կե-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 9 դեկտեմբերի 1921 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 108, թ. 54, ֆ. 113, ց. 3, գ. 405, թ. 1:

սին Էջմիածնի գավառում ընթացող խորհուրդների ընտրությունների կապակցությամբ Հայչեկան զեկուցում է ԿԿ, որ «Հակախորհրդային դաշնակ. էսէռ. մենշևիկ. ինչպես նաև անկուսակցականներ ցանկանում են իրենց թեկնածուներին առաջադրել խորհուրդների ընտրություններում»[1]: Նրանք այդ հանգամանքի վրա էին հրավիրում իշխանությունների ուշադրությունը: Քաղաքական առումով Էջմիածինը բոլշևիկների համար եղել է անվստահելի գավառներից մեկը. Այստեղ ավանդաբար ուժեղ է եղել ՀՅԴ ազդեցությունը Եվ պատահական չէ, որ Էջմիածնի գավառային կուսկազմակերպությունը ամենափոքրաթիվներից մեկն էր: 1922 թ. սկզբներին գավառի կոմունիստների թիվը հասնում էր ընդամենը 50 մարդու այն դեպքում, երբ հանրապետությունում կուսանդամների և թեկնածուների թիվը անցնում էր 5500-ից[2], թեև բնակչության թվով գավառը խոշորներից մեկն էր: ՀՅԴ ունեցած ազդեցության հետևանքով գավառի ընտրողները առանձնապես ակտիվություն չեն դրսևորել 1921 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ընտրություններում մասնավորապես արձանագրվել են հետևյալ ցուցանիշները Գավառի բոլոր 5 գավառամասերի (գավառակ կամ շրջան) և Վաղարշապատ քաղաքի (առանց բանակի) ընտրողների թիվը կազմել է 89300 մարդ[3]: Ըստ գյուղերի՝ օրինակ, 700 անձից բաղկացած Ֆրանգանոց գյուղի ընտրական ժողովին (ընտրաժողովին) ներկա են եղել 90 ընտրողներ, ովքեր ընտրել են գյուղխորհրդի 14 անդամ, իսկ վերջիններից էլ 2 հոգու՝ շրջանային համագումարի համար: Հարևան Դոխաս գյուղի 400 անձից ներկա էր 80 հոգի Ընտրվել է գյուղխորհրդի 4 անդամ, որից մեկը՝ շրջանային համագումարի պատգամավոր[4]: Քեռրփալու (Արշալույս) գյուղի 1200 անձանցից ներկա է եղել 230 ընտրող. Ընտրվել են գյուղխորհրդի 23 անդամ, իսկ երկուսը՝ շրջանային համագումարի

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 123, թ. 39:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 60, թ. 31, ֆ. 113, ց. 3, գ. 405, թ. 1:
ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 62, թ. 2:
[4] Նույն տեղում, թ. 21:

պատգամավոր: Հայթաղի 1200 անձից բաղկացած գյուղից ներկա էին 140 ընտրող, ընտրել են խորհրդի 20 անդամ, իսկ երկուսին գործուղել շրջանային համագումարի պատգամավոր և այլն[1]: Նույն կերպ, Ուջան գյուղն ունեցել է 446 անձ, ընտրաժողովին ներկա է եղել 95 մարդ, ընտրվել է գյուղխորհրդի 9 անդամ, իսկ մեկն էլ՝ շրջանային համագումարի պատգամավոր[2]: Արխիվային գործերից մեկում տեղեկություն կա, որ 1922 թ. հունվարին Վաղարշապատում գումարված խորհուրդների գավառային համագումարում ընտրվել է 11 հոգուց բաղկացած գավառային գործադիր կոմիտե (գավգործկոմ), որի 9-ը՝ կոմունիստ, 2-ը՝ անկուսակցական և 1-ը՝ մենշևիկ՝ ՀՀ նախկին պառլամենտի անդամ Հովի. Ջաբարյանը[3]: Հետաքրքրական է, որ եթե 1920-ական թթ. առաջին մեկ-երկու տարիներին տեղական խորհուրդների համագումարներում կամ ատորին իշխանության մարմիններում նկատվել են նախկին այլ կուսակցությունների ու հայացքների պատկանող եզակի ներկայացուցիչներ, ապա այդ կուսակցությունների բայբայումից ու լուծարումից հետո՝ արդեն տասնամյակի երկրորդ կեսից, նման բան այլևս չի նկատվում, էլ չենք խոսում իշխանության բարձր օղակներում հայտնվելու մասին: Այսպես, օրինակ, 1926 թ. ընտրված հանրապետության գյուղխորհուրդների ընդամենը 14232 անդամներից միայն մեկ հոգի կամ 0,01 տոկոսն էր այլ կուսակցությունից[4]:

1921 թ. դեկտեմբերի կեսերին Ղամարլուի շրջանի (գավառամասի) Իմանշալու (Մխչյան) գյուղի հեղկոմի անդամները խորհրդի ընտրությունների ժամանակ բռնություններ են գործադրել ընտրողների հանդեպ, որպեսզի կրկին իրենք ընտրվեն: Դեպքի կապակցությամբ գավառամասային ՀՀ-ի նախագահը հանձնախումբ է գործուղել գյուղ՝ տեղում պարզելու իրերի վիճակը

---

[1] ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 62, թ. 22:
[2] Նույն տեղում, թ. 23–24:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 75, թ. 2 (շրջերես):
[4] «Խորհրդային Հայաստան», 11 օգոստոսի 1926 թ.:

Պարզվել է, որ այդ խառնակչությունը կատարել է կուսակցությունից հեռացված ոմն Նազարյանը, ով ներկայացել է որպես կոմունիստ

Ամփոփելով Ղամարլուի շրջանի (գավառամասի) դեկտեմբերյան ընտրությունների տվյալները՝ նշենք, որ ընտրություններ կատարվել են 42 գյուղում: Շրջանի ազգաբնակչության թիվը՝ 17057 մարդ, ընտրություններին մասնակցել են 3359 ընտրող, տեղական խորհրդի անդամ են ընտրվել 332, իսկ անդամության թեկնածու՝ 105 հոգի: Գյուղական խորհուրդների ընդամենը 437 անդամ և թեկնածուներից 187-ը՝ կուսանդամ, 34-ը՝ կոմերիտական, 216-ը՝ անկուսակցական, ընտրվածներից 5-ը՝ կանայք, մնացածը՝ տղամարդիկ: Ըստ ազգության՝ 361-ը՝ հայ, 58-ը՝ թուրք և 18-ը՝ ռուս Շրջանային համագումարի համար ընտրվել է 49 պատգամավոր: Ինչ վերաբերում է ընտրական իրավունքից զրկվածներին, ապա նրանց թիվը կազմել է 513 մարդ կամ ընտրական իրավունք ունեցողների 8 տոկոսը[3]:

Ընտրություններին հասարակական-քաղաքական ակտիվության տեսակետից աչքի է ընկել Ալեքսանդրապոլի գավառը, որի գավառային ընտրական հանձնաժողովի (ԳԸՀ) աշխատանքները փաստորեն սկսվել էին 1921 թ. նոյեմբերի 27-ից: ԳԸՀ-ի անդամներն էին Իվան (Հովհ.) Բաննահյանը, Գ. Հանեսօղլյանը, Ն. Կուրդինյանը, իսկ նախագահը՝ Աշոտ Շահմուրադյանը: ԳԸՀ-ն էր նշանակում քաղաքային և շրջանային ընտրական հանձնաժողովները: Տարվել է նախընտրական քարոզչություն Կարմիր բանակում, արհմիություններում Ալեքսոլ քաղաքի ընտրողների ընդհանուր թիվը մոտ 8000 էր, մասնակցել է մոտ քառորդ մասը[3]: Գավառը

---

[1] «Մտրհրդային Հայաստան», 18 և 22 դեկտեմբերի 1921 թ.:

[2] «Մտրհրդային Հայաստան», 20 դեկտեմբերի 1921 թ.:

[3] Հիշեցնենք, որ մինչև 1926 թ. քաղաքային խորհուրդների ընտրություններ անցկացվել են միայն քաղաքի կարգավիճակ ունեցող Երևանում և Լենինականում: Ընտրությունների համար քաղաքները բաժանվում էին ընտրական թաղերի կամ ընտրատարածքների: Այսպես, օրինակ, Երևան քաղաքը բաժանված էր 4 թաղի՝ Զինվորական, Նորքի, Երկաթուղայինների և Զքավորների: 1925 թ. նոյեմբերին ՀՍՍՀ ԿԳԿ-ը որոշում կայացրեց բոլոր գավգործկոմներին իրենց գավառային կենտրոններում կազմա-

բաղկացած էր 7-ը գավառամասերից. 1-ին գավառամասում՝ 27 գյուղ, 2-րդում՝ 18, 3-րդում՝ 29, 4-րդում՝ 35, 5-րդում՝ 22, 6-րդում՝ 24 և 7-րդում՝ 22 գյուղ, ընդամենը՝ 172 գյուղ: Բոլոր գյուղերում ստեղծվել են ընտրական հանձնաժողովներ՝ կազմված երեք հոգուց (հետագայում՝ 1927 թ., դրանց թիվը սահմանվեց՝ 7): Ընտրարշավի ժամանակ հանձնաժողովի անդամները՝ կուսակցական, կոմերիտական,կոոպերատիվ, կանանց, գյուղական փոխադարձ օգնության կոմիտեների (ՓՕԿ-ի) և այլ ակտիվիստներ կարդացել են զեկուցումներ ՆԷՊ-ի, ընտրությունների, կուսակցության բաղաքականության և այլ թեմաներով: Տպագրվել ու տարածվել են բուկլետներ, կոչեր, նյութեր «Կարմիր Շիրակ» թերթից և այլն[1]:

Դեկտեմբերի վերջին ավարտվել ու ամփոփվել են բոլոր գյուղերի և Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրությունների արդյունքները: Որպես պատգամավոր առաջված ներկայացուցիչներից հրավիրվել են գավառամասային համագումարները, իսկ դրանք էլ ընտրել են պատվիրակ-պատգամավորներ գավառային համագումարի համար: Ընդունված կարգով գավառամասային համագումարը անցկացվում է տվյալ գավառամասի վարչական կենտրոնում կամ որևէ խոշոր գյուղում: Այսպես, օրինակ, 1-ին գավառամասի անդրանիկ համագումարը կայացել է 1922 թ. հունվարի 1-ին Դուզքենդ (Ախուրյան) գյուղում: Համագումարին մասնակցել են գավառամասի 27 գյուղերի 56 պատգամավորները[2]: Համագումարը բացում է ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Ներսիսյանը, երգվում է ինտերնացիոնալը, ընտրվում է պատվավոր նախագահություն՝ Լենին, Տրոցկի, Մյասնիկյան, Լունաչարսկի կազմով: Միաձայնությամբ կազմվում է 5 հոգուց բաղկացած նախագա-

---

կերպել բաղխորհուրդներ: Դեկտեմբերին հաստատվեց բաղխորհուրդների կանոնադրությունը: Սկսած 1926 թ.՝ բաղաքային խորհուրդներ կազմակերպվեցին Նոր Բայազետում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Վաղարշապատում, Քնշիշքենդում, Գորիսում և Մեղրիում: Պետք է նկատի ունենալ, որ այս գործընթացը կապված էր նաև 1926 թ. դեկտեմբերին ընդհանուր մարդահամարի կազմակերպման ու անցկացման հետ (տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 84, թ. 12, ց. 7, գ. 108, թ. 35-36):

[1] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 26, թ. 2:

[2] Նույն տեղում, թ. 15:

հություն հաստատվում է օրակարգը: Գավառամասի գործկոմի ընտրությունների համար ներկայացվում է թեկնածուների 7 ցուցակ և քվեարկությամբ՝ 46 կողմ և 3 ձեռնպահությամբ անցնում է, գավառամասի կուսկոմիտեի առաջարկած ցուցակը: Նույն կերպ, համագումարի կոմունիստական ֆրակցիան առաջարկում է գավառային 1-ին համագումարի պատգամավորների 24 անդամի և 9 թեկնածուի ցուցակ: Ինչպես կարդում ենք, կազմված արձանագրությունում «ցուցակն անցնում է բուռն ծափահարությամբ, նիստը փակվում է ինտերնացիոնալով»[1] Նույն օրակարգով 1922 թ. հունվարի 1-ին Քյաֆթաղլուում (Փանիկ) տեղի ունեցավ 2-րդ գավառամասի գյուղխորհուրդների ներկայացուցիչների 1-ին համագումարը Ուշագրավ է, որ գավառամասի գործկոմի ընտրության կապակցությամբ ձայների ճնշող մեծամասնությամբ (միայն 8 ձեռնպահ) անցնում է Ալեքպոյի գավառային ԸՀ-ի կողմից առաջարկված ցուցակը: Իսկ գավառային համագումարի պատգամավորների 22-հոգիանոց ցուցակը, որը դարձյալ գավառային ԸՀ-ն էր ներկայացրել անցնում է գրեթե միաձայն. ընդամենը՝ 2 ձեռնպահ: 3-րդ գավառամասի համագումարում առաջարկվել է գործկոմի անդամության թեկնածուների երկու ցուցակ: Որոշվել է քվեարկությունն անցկացնել ոչ թե ցուցակներով, այլ անհատապես: Եվ քվեարկության արդյունքով միայն մեկ թեկնածուն՝ Ս Բաղդասարյանը, անցել է միաձայն, մյուսները ստացել են որոշ թվով դեմ ու ձեռնպահ ձայներ իսկ Արշ Հովսեփյանը, 14 կողմ, 14 դեմ և 3 ձեռնպահ ձայներ ստանալով, չի ընտրվում[3]: 4-րդ գավառամասում գործկոմի անդամների և գավառային համագումարի պատգամավորների ընտրությունների ժամանակ՝ երկար բանավեճերից հետո անցնում են կոմ. ֆրակցիայի ներկայացրած ցուցակները Գավառամասային համագումարը փակվել է կեցցեներով ու

---

[1] ՀԱԱ, ֆ. 116, գ. 1, գ. 26, թ. 15:
[2] ՀԱԱ, նույն տեղում, թ. 19:
[3] ՀԱԱ, նույնը, թ. 22:

ծափահարություններով[1]: Մնացած 5-րդ, 6-րդ և 7-րդ գավառամասային համագումարները դարձյալ անցկացվել են կոմկուսի ներկայացրած ցուցակներով և հիմնականում համերաշխ միաձայնությամբ[2]:

Գյուղական ընտրությունների և գավառամասային համագումարների ավարտից հետո 1922 թ. հունվարի 17-ին գումարվում է խորհուրդների Ալեքսանդրի գավառային 1-ին համագումարը: Հետաքրքիր է պատգամավորների սոցիալ-կրթական պատկերը: Հանրագումարի 177 պատգամավորներից, կոմկուսի անդամներ էին 107-ը, անկուսակցական՝ 67-ը և 3-ը՝ հնչակյան: Չնայած ո՛չ ընտրությունների մասին կանոնադրությունում, ո՛չ էլ ՀՍԽՀ Սահմանադրության մեջ ակնարկ անգամ չկա կոմկուսի՝ որպես հասարակության միակ ղեկավար և ուղղություն տվող ուժի մասին, ինքնին հասկանալի է, որ պատգամավորության անկուսակցական թեկնածուները՝ սկսած գյուղականից ավարտված հանրապետական պատգամավորներով, առաջադրվում էին կուսակցական մարմինների կողմից կամ նրանց իմացությամբ՝ հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների անունից: Կրթական առումով Ալեքսանդրապոլի գավառային համագումարի պատգամավորներից գրագետ էր 108-ը, իսկ անգրագետ՝ 69: Սոցիալական դրությամբ 21-ը՝ բանվոր, 54-ը՝ գյուղացի, 92-ը՝ խորհրդային ծառայող և 10-ը՝ մտավորական[3]: Այս ընտրություններից անգամ մի քանի տարի անց Հայկոմկուսի 4-րդ համագումարում (1925 թ.) ԿԿ-ի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը հաշվետու զեկուցման մեջ, խոսելով խորհուրդների վիճակի մասին, փաստում էր գյուղխորհուրդների ապարատի ցածր գրագիտությունը: Ըստ նրա՝ հանրապետության գյուղխորհուրդների նախագահների 10 տոկոսը անգրագետ էր, 35-ը՝ կիսագրագետ, իսկ առհասարակ

---

[1] ՀԱԱ, նույնը, թ. 23:
[2] ՀԱԱ, նույնը, թ. 24, 26–28:
[3] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 26, թ. 3:

անդամների մոտ 65 տոկոսը անգրագետ կամ կիսագրագետ էր[1]: Գրեթե նույն կերպ 1926 թ., անգրագետները և կիսագրագետները կազմել են գյուղխորհուրդների ողջ համակազմի (14232 անդամների) շուրջ 60 տոկոսը. Խորհուրդների անդամների մոտ 35 տոկոսն ուներ տարրական և միայն 5 տոկոսը՝ միջնակարգ և բարձրագույն կրթություն: Գյուղխորհուրդների 816 նախագահներից անգրագետ էին 106-ը, իսկ 277-ը՝ կիսագրագետ[2]: Ցածր էր նաև գավգործկոմների անդամների կրթական մակարդակը: Այսպես՝ Նոր Բայազետի գավգործկոմի ընդամենը 27 անդամներից բարձրագույն կրթություն ուներ 1-ը, միջնակարգ՝ 3-ը, տարրական՝ 6-ը, իսկ 17-ը կամ շուրջ 63 տոկոսը կիսագրագետներ ու անգրագետներ էին: Բերված տվյալներից ինքնին ակներև է դառնում, թե ինչպիսին պետք է լիներ տեղական ընտրողի իշխանության մարմինների՝ խորհուրդների աշխատանքի որակն ու արդյունավետությունը: Գյուղխորհուրդների և դրանց նախագահների որակական ցածր հատկանիշի մասին է վկայում այն փաստը, որ, օրինակ, Լոռի-Փամբակի գավառի 1927 թ. ընտրված 103 գյուղխորհրդի նախագահներից 42-ը հեռացվել են իրենց պաշտոններից գեղծարարության, անգործության, անձնական շահի հետապնդելու և այլ պատճառներով[4]: Գյուղխորհուրդների որակական կազմը բարձր չէր կարող լինել, որովհետև կուսակցությունը, հետևելով իր դասակարգային բնույթին, դրանցում ընդգրկում էր գերազանցապես չքավոր գյուղացիներ ու բատրակներ: Ինչ վերաբերում է բանվորներին, ապա փաստերը վկայում են, որ մինչև 1920-ական թվականների կեսերը Հայաստանում արդյունաբերական բանվոր դասակարգ՝ ըստ էության, չի եղել: Դրա փոխարեն ընտրողների համեմատաբար ուժեղ և գործունյա մի հատվածը սոցիալ-դասակարգային նկատառումով՝ իբրև շահագործող, կուլակային ու հա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 56:
[2] ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 8, թ. 16-17:
[3] *Հարությունյան Հ. Մ.*, Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Ե., 2015, էջ 162:
[4] «Խորհրդային Հայաստան», 6 դեկտեմբերի 1928 թ.:

կահեղափոխական տարր, սահմանված ընտրակարգով գրկված էր ընտրելու և ընտրվելու իրավունքից: Եթե ընտրական հասակի մարդկանց մի հատվածը ձայնագրկված է, կնշանակի՝ խոսք չի կարող լինել քաղաքացիների իրավահավասարության մասին: Փաստերը ցույց են տալիս, որ ձայնագրկումները հաճախ կատարվել են անհիմն ու անարդար: Դրա համար էլ ձայնագրկված քաղաքացիները ակտիվորեն պայքարել են իրենց իրավունքների վերականգնման համար: Հենց ընտրական գործընթացների ու ընտրապայքարի մեխը կարելի է համարել ձայնազուրկների ինստիտուտի առկայությունը և իշխանություն-ընտրող-ձայնազուրկ եռյակի պայքարը խորհուրդներում տեղ գրավելու համար.

Ինչպես արդեն ասվել է, ընտրությունների անցկացման համար քաղաքային և գյուղական ընտրությունների նախապատրաստական փուլում կազմվում էին տվյալ գյուղի կամ ընտրատարածքի և՛ ընտրողների, և՛ ձայնազուրկների ցուցակները առանձին-առանձին: Ընտրական հանձնաժողովները դրանք ստուգում էին և փակցնում տեսանելի վայրերում՝ ընտրություններից մեկ շաբաթ առաջ: Գյուղին կցված պատասխանատու ընկերը (լիազորը) պարտավոր էր հետևելու, որպեսզի գյուղի կուլակը և քաղաքի նեպմանը դուրս չմնան ձայնազուրկների ցուցակից: Բայց որքան էլ հետևել են ընտրացուցակների «մաքրությանը», այնուամենայնիվ արձանագրվել են դեպքեր, երբ կուլակ կամ ունևոր համարվածը հայտնվել է ընտրողների, իսկ հասարակ աշխատավոր գյուղացին կամ չքավորը՝ ձայնազուրկների ցանկում. այս հարցում հաճախ դեր է խաղացել անձնական «հաշիվներ մաքրելու» կամ էլ բարեկամական կապերի գործոնը[1]: Բայց և արձանագրվել են առանձին դեպքեր, երբ ձայնազուրկների ցուցակներ չեն կազմվել: Վերադասի կարգադրությամբ որոշվել է՝ «կուլակային և մյուս պարազիտ տարրերին պարզապես հեռացնել ընտրական ժողովներից»: Այսպես, օրինակ, ընտրակարգի խախտման նման դեպք է արձանագրվել Ալեքսանդրապոլի գավառում խորհուրդների 1-ին ընտ-

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 188, թ. 65–66:

բությունների ժամանակ: Ձայնազուրկների փորձերը իրենց ընտրելու իրավունքները վերականգնելու ուղղությամբ ձախողվել են[1]: Հիշյալ գավառում, չհաշված Ալեքսանդրապոլ քաղաքը, ընտրական իրավունքից զրկվածների թիվը կազմել է 1496 մարդ[2]: Ընտրական կանոնակարգը բնակիչների բողոքների հիման վրա հնարավորություն էր տալիս մինչ ընտրությունները ստուգել և ճշտել ձայնազուրկների ցուցակները՝ դրա համար ստեղծելով համապատասխան ստուգող հանձնաժողովներ: Օրինակ՝ Լոռի-Փամբակի գավառի 96 գյուղերում 1925 թ. սեպտեմբերին կազմված ցուցակներով ձայնազուրկ էր արվել 1558 մարդ: Հանձնաժողովների ստուգումներից հետո վերականգնվել է 809 մարդու կամ 52 տոկոսի ընտրական իրավունքը, իսկ 749-ը կամ 48 տոկոսը մնացել է ձայնազուրկ[3] Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ձայնազուրկների դիմումները քննելու և վճիռներ կայացնելու պատճառով խորհուրդների ընտրությունների ժամկետը երկարաձգվել է մինչև մեկ ամսով[4]: Պետանվտանգության մարմինների ամփոփ տվյալներով 1926 թ խորհուրդների ընտրությունների կապակցությամբ Լենինականի գավառի Թալինի գավառամասի 86 գյուղերի ընտրական հանձնաժողովները ձայնի իրավունքից զրկել են 725 մարդու կամ ամբողջի 11 տոկոսը: Ցուցակների հրապարակումից հետո «ձայնազուրկները» բողոքել են, և դրա արդյունքում վերականգնվել է 246 մարդու ընտրական իրավունքը[5]:

Խորհուրդների 1924/1925 թթ. ընտրությունների ժամանակ ուշադրության արժանի եռանդ են ցուցաբերել Դարալագյազի գավառի «կուլակային և հակախորհրդային տարրերը»: Չեկայի՝ 1925 թ. հունվարի 8-ի ՀԿԳԿ-ին ուղղված մի գաղտնի գրությունում փաստվում է, որ մի շարք գյուղերում, օրինակ՝ Մալիշկա,

---

[1] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 26, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 51, թ. 166:
[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 7, թ. 182–183:
[4] Նույն տեղում, թ. 224:
[5] Տես Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008, էջ 199:

Բաշքենդ (Վերնաշեն) և այլն, «գյուղխորհուրդներն անցել են կուլակային և հակախորհրդային տարրերի ձեռքը»: Հիշյալ գյուղերի ձայնազուրկ կուլակները մինչև իսկ ցանկություն են հայտնել «հեռանալ Խորհրդային Հայաստանից, քանի որ զրկված են ընտրելու իրավունքից»[1]: Վերը բերված քաղվածքից կարելի է երեք դատողություն անել. ա/ որ, իրոք, գյուղացիները, անկախ սոցիալական վիճակից, մեծ ցանկություն են ունեցել ակտիվորեն մասնակցել ընտրություններին, որը, մեր կարծիքով, քիչ հավանական է, որովհետև տեղական խորհուրդների ընտրություններին ընտրողների մասնակցությունը միջին հաշվով կազմել է 40-50 տոկոս, բ/ կուլակային և ունևոր տարրերն են ակտիվություն ցուցաբերել, որպեսզի թափանցեն խորհուրդներ և տեղական իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը, որն ավելի հավանական է, և վերջապես գ/ Դարալագյազի ձայնագրկվածների մի մասը՝ որպես բողոքի արտահայտություն, ցանկություն են հայտնել հեռանալ Խորհրդային Հայաստանից: Սա ևս հավանական վարկած է, ինչը հատկապես բնորոշ է եղել այս գավառին, որտեղ կոլեկտիվացման փուլում հակախորհրդային «բանդիտական» կոչված ելույթները և սահմանային անցումները հաճախակի բնույթ են կրել: Դրա համար էլ Հայչեկան, անհանգստացած այդ վիճակից, ահազանգում էր «բարձրագույն իշխանությանը»՝ ԿԳԿ-ին:

1925-1926 թթ. ՆԷՊ-ի հետագա խորացման կամ, այսպես կոչված, «Նոր ՆԷՊ-ի» պայմաններում երկրով մեկ խնդիր դրվեց տեղական խորհուրդներում որոշ չափով ընդլայնել ընտրական իրավունքը: Նման քայլի նպատակն էր մարդկանց քաղաքական ու քաղաքացիական ակտիվության խթանման միջոցով նպաստել երկրի տնտեսական աշխուժացմանը: Միաժամանակ հաշվի էր առնվում նաև ձայնազուրկների մեծ դժգոհությունների հանգամանքը: Ինչպես արդեն ասվել է, 1925 թ. փետրվարին հետևել է ՌԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Լ. Կագանովիչի շրջաբերականը ընտրողների մասնակցության ընդլայնման և ձայնազուրկների թվի

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 6, գ. 2, թ. 12:

կրճատման վերաբերյալ Լ. Կագանովիչի շրջաբերականում՝ իբրև ընտրական մեղմացումներ, առաջարկվում էր չմերժել անկուսակցական այն թեկնածուների առաջադրումը, ովքեր այս կամ այն կերպ քննադատում էին խորհրդային իշխանությունը, բացի այդ՝ չպարտադրել ցուցակներով քվեարկություն և այլն[1]: Այդ շրջաբերականի ոգով ՀՍԽՀ խորհուրդների 4-րդ համագումարը (1925 թ. մարտ), հիմք ընդունելով ԽՍՀՄ և ԱՍՖԽՀ սահմանադրություններում կատարված փոփոխությունները, վերանայեց ՀՍԽՀ գործող սահմանադրության հին խմբագրության 6-րդ գլուխը «Տեղական իշխանության» մասին և համապատասխան փոփոխություններ մտցրեց այդ գլխի մեջ այն հաշվով, որ ընդլայնվի խորհուրդների ընտրական չափը և աշխատավոր զանգվածների ավելի լայն մասնակցությունը խորհրդային մարմինների աշխատանքներին[2]: ՀԿ(բ)Կ 4 -րդ համագումարում (1925 թ նոյեմբեր-դեկտեմբեր) ԿԿ-ի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը պահանջ էր դնում. «խորհուրդների ընտրությունների ժամանակ չսահմանափակվել միայն բատրակներով այլ, ըստ անհրաժեշտության, դրանցում ներգրավել նաև միջակ գյուղացիությանն ու անկուսակցականների»[3]: Այդ փոփոխությունները միաժամանակ պետք է նպաստեին ընտրությունների կազմակերպման ընթացքի և արդյունքների վրա, կրճատեր ձայնագրկության սահմանները:

Ընտրական այդ մեղմացումների շնորհիվ, օրինակ, հանրապետության ամենափոքր գավառի՝ Մեղրիի ձայնազուրկների թիվը մի քանի անգամ կրճատվեց: Այսպես, եթե նախորդ՝ 1924/25 ընտրական տարում ձայնազրկվել էին 70 մարդ, ապա 1925/26-ում՝ 29 հոգի: Ընդ որում՝ դրանցից 6-ը բողոք էին ներկայացրել իրենց ձայնի իրավունքը վերականգնելու, և մերժվել էր միայն մեկի դիմումը: Արդյունքում՝ ձայնազրկվել էր ընդամենը 24 հոգի, որոնք եղել են կրոնավորներ, առևտրականներ և թուլամիտ-խելակորույս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 190, թ. 5:
[2] Նույն տեղում, թ. 35:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 58:

ներ: Միաժամանակ արձանագրվել է ընտրողների ակտիվության աճ: Եթե 1924/25 ընտրափուլում ընտրություններին մասնակցել է ընտրողների 38 տոկոսը, ապա 1925/26-ին՝ 62-ը[1]: Կոտայքի գավառամասում ևս ձայնազուրկների թիվը կրճատվել է: Եթե նախորդ ընտրական տարում ձայնազուրկ էին 176 մարդ, ապա 1925/26 ընտրատարում՝ ընդամենը 71 մարդ, այսինքն՝ նվազել է 2,4 անգամ[2]: Նույն միտումով, նախորդ ընտրությունների համեմատ՝ ձայնազուրկների թիվը նվազել է, օրինակ, Վաղարշապատում 134-ից իջել է 93-ի, Դիլիջանի գավառում՝ 636-ից 186-ի, Դարալագյազում՝ 285-ից 76 և այլն[3]:

Հետաքրքիր տեղեկություններ կան Դարալագյազի գավառում 1925 թ. նոյեմբերի 15-ից մինչև 1926 թ. մարտի 8-ը անցկացված ընտրությունների վերաբերյալ: Այդ մասին հայտնում է գավկոմի քարտուղար Հ. Գրիգորյանը՝ ԿԳԿ ուղարկված հաշվետու զեկուցման մեջ և ԿԿ-ի կազմբաժնին ուղղված տեղեկագրում: Դրանցում նշվում են, որ ընտրացուցակների, ընտրարշավների ու ստացված արդյունքների վերաբերյալ նկատվել են մի շարք դրական փոփոխություններ՝ ընտրարշավների կազմակերպման, ընտրողների մասնակցության, ընտրացուցակների ճշտման ու ձայնազուրկների թվի կրճատման, անհատապես քվեարկության և այլ տեսակետից՝ համեմատած նախորդ՝ 1924 թ., ընտրությունների: Գավկոմի քարտուղարը փաստում է, որ նախորդ՝ 1924 թ. ընտրությունների ընթացքում, նկատվել է միտում, երբ «ընտրական հանձնաժողովները անձնական հողի վրա շատ գյուղացիների ձայնազուրկ են արել, որի հետևանքով գյուղացիական որոշ հատվածներում դժգոհություններ են առաջացել»[4]: Եթե 1924 թ. ընտրությունների ժամանակ գավառի ձայնազուրկների թիվը հասնում էր 450-ի և վերանայելուց հետո իջավ 250-ի, ապա 1925/26 ընտ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 74, թ. 23–24:
[2] Նույն տեղում, թ. 46:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 82, թ. 56:
[4] Նույն տեղում, թ. 1:

ռաշրջանում այն ընդամենը 71 էր: Զայնազուրկների թվի նման կտրուկ՝ վեցակի կրճատումը գավառի ղեկավարը բացատրում է նրանով որ «հանձնաժողովները լուրջ չեն մոտեցել այդ գործին»[1]:

Ամբողջ գավառում ընտրական իրավունք ունեցող 14433 քաղաքացիներից 7460-ը կամ շուրջ 52 տոկոսը մասնակցել է ընտրություններին Նախորդ տարվա համեմատ՝ այդ ածը ավելացել է շուրջ 40 տոկոսով: Կանանց մասնակցությունը կազմել է 17 տոկոս: Դժվարություններ են նկատվել միայն միացյալ գյուղխորհուրդներ ունեցող գյուղերում, որոնց թիվը 14-ն էր Դրանք այն փոքր գյուղերն էին, երբ մեկ գյուղխորհրդում ընդգրկված էին մի քանի գյուղ: Քվեարկությունների հետ կապված, ըստ գավկոմի քարտուղարի կազմած հաշվետվության՝ եթե նախորդ ընտրություններում գավառի գրեթե բոլոր գյուղերում առաջադրվել են տասնյակներով ցուցակներ և անցկացվել է ցուցակներով քվեարկություն, ապա 1925/26 թթ ընտրություններում ներկայացված ցուցակներում թեկնածուներին քվեարկել են անհատապես: «Այսպիսով - կարդում ենք հաշվետվության մեջ,- մեզ մոտ այս տարի ոչ մի գյուղում ցուցակներով քվեարկություն չի կատարվել, այլ իրենց (ընտրողների Ա. Հ.) ցանկությամբ՝ ցուցակները ընդունվել են հիմք և մեկ-մեկ անհատներին ընդհանուր կարգով դրել են քվեարկության»[2]: Իհարկե, կասկածելի է, թե բոլոր գյուղերն անխնդիր պատգամավորության թեկնածուների ցուցակները անհատապես քվեարկած լինեն, որովհետև միշտ էլ եղել են հնազանդ, բաղաքականապես ոչ ակտիվ գյուղեր, որոնք քվեարկել են իշխանությունների թելադրանքով: Բայց մյուս կողմից էլ՝ արձանագրվել են դեպքեր, երբ, օրինակ, նույն գավառի Մարտիրոս գյուղում ակտիվիստ գյուղացիները (նշված է՝ «կուլակ») պահանջել են **քվեարկություններն անցկացնել գաղտնի**[3]: Հասկանալի է, որ

---

[1] Նույն տեղում:

[2] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 74, թ. 3:

[3] Նույն տեղում: Կան էլի դեպքեր, երբ քաղաքականապես ակտիվ ընտրողները պահանջել են գաղտնի քվեարկության իրավունք, մի բան, որի մասին խոսք չկար ոչ 1920-ականների խորհրդային սահմանադրություններում և ոչ էլ ընտրությունների

այդ առաջարկությունը չի ընդունվել, որովհետև գործող ընտրակարգով փակ քվեարկություն չէր թույլատրվում: Չի ընդունվել նաև մի շարք գյուղական ընտրողների այն պահանջը, որ գյուղխորհրդի նախագահի ընտրությունը կատարվի ոչ թե գյուղխորհուրդներում, այլ ընտրաժողովներում, ինչը, սակայն, ընտրական կանոնադրությամբ չէր նախատեսված[1]:

Ի տարբերություն հայկական գյուղերի՝ թուրքականում շատ տարածված են եղել խմբակային (թայֆայական) ընտրությունները, երբ ամեն խումբ փորձել է ընտրել իր «մարդուն»: Սովորաբար թուրք կանայք չէին մասնակցում ընտրություններին: Իսկ եթե որևէ ազդեցիկ թայֆա (խումբ) ցանկանում էր անցկացնել «իր մարդուն» (թեկնածուին), ապա կանանց ստիպում էր մասնակցել ընտրաժողովին:

Ընդհանուր առմամբ, ցածր է եղել նաև հայ կանանց մասնակցությունը ընտրություններին: Տղամարդկանց և կանանց մասնակցային համադրական պատկերը 1926 թ. գյուղական խորհուրդների ընտրություններում հետևյալն է. հանրապետությունում ընտրական ձայնի իրավունք ունեցող 187,5 հազար գյուղացի ընտրողից ընտրություններին մասնակցել է 145 հազարը կամ 77,3 տոկոսը, իսկ 172.9 հազար գեղջկուհիներից՝ միայն 27,4 հազարը կամ 15,8 տոկոսը: Ընտրական ձայնի իրավունք ունեցող ընդամենը 360,4 հազար գյուղացիական ընտրողների միջին մասնակցությունը կազմում է 48 տոկոս: Ընտրություններին մասնակցության տեսակետից հանրապետության գյուղական խորհուրդների 1927 թ. փետրվարյան ընտրությունների վերաբերյալ հավաքած 432 գյուղերի ամփոփ տվյալներով (սա հանրապետության ընդամենը 821 գյուղերի կեսից ավելին է, որում չեն ներառված Զանգեզուրը և Մեղրին ամբողջությամբ, իսկ Երևանի, Լենինականի և Դարալագ-

---

մասին կանոնադրություններում: Ի դեպ, գաղտնի քվեարկության իրավունքը եղել է 20-ականների խորհրդային ընդդիմության պահանջներից մեկը (տես «Отечественная история», М., 2007, N 4, с. 57):

[1] «Խորհրդային Հայաստան», 11 օգոստոսի 1926 թ.:

լազի գավառները՝ մասամբ) ընտրողների թիվը կազմել է 197956 մարդ, որից ընտրություններին մասնակցել է 92025 մարդ կամ ամբողջի 46 5 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ պատկերը գրեթե նույն է եղել նաև Ռուսաստանում: ՌՍՖԽՀ 1926 թ. խորհուրդների ընտրություններին մասնակցել է գյուղական ընտրողների 47 տոկոսը:

Անդրադառնալով 1926 թ. ընտրված խորհրդի սոցիալական կազմին՝ հարկ է նշել որ, օրինակ, Դարալագյազի գավառի ընդամենը 50 գյուղերի խորհուրդներում ընտրվել է խորհրդի ընդամենը 643 անդամ (չհաշված Քեշիշքենդ քաղաքը), որը, ըստ սոցիալական դրության, ներկայացնում է հետևյալ պատկերը. 102-ը՝ տուրքից ազատվածներ, 142-ը՝ լծկան չունեցող տնտեսություններ, 9-ը՝ բատրակներ, 100-ը՝ չքավորներ, 30-ը՝ ունևորներ, մնացածը՝ միջակներ պետական և հասարակական հիմնարկների պաշտոնյաներ, ուսուցիչներ և այլն[3]:

Լենգավառի գյուղխորհուրդների ընտրությունների արդյունքներն ամփոփված են գավկոմի քարտուղար Գևորգ Հանեսյանի՝ 1926 թ ներկայացրած տեղեկանք-զեկուցագրում: Նա նշում է, որ կազմակերպվել է նախընտրական լայն արշավ, գյուղեր են գործուղվել պատասխանատուներ, ագիտատորներ: Բոլոր գյուղերում ժամանակին և սահմանված քվորումով անցկացվել են ընտրաժողովներ: Ընտրաժողովների մասնակիցների թիվը կազմել է միջինը 45 տոկոս 1924 թ՝ 32 տոկոսի փոխարեն, նաև որ իրենց գավառի առանձին գյուղերում էլ են նկատվել թայֆաներ: Միաժամանակ գավկոմի քարտուղարը ուշադրություն է հրավիրում մի մտահոգիչ հանգամանքի վրա, այն է՝ «սառնություն է նկատվել տեղացիների և գաղթականների միջև»[4]: Խնդիրն այն է, որ տեղացիները չեն կամեցել ընտրել գաղթական վերաբնակիչներին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 42:

«Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 4, часть 2, М., 2001, с. 1040.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 82, թ. 79:

[4] Նույն տեղում, թ. 35:

Ավելին, նրանք չէին ցանկանում, որ գաղթականներն անգամ ապրեին իրենց գյուղերում ու հող ստանային: Խտրական մոտեցման հետևանքով շատ գաղթական թեկնածուներ չէին ընտրվում տվյալ գյուղխորհրդի կազմում: Ընտրաժողովները բարդ են ընթացել հատկապես թայֆաներ ունեցող գյուղերում: Արձանագրվել են դեպքեր, երբ նրանք պայքարել են իրար դեմ, հարձակվել իրար վրա, մինչև իսկ ծեծկռտուքի փորձեր են եղել: Գավառի 200 գյուղխորհուրդների ընտրություններից միայն 8 դեպքում է բողոքարկվել այն էլ թայֆա ունեցող գյուղերում, որոնք, սակայն, գավառական ՔՀ-ի կողմից մերժվել են: Գավկոմի բարտուղարը արձանագրում է, որ քաղաքականապես ակտիվ այս գավառում բվեարկությունները անցկացվել են ոչ թե ցուցակներով, այլ անհատապես՝ յուրաքանչյուր թեկնածու բվեարկվել է առանձին[1]: Սոցիալական կազմի տեսակետից՝ Գ. Հանեսօղլյանի հայտնած տվյալներով գավառի գյուղացիական տնտեսությունների սոցիալական պատկերը եղել է հետևյալը. կուլակներ՝ մոտ 4 տոկոս, միջակներ՝ 60 տոկոս, մնացածը՝ չքավորներ և բատրակներ: Ընդ որում՝ տեղական խորհուրդներում, որպես կանոն, բատրակների չեն ընտրել, որովհետև նրանց համարել են անգրագետ և անգործունյա[2]:

Սոցիալական կազմի տեսակետից գրեթե նույն պատկերն էր Դիլիջանի գավառում. ունևորներ՝ 4 տոկոս, միջակներ՝ 54 և չքավորներ՝ 42 տոկոս: 1925/26 ընտրաշրջանում գավառում ձայնազրկվել են 393 հոգի, որից 10-ը համարվել է ձեռնարկատեր, 39-ը՝ անաշխատ եկամուտով ապրող, 187-ը՝ առևտրական, 66-ը՝ կրոնավոր, 44-ը՝ նախկին դաշնակցական պաշտոնյաներ, 20-ը՝ հոգեկան հիվանդներ, 22-ը՝ ազատազրկվածներ և 5-ը՝ այլ անձինք[3]: Սոցիալ-ունեցվածքային տեսակետից անհամեմատ բարվոք վիճակում է եղել Մեղրիի գավառը: Նրա գավգործկոմի նախագահը վկայում է, որ 1600 տնտեսություն ունեցող իրենց գավառի գյու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 82, թ. 37:
[2] Նույն տեղում, թ. 38:
[3] Նույն տեղում, թ. 103:

ղացիության 7 տոկոսը կուլակ է, 80 տոկոսը՝ միջակ և միայն 13 տոկոսը՝ չքավոր[1]

Հարկ է նշել, որ խորհուրդների ընտրությունների որակյալ անցկացմանը նպաստել է ՀՍԽՀ 1926 թ. անցկացված ընդհանուր մարդահամարը, որով ճշտվեց ազգաբնակչության ստույգ թիվը, տեղաբաշխումը, սոցիալ-ունեցվածքային կազմը և այլն: Մարդահամարի տվյալներով հանրապետության ընդամենը 880464 բնակչության դասակարգային կառուցվածքում խորհրդային չափումներով քաղաքային և գյուղական բուրժուազիան կազմել է 7,7 տոկոս: Այսինքն՝ պոտենցյալ առումով սա այն խավն էր, որ Հայաստանի սահմանադրությամբ միջին հաշվով զրկված է եղել ընտրական (ընտրելու և ընտրվելու) իրավունքից: Ընդ. որում՝ նշված 7,7 տոկոսից 5,5 տոկոսը դասվել են կուլակների շարքում[2]: Մնացած 2,2 տոկոսի մեջ կարող են մտնել քաղաքային մանր ձեռնարկատերերը, նեպմանները, հոգևոր դասի ծառայողները և այլն: Ընդհանուր առմամբ, եթե համեմատելիս լինենք ուրիշի աշխատանք շահագործող դասի վերաբերյալ 1926 թ. մարդահամարի տվյալները և այդ նույն թվականի ընտրությունների ժամանակ առկա ձայնազրկվածների տոկոսն ամբողջ հանրապետությունում, ապա կարելի է հետևեցնել, որ այդ տվյալները հիմնականում իրար մոտ են.

Ընտրություններին վերաբերող նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում ընտրողները բողոքել են այն բանի համար, որ իշխանությունները գյուղը անտեղի դասակարգային (չքավոր, միջակ, ունևոր) բաժանման են ենթարկում ու թշնամացնում մեկը մյուսի հետ: Այսպես՝ Կոտայքի գավառամասի Քանաքեռ գյուղից վերադաս մարմիններին ուղղված մի բացատագրում մասնավորապես նշվում էր, որ գյուղերում դասակարգային պայքարի մասին խոսք անգամ չի կարող լինել, որ կու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, գ. 134, թ. 73:
[2] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Ե., 1935, էջ 18 և 25:

լակը, չքավորը և բատրակը իրար հետ ապրում են հաշտ[1]: Նման բողոք են ներկայացրել նաև Եղեգնաձորի գավառի Ղոյթուր (Գետափ), Հասանքենդ (Շատին), Երդափին (Եղեգիս), Ալայազ և այլ գյուղեր[2]:

Հաճախ իշխանական շրջանակներին անհանգստացրել է այն հանգամանքը, որ ունևոր և կուլակային տարրերը իբրև ձգտում են հայտնվել խորհուրդներում՝ անձամբ կամ իր «մարդուն»՝ չքավոր կամ բատրակին անցկացնելու միջոցով: ԿԿ-ի քարտուղար Երեմիա Բակունցը բոլոր գավկոմներին և գյուղական կոմբջիջներին ուղղված 1925 թ. դեկտեմբերի 25-ի շրջաբերականով ուշադրություն էր հրավիրում առաջիկա ամիսներին նախապատրաստվող խորհուրդների ընտրությունների վրա: Նա կուսակցական տեղական մարմիններին ու ընտրական հանձնաժողովներին հրահանգում էր հենվել չքավոր գյուղացիների վրա, իսկ միջակներին ենթարկել կուսակցության ազդեցությանը[3]: Շրջաբերականում առաջարկվում էր կուսբջիջներին նամակների միջոցով պատասխանել մի շարք հարցերի, այդ թվում, թե ինչպես են կազմվում ընտրացուցակները, շա՞տ են բողոքները, թե՞ քիչ, եթե բողոքում են, ապա ինչի՞ համար, կամ թե՝ ինչպես են վերաբերվում ընտրություններին գյուղի կուլակները և ունևորները, տանու՞մ են նրանք որևէ նախապատրաստական աշխատանք, թե՞ ոչ և այլն[4]: 1926 թ. հունվարի 18-ին պատասխանելով Բյուֆթառուի կոմբջջի այն անհանգստությանը, որ առաջիկա ընտրությունների ժամանակ հնարավոր է, որ իրենք որոշ դժվարությունների հանդիպեն այն է՝ «կուլակային որոշ տարրեր կարող են անցնել խորհրդի կազմի մեջ», Բակունցը պատասխանում էր, որ նման դժվարություններ կան Հայաստանի բոլոր գյուղերում: «Դրա համար,- ըստ նրա,- նախընտրական արշավը լավ պետք է անցկացնել, անկու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 602, թ. 377:
[2] Նույն տեղում, թ. 358–359:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 17, թ. 49:
[4] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 128, թ. 15:

սակցական գյուղացիներին համախմբել խորհրդի շուրջ և չքավոր ու միջակ գյուղացիների հետ միասին կազմակերպված դուրս գալ ընտրությունների՝ մեզ հարազատ մարդկանց խորհրդում անցկացնելու համար»[1]

Կենտրոնական և տեղական իշխանությունների ուշադրության կենտրոնում էր ընտրությունների կամ, ինչպես այն ժամանակ գործածվում էր, վերընտրությունների հարցը: Իշխանությունները քաջ գիտակցում էին, որ ընտրությունները՝ իբրև քաղաքական համակարգի կայացման կարևոր բաղկացուցիչ, քաղաքական հարց է, քանզի բնակչության ընտրություններին մասնակցությամբ ու գնահատականով կարելի էր որոշել քաղաքացիների վերաբերմունքը խորհրդային իշխանության հանդեպ, այդ իշխանությունների նկատմամբ վստահության աստիճանը և այլն: Կուսակցական-պետական ղեկավար մարմինների կողմից ընտրարշավների քաղաքական կարևորությունը ցույց տալու համար բերենք հետևյալ փաստը. Անդրդաշնության (ԱՍՖԽՀ) ԿԳԿ-ի նախագահ Սարգիս Խանոյանի և քարտուղար Ալ. Շահվերդյանի ստորագրությամբ 1926 թ փետրվարի 26-ին գաղտնի շրջաբերական է; իջեցվել երեք հանրապետությունների ԿԳԿ-ների նախագահներին՝ պարզելու բնակչության վերաբերմունքը ընտրություններին, մասնավորապես, պարզել, թե «բարձրացրե՞լ են արդյոք գաղտնի բվեարկության հարցը», «եղե՞լ են արդյոք վարչական ճնշումներ ընտրողների նկատմամբ», «ինչպիսի՞ն է կոմբջիջների և կոմերիտմիության հեղինակությունը գյուղերում ընտրարշավների ժամանակ» և այլն[2] Անդրկովկասյան հանրապետությունների ԿԳԿ-ները շրջաբերականին պատասխանել են, որ ամեն ինչ կարգին է, բացասական դրսևորումներ առանձնապես չեն նկատվել[3]:

Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) մարմինները շարունակում էին ուշի-ուշով հետևել տեղական խորհուրդների ընտ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 60, թ. 1:
[2] ՀԱԱ. ֆ. 112, ց. 2, գ. 74, թ. 49:
[3] Նույն տեղում, թ. 51:

ությունններին և ուսումնասիրել բնակչության տրամադրությունները: 1926 թ. կազմված ամփոփագրերից մեկում, իբրև նկատված թերություններ, մատնանշվում էին ընտրական հանձնաժողովների վատ աշխատանքը, ընտրացուցակների անճշտությունները, ձայնազուրկներին ընտրացուցակներում ընդգրկելը և, ընդհակառակը, ձայնի իրավունք ունեցող առանձին չքավորների չընդգրկելը, ընտրացուցակները ժամանակին չփակցնելը, ընտրողներին անբավարար իրազեկելը և այլն[1]:

Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրացուցակները կազմելու ժամանակ հաճախ վեճեր էին առաջանում, քանզի դժվար էր որոշել ոմանց ունևորության աստիճանը, առավել ևս՝ կասկածելի թվացող մարդկանց քաղաքական համոզմունքները: Կուսակցական-պետական ղեկավարության մոտ գաղափարական-դասակարգային այն համոզմունքը կար, որ որքան տվյալ մարդը աղքատ է, չքավոր ու թշվառ, այնքան նա նվիրված է սոցիալիզմին, Վ. Լենինի գաղափարներին ու ծրագրերին: Այստեղից էլ՝ ունևոր, կարող տնտեսատերը դառնում էր դասակարգային թշնամի, ուստի և նա չպետք է տեղ գտներ ընտրացուցակներում: Վարձու աշխատանք կիրառող տնտեսատերերին հայտնաբերելու համար գավգործկոմները՝ Աշխատանքի և Ն. Գ. ժողկոմատների փոխադարձ համաձայնությամբ, գյուղխորհուրդներին տրամադրում էին հատուկ գրանցամատյաններ: Այդ մատյաններում էլ հաշվառվում էր, թե տվյալ տնտեսատերը քանի վարձու աշխատող է պահում: Ըստ այդմ էլ՝ որոշվում էր նրա ընտրական իրավունքի հարցը[2]:

Մեկ մշտական վարձու աշխատող կամ հովիվ պահողը կուլակ չէր համարվում և չէր զրկվում ընտրական իրավունքից: Ընտրակարգում արված մեղմացումներից մեկն այն էր, որ ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահության 1925 թ. հոկտեմբերի 27-ին հաստատած քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունների վերաբերյալ

---

[1] Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008, էջ 195:
[2] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 85, թ. 11:

հրահանգով մասնավորապես սահմանվում էր, որ ընտրական իրավունքից չեն զրկվում ջրաղացների, դինգերի, ձիթահանների, դարբնոցների և նման ձեռնարկությունների այն տերերը, որոնք ունեն մշտական մեկ վարձու բանվոր կամ մինչև երկու աշակերտ Սակայն միշտ չէ, որ հետևել են այդ կանոնին: Սուբյեկտիվ, սնձնական, կանխակալ և համանման մոտիվներից դրդված՝ անգամ չքավորների են ձայնազրկել: ՆԷՊ-ի քաղաքականության պայմաններում 1923 թ. գարնանից մտցված միասնական գյուղատնտեսական հարկից (Միասհարկ) ազատվում էին 0,5 դեսյատինից պակաս վարելահող ունեցող (կամ տարեկան 45 փութ բերք ստացող) և 2 գլխից պակաս խոշոր կամ մանր անասուն ունեցողները[2]: Սրանք դասվում էին չքավորների շարքում:

ՊԴՔՎ ամփոփագրերից մեկում բերված է մի երկու փաստ, երբ չքավոր գյուղացին չի ընդգրկվել ընտրացուցակում: Այսպես, օրինակ, Քուչուկ-Վեդիի (Փոքր Վեդի) գյուղխորհրդի նախագահը տեղական ընտրական հանձնաժողովի նիստում պնդել է, որ իր մատնանշած երկու չքավորների զրկեն ձայնի իրավունքից՝ մտավախություն ունենալով, որ վերջիններս ընտրական ժողովում կբացահայտեն նրա պաշտոնական հանցագործությունները: Համանման երևույթ է նկատվել նաև Բջնի գյուղում[3]: Իսկ Լենինականի գավառի Մաստարա գյուղի ընտրացուցակում ընդգրկված չի եղել երկու բատրակ[4]: Նոր Բայազետ գավառի վերաբերյալ տեղեկություն կա, որ այնտեղ շատ տարածված է եղել անհիմն կերպով մարդկանց ձայնազուրկ դարձնելը: Այսպես՝ գավգործկոմի քարտուղար Օհանյանի հաղորդմամբ անցած 1926/27 ընտրաշրջանում գավառի ձայնազուրկների քանակը սկզբում եղել է 2160 մարդ, իսկ վերանայումից հետո մնացել է 960 մարդ: Ընդ որում՝ երկու ավանակ ունեցողին զրկել են ձայնից[5]: Այդ նույն ընտրափուլում

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1 նոյեմբերի 1925 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 34, թ. 13, ֆ. 143, ց. 3. գ. 31, թ. 58:
[3] Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), էջ 196:
[4] Նույն տեղում, էջ 199:
[5] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 38-39:

Դարալագյազի գավառում ձայնազուրկների թիվը 900-ից իջել էր 550-ի և այլն[1]:

Վերը բերվածից կարելի է հետևեցնել, որ ընտրացուցակներում անճշտություններ են եղել այն իմաստով, որ մի դեպքում ինչ-ինչ հանգամանքներով ձայնազրկվածներ են հայտնվել ընտրացուցակներում, իսկ մեկ այլ դեպքում օրինական ձայն ունեցողները (իր աշխատանքով ապրող միջակը, չքավորը կամ բատրակը) սուբյեկտիվ, կողմնակալ, նաև անփութության և այլ նկատառումներով դուրս են մնացել ընտրացուցակներից, բայց հետագայում բողոքելով՝ նրանց մի մասը կարողացել է վերականգնել իր ընտրական իրավունքը: Բնականաբար, նման անճշտությունները առաջ են բերել մարդկանց բողոք-դժգոհությունները՝ ուղղված մինչև ընտրական վերին ատյանները: Պետք է նկատի ունենալ, որ ընտրական իրավունքը ոչ միայն սոսկ ընտրություն կատարելն էր, այլ որոշում էր տվյալ քաղաքացու սոցիալական կարգավիճակը տվյալ հասարակությունում: Ձայնազուրկը հայտնվում էր սոցիալ-հոգեբանական և իրավական առումներով ընկճված ու կարծես արհամարհված վիճակում, իսկ ընտրական իրավունք ունեցողն իրեն զգում էր լիիրավ քաղաքացի դրան ուղեկցվող այլ արտոնություններ ու նախապատվություններ առօրեական զանազան խնդիրներ լուծելիս:

Իշխանությունները, հանդես բերելով ընդգծված դասակարգային մոտեցում, փորձում էին ունևոր-կուլակային և հակահեղափոխական որակվող «շահագործողական» տարրերին կամ նրանց առաջադրած թեկնածուներին թույլ չտալ թափանցելու տեղական իշխանության մարմիններ: Մի շարք դեպքերում իշխանություններն անգամ ուժի գործադրմամբ խափանել են գյուղական ակտիվ տարրերի փորձերը: Ընտրական գործընթացներին վերաբերող նյութերից մեկում տեղեկացվում է, որ Լենինականի գավառի Ղոնախաղոան (Շիրակ) գյուղում իբրև թե կուլակները կեղծիք են

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 39:

կատարել և դրա համար մի քանի ամսով բանտարկվել[1]: Ընտրական մարմինները կուլակների և հակախորհրդային մյուս տարրերի կողմից ընտրակարգի խախտման օրինակ են համարել այն, որ ձայնազուրկ «կուլակները» ցուցադրաբար խանգարել են չքավորական ժողովները: Դրա համար այդպիսի անձանց սահմանված կարգով դատի են տվել և 2-3 ամսով բանտարկության ենթարկել[2]:

1925-1926 թթ. ամփոփագրերում պետանվտանգության մարմինները տեղեկություններ են հայտնում, որ կուլակային տարրերը ձգտում են զավթել տեղական խորհուրդները, ունևոր շերտերը հակաքարոզչություն են վարում կոմունիստների թեկնածուների դեմ և ջանում իրենց թեկնածուներին անցկացնել[3]: Ամփոփագրերում նշվում է, որ «Հայաստանում վերընտրությունների ժամանակ ակտիվ դերում են նախկին դաշնակները, որոնք դաշինքի մեջ են ունևոր շերտերի հետ: Սակայն, որպես կանոն, կուլակային տարրերը և հակահեղափոխականները չեն կարողանում իրենց ներկայացուցիչներին անցկացնել խորհուրդներում, որովհետև նրանք ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն»[4]: Օրինակներ են բերվում, որ 1926 թ. գարնանը Զանգեզուրի Ազարակ, Հալիձոր, Եղավարդ (Եղվարդ) և այլ գյուղերում ստեղծվել են կուլակային խմբեր՝ դաշնակների ղեկավարությամբ, ովքեր իբրև ագիտացիա են տանում՝ ընտրությունների ժամանակ չենթարկվելու կոմունիստների թելադրանքին: Իսկ Լոռի-Փամբակ գավառի Նիկիտինո (Ֆիոլետովո) գյուղի գյուղխորհրդի 19 անդամներից 16-ը աղանդավոր պրիգուններ են և 3-ը՝ կոմունիստ: Գյուղխորհրդի նախագահ է ընտրվել հայտնի աղանդավոր Ջադորկինը[5]:

Ընտրությունների վերաբերյալ պետանվտանգության մարմինների հաղորդած տեղեկությունները, կարծում ենք, այնքան էլ վստահություն չեն ներշնչում, որովհետև մարդկանց առօրեական

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 37:
[2] Նույն տեղում, թ. 56:
[3] Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), Ե., 2008, էջ 153:
[4] Նույն տեղում, էջ 154:
[5] Նույն տեղում, էջ 155:

կյանքի ամեն մի դժգոհության, անարդարության դիմաց տեսնում էին դասակարգային իմաստ: Սրանք էլ խորհրդային իշխանության մյուս մարմինների նման ամեն քայլափոխի տեսնում էին «բանդիտ», «կուլակ», «դաշնակ» և տալիս համանման որակումներ: Հարկ է նշել, որ 1920-ական թթ. առանձնապես տարածված երևույթներից էր, այսպես կոչված, **բանդիտիզմը**, որում տեղին չէ միակողմանի կերպով դասակարգային, քաղաքական ենթատեքստ փնտրել: Հաճախ դրանք կատարվում էին ավազակային հարձակումների ու կողոպուտի նպատակով: Այդ իմաստով անվտանգության մարմինները որոշակի տարբերակում չեն անցկացրել **քաղաքական** և **քրեական** բնույթի հանցագործությունների միջև:

Այդ շրջանում կարելի է ասել, որ մի տեսակ քաղաքական անվստահություն է ցուցաբերվել առհասարակ մտավորականության՝ գրողների, ուսուցիչների, բժիշկների և այլոց հանդեպ: Դրա պատճառն այն էր, որ Հայաստանի մտավորականության մի զգալի հատված քաղաքական անորոշության մեջ էր և դեռևս շրջադարձ չէր կատարել դեպի խորհրդային իշխանություն: Եվ պատահական չէին, որ հանրապետության մտավորականության շրջանում գրականության, արվեստի և այլ ոլորտների հետագա զարգացման ուղիների շուրջ փնտրտուքները շարունակվում էին, կար ակտիվ գրական շարժում, պրոլետարական գրողների տարբեր միություններ, ասպարեզում էին ընդդիմադիր կեցվածք դրսևորող Ե. Չարենցը, Ա. Բակունցը և մյուսները: Եվ բնական է, որ իշխանության մարմինները ընտրությունները կազմակերպելիս ու անցկացնելիս չէին կարող այս հանգամանքը հաշվի չառնել: Հատկանշական է, որ եթե սոցիալ-դասակարգային իմաստով գյուղական անցանկալի տարրերին, որպես կանոն, որակում էին «կուլակ», ապա քաղաքային նման կարգի խավերին՝ «հակահեղափոխական», «հակախորհրդային», «տրոցկիստ» և այլն: Խորհուրդների ընտրությունների ժամանակ հակախորհրդային համարվող տարրերի հաջողության գրավականն այն էր, որ նրանք եղել են համեմատաբար ավելի կրթված, ավելի կազմակերպված, քաղաքականա-

պես ավելի գիտակից, քան սովորական շարքային ընտրողը, չքավորը, բատրակը, տնային տնտեսուհին: Դրա համար էլ առանձին դեպքերում նրանց հաջողվել է տեղական ընտրություններում անցկացնել տալ իրենց թեկնածուներին:

Այնուամենայնիվ, եթե 1925-1926 թթ. ընթացքում «երեսներս դեպի գյուղ» իրագործման կարգախոսի պայմաններում որոշ չափով ընդլայնվեցին քվեարկելու իրավունք ունեցողների շրջանակները, ապա հետագայում «տրոցկիզմի» և մյուս ընդդիմության դեմ պայքարի ուժեղացման պայմաններում ընտրական մեղմացումներին հաջորդեցին խստացումները, որի հետևանքով ձայնազուրկների թիվը կրկին աճեց: 1927 թ. մայիսին փոփոխված ՀՍԽՀ ընտրական հրահանգով կրկին հիշեցման կարգով շեշտվում էր, որ ձայնազուրկների թվին պետք է դասել նախկին մառուզերիստներին, վարձու աշխատանք շահագործողներին, առևտրականներին, հոգևոր ծառայողներին, ջրաղացի և ձիթհանի տերերին, մեղվաբույծներին, կոշիկի արհեստանոցի տերերին և այլն[1]: Այսուհետ ընտրական իրավունքից զրկվում են երկու վարձու աշխատող ունեցող հողագործները[2]: Այսպես՝ եթե 1926 թ գյուղական վայրերում ձայնազուրկների թիվը կազմում էր 0,84, քաղաքներում՝ 4,78 տոկոս, ապա 1929 թ. այն ավելացավ մի քանի անգամ, համապատասխանաբար՝ 6,9 և 16,2 տոկոս[3]: Ի դեպ, այս խնդրում Ռուսաստանում պատկերը հետևյալն էր՝ եթե 1924 թ. ձայնազուրկները կազմել են միջինը 4 տոկոս, ապա 1927 թ դրանց թիվը հասավ մինչև 6 տոկոսի[4]: Տվյալներ կան, որ ամբողջ Ռուսաստանի մասշտաբով 1920-ական թթ. կեսերին ձայնազուրկների թիվը կազմել է մոտ 5 մլն. մարդ[5]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 47–48:

[2] «Խորհրդային Հայաստան», 5 հունվարի 1928 թ.:

[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1746, թ. 119, գ. 2318, թ. 3–4, ց. 3, գ. 8, թ. 18, նաև *Ղազախեցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 329:

[4] *Шетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, с. 143.

[5] «Отечественная история», М., 2006, N 5, с. 70. Հարկ է փաստել, որ խորհուրդների ընտրությունների կապակցությամբ Պետանվտանգության մարմինների կազմած ամփոփագրերի ու տեսությունների նյութերը ցույց են տալիս, որ Ռուսաստանի

Վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ մի կողմից կտրուկ աճել է ձայնազուրկների թիվը, իսկ մյուս կողմից՝ գյուղական և քաղաքային ձայնազուրկների հարաբերակցության տեսակետից մտավորականներով, առևտրականներով, ձեռնարկատիրությամբ և այլնով համեմատաբար հարուստ քաղաքներում ձայնազուրկների տոկոսը անհամեմատ ավելի բարձր է եղել: Եթե Երևան քաղաքում 1926 թ. եղել են ընդամենը 1336 ձայնազուրկ, ապա 1927 թ. քաղաքում ձայնազուրկ են արվել 3062 մարդ: Նկատի ունենալով, որ Երևանի ընտրողների միջին թիվը կազմել է 26000, ապա 1926 թ. քաղաքի ձայնազուրկների թիվը՝ 5 տոկոս, մինչդեռ հաջորդ տարի այդ ցուցանիշը ավելի բան կրկնապատկվել է՝ հասնելով 11,8 տոկոսի[1]: Պատկերը գրեթե նույնն էր նաև մի քանի այլ շրջաններում: Այսպես՝ Ղամարլուի գավառամասում ձայնազուրկների թիվը 1926 թ. կազմել է միջինը 6,61 տոկոս, իսկ առանձին գյուղերում այդ ցուցանիշը հասել է մինչև 14 տոկոսի[2]: 1929 թ. ամփոփ տվյալներով Հայաստանի գյուղական վայրերում հաշվում էր 27511 ձայնազուրկ, որոնց 8 տոկոսը կամ 2219-ը կազմել են եկեղեցու սպասավորները[3]: Հատկանշական է, որ այս շրջանում սկսեցին ավելի հաճախակի ներգրավել նաև ձայնազուրկի ընտանիքի անդամներին, որը, բնականաբար, մեծացրեց

նահանգների ու վոլոստների գյուղացիները շատ ավելի սուր ձևով են արձագանքել ընտրական համակարգի ու ձայնազրկումների դեմ: Ընտրությունների ժամանակ ռուսաստանցի գյուղացիական լայն զանգվածների բոլշևիկյան իշխանությունների դեմ արտահայտած առավել բնորոշ մտքերից էին. «Մենք ոչինչ չունենք ընտրելու, կոմունիստներն առանց մեզ էլ արդեն ընտրել են», «Հասան իշխանության, մոռացան իրենց լոզունգները», «Եթե պատերազմ ծագի, ապա զենք կստանանք և կգնանք խփելու մեր կառավարողներին», «Գյուղացիները տապալեցին ազնվականությանը, սակայն ի դեմս կոմունիստների՝ առաջացավ նոր ազնվականություն», իսկ ամենասակցական գյուղացիներից մեկը հարց էր տալիս. «Ինչո՞ւ բոլշևիկների կուսակցությունը չի կենսագործում Կ. Մարքսի և Վ. Լենինի պատգամները: Այդ մասին ասվում են խոսքերով, թղթի վրա, բայց ոչ՝ գործով» և այլն: (Տե՛ս «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 2, часть I, М., 2001, с. 284, 323–324, 333–334 и др.)

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 1:

[2] Նույն տեղում, թ. 70–71:

[3] *Ղազախեցյան Վ. Ն.*, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմություն 1920–1929 թթ., Ե., 1975, էջ 335–336, նույնը՝ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 2318, թ. 3–4:

ձայնազուրկների տեսակարար կշիռը: Այս փուլում ևս ձայնազրկության աճի գործում շարունակում էր էական դեր խաղալ ոչ այնքան կուլակների և շահագործող ու հակախորհրդային համարվող տարրերի քանակական աճը, որքան, ինչպես արդեն ասվել է, տեղական խորհուրդների և ընտրական հանձնաժողովների հաճախ սուբյեկտիվ ու կողմնակալ՝ «անձնական հաշիվներ մարելու», «իրենց հարմար թեկնածուներ խցկելու» և համանման միտումներով կազմված ցուցակները: Ընտրացուցակները կազմող տեղական խորհուրդները և ընտրական հանձնաժողովները ձայնազուրկների ցուցակում հաճախ ընդգրկում էին իրենց անցանկալի միջակների և անգամ չքավորների: Ի դեպ, այս պրակտիկան Հայաստանում ավելի տարածված է եղել, քան հարևան Վրաստանում և Ադրբեջանում[1]: Այլապես ինչպես բացատրել, որ, օրինակ, Նոր Բայազետի գավառում ձայնազուրկների քանակը սկզբում եղել է 2160 մարդ, իսկ հետո մարդկանց գանգատ-բողոքների հիման վրա վերին ատյաններում դրանք բննելուց հետո այն ավելի քան կրկնակի պակասել է՝ մնալով 960 մարդ: Նույն կերպ, օրինակ, Դարալագյազի գավառում ձայնազուրկների թիվը կրճատվել է 1.6 անգամ՝ 900-ից իջնելով 550-ի[2]: Իր հերթին պետք է նշել, որ ձայնազուրկների «բացահայտման» ժամանակ «ձեռքները ծալած չի նստել» Հայչեկան, որը հարկ եղած չափով տեղեկություններ էր տալիս այս կամ այն բնակավայրի կուլակային կամ շահագործող տարրերի վերաբերյալ, որպեսզի ընտրական հանձնաժողովը դրանց ընդգրկի ձայնազուրկների ցուցակում:

Ձայնազուրկների մասին ավելի առարկայական պատկերացում կարող է տալ, օրինակ, Լոռի-Փամբակ գավառը (տե՛ս աղ.)

Գավառամաս կամ շրջան /1927թ./	բնակչության թիվը	ընտրելու իրավունք ունեցողներ	ձայնազուրկներ	վերականգնվել են
1. Ղարաքիլիսայի	19012	8853	731	313

[1] *Ղազարյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 329:
[2] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 38–39:

2. Համամլուի	26923	12607	1163	523
3. Դսեղի	14288	6961	296	48
4. Ստեփանավանի	23964	10900	759	245
5. Վորոնցովկայի	18138	7917	726	253
6. Ալավերդու	23428	11420	638	187
Ընդամենը	125753	58658	4313	1569
Ղարաքիլիսա քաղաքը	8405	2730	644	34[1]

Աղյուսակից երևում է, որ գավառի ձայնազուրկների ընդհանուր թիվը, առանց Ղարաքիլիսա քաղաքի, կազմել է 4313 մարդ, որից 1569 հոգու ընտրական իրավունքի վերականգնումից հետո ձայնազուրկ է մնացել 2744-ը: Գավառի ձայնազուրկները կազմել են ընտրական իրավունք ունեցողների 4,67 տոկոսը:

Ինչ վերաբերում է Ղարաքիլիսա քաղաքին, ապա ընտրական իրավունքից զրկված 644 հոգին կազմում է քաղաքի ընդհանուր բնակչության թվի 7,66 տոկոսը, իսկ ձայնի իրավունք ունեցողների թվի՝ 23,58 տոկոսը, որն, ինչ խոսք, բավական մեծ տեսակարար կշիռ է: Ըստ սոցիալական կազմի՝ գավառի և քաղաքի 3354 ձայնազուրկներից ճնշող մեծամասնությունը համարվել է կուլակ, առևտրական, այլ վարձու աշխատանք շահագործող, հոգևորական, այնուհետև հին համակարգին ծառայած ոստիկան ու գործակալ, դատարանով դատապարտված, խելագար և այլն[2]: Գավառի (Ղարաքիլիսա քաղաքի տվյալները չկան) գյուղխորհուրդների կազմի սոցիալական պատկերը հետևյալն է, ընդամենը 2374 անդամ, որից կին՝ 323 հոգի կամ 13,6 տոկոս, գյուղացիներ՝ 1890 մարդ կամ 79,7 տոկոս, բատրակներ՝ 45 կամ 1,9, բանվորներ՝ 159 կամ 6,7, արհեստավորներ՝ 47 կամ 1,9, ծառայողներ՝ 211 կամ 8,9, կարմիր բանակային՝ 22 կամ 0,9, կոմկուսի անդամ՝ 423 կամ 17,8, ԼԿԵՄ՝ անդամ՝ 288 կամ 12,1 և անկուսակցական՝ 1663 մարդ կամ 70,1 տոկոս[3]:

---

[1] Նույն տեղում, թ. 62բ:
[2] Նույն տեղում, թ. 62բ-63:
[3] Նույն տեղում, թ. 64:

1920-ական թթ. երկրորդ կեսի ընտրական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսապես ամուր, ունևոր տարրերը դարձյալ փորձել են խորհուրդների միջոցով թափանցել տեղական իշխանության մարմիններ կամ այնտեղ անցկացնել տալ իրենց հարմար թեկնածուներ: Դրան հասնելու համար տեղ-տեղ անգամ դիմել են ընտրակաշառքների: Մյուս կողմից՝ սովորաբար իրատես մտածող ու գործունյա ընտրողները չեն ցանկացել, որ խորհուրդներ մտնեն անգրագետ և քաղաքականապես տհաս չքավոր ու բատրակային տարրերը: Ասվածը հաստատելու համար բերենք մի քանի փաստարկներ: Ընտրաժողովների ժամանակ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտրողներն իրենց ելույթներում դեմ են արտահայտվել, որպեսզի բատրակներին ընդգրկեն ընտրացուցակներում և քվեարկեն նրանց օգտին. «բատրակի՞ն չպետք է ընտրել, որովհետև, եթե լավ տընտեսվար լիներ, բատրակ չէր մնա», «չոբան մարդու խելքն ինչ կ՚հասնի, որ գեղ կառավարի, պիտի ընտրեն այնպիսի մարդկանց, որ գործ անեն, կառավարեն» և այլն[1]: Լոռի-Փամբակ գավառի Ղարաքիլիսայի գավառամասի Վոսկրեսենովկա (Լերմոնտով) գյուղի կուլակ համարվող Բիրյուկովը և Շուտովը գյուղացիներին հորդորել են, որ իրենց ընտրեն, «որովհետև չքավորները ծույլ են ու անբան, իսկ ունևորները խելոք են ու աշխատասեր»[2]: Եղել են գյուղեր, որտեղ ունևորները ազդեցիկ դիրք են գրավել, ինչպես, օրինակ, Ելենովկայի գավառամասի Շահրիզ (Գեղամավան) գյուղը: «Խորհրդային Հայաստան» թերթի թղթակիցը գրում է, որ նրանք, օրինակ, չոբաններին, չքավորներին չեն ընտրում[3]: Պատահել է, որ գյուղի ձայնազուրկ ունևորները կողմնակի մարդիկ են ուղարկել ընտրաժողով, որպեսզի նրանց միջոցով խափանեն ընտրությունների կայացումը կամ էլ փորձել են իրենց «հարմար» թեկնածու անցկացնել: Օրինակ, նման միջադեպեր են արձա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 10, գ. 108, թ. 51:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 69, թ. 4:
[3] «Խորհրդային Հայաստան», 28 մարտի 1926 թ.:

նագրվել նույն գավառի Բոզիքենդ (Համզաչիման), Շահալի և այլ գյուղերում[1]: Խորհրդային մամուլում տեղ է գտել տեղեկատվություն այն մասին, որ Էջմիածնի գավառի Զանգիբասարի շրջանի Խաչափարախ (Զահմաթ) գյուղի մի ունևոր գյուղացի ձայնի իրավունքը վերականգնելուց հետո 1926 թ. խորհրդի գարնանային ընտրությունների ժամանակ երեքական ռուբլի է առաջարկել այն համագյուղացիներին, ովքեր կպաշտպանեն իր թեկնածությունը[2]: Ղամարլուի գավառամասի Դոխգյուզ (Կանաչուտ) գյուղի՝ 1927 թ. փետրվարին կայացած խորհրդի ընտրություններում հաջողվել է անցկացնել կուլակ Սիսակ Ղազարյանի թեկնածությունը[3]: Վորոնցովկայի գավառամասի Նորաշեն գյուղի ակտիվիստներից մեկը, որ ցանկացել է անպայման գյուղխորհրդի նախագահ դառնալ, խորհրդի ընտրությունների նախօրյակին. «կով է մորթում և պատվիրում իր գիտեցած մարդկանց, որ իրենն ընտրեն»: Սակայն այդ մարդը չի ընտրվում, իսկ վերջում՝ «կոիվ է սարքում, թե դուք եկե՛լ եք իմ տունը, քե՛ֆ եք արել, իմ գինին խմել և ինձ ձեն չե՞ք տալիս»[4]: 1929 թ. մարտյան ընտրությունների ժամանակ գյուղխորհրդի նախագահ ընտրվելու փորձ է արել Էջմիածնի գավառի Մոլլաղասի գյուղխորհրդի նախկին նախագահ ոմն Հմայակ· Տեղեկացվում է, որ նա նախքան ընտրությունները գնել է 7 դույլ գինի, մեկ ոչխար և քեֆ է կազմակերպել ընտրողների հետ[5]: Մեկ այլ դեպքում՝ Դարալագյազի գավառի մի շարք գյուղերում՝ Ղոյթուր (Դեռապի), Էրդափին (Եղեգիս), Հասանքենդ (Շատին) և այլն, նույն թվականին անցկացված խորհրդի ընտրություններում դարձյալ գյուղի ունևորների ու ակտիվիստների կողմից թույլ են տրվել ընտրախախտումներ և այլն[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 69, թ. 5-6:
[2] «Խորհրդային Հայաստան», 10 ապրիլի 1926 թ.:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 19-20:
[4] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 58:
[5] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 602, թ. 350:
[6] Նույն տեղում, թ. 358:

Ինչպես նկատում ենք, ընտրությունների ընթացքի, արդյունքների, թույլ տրված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը (արխիվային, թե լրագրային) միակողմանի է: Որպես կանոն, ընտրախախտում կատարողները կամ ընտրակաշառքի վորձ անողները համարվել են միայն, այսպես կոչված, կուլակները, հակահեղափոխականները և դասակարգային մյուս թշնամիները: Եվ սա այն դեպքում, երբ, օրինակ, տեղական խորհուրդները և ընտրական հանձնաժողովները տարիներ շարունակ ընտրացուցակներ (ընտրողների, թե ձայնազուրկների) կազմելիս թույլ են տվել վիթխարի կողմնակալ խախտումներ ու կեղծիքներ և մնացել են անպատիժ:

Ընտրական գործընթացների ժամանակ կուլակների և մյուս հարուստ շահագործող տարր համարվողների գործողությունները սահմանափակելու համար իշխանության մարմինները դիմել են անգամ օրենսդրական փոփոխությունների: Ի կատարումն ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. հունվարի 23-ի և Ամդրֆեդերացիայի ԿԳԿ-ի հունվարի 24-ի որոշումների և հիմք ընդունելով ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1923 թ. սեպտեմբերի 22-ի՝ «ԿԳԿ-ի հաստատած օրենսգրքերի փոփոխությունների մասին որոշման 2-րդ հատվածի՝ ՀՍԽՀ քրեական օրենսգիրքը լրացվում է 116ա հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ «Այն անձինք, ովքեր խոչընդոտում են գյուղում վարձու աշխատանք կատարող աշխատողներին կատարելու իրենց ընտրական իրավունքը, այդպիսիք ենթարկվում են հարկադիր աշխատանքի մինչև 6 ամիս ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռուբլի»[1]: ՀՍԽՀ քրեական օրենսգրքում այդ փոփոխության մասին որոշումը ընդունվել է ՀԿԳԿ-ի նախագահության 1929 թ. հունվարի 31-ի նիստում: ՀՍԽՀ քրեական օրենսգրքում հիշյալ լրացման դրդապատճառը ըստ ամենայնի եղել է այն, որ վարձու աշխատանք օգտագործող տնտեսատերերը հաճախակի ազդել են իրենց աշխատող բատրակի, միջակի կամ բանվորի

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 213, թ. 87, նաև 91:

վրա, որպեսզի նրանք ընտրեն իր ուղած թեկնածուին կամ էլ առհասարակ չմասնակցեն ընտրություններին:

Զայնազրկման գործընթացներն ավելի հաճախացան համատարած կոլեկտիվացման շրջանում ընդհուպ 1936 թ., երբ կուլակաթափման հետ միաժամանակ կատարվում էր ընտրական իրավունքից զրկում կամ գյուղացուն վտարում էին գյուղի սահմաններից Հաշվի առնելով, որ գնալով ձայնազուրկ քաղաքացիների տոկոսն «աննորմալ բարձրանում է՝ ՀԿԳԿ-ի նախագահությունը 1929 թ. ապրիլի 18-ի նիստում՝ քարտուղար Ռ. Դաշտոյանի զեկուցմամբ, որոշում է հատուկ հանձնաժողովների միջոցով վերանայել այդ ցուցակները՝ նվազեցնելու միտումով[1]: Ընտրությունների վերաբերյալ ԿԿ-ի քարտուղար Ա. Խանջյանը նույն ամսին շրջաբերական նամակ էր ուղղել հանրապետության կուսբջիջներին՝ նշելով, որ մի շարք վայրերում ընտրական կանոնները կոպտորեն խախտվել են, որի հետևանքով ոչ միայն միջակները, այլև որոշ դեպքերում նույնիսկ չքավորների մի մասը զրկվել է ընտրելու և ընտրվելու իրավունքից: Շրջաններ գործուղված ԿԿ-ի պատասխանատու ընկերների զեկուցումների հիման վրա Ա. Խանջյանը փաստում էր, որ, օրինակ, Ապարանում և Համամլուում ձայնազուրկների քանակը կազմել է 8-9 տոկոս[2]: ՀԱԱ ԿԳԿ-ի ֆոնդի ցուցակներից մեկի տասնյակ գործերում հազարավոր գյուղացիների գանգատ-դիմումներ կան, որոնք ուղղված են ԿԳԿ-ին կից գործող ընտրական իրավունքից զրկված քաղաքացիների գանգատները քննող Կենտրոնական հատուկ հանձնաժողովին: Նրանք դիմել են կուլակաթափման կապակցությամբ և միաժամանակ իրենց ընտրական իրավունքի վերականգնման խնդրանքով[3]: Նույն ձևաչրով ընտրական ճնշումները և սահմանափակումները ավելի ուժեղացան համատարած կոլեկտիվացման փուլում՝ 1930-ական թթ.:

Այսպիսով՝ 1920-ական թթ. բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի ձևավորման պայմաններում Խորհրդային Ռուսաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 213, թ. 136:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 39, թ. 3-4:
[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 6, գ. 9, 37, 43, 72, 91, 114, 168, 207, 251, 268 և այլն:

տանի օրինակով ու նմանակմամբ Հայաստանում ևս ձևավորվեց պետական իշխանության բարձրագույն մարմին հանդիսացող խորհուրդների ընտրական համակարգ, որն իր բնույթով դասակարգային էր, բազմաստիճան, խտրական, ոչ ազատ ու անհավասար, մի խոսքով՝ ժամանակակից չափանիշներով՝ ոչ ժողովրդավարական: Ընտրական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր մակարդակի խորհուրդների ընտրությունները՝ որպես քաղաքական կարևորության գործընթաց, ամբողջովին կազմակերպվել, վերահսկվել և ուղղորդվել է կուսակցական-պետական մարմինների կողմից՝ սկսած ընտրացուցակների կազմումից ու ընտրարշավից ավարտված պատգամավորների ընտրությամբ, տեղական ու կենտրոնական իշխանությունների ձևավորմամբ: Չնայած ՀՍԽՀ սահմանադրության մեջ ակնարկ անգամ չկա Կոմկուսի միակ ղեկավար և ուղղություն տվող ուժի մասին, սակայն դա չի խանգարել, որ նա անբաժան տնօրիներ խորհուրդների ընտրությունները և տեղական ու կենտրոնական իշխանության մարմինների ձևավորումը: Կնշանակի, որ ընտրական գործընթացների առումով ևս Կոմկուսի մենատիրական գործունեությունը կարելի է որակել որպես հակասահմանադրական:

Քաղաքային և գյուղական ընտրական գործընթացներում շատ էական է եղել ձայնագրկման երևույթը, որով որոշվում էր նաև տվյալ քաղաքացու սոցիալական կարգավիճակը: Փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում բնակչությունը բավականին հետաքրքրություն ու ակտիվություն է հանդես բերել խորհուրդների ընտրությունների հանդեպ. Քաղաքի և գյուղի ունևոր, սակայն ձայնազրկված տարրերը ձգտել են վերականգնել իրենց ընտրական իրավունքը կամ փորձել են թափանցել խորհրդային մարմիններ, իսկ շարքային ընտրողները ցանկացել են խորհուրդներում տեսնել ուսյալ, բանիմաց և գործունյա մարդկանց և ոչ թե այդ տեսակետից բավարար պատրաստություն չունեցող բատրակներ ու չքավորներ: Դրա համար էլ ընտրողները պայքարել են ոչ թե կուսակցական և խորհրդային մարմինների կողմից կազմված ամբողջական ցու-

ցակներով քվեարկության, այլ անհատական կարգով քվեարկության օգտին, անգամ պահանջել են, որ քվեարկությունները լինեն փակ, գյուղխորհրդի նախագահներն ընտրվեն ընտրաժողովներում և այլն:

Հետագա տասնամյակների ընթացքում գնալով խորհրդային ընտրական մեքենան ավելի ու ավելի է կատարելագործվում: Բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական բոլոր մակարդակի խորհուրդներում ընտրվում էին միմիայն նախապես կուսակցության կազմած ցուցակներով՝ իրեն նվիրված ու հնազանդ սոցիալական տարբեր խմբի ու խավի մարդկանցից, որոնք, սակայն, խորհուրդների ամենաբարձր ատյաններում հանդես էին գալիս նախապես գրված զեկուցման տեքստերով, վերինների կողմից թույլատրված հայտարարություններով ու ռեպլիկներով, իսկ քվեարկությունների ժամանակ ճնշող մեծամասնությամբ պարզապես կատարում էին դակիչի դեր՝ ապահովելով գրեթե 100-տոկոսանոց ձայներով որոշումների ընդունում, որոնք ուղեկցվում էր բուռն ծափահարություններով, իսկ երբեմն էլ՝ որոտընդոստ օվացիաներով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1 *Նոմենկլատուրայի առաջացման նախադրյալները և առաջին քայլերը*

Բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի (ռեժիմի) հաստատման բնորոշ դրսևորումներից էր կուսակցական-պետական **նոմենկլատուրայի** ձևավորումը: Նոմենկլատուրա բառը ծագում է լատիներեն «nomenclatura» բառից՝ «nomen» անուն, անվանում և «clator» թվարկել, հայտարարել: Հին Հռոմում ընդունված էր , որ ընդունելությունների ժամանակ այն ստրուկը, որը բարձրաձայն արտասանում էր ներս մտնող պատվարժան հյուրի կամ հյուրերի անունները, կոչվում էր «nomenclator», իսկ նրա ընթերցած անունների ցուցակը՝ «nomenclatura»[1]: Ըստ ակադեմիկոս Էդ. Աղայանի բացատրական բառարանի՝ «նոմենկլատուրա» նշանակում է «անվանակարգ», իսկ «նոմենկլատուրային պաշտոն»՝ վերադաս մարմնի անմիջական հաստատումով նշանակման ենթակա պաշտոն: Օրսֆորդի բացատրական բառարանով՝ «nomenklatura» նշանակում է «անվանացանկ»[3]: **Այստեղից էլ ժամանակակից իմաստով նոմենկլատուրա ասելով՝ հասկանում ենք պետական-կուսակցական այս կամ այն ոլորտի պաշտոնների նշա-**

---

[1] Տես *Дворецкий И. Х.*, Латинско-русский словарь, М., 1976, с. 674, *Восленский М. С.* Номенклатура. Господствующий класс Советского Союза, М., 1991. // www.lib.ru Politolog/ *Woslenski J.* txt. p. 12, *Հայրապետյան Ա.*, Լատիներեն-հայերեն բացատրական բառարան, Ե., 2005, էջ 241:

[2] Տես *Աղայան Է. Բ.*, Արդի հայերենի բացատրական բառարան, Ղ–ֆ, Ե., 1976, էջ 1079:

[3] Տես Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան, Ե., 2003, էջ 369:

նակման անվանակարգը կամ անվանացանկը, որը ներառում է որոշակի քաղաքական ու քաղաքագիտական իմաստ:

Հարկ է նշել, որ խորհրդային գրականության մեջ քաղաքական նկատառումներով, որպես կանոն, կուսակցական նոմենկլատուրայի մասին չի խոսվել: Անգամ խորհրդային հանրագիտարաններում գիտակցաբար շրջանցել են նոմենկլատուրա բառը՝ իրրև քաղաքական հասկացություն ներկայացնելը, իսկ եթե խոսվել է առհասարակ նոմենկլատուրայի մասին իրրև անվանացանկ, ապա նկատի է առնվել բնագիտական բնույթի հիվանդությունների, քիմիական տարրերի դասակարգման, տեխնիկայի, բժշկության, հաշվապահական հաշվառման և այլնի անվանացանկերը, բայց ոչ քաղաքական իմաստով[1]:

Տասնամյակներ շարունակ խորհրդային երկրում կուսակցական նոմենկլատուրայի պատմության հարցերով զբաղվելը, խոսելը եթե չասենք արգելված էր, ապա մեղմ ասած չի խրախուսվել, որովհետև ցանկալի չէր խոսել այդ ընտրախավի կարգավիճակի, նրանց այաշտոնեական տեղաշարժերի մեխանիզմի, նոմենկլատուրային աշխատողների արտոնությունների ու բարիքներից օգտվելու իրավունքների մասին և այլն:

Արխիվային ֆոնդերի ցուցակներում նոմենկլատուրային վերաբերող գործերը նախկինում, որպես կանոն, դրոշմված են եղել անձեռնմխելիության կնիքով, շարքային ուսումնասիրողի համար հասանելի են փակ և հույժ գաղտնի փաստաթղթեր: Ղեկավար աշխատողների ցուցակը հասու է եղել միայն սահմանափակ շրջանակի, որովհետև խոսքը վերաբերում էր խորհրդային հասարակության ղեկավար ընտրախավին (էլիտային)՝ իր հիերարխիկ աստիճանակարգով, ինչը արտասահմանյան գրականության մեջ որակվել է **պարտոկրատիա կամ նոր դասակարգ:**

Ձեչեն այլախոհ պատմաբան, քաղաքագետ Ա. Ավտորխանովի բնորոշմամբ՝ խորհրդային իշխանության հոչակումով և բոլ-

---

[1] Տես Большая советская энциклопедия, 3-я изд., т. 18, М., 1974, с. 95–98, Советская историческая энциклопедия и др.

շևիկյան միակուսակցական (ավտորիտար) կառավարման համակարգի ձևավորումով 1920-ական թթ. առաջացավ **կոմունիստական պարտոկրատիա** (կուսակցապետություն), որի մեջ նեղառվում էին կառավարման հետևյալ երեք տարրերը՝ **ավտոկրատիա** (հանձին Ի. Ստալինի բռնատիրության), **օլիգարխիա** (Բյուրոյի դիկտատուրա) և **կեղծ դեմոկրատիա** (հանձինս խորհուրդների)[1]:

Պարտոկրատիայի դեպքում պետությունը և կուսակցությունը, ըստ էության, նույնացվում են: Դրա հիմքը դրվեց հենց բոլշևիկյան պետական հեղաշրջումից անմիջապես հետո, երբ մի շարք դեկրետ-օրենքներով ու «միջոցառում-գործողություններով» ջարդվեց հին բուրժուական, հակահեղափոխական որակվող պետական մեքենան՝ իր կառուցվածքով, բովանդակությամբ ու կադրերով, և դրա փոխարեն ստեղծվեց կուսակցական պետական մեքենա: Հիրավի, կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության կառավարման համակարգերը անբաժանելի են իրարից: «ԽՄԿԿ և խորհրդային պետության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԽՄԿԿ եղել է ոչ թե սովորական հասարակական-քաղաքական կազմակերպություն, այլ **խոշորագույն պետականաստեղծ կառուցվածք** (ընդգծումն մերն է - Ա. Հ.)»[2]:

ԽՄԿԿ ԿԿ-ի ապարատի նախկին աշխատող, պատմաբան և փիլիսոփա, արտասահման մեկնած ու չվերադարձած պրոֆ. **Միխայիլ Վոսլենսկին** իր ուշագրավ նույնանուն՝ «Նոմենկլատուրա» աշխատության մեջ փաստական նյութերի և իր պրակտիկ դիտարկումների հիման վրա այն միտքն է զարգացնում, որ քաղաքական պայքարի արդյունքում 1917 թ. հոկտեմբերին իշխանությունը գրաված բոլշևիկները իրենց կուսակցության շրջանակներում ձևավորեցին նոր իշխող, արտոնյալ խավ: Հետագա շրջանում այդ խավը ամրապնդեց և օրինականացրեց իր դիրքերը: Նա ոչ միայն անջր-

---

[1] Տես *Авторханов А. Г.,* Происхождение партократии, т. 1, Франкфурт-на-Майне, 1973. //Constitutions.ru/archives/ N 4571/.

[2] Տես История Коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А. Б., М., 2014, с. 5.

պետեց իրեն հասարակությունից ու ժողովրդից, այլև նույնիսկ իր ներսում ձևավորեց պաշտոնների հիերարխիա, այսինքն՝ **նոմենկլատուրա**[1]: Ըստ Մ. Վոսլենսկու՝ խորհրդային երկրում ազգայնացված կամ պետականացված սոցիալիստական սեփականությունը, ըստ էության, համարվել է ոչ թե համաժողովրդական, այլ **նոմենկլատուրայի սեփականություն**[2]: Կարելի է համաձայնվել հեղինակի այն դիտարկմանը, որ արտոնյալ խավ կամ «նոր դասակարգ» համարվող, իշխանությունից ու բարիքներից օգտվող, ազգային ունեցվածքի փաստական սեփականատեր համարվող նոմենկլատուրան մշտապես հանդես է եկել ցանկացած սոցիալիստական բարեփոխման արգելակիչ /խոչընդոտ/: Ասվածը համոզիչ կերպով հաստատվում են խորհրդային անցած տասնամյակների՝ խրուշչովյան, բրեժնևյան «վերափոխումների» ու հատկապես գորբաչովյան «վերակառուցման» ձախողված փորձերով:

Երբ խորհրդային ժամանակաշրջանում Արևմուտքի հեղինակները և արտասահման փախած ու չվերադարձած խորհրդային այլախոհները, այսպես կոչված, **невозвращенцы**-ները, գրում էին խորհրդային կուսակցական-բյուրոկրատական նոմենկլատուրայի (անվանակարգի), նրա՝ որպես առանձին, արտոնյալ դասի հիերարխիկ կառուցվածքի, արտոնությունների ու առանձնաշնորհումների մասին և այլն, խորհրդային հեղինակները, կոմունիստական քարոզչամեքենան հակազդում էին դրանց՝ իբրև կեղծիք ու զրպարտանք կոմունիստական կուսակցության ու խորհրդային պետության հասցեին: Իսկ խորհրդային հեղինակները (պատմաբան, փիլիսոփա, սոցիոլոգ, քաղաքագետ և այլն) հասկանալի պատճառներով շրջանցում էին կուսակցական նոմենկլատուրայի հարցերի լուսաբանումը: Բնականաբար, այդ նույնը կատարվել է խորհրդային պետության մաս կազմող Հայաստանում:

---

[1] Տես *Восленский М. С.*, Номенклатура. Господствующий класс Советского Союза, М., 1991. // www.lib.ru /Politolog /, Woslensi J. txt, p. 10.

[2] Նույն տեղում:

Դրան հակառակ, ինչպես արդեն ասվեց, համանման տարու համարվող թեմաներին անդրադառնալու հնարավորություն են ունեցել արտասահման փախած խորհրդային այլախոհները, ովքեր լույս են տեսցրել մի շարք աշխատություններ[1]: Արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում երկրի ժողովրդավարացման գործընթացների, արխիվային փակ համարվող ֆոնդերի ու գործերի ազատականացման շնորհիվ հետևեցին մի շարք մենագրական ուսումնասիրություններ, ժողվածուներ, ամսագրային հոդվածաշարեր[2]: Ինչ վերաբերում է Հայաստանին ու հայ հետազոտողներին, ապա նոմենկլատուրայի երևույթին վերաբերող որևէ անդրադարձ, ըստ էության, չկա:

Մեր առջև դրված խնդիրը լուսաբանելու համար հիմնականում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ԿԿ-ի թիվ 1 և Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի (ԿՎՀ) թիվ 91 ֆոնդերից: Սակայն հարկ է նշել, որ նոմենկլատուրային վերաբերող գործերի նյութերը ամբողջական չեն, հատվածական են և հնարավորություն չեն տալիս լիարժեք ու ամբողջական պատկերացում կազմել դրա կառուցվածքի, նրանում ընդգրկված պաշտոնների ընդհանուր թվաքանակի և այդ համակարգի որոշ այլ մանրամասների վերաբերյալ: Այդուհանդերձ, համադրելով նոմենկլա-

---

[1] Տես *Бердяев Н. А.*, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, *Авторханов А. Г.*, Происхождение партократии, т. 1. Франкфурт-на-Майне, 1973 (Constitutions. ru /archives /N 4571), *Восленский М. С.*, Номенклатура. Господствующий класс Советского Союза, М., 1991, *Николаевский Б. И.*, Тайные страницы истории, М., 1995 и др.

[2] Տես *Верт Н.*, История Советского государства. 1900–1991, М.,1992, *Нефедов В. Н.*, Номенклатура империи: исследования кризиса, Нижний Новгород, 1994, Большевистское руководство. переписка. 1912–1927, сборник документов, М., 1996, *Павлов Д. Б.*, Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 - середина 1950-х гг., М., 1999, Политические партии России: история и современность, под ред. проф. А. И. Завелева и др., М., 2000. *Щетинов Ю. А.*, История России XX век, М., 1999, *Орлов А. С.* и др., История России, М., 2002, *Орлов А. С.* и др., Хрестоматия по истории России, М., 2009, История России XX век(1894-1939). ответст. ред. А. Б. Зубов, М., 2009, *Гимпельсон Е. Г.*, Политическая система и НЭП: неадекватность реформ, «Отечественная история» , РАН, М., 1992, N 2, *Гимпельсон Е. Г.*, Путь к однопартийной диктатуре, «Отечественная история», РАН, М., 1994, N 4–5, *Павлов Б. В.*, Становление контроля партийной номенклатуры над правоохранительной системой в 1921–1925 годах, «Вопросы истории», М., 2004, N 1 и др.

տուրային վերաբերող վավերագիր նյութերը, պաշտոնական գրագրությունները, կատարելով որոշ հաշվարկներ, փորձել ենք ընդհանուր գծերով ներկայացնել այդ համակարգի ձևավորման ընդհանուր պատկերը ՀՍԽՀ-ում:

Ամենից առաջ հարկ է փաստել, որ կուսակցական նոմենկլատուրայի համակարգի հիմքերը դրվել ու ամրողջացել են խորհրդային պետության Կենտրոնում՝ կոմունիստական կուսակցության ղեկավարության կողմից: Այդ համակարգի ձևավորման համար Ռուսաստանում, անշուշտ, եղել են պատմաքաղաքական ակունքներ, գաղափարական նախադրյալներ, կազմակերպական հիմքեր և այլն: Իսկ նոմենկլատուրային այն համակարգը, որ ձևավորվեց Խորհրդային Հայաստանում 1920-ական թթ., ընդամենը համառուսաստանյան կուսակցական նոմենկլատուրայի մանրապատկերն էր՝ հարմարեցված ՀՍԽՀ տեղական պայմաններին ու առանձնահատկություններին: Դրա համար էլ խնդիրը լավ պատկերացնելու և հասկանալու համար պետք է սկսել Կենտրոնում ընթացող գործընթացներից:

Նոմենկլատուրայի առաջացման համար իբրև պատմական նախադրյալ Ռուսաստանում եղել են պատմաքաղաքական ակունքներ: Ինչպես արդեն ասվել է, ցարական Ռուսաստանի կառավարման համակարգին բնորոշ է եղել ռազմաոստիկանական բյուրոկրատական ապարատը: Այն ձևավորվել է դարերի ընթացքում և ռուսաստանյան ժողովուրդը վարժվել էր այդ համակարգին:

Ցարական և բոլշևիկյան ռուսաստանների համար ընդհանրական դարձան կայսերապաշտական ձգտումները: Ռուսական հասարակության համար ընդունելի համարվեց կոմունիստական գաղափարախոսությունը հիմնականում այն պատճառով, որովհետև բոլշևիկ առաջնորդները ստեղծեցին ԽՍՀՄ՝ տիպի կայսրություն, հետագայում հույս էին փայփայում համաշխարհային հեղափոխության և ռուս ժողովրդի առաջնորդությամբ համաշխար-

հային սոցիալիստական ու կոմունիստական հասարակարգի հաղթանակի համար:

Մյուս կողմից՝ 1917 թ. Ռուսաստանում պետական իշխանության ղեկին անցած բոլշևիկյան կուսակցական մեքենայի աշխատատաձի բնորոշ գծերը դարձան պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ բոլշևիկյան միակուսակցական կառավարման համակարգի հաստատումը, կուսակցական և պետական կյանքի խիստ կենտրոնացումը (ցենտրալիզմը), կուսակցական աշխատանքի ծայրաստիճան փակ և գաղտնի լինելը, կուսակցական կիսատազմական խիստ կարգապահությունը, նրա ներսում խմբերի ու թեքումների բացառումը, բռնաճնշիչ մեքենայի անխնա գործելը, զինված ուժերի և հատուկ ծառայությունների դերի առավել կարևորումը և այլն: Վերոնշյալ սկզբունքների հիման վրա նոր կուսակցական-պետական բյուրոկրատական ապարատի ստեղծումը ինքնին ենթադրում էր նաև կուսակցական-պետական համապատասխան կադրային պաշտոնացանկ, որն էլ ստացավ նոմենկլատուրային (անվանակարգային) բնույթ:

Նոմենկլատուրայի ստեղծումը պայմանավորված էր մի կողմից խորհրդային պետության (կուսակցական, պետական, խորհրդային, տնտեսական և այլ) արդյունավետ կառավարման անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ ապահովել, այսպես կոչված, պրոլետարիատի դիկտատուրայի պետության մեջ բոլշևիկյան միակուսակցական (մենիշխանական) ու անբաժան կառավարումը: Այդ համակարգի ստեղծումը թելադրված էր նաև պետական-խորհրդային-տնտեսական և այլ ապարատն ու հիմնարկ-ձեռնարկություններն ամբողջապես կուսակցականացնելու, դրանցում կուսակցական միջուկն ուժեղացնելու, նրանց սոցիալական կազմը «պրոլետարացնելու», ինչպես նաև կուսակցական համակազմը նպատակահարմար հաշվառելու, փոփոխելու և բաշխելու անհրաժեշտությամբ: Նոմենկլատուրային համակարգի արմատավորման խնդիրներից էր, կուսակցականացնելով բոլոր տեսակի հիմնարկությունները, կազմակերպությունները և ձեռնարկությունները,

դրանց ղեկավարումն ամբողջապես հանձնել կոմունիստներին՝ ըստ իրենց գիտելիքների, կազմակերպական ունակությունների, կուտակած փորձի և պաշտոնների անվանացանկում զբաղեցրած կարգի ու տեղի:

Եվ վերջապես, նոմենկլատուրային բյուրոկրատական ապարատի առաջացման կարևոր հիմնապատճառներից պետք է համարել սոցիալիզմի խորհրդային մոդելի համաժողովրդական հայտարարված **պետական սեփականությունը** և դրա վրա հիմնված խորհրդային տնտեսակարգը: «Մենք,- գրում էր Վ. Լենինը ՆԷՊ-ի պայմաններում,- ոչ մի «մասնավոր» բան չենք ճանաչում, մեզ համար տնտեսության բնագավառում **ամեն ինչ հանրային իրավական** է, բայց ոչ մասնավոր: Մենք ընդունում ենք **միայն** (ընդգծումները Լենինինն է; - Ա. Հ.) պետական կապիտալիզմ, իսկ պետությունն այդ մենք ենք»[1]: Խնդիրն այն է, որ հին տնտեսական-սեփականատիրական հարաբերությունների արմատախիլ անելը և գրեթե ամեն ինչը պետականացնելը պետք է առաջ բերեր կազմակերպող, կառավարող, ղեկավարող, տնտեսավարող կադրերի ու մասնագետների մեծ պահանջարկ, որի միակ մատակարարը դարձյալ պետք է լիներ կուսակցական խողովակը, նրա պատրաստած հիերարխիկ բյուրոկրատական կադրային բանկը: Պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ հանդես եկող կուսակցական-պետական նոմենկլատորային բյուրոկրատիայի վտանգի մասին էր զգուշացնում ռուս մեծ մտածող ու փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը: Նա գրում էր. «Պրոլետարիատի դիկտատուրան, ընդունելով և ուժեղացնելով պետական իշխանությունը, առաջ կբերի վիթխարի բյուրոկրատիա՝ սարդոստայնի նման պատելով ամբողջ երկիրը և իրեն ենթարկելով ամեն ինչ: Այս նոր՝ խորհրդային բյուրոկրատիան ավելի ուժեղ կլինի, քան ցարական բյուրոկրատիան, կստեղծվի նոր արտոնյալ դասակարգ, որը կարող է,

---

[1] Տես *Լենին Վ. Ի.*, ԵԼԺ, հ. 44, Ե., 1982, էջ 471:

դաժանորեն շահագործել ժողովրդական զանգվածները: Եվ դա էլ տեղի է ունենում»[1]:

Այսպիսով՝ ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է հետևեցնել, որ կուսակցական նոմենկլատուրայի առաջացումը պայմանավորված է եղել և՛ Ռուսաստանի պատմաքաղաքական անցյալով, և՛ ռուս ժողովրդի ազգիալական հոգեբանությամբ, և՛ բոլշևիկների հաստատած մենատիրական քաղաքական ու տնտեսական վարչակարգով: Եվ այդ իմաստով նոմենկլատուրային համակարգի ձևավորումը չի կարելի կապել միայն Ի. Ստալինի անձի հետ, թեև նրա դերակատարությունն այդ գործում, անշուշտ, մեծ է եղել:

Քաղաքացիական կռիվների պայմաններում, ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարի ժամանակ, (1919 թ. մարտ) անհրաժեշտություն զգացվեց ստեղծել օպերատիվ գործող կուսակցության բարձրագույն քաղաքական մի մարմին՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի (ԿԿ) **Քաղբյուրո**՝ երկրի առջև ծառացած անհետաձգելի խնդիրները օպերատիվ կերպով լուծելու համար, չսպասելով ԿԿ-ի հերթական պլենումի հրավիրմանը: Համագումարում ընդունված կուսակցության նոր կանոնադրության 25-րդ կետով՝ «ԿԿ-ը ստեղծում է քաղաքական բյուրո՝ քաղաքական աշխատանքների համար, նաև կազմ. բյուրո և քարտուղարություն»[2]: Քաղբյուրոյի կազմի մեջ մտան Ժողկոմխորհի նախագահ Վ.Ի. Լենինը, Կենտկոմի քարտուղար Ն. Բ. Կրեստինսկին, Ռազմա-հեղափոխական խորհրդի (ՌՀԽ) նախագահ, Ռազմական և ծովային գործերի ժողկոմ Լ.Դ. Տրոցկին, Ազգությունների գործերի ժողկոմ Ի. Վ. Ստալինը, թեկնածուներ՝ «Պրավդայի» խմբագիր Ն. Ի. Բուխարինը, Պետրոգրադի խորհրդի նախագահ Գ. Ե. Զինովևը, Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) նախագահ Մ. Ի. Կալինինը:

---

[1] Տե՛ս *Бердяев Н. А.*, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 105.
[2] Տե՛ս ՍԿԿԿ բանաձևերում, (1917–1922 թթ.), հ. 2, Ե., 1986, էջ 267:

ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարի արդյունքով, ինչպես ասվեց, ստեղծվեց նաև ԿԿ-ի քարտուղարություն: Սկզբում նրանում աշխատում էր ընդամենը 5 մարդ: Արդեն 1921 թ. աշխատանքի էր ընդգրկված 600 մարդ[1]: Քարտուղարությունը վերահսկում ու համակարգում էր ԿԿ-ի բոլոր բաժանմունքների աշխատանքները: Ի դեպ, սկզբում՝ 1918 թ. հունվարին, փոքրաթիվ էր նաև աշխատանքի շատ մեծ ու բազմաշերտ ծավալ ընդգրկող Վ. Լենինի գլխավորած ժողկոմխորհի ապարատը: Նրա աշխատակիցների կազմը Վ. Բոնչ-Բրուևիչի և քարտուղար Ն. Գորբունովի հետ միասին հաշվվում էր 58 մարդ[2]: Համեմատության համար նշենք, որ 1923 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՍԽՀ ժողկոմխորհի աշխատակազմը եղել է 67 մարդ: Ցուցակը գլխավորել են նախագահ Ս. Լուկաշինը և տեղակալ Ա. Մռավյանը: Սակայն ցուցակում ներառված են եղել բոլորը՝ ընդհուպ մինչև սպասարկող բանվորները[3]:

ԿԿ-ի Քաղբյուրոյի և հատկապես քարտուղարության աշխատաոճում փոփոխություն սկսվեց այն բանից հետո, երբ ՌԿ(բ)Կ 11-րդ համագումարից (1922 թ. մարտ-ապրիլ) հետո ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընտրվեց Ի. Ստալինը, տեղակալներ՝ Վ. Մոլոտովը և Վ. Կույբիշևը: Ի. Ստալինի կուսակցության բարձրագույն ղեկավար պաշտոնում նշանակվելը գործնականում կարելի է համարել նոմենկլատուրային համակարգի ձևավորման գործընթացի սկիզբը: Ի դեպ, մինչ այդ, սկսած ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարից, այդ պաշտոնը զբաղեցրել են Ն. Կրեստինսկին (1919-1921 թթ.) և Վ. Մոլոտովը (1921-1922 թթ.): Սկզբում գլխավոր քարտուղարի (գենսեկի) պարտականությունների մեջ մտնում էին ԿԿ-ի պլենումների կազմակերպումը, կուս. համագումարների և Քաղբյուրոյի նիստերի վարումը: Կադրերի խնդրով զբաղվում էին ԿԿ-ի երկու առա-

---

[1] Տե՛ս *Верт Никола*, История Советского государства 1900–1991, М., 1992, с. 146.

[2] Տե՛ս *Ирошников М. И.*, Создание советского центрального государственного аппарата. (совнаркомов и народные комиссариты), октябрь 1917 г. -- январь 1918 г., М., 1966, с. 91.

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 1ա, թ. 56–57:

ջատար՝ հաշվեբաշխիչ և կազմակերպահրահանգչական բաժին-ները[1].

ՌԿ(բ)Կ II-րդ համագումարից հետո ԿԿ-ի քարտուղարության կշիռը մեծացավ: Շուտով Ի. Ստալինն իր խնամակալության տակ վերցրեց ԿԿ-ի վերոնշյալ երկու առավել կարևոր բաժինները, և դրանով ուժեղացավ քարտուղարության դերը: Այդպիսով՝ ԿԿ-ի երեք կարևոր ստորաբաժանումներ՝ քարտուղարությունը, հաշվեբաշխիչ և կազմակերպահրահանգչական բաժիններն անցան Ստալինի անմիջական ղեկավարության ներքո, որն, ի դեպ, իսկույն դարձավ Լ. Տրոցկու, «Բանվորական օպոզիցիայի», «Դեմոկրատական ցենտրալիստների» կամ, այսպես կոչված, դեցիստների և այլ ներկուսակցական ընդդիմադիր խմբակցությունների քննադատության թիրախ: Այդ առիթով էլ սկսեց ծավալվել հատկապես **Տրոցկի-Ստալին** ներկուսակցական ու անձնական հակամարտությունը: Այս համապատկերում Վ. Լենինը անառարկելի հեղինակություն էր: Եվ քանի դեռ նա կենդանի էր, կարողանում էր պահպանել համերաշխությունը կուսակցության ներսում: Լենինի մահից հետո ամեն ինչ կտրուկ փոխվեց: Սրվեց իշխանության բարձրագույն ղեկի համար պայքարը:

Հետխորհրդային շրջանում հրապարակված վավերագիր նյութերը ցույց են տալիս, թե ինչպես Ի. Ստալինը, հենվելով իրեն հավատարիմ համախոհների վրա, աստիճանաբար իր ձեռքում էր կենտրոնացնում կուսակցական-պետական ապարատի կարևորագույն լծակները[2]. Ի. Ստալինը, ստեղծելով կուսապարատ իր հավատարիմ մարդկանցից, մյուս կողմից՝ ազատում կամ ապարատից հեռացնում էր իր համար ոչ վստահելիներին, նրանց, որպես կանոն, ուղարկելով դիվ. աշխատանքի: Օրինակ, Տրոցկու կողմնակիցներ համարվող ԿԿ-ի քարտուղար Ն. Կրեստինսկին

Տես История коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А.Б., М.,2014, с. 162.

Տես Большевистское руководство. переписка (1912–1927), сборник документов, М., 1996, с. 5–6.

ուղարկվեց Գերմանիա, Ա. Իոֆֆեն՝ Չինաստան, Ք. Ռակովսկին՝ Անգլիա և այլն: Ստալինը կուսակցության այն եզակի ղեկավար անդամներից էր, որը միաժամանակ ընդգրկված էր ԿԿ-ի երեք առանցքային մարմիններում՝ Քաղբյուրոյում, ԿԿ-ի կազմբյուրոյում և ԿԿ-ի քարտուղարությունում ու փաստորեն ղեկավարում էր կուսապարատի այդ երեք առանցքային օղակները: Բացի այդ, նա միաժամանակ ղեկավարում էր երկու՝ Ազգությունների գործերի և Բանվորա-գյուղացիական տեսչության (ԲԳՏ) կոմիսարիատները: Նա շուտով իրեն ենթարկեց ոչ միայն կուսակցական, այլև պետական ապարատը, որոնք, իհարկե, շատ չափորոշիչներով նույնական էին: Վ. Լենինի հայտնի կտակում արված ընդդատությունը Ստալինի հասցեին ոչ մի հետևանք չունեցավ, և նա կարողացավ պահպանել իր բոլոր պաշտոններն ու բարձր դիրքը: Ստալինը հետագայում կուսակցությունը և նրա ապարատը դարձրեց զենք՝ իր անձնիշխանությունը հաստատելու համար: Սկսած Վ. Լենինի հիվանդությունից՝ 1922/23 թթ., հիմնականում նա էր կատարում կադրերի ընտրությունը և նշանակումը: Նշանակումների համար հաշվի էր առնվում ոչ այնքան կրթությունը և մասնագիտական կարողությունը, որքան «պրոլետարական ծագումը» և անձնական նվիրվածությունն իրեն: Ժամանակի ընթացքում Ստալինն իրեն շրջապատեց վստահելի մարդկանցով՝ Վ. Մոլոտով, Վ. Կույբիշև, Լ. Կագանովիչ, հետագայում՝ Ս. Կիրով, Գ. Օրջոնիկիձե, Ա. Ժդանով, Ա. Միկոյան, Կ. Վորոշիլով, Գ. Մալենկով, Լ. Բերիա և ուրիշներ: Ղեկավար կադրերի այդ շերտն էլ հետագայում դարձավ Ի. Ստալինի բաղաքական հենարանը:

Այդուհանդերձ, խոսելով Ստալինի գործոնի մասին, մեր կարծիքով, չի կարելի ո՛չ գերագնահատել և ո՛չ էլ նսեմացնել նրա խաղացած դերը ԽՍՀՄ-ում նոմենկլատուրայի ստեղծման գործում: Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ փաստարկները:

Նախ, մինչ Ի. Ստալինի գենսեկ դառնալը երկիրը գտնվում էր բաղաքացիական պատերազմի մեջ կամ էլ հենց նոր էր դուրս

եկել այդ վիճակից ու հայտնվել էր ահավոր քայքայման ու սովի պայմաններում: Եվ քանի դեռ երկիրը գտնվում էր պատերազմում, պաշտոնների համակարգման ու նոմենկլատուրայի ձևավորման խնդիրը հրատապ չէր, որովհետև կուսակցության մարդկային ուժերն ու երկրի ռեսուրսները հիմնականում կենտրոնացված էին պատերազմում հաղթելու և դրանով իշխանությունը փրկելու: Իսկ երբ 1920-ական թվականների սկզբներին անցում կատարվեց խաղաղ աշխատանքի, հարկավոր էր փոխել կուսակցության աշխատանքի ձևերն ու մեթոդները: Մասնավորապես, հարկավոր էր ստեղծել կադրային համակարգված բանակ, որի ջանքերը պետք է նպատակամղվեին երկրի ժող. տնտեսությունը վերականգնելու և իրենց պատկերացրած սոցիալիստական շինարարությունը իրագործելու: Եվ հենց այդ հասունացած խնդիրների լուծմանը ձեռնամուխ եղավ նորընտիր Գենսեկը՝ աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացնելով կուսակցական և պետական ողջ ապարատը:

Բայց մյուս կողմից էլ՝ չի կարելի ասել, որ եթե չլիներ Ստալինը, ապա նոմենկլատուրային համակարգ չէր ստեղծվի: Բնավ էլ՝ ոչ: Այդ համակարգի ստեղծումը բխում էր կուսակցության՝ որպես խորհրդային հասարակության և պետության ավանգարդի մասին լենինյան ուսմունքից, կոմունիստական-մենատիրական գաղափարախոսությունից ու ձգտումներից: Դրա համար էլ այդ համակարգը պահպանվեց մինչև վերջ՝ ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական ամբողջատիրության վախճանը:

Արդեն ԿԿ-ի 1922 թ. հատուկ խորհրդակցությունում մշակվեց կուսաշխատողների հաշվառման և պաշտոնների նշանակման միասնական կարգ՝ ըստ նրանց որակավորման աստիճանի և զբաղեցրած պաշտոնի: Սահմանվեցին աշխատողների խմբերը՝ համառուսական, երկրամասային, նահանգային և գավառային (օկրուգային) մակարդակներով: Յուրաքանչյուր մակարդակի պաշտոնների ցանկն իր հերթին տրոհվում էր երեք աստիճանի (1-ին, 2-րդ, 3-րդ) խմբերի: Խմբերն ունեին իրենց համարները, որոնցում

ներառում էին պաշտոնների ցուցակները[1]: Մեր կարծիքով, ԿԿ-ում մշակված պաշտոնների ցուցակագրման ու նշանակման այդ կարգը կարելի է համարել խորհրդային երկրում կուսակցական նոմենկլատուրայի (անվանակարգի կամ անվանացանկի) ձևավորման սկիզբը:

ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարի (1923 թ. ապրիլ) պահանջների ոգով ԿԿ-ն հաստատեց, այսպես կոչված, **թիվ 1 ցուցակը**, որում ներառված էին **4 հազար** պաշտոններ: Այդ պաշտոնները կարող էին զբաղեցվել միայն ԿԿ-ի որոշումով: Կադրերի պաշտոնների տեղաբաշխումը կուսակցության մեջ և կառավարությունում ստացավ **նոմենկլատուրա** կամ անվանակարգ անվանումը[2]:

Նոմենկլատուրա կոչվածը մի կողմից պաշտոնացանկ էր, որը գտնվում էր ՌԿ(բ)Կ ԿԿ-ի, հանրապետությունների ԿԿ-ների, երկրամասերի, մարզկոմների, քաղկոմների և կուսշրջկոմների ենթակայության շրջանակներում, մյուս կողմից՝ մարդկանց այն խմբաքանակները, որոնք կուսակցության վերը նշված մարմինների կողմից նշանակվում էին համապատասխան պաշտոնի: Կնշանակի՝ կուսակցական անվանացանկն իր մեջ ներառում էր կուսակցության ԿԿ-ից մինչև կուսքաղկոմ և շրջկոմ ընկած միջակայքում մարդկանց, պաշտոնյաների սանդղակը, որոնց համար կազմվում էր պաշտոնների հաշվառման, առաջադրման և նշանակման հատուկ ցուցակ: Ընդ որում՝ այս կամ այն նոմենկլատուրային ղեկավարի ընտրությունը և հաշվետու լինելն իր կազմակերպության առաջ կրում էր սոսկ ձևական բնույթ: Նոմենկլատուրային պաշտոնյան վարից վեր հաշվետու և պատասխանատու էր իրեն նշանակող վերադաս կուսապարատի առաջ: Ընդ որում՝ խորհրդային-կուսակցական նոմենկլատուրան իր մեջ ներառում էր երկրի ղեկավարման ու կառավարման բոլոր ոլորտները՝ ստորինից մինչև ամենաբարձրը: Ըստ էության, բոլոր պաշտոնների նշանա-

---

[1] Տե՛ս История коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А. Б., М., 2014, с.171.

[2] Տե՛ս История России XX век (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 793.

կումները կատարվում էին ԿԿ-ի կողմից կամ էլ նախապես ԿԿ-ին տեղեկացնելով ու նրա հետ համաձայնության գալու միջոցով:

Այսպիսով, 1920-ական թվականների սկզբներից՝ Ի. Ստալինի «նենսեկության» ժամանակներից, արմատավորվեց նոմենկլատուրային գործելակերպը: Դրանով մեծացավ կուսապարատի դերը կադրերի ընտրության և նշանակման գործում՝ միաժամանակ ուռճացնելով ու բյուրոկրատացնելով այն:

□

□ □

Պաշտոնների ցուցակագրման համակարգը միասնական է եղել ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Այն, ինչը մշակում էր կենտրոնը, այդ նույն սկզբունքը պարտադիր կարգով կիրառելի էր խորհրդային մյուս հանրապետությունների, այդ թվում՝ ՀՍԽՀ-ի համար: Հայտնի է, որ ՌԿ(բ)Կ ծրագիրն ու կանոնադրությունը ենթադրում էին միասնական, խիստ կարգապահ, վերից վար կենտրոնացված կուսակցություն: Ազգային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի կուսակցական կազմակերպությունն օգտվում էր կուսակցության **մարզային** կամ **նահանգական** կազմակերպության իրավունքներից և ամբողջապես ենթակա էր ՌԿ(բ)Կ ԿԿ-ին[1]:

Խնդիրը կոնկրետացնելով Հայաստանի վերաբերյալ՝ հարկ է նշել, որ 1920-ական թթ. սկզբներին պետական ապարատի կուսակցականացման և նոմենկլատուրային համակարգի արմատավորման խնդիրները մեզանում շատ սուր չէին դրված, որովհետև քայքայված տնտեսության ու սովի պայմաններում հանրապետության կառավարումը տակավին բնականոն հունի մեջ չէր մտել, դեռ չկար բավարար, սոցիալապես ու գաղափարապես վստահելի, ուայալ կուսակցական ղեկավար կադրային կազմ: Դրանց ներկայացուցիչները հիմնականում ներհոսում էին դրսից, երկրում տիրում էր անգրագիտությունը, այդ թվում նաև՝ կոմունիստների շրջանում: 1924 թ. անգրագետ էր Հայաստանի կոմու-

---

[1] Տես ՍՄԿԿ բանաձևերում, հ. 2, Ե., 1986, էջ 137, հ. 3, Ե., 1987, էջ 633:

նիստների 12,6 տոկոսը, իսկ 75,3 տոկոսն ուներ ընդամենը տարրական կրթություն[1]: Գրագիտություն չունեին կառավարման ստորին օղակների շատ պաշտոնյաներ, այդ թվում՝ գյուղական խորհուրդների նախագահների զգալի մասը: Այսպես՝ 1926 թ. անգրագետները և կիսագրագետները կազմել են գյուղխորհուրդների համակազմի շուրջ 60 տոկոսը: Այդ նույն ժամանակ գյուղխորհուրդների 816 նախագահներից անգրագետ էր 106-ը, իսկ 277-ը՝ կիսագրագետ[2]: Ուստի հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրության, կադրերի բաղաքականապես ու կրթական մակարդակով դեֆիցիտի պայմաններում նոմենկլատուրային համակարգի արմատավորման խնդիրը դեռևս օրախնդիր չէր: Սակայն հասկանալի է, որ Կենտրոնի հրահանգով ու օրինակով նույնը պետք է կիրառվեր նաև Հայաստանում:

Սկզբնափուլում՝ առաջին մեկ տարում (1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. հունվար), Հայհեղկոմը, որը միաժամանակ կառավարություն էր, ինքն էր իրականացնում կադրային նշանակումները: Ինչպես արդեն ասվել է, կոմիսարիատներից առավել մեծ էին Ն. Գ. ժողկոմատի գործառույթները՝ իբրև ՀՍԽՀ բարձրագույն վարչական մարմին, ինչպես որ նախատեսված էր Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 14-ի դեկրետով[3]: Ի դեպ, համեմատության համար նշենք, որ ի սկզբանե նման մեծ և բազմաճյուղ գործառույթ է, ունեցել նաև Հայաստանի առաջին հանրապետության Ն. Գ. նախարարությունը, որը գլխավորում էր Արամ Մանուկյանը:

Ինչ վերաբերում է Հայկոմկուսի ԿԿ-ին, ապա փաստերը ցույց են տալիս, որ 1920-1921 թթ. գործնական քաղաքականության մեջ նա առանձնապես մեծ դերակատարություն չի ունեցել հատկապես այն ամիսներին, երբ տեխնիկական կամ պատասխանատու բարտուղարը Գևորգ Ալիխանյանն էր: Ինչպես արդեն ասվել է,

---

[1] Տե՛ս Коммунистическая партия Армении в цифрах и документах, 1920-1980, Е., 1980, с. 20.
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 8, թ. 16–17:
[3] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, Ե., 1960, էջ 426:

հանրապետության ամբողջ գործադիր, օրենսդիր, կարգադրիչ, նույնիսկ դատական իշխանության գլխավոր դերակատարը Հայ-հեղկոմ-կառավարությունն էր:

Խորհրդային իշխանության առաջին ամիսներին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի ապարատը կառուցվածքային առումով դեռևս լիակատար չէր ձևավորվել: Գործում էին ԿԿ-ը, նրա նախագահությունը կամ քարտուղարությունը և կազմբաժինը, որոնք ավելի հաճախ զբաղված էին համապատասխան կադրերի առաջադրման և ընտրության գործով: ՀԿ(բ)Կ 1-ին համագումարը (1922 թ. հունվար) ընտրեց Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով (ԿՎՀ)՝ կազմված 3 անդամից և 1 թեկնածուից: Նոր-նոր էին նշանակվում գավառային հեղկոմների նախագահները: Մեզ հայտնի է, որ ԿԿ-ի կազմբյուրոն 1921 թ. հունվարի 12-ին նիստ է գումարել և Գ. Թովմասյանին նշանակել Էջմիածնի հեղկոմի նախագահ, իսկ հունվարի 21-ին Գ. Ալիխանյանը Նոր Բայազետի հեղկոմի անդամ է երաշխավորել Եսայանին, որի վերաբերյալ գրություն է ուղարկել Ն. Գ. ժողկոմատ[1]:

Փետրվարյան ապստամբության փուլում Հայաստանի հյուսիսում հայտնված ԿԿ-ի քարտուղար Գ. Ալիխանյանը 1921 թ. մարտի սկզբներին Ղազախ-Դիլիջանի շրջանից հեռագրում էր Բաքու՝ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյին ու հայտնում, որ «մարտի 4-ից սկսել է գործել Հայկոմկուսի ԿԿ-ի բյորոն, որի մեջ մտնում են ԿԿ-ի անդամներ՝ Ալիխանյանը, Լալայանը, Մռավյանը, Խաչիևը, Աղասին և բանակի ներկայացուցիչ Պոլյանսկին»[2]:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի պլենումի 1921 թ. մայիսի 19-ի նիստում ընտրվում է ԿԿ-ի քարտուղարություն՝ կազմված երեք հոգուց՝ Ս. Լուկաշին՝ պատասխանատու քարտուղար և քարտուղարներ՝ Ա. Կարինյան ու Հ. Ազատյան[3]: Ավելի ուշ՝ 1923 թ. ապրիլին, 1922 թ. սկզբներից ԿԿ-ի քարտուղարի պաշտոնը զբաղեցնող Աշոտ Հովհաննիսյանը

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 7, թ. 61–62:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 48, թ. 1:
[3] Տես Նույն տեղում. գ. 39, թ. 4 (շրջերես):

համարվեց ԿԿ-ի **գլխավոր քարտուղար**[1] հավանաբար անվանապես ընդօրինակելով ՌԿ(բ)Կ ԿԿ-ի գլխավոր քարտուղարին: Սակայն Հայաստանում և մյուս ազգային հանրապետություններում գլխավոր քարտուղար հասկացությունը չի գործածվել, այլ պարզապես՝ քարտուղար կամ պատասխանատու քարտուղար: Ավելի ուշ՝ 1930-ական թթ., դրանց փոխարեն հաստատուն կերպով կիրառության մեջ մտավ **առաջին քարտուղար** եզրույթը:

Սկսած 1921 թ. մայիսից՝ պարբերաբար (շաբաթը մեկ անգամ) հրավիրվել են ԿԿ-ի նախագահության նիստեր, որին, ԿԿ-ի քարտուղարներից բացի, ըստ անհրաժեշտության մասնակցել են ԿԿ-ի անդամներ, նաև կուսակցական պատասխանատու աշխատողներ, կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի անդամներ: Օրինակ՝ ԿԿ-ի քարտուղարության մայիսի 9-ի նիստում որոշվում է, ԿԿ-ին կից կազմակերպել **Կազմբյուրո** իր ենթաբաժիններով՝ հաշվառման-բաշխման, կազմակերպական-հրահանգչական, տեղեկատվական: Կազմբաժնի վարիչ է նշանակվել Եր. Մելիքը[2]: ԿԿ-ի 1921 թ. հուլիսի 16-ի նիստում լսվել են մի շարք գավիեղկոմի նախագահների և տեղակալների ազատման և նորերի նշանակման մասին հարցերը: Օրինակ՝ Լոռիի գավիեղկոմի նախագահ է նշանակվել Բ. Օհանջանյանը, իսկ օգոստոսի 22-ի նիստով Ալեքսոլի գավիեղկոմինը՝ Ա. Շահգելդյանը, տեղակալներ՝ Ա. Եսայանը, Հ. Հովսեփյանը և Հ. Գյուլիքևխյանը և այլն: Ինչպես տեսնում ենք, նորնոր տեղի էր ունենում կուսակցական տարբեր օղակների ձևավորումը: Առավել փոքրաթիվ ու թույլ էին կուսակցական կազմակերպությունները: ՀԿ(Բ)Կ 1-ին համագումարի նախօրյակին (1922 թ. հունվար) հանրապետությունում կար 9 գավառային և 260 սկզբնական կուսակցական կազմակերպություն (բջիջ), որոնցից 76-ը՝ քաղաքներում և 184-ը՝ գյուղական վայրերում՝ 6012 անդամ-թեկնածուով[3]:

---

[1] Տես նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 114, թ. 73:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 43, թ.1, «Խորհրդային Հայաստան», 2 հունիսի 1921 թ.:
[3] Տես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 338:

1920-1922 թթ. դեռևս խոսք չէր կարող լինել Հայկոմկուսի ԿԿ-ի ապարատի կայացման մասին: ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարում (1923 թ. փետրվար) պատգամավոր Դանիել Դզնունին, հանդես գալով մտքերի փոխանակության ժամանակ, ակնարկում էր, որ դեռևս բացակայում է ԿԿ-ի ապարատը[1]: Նույն կերպ, 3-րդ համագումարում (1924 թ. մայիս) ԿԿ-ի կազմակերպական հաշվետու զեկուցմամբ հանդես եկած քարտուղար Աշ. Հովհաննիսյանը խոստովանում է, որ «մինչև կուսակցության 2-րդ համագումարը (այսինքն՝ մինչև 1923 թ. փետրվար – Ա. Հ.) **ԿԿ-ը չի ունեցել ապարատ**: Եվ որ այդ կենտրոնական ապարատը ստեղծվել է վերջին մեկ տարում»[2].

Կարելի է ասել, որ Հայկոմկուսի ԿԿ-ի ապարատի կայացումը տեղի է ունեցել 1923/24 թթ ընթացքում: Կուսակցության 3-րդ համագումարից հետո՝ 1924 թ. հունիսի 15-ի դրությամբ, ԿԿ-ի ապարատն ունեցել է հետևյալ հաստիքները և համակազմը.

ԿԿ-ի քարտուղար՝ 2, ոռճիկը՝ 367ռ.

գործերի վարչություն՝ 18 հաստիք

կազմբաժին՝ 14

ագիտ-պրոպագանդայի բաժին՝ 8

ֆինբաժին՝ 5

կինբաժին՝ 4

կուս. պատմության բաժին՝ 3

Կենտ. վերահսկիչ հանձնաժողով (ԿՎՀ)՝ 4 հաստիք

ընդամենը՝ 58 հաստիք[3]:

ԿԿ-ի ապարատին կից գործել է ՀԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեն (հարկ է նշել, որ տասնամյակներ շարունակ ԿԿ-ը և Երքաղկոմը գտնվել են իրար հարևանությամբ՝ նույն շենքում), որի հաստիքները 1924թ. հունիսի դրությամբ հետևյալն էր.

ընդհանուր բաժին՝ 10 հաստիք

կազմ. բաժին՝ 16

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 19:
[2] Նույն տեղում, ց. 4, գ. 1, թ. 23:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 17, թ. 14:

ագիտ. բաժին՝ 3
կին. բաժին՝ 3 հաստիր

Ընդամենը՝ 32 հաստիր
Կուս. ԿԿ-ի ապարատի համակարգի մեջ են մտել նաև գավկոմների հաստիքները, որոնց պատկերը այդ նույն ժամանակ հետևյալն էր.
Երևանի գավկոմի հաստիքակազմը՝ 25 մարդ,
Լենինականի գավկոմինը՝ 26
Նոր Բայազետինը՝ 19
Էջմիածնինը՝ 14
Մեղրիինը, որը լինելով շրջան, ունեցել է գավկոմի կարգավիճակ՝ 4 հաստիր:
Մյուս՝ Դիլիջանի, Լոռի-Փամբակի, Եղեգնաձորի և Զանգեզուրի կուս. գավկոմների հաստիքների վերաբերյալ տվյալներ չկան[1]:
Ոչ լրիվ տվյալներով, ահա՛ սրանք էին ԿԿ-ի 1924 թ. պաշտոնների այն հաստիքակազմը, որը, հետագայում ուռճանալով, պետք է դառնար կուսակցական անվանացանկի միջուկը:

2. *Հարվածային փայեր և արտոնություններ: Կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողներ*

Խորհրդային իշխանության հռչակման առաջին իսկ օրերից սահմանվեցին հատուկ **փայեր** (пайки) և արտոնություններ կուսակցականների, պետական ծառայողների, ինչպես նաև խորհրդային իշխանության դասակարգային բնույթն ընդգծելու համար նաև արդյունաբերական բանվորների համար:

Տակավին քաղաքացիական կռիվների շրջանում և հետագա մի քանի տարիներին Ռուսաստանի արդյունաբերական կենտրոն-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 3–4, 19–28:

ների բանվորների համար սահմանվել էին քարտային փայեր 3 կարգախմբի բանվորների համար: Օրինակ, տվյալներ կան, որ Պիտերում 1918 թ. 1-ին կարգի քարտ ունեցող բանվորների համար օրական տրվում էր 1 ֆունտ այուր կամ վարսակ, 2-րդ կարգի համար՝ 0,5 ֆունտ, իսկ 3-րդի՝ 1/4 ֆունտ[1]: Այդ միջոցառումը նպատակ ուներ գոնե նվազագույն կալորիականությամբ պահպանել բանվորների աշխատունակությունը:

Խորհրդային իշխանության արշալույսին առանձնապես մեծ չի եղել խզումը պետական բարձր պաշտոնյաների և որակյալ բանվորների աշխատավարձերի միջև: Դեռ 1917 թ. «Ապրիլյան թեզիսներում» Վ. Լենինը նշում էր, որ պաշտոնյաների աշխատավարձը չպետք է գերազանցեր որակյալ բանվորի միջին աշխատավարձը: Հետաքրքիր է, որ Ժողկոմխորհի 1917 թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ Ժողկոմխորհի նախագահի և կոմիսարների համար սահմանվել էր 500-600 ռուբլի հաստիքադրույք, իսկ այդ նույն ապարատի առաքիչ (ցրիչ) տղաների համար՝ 200 ռ., հեռագրիչների ու հավաքարարների համար 300 ռ. և այլն[2]: Սակայն ժամանակի ընթացքում չինովնիկների և շարքային աշխատողների աշխատավարձերի միջև խզումը ավելի մեծացավ:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում աշխատավարձերի չափերի միջև խզումը, փայերի և արտոնությունների համակարգը խթանում էր կարիերիզմին ու ապարատի բյուրոկրատացմանը: Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանում 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո, այսպես կոչված, հարվածային փայեր և արտոնություններ են սահմանվել կուսակցական և խորհրդային պատասխանատու աշխատողների, բանվորների ու ծառայողների համար:

Հայհեղկոմի Ժողկոմխորհի վերակազմման առաջին իսկ օրերից կառավարության 1921 թ. մայիսի 24-ի նիստում որոշվեց Երևանի և գավառների խորհրդային և կուսակցական պատասխա-

---

[1] Տես *Гимпельсон Е. Г.*, Советский рабочий класс 1918–1920 гг., М., 1974, с. 250.
[2] Տես *Ирошников М. П.*, նշվ. աշխ., էջ 90, 190, 250–251:

նատու աշխատողներին տալ **հարվածային փայ**[1]: Պարենժողկոմ Ա. Բեկզադյանի գեկուցմամբ սահմանվեց բաց թողնել 500 հարվածային փայ, որը տրվելու էր Երևանի և գավառների կուսակցական ու խորհրդային պատասխանատու աշխատողներին[2]: Ժողկոմխորհի քարտուղարության (քարտուղար՝ Միք. Ղարաբեկյան) մայիսի 25-ին Հայկոմկուսի ԿԿ-ին ուղղված շտապ գրությամբ խնդրում էր. «երկու օրում ներկայացնել ԿԿ-ի և Երևանի կոմիտեի պատասխանատու աշխատողների ընդհանուր ցանկը, որոնց պետք է հատկացվի հարվածային փայ»[3]: Մայիսի 28-ին ժողկոմխորհի քարտուղարություն է ուղարկվել ԿԿ-ի և Երքաղկոմի պատասխանատու աշխատողների ցուցակը:

Հատկացվելիք հարվածային փայի չափաբաժինները, ըստ կուսակցական կամ պետական այս կամ այն պատասխանատու աշխատողների գրաղեցրած դիրքի ու պաշտոնի, տարբեր են եղել: Օրինակ՝ 1921 թ. կեսերին Երևան քաղաքում խորհրդային պատասխանատու աշխատողների և մասնագետների մեկամսյա փայը կազմել է 20 ֆունտ ալյուր, 10 ֆ. միս, 15 ֆ. ձուկ, 500 գրանակ ծխախոտ, երեք տուփ լուցկի, 2 ֆ. աղ, 1 հատ ամերիկյան օճառ, 10 ֆ. կանաչի, 2 տուփ կաթ կամ 1 ֆ. շաքար[4]: Փայեր ստանալու կապակցությամբ ՀՍԽՀ Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) ամփոփագրերից մեկում (1922 թ. մարտ) կարդում ենք. «Խորհրդային ծառայողները ստանում են պայոկներ (փայաբաժիններ – Ա. Հ.) և ժամանակին՝ աշխատավարձ, որի համար նրանց տրամադրությունը լավացել է: Մինչդեռ ցածր կարգի ծառայողները դժգոհ են իրենց աշխատավարձի չափից»[5]: Հացի ամենամյա փայաբաժին են ստացել նաև Հայաստանի կոմերիտմիության ԿԿ-ի, գավառային ու գավառակային աշխատակիցները:

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 32:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 58, թ. 26:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1. գ. 58, թ. 19:
[4] Տես Նույնը, թ. 27:
[5] Տես Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008, էջ 30:

Օրինակ՝ կան տվյալներ, որ 1922 թ. ապրիլ և հունիս ամիսներին հացի պայոկ են ստացել ՀԼԿԵՄ ԿԿ-ի 15 և ազիտպրոպագանդայի բաժնի 10 աշխատակիցներ[1]:

Ժողկոմխորհի նախագահության 1921 թ. հունիսի 7-ի որոշմամբ սահմանվել էր, թե ովքեր են ստանալու հարվածային փայ: Արհմիությունների խորհրդի ներկայացրած ցուցակ-սխեմայի համաձայն՝ հարվածային փայ էին ստանալու մինչև 750 կուսակցական և խորհրդային պաշտոնատար անձինք. 400-ը՝ Երևանից, 350-ը՝ գավառներից: Սահմանվել էին հարվածային փայ ստացող հետևյալ կարգախմբերը.

1. Ժողկոմխորհի նախագահությունը և քարտուղարը,
2. ժողկոմիսարները և նրանց տեղակալները,
3. ժողկոմատների կոլեգիաների անդամները,
4. գավհեղկոմների նախագահները և անդամները,
5. շրջհեղկոմների նախագահները,
6. Հայկոմկուսի կենտկոմի անդամները,
7. Երևան քաղաքի և գավառների կոմիտեների անդամները,
8. կոմերիտմիության կենտկոմի նախագահության անդամները,
9. կոմերիտմիության գավկոմների պատասխանատու քարտուղարները,
10. կոմերիտմիության շրջկոմների քարտուղարները,
11. Հայաստանի արհմիությունների խորհրդի նախագահությունը,
12. արհմիությունների վարչության նախագահները կամ պատասխանատու քարտուղարները:

Եվ այսպես ավելի ցածր՝ մինչև 20-աստիճանանոց սանդղակ[2]: Հարվածային փայ ստացողների հենց այս 750-հոգիանոց պաշտոնատար անձինք փոքր ավելի ուշ ընդգրկվեցին նոր ձևավորված հանրապետության կուսակցական նոմենկլատուրայի ամենաբարձր կարգերում: Մի քանի ամիս անց՝ 1921 թ. հոկտեմբե-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 488, ց. 1, գ. 10, թ. 5, 7–8:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 43:

ին. մենք տեսնում ենք, որ ժողկոմխորհի նախագահության որոշմամբ (զեկուցել է պարենժողկոմը) հարվածային փայերի թիվը հասցվել է 1000-ի[1]: Ի դեպ, հարվածային փայ են ստացել «Խորհրդային Հայաստան» թերթի 8 աշխատակից[2]: Հարվածային փայ էր տրվում բոլշևիկների ընտանիքներին, ինչպես կենդանի, այնպես էլ զոհվածի[3]:

Ուշագրավ է, որ 1920-1921 թթ. շատ մեծ է եղել Հայհեղկոմի, իսկ 1921 թ. մայիսից՝ վերակազմված ժողկոմխորհի դերը, մանավանդ որ այն սկսեց գլխավորել ազգային նկարագիր ունեցող ճանաչված պետական և կուսակցական գործիչ Ա. Մյասնիկյանը: Հարվածային փայերը հատկացվում էին ժողկոմխորհի նախագահության որոշմամբ: Մթերքների բաշխումը կատարվում էին երեք ֆոնդերից՝ արհմիությունների, ժողկոմխորհի և ԿԿ-ի: ԿԿ-ի, կուսակցական ապարատի դեռևս լիովին չկայացվածության, կուսանդամների թվի սակավության պայմաններում կուսմարմինների դերակատարությունը մեծ չի եղել: Ինչպես արդեն ասվել է, առանձնապես նկատելի չի եղել ԿԿ-ի տեխնիկական քարտուղար Գ. Ալիխանյանի դերը: Պատահական չէ, որ հարվածային փայ ստանալու ցուցակը գլխավորել է Ժողկոմխորհը: Այդ ցուցակում Հայկոմկուսի ԿԿ-ի անդամները 6-րդն էին:

Արդեն 1922-1923 թթ. սկսած՝ իրավիճակը փոխվում է, երբ կուսակցության բարձրագույն մարմինները՝ ԿԿ-ը, նրա քարտուղարությունը, ԿԿ-ի առանձին առաջատար բաժիններն են սկսում գլխավորել հարվածային փայ ստանալու, ուստի և հետագայում՝ նոմենկլատուրային ցուցակները: Դերակատարության նման փոփոխությունը պայմանավորված էր ոչ այնքան խորհուրդների ընտրություններով և պետական ընտրովի իշխանության մարմինների ստեղծումով, որքան 1922 թ. ապրիլից ՌԿ(բ)Կ ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընտրված Ի. Ստալինի կողմից կուսակցական ապա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 2, թ. 21:
[2] Նույն տեղում, թ. 25 /շրջևրևա/:
[3] Նույն տեղում, ց. 3, գ. 5, թ. 103-105:

ռատի՝ նրա քարտուղարության և բաժինների դերի ու գործառույթների մեծացման, կադրերի ընտրության ու նշանակման իմաստով, ինչն էլ 1923 թ-ից դարձավ Լ. Տրոցկու, «46-ի պլատֆորմը» ստորագրածների և ներկուսակցական մյուս ընդդիմադիրների ըննադատության թիրախ:

Պրոլետարական պետությունը, հավատարիմ իր դասակարգային էությանը, ՀԱԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 15-ի որոշմամբ, բանվորներին և ծառայողներին տրվելիք չափաբաժիններում մտցնում է որոշ լրացումներ ու փոփոխություններ, այն է՝ ա) բանվորները բաժանվում են երկու կարգի՝ սովորական և հարվածային և բ) հարվածային կարգի մեջ մտնում են գրաշարները, լեռնագործները, կաշեգործները և տրանսպորտի բանվորները: Երկու կարգի բանվորների ամսական փայի նորմաները հետևյալն էին

Թիվ	սովորական	հարվածային
	մանուֆակտուրա՝ 8 արշին*	մանուֆակտուրա՝ 8 արշին
1	օճառ՝ 1 ֆունտ*	նույնը՝ 1,5 ֆունտ
2	աղ՝ 3 ֆունտ	նույնը՝ 5 ֆունտ
3	կաթ՝ 1 տուփ	նույնը՝ 2 տուփ
4	ակաո՝ 0,5 ֆունտ	նույնը՝ 1 ֆունտ
5	ծխախոտ՝ 50 հատ	նույնը՝ 100 հատ
6	աղած ձուկ՝ 10 ֆունտ	նույնը՝ 15 ֆունտ
7	նավթ՝ 2 ֆունտ	նույնը՝ 3 ֆունտ

Ծառայողների վերաբերյալ տվյալներ չկան: Բանվորների փայերը տրվում էին հիմնականում արհմիության ֆոնդից, որովհետև բանվորությունը համարվում էր արհմիությունների ազդե-

Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 58, թ. 46:
* 1 արշինը հավասար է 71 սմ-ի:
* 1 ֆունտը հավասար է մոտ 0,45կգ-ի:

ցության հիմնական գոտին: Բանվորական փայերը պետք է համարել շատ էական, որովհետև 1921-1922 թթ. սովի ու համաճարակների առումով շատ ծանր տարիներ էին: Այդ շրջանում արձանագրվել են անգամ սովամահության դեպքեր[1]: 1921 թ. կեսերին ՀՍԽՀ-ում սովի էր մատնվել 209 հազար մարդ կամ ամբողջ բնակչության 30 տոկոսը[2]: Երաշտի ու անբերրիության պատճառով 1922 թ. գարնան սկզբին խորհրդային երկրում սովյալների թիվը հասնում էր 22 մլն.-ի, իսկ սովից մահացածների թիվը՝ 1 մլն. մարդ[3]:

Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ գնալով ավելի մեծ օժանդակություն էր ցույց տրվում կուսակցական և պետական ապարատի պատասխանատու աշխատողներին ոչ միայն հարվածային փայերի, այլև նրանց առողջության և հանգստի կազմակերպման առումով: ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի քարտուղարի 1921 թ. հունիսի 1-ի Կովկասի հանրապետությունների կենտկոմներին ուղղված գրությամբ առաջարկվում էր, որ կուսակցական պատասխանատու աշխատողներին Հյուսիսային Կովկասի առողջարաններում բուժվելու ու կազդուրվելու նպատակով յուրաքանչյուր կուսկազմակերպություն ներկայացնի որոշակի քանակի պահանջագիր՝ կից ՌԿ(բ)Կ ԿԿ-ի և ՌՍՖԽՀ առողջապահության կոմիսարի միջնորդագրով[4]: Այդ հիման վրա հունիսի 14-ի հրահանգով. «Կուսակցական և պետական ապարատի աշխատողներին տրվում էր հնարավորություն մեկնելու Հյուսիսային Կովկասի առողջարաններ՝ բուժվելու համար»[5]: Կենտրոնի և գավառների միջև առողջարանային տեղերի բաշխման համար ԿԿ-ի, ժողկոմխորհի և արի-

---

[1] Նույն տեղում, ց. 2, գ. 2, թ. 32:
[2] Տես *Хармандарян С. В.*, Армянская ССР в первый год Новой экономической политики (1921-1922), Е., 1955, с. 108.
[3] Տես «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922-1934 гг.), т. 1, часть I, М., 2001, с. 77.
[4] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 85, թ. 1:
[5] Տես նույն տեղում, գ. 58, թ. 42:

միության ներկայացուցիչներից պետք է ստեղծվեր հանձնաժողով[1]:

Եթե որևէ մեկը կուսակցական աշխատանքի կամ նոր պաշտոնի նշանակում էր ստանում, ապա նա անմիջապես ընդգրկվում էր տվյալ կարգի հարվածային փայ ստացողների ցանկում: Այսպես՝ ԿԿ-ի քարտուղարությունից 1922 թ. փետրվարի 15-ին գրություն է ուղարկվել Արհեստակցական միությունների հանրապետական խորհուրդ, որով խնդրվում էր ԿԿ-ի երկու նոր պատասխանատու աշխատողներ՝ Ս. Պետրոսյանին և Ա. Վարդանյանին, ընդգրկել հարվածային փայ ստացողների ցանկում[2]:

Հարվածային փայ ստացողների ցանկում ընդգրկված են եղել նաև գավառային կուսակցական և այլ պատասխանատու աշխատողներ: Օրինակ՝ ԿԿ-ի 1922 թ. մարտ ամսվա մի գրությունից պարզվում է, որ նման ցանկի պահանջ է ներկայացվել Նոր Բայազետի գավառային պատասխանատու աշխատողների վերաբերյալ: Գրության բովանդակությունից երևում է, որ փայ ստացողների ցանկը ԿԿ-ի գիտությամբ կազմել է, ՀԱՄԽ-ի համապատասխան բաժինը, որն էլ հետո այն ներկայացրել է Պարենժողկոմին[3] Մարտի 22-ի ամսաթվով մեկ այլ գրությամբ ԿԿ-ը առաջարկ է ներկայացրել ՀԱՄԽ-ի նախագահ Ա. Խաչինին, որ կից ցուցակում ներկայացված անձանց հարվածային փայ ստանալու հրահանգ տա[4]

Նույն կերպ, կոմկուսի Երևանի կոմիտեն ապրիլի 3-ին ԿԿ ուղարկած շտապ գրությամբ խնդրում էր, որ հրահանգ իջեցվի ՀԱՄԽ՝ իրենց 9-ը պատասխանատու աշխատողներին հարվածային փայ հատկացվի: Հիշյալ գրության կից ցանկում ընդգրկված են եղել կազմբաժնի, կինբաժնի, ընդհանուր բաժնի վարիչներ, կազմակերպիչներ, հրահանգիչներ, այդ թվում՝ Սիրուշ Սկոնին:

---

[1] Տես նույնը, թ. 108:
[2] Տես նույն տեղում, գ. 2, գ. 26, թ. 7:
[3] Տես նույնը, թ. 13:
[4] Տես նույնը, թ. 15:

Այնուհետև փաստաթղթում նշվում է, որ եթե հնարավոր չլինի նրանց փայով բավարարել, ապա կոմիտեն խնդրում է հիշյալ ընկերներին հատկացնել դրամ փայի արժեքի չափով: Բայց գրության վրա, հավանաբար ԿԿ-ի կողմից, մակագրված է՝ մերժել[1]: Մայիսի 17-ի մեկ այլ գաղտնի գրությամբ ԿԿ-ի հավանությանը արժանանալու համար ներկայացվել է 25 հոգու հաշվով հարվածային փայի պահանջարկ՝ չնշելով անունները: ԿԿ-ի քարտուղարի մայիսի 9-ի մի գրությամբ բավարարվել է Լոռիի գավկոմի խնդրանքը՝ նախատեսված քանակի փայ ստանալու մասին: ԿԿ-ի քարտուղարի մայիսի 16-ի գրությամբ պահանջարկ է ներկայացվել արհեստակցական միություն՝ ԿԿ-ի աշխատակիցների համար բաց թողնել 500 արշին մանուֆակտուրա և 25 զույգ կոշիկ: Կան տվյալներ, երբ առանձին դեպքերում կուսաշխատողներին, բացի սովորական հարվածային փայերից, տվել են նաև լրացուցիչ փայեր և այլն[2]:

Հարկ է նշել, որ հարվածային փայերի կապակցությամբ ՀԱՄԽ-ը սերտ գրագրային կապերի մեջ է եղել ԿԿ-ի և նրա նախագահության հետ ու մշտապես առաջնորդվել է վերջիններիս ցուցումներով ու հրահանգներով: ՀԱՄԽ-ի ֆինանսատնտեսական բաժնի մի գրությունում նշված է, որ միայն գավառային կուսկազմակերպություններից նման հարվածային փայ ստանալու ցուցակներում 1922 թ. հուլիսի դրությամբ ընդգրկված են եղել 330 մարդ[3]: ԿԿ-ի գործերի վարիչի 1923 թ. հուլիսի 5-ի մի գրությունից պարզվում է, որ փաստորեն ԿԿ-ն էր վերահսկում ոչ միայն կուսակցական, այլև պետապարատի բոլոր նպաստառուների ցուցակը և ստուգում նրանց նպաստ ստանալու հիմնավորվածությունը[4]: ՀԱԱ ԿԿ-ի ֆոնդի բազմաթիվ գործերի դիտարկումից այն տպավորությունն է ստեղծվում, որ կարծես ԿԿ-ը բանուգործ թողած զբաղված

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 26, թ. 18–19:
[2] Տե՛ս նույնը, թ. 25, 28–29, 37–38:
[3] Տե՛ս նույնը, թ. 40:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 145, թ. 140:

է եղել տարբեր հիմնարկներին հարվածային փայ ստանալու թույլտվություն տալու գործերով:

Երբեմն հարվածային փայ հատկացնելը հիմնավորվել է նրանով, որ պատահել են դեպքեր, երբ պետական հիմնարկությունների առանձին աշխատողներ, իրոք, չեն ունեցել ոչ միայն պատշաճ, այլև անգամ զուրկ են եղել առօրեական հագուստից: Ուշադրության է արժանի հետևյալ փաստը: Աշխատանքի ժողկոմը 1921 թ. հունվարի 3-ի գրությամբ դիմել է պարենժողկոմատի գործերի կառավարչին, որով խնդրում էր մի զույգ կոշիկ տրամադրել իրենց դիվանի հաշվետար տիկին Մուրադյանին (այս կապակցությամբ կարելի է հիշել մեծ բանաստեղծ Ե. Չարենցի «Լենին և Ալին» բալլադը): Աշ.ժողկոմը պարզաբանում էր, որ չքավորության պատճառով տիկինը ի վիճակի չէ կոշիկ գնել, իսկ առանց կոշիկի նա չի կարողանում գործի գնալ[1]: Արխիվային գործից պարզ չի դառնում, թե Աշխատանքի ժողկոմատի հաշվետար տիկին Մուրադյանը ստացե՞լ է արդյոք պահանջված կոշիկը: Բայց ԿԿ-ի ապարատի աշխատող կանանց համար նման խնդիրներն ավելի հեշտությամբ են լուծվել: Այսպես, օրինակ, ԿԿ-ի քարտուղարությունը 1923 թ. հունվարի 6-ի որոշմամբ դիմել է ժողկոմխորհի քարտուղար Գագիկ Պարզյանին, որպեսզի կառավարությունը շտապ կարգով հրահանգի պարենժողկոմատին՝ ԿԿ-ի համար բաց թողնելու 50-60 հավաքածու (կոմպլեկտ) կանացի հանդերձանք կոմունիստ աշխատակցուհիների համար[2]:

Խոսելով կուսակցական ղեկավար աշխատողների արտոնությունների մասին՝ կարելի է նշել, որ, օրինակ, ի տարբերություն հասարակ քաղաքացիների, նրանք օգտվել են էլեկտրական լույսից: Այսպես՝ մի գործում ներկայացված է ԿԿ-ի համակարգի 24 ղեկավար աշխատողների ցանկ (ի դեպ, 1922 թ. ամռանը ԿԿ-ի մշտական աշխատողների թիվը կազմել է 36 մարդ)[3]՝ ԿԿ-ի քար-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 102, ց. 1, գ. 9, թ. 1:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 27, թ. 18, նաև ֆ. 113, ց. 3, գ. 145, թ. 16–17:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 60, թ. 30:

տուղար Աշ. Հովհաննիսյանի գլխավորությամբ, որոնք օգտվում են էլեկտրական լույսից[1]: Հետագա ամիսներին այդ ցանկն ավելի է ընդլայնվում: Այդ նույն գործում աղյուսակով ներկայացված են 22 ապրանքատեսակներ, այդ թվում՝ մահուդի, մուշտակի, բյազի, կտավի, չթի, շիվիոտի, կոշիկի և այլ խմբաքանակներ, որոնք Կենտրոնը (Մոսկվան) Կովբյուրոյի միջոցով բաց է թողել ՀԿ(բ)Կ ԿԿ-ին, ՀԿԵՄ ԿԿ-ին, ԿԿ-ի հանրակացարանին, Երևանի և Ալեքսանդրապոլի քաղկոմներին, ինչպես նաև բոլոր 9 գավկոմներին[2]: Այնուհետև հետևել է ԿԿ-ի բարտուղար Գրիգոր Մեհրաբյանի 1922 թ. նոյեմբերի 11-ի շրջաբերականը, որում առաջարկում էր գավառային պատասխանատու աշխատողների համար շտապ կարգով ստույգ տեղեկություններ հայտնել տաք հագուստի պահանջարկի վերաբերյալ: Միաժամանակ նա պահանջում էր բաշման տեղեկագիր ներկայացնել ս. թ. հոկտեմբերի ամսվա ուղարկվածի վերաբերյալ[3]:

Նույն կերպ, հարվածային փայեր ու արտոնություններ են սահմանվել ՀՍԽՀ ԿԳԿ-ի աշխատակազմի համար: ԿԳԿ-ի նախագահ Սաքո Համբարձումյանի և քարտուղար Հայրապետ Տատյանի 1922 թ. մայիսի 4-ի ամսաթվով ստորագրած մի փաստաթղթում արձանագրված է, որ ԿԳԿ-ի աշխատակիցների կենցաղը բարելավելու համար կազմվել է ցուցակ՝ նրանց կտորեղեն, այլուր և այլ մթերքներ բաժանելու համար, և որ նրանք արդեն ստացել են մայիս ամսվա հարվածային փայերը[4]: ԿԳԿ-ի ֆոնդի մեկ այլ գործում հաստիքացուցակով բերված է ԿԳԿ-ի 22 աշխատակիցների 1922 թ. նոյեմբեր ամսվա այլուր ստացողների ցանկը: Ընդ որում՝ ԿԳԿ-ի նախագահ Ս. Համբարձումյանը, բարտուղար Հ. Տատյանը և գործերի կառավարիչ Գևորգ Հախումյանը համարվել են պատասխանատու աշխատողներ, ուստի նրանց ստանալիք փայի չափաբաժինը եղել է ավելի մեծ: Բացի այդ, առաջին երկուսը ընդգրկված

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 40, թ. 26:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 145:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 116:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 15, թ. 46, 51, 53, 56:

են եղել աշխատավարձ ստացողների ամենաբարձր՝ 17-րդ կարգախմբում, Գ. Հախումյանը՝ 16-րդ, մնացած աշխատակիցները՝ 10-րդ կատեգորիայից մինչև 4-րդը, այդ թվում՝ հավաքարարը: Բոլոր 22 աշխատակիցները, ըստ իրենց կարգախմբի, կանոնավոր ստացել են իրենց հասանելիք այուրը[1]: Եվ այդ ամենը կանոնակարգվում էր վերևից:

Հարկ է նշել, որ ՌԿ(բ)Կ 12-րդ կոնֆերանսը (1922 թ. օգոստոս) հատուկ անդրադարձել է «Կուսակցության անդամների նյութական դրությունը բարելավելու մասին» օրակարգային հարցին: Ընդունվել է որոշում, որով ակտիվ աշխատողների համար, սկսած ՌԿ(բ)Կ ԿԿ-ի անդամից մինչև կուսբջիջի քարտուղար, սահմանվում էր 17 սանդղակային կարգ՝ համապատասխան տարիֆային (հաստիքային) վարձատրության չափով[2]: Հաշվարկ է կատարված, որ 1922 թ. կեսի տվյալներով ՌՍՖԽՀ և մյուս ազգային հանրապետությունների մակարդակով կուսաշխատողների՝ կուսբջիջի քարտուղարից մինչև ԿԿ-ի անդամ ընդհանուր թիվը կազմել է 15325 մարդ[3]: Սրանք համապետական մասշտաբով միայն կուսակցական կառույցների քարտուղարներն են, ովքեր ստացել են հարվածային փայեր, արտոնություններ ու առանձնաշնորհումներ: Կոնֆերանսը որոշել է նաև սահմանել կուսաշխատող ընկերների վարձատրության նոր չափ, պահանջ է դրվել նրանց ապահովել բնակարաններով (տեղական գործկոմների միջոցով), բժշկական օգնությամբ (առողջապահության ժողկոմատի միջոցով), նրանց երեխաների կրթության և դաստիարակության հարցերով (լուս. ժողկոմատի միջոցով): Նույն կերպ սահմանվում էր նաև կոմերիտական աշխատողների նյութական դրության բարելավման կարգ, սակայն այն հաշվով, որ վերջիններս պետք է ստանային կուսաշխատողի համապատասխան որակավորումից երկու կարգ ցածր[4]

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 41, թ. 18:
[2] Տես ՍՄԿԿ բանաձևերում, (1917–1922 թթ.), հ. 2, Ե., 1986, էջ 783–786:
[3] Տես նույն տեղում. էջ 784–785:
[4] Տես նույն տեղում, էջ 786:

Կուսապարատի աշխատողների համար, նյութական ու կենցաղային բնույթի արտոնություններից զատ, հարկ է ուշադրություն դարձնել դատաիրավական առումով խորհրդային երկրի կոմունիստների համար ստեղծված արտոնությանը: 1921 թ. նոյեմբերին Քաղբյուրոյի գիտությամբ ՌԿ(բ)Կ ԿԿ-ը ընդունել էր շրջաբերական, համաձայն որի՝ «դատաքննչական մարմինները պարտավոր են փոխել ՌԿԿ անդամի նկատմամբ խափանման միջոցը և ազատել նրան ձերբակալությունից ոչ պակաս երեք կոմունիստ անդամների երաշխավորությամբ»[1]: Այս փաստաթղթի տակ դրված են եղել ԿԿ-ի քարտուղար Վ. Մոլոտովի, Դմ. Կուրսկու և Գերագույն տրիբունալի նախագահ Ն. Կոժևնիկովի ստորագրությունները:

Բացի այդ, ԿԿ-ի կազմբյուրոյի 1923 թ. մարտի 16-ի որոշմամբ սահմանվել էր նահանգային և մարզային կոմիտեների քարտուղարներին դատական պատասխանատվության ենթարկելու հետևյալ կարգը. «Մինչ գործին ընթացք տալը նահանգային դատախազը պարտավոր է նախաքննության նյութերը և իր եզրակացությունը ուղարկել հանրապետության դատախազին՝ համաձայնեցնելու այն ԿԿ-ի հետ»[2]: Կուսակցական ապարատի աշխատողների իրավական արտոնությունների խնդրին հատուկ անդրադարձել է նաև մենշևիկ գործիչ, 1922 թ-ից ռուս վտարանդի, պատմաբան Բորիս Նիկոլևսկին: Կրեմլյան գաղտնի փաստաթղթերի և իր անձնական դիտարկումների հիման վրա նա ևս ցույց է տվել, որ խորհրդային երկրում կուսակցական աշխատողն օգտվել է դատաիրավական արտոնություններից: Հեղինակը նկարագրում է, որ Ի. Ստալինի կողմից կուսակցական ապարատի ձևավորմանը զուգընթաց՝ արմատավորվեց այն պրակտիկան, որ քրեական հանցանքի (կաշառակերության, ավազակության և այլն) մեջ կասկածվող կուսաշխատողները ենթակա չէին ընդհանուր դատաքննչական մարմինների կողմից իրականացվող ան-

---

[1] *Гимпельсон Е. Г.*, Политическая система и НЭП: Неодекватность реформ, «Отечественная история», РАН, М., 1992, N 2, с. 31.
[2] Տես *Гимпельсон Е. Г.*, նույն տեղում:

թացակարգին (պրոցեդուրաներին), այլ նրանք հանձնվում էին կուսակազմակերպությունների կողմից ստեղծված **կուսակցական հատուկ քննիչների** վարույթին, որոնք, իրենց քննչական գործն ավարտելով, այդ մասին զեկուցում են տվյալ կուսակցական վերահսկիչ հանձնաժողովին (ԿՎՀ), իսկ վերջինս էլ որոշում էր, թե ինչպես վարվել քրեական հանցանք կատարած կուսակցական ընկերոջ հետ: Ի դեպ, այդ խնդիրը քննարկվել է ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարում (1923 թ ապրիլ):

Մենշևիկ պատմաբանը վստահեցնում է, որ ԿՎՀ խստրական մոտեցում էր հանդես բերում, և հանցանք կատարած ոչ բոլոր կոմունիստներին էին հանձնում դատական մարմիններին, եթե անգամ կատարված հանցանքը հիմնավորված էր իրենց իսկ կուսակցական քննիչների կողմից: Ընդ որում՝ **որքան տվյալ կուսաշխատողի կարգավիճակը բարձր էր, այնքան ավելի փոքր էր նրա հետագա դատական հետապնդման հավանականությունը:** Նկատի էր առնվում, որ կուսչինովնիկի նկատմամբ դատական հետապնդում իրականացնելը նաև կուսակցության հեղինակության խնդիր էր: Կասկած չկա, որ կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինների սույն որոշումներն ու գործողությունները կիրառվել են նաև ՀՍԽՀ-ում:

Խորհրդային երկրի համար նաև չգրված օրենքով տարածված պրակտիկա էր, երբ այս կամ այն հանցանքի մեջ մեղադրվող կուսաշխատողի համար արդարադատության մարմինների հետ հեռախոսային, գրավոր, բանավոր և այլ միջնորդություններով հանդես էին գալիս կուսակցության կենտրոնական ղեկավար մարմինները ընդհուպ մինչև Գենսեկը: Բ. Նիկոլաևսկու վկայությամբ, որպես կանոն, արգելված էր կոմունիստին դատելը ընդհանուր իրավասության դատարանում: Ըստ նրա՝ նման դեպքերը եղել են բացառություն[2]: «Դատական շատ գործեր վճռվում էին դատարանից դուրս հեռակա կարգով, գրություններով, կուսակ-

[1] Տես *Николаевский Б. И.*, Тайные страницы истории, М., 1995, с. 87.
[2] Տես *Николаевский Б. И.*, նույն տեղում:

ցական կաբինետից՝ հեռախոսային զանգերի միջոցով»[1]: Բերվածից հետևում է, որ կուսանդամների, առավել ևս կուսակցական պատասխանատու աշխատողների ճակատագիրը կարող էր լուծել միայն կուսապարատը: Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ դասային խտրական մոտեցում, քաղաքացիների բաժանում յուրայինների և օտարների: Ահա այս ճանապարհով կոմկուսը վերածվում էր արտոնյալների դասի կամ խավի: Հասկանալի է, որ նման արտոնությունները հրապուրում էին կարիերիստներին, անազնիվ ու պատահական տարրերին, ովքեր սողոսկում էին կուսշարքերը, ձգտում բարձրանալ նրա սանդղակով և օգտվել կյանքի բարիքներից ու արտոնություններից:

Արտոնությունների պրակտիկան գնալով արմատավորվում էր, և սա այն դեպքում, երբ, մյուս կողմից, կուսակցական փաստաթղթերում ամրագրված է, որ «**ՌԿ(Բ)Կ պատկանելը ոչ միայն արտոնություն չի տալիս, այլ միայն ավելի լուրջ պատասխանատվություն է դնում նրանց վրա**»[2]: Մի՞թե սա հակասության մեջ չէ; այն իրողություններին, որ կուսակցական աշխատողն ունի բազում արտոնություններ, և դրանով նա ներկայանում է որպես **առանձին դաս (խավ)**: Եթե կուսակցական լինելը շարքային անդամին էական առավելություն չէր տալիս, ապա կուսակցական ապարատի աշխատողին և նրա վերնախավին, ընդհանրապես, տալիս էր մեծ առավելություններ ու արտոնություններ:

Պետանվտանգության (ՊԳՔՎ-ՄՊԳՔՎ) մարմինների 1920-ական թթ. զեկուցագրերի, ամփոփագրերի, տեսությունների նյութերի հիման վրա վերջին տարիներին կազմված «Հույժ գաղտնի» բազմահատոր փաստաթղթերի ժողովածուի խմբագրակազմը, ներկայացնելով երկրի ընդհանուր դրության ու բյուրոկրատիայի առաջացման մասին իրական պատկերը, նշում է, որ «մի կողմից էական տարբերություն բարձր աշխատավարձ և արտոնություն ունեցող չինովնիկների, կուսակցական ու խորհրդային նոմենկլա-

---

[1] Տես История России XX век. (1894–1939), ответст. ред. Зубов А. Б., М., 2009, с. 780.
[2] Տես ՍՄԿԿ բանաձևերում, (1917–1922 թթ.), հ. 2, Ե., 1986, էջ 141:

տուրայի, ձեռնարկությունների ղեկավարների, իսկ մյուս կողմից՝ ցածր աշխատավարձ ստացող հիմնականում բանվորական զանգվածների ու իր աշխատանքով երկիրը կերակրող գյուղացիության միջև: Հասարակության մեջ առաջանում էր բյուրոկրատական շերտ՝ իր պահանջներով, հասարակության ու ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, իր հատուկ հոգեբանությամբ ու կենցաղավարությամբ: Նման վիճակը օբյեկտիվորեն երբեմն առաջ էր բերում դիմակայություն ժողովրդի և բյուրոկրատիայի միջև: Ընդ որում՝ հասարակության մեջ բյուրոկրատական խավի արտոնյալ վիճակը հաճախ ուղեկցվում էր նրանց կրթական, կուլտուրայի ու պլտֆեսիոնալիզմի ցածր մակարդակով, ինչը ժողովրդի մեջ առաջ էր բերում դժգոհության ու բողոքի տարբեր դրսևորումներ»[1]: ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ա. Ռիկովը 1924 թ. ամռանը շրջագայելով Մերձվոլգյան շրջանները, ահա թե ինչ է գրում անգամ գյուղի չինովնիկների վարքագծի վերաբերյալ. «Գյուղերի կառավարման ոչ մի ընտրովիություն չկա, բոլոր պետերը եկվոր են ու նշանակովի: Գալուն պես նրանք ձեռք են գցում լավ բնակարան, տնտեսություն, կովեր, խոզեր և այլ բարիքներ: Պետերն ապրում են բնակչությունից կտրված և այլն»[2]: Սրանք փաստեր են նոր ձևավորվող բյուրոկրատական նոմենկլատուրայի վերաբերյալ:

Այս կապակցությամբ առաջ անցնելով նշենք, որ խորհրդային պետության հետագա տասնամյակներին կուսակցական ապարատը, հատկապես նրա վերնախավը և, ի մասնավորի, ԿԿ-ը օգտվել են հատուկ հիվանդանոցներից, անձնական բժշկից, հատուկ ստուգված դեղամիջոցներից, հատուկ առողջարաններից, հատուկ խանութներից, հատուկ բնակարաններից ու առանձնատներից, հատուկ ճաշարաններից՝ հիանալի պատվերների սեղաններով, անհատական տրանսպորտային միջոցներից, հատուկ արհեստա-

---

[1] «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 2, часть I, М., 2001, с. 15.

[2] *Николаевский Б. И.*, Тайные страницы истории, М., 1995, с. 73.

նոցներից և անգամ պետական արգելոցներում որս կատարելու հաճույքից և այլն: Վաստակած կենսաթոշակի անցնելու դեպքում բարձրաստիճան նոմենկլատուրային նախկին աշխատողը դառնում էր անհատական կենսաթոշակառու՝ իր զբաղեցրած նախկին պաշտոնի սանդղակին համապատասխան՝ տեղական, հանրապետական կամ միութենական նշանակության: Իսկ մահանալիս, ըստ նախկինում նրա զբաղեցրած նոմենկլատուրային պաշտոնի ու ծառայությունների, թաղումը կատարվում էր պետական-կառավարական մակարդակով, համապատասխան շուքով բաղարային պանթեոնում և այլն:

Այսպիսով՝ վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ միակուսակցական կառավարման պայմաններում կուսակցական-պետական վերնախավը (պատասխանատու աշխատողները) ի սկզբանե, ըստ իրենց զբաղեցրած պաշտոնի, օգտվել են հատուկ արտոնություններից ու առանձնաշնորհումներից:

Նոմենկլատուրայի ձևավորման գործընթացը լավ հասկանալու համար հարկ է նաև անդրադառնալ կուսակցական, պետական և տնտեսական պատասխանատու աշխատողների կառույցին: Հասկանալի է, որ նրանում աշխատանքի ընդունման և պաշտոնների նշանակման գործում նախապատվությունը տրվում էր կուսակցականների: Բարձր կարգի պաշտոններում կամ, ինչպես հետո կտեսնենք, 1-ին կարգի նոմենկլատուրաներում կարող էին ընդգրկվել միայն կուսակցական պատասխանատու աշխատողները: Անկուսակցական պատասխանատու աշխատողները կարող էին նշանակվել ավելի ցածր՝ 3-րդ կամ 2-րդ կարգի պաշտոնացանկերում: Վերջիններիս պաշտոններ վստահելիս և անվանացանկերում ընդգրկելիս հաշվի էր առնվում ոչ այնքան կուսակցական ու գաղափարական նվիրվածությունը, որքան տվյալ անձի մասնագիտական կարողությունը և փորձը:

Համապատասխան արտադրական-տնտեսական, գիտատեխնիկական, ռազմական և այլ ոլորտի կադրերի պակասի պայմաններում անհրաժեշտաբար օգտագործվել են հին մասնագետներ, սակայն խիստ ընտրությամբ ու վերահսկողությամբ: Օրինակ, Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 31-ի հրամանով հայտարարվել էր «**տեխնիկական մասնագետների** պարտադիր գրանցում ու մոբիլիզացիա (երեք օրվա ընթացքում): Չհաշվառվողները կհամարվեն աշխատանքի դասալիքներ և կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության»[1]:

Հին, որակյալ մասնագետներին բարձր աշխատավարձ տալու պայմանով, ՌՍՖԽՀ օրինակով, Հայաստանում ևս նրանց խորհրդային իշխանության կողմը ներգրավելու նպատակով Հայհեղկոմի նախագահ Ավ. Մյասնիկյանի 1921 թ. մայիսի 14-ի հրամանով մայիսի 1-ից սահմանվեց նման կատեգորիայի մասնագետներին աշխատավարձի հետևյալ սահմանագիծը՝ ըստ որակի, ստաժի, պատասխանատվության չափի՝ նվազագույնը 5800 ռ., առավելագույնը՝ 40000 ռ. խորհրդային դրամով, ինչպես նաև մինչև 100 տոկոս հավելումներ[2]:

Բարձր որակավորում ունեցող այդ հին կադրերին, որոնց թիվը Հայաստանում հասնում էր մի քանի հարյուրի, Ռուսաստանի օրինակով հայտնի էին նաև «սպեց» (հատուկ մասնագետ) անվանումով: Խորհրդային երկրում նրանց հանդեպ երբեմն քաղաքական նկատառումներով ցուցաբերվել է անվստահություն, ուստի և հետապնդում: Աղմուկ հանած այդպիսի մի կեղծ գործերից էր Դոնբասի ածխահանքերից «Շախտի գործը», երբ հանքի մի շարք ազնիվ աշխատող մասնագետ կադրերի անհիմն կերպով մեղադրեցին վնասարարության ու սաբոտաժի (նենգադույի) մեջ և դատապարտեցին[3]: Հասկանալի է, որ հին մասնագետների համար

---

[1] Տես Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Ե., 1974, էջ 187:
[2] Տես նույն տեղում, էջ 206–207:
[3] Տես ՄՄԿԿ պատմություն, 5-րդ հրատ., Ե., 1981, էջ 479-480, *Ղազախեցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 310:

իրենց սոցիալ-բաղաքական անցյալի պատճառով շատ դժվար էր բարձրանալ կուսակցական-պետական պաշտոնների սանդղակով:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Գ. Ալիխանյանի ստորագրությամբ դեռ 1921 թ հունվարի 14-ին ընդունված որոշմամբ Հայաստանում սահմանվեցին կուսակցական պատասխանատու աշխատողների հետևյալ կարգավիճակներ և նրանց աշխատավարձի տարիֆները, որոնք ուժի մեջ էին համարվում 1920 թ. դեկտեմբերի 1-ից, այսինքն՝ Հայաստանի խորհրդայնացման առաջին ամսվա հենց սկզբից:

- **Առաջին կարգի** մեջ մտնում էին. 1) Հայկոմկուսի կենտրոնական մարմնի (ԿԿ-ի) անդամները և 2) կոմկուսի երիտասարդական միության նախագահության անդամները, որոնք ստանալու էին համապատասխանաբար 18000 և 16000 ռուբլի:

- **Երկրորդ կարգի** մեջ՝ 1) գավառային կուսկոմիտեի անդամները, 2) գավառակային կոմիտեի երիտասարդական միությունների պատասխանատու քարտուղարները: Նրանց տարիֆներն էին համապատասխանաբար՝ 16000 և 14000 ռուբլի:

- **Երրորդ կարգ**՝ 1) բոլոր պրոֆեսիոնալները, 2) աշակերտական կուսկոմիտեի քարտուղարները՝ համապատասխանաբար 14000 և 13000 ռուբլի աշխատավարձով[1]:

ՀՍԽՀ ԺողԿոմխորհի և ՀԱՄԽ-ի նախագահների ստորագրությամբ 1922 թ. հուլիսի 31-ին ընդունված նոր որոշմամբ կազմվեց «Կանոնադրություն կուսակցական, խորհրդային, արհմիութենական և տնտեսական կազմակերպությունների **պատասխանատու աշխատողների** աշխատավարձի մասին»[2]: Կանոնադրությամբ սահմանվում էր տարիֆային վարձատրության 17-աստիճանանոց սանդղակ: Հայտնի է, որ պաշտոնների ու վարձատրության նման բազմաստիճան սանդղակ գործել է շատ երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում: Տակավին Պետրոս Մեծի ժամանակներից հայտնի է, օրինակ, նրա 1722 թ. հրամանագրով

---

[1] Տե՛ս Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 1921, էջ 66–67:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 26, թ. 41:

ընդունված զինվորական և պետական (статские) 14 աստիճանից կազմված «Табель о рангах» աստիճանակարգը կամ անվանակարգը[1]:

ՀՍԽՀ-ում գործող սույն կանոնադրության մեջ նախ՝ ձևակերպված է, թե ովքեր են համարվում պատասխանատու աշխատողներ: Այդպիսիք համարվում են ընտրովի պաշտոն զբաղեցնող աշխատողները՝ կուսկոմիտեների և կոմերիտմիության, կենտգործկոմների և գործկոմների նախագահությունները, ժողկոմները, նրանց տեղակալները, ժողկոմատների կոլեգիայի անդամները, ՀԱՄԽ-ի կոլեգիայի անդամները, պետական բարձր հաստատությունների ղեկավար անձինք, կուսակցական և արհմիութենական բաժինների վարիչները, դրանց հրահանգիչները և այլն[2]: Ըստ վերոնշյալ կանոնադրության՝ ստորև մենք ներկայացնում ենք 17 տարիֆային սանդղակներից վերին չորսի մեջ ներառված պատասխանատու աշխատողների պաշտոնները և դրանց աշխատավարձի չափերը: Մենք սահմանափակվել ենք միայն 17-րդ, 16-րդ, 15-րդ և 14-րդ կարգախմբերը ներկայացնելով, որովհետև փոքր ավելի ուշ ձևավորված պաշտոնների բաշխման անվանացանկը (նոմենկլատուրան) հիմնականում իր մեջ էր ներառում այդ չորս առավել բարձր կարգախմբերը:

Ամենաբարձր՝ 17-րդ, տարիֆային սանդղակի մեջ մտնում էին, ըստ իրենց ոլորտի, ամենաբարձր դիրք ու պաշտոն զբաղեցնող անձինք.

- ՀԿ(բ)Կ ԿԿ-ի անդամները և նրա գլխավոր՝ կազմբաժնի, պրոպագանդայի և կին բաժինների վարիչները,
- ՀԱՄԽ-ի նախագահության և նրա հիմնական բաժինների վարիչները,
- ԿԳԿ-ի և նրա նախագահության անդամները,

---

[1] Տես Хрестоматия по истории России (отв. сост. Орлов А. С. и др.), М., 2009, с. 173-174.

[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 26, թ. 41:

- Ժողկոմխորհը, նրա նախագահության անդամները, ժողկոմները, նրանց տեղակալները և կոլեգիայի անդամները,
- Չեկան՝ նրա նախագահը և կոլեգիայի անդամները,
- Հեղափոխական տribունալը՝ նախագահը և անդամները,
- Ժողդատարանի նախագահը,
- ԺՏԳԽ նախագահը և նախագահության անդամները.
- կոմերիտմիության ԿԿ-ը, բարտուղարը և անդամները:

Այս տարիֆային խմբում պատասխանատու աշխատանք վարող անձանց համար աշխատավարձի չափ էր սահմանվում 200 մլն. ռուբլի հայկական խորհրդային դրամանիշով[1]:

17-րդ տարիֆային սանդղակի մեջ մտնող հիմնարկների ցանկին նայելով՝ դժվար չէ նկատել, որ ՀԱՄԽ-ը հայտնվել է իրեն համար անսովոր երկրորդ կարգում, նույնիսկ ԿԳԿ-ի և ժողկոմխորհի ցանկից առաջ: Սա հավանաբար պետք է բացատրել այն հանգամանքով, որ 1920-ական թթ. սկզբին, երբ դիսկուսիաներ էին ընթանում արհմիությունների դերի ու խնդիրների շուրջ, տարբեր ընդդիմադիր խմբերի միջև, այնուամենայնիվ սկզբնափուլում այսպես թե այնպես հասարակական այս կազմակերպությանը մեծ դերակատարություն էր տրվում, մանավանդ որ աշխատողների աշխատավարձի, հանգստի, բուժման և այլ հարցեր կարգավորվում էին հենց արհմիությունների միջոցով: Բայց ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում Վ. Լենինի առաջարկած պլատֆորմով (հայեցակարգով)՝ արհմիությունները հետագայում աստիճանաբար վերածվեցին, ըստ էության, կուսակցության կցորդի:

Պատասխանատու աշխատողների 16-րդ սանդղակի մեջ մտնում էին.

- ԿԿ-ի գործերի կառավարիչը,
- ՀԱՄԽ-ի գործերի կառավարիչը,

---

[1] Պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանում խորհրդային ու հայկական խորհրդային դրամանիշները ծայր աստիճան արժեզրկվել էին, որին հետևեց 1922/24 թթ. ֆինանսական ռեֆորմը և դրանից հետո խորհրդային դրամական կուրսը մնծապես արժևորվեց:

- Ժողկոմխորհի գործերի կառավարիչը, ժողկոմխորհի նախագահի անձնական քարտուղարը,

- ԿԿ-ի և արհմիությունների հիմնական տիպային վարչիչների տեղակալները,

- Երևանի և Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեների քարտուղարները և արհմիությունների նախագահները,

- քաղաքային խորհրդի նախագահները,

- գավառային չեկաների լիազորները,

- ժողդատարանի անդամները,

- Երևանի և Ալեքսանդրապոլի կոմերիտմիության գավառային կոմիտեների քարտուղարները,

- կուսակցական և արհմիութենական պատասխանատու հրահանգիչները և այլն:

Այս կարգախմբի համար աշխատավարձ էր սահմանվում՝ 175 մլն. ռուբլի, դարձյալ հայկական խորհրդային դրամանիշներով:

15-րդ կարգախմբի մեջ մտնում էին հետևյալ կատեգորիայի աշխատողները.

- Հայկոմկուսի գավկոմների մյուս քարտուղարները և Երևանի ու Ալեքսանդրապոլի կուսկոմիտեների անդամները,

- կոմերիտմիության գավկոմների մնացած քարտուղարները,

- մյուս գավառների գործկոմների և Երևանի ու Ալեքսանդրապոլի գործկոմների անդամները,

- ՀԱՄԽ-ի գավառային լիազորները,

- ժողդատավորները և այլն:

Այս կարգախմբի համար վարձատրաչափ էր սահմանված 150 մլն. ռուբլի:

Եվ վերջապես, 14-րդ կարգախմբի մեջ ներառվում էին.

- գավկոմների և գավգործկոմների մնացած անդամները,

- մինչև 500 անդամ ունեցող արհմիությունների կենտրոնական վարչության քարտուղարները,

- շրջանային և տեղամասային գործկոմների ու քարտուղարների ներկայացուցիչները և այլն:

Հիշյալ կարգախմբի աշխատողների վարձատրաչափը սահմանվում էր 125 մլն. ռուբլի[1]:

Ժողկոմխորհի և ՀԱՄԽ-ի նախագահների ստորագրությամբ վավերացված պատասխանատու աշխատողների կարգախմբերի և նրանց վարձատրության չափերի վերաբերյալ սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտել հաջորդ իսկ օրը՝ օգոստոսի 1-ին: Որ այդ կանոնադրությունը գործել է, երևում է նրանից, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ից 1922 թ. դեկտեմբերի 30-ին գրություն է ուղարկվել ՀԱՄԽ-ի տարիֆային-տնտեսական բաժին, համաձայն որի՝ առաջարկվում էր ԿԿ-ի հետևյալ ղեկավարների մի խումբ պատասխանատու աշխատողների լրացուցիչ կերպով ընդգրկել հիմնականում 14-րդ կատեգորիայում, այն է՝ ԿԿ-ի կին բաժնի քարտուղարին, ԿԿ-ի ընդհանուր և ֆինբաժինների վարիչներին, ԿԿ-ի սոցիալական կրթության բաժնի վարիչին, նաև կոմերիտմիության ԿԿ-ի ընդհանուր բաժնի վարիչին[2]:

Պատասխանատու աշխատողների համար հարվածային փայլերը, հանգստի ու առողջության պահպանման համար ուղեգրերը, 17-սանդղականոց դիֆերենցված վարձատրաչափը և այլն հող էին պատրաստում նոմենկլատուրայի ձևավորման համար, որը, մեր կարծիքով, Հայաստանում ավարտուն տեսք ստացավ 1926 **թվականին**: Հայաստանում այդ թվականը պետք է համարել նոմենկլատուրայի ձևավորման տարի նաև այն հիմնավորմամբ, որ հենց 1926 թ.-ից է անցկացվել պաշտոնների առաջարկման **ծրագրային հաշվառում:** Այստեղ խոսքը վերաբերում է կադրերի ծրագրավորված ու պլանավորված հաշվառման և դրանից բխող նշանակումներին: Մանրազնին և համակարգված կերպով կազմվել են կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողների անվանացանկերը՝ նրանց զբաղեցրած պաշտոններով ու անձնական անկետային տվյալներով: Ավելի ուշ այդ նպատակով ԿԿ-ին կից գործել է երեք հոգուց կազմված **որակավորման**

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 26, թ. 41–42:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 26, թ. 87:

հանձնաժողով Սակայն դա բնավ չի նշանակում, թե մինչ այդ պաշտոնների առաջադրման ու նշանակումների ցանկ չի եղել: Դա կիրառվել է Հայաստանի խորհրդայնացումից ի վեր:

Կուսակցականների թե անկուսակցականների պաշտոնների առաջքաշումը և հաշվառումը կենտրոնացված էին կուսակցական մարմինների (կուսկոմիտեների) ձեռքում, ինչը որ բնորոշ էր միակուսակցական կառավարման համակարգին: Այս կամ այն անհատի առաջքաշումը սկզբում ուսումնասիրվում, դիտարկվում էր կուսբջիջների կամ արհմիութենական կազմակերպությունների կողմից, որից հետո գործը հանձնվում էր կուսկոմիտեներին[1]: ԿԿ-ի քարտուղարությունն էր հաստատում գավկոմների, քաղկոմների և ՀԼԿԵՄ մարմինների հաստիքները, դրանց աշխատավարձի չափերը և այլն:

Կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողները թեև ընդգրկվեցին նոր ձևավորվող նոմենկլատուրայի տարբեր անվանացանկերում, սակայն բոլոր առումներով նախապատվությունը տրվում էր կուսակցականին: Կուսակցական պատասխանատու աշխատողների ցուցակը գլխավորում էին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի երեք քարտուղարները: 1923 թ. հունվար ամսվա դրությամբ բերված է Հայկոմկուսի ԿԿ-ի ապարատի 27 պատասխանատու աշխատողների ցուցակ՝ իրենց վարձատրության չափերով: Ընդ որում՝ ցուցակը գլխավորող ԿԿ-ի երեք քարտուղարների՝ Աշ. Հովհաննիսյանի, Գր. Մեհրաբյանի և Ալ. Շահսուվարյանի յուրաքանչյուրի հաստիքի վարձատրության չափը կազմել է 30 մլն. ռուբլի: Ուշագրավ է, որ այդ գումարի 5 տոկոսը՝ 1,5 մլն. ռուբլին պահվել է գործազուրկների օգտին: Նույն կերպ, 5 տոկոսի չափով պահումներ են արվել նաև ԿԿ-ի մնացած պատասխանատու աշխատողներից: Նրանցից պահվել է նաև 2 տոկոս անդամավճար: Համեմատության համար նշենք՝ այդ նույն ժամանակ Վրաստանի կոմկուսի ԿԿ-ի ապարատում նշված է 80 պատասխանատու աշ-

---

Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 90, թ. 135–138:
Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 50, թ. 1–2:

խատող[1]: Համոզվելու համար, որ տարիների ընթացքում ՀԿ(բ)Կ ԿԿ-ի պատասխանատու աշխատողների արագ աճ է տեղի ունեցել, փաստենք, որ արդեն 1930 թ. նոյեմբեր ամսվա դրությամբ ԿԿ-ի պատասխանատու աշխատողների ցուցակը, որը գլխավորել է Աղասի Խանջյանը, կազմված է եղել 115 հոգուց[2]:

Կուսակցական պատասխանատու աշխատողների կարևորությունը ընդգծելու համար ՀամԿ(բ)Կ ԿԿ-ը նպատակահարմար գտավ Միության մասշտաբով այդ ոլորտի աշխատողների համար միասնական տարիֆ սահմանել: Այդ նպատակով ԿԿ-ի բարտուղար Ա. Անդրեևի ստորագրությամբ 1924 թ., մայիսի 13-ին հրապարակվում է թիվ 144 շրջաբերական գրությունը՝ ուղղված բոլոր մարզբյուրոներին, ազգային կոմկուսներին, նահանգային և մարզային կոմիտեներին: Նրանում տեղեկացվում էր, որ ԿԿ-ը անհրաժեշտ է համարել բոլոր տիպի՝ կուսակցական, արհմիութենական, խորհրդային, տնտեսական կամ կոոպերատիվ կազմակերպություններում ու հիմնարկություններում աշխատող կուսանդամ պատասխանատու աշխատողների վարձատրությունը սահմանել **միասնական տարիֆով**՝ անկախ այն բանից, թե նա որ ոլորտում է աշխատում: Դրա համար մինչ այդ ԽՍՀՄ Աշխատանքի ժողկոմատը 1924 թ. փետրվարի 7-ի և լրացուցիչ մարտի 31-ի որոշումներով կուսակցական պատասխանատու աշխատողների աշխատավարձը սահմանել էր տարիֆային բարձրագույն՝ 17-րդ կատեգորիայով, ինչպես նաև, ըստ նրանց աշխատանքային ծանրաբեռնվածության, 50 տոկոս հավելավճար[3]:

Նման որոշման ընդունումը հիմնավորվել էր նրանով, որ երկրի տնտեսական ու կոոպերատիվ շատ հիմնարկությունների անկուսակցական պատասխանատու աշխատողների վարձատրության տարիֆները սկսել էին գերազանցել կուսակցական պատասխանատու աշխատողների վարձատրության չափը: Դրա հա-

---

[1] Տես նույն տեղում, թ. 39–40:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 133, թ. 13–14:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 5, թ. 1:

մար էլ վերոնշյալ որոշումը կոչված էր ֆինանսական և այլ առումներով ապահովելու կուսակցական պատասխանատու աշխատողների առաջնայնությունը անկուսակցական աշխատողների նկատմամբ:

Խոսելով կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողների որակավորման ու քաղաքական առումով վստահելիության մասին՝ հարկ է նշել, որ անվանացանկային պատասխանատու պաշտոնի նշանակվող անձը, բացի իր այս կամ այն մասնագիտական կրթությունից ու մասնագիտացումից, անպայման պետք է անցներ նաև հատուկ պատրաստության կուրսեր հանրապետական, անդրկովկասյան և մոսկովյան կուսակցական-քաղաքական բարձրագույն դպրոցներում: Գավառական մակարդակի /միջին և ստորին/ կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների համար կադրեր էին պատրաստում 1-ին և 2-րդ աստիճանի կուսակցական դպրոցները: Հանրապետական մակարդակի մարմինների նոմենկլատուրային պաշտոնների համար կադրեր էին պատրաստում կենտրոնական կուսակցական դպրոցները: Սկսած 1923 թ.՝ Թիֆլիսում գործում էր 26 կոմիսարների անվան Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը, Մոսկվայում՝ Սվերդլովի անվան, Լենինգրադում կոմունիստական համալսարանները, Արևելքի ժողովուրդների համալսարանը և այլն

Ինչ վերաբերում է կուսակցական և անկուսակցական աշխատողների թվաքանակների հարաբերության, ապա վերջինները էապես գերազանցել են առաջիններին: Այսպես, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կազմակերպավերաբաշխիչ բաժնի ներկայացրած հաշվետվությամբ 1926 թ. հունվարի դրությամբ ներկայացված է ընդամենը 3685 աշխատակից, որից 228-ը եղել են կուսակցական պատասխանատու աշխատողներ, 67-ը՝ ԼԿԵՄ պատասխանատու աշխատողներ, 311-ը, այսպես կոչված, տեխնիկական կոմունիստ աշխատակիցներ, 587-ը՝ անկուսակցական պատասխանատու աշխա-

---

Տես *Ղազարյան Վ. Ն.*, Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 310:

տողներ, 252-ը՝ շարքային կոմերիտականներ, 2240-ը՝ անկուսակցականներ[1]: Իհարկե, հետագա ժամանակաշրջանում կոմունիստների տեսակարար կշռի մեծացման հետևանքով այդ հարաբերակցությունը փոխվում է հօգուտ կուսակցական պատասխանատու աշխատողների: Կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողները ամբողջությամբ այն կադրային բազան էին, որի հիման վրա կազմվելու էին նոմենկլատուրային պաշտոնները:

Այսպիսով՝ մինչ նոմենկլատուրային համակարգը կձևավորվեր, իբրև նախաբայլեր սահմանվել էին պատասխանատու աշխատողների հարվածային փայերի ու արտոնությունների կարգը, որոշվել նրանց կարգախմբերն ու վարձատրության չափերը, աշխատանքներ էին տարվել նրանց որակավորման և մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ և այլն:

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 90, թ. 131–132:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1 *Ձևավորման գործընթացը: Նոմենկլատուրայի մակարդակները*

Խորհրդային երկրի տարածքում, այդ թվում՝ նաև ՀՍԽՀ-ում կուսակցական նոմենկլատուրայի ձևավորման գործընթացը կարելի է դիտարկել որպես մեկ միասնական գործընթաց, որովհետև դա կազմակերպվում և ուղղորդվում էր մեկ կենտրոնից:

Արխիվային վավերագրերը ցույց են տալիս, որ Հայաստանում կուսակցական նոմենկլատուրայի ձևավորումը հիմնականում համընկել է ԿԿ-ի քարտուղար **Աշոտ Հովհաննիսյանի** պաշտոնավարման ժամանակաշրջանին: Սակայն այդ գործընթացը բնավ կապ չունի նրա անձի հետ, որովհետև այդ ամենը հրահանգավորվում և ուղղորդվում էր Կենտրոնից:

Այդ աշխատանքները մեզանում գործնականում սկսվել են 1924 թվականից, իսկ որպես համակարգի ձևավորում՝ ավարտվել են 1926 թվականին: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կազմակերպական-վերաբաշխիչ բաժնի 1927 թ. հոկտեմբեր ամսվա հաշվետվությունից տեղեկանում ենք, որ **Հայաստանում պաշտոնների առաջքաշման աշխատանքների ծրագրային հաշվառումը սկսվել է 1926 թ.-ից**[1] (ընդգծումը մերն է – Ա. Հ.): Սա նորից հիմք է տալիս հետևեցնելու, որ **Հայաստանում նոմենկլատուրայի ցանցային ու ամբողջական համակարգված ձևավորումը տեղի է ունեցել 1926 թ.** Սակայն դա բնավ չի նշանակում, թե մինչ այդ չեն եղել այս կամ այն պաշտոնատար անձանց առաջքաշման, ցուցակագրման, հաշ-

[1] Տես ՀԱԱ. ֆ. 1, ց. 7, գ. 90, թ. 135:

վառման աշխատանքներ: Դրանք տարվել են Հայաստանի խորհրդայնացման ժամանակներից ի վեր:

Մինչ նոմենկլատուրային համակարգի ձևավորումը կուսակցական բարձրագույն ղեկավար մարմինները տարել են նախապատրաստական աշխատանքներ, մշակվել են համապատասխան հրահանգներ ու կանոնադրություններ: Նախքան ԽՍՀՄ հիմնումը խորհրդային տարածքում նախ կազմվեցին պաշտոնների նշանակման ցուցակներ՝ համառուսաստանյան, երկրամասային (մարզային), նահանգային, գավառային, իսկ ավելի ուշ (1930 թ.-ից)՝ շրջանային մակարդակներով: Սրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաժանվեց երեք կարգի անվանացանկերի: Ընդհանուր առմամբ պաշտոնների անվանացանկերը բաժանվեցին երկու մեծ հատվածների (բլոկների)՝ **կենտրոնական և տեղական** մարմինների համար: Որոշվեց դրանց հաստիքային պաշտոնների քանակը: Արդեն ԽՍՀՄ կազմավորումից հետո միութենական և հանրապետական մակարդակներում կարևորագույն պաշտոնների հրատակ տարանջատման խնդիրներ առաջացան:

1925 թ. փետրվարի 1-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբյուրոն հաստատեց ԿԿ-ի կողմից հաստատման ենթակա միութենական հանրապետությունների կարևորագույն պաշտոնների ցուցակը: Իսկ մինչ այդ՝ 1923 թ. նոյեմբերին, կազմբյուրոն ստեղծել էր ԿԿ-ի հանձնաժողով (Ի. Ստալին, Վ. Մոլոտով, Լ. Կագանովիչ, Մ. Տոմսկի և այլոք) պաշտոնների նշանակման համար: Պաշտոնների նշանակման ցուցակները բաժանվել էին երկու կարգի՝ թիվ 1 և թիվ 2: Ամենաբարձր պաշտոնները ընդգրկված էին թիվ 1 ցուցակում: Դրանց նշանակումները կատարվում էին բացառապես ԿԿ-ի որոշմամբ: Շուտով առաջացավ նաև գերատեսչական անվանացանկը՝ թիվ 3-ը, որի դեպքում տեղական տարատեսակ հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնյաները նշանակվում, տեղափոխվում կամ ազատվում էին տեղական կուսմարմինների որոշումներով, սակայն անպայման իրազեկելով ու համաձայնեցնելով ԿԿ-ի

կազմաշվերաշխիչ բաժնի հետ[1]: Հենց այս երեք կարգերն էլ կազմեցին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի անվանացանկը կամ նոմենկլատուրան:

Նոմենկլատուրային համակարգի ձևավորման ճանապարհին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբյուրոյի 1925 թ. նոյեմբերի 16-ի նիստում հաստատված հրահանգով պարզաբանվում էր հետևյալը.

1 Տեղերում 1-ին և 2-րդ նոմենկլատուրային պաշտոններում նշանակումներ կատարելիս, որպես կանոն, ԿԿ-ի կազմբաժինը նախապես իր որոշումը համաձայնեցնում է տեղական կոմսարմինների հետ:

2 Տեղական կոմսարմինները չեն կարող ինքնուրույն նշանակում կատարել կամ պաշտոնից ազատել: Տեղական բոլոր կոմսարմինները 1-ին և 2-րդ նոմենկլատուրային պատասխանատու աշխատողների նշանակումները կամ պաշտոնական տեղաշարժերը կատարում են միայն ԿԿ-ի որոշմամբ՝ ԿԿ-ի կազմբաժնի միջոցով:

3 Խոշոր տրեստների կամ սինդիկատների բաժնի վարիչների և նրանց տեղակալների նշանակումները, որոնք մտնում են 1-ին և 2-րդ նոմենկլատուրաների մեջ, կատարվում են տվյալ հիմնարկի ղեկավարի կողմից՝ այն համաձայնեցնելով տեղական կուսկազմակերպության հետ և այդ մասին տեղեկացնելով ԿԿ-ի կազմբաշխիչ բաժնին՝ կատարված նշանակման վերաբերյալ[2]:

Մեկ այլ հրահանգում պարզաբանվում էր, որ գերատեսչությունների (հիմնարկ-ձեռնարկությունների) բոլոր պաշտոնները բաժանվում են երեք կարգախմբի. 1-ին կարգախմբի մեջ մտնում են տվյալ գերատեսչության ղեկավար (հրամանատարական) կազմը, այն է՝ ժողկոմները, նրանց տեղակալները, կոլեգիայի անդամները, առաջնային բաժնի վարիչները: Այդ բոլորի առաջադրումը, նշանակումը և ազատումը քննվում և հաստատվում է տվյալ հան-

---

[1] Տես История коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А. Б., М., 2014, с. 177-179.

[2] Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 23:

ռապետության կոմկուսի ԿԿ-ի կողմից: 2-րդ կարգախմբի մեջ մտնում են կարևոր ենթաբաժինները, հրահանգիչները և նրանց հավասարեցված աշխատողները, որոնց աշխատանքն ունի պետական նշանակություն, և նրանց նշանակումն ու ազատումը համաձայնեցվում է տվյալ ԿԿ-ի կազմակերպական-բաշխիչ բաժնի կամ էլ ԿԿ-ի որևէ քարտուղարի հետ: Եվ 3-րդ կարգախմբի մեջ մտնում են տվյալ գերատեսչության մնացած պաշտոնները, որոնց նշանակումը կամ պաշտոնից ազատումը կատարվում է տվյալ հիմնարկության ղեկավարության կողմից՝ ընդհանուր հիմունքներով: Սակայն այդ մասին պարտադիր կարգով պետք է իրազեկել ԿԿ-ի հաշվառման բաժին՝ կատարված նշանակումների, տեղափոխությունների կամ ազատումների վերաբերյալ: Վերջում հիշեցվում էր, որ 1-ին և 2-րդ կարգի նոմենկլատուրաների պաշտոնների մասին նախապես՝ նշանակումից կամ ազատումից 7 օր առաջ, տեղյակ է պահվում ԿԿ-ի հաշվառման-բաշխման բաժին[1]:

Մեկ ուրիշ հրահանգ-փաստաթղթում խոսվում էր, որ կադրային փոփոխությունների դեպքում տվյալ հիմնարկի հաշվառման կամ գաղտնի մասի վարիչը ԿԿ-ի հաշվեբաշխիչ բաժին է ներկայացնում անկետային տվյալներ պարունակող թիվ 5 ձևն այն մասին, թե տվյալ ամսին կամ եռամսյակին քանի նոմենկլատուրային աշխատակից է ընդունվել կամ ազատվել աշխատանքից տվյալ հիմնարկությունում: Բացի այդ, յուրաքանչյուր հիմնարկ տարեվերջին պետք է ԿԿ-ի կազմբաժին ներկայացներ իր նոմենկլատուրային աշխատակիցների ցուցակը[2]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդային երկրում, ըստ պետության կառավարման աստիճանակարգի, գոյություն են ունեցել **նոմենկլատուրաների առնվազը չորս մակար-**

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 43:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 14 և 17:

դակ՝ յուրաքանչյուրը երեքական կարգի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ նոմենկլատուրաներով, և մինչև **մեկուկես տասնյակի** հասնող աշխատանքային ոլորտի **ճյուղեր** կամ բնագավառներ:

Համաձայն կուսակցական-պետական կառավարման հիերարխիկ կառուցվածքի՝ ամենաբարձր աստիճանը համարվել է **ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրան՝** իր երեք (1-ին, 2-րդ, 3-րդ) կարգերով: Այնուհետև Անդրկովկասյան հանրապետությունների կտրվածքով երկրորդ մակարդակը համարվել է ՀԱՄԿ(բ)Կ **Անդրերկրկոմի** նոմենկլատուրան՝ իր երեք կարգերով: Դրան ստորադաս հաջորդել է **ՀԿ(բ)Կ ԿԿ**-ի նոմենկլատուրան՝ դարձյալ իր երեք կարգերով: Եվ վերջապես թվով չորրորդը՝ **գավառային** (այդ թվում նաև բաղաքային) նոմենկլատուրան՝ իր երեք կարգերով: Առաջ անցնելով նշենք, որ երբ 1930 թ. ամռանը ՀՄԽՀ վարչատարածքային նոր բաժանմամբ վերացվեցին գավառները, և դրանց փոխարեն որպես վարչատարածքային ամենափոքր միավոր ստեղծվեցին շուրջ 40-ի հասնող շրջաններ, գավառայինի փոխարեն իրրև նոմենկլատուրայի ամենաստորին աստիճան ստեղծվեց **շրջանայինը**, ինչը պահպանվեց ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական ամբողջատիրության վերացումը:

Դժվար չէ նկատել, որ նոմենկլատուրայի այս չորս մակարդակներում առկա են ընդհանուր հաշվով առնվազը 12 նոմենկլատուրային կարգեր, որոնց համապատասխան էլ կազմվել ու բաշխվել են պաշտոնները վերից վար՝ ըստ անվանացանկերի և պաշտոններ զբաղեցողների անկետային հանգամանալի տվյալների: Հասկանալի է, որ տվյալ նոմենկլատուրային պաշտոնյայի կարգավիճակին համապատասխան՝ սահմանվում էր նրա աշխատավարձի, արտոնությունների՝ նյութական, կենցաղային, հանգըստի, բուժման և այլ բարիքներից օգտվելու կարգն ու չափը:

ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրան, ինչպես արդեն ասվել է, իր երեք կարգերով համարվում էր բարձրագույն անվանակարգը՝ կուսակցական-պետական պաշտոնների հաշվառման և նշանակման առումով: Առհասարակ նոմենկլատուրային պաշտոնները

գտնվում էին կուսակցության խիստ հսկողության ներքո: ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի կողմից նշանակված ոչ մի աշխատող առանց նրա որոշման չէր կարող ազատվել աշխատանքից, տեղափոխվել այլ պաշտոնի, այլ բաղաք կամ շրջան և այլն[1]:

Քանի որ ՀամԿ(բ)Կ կանոնադրությամբ ազգային հանրապետությունների կոմկուսներն ունեին ընդամենը նահանգային կամ մարզային կազմակերպության կարգավիճակ, ուստի փոքրաթիվ է եղել հայաստանյան պաշտոնյաների թվաքանակը միութենական ԿԿ-ի նոմենկլատուրայի ցանկերում: ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբաշխիչ (орграспред) բաժնի վարիչի տեղակալ Ն. Կոզլովի ստորագրությամբ 1926 թ. նոյեմբերի 4-ին գրություն է ուղարկվել Հայկոմկուսի ԿԿ՝ պահանջելով, որ, ի կատարումն նույն թվականի մարտի 26-ի խնդրանքի, իրեն ուղարկվի **կուսակցական պատասխանատու աշխատողների** անվանացանկը՝ նշելով ազգանուն, անուն, հայրանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքի այն ճյուղը (ոլորտը), որին ամրացված է, կուսստաժը, սոցդրությունը և այլն:

Դրանից հետո ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կազմակերպական հաշվառման բաժինը՝ Միրզոյանի ստորագրությամբ, 1926 թ. դեկտեմբերի 1-ի ամսաթվով ներկայացրել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին 1-ին, 2-րդ և 3-րդ նոմենկլատուրաները զբաղեցնող 26 պատասխանատու աշխատողների ցուցակը՝ նրանց համապատասխան անկետային տվյալներով: Ցուցակը գլխավորել է ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանը: Նրա անկետային համառոտ տվյալներն են.

- ազգանուն, անուն, հայրանուն՝ **Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի**,
- զբաղեցրած պաշտոնը՝ **ԿԿ-ի քարտուղար**,
- ամրացված է՝ **կուսակցական ճյուղին**,
- մասշտաբը՝ **նահանգային**,
- կուսստաժը՝ 1906 **թ.**,
- սոցդրությունը՝ **ծառայող**,

[1] Տե՛ս История коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А. Б., М., 2014, с. 180.

– այդ պաշտոնին է՝ 1922 թ.:

Այնուհետև ցուցակում իրար հաջորդում են ԿԿ-ի երկու քարտուղարները՝ Երեմիա Բակունցը և Ալեքսանդր Շահսուվարյանը, ԿՎՀ-ի նախագահը, ԿԿ-ի բաժինների վարիչները, ԼԿԵՄ ԿԿ-ի քարտուղարը, ԿԳԿ-ի նախագահը, նրա տեղակալը, պատասխանատու քարտուղարը, ժողկոմխորհի նախագահը, նրա տեղակալը, ժողկոմիսարները, Գերագույն դատարանի նախագահը և ուրիշներ՝ ընդամենը 26 հոգի: Հատկանշական է, որ հանրապետության այդ 26 բարձրակարգ պաշտոնյաները տրոհված են ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի բոլոր երեք՝ 1-ին, 2-րդ և 3-րդ նոմենկլատուրաներում: Նշված է նաև նոմենկլատուրաների երեք մասշտաբ՝ նահանգային, երկրամասային և գավառային: Ցանկում ընդգրկվածների մեծ մասը, այդ թվում՝ ԿԿ-ի երեք քարտուղարները, նահանգային մասշտաբի նոմենկլատուրայում են, երկրամասայինում (նկատի է առնվում Անդրերկրկոմի նոմենկլատուրան) նշված է միայն Ժողկոմխորհի նախագահ Սարո Համբարձումյանի անունը, որը համարվում էր ամենաստաժավոր կոմունիստը Հայկոմկուսում (1903 թ.-ից), իսկ մի քանիսն էլ նշված են գավառային մասշտաբում:

Համադրելով Հայաստանի կուսակցական բարձրագույն պատասխանատու աշխատողների 1926 և 1927 թթ. գբաղեցրած նոմենկլատուրային կարգավիճակները՝ տեսնում ենք, որ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրայի 1-ին կարգում անփոփոխ կերպով ընդգրկված են ՀԿ(բ)Կ ԿԿ-ի երեք քարտուղարները: Այնուհետև ԿԿ-ի ապարատից ամենաբարձր կարգավիճակում է նղել ԿԿ-ի կազմակերպական-վերաբաշխիչ բաժինը, որի վարիչը ևս մտել է թիվ 1 նոմենկլատուրայում: Համամիութենական կուսակցական նոմենկլատուրայի 2-րդ կարգում Հայաստանից ընդգրկված անձ չի նշված, 3-րդում արձանագրված են 6 հոգու անուն՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի երեք բաժինների վարիչների, ԿՎՀ-ԲԳՏ-ի նախագահի ու պատաս-

---

Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 169, թ. 1–3:

խանութու քարտուղարի, ինչպես նաև ՀԼԿԵՄ՝ ԿԿ-ի քարտուղարի պաշտոնները[1]:

Համկ(բ)Կ ԿԿ-ի թիվ 1 նոմենկլատուրան ունեցել է նաև լրացուցիչ պաշտոնների ցանկ, որի մեջ ընդգրկված է եղել ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահը, իսկ այդ նույն նոմենկլատուրայի 3-րդ կարգում՝ ԿԳԿ-ի նախագահի տեղակալը: Համկ(բ)Կ ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայի լրացուցիչ 1-ին կարգում ընդգրկվել են ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահը, Ն. Գ., Աշխատանքի, Արդարադատության, Առողջապահության և մյուս ժողկոմիսարները, իսկ ժողկոմխորհի նախագահի երկու տեղակալները ընդգրկված էին Համկ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրայի 3-րդ կարգում[2]:

Ինչպես ասվեց, Համկ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրային հաջորդում էր Անդրերկրկոմինը: 1927 թ. տվյալներով այստեղ ՀՍԽՀ-ից ընդգրկված են եղել 18 պաշտոն, այդ թվում՝ 8-ը գավկոմի քարտուղարների, ագիտպրոպագանդայի բաժնի վարիչի և այլ պաշտոններ: Ընդ որում՝ դրանք դասված են եղել երկրամասի նոմենկլատուրայի 3-րդ կարգում[3]: Նոմենկլատուրային ցուցակները դիտարկելիս կարելի է տեսնել, որ միևնույն պաշտոնը, օրինակ՝ ԿԿ-ի քարտուղարներինը առկա է և՛ Համկ(բ)Կ ԿԿ-ի, և՛ Անդրերկրկոմի ցանկերում, սակայն տարբեր կարգերում:

Ինչ վերաբերում է հանրապետության մակարդակի նոմենկլատուրաներին, ապա, անշուշտ, ամենաբարձրը ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրան էր: Նրա 1-ին կարգում ընդգրկված էին գավկոմների, գավառակների (ավելի ուշ՝ շրջանների), ՀԼԿԵՄ՝ գավկոմների քարտուղարները: ԿԿ-ի 2-րդ և 3-րդ նոմենկլատուրաներում ընդգրկված էին գավկոմների բաժինների վարիչները, գավառային և գավառակային տարատեսակ հիմնարկությունների ու կազմակերպությունների պաշտոնների ցանկը: Իսկ գավառային նոմենկլատուրաներում ընդգրկված էր գավառային, գավառակային

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 176, թ. 1:
[2] Տես նույն տեղում, թ. 3–4:
[3] Տես նույն տեղում, թ. 1:

և գյուղական մակարդակի՝ պաշտոնով ավելի ցածր, սակայն բանակով ավելի ստվար պաշտոնավոր մարդկանց ցուցակ: Դրանց թիվը մոտավոր հաշվով անցնում է 2 հազարը[1]:

Հարկ է նշել, որ նոմենկլատուրաների ձևավորման աշխատանքները կենտրոնացված էին ԿԿ-ի քարտուղարության, կազմբաշխիչ (орграспред) և հաշվառման-բաշխման (учраспред) բաժինների ձեռքում: Ըստ կարգախմբերի կազմված պաշտոնների անվանացանկը ԿԿ-ի քարտուղարությունը ուղարկում էր Անդրերկրկոմ՝ դիտարկման և հաստատման համար, որովհետև կադրերի խնդրով զբաղվում էր ԿԿ-ի քարտուղարությունը: Անդրերկրկոմը իրավասու էր, ըստ անհրաժեշտության, վերանայել ու փոփոխել այս կամ այն պաշտոնյայի նոմենկլատուրային կարգը:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նոմենկլատուրայի ձևավորման կարգերի վերաբերյալ ԿԿ-ը 1926 թ. հունիսի 22-ին (կուսակցական ճյուղով՝ այդ մասին խոսք կլինի հաջորդ ենթագլխում) ընդունել էր հրահանգ-որոշում բոլոր երեք նոմենկլատուրաների գծով աշխատողների ընտրության, նշանակման և ազատման վերաբերյալ: Նրանում սահմանված էր.

1. ա) 1-ին նոմենկլատուրայի պաշտոնի համար ընտրությունը, նշանակումը և ազատումը կատարվում է ԿԿ-ի պլենումի, ԿԿ-ի նախագահության կամ քարտուղարության որոշմամբ,

բ) 2-րդ նոմենկլատուրայի պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը, որոնք իրականացվում են գավառային, շրջանային կամ էլ տեղական խորհրդային, արհմիութենական, տնտեսական և այլ մարմինների կողմից, կատարվում է նախապես հարցը ԿԿ-ի հետ համաձայնեցնելուց հետո միայն,

գ) 3-րդ նոմենկլատուրայի պաշտոնի համար ընտրությունը և նշանակումը իրականացնում են տեղական արհմիութենական, տնտեսական և այլ մարմինները, սակայն յուրաքանչյուր ամիս նրանք ԿԿ-ին պետք է տեղեկացնեն կատարված նշանակումների վերաբերյալ:

---

[1] Տես նույն տեղում, թ. 13:

2. Մնացած աշխատողների ընտրության և նշանակման պատասխանատվությունը ընկնում է տվյալ տնտեսական, արհմիութենական և այլ մարմինների կուսակցական և անկուսակցական ղեկավար աշխատողների վրա[1]: Սակայն, մեր կարծիքով, այս իրահանգը հետևողականորեն չի գործադրվել, որովհետև ժամանակի ընթացքում, 1920-ական թթ. կուսակցական մենիշխանության ամրապնդման, իսկ 1930-ական թթ., ամբողջատիրական վարչակարգի հաստատմանը զուգընթաց, գրեթե անխտիր ու ամբողջությամբ ԿԿ-ն իր ձեռքում է կենտրոնացնում պաշտոնյաների անվանացանկերի կազմումը, նրանց պաշտոնների նշանակումը, տեղափոխումը, պաշտոնազրկումը և այլն:

2. *Նոմենկլատուրայի ճյուղային կառուցվածքը*

Այս համակարգի լիարժեք բացահայտման համար կարևոր է, ուշադրություն դարձնել նրա ճյուղային կառուցվածքին: Նոմենկլատուրային համակարգն իր մեջ ներառում էր երկրի կուսակցական, պետական, խորհրդային, ֆինանսատնտեսական, սոցիալական, դատաիրավական, կրթամշակութային, առողջապահական և այլ ոլորտների գրեթե բոլոր օղակների ղեկավար ու պատասխանատու պաշտոնների նշանակումը, տեղափոխումը, կադրերի առաջխաղացումը, ազատումը, պատժումը և այլն: Դրա համար էլ նոմենկլատուրային պաշտոնների նշանակումները կատարվել են ըստ տվյալ աշխատանքի ճյուղի կամ բնագավառի: Դրանց թիվը 1927 թ. տվյալներով հասնում էր 14-ի: Այդ ճյուղերը հետևյալներն էին.

1. կուսակցական ճյուղ,
2. պրոպագանդիստական,
3. արհեստակցական,
4. առողջապահական և սոցապահովության,
5. խորհրդային-վարչական,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 34:

6. դատական-պատժիչ,
7. արդյունաբերական-արտադրական,
8. ֆինանսական,
9. վարկային-բանկային,
10. կոոպերատիվ,
11. առևտրային,
12. պլանային-կարգավորող,
13. հողային,
14 տրանսպորտի և կապի ճյուղ[1]:

Ավելի ուշ՝ 1929 թ.,այդ ճյուղերի թվին ավելանում է ևս մեկը՝ «հասարակական կազմակերպությունների և ընկերությունների» ճյուղ՝ դրանց ընդհանուր թիվը հասցնելով 15-ի[2]:

Եթե նոմենկլատուրաների, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ից մինչև գավառային չորս մակարդակները պայմանականորեն կարելի է համարել վերից վար **ուղղահայաց** դասավորություն, ապա դրանց ճյուղային կամ ըստ աշխատանքի բնագավառի բաժանումը՝ **հորիզոնական**: Հենց ճյուղային դասավորության նոմենկլատուրաներով էլ կարելի է մոտավոր հաշվարկ կատարել նոմենկլատուրային պաշտոնների և դրանք զբաղեցրած անձանց թվաքանակի մասին:

Թիվ 1-ը. նշված ճյուղերից ամենաբարձրը **կուսակցականն** էր: Իբրև հանրապետության մակարդակով բարձրագույն ճյուղային նոմենկլատուրա՝ 1927 թ. այն իր մեջ ներառել է հետևյալ պաշտոններն իրենց հաստիքներով.

1 ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 3 քարտուղարները,
2. ԿԿ-ի նախագահության 5 անդամները,
3 ԿԿ-ի անդամության 4 թեկնածուները,
4. ԿԿ-ի բաժինների բոլոր 6 վարիչները,
5. կուսակցական հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը,
6 ԿՎՀ և ԲԳՏ ժողկոմի նախագահը,

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 32:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1. ց. 10, գ. 128, թ 12–14:

7. ԿՎՀ կուսակցական կոլեգիայի պատասխանատու քարտուղարը,

8. կուսակցական կոլեգիայի 5 անդամները,

9. ԿԿ-ի 2 հրահանգիչները,

10. ՀԼԿԵՄ ԿԿ-ի քարտուղարը,

11. ՀԼԿԵՄ ԿԿ-ի կազմբաշխիչ բաժնի վարիչը,

12. գավառային 8 կոմիտեների քարտուղարները[1]:

Այսպիսով՝ կուսակցական ձյուղով կամ գծով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի թիվ 1 նոմենկլատուրային պաշտոնների քանակը կազմել է 38 մարդ-պաշտոն: Հարկ է նկատել, որ հիշյալ 38 նոմենկլատուրային պաշտոնների մի մասը միաժամանակ ընդգրկված են եղել ավելի բարձր՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և Անդրերկրկոմի նոմենկլատուրաներում: Այդ բաշխվածության պատկերը հետևյալն է՝.

- ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 3 քարտուղարները նշված են ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայում և, որքան էլ զարմանալի է, Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում:

- ԿԿ-ի բաժինների 6 վարիչներից՝ կազմբաշխիչ բաժնի վարիչը՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայում և միաժամանակ Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում, իսկ նրա տեղակալը ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայում:

- ԿԿ-ի ինֆորմացիայի (տեղեկատվության) ենթաբաժնի վարիչը՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ և միաժամանակ Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրաներում: Նոմենկլատուրային նույն կարգավիճակն են ունեցել ԿԿ-ի հաշվառման երթաբաժնի վարիչը, ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի նախագահը և ԿՎՀ-ի կուսկոլեգիայի պատասխանատու քարտուղարը:

- ԿԿ-ի 2 հրահանգիչները նշված են միայն Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում:

- ՀԼԿԵՄ ԿԿ-ի քարտուղարը՝ Համամիութենականի 3-րդ նոմենկլատուրայում և Անդրերկրկոմի 3-րդում: Նոմենկլատուրանե-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 176, թ. 1:

րի նույն կարգերում են նշված կուսգավկոմների 8 քարտուղարները

Այսպիսով՝ միայն **կուսակցական ձյուղով**, որը նոմենկլատուրաներից ամենաբարձրն է, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և Անդրերկրկոմի բոլոր մակարդակների նոմենկլատուրաներում ընդգրկված է եղել ընդամենը 25 պաշտոն: Մյուս 13-ը նշված չեն: Սակայն հասկանալի է, որ կուսակցական ձյուղի վերոնշյալ 38 պաշտոններն անխնայ ընդգրկված են եղել ՀԿ(բ)Կ ԿԿ-ի թիվ 1 նոմենկլատուրայում:

Այնուհետև կուսակցական թիվ 1 ձյուղով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 2-րդ նոմենկլատուրայում ընդգրկված է 31 հոգի, այդ թվում՝ ԿԿ-ի կուսպատմության վարիչը, կուսհանձնաժողովի 10 անդամները, գավկոմներին կից ԿՎՀ 8 ներկայացուցիչները: Նշված պաշտոններից և ոչ մեկը ընդգրկված չի եղել ո՛չ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և ո՛չ էլ Անդրերկրկոմի որևէ նոմենկլատուրայում: Միայն այս ձյուղի գավկոմների կազմբաժինների 4 վարիչներից 2-ը և գավկոմների հաշվառման 8 վարիչներից 1 հոգի նշված է Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում:

Թիվ 2-րդ՝ **պրոպդաստիարակչական** ձյուղում ընդգրկված են ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչը, ագիտատորներ, կինբաժինները, մամուլի աշխատողներ, կուլտուր-լուսավորական խմբերի աշխատողներ, կուսդպրոցների ու բուհերի դասախոսներ, քաղլուսավարներ և այլն: Այս ձյուղից ԿԿ-ի ագիտպրոպագանդայի բաժնի վարիչը ընդգրկված է Համ(բ)Կ ԿԿ-ի 2-րդ նոմենկլատուրայում և միաժամանակ Անդրերկրկոմի 3-րդում, նրա տեղակալը՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայում, ԿԿ-ի մամուլի բաժնի վարիչը՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայում. Այս ձյուղից ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայի անվասացանկում նշված է ընդամենը 4 հոգի[3]:

Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 43 (շրջերես):

Տես նույն տեղում, թ. 44:

Տես ՀԱԱ. ֆ. 91, ց. 2. գ. 115, թ. 43 (շրջերես): Սակայն ՀԱԱ ԿԿ-ի (թիվ 1) ֆոնդում, այդ նույն 1927 թ. մարտ ամսվա տվյալներով պրոպագանդայի և դաստիարակչական ձյուղով ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայում նշված է. 22 պաշտոնի ցանկ, որը, մեր

Պրոպագանդայի և դատիարակչական (թիվ 2) ճյուղից ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 2-րդ նոմենկլատուրայի մեջ նշված է 182 մարդ-պաշտոն: Նշված պաշտոնյաներից միայն 2 հոգի. մեկը՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչը, իսկ մյուսը՝ Լուսժողկոմը, նշված են նաև ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 2-րդ նոմենկլատուրայում, և 2 հոգի՝ Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում[1]:

Թիվ 3-րդ՝ **արհեստակցական կամ պրոֆեսիոնալ** ճյուղում նշված է ընդամենը 229 հոգի, որից ՀԱՄԽ-ի նախագահը և Աշխատանքի ժողկոմիսարը նշված են ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին նոմենկլատուրայում:

Թիվ 4-րդ՝ **առողջապահական և սոցիալական ապահովության** ճյուղում նշված է ընդամենը 42 պաշտոն[2]:

Թիվ 5-րդ՝ **խորհրդային-վարչական** ճյուղը, որի մեջ մտել են գործկոմները, խորհուրդները, ժողկոմխորհը, վարչական բաժինները, Ն. Գ. ժողկոմատը, ռազմական մարմինները և այլն, ներառել է ընդամենը 144 պաշտոն: Այդ թվում՝ ԿԳԿ-ի նախագահը, Ժողկոմխորհի նախագահը, Ն. Գ. ժողկոմը ներառված են եղել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 2-րդ նոմենկլատուրայում, իսկ ժողկոմխորհի նախագահի տեղակալը՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայում[3]: Նշյալ ճյուղից Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում ընդգրկված են եղել գավառային գործկոմների 9 (այդ թվում Մեղրիի գործկոմի) նախագահները, ԿԳԿ-ի քարտուղարը և այլն:

Թիվ 6-րդ՝ **դատական-պատժիչ** աշխատանքի ճյուղում, որի մեջ մտել են դատախազությունը, դատարանները, ՊՔՎ, միլիցիան, հետախուզությունը և այլն, ներառված է եղել 106 և դրանցից, թերևս, միայն արդարադատության ժողկոմը, որը միաժամանակ և հանրապետության դատախազն էր՝ ընդգրկված ՀամԿ(բ)Կ

կարծիքով, ավելի մոտ է իրականությանը, որովհետև կուսակցությունը շատ մեծ տեղ ու դեր է տվել ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքներին (Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 167, թ. 31–32):

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 44-45:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 46–47:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 47–48:

ԿԿ-ի լրացուցիչ 1-ին և միաժամանակ Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում: ՀՄԽՀ Գերագույն դատարանի նախագահը նշված է ՀամԿ(բ)Կ 3-րդում և միաժամանակ Անդրերկրկոմի 3-րդում, իսկ ՊՔՎ կամ Չեկայի նախագահը՝ միայն Անդրերկրկոմի 3-րդ նոմենկլատուրայում[1]:

Ավելի սեղմ լինելու համար արձանագրենք, որ 7-րդ՝ **արդյունաբերական-արտադրական** ճյուղը (տրեստներ, գործարաններ, ԺՏԽ և այլն) ներառել է 32 պաշտոն, 8-րդ՝ **ֆինանսական** ճյուղը (ֆինժողկոմատի աշխատողներ) ընդգրկել է 27 պաշտոն, 9-րդ՝ **վարկային** (բանկեր, պետ. վարկային մարմիններ) ճյուղն ուներ 48 պաշտոն, 10-րդ՝ **կոոպերատիվ** (սպառողական, համայնքային, բնակարանային և այլն կոոպերացիաներ) ճյուղն ուներ 94 պաշտոն, թիվ 11-րդ՝ **առևտրային** (առևտրի ժողկոմատ, սինդիկատներ, ակցիոներական ընկերություններ և այլն) ճյուղն ուներ 54 պաշտոն, թիվ 12-րդ՝ **պլանային-կարգավորող** ճյուղն ուներ 84 պաշտոն, թիվ 13-րդ՝ **հողային** (հողժողկոմատ և այլն) ճյուղը՝ ընդամենը 52 պաշտոն և թիվ 14-րդ՝ **տրանսպորտի և կապի** ճյուղը ընդամենը 14 նոմենկլատուրային պաշտոն[2]:

Հարկ է նշել, որ այս ոլորտների բարձրաստիճան պաշտոնյաները նշված են եղել միայն Անդրերկրկոմի, այն էլ՝ 3-րդ նոմենկլատուրայում: Այստեղ բացառություն է կազմում ՀՄԽՀ ֆինժողկոմը, որը հայտնվել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայում: Այդ ուսակի ձևով կազմված ռուսերեն մերենագիր այդ փաստաթղթի տակ նշված է Հայկոմկուսի ԿԿ-ի հաշվեբաշխիչ (завучраспред) բաժնի վարիչ Միրզոյանի ազգանունը:

Այսպիսով՝ մեր հաշվումներով բոլոր 14 ճյուղերի գծով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին և 2-րդ, ինչպես նաև ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ու Անդրերկրկոմի նոմենկլատուրաներում ընդգրկվածների ընդհանուր թիվը կազմել է 1186 մարդ-պաշտոն: ԿՎՀ կուսկոլեգիայի հիշյալ գործում, ցավոք, տեղեկություններ չկան Հայկոմկուսի ԿԿ-ի 3-րդ նոմենկլա-

[1] Տես նույն տեղում, թ. 48-49:
[2] Տես նույն տեղում, թ. 50-54:

տուրայի մասին, որում բնականաբար ընդգրկված պետք է որ լինեին ավելի ցածր պաշտոն զբաղեցրածները:

ԿԿ-ի 1927 թ. նոմենկլատուրային պաշտոնների վերաբերյալ տվյալներ կան նաև ԿԿ-ի թիվ 1 ֆոնդում: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հաշվեքաշխիչ բաժնի վարիչ Հարությունյանի ստորագրությամբ (փաստաթղթում Միրզոյանի ազգանվան վրա գիծ է քաշված) ապրիլի 6-ի ամսաթվով ԿԿ-ի քարտուղար Ե. Բակունցին ուղղված տեղեկանքում դարձյալ բերված են աշխատանքի բոլոր 14 ճյուղերով ԿԿ-ի 1-ին և 2-րդ նոմենկլատուրաներում ընդգրկված ղեկավարների պաշտոնները: Դրանց ընդհանուր թիվը կազմել է՝ 1-ին նոմենկլատուրայով ընդամենը 499 պաշտոն, իսկ 2-րդով՝ 782 պաշտոն, երկուսը միասին ընդամենը՝ 1281 պաշտոն[1]: Կուսկոլեգիայի ֆոնդի տվյալների հետ համեմատած՝ այստեղ այդ պաշտոնների թիվը շուրջ 100-ով ավելին է: Ընդհանուր հաշվարկ կատարելիս մենք նախընտրել ենք նախորդ՝ 1186 ցուցանիշը, որովհետև շատ հնարավոր է, որ այդ հարյուրի չափ ավելցուկ պաշտոնները կրկնված լինեն:

Ինչ վերաբերում է ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրային, ապա երկու դեպքում էլ տեղեկություն չկա: Սակայն մեր հետազոտած սույն գործի փաստաթղթերից մեկում կարողացանք տեղեկություն հայթայթել ԿԿ-ի 3-րդ նոմենկլատուրայի պաշտոնների վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել ԿԿ-ի երեք նոմենկլատուրաների պաշտոնների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ: Մեր կատարած հաշվումներով 3-րդ նոմենկլատուրայի պաշտոնների թիվը կազմել է 318 մարդ[2]: Այդպիսով՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի երեք նոմենկլատուրաներում ներգրավված պաշտոնների թիվը 1927 թ. կազմել է 1504 մարդ:

Ժամանակային առումով առաջ անցնելով՝ նշենք, որ արխիվային գործերից մեկում մեր ուշադրությունը գրավեց ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կողմից արդեն 1930 թ. հաշվառվող և բաշխվող հանրապետա-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 176, թ. 1–12:
[2] Տես նույն տեղում, թ. 62–79:

կան, բաղաքային և շրջանային կազմակերպությունների և հիմնարկությունների բաժին 5-րդ՝ **խորհրդային առևտրի (Совторг)** նոմենկլատուրային կադրերի մասին տվյալները:

Փաստաթղթում բերված են երեք խումբ նոմենկլատուրաներ, որոնցից առաջինը հաստատում էր ՀԿ(բ)Կ ԿԿ-ի բյուրոն, 2-րդ կարգի նոմենկլատուրան հաստատում էր ԿԿ-ի քարտուղարը, իսկ 3-րդը՝ ստուգում և հաշվառում էին ԿԿ-ի բաժնի վարիչները: Հասկանալի է, որ ԿԿ-ի բյուրոյի հաստատածները ամենաբարձր պաշտոններն էին՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի և ժողկոմխորհի նախագահներից սկսած: ԿԿ-ի բյուրոյի կողմից հաստատված պաշտոնների ընդհանուր թիվը կազմել է 653 պաշտոն, ԿԿ-ի քարտուղարի հաստատածը՝ 294, իսկ ԿԿ-ի բաժնի վարիչների կողմից հաշվառվածը՝ 349 պաշտոն: Այսպիսով՝ 1930 թ. տվյալներով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի ղեկավար երեք օղակների կողմից հանրապետության խորհրդային առևտրի մարմինների համար հաստատված նոմենկլատուրային բոլոր պաշտոնները կազմել են ընդամենը 1296 միավոր: Հաշվարկները կատարված են մեր կողմից:

Խնդիրը մասնավորեցնելով ըստ հիմնարկությունների և գերատեսչությունների՝ հարկ է նշել, որ արխիվային գործերում առկա են նաև առանձին ժողկոմատների նոմենկլատուրային աշխատողների ցուցակ՝ նրանց անձնական անկետային տվյալներով: Այսպես, օրինակ, ներկայացնենք ԿՎՀ և ԲԳՏ ժողկոմատի 1927 թ. սեպտեմբերին կազմված նոմենկլատուրային աշխատողների ցուցակը: Նրանում ընդգրկված են եղել 29 աշխատակից՝ իրենց համապատասխան անկետային տվյալներով: Նշված 29 պատասխանատու աշխատակիցներից 16-ը եղել են կուսանդամ, իսկ 13-ը՝ անկուսակցական: Անկուսակցական պատասխանատու աշխատողների նոմենկլատուրաներում ընդգրկելու երաշխավորությունը տալիս էր տվյալ հիմնարկության կուսկազմակերպությունը՝ նրանց համար կազմելով առանձին բարտեր: Բնականաբար, սույն

Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 128, թ. 1–11:

գերատեսչության ցուցակը գլխավորել է, նրա ղեկավար, ժողկոմ Շ. Ամիրխանյանը: Նոմենկլատուրային աշխատողների անկետաները կազմված են աղյուսակների ձևով, որոնցում պարունակում է 20 հարց: Անկետային հարցերի բովանդակությանը ծանոթանալու համար դիցուք ներկայացնենք ԿՎՀ նախագահ և ԲԳՏ ժողկոմ Շավարշ Ամիրխանյանի անկետային տվյալները.

1. **անուն, հայրանուն, ազգանուն՝** Շավարշ Մեհրաբի Ամիրխանյան,

2. **որտեղի՞ց և ի՞նչ պաշտոնից է փոխադրվել՝** եկել է Մոսկվայից, Հայաստի ներկայացուցիչ,

3. **անձնական գործի համարը՝** (նշում չկա),

4. **աշխատանքի մասշտաբը՝** նահանգային,

5. **աշխատանքի ոլորտը՝** կուսաշխատող,

6. **կուսստաժը՝** 1915 թ.,

7. **այլ կուսակցություններում՝** չի եղել,

8. **սոցդրությունը՝** ծառայող,

9. **ծննդյան թիվը՝** 1894 թ.,

10. **կրթությունը՝** միջնակարգ,

11. **լեզուների իմացություն՝** հայերեն, ռուսերեն,

12. **ազգությունը՝** հայ,

13. **մասնագիտությունը՝** (նշում չկա),

14. **ընտանեկան դրությունը՝** ամուսնացած,

15. **աշխատանքի գնահատականը՝** (նշում չկա),

16. **ու՞մ կողմից է նշանակված՝** Կենտկոմի,

17. **ազատված է՝** (նշում չկա),

18. **սույն պաշտոնում աշխատանքի է անցել՝** 23. 03. 1926 թ.,

19. **քանի ամիս է այդ պաշտոնում՝** 17,

20. **զբաղեցրած պաշտոնը՝** ԲԳՏ ժողկոմ և ԿՎՀ նախագահ[1]

Փաստորեն բերված երկու հիմնարկների 29 նոմենկլատուրային աշխատակիցների ցուցակից երեք առավել բարձր կարգի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 115, թ. 1:

պաշտոններ՝ ԲԳՏ ժողկոմ և ԿՎՀ նախագահ Շ. Ամիրխանյանի, նրա տեղակալ Հովսեփ Սարատիկյանի և ԿՎՀ պատասխանատու քարտուղար Հայրապետ Տատյանի աշխատանքի մասշտաբները եղել են նահանգային, մյուսներինը՝ գավառային[1]: Նույն կատեգորիայի պաշտոնները, ըստ նոմենկլատուրային կարգերի, ներկայացնում է հետևյալ պատկերը. 1-ին նոմենկլատուրայում նշված են 4 հոգի՝ վերը նշած երեք բարձրաստիճան պաշտոնյաները, ինչպես նաև ԿՎՀ կոլեգիայի անդամ Գայանե Արեշյանը: Մնացած 25 աշխատակիցներն ընդգրկված են եղել 2-րդ նոմենկլատուրայում: 3-րդ նոմենկլատուրայի վերաբերյալ տեղեկություն չկա[2]:

Սակայն կոմիսարիատների, խոշոր հիմնարկների ու գերատեսչությունների նոմենկլատուրային պաշտոնների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ մենք չենք կարող ստույգ հաշվարկ կատարել, որովհետև բավարար տվյալներ չկան: Ինչպես տեսանք, եղածներից, այնուամենայնիվ, ամենաարժեքավորները աշխատողների 14 ծայրային ոլորտների պաշտոնների, այդ թվում նաև՝ խորհրդային առևտրի (Совторг)-ի մարմինների նոմենկլատուրաներին վերաբերող քիչ թե շատ համահավաք տվյալներն են: Միայն այդ երկու խոշոր հատվածների գումարը (1927-1930 թթ. միջնահաշվարկով) կազմում է 2800 նոմենկլատուրային պաշտոն: Բայց սա դեռ ամենը չէ:

3. *Գավառային նոմենկլատուրա*

Այժմ փորձենք ներկայացնել ամենաստորին օղակը համարվող հանրապետության **գավառային**, ինչպես նաև **քաղաքային** նոմենկլատուրաների ընդհանուր պատկերը: Ինչպես վերին բոլոր օղակների, այնպես էլ գավառային նոմենկլատուրաները բաժանվում էին երեք կարգի կամ աստիճանի: Մեր ձեռքի տակ եղած

---

[1] Տես նույն տեղում, թ. 1–3:
[2] Տես նույն տեղում, թ. 10, 11:

գավառային նոմենկլատուրային տվյալները ընդգրկում են 1926 թ.-ից մինչև 1929 թ. ընկած ժամանակահատվածը:

Առաջինը սկսենք **Նոր Բայազետի** գավառից:

1929 թ. հունվարի 1-ի դրությամբ գավառային 1-ին նոմենկլատուրայում ընդգրկված է եղել 36 հոգի: Ցուցակը գլխավորել են գավկոմի բաժինների վարիչները և գավառակների կուսքարտուղարները[1]: Հասկանալի է, որ գավկոմի քարտուղարը, նրա տեղակալը, գավգործկոմի նախագահը գտնվել են ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ավելի բարձր նոմենկլատուրաներում:

Նույն գավառի 2-րդ նոմենկլատուրայում ընդգրկված են եղել 25 պաշտոն՝ հերթական համարներով՝ 37-ից մինչև 62-րդ պաշտոնները[2]: Իսկ գավառի 3-րդ նոմենկլատուրայի պաշտոնացանկում՝ ընդամենը 7 անուն՝ հերթական համարով՝ 63-ից - 69-ը, որոնք բնականաբար զբաղեցրել են ավելի ստորին օղակի պաշտոններ[3]:

Այսպիսով՝ Նոր Բայազետի գավառային երեք նոմենկլատուրաներում ընդգրկված են եղել ընդամենը 69 անվանացանկային պաշտոնյաներ: Բերված են եղել նաև նրանց անկետային տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, ազգությունը, զբաղեցրած պաշտոնը, ու՞մ կողմից է նշանակվել, աշխատանքի ծավալը, որտեղի՞ց է եկել, կուսստաժը, սոցդրությունը, կրթությունը, ո՞ր նոմենկլատուրային է դասվում և այլն: Հասկանալի է, որ այս 69 մարդկանց ցանկը վերաբերում է գավառի պատասխանատու աշխատողների պաշտոններին: Գավառում, գավառակներում և գյուղերում եղել են նաև փոքր նշանակության շատ պաշտոններ, որոնք չեն համարվել նոմենկլատուրային կարևորության պաշտոններ, ուստի և ներառված չեն եղել գավառային անվանացանկերում: Փաստենք նաև, որ Նոր Բայազետի գավառի նոմենկլատուրային վերաբերող փաստաթուղթը ստորագրել է գավկոմի

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 163, թ. 2-4:
[2] Տես նույն տեղում, թ. 5-6:
[3] Տես նույն տեղում, թ. 7:

քարտուղար, Ալեքսոզի նախկին տխրահռչակ հեղկոմի անդամ Նարիման Կուրդինյանը: Գավառի նոմենկլատուրայի պաշտոնացանկին կցված է գավկոմի նախագահության նիստի (թիվ 11) արձանագրության քաղվածքը, որում նշված է, որ գավկոմի նախագահությունը լսել և հաստատել է գավառի պատասխանատու աշխատակիցների վերոհիշյալ նոմենկլատուրաների ցանկը[1]:

Հարց է ծագում. իսկ ովքե՞ր էին կազմում գավառային նոմենկլատուրաների անվանացանկերը՝ ըստ պաշտոնների ու անունների: Գավառային 1-ին նոմենկլատուրայի պաշտոնների նշանակումը. տեղափոխումը կամ ազատումը կատարվում էր տվյալ կոմսգավկոմի որոշմամբ, 2-րդ նոմենկլատուրային պաշտոնը՝ գավկոմի կազմբաժնի հետ համաձայնեցնելու միջոցով, իսկ 3-րդի նշանակումը կատարվում էր տվյալ հիմնարկ-ձեռնարկության կողմից՝ այդ մասին պարտադիր կարգով տեղյակ պահելով գավկոմին կատարված նշանակման կամ փոփոխության վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, գավառային կոմիտեն էր կազմում ու հաստատում պաշտոնների կադրային նոմենկլատուրային ցուցակը, որն այնուհետև ուղարկվում էր ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբաժին: Ցուցակի դիտարկումից, ճշտումից հետո նրա վրա դրվում էին ԿԿ-ի և Ամդրերկրկոմի նոմենկլատուրաների համարները, և վերջնական հաստատումից հետո դրա մի օրինակը վերադարձվում էր տվյալ գավկոմ: Ըստ նոմենկլատուրաների աստիճանի էլ սահմանվում էին տվյալ պաշտոնյայի պատասխանատվության աստիճանը, աշխատավարձի չափը և արտոնությունների ծավալը:

Լենինականի գավառը համարվում էր հանրապետության խոշոր և քաղաքականապես ամենաակտիվ շրջաններից մեկը, սակայն Լենինական քաղաքի վերաբերյալ նոմենկլատուրային տվյալներ մեր ձեռքի տակ չկան: Հայկոմկուսի Լենգավառի հաշվեբաշխիչ ենթաբաժնի 1926 թ. օգոստոսի 7-ի նիստում լսվել է գավառի նոմենկլատուրաների (անվանացանկի) հաստատման

Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 163, թ. 8:

մասին հարցը[1]: Գավկոմի քարտուղար Գևորգ Հանեսօղլյանի նախագահությամբ լսվել ու հաստատվել են գավառի կուսակցական, կոմերիտական, արհեստակցական, կրթալուսավորական, առողջապահական, դատաիրավական, ֆինանսական-արտադրական, կոոպերատիվ, պետառի և այլ օղակների տարբեր նոմենկլատուրային պաշտոնները[2]: 1926 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գավառային երեք նոմենկլատուրաների մեջ ներառված պաշտոնների ընդհանուր թիվը կազմել է 158 միավոր, որից թիվ 1 անվանացանկում նշված է 94 պաշտոն, թիվ 2-րդ նոմենկլատուրայում՝ 53, իսկ 3-րդում՝ ընդամենը 11 պաշտոն[3]: Արդեն 1929 թ. հոկտեմբերի դրությամբ Լենինականի գավառում հաշվում էր ընդամենը 225 նոմենկլատուրային պաշտոն, որից 1-ին նոմենկլատուրայում՝ 131, 2-րդում՝ 90, և 3-րդում՝ 4 պաշտոն[4]: Սա ինքնին ցույց է տալիս, թե մի քանի տարում (1926 թ.-ից մինչև 1929 թ.) ինչպիսի աճ (67 պաշտոն) է ունեցել գավառի նոմենկլատուրային պաշտոնների թիվը: Հաշվարկ կատարելիս մենք հաշվի ենք առել 1926 թ. տվյալները:

Ի տարբերություն Լենինականի կուսքաղկոմի, որի նոմենկլատուրայի տվյալները մեր ձեռքի տակ չկան, տեղեկություն ունենք **Երևանի քաղաքային կոմիտեի** պատասխանատու աշխատողների վերաբերյալ: ՀԿ(բ)Կ Երկոմիտեի պատասխանատու աշխատողները երեք նոմենկլատուրաներում 1929 թ. տվյալներով հաշվառված են եղել 222 մարդ[5]: Մյուս կողմից, ցավոք, բավարար տեղեկություններ չունենք Երևանի գավառային նոմենկլատուրաների վերաբերյալ: Միայն մի գործում տեղեկություն կա, որ կուսակցության Երևանի կոմիտեին կցված է գավառային մասշտաբի 164 պատասխանատու աշխատողների ցուցակ՝ անկետային բոլոր տվյալներով, սակայն առանց նոմենկլատուրային խմբերի բաշխվածության: Ցուցակը ստորագրել է Երևանի կոմիտեի քարտու-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 171, թ. 43–49:
[2] Տես նույն տեղում, թ. 58–60:
[3] Տես նույն տեղում, թ. 61:
[4] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 163, թ. 49–55:
[5] Տես նույն տեղում, թ. 26:

դար Արամ Շահգելդյանը: Մնացած գավառների վերաբերյալ տվյալները կարծես բավարար են՝ բացառությամբ Մեղրիի:

Էջմիածնի գավառ: Գավկոմի կողմից 1926 թ. հաշվառված պատասխանատու պաշտոնների նոմենկլատուրաների պատկերը հետևյալն է, Բոլոր ճյուղերի հաշվառմամբ գավառային 1-ին նոմենկլատուրայում նշված է 62 պաշտոն, 2-րդում՝ 70, իսկ 3-րդում՝ 44 պաշտոն, ընդամենը՝ 180 պաշտոն[2]:

Ծանոթագրության կարգով նշենք, որ Էջմիածնի գավկոմի մակարդակում կան ևս տասը ավելի բարձր պաշտոն զբաղեցնող պատասխանատու աշխատողներ, ովքեր մտել են ԿԿ-ի նոմենկլատուրայի մեջ[3]: Եթե այս չափը տարածենք Հայաստանի 9 գավառների և Երևան քաղաքի վրա, ապա կստացվի, որ միայն կուսակցական ճյուղով, գավառային նոմենկլատուրայի մակարդակով 100-ից ավելի պատասխանատու աշխատողներ լրացուցիչ կերպով ընդգրկված են եղել ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և գուցե ավելի բարձր նոմենկլատուրաներում:

Դարալագյազի գավառ: Գավկոմի քարտուղար Գրիգորյանի ստորագրությամբ 1926 թ. սեպտեմբերի 9-ին գավառային նոմենկլատուրաների վերաբերյալ Հայկոմկուսի ԿԿ ուղարկված տեղեկագրում նշվում էր, որ գավառի պաշտոնների նոմենկլատուրան կազմելիս առաջնորդվել են ԿԿ-ի կողմից մշակված նոմենկլատուրայի մասին շափորոշիչներով, ինչպես նաև հաշվի են առել իրենց գավառի տեղական պայմանները: Գավառային նոմենկլատուրան կազմելիս ներառվել են գավառի բոլոր պաշտոնները, որոնց քանակը կազմել է 199 Գավառային 1-ին նոմենկլատուրայում նշված է կուսակցական և անկուսակցական 64 հոգի, 2-րդում՝ ընդամենը 81 հոգի, որից 34-ը՝ կուսակցական, իսկ 47-ը՝ անկու-

---

Տես նույնը, ց. 6, գ. 171, թ. 10–15:
Տես ՀԱԱ. ֆ. 1, ց. 7, գ. 176, թ. 8:
Տես ՀԱԱ. ֆ. 1, ց. 9, գ. 163, թ. 30:

սակցական: Դարալագյազի գավառի 3-րդ նոմենկլատուրայում հաշվառված էր 54 հոգի[1]:

Միջանկյալ նշենք, որ գավառի պաշտոնների ցանկի հստակեցումը, այսինքն՝ գավառային որ պաշտոնը որ նոմենկլատուրայի մեջ է մտնում, ԿԿ-ն էր իրականացնում, իսկ տեղում կատարվում էր կադրերի դասակարգում և բաշխում՝ այդ մասին անհապաղ իրազեկելով ԿԿ-ի համապատասխան բաժին:

Զանգեզուրի գավառ: Այս գավառի անվանացանկի մեջ մտնող պաշտոնների քանակը 1926 թ. կազմել է 126, որից 5-ը մտնում էր 1-ին նոմենկլատուրայի մեջ, 25-ը՝ 2-րդի և 96-ը՝ 3-րդի[2]:

Ցավոք, ինչպես արդեն ասվեց, **Մեղրիի** շրջանի մասին, որն իր ռազմավարական նշանակության շնորհիվ (Պարսկաստանի հետ սահմանակից լինելու պատճառով) ուներ գավառի կարգավիճակ, մենք տվյալներ չունենք: Մեր կարծիքով, այս գավառշրջանի նոմենկլատուրային պաշտոնների քանակը կարող էր կազմել մինչև 40:

Ինչ վերաբերում է **Դիլիջանի** գավառային նոմենկլատուրային, ապա 1926 թ. տվյալներով նրա բոլոր երեք աստիճաններում ընդգրկված են եղել 101 հոգի, որից 1-ին նոմենկլատուրայում՝ 58 հոգի, 2-րդում՝ 42, 3-րդում՝ 1 հոգի[3]:

Եվ վերջապես, **Լոռի-Փամբակի** գավառային նոմենկլատուրայի վերաբերյալ 1927 թ. դեկտեմբերին կազմված ամփոփագրից ստացվում է հետևյալ պատկերը. գավառի թիվ 1 նոմենկլատուրայում ներառված են եղել 75 պաշտոնյաների անուններ՝ կուսակցական, արտադրական-տնտեսական, ֆինանսական, կոոպերատիվ և այլ ոլորտի պատասխանատու աշխատողներով: Գավառային 2-րդ նոմենկլատուրայում հաշվառված ու անկետավորված են գավառի ղեկավար միջին օղակի 78 անձ, իսկ 3-րդում՝ ատո-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 171, թ. 99–104:
[2] Տես նույն տեղում, գ. 172, թ. 35:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 171, թ. 136:

ին պաշտոններ վարող ընդամենը 37 մարդ[1]: Այսպիսով՝ Լոռի-Փամբակի գավառային երեք նոմենկլատուրաներում 1927 թ. դեկտեմբերի դրությամբ ընդգրկված են եղել 190 տարաստիճան պաշտոններ: Ընդ որում՝ արխիվային գործում բարեխղճորեն կազմված են եղել վերոնշյալ 190 պաշտոնյաների անձնական անկետային տվյալները անուն առ անուն: Հավելենք նաև, որ Լոռի-Փամբակ գավառին վերաբերող գործում առկա է մի լրացուցիչ անկետային ցուցակ՝ կազմված ևս 52 պաշտոնյաների համար[2]: Բայց նրանում չի տարբերակված, թե այդ պաշտոններից որը որ նոմենկլատուրայի մեջ է մտնում: Հավանաբար սա եղել է պահեստային անվանացուցակ, որը դեռևս չի բաշխվել ըստ նոմենկլատուրաների:

Գավառային նոմենկլատուրային պաշտոնյաների անձնական անկետային տվյալների մասին պատկերացում կազմելու համար ստորև ներկայացնենք Լոռի-Փամբակ գավառի թիվ մեկ պաշտոնատար անձի՝ գավկոմի քարտուղարի անձնական անկետային տվյալները: Հիշեցնենք, որ գավկոմի քարտուղարի պաշտոնը մտնում էր ՀԿ(բ)Կ ԿԿ-ի թիվ 1 նոմենկլատուրայի մեջ.

- Ազգանուն, անուն, հայրանուն՝ **Մկրտչյան Պապիկ Գրիգորի**
- Սեռը՝ **արական**
- Ազգությունը՝ **հայ**
- Պաշտոնը լրացնելու ժամանակ՝ **գավկոմի քարտուղար**
- Որտեղի՞ց է փոխադրվել այս պաշտոնի՝ **Երևանի կոմիտեի կազմբաժնի վարիչի**
- Կուսստաժը՝ 1917 **թ.**
- Անձնական գործի համարը՝ 1-**ին**
- Աշխատանքի մասշտաբը՝ **նահանգային պահեստի**
- Բնագավառը՝ **կուսակցական**
- Եղե՞լ է այլ կուսակցությունների մեջ (ո՞ր, ե՞րբ և ինչքա՞ն ժամանակով)՝ **ոչ**

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, գ. 7, գ. 177, թ. 46–53:
[2] Տես նույն տեղում, թ. 55–58:

- Սոցիալական դրություն՝ **ծառայող**

- Ծննդյան թիվը՝ 1901 **թ.**

- Կրթությունը՝ **տարրական**

- Ի՞նչ լեզուների է տիրապետում՝ **հայերեն, ռուսերեն**

- Մասնագիտությունը՝ **կուսաշխատակից**

- Տվյալ ոլորտում որքա՞ն ժամանակվա աշխատանքային փորձ ունի՝ **9 տարվա**

- Տվյալ պաշտոնին համապատասխանու՞մ է, թե՞ ոչ՝ **այո՛**

- Ո՞ւմ կողմից է նշանակված այդ պաշտոնին՝ **ԿԿ-ի ընտրության համաձայն**

- Երբվանի՞ց է այդ պաշտոնին (տարի, ամիս)՝ 09.1925 **թ.**

- Նախկին կազմում եղե՞լ է, թե՞ 1-ին անգամ է՝ **այո, առաջին անգամ**

- Ընտանեկան դրությունը, քանի հոգի կա խնամքի տակ՝ **ամուրի է, 5 հոգի**[1]:

Փաստենք, որ այս նույն սկզբունքով են կազմվել նաև գավառային նոմենկլատուրաների անկետային տվյալները: Եվ այսպես, աղյուսակներով, անուն առ անուն կազմված են այս կամ այն անվանացանկում ընդգրկված, տարբեր ոլորտներում աշխատող գավառային պաշտոնյաների անձնական անկետային տվյալները, որոնք պարունակել են ընդհանուր թվով 20-ից ավելի հարց: Հարկ է նշել, որ հետագայում անկետային տվյալները ավելի հարստացվեցին նոր հարցերով: Դրանք, իբրև տեղեկատվական բանկ, ավելի ամբողջական ու սպառիչ պատկերացում էին տալիս տվյալ անձի մասին:

Այսպիսով՝ ՀՍԽՀ գավառային և քաղաքային նոմենկլատուրաները, ոչ լրիվ տվյալներով, (առանց Լենինական քաղաքի, Մեղրի գավառի և Երևանի գավառի մասին մեր տեղեկությունները ամբողջական չեն), այսինքն՝ ընդամենը 8 գավառային և Երևանի քաղաքային նոմենկլատուրաների հաշվառումով 1926-1929

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 177, թ. 46:

թթ. ժամանակաշրջանում, ըստ նոմենկլատուրային պաշտոնների, կազմել են ընդամենը 1409 պաշտոն:

Մեր կարծիքով, ամբողջ հանրապետության մասշտաբով միայն գավառային և քաղաքային նոմենկլատուրաներում կարող են ընդգրկված լինել առնվազը 1500 մարդ, որոնց թիվը հետագայում, շրջանների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև ազգաբնակչության թվաքանակի աճին զուգընթաց, շարունակաբար մնացել է, չնայած որ կուսակցական համաժողովներում մշտապես խոսվել ու որոշումներ են կայացվել կուսակցական-պետական ուռճացած ապարատի կրճատման ու էժանացման, կուսզրտումների ու բյուրոկրատիզմի դեմ անհաշտ պայքարի մասին:

Մյուս կողմից՝ մեր ձեռքի տակ եղած արխիվային որոշ տվյալներ հիմք են տալիս պնդելու, որ դեռ 1926 թ., բացի գավառային ու քաղաքային նոմենկլատուրաներից, հնարավոր է, որ գոյություն են ունեցել նաև գավառակային (տեղամասային) մակարդակի նոմենկլատուրաներ: Օրինակ՝ արխիվային գործերից մեկում նշվում է, որ Հայաստանի 9 գավառների գավառակային մասշտաբի պատասխանատուների ընդհանուր թիվը կազմել է 135 մարդ, որոնցից ամենամնծաթիվը եղել է Երևանինը՝ 31 մարդ, այնուհետև՝ Լենինականինը (թիվը չի նշված) և այլն[1]: Չի բացառվում, որ մինչև 1930 թ. վարչատարածքային նոր միավոր՝ շրջանի ձևավորումը գոյություն են ունեցել գավառակային կամ տեղամասային նոմենկլատուրաներ: Բայց քանի որ արխիվային փաստաթղթերում չեն խոսվում գավառակային նոմենկլատուրաների կարգերի մասին, ուստի առայժմ ձեռնպահ ենք մնում հաշվարկներից:

Մեր ձեռքի տակ կան նաև տվյալներ, որ նոմենկլատուրային համակարգի փոփոխման հետևանքով արդեն 1930 թ. կազմված նոր ուղեցույցով սահմանվում էր, որ նաև յուրաքանչյուր հիմնարկ ձեռնարկություն ունենալու էր իր նոմենկլատուրային պաշտոնների ցուցակը: Այն կազմելու էր տվյալ հիմնարկ-ձեռնարկության ղեկավարությունն իր կուսկոմիտեի հետ միասին: Իհարկե,

---

Տես ՀԱԱ. ֆ. 1, ց. 6, գ. 171, թ. 1:

երեք նոմենկլատուրաներով կազմված անվանացանկը նախապես պետք է համաձայնեցվեր ավելի վերադաս պետական-կուսակցական մարմինների հետ[1]:

Այսպիսով, եթե մի կողմ թողնենք ենթադրություններն ու պնդումները և ի մի բերենք արխիվային նյութերի հիման վրա մեր կողմից հաշվարկված ՀՍԽՀ նոմենկլատուրային պաշտոնների ընդհանուր քանակը. ըստ աշխատանքի ճյուղերի կամ բնագավառների՝ 1504, խորհրդային առևտրի (Совторг) մարմինների գծով՝ 1296 և գավառային ու մասամբ քաղաքային՝ 1409 նոմենկլատուրային պաշտոնները, ապա դրանց ընդհանուր թիվը կկազմի 4209 մարդ-պաշտոն: Հնարավոր է, որ որոշ պաշտոններ, ըստ նոմենկլատուրային մակարդակների և ճյուղերի, կրկնված լինեն, սակայն մենք աշխատել ենք նման անճշտությունները հասցնել նվազագույնի:

□

□ □

Հանրագումարի բերելով ՀՍԽՀ-ում կուսակցական մենատիրության նոմենկլատուրային համակարգի ձևավորման գործընթացի ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է նշել, որ այն արմատավորվել է աստիճանաբար՝ Կենտրոնի հրահանգներով ու որոշումներով և ժամանակի ընթացքում շարունակաբար փոփոխվել, կատարելագործվել ու հստակեցվել:

Այսպես՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարության 1928 թ. փետրվարի 28-ի թիվ 7 նիստում ԿԿ-ի քարտուղար Հայկ Հովսեփյանի նախագահությամբ լսվել է «ԿԿ-ի պաշտոնների նոմենկլատուրայի փոփոխությունների մասին հարցը»[2]: Հաշվի առնելով, որ Անդրկովկասյան կոմի քարտուղարությունը նոմենկլատուրային պաշտոնների կարգի փոփոխություններ է կատարել, որոշվում է՝ խնդրել Անդրկովկասյան կոմին համապատասխան փոփոխություն կատարել նաև Հայաս-

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 143, թ. 6–7:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 20, թ. 44:

տանի համար հաշվառված Հայկոմկուսի ԿԿ-ի նոմենկլատուրայի երեք աստիճանակարգում: Դա պարտադիր կարգ էր. նախ՝ կուսակցության կանոնադրությամբ վերադաս մարմնին անվերապահ ենթարկվելու տեսակետից, և նաև այն իմաստով, որ հանրապետության ամբողջ կուսապարատի ու նոմենկլատուրային պաշտոնների ֆինանսավորումը կատարվում էր գերազանցապես Կենտրոնի կողմից: Ասվածը հիմնավորելու համար բերենք միայն մեկ փաստ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ֆինանսահաստիքային հանձնաժողովի 1926 թ. դեկտեմբեր ամսին կազմած արձանագրությունից. հանձնաժողովը որոշել էր՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի տարեկան (1926 թ. հոկտեմբեր-1927 թ. հոկտեմբեր) նախահաշվի ծախսային մաս սահմանել 560 հազար ռուբլի գումար: Այդ ծախսերից 60 հազարը պետք է լրացվեր սեփական եկամուտներով, իսկ 500 հազարը սահմանել դոտացիա՝ Անդրկովկասյան կուսկազմակերպությունների ֆոնդից[1]:

Ինչպես արդեն ասվեց, հանգամանքների հրամայականով, կուսակցության շարքերի աճի, պաշտոնների ավելացման, կրթամշակութային տեղաշարժերի, արտադրատնտեսական ծավալների ընդլայնման զուգընթաց նոմենկլատուրաների համակարգում շարունակաբար կատարվել են փոփոխություններ: Այսպես, օրինակ, ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղարությունը Հայաստանի համար 1928 թ. կատարել է նոմենկլատուրային կարգերի մի շարք փոփոխություններ: Ընդհանուր հաշվով փոփոխվել էր նոմենկլատուրային 21 պաշտոն: Բերենք դրանցից առավել կարևորները

1 ԿԿ-ի երկու առանցքային բաժինների՝ կազմբաշխիչ (орграс-пред) և ագիտպրոպ. (агитпроп) վարիչների տեղակալների պաշտոնները 2-րդ նոմենկլատուրայից փոխադրել 3-րդ:

2 Երկոմի քարտուղարի պաշտոնը հանել 1-ին նոմենկլատուրայից և տեղափոխել 2-րդ:

3 Երկոմի հաշվառման-բաշխման բաժնի պաշտոնը հանել առհասարակ:

---

[1] Տես ՀԱԱ. ֆ. 1, ց. 6, գ. 298, թ. 11-12:

4. Մի շարք ժողկոմների տեղակալների, ԺՏԽ-ի և Պետպլանի նախագահների պաշտոնները հանել 1-ին նոմենկլատուրայից և փոխադրել 2-րդ:

5. «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի խմբագրի պաշտոնը հանել 1-ից և փոխադրել 2-րդ նոմենկլատուրա, իսկ «Մաճկալ» թերթինը՝ 1-ից փոխադրել 3-րդ:

6. Երևանի գավգործկոմի նախագահի պաշտոնը հանել 1-ին նոմենկլատուրայից և տալ 2-րդին:

7. Հայաստանի ՊՔՎ և Գերագույն դատարանի նախագահների տեղակալների պաշտոնները 2-րդից տեղափոխել 3-րդ:

8. ՊՔՎ-ն գավառային լիազորների պաշտոնները հանել նոմենկլատուրայից:

9. Ալավերդու և Ղազարի գործարանների կառավարիչների պաշտոնը 2-րդ նոմենկլատուրայից իջեցնել 3-րդ, իսկ նրանց տեղակալներինը հանել առհասարակ:

10. ՀՍԽՀ ԿԳԿ-ի պատասխանատու քարտուղարի պաշտոնը, որը տվյալ պահին զբաղեցնում էր Ռուբեն Դաշտոյանը, 1-ին նոմենկլատուրայից իջեցնել 3-րդ և այլն[1]:

Ինչպես տեսնում ենք, այդ փոփոխությունները միտված են եղել նոմենկլատուրային պաշտոնների կարգերը իջեցնելուն, իսկ առանձին պաշտոններ էլ՝ առհասարակ հանելու այդ համակարգից: Կարելի է ենթադրել, որ այդ իջեցումները կատարվել են մի կողմից ֆինանսական ծախսերը կրճատելու, որովհետև նոմենկլատուրային բարձր կարգը ինքնին ենթադրում էր ավելի բարձր աշխատավարձ և դրան համապատասխան՝ արտոնություններ, իսկ մյուս կողմից՝ անընդհատ ուռճացող կուսակցական-պետական ապարատը կրճատելու և էժանացնելու նպատակներ: Պետապարատից խնայված միջոցները հասկանալի է, թե այդ շրջանում որքան անհրաժեշտ էին երկրի ինդուստրացմանը:

Արդեն 1930-ական թվականներին համապետական մակարդակով նոմենկլատուրային համակարգն ավելի է կատարելա-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 8. գ. 20, թ. 45:

գործվում: ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ապարատում հիմնվում է **Կադրերի վարչություն**, որը գլխավորում է Ի. Ստալինի «աջ ձեռքը» համարվող Գեորգի Մալենկովը: Այդ վարչության միջոցով կատարվում էր կուսաշխատողների ոչ միայն հաշվառումը, այլև իրականացվում էր կուսակցական բոլոր կադրերի կառավարում: Կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի համար կազմվում էր համակողմանի մշակված **անձնական քարտ**՝ կենսագրական, անձնական ու աշխատանքային բոլոր տվյալներով, այսինքն՝ ստեղծվում էր գաղտնի գործերի բանկ (досье), թե տվյալ կոմունիստն իրենից ինչ է ներկայացնում, ինչպիսին է նրա անձնական ու քաղաքական դիմանկարը, կուսակցությունը նրան ինչ պաշտոն կարող է վստահել և այլն: Կուսանդամներն ու թեկնածուները բաժանվում էին կատեգորիաների՝ կախված իրենց աշխատանքի պատասխանատվության աստիճանից: Իր հերթին, յուրաքանչյուր քաղկոմ, շրջկոմ, մարզկոմ, երկրկոմ և ԿԿ ուներ իր կադրերի բաժինը, որը ձևական առումով ենթարկվում էր տվյալ կազմակերպությանը, սակայն իրականում՝ Կադրերի կենտրոնական վարչությանը: Վերջինս գործնականում հսկում ու կառավարում էր երկրի նոմենկլատուրային կադրերի ողջ շարժը՝ նշանակումը, փոխադրումը, ազատումը և այլն:

Միության մասշտաբով նոմենկլատուրային կադրերի միլիոնավոր քարտային բանկը պահվում էր գաղտնի պահարաններում: Այն շարունակ փոփոխվում, թարմացվում և լրացվում էր: Որևէ կադրի մահվան կամ աղետի դեպքում Գ. Մալենկովի գլխավորած կադրային շտաբը մի քանի ժամում կարող էր տալ տվյալ թափուր պաշտոնի հավանական թեկնածուի անունը: Ընդ որում՝ երբ ասվում է **կուսակցական ապարատի կադրեր**, ապա կարելի է հասկանալ **ամբողջ պետական ապարատի կադրերը** (կուսակցական թե անկուսակցական), որովհետև պետական-կուսակցական ամբողջ ապարատը եղել է կուսակցականացած[1].

Տես *Николаевский Б. И.,* Тайные страницы истории, М., 1995, с. 126.

Ինչպես տեսնում ենք, կուսակցական-պետական նոմենկլատուրային համակարգը ձևավորվել է աստիճանաբար և ժամանակի ընթացքում շարունակ կատարելագործվել է: Այդ համակարգը, կարելի է ասել, իր կատարելությանը հասավ Բրեժնևյան, այսպես կոչված, «լճացման» կամ «զարգացած սոցիալիզմի» ժամանակաշրջանում՝ 1960-1970-ական թվականներին:

Այսպիսով՝ Խորհրդային Ռուսաստանի օրինակով ու նմանակմամբ 1920-ական թթ. կեսերին կուսակցական նոմենկլատուրային համակարգ ձևավորվեց նաև Խորհրդային Հայաստանում: Նոմենկլատուրային քաղաքական համակարգի ձևավորումը, անշուշտ, կոմունիստական միակուսակցական վարչակարգի հաստատման դրսևորում էր: Այն ուներ բազմաստիճան ու բազմաճյուղ կառավարման համակարգ, որը հրահանգավորվում և ղեկավարվում էր մեկ միասնական կենտրոնից: Նոմենկլատուրայի միջոցով էր իրականացվում կադրային քաղաքականությունը, կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողներին պաշտոնների նշանակումը, տեղափոխումը, ազատումը և այլն: Նոմենկլատուրայի ամեն մի անդամ (պաշտոնյա) ուներ իշխանության իր տեղամասը, գիտեր իր տեղն ու դերը այդ համակարգում:

Արխիվային նյութերի ու տվյալների ամփոփ հաշվարկի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նշված ժամանակաշրջանում նոմենկլատուրային պաշտոն վարողների ընդհանուր թիվը ՀՍԽՀ-ում կազմել է 4200: Այդ համակազմը հետագայում ավելի ընդլայնվեց: Նոմենկլատուրային համակարգը պահպանվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական ամբողջատիրության վերացումը: Սակայն, ցավոք, նոմենկլատուրային մտածելակերպն ու հոգեբանությունն իր բացասական դրսևորումներով դեռևս լիովին հաղթահարված չէ թե՛ մեր հասարակության մեջ և թե՛ պետական կառավարման համակարգում: Ավելին, տեղ-տեղ նկատվում են նոր վերածննդի նախանշաններ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ: ԽՄԲԱԿԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԸ

1. Պետական իշխանության թևերի սահմանազատման հարցը

Բոլշևիկյան միակուսակցական (մենիշխանական) վարչակարգի էությունը լավ հասկանալու համար կարևոր է պարզել պետական իշխանության երեք թևերի՝ օրենսդիր-կարգադիր (խորհուրդների), գործադիր (կառավարության) և դատական մարմինների իրավասությունների սահմանազատվածության ու տարանջատվածության աստիճանը և կոմկուսի դերակատարությունն այդ համակարգում: Կառավարման բոլշևիկ-լենինյանների տեսության բնորոշ կողմերից մեկն այն էր, որ նրանց պատկերացմամբ գործադիր և օրենսդիր իշխանությունները պետք է ներկայանան իբրև մեկ միասնական ամբողջություն: Ինքնին հասկանալի է, որ միակուսակցական կառավարման դեպքում, ընդդիմության համապատասխան վերահսկողության ու հակակշռման մեխանիզմների բացակայության պայմաններում, տեղի է ունենում իշխանության երկու թևերի՝ գործադիր և օրենսդիր, կենտրոնացում մեկ կուսակցության ձեռքում, որը հետագայում ճանապարհ է հարթում ամբողջատիրական համակարգի հաստատման համար: Ինչ վերաբերում է իշխանության երրորդ թևին՝ դատական իշխանությանը, ապա ձևի տեսակետից այն կարծես տարանջատված ու անկախ է, սակայն գործնականում իրավադատական համակարգը ևս, փաստորեն, վեր է ածվում միակուսակցական իշխանության և անվանակարգային էլիտայի (նոմենկլատուրայի) կամակատարի ու նրա

թելադրանքը իրականացնողի: Սակայն հենց սկզբից կարելի է փաստել, որ կոմունիստական միակուսակցական համակարգի պայմաններում խոսք չէր կարող լինել պետական իշխանության այդ թևերի իսկական տարանջատվածության և ինքնուրույնության մասին, որովհետև մարքս-լենինյան ուսմունքի հիմնաբարը համարվող **պրոլետարիատի դիկտատուրայի** պայմաններում դասականորեն ընդունված իշխանության այդ երեք թևերն էլ գտնվել են կոմունիստական կուսակցության անվերապահ տնօրինության, ղեկավարության ու կոշտ վերահսկողության ներքո: Ավելին, կոմկուսի կողմից մենաշնորհի ղեկավարվում էին ոչ միայն պետական իշխանության գործադիր, օրենսդիր, դատահիրավական թևերը, այլև հասարակական, արհեստակցական, երիտասարդական, ստեղծագործական և այլ մարմինները, կազմակերպություններն ու միությունները: Օրինակ, ՌԿ(բ)Կ 9-րդ համագումարում (1920 թ. մարտ-ապրիլ) արհեստակցական միությունների դերի ու խնդիրների վերաբերյալ ընդունված բանաձևում ասված է, որ արհեստակցական միությունները պետք է լինեն «կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող սովետական պետության հիմնական ապարատներից մեկը»[1]:

Խորհրդային միակուսակցական վարչակարգում խոսք չի կարող լինել նաև, այսպես կոչված, չորրորդ իշխանության՝ զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ-ների) անկախության ու ազատության մասին: Հասկանալի է, որ դրանք (այդ թվում՝ բոլոր թերթերը, ամսագրերը, ռադիոն, հրատարակչությունները, տպարանները և այլն) գտնվում են պետական-կուսակցական մարմինների խիստ գրաքննական հսկողության տակ, որոնց գլխավոր խնդիրը պետք է լիներ խորհրդային երկրի մեծագործությունների գովերգումը, կապիտալի երկրների «խոցերի» բացահայտումը ու մերկացումը, կոմունիստական, մարքս-լենինյան գաղափարաբաղաբական անաղարտության պահպանումը և այլն: Խորհրդային վարչակարգում, եթե չկա ընդդիմություն և ընդդիմադիր կուսակցութ-

[1] ՍՄԿԿ բանաձևերում, 1917–1922 թթ., հ. 2, Ե., 1986, էջ 333:

յուն, բնականաբար, չէր կարող լինել նաև ընդդիմադիր մամուլ: Ավելին, արգելվում էր ինքնուրույն և ազատ մտածել ու հրապարակային արտահայտվել: Դեռևս 17-րդ դարում նիդեռլանդացի (հոլանդացի) հրեա փիլիսոփա Բ. Սպինոզան ասել է, որ ազատ պետության մեջ յուրաքանչյուրին իրավունք պետք է տրվի մտածելու՝ ինչ նա ցանկանում է և ասելու՝ ինչ նա մտածում է:

Այսպիսով՝ խորհրդային իշխանության պետահրավական հիմքերը ձևավորելիս խորհրդային առաջին սերնդի իրավագետները և պետության ղեկավարները առաջնորդվել են իրավունքի, արդարադատության և բարոյականության մարքս-լենինյան գաղափարայնացած դասակարգային ըմբռնումներով: Ըստ 1920-ական թթ. խորհրդային երիտասարդ իրավագետ Ա. Եսայանի՝ ապադասակարգային իրավունք և բարոյականություն գոյություն չունի: «Իրավունք և բարոյականություն,- մարքսիստական դիտակետից մեկնաբանում էր Ա. Եսայանը,- դա ինքնին դասակարգային ինքնագիտակցության և դասակարգային շահի ըմբռնման արտացոլումն է»[1]: Այլ խոսքով՝ մարքսիստական մեթոդաբանությամբ պետական թե հասարակական կյանքում ամեն ինչ անցկացվում էր դասակարգային ընկալման պրիզմայի միջով: Բնականաբար, մարքս-լենինյան գաղափարական-դասակարգային կանխադրույթների (պոստուլատ) հիման վրա էլ կառուցվում էր խորհրդային պետական մեքենան:

Այժմ փորձենք ներկայացնել, թե ինչպիսին էր իշխանության թևերի սահմանազատման պատկերը խորհրդայնացված Հայաստանում: Հայաստանի առաջին հանրապետության անկումից ու խորհրդայնացումից հետո հարկավոր էր մարքս-լենինյան ուսմունքի, գաղափարախոսության ու ռազմավարության ոգով փոփոխել պետական կառուցվածքը, նրա բնույթը, կառավարման ու տնտեսավարման ձևերը և այլն: Հենց դրանում էր կայանում ամբողջ դժվարությունը: Սակայն մյուս կողմից այդ փոփոխությունը հեշտանում էր նրանով, որովհետև արդեն կար Խորհրդային Ռու-

[1] «Խորհրդային Հայաստան», 7 դեկտեմբերի 1921 թ.:

աստանի փորձը, որն էլ, տեղական պայմաններն ու առանձնահատկությունները հաշվի առնելով, պետք է կրկնօրինակվեր ու գործադրվեր նաև Հայաստանում: «Հայաստանի բանվորները և գյուղացիները,- վկայում է Հայհեղկոմի անդամ Ալ. Բեկզադյանը,- երկրի իշխանությունը իրենց ձեռքը վերցնելով, բաղաքականության մեջ պետք է հետևեին Խորհրդային Ռուսաստանին»[1]: Իշխանության ղեկին անցած **Հայհեղկոմը**, որն իր կազմով, ըստ էության, Հայկոմկուսի ԿԿ-ն էր, Դրո-Լեգրան 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով, ստանձնելով իշխանությունը և թիկունքում ունենալով Խորհրդային Ռուսաստանի ու Կարմիր բանակի աջակցությունը, կոչված էր կառավարել երկիրը մինչև խորհուրդների ընտրությունները և ընտրովի իշխանության ձևավորումը:

Նախ, հարց է ծագում՝ որն էր նորահռչակ խորհրդային պետության իրավունքի աղբյուրը: Հայհեղկոմի իրավաօրենսդրական բաժանմունքի աշխատակից (վարիչ) Աբրահամ Խանդամիրյանը այն միտքն է զարգացնում, որ, վերացնելով դաշնակների մասնավոր սեփականության վրա հիմնված կառավարության իրավակարգը, «նոյեմբերյան հեղափոխությունը հռչակեց, որ **խորհրդային իրավունքի աղբյուրը հանդիսանում է հեղափոխությունը** (ընդգծումը մերն է - Ա. Հ.), խորհրդային իշխանության դեկրետները և որոշումները»[2]: Այս ձևակերպման մեջ տարօրինակն այն է, որ ոչ թե կոմունիստական գաղափարախոսության սոցիալական հիմք հանդիսացող բանվոր դասակարգը կամ ավելի լայն իմաստով գոնե աշխատավոր ժողովուրդն է համարվում խորհրդային պետության իրավունքի աղբյուրը, այլ «հեղափոխությունը»: Դրանով հասկացվում է, որ հեղափոխության իրավունքով պետք է ջարդել հին պետական մեքենան (հասարակարգը): Սոցիալական ուսմունքների պատմությունից հայտնի է, որ նոր հասարակարգը չի կարող լիովին բացասել հին կարգերը և ընդհանրապես մինչ

---

[1] *Բեկզադյան Ալ.*, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Ե., 1981, էջ 83–84:
[2] ՀԱՀ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 7:

այդ մարդկության ստեղծած մնայուն հոգևոր ու նյութական արժեքները: Խորհրդային վարչաքաղաքական, իրավական ու տնտեսական կառուցակարգերը որքան էլ ժխտեն հինը, այնուամենայնիվ իբրև իրավահաջորդ (ժառանգորդ)՝ հենվում են հնի վրա, նրա մշակած կազմակերպական ձևերի, կառավարման մեթոդների ու կառույցների, անգամ մասնագիտական կադրերի ու ծառայողների վրա՝ կատարելով համապատասխան գաղափարախոսական, բովանդակային և այլ փոփոխություններ: Ահա այս փիլիսոփայական հիմքի վրա պետք է ջարդվեր հին պետական-վարչական մեքենան և դրա փոխարեն ստեղծվեր նոր՝ խորհրդային պետական ապարատը: Խորհրդայնացած Հայաստանում ևս անհրաժեշտաբար պետք է մտցվեին հին բուրժուական համարվող պետահիրավական ու քաղաքական համակարգի որոշ տարրեր:

Մինչև ՀՍԽՀ 1-ին սահմանադրության ընդունումը Հայհեղկոմը ճանաչվում էր երկրի բարձրագույն (գերագույն) իշխանության մարմին, որով կառավարվում էր երկիրը մինչև խորհուրդների կազմակերպումը: Հայհեղկոմի մեկամյա գործունեության ընթացքում թեև իշխանությանը քաղաքացիական ձև հաղորդելու համար 1921 թ. մայիս ամսից Հայհեղկոմը անվանապես կոչվեց **Ժողովրդական կոմիսարների խորհուրդ (Ժողկոմխորհ** կամ **ԺԿԽ)**, սակայն դրանից հետո էլ, ըստ էության, իշխանության թևերի տարանջատվածության մասին խոսք չէր կարող լինել, որովհետև որպես հեղափոխական բարձրագույն մարմին՝ նա միայնակ ու անբաժան տնօրինում էր ողջ երկրի պետական, քաղաքական, իրավական, տնտեսական կյանքը: Հայհեղկոմի վերակառուցումը Ժողկոմխորհի բովանդակության տեսակետից ոչինչ չփոխեց, որովհետև, ըստ էության, իրականացնում էր նույն գործառույթները: Մյուս կողմից՝ այստեղ անգամ խոսք չի կարող լինել կուսակցական և պետական մարմնի ղեկավար աշխատողների պաշտոնների տարանջատման մասին: Կուսակցական ղեկավար կազմը միաժամանակ կառավարության անդամ էր: Այս կապակցությամբ տեղին է նկատել պատմաբան Վլ. Ղազախեցյանը. «Ֆունկցիանե-

ի իմաստով նա նույն ռազմահեղկոմն էր՝ օրենսդիր և գործադիր իրավունքներով: Անվանափոխությունը միայն ուղենշում էր ռազմական և հեղափոխական կոչումից հրաժարվելու և քաղաքացիական իշխանության անցնելու մասին»[1]: Խորհրդահայ իրավաբան Աղասի Եսայանը նույնպես ընդունում է, որ Հայհեղկոմի ՀՍԽՀ ժողկոմխորհի վերակազմումը լոկ անվանափոխություն էր, որովհետև կառուցվածքային, բովանդակային առումով ոչ մի փոփոխություն չկատարվեց, պարզապես Հայհեղկոմի գործառույթները ամբողջովին փոխանցվեցին ՀՍԽՀ ժողկոմխորհին[2]: Հայհեղկոմի վեցանդամանոց (Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ա. Բեկզադյան, Ի. Դովլաթյան, Ա. Նուրիջանյան, ի դեպ, ծնունդով հինգը Արցախից էին և մեկը՝ վերջինը, Զանգեզուրից) կազմը գրեթե նույն Հայկոմկուսի ԿԿ-ն էր, որը միաժամանակ համարվում էր կառավարություն: Այդ նշանակում է, որ պետական կառավարման համակարգը լիովին կուսակցականացված էր: Հետագայում ժողկոմիսարիատների թվի ավելացմամբ ընդլայնվում է նաև Հայհեղկոմի, ասել է թե, ժողկոմիսարների անդամների թիվը՝ հասնելով մինչև մեկկես տասնյակի[3]: Հայհեղկոմի համար բնութագրական են եղել հետևյալ գործառույթները՝ ա) օրենսդրական, բ) բարձրագույն պետական կառավարման, գ) գերագույն պետական հսկողության և դ) արդարադատություն իրականացնող մարմին: Հայհեղկոմը փաստորեն համարվում էր նաև հանրապետության բարձրագույն դատական մարմինը: 1920 թ. դեկտեմբերի 19-ին Հայհեղկոմին կից ստեղծվել էր Գերագույն ռազմառևոլուցիոն տրիբունալ, որի կայացրած մահվան դատավճիռները նա էր հաստատում[4]:

Իշխանության իրավասության առումով Հայհեղկոմից հետո երկրորդը համարվում էր Ն. Գ. ժողկոմատը, որը առաջին հերթին

---

[1] *Ղազախանյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 227:
[2] *Եսայան Ա.*, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920–1922 թթ., Ե., 1967, էջ 360:
[3] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Ե., 1974, թ. 42:
[4] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 12:

կոչված էր ջարդելու հին, շահագործողական համարվող պետական մեքենան և ստեղծելու նոր՝ բանվորագյուղացիական, այսպես կոչված, պրոլետարիատի դիկտատուրայի պետական ապարատ: Իբրև բարձրագույն վարչական մարմին՝ նրա վրա դրված էր՝ ա) տեղական իշխանության ձևավորումը, այն է՝ տեղական հեղկոմների հիմնումը և անդամների նշանակումը, բ) տեղական վարչական մարմինների վրա վերահսկման իրավունք, ուստի բոլոր՝ գավառային, քաղաքային և գյուղական հեղկոմները վարչական առումով ենթարկվում էին Ն. Գ. ժողկոմատին, հեռացվում ու նշանակվում էին նրա կողմից և այլն, ինչպես որ ամրագրված էր Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 14-ի դեկրետում[1]: Ընդ որում՝ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի կարգադրությամբ Հայհեղկոմի գործերի կառավարիչը 1920 թ. դեկտեմբերի 24-ին շրջաբերական էր ուղարկել Ն. Գ. կոմիսարիատ՝ պահանջով, որ «բոլոր դեկրետները և հրամանները, որոնք մուտք են գործում հեղկոմ ի հաստատման ու հրապարակման, պետք է ունենան **ռուսերեն բնագիր** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»[2]: Սա նշանակում է, որ Կենտրոնը և Հայաստանում գտնվող նրա լիազոր, Ն. Գ. կոմիսարի տեղակալ Սմոլենսկին պետք է ռուսերեն բնագրով իրազեկ լինեին ՀՍԽՀ բարձրագույն իշխանության՝ Հայհեղկոմի հաստատած և հրապարակած բոլոր որոշումներին, դեկրետներին ու հրամաններին:

Վերացնելով Առաջին հանրապետության շրջանում գործող քաղաքային և գավառային ինքնավարությունները՝ դրանց գործառույթները սկզբում իրենց վրա վերցրին ոչ ընտրովի տեղական հեղկոմները, իսկ 1922 թ.-ից՝ խորհուրդները: Ստացվեց այնպես, որ խորհուրդները, դառնալով իշխանության մարմին, ստանձնեցին տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններ ու գործառույթներ: Սակայն եթե Առաջին հանրապետությունում գործող տեղական ինքնավարությունները ձևավորվել էին ժողովրդավարական ընտրակարգով ու բազմակուսակցական

---

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, Ե., 1960, էջ 426:
[2] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 310, թ. 187:

հիմքի վրա, ապա խորհուրդները դասակարգային ու խտրական սկզբունքով ստեղծված մարմիններ էին:

Ժողկոմատների իրավասությունների տարանջատման առումով, բանի դեռ խորհրդային դատաիրավական համակարգը չէր կայացել, բավականին մեծ գործառույթներ էր իրականացնում Արդարադատության ժողկոմատը՝ ստեղծված Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 15-ի դեկրետով: Արդարադատության ժողկոմատի դեկտեմբերի 18-ի նիստում՝ մասնակցությամբ կոմիսար Ս. Բաղդասյանի, Գ. Չուբարյանի և քարտուղար Ա. Խանդամիրյանի, վերահաստատվեց, որ «Խորհրդային Ռուսաստանի օրենքները կիրառվում են նաև Խորհրդային Հայաստանում»[1]: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1921 թ. մայիսյան պլենումը համապատասխան որոշմամբ մասնավորապես հստակեցրեց Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) և արդարադատության մարմինների փոխհարաբերությունները: Պլենումը ցուցում տվեց, որ քրեական բնույթի գործերը ենթակա են հանձնման արդարադատության մարմիններին: Դրա համար հանձնարարվեց Ն. Գ. ժողկոմատին նման գործերը հանձնել ըստ պատկանելության[2]: Խնդիրն այն էր, որ Չեկան երբեմն գերազանցում էր իր իրավասությունների շրջանակները և իրականացնում քրեական առավելագույն պատժի՝ ընդհուպ մինչև գնդակահարության գործառույթներ: 1921 թ. հուլիսի 1-ին ժողկոմխորհի որոշմամբ կարգ սահմանվեց, որ բոլոր կոմիսարիատների մշակած բոլոր դեկրետները և ընդհանուր բնույթի նախագծերը նախապես պետք է քննության ենթարկվեն Արդարադատության ժողկոմատի օրենսդրական և օրինակարգավորող (кодификацион) բաժինների կողմից ու նոր միայն ներկայացվեն կառավարության հաստատման[3]:

ՀՍԽՀ ժողկոմխորհի (ԺԿԽ) ստեղծումով տեղական հեղկոմների կազմակերպական կողմը որոշ փոփոխության ենթարկվեց: 1921 թ. հուլիսի 20-ին հրատարակվեց երկու կարևոր դեկրետ. մե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 11, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 7:
[3] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 5, թ. 35:

կը՝ «ՀՍԽՀ վարչական բաժանման» և մյուսը՝ «Գյուղական, տեղամասային և գավառային հեղկոմների կազմակերպման ժամանակավոր կանոնների մասին», որոնք գործեցին մինչև ՀՍԽՀ սահմանադրության ընդունումը[1]: Արխիվային գործերից մեկում բերված է տեղական հեղկոմների մասին կանոնադրության նախնական տարբերակը: Այստեղ ուշագրավն այն է, որ բերված կանոնադրության բնագիրը նախկինում կազմված է եղել Ադրբեջանի համար, ուր կարմիր գրիչով փոխված է միայն հանրապետության անվանումը՝ «Ադրբեջան», բառի վրա գիծ է քաշված, վրան գրված՝ «Հայաստան»[2]: Մնացած տեքստը ամբողջովին նույնն է: Այս փաստը ավելորդ անգամ հաստատում է, որ իշխանության այն համակարգը, որ, Ռուսաստանից ընդօրինակելով, գործել է Խորհրդային Ադրբեջանում, առանց մեծ ճիգ ու ջանքի գործադրվել է Հայաստանում, ապա նաև Վրաստանում ու այսպես շարունակ:

Քանի որ սկզբնական շրջանում տեղերում՝ գավառային, շրջանային և գյուղական վայրերում կուսակցական մարմինները տակավին լավ չէին ամրապնդվել, իսկ որոշ բնակավայրերում կուսբջիջներ առհասարակ չկային, նշանակովի տեղական հեղկոմների դերակատարությունը բավականին մեծ էր: Դրանք տվյալ տարածքում խորհրդային իշխանության լիազոր մարմիններն էին և լուծում էին տեղական նշանակության խնդիրներ[3]: Գավառի շրջանակներում բարձրագույն իշխանությունը գավհեղկոմն էր, որը նշանակվում էր Ն. Գ. ժողկոմատի կողմից և իրագործում էր կենտրոնական իշխանության բոլոր դեկրետներն ու որոշումները: Ավելին, գավհեղկոմին իրավունք էր տրված կատարելու նաև ձերբակալություններ: Բայց դրանից հետո նա պարտավոր էր բոլոր գործերը փոխանցել դատական համապատասխան մարմիններին[1]: Ստացվում է, որ հեղկոմների ժամանակ գավհեղկոմն իր

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 17:
[2] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 4, թ. 1–5:
[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 18:
[1] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 4, թ. 1:

մեջ ներառում էր և՛ կուսակցական, և՛ գործադիր, և՛ նաև իրավապահ մարմնի գործառույթներ: Բայց և արձանագրվել են առանձին դեպքեր, երբ ժողկոմների գավառային ներկայացուցիչը միջամտել է գավիեղկոմի աշխատանքներին ու սահմանափակել նրա իրավունքները: Այսպես՝ 1921 թ. հուլիսին Երևանի կուսկոմիտեն լսել է Ռ. Սաֆրազբեկյանի զեկուցումը Երևանի գավառային հեղկոմի գործունեության սահմանափակման վերաբերյալ և որոշել է, դիմել ԿԿ-ին՝ վերջ տալու գավառում տիրող **երկիշխանությանը**: «Ժողկոմների ամեն մի ներկայացուցիչ,- կարդում ենք ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի՝ ԿԿ-ին ուղղված գրությունում,- ավելի մեծ իշխանություն է վայելում, քան ամբողջ գավիեղկոմը»[1]:

Արդեն խորհուրդների ընտրությունների ավարտից ու ընտրովի իշխանության մարմին հանդիսացող գավգործկոմների ստեղծումից հետո գավիեղկոմներն իրենց գործերը հանձնում են գավգործկոմներին և լուծարվում: Դրանից հետո, նորաստեղծ գավգործկոմին զուգահեռ, սկսում է գործել գավառի կուսակցական ղեկավար մարմինը՝ կուսակցության գավառային կոմիտեն (գավկոմը): Բայց սա ամենևին էլ չէր նշանակում, թե գավկոմները չէին միջամտում գավգործկոմների գործերին: Նման միջամտության երևույթն այնքան տարածված է եղել, որ մեզ հայտնի է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1925 թ. մարտի 19-ի մի փաստաթուղթ, որով հանրապետության ղեկավարությանը հրահանգվում էր՝ «շրջարերականներով պարզաբանել բոլոր գավկոմներին, որպեսզի իրենց վրա չվերցնեն խորհրդային մարմինների գործառույթներ»[2]:

ՀՍԽՀ Հեղկոմի, այսինքն՝ կառավարության և Հայկոմկուսի փոխհարաբերությունների առաջին ամիսների փորձը ցույց է տալիս, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ն էր իր նիստերում ու պլենումներում որոշում կառավարության կառուցվածքի, օրենքներ (դեկրետներ) ընդունելու, կարևոր որոշումներ կայացնելու հարցերը: Բնավ խոսք չկար կուսակցական և պետական իշխանության մարմինների իրավա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 31:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 37, թ. 11:

սությունների տարանջատման մասին: Կուսակցությունը՝ որպես մենատեր քաղաքական կառույց, ուներ իր սեփական բյուջեն, որը, ըստ կուսկանոնադրության, պետք է ձևավորվեր անդամավճարներից, հրատարակություններից, նվիրատվություններից և այլն: Սակայն արձանագրվել են դեպքեր, երբ քաղաքական այս մարմինը ուղղակի օգտվել է **պետական ֆինանսական միջոցներից**: Ասվածը հիմնավորելու համար բերենք մեկ փաստ. 1921 թ. սեպտեմբերի 18-ին ԿԿ-ի քարտուղար Ս. Լուկաշինը գրություն է ուղարկել ԺԿԽ-ի նախագահ Ալ. Մյասնիկյանին՝ խնդրելով ԿԿ-ի ֆինաբաժին (Ս. Պետրոսյանին) «բաց թողնել 60 մլն. ռուբլի՝ ԿԿ-ի կարիքների համար»[1]: Կնշանակի՝ կուսակցական մարմինն իր սեփական ծախսերը հոգալու համար կարող էր օգտվել պետական ֆինանսական միջոցներից: Ավելին, կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինն էր հրահանգում տնտեսական, իրավական կամ այլ բնույթի խնդիրների վերաբերյալ դեկրետներ ընդունել, որը բացառապես մտնում էր Հայեղկոմի կամ կառավարության (Ժողկոմխորհի) իրավասության շրջանակում: Բայց և մյուս կողմից՝ կուսակցության ԿԿ-ն ու Հայեղկոմը դժվար էր տարանջատել իրարից, որովհետև երկուսն էլ իրենց ղեկավար կազմով, բացառությամբ թերևս ԿԿ-ի քարտուղար Գ. Ալիխանյանի, միաժամանակ զբաղեցնում էին ժող. կոմիսարների երբեմն մեկից ավելի պաշտոններ: 1921 թ. ընթացքում ԿԿ-ն էր իր նիստերում որոշում, թե ում նշանակել այսինչ գավիեղկոմի նախագահ կամ տեղակալ՝ Կուսակցության ԿԿ-ն էր նշանակում ու ազատում այս կամ այն կոմիսարին: Նա, փաստորեն, Հայեղկոմի կամ կառավարության վերադասն էր, նրա անդամների նշանակողը, ազատողը, հրահանգներ տվողը և այլն:

Համապետական կուսակցական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլշևիկյան ղեկավարությունը ի սկզբանե ուշադրություն է դարձրել կուսակցական և պետական

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 58, թ. 92:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 7–18, 31:

մարմինների գործառույթների տարանջատման խնդրին: Պետական շինարարության հարցում տակավին ՌԿ(բ)Կ 7-րդ արտահերթ համագումարում (1918 թ. մարտ) պահանջ էր դրվում «ճշգրիտ ձևակերպել Համառուսաստանյան ԿԳԿ-ի նախագահության իրավունքներն ու պարտականությունները և սահմանազատել նրա գործառույթների ոլորտը Ժողկոմխորհի գործառույթների ոլորտից»[1]: Իսկ կուսակցության և խորհուրդների փոխհարաբերությունների հարցում ընդունված բանաձևում արձանագրվում էր, որ «չպետք է շփոթել կուսակցական մարմինների ֆունկցիաները պետական (խորհրդային) մարմինների ֆունկցիաների հետ: Կուսակցությունն իր որոշումները անցկացնում է սովետական մարմինների միջոցով, սովետական սահմանադրության շրջանակներում: Կուսակցությունը ջանում է ղեկավարել սովետների գործունեությունը, բայց չփոխարինել նրան»[2]: Իրականում կուսակցությունը ոչ միայն ղեկավարում էր խորհուրդների, նաև կառավարության գործունեությունը, այլև հարկ եղած դեպքում փոխարինում ու կրկնօրինակում նրանց: Հայաստանի առնչությամբ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, գավիեղկոմների քարտուղարների մասնակցությամբ 1921 թ. մայիսի 20-ին հրավիրված նիստում ԿԿ-ի նորընտիր պատասխանատու քարտուղար Ս. Լուկաշինն իր զեկուցման մեջ ուշադրություն էր հրավիրում կուսակցական և խորհրդային մարմինների փոխհարաբերությունների, իրար չկրկնօրինակելու, պարտականությունները հստակեցնելու հարցերին[3]: Հայկոմկուսի 1-ին համագումարում (1922 թ. հունվարի վերջ) ԿԿ-ի անդամ Աշ. Հովհաննիսյանը իր ելույթում փաստում էր կուսակցական և խորհրդային մարմինների իրար կրկնօրինակելու հանգամանքը, որի հետևանքով, ըստ նրա, «ստեղծվել է լիակատար անարխիա մեր կուսակցության շարքերում»[4]: Այդ մասին կառավարության նախագահ Ալ.

---

[1] ՍՄԿԿ բանաձևերում, էջ 139:
[2] Նույն տեղում, էջ 141:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 20, թ. 1:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 10:

Մյասնիկյանը, պարզաբանում տալով, նշում էր, որ «Կուսակցությունը պետք է լինի ղեկավարող, բայց ոչ անմիջական կատարող մարմին»[1]: Համագումարի վերջում ընդունված բանաձևում ասվում էր. «Կուսակցության և խորհուրդների միջև հաստատել այնպիսի հարաբերություններ և աշխատանքները այնպես կազմակերպել, որ կուսակցությունը չխնամակալի խորհուրդներին»[2]: Բայց իրականում հենց այդպես էլ արվում էր: Հետագայում էլ հնչել է քննադատություն, որ կուսկազմակերպությունները փոխարինում են, կրկնօրինակում են պետական, գործադիր, կարգադրիչ մարմիններին: ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարում (1923 թ. փետրվար) Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ, համագումարի պատգամավոր Լ. Ղազարյանը մտքերի փոխանակության ժամանակ իր ելույթում քննադատում էր ԿԿ-ին, կուսկազմակերպություններին այն բանի համար, որ դրանք ավելի շատ զբաղված են խորհրդային-տնտեսական աշխատանքով, քան կուսակցական: Եվ այդ իմաստով ԿԿ-ի քաղաքական հաշվետվությունը, որով զեկուցել է Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը, ընդդիմախոսը բնութագրել է՝ ոչ այնքան ԿԿ ի քաղաքական հաշվետվություն, որքան Ժողկոմխորհի նախագահի[3]:

Ի սկզբանե առաջ եկավ կուսակցական, պետական և տնտեսական մարմինների աշխատանքների ոչ հստակ տարանջատվածության խնդիր: Դրանք հաճախ կրկնօրինակում էին իրար, մեկը փոխարինում էր մյուսին, իսկ ձախողումների դեպքում, փաստորեն, որևէ օղակ (որպես կանոն՝ գերազանցապես կուսակցական) մեղքը բարդում էր մյուսի վրա և այսպես շարունակ: Հասկանալի է, որ գլխավոր դերակատարը կուսապարատն էր, որն իր թույլ տված ձախողումները բարդում էր մյուս օղակների վրա: Հայտնի է, որ շատ հաճախ կուսակցական մարմինները քաղաքական, կազմակերպական ղեկավարություն և ուղղություն տալու անվան

Նույն տեղում, թ. 18:
Նույն տեղում, թ. 41:
ՀԱԱ. ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 24:

տակ անհարկի միջամտում էին պետական-տնտեսական մարմինների աշխատանքներին, իսկ սխալների ու ձախողումների դեպքում մեղքը բարդում էին վերջիններիս վրա՝ չկրելով ոչ մի պատասխանատվություն: Նման գործառնության մի վառ օրինակ էր 1920-ական թթ. վերջերից սկսված գյուղատնտեսության կոլեկտիվացման կուրսը, երբ կուսակցության վերադաս մարմինների հրահանգով ավելի բարձր տոկոսներ ապահովելու համար տեղերում «գերակատարում էին կոլեկտիվացման պլանները». գյուղացիներին հարկադրանքով ու բռնություններով «կուլակաթափ» անելով՝ «լցնում» էին կոլտնտեսություններ, իսկ հետո թույլ տրված շեղումների՝ «ծռումների» համար կուսակցության բարձրագույն ղեկավարությունը՝ Ստալինի գլխավորությամբ, մեղադրում էր տեղական կուսակցական, պետական-տնտեսական մարմիններին[1]: Եվ այդ պրակտիկան, կարելի է ասել, գործնականում շարունակվեց խորհրդային երկրի պատմության ամբողջ 70 տարիներին:

Հայաստանում իրավական առումով վիճակը փոքր-ինչ փոխվեց, երբ իր համապատասխան թևերով ընտրովի իշխանություն ձևավորելու համար 1921 թ. դեկտեմբեր - 1922 թ. հունվարին անցկացվեցին խորհուրդների բազմաստիճան ընտրություններ և հունվարի 30-ից փետրվարի 4-ը գումարվեց ժողովրդական պատգամավորական խորհուրդների համահայաստանյան 1-ին հիմնադիր համագումարը՝ իբրև հանրապետության բարձրագույն պետական իշխանություն: Համագումարում ձևավորվեց օրենսդիր և կարգադիր բարձրագույն իշխանության մարմին՝ ՀՍԽՀ **Կենտրոնական գործադիր կոմիտե (ԿԳԿ)**՝ իբրև խորհրդային պառլամենտ և նրա նախագահություն: Միակուսակցական կառավարման պայմաններում ինքնաբերաբար ԿԿ-ի շատ անդամներ միաժամանակ ԿԳԿ-ի նախագահության անդամներ էին: ԿԿ-ը և նրա նա-

---

[1] *Ивницкий Н. А.*, Коллективизация и раскулачивание в начале 30-х годов. По материалам Политбюро ЦК ВКП(б) и ОГПУ, М., 1996, с. 18–19, *Ղազախեցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 390–391, 399–400:

խագահությունն էր կազմում ու նշանակում ԿԳԿ-ի, նրա նախագահության կազմը. նախագահին ու տեղակալին՝ իհարկե, Միության և Անդրկովկասի կուսակցական ղեկավար մարմինների գիտությամբ ու համաձայնությամբ: Խորհուրդների ամբողջ աշխատանքը, փաստորեն, ղեկավարվում ու վերահսկվում էր կուսակցության կողմից: Կուսակցությունը որոշումներն անցկացնում էր խորհրդային մարմինների միջոցով: Այլ խոսքով՝ դարձյալ ստացվում էր, որ կուսակցությունը փոխարինում էր խորհուրդներին: Կուսակցության քաղաքական ղեկավար դերը երևում է նաև նրանից, որ, որպես կանոն, խորհուրդների համագումարին անմիջապես նախորդում էր կուսակցության համագումարը կամ առնվազը ԿԿ ի պլենումը, որը նախապես որոշում էր խորհուրդների ամենակարևոր, ընդունվելիք որոշումների նախագծերը, ԿԳԿ-ի, նրա նախագահության կազմը և այլն: Համագումարին մնում էր միայն դրանք հաստատել: Ընդ որում՝ մինչ խորհուրդների համագումարի բացումը նախապես գումարվում էր Կոմկուսի խմբակցության նիստը, ուր ավելի հստակեցվում ու կոնկրետացվում էին բոլոր անելիքները: Ավելին, ԿԿ-ի նախագահությունն ու քարտուղարությունն էին որոշում խորհուրդների համագումարների, նրա նստաշրջանների հրավիրման ժամանակացույցը և օրակարգի հարցերը: Համագումարի օրակարգի մշակմանը մասնակցում էր նաև ժողկոմխորհը, որովհետև զեկուցումների ու հաշվետվությունների մեծ մասը սովորաբար ներկայացնում էր կառավարությունը[1]: Իսկ եթե որոշ հարցեր ու խնդիրներ էլ ԿԳԿ-ը իր սեփական նախաձեռնությամբ էր առաջ քաշում, ապա պետք է ստանար ԿԿ-ի համաձայնությունը: Մինչ խորհուրդների համագումարի հրավիրումը ԿԿ-ի կազմբաժին պետք է գաղտնի ուղարկված լիներ ԿԳԿ-ի անդամների և թեկնածուների ցուցակը՝ 2 օրինակից[2]: Կարելի է վստահաբար ասել, որ պետական իշխանության թևերի ու կուսակցության փոխհարաբերությունների պրակտիկան մեզանում սա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, գ. 5, գ. 5, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 842, թ. 1 և 5:

մասավորվեց 1920-ական թթ., իսկ հետագա տասնամյակներին այն ավելի հստակեցվեց ու կատարելագործվեց:

Ինչպես արդեն ասվել է, մինչ խորհուրդների համահայաստանյան I-ին համագումարի հրավիրումը և ԿԳԿ-ի ձևավորումը «հեղափոխության հաղթանակի ուժով» բարձրագույն իշխանության, այդ թվում՝ օրենսդիր մարմնի գործառույթը իրականացնում էր Հայհեղկոմը: Բարձրագույն օրենսդիր մարմնի ստեղծումից զատ՝ համագումարը 1922 թ. փետրվարի 3-ին հաստատեց նաև ՀՍԽՀ անդրանիկ սահմանադրությունը: Եթե իշխանության թևերի սահմանազատման հարցը դիտարկում ենք ընդունված սահմանադրության տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ նա նույնպես, ըստ էության, չի լուծում խնդիրը, հստակ չի սահմանազատում պետական իշխանության թևերի իրավասության և գործառույթների շրջանակները:

ՌՍՖԽՀ 1918 թ. հուլիսի 10-ի սահմանադրությունից ընդօրինակված ու ՀՍԽՀ 1922 թ. սահմանադրությանը հարմարեցված Հիմնական այդ օրենքում առանձնացված են իշխանության հետևյալ ստորաբաժանումները. ըստ ՀՍԽՀ սահմանադրության՝ բարձրագույն իշխանությունը համարվում էր խորհուրդների համահայաստանյան համագումարը, իսկ համագումարների միջև ընկած ժամանակահատվածում նրա ընտրած ԿԳԿ-ն և նախագահությունը՝ ՀՍԽՀ օրենսդիր, կարգադիր ու դեկավար-վերահսկողական բարձրագույն իշխանությունը[1]: ԿԳԿ-ը ներկայանում էր որպես բարձրագույն օրենսդիր մարմին: Առանձնահատուկ կարևորության որոշումների՝ սահմանադրության ընդունման, հանրապետության սահմանների որոշման (ընդունում կամ փոփոխում), երկրի վարչական բաժանման, պետական դրոշի հաստատման, օրենսգրքերի ընդունման և բաղաքական ու տնտեսական այլ կարևորության ակտերի ընդունման իրավասությունը պատկանում էր համահայաստանյան պատգամավորական խորհուրդների համագումարին և նրա ԿԳԿ-ին: Մյուս կողմից, ըստ սահմանադ

[1] ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 4:

ության. խորհուրդների համագումարի ու ԿԳԿ-ի իրավասության մեջ էին մտնում հանրապետության արտաքին ու ներքին քաղաքականության ընդհանուր ղեկավարությունը, օտար պետությունների հետ հարաբերություններ վարելը, պատերազմ հայտարարելը, խաղաղության դաշինք կնքելը, ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր ծրագիր սահմանելը և այլն[1]: Իրավական ու ձևի առումներով այդ ամենը այդպես էր, սակայն գործնականում այլ էր պատկերը: Չնայած սահմանադրության մեջ ոչ մի խոսք չկա կուսակցության տեղի ու դերի մասին, իրականում ամբողջ իշխանությունն իր բոլոր թևերով՝ բարձրագույնից մինչև ստորին, պատկանում էր կոմկուսի ապարատին, նրա կենտրոնական ու տեղական մարմիններին: Հարկ է փաստել, որ պետական բարձրագույն իշխանության մարմին հանդիսացող **խորհուրդների համագումարը** և պարբերաբար գործող **ԿԳԿ**-ը և նրա **նախագահությունը** գտնվում էին կուսակցության անմիջական հսկողության ու ենթակայության տակ: Առանց կուսակցության ԿԿ-ի գիտության ու հանձնարարականի՝ այդ երեք բարձրագույն մարմիններից և ոչ մեկը չէր կարող ինքնուրույն որոշում կայացնել: Ժամանակի ընթացքում բազմակուսակցական համակարգի վերացման, կոմկուսի մենիշխանության հաստատմանը զուգընթաց՝ գնալով ավելի սահմանափակվեցին խորհուրդների իրավասությունները: Դրանք, փաստորեն, վերածվեցին ընդամենը կուսակցության որոշումներին հավանություն տվող ու դրանք հաստատող մարմնի, թեև սահմանադրությամբ համարվում էին հանրապետության **բարձրագույն իշխանությունը**[2]:

Այնուհետև, ըստ հաջորդության, պետական երկրորդ բարձրադիր մարմինը համարվում էր **ժողովրդական կոմիսարների խորհուրդը (ժողկոմխորհը)**, որը կազմվում և հաստատվում էր ԿԳԿ-ի ու նրա նախագահության կողմից[3]: Սակայն սահմանադ-

---

[1] Նույն տեղում, էջ 7:
[2] Նույն տեղում, էջ 4:
[3] Նույն տեղում, էջ 5:

բության այս հատվածում էլ բառախաղ կա, որովհետև դարձյալ հայտնի է, որ կուսակցության ԿԿ-ն ու նրա ապարատը (նախագահություն, քարտուղարություն և կազմբաժին) էին կազմում կառավարության ցանկը և ներկայացնում ԿԳԿ-ի ու նրա նախագահության հաստատմանը: Բայց և դրա հետ մեկտեղ՝ Հայհեղկոմի նման ժողկոմխորհը ևս ուներ օրենքներ և օրենսդրական ակտեր ընդունելու գործառույթ: Նա իր իրավասության սահմաններում կարող էր հրատարակել օրենքի ուժ ունեցող դեկրետներ, որոշումներ, հրահանգներ: Ի դեպ, նման կարգ կար նաև Հայաստանի առաջին հանրապետության ժամանակ, երբ այս կամ այն պատճառով խորհրդարանն ուղարկվում էր հարկադիր արձակուրդ, սակայն պայմանով, որ կառավարության ընդունած օրենք-որոշումները պետք է հետո վերահաստատվեին խորհրդարանում:

ՀՍԽՀ պայմաններում սահմանադրությամբ ԿԳԿ-ը իրավասու էր հարկ եղած դեպքում կասեցնել կամ բեկանել ժողկոմխորհի ցանկացած դեկրետ կամ որոշում[1]: Բայց գործնականում, առանց կուսակցության ԿԿ-ի ու նրա նախագահության գիտության ու համաձայնության, ԿԳԿ-ը չէր կարող չեղյալ համարել ժողկոմխորհի որոշումները: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի 1922 թ. փետրվարի 2-ի կայացրած որոշումը, որով «ժողկոմատները կարող են գործերը հանձնել Համառուսաստանյան ԿԳԿ-ին միայն ԿԿ-ում համապատասխան որոշում կայացնելուց հետո, որպեսզի Համառուսաստանյան ԿԳԿ-ը հնարավորություն չունենա փոխել ԿԿ-ում հավանության արժանացած ժողկոմատների որոշումները»[2]: Կասկած չկա, որ Քաղբյուրոյի որոշումը տարածվել է նաև ազգային հանրապետությունների ԿԳԿ-ների վրա, որովհետև Համառուսաստանյան ԿԳԿ-ի իրավասության սահմանափակման դեպքում չէր կարող նույն կերպ չսահմանափակվեր հանրապետությունների ԿԳԿ-ներինը: Հարկ է

---

[1] Նույն տեղում, էջ 5–6:

[2] *Гимпельсон Е. Г.,* Путь к однопартийной диктатуре, «Отечественная история», РАН, М., 1994, N 4-5, с. 105.

նշել, որ ժամանակի ընթացքում ԿԳԿ-ի գործառույթները մեծ չափով իր վրա վերցրեց ավելի նեղ շրջանակով գործող ԿԳԿ-ի նախագահությունը, որն իրավասու էր հաստատել կառավարության որոշումները և նշանակել կառավարության կողմից առաջադրված ժողկոմիսարներին[1]: Այդուհանդերձ, իշխանության թևերի տարանջատման տեսակետից ստացվում է, որ օրենսդիր մարմնի իրավասություններ ու գործառույթներ են ունեցել, ինչպես խորհուրդների համագումարն ու նրա ընտրած ԿԳԿ-ը, այնպես էլ Ժողկոմխորհը (կառավարությունը): Սա նշանակում է, որ օրենսդիր (խորհուրդներ) և գործադիր (կառավարող) մարմինների գործառույթներն առանձին դեպքերում միախառնված են եղել իրար:

Ինչ վերաբերում է **դատական իշխանությանը**, ապա սահմանադրության մեջ չկա ժամանակակից չափանիշներով ընդունված հատուկ գլուխ դատական իշխանության վերաբերյալ: Դրա փոխարեն ՀՍԽՀ Սահմանադրության 1-ին բաժնի ընդհանուր դրույթների 10-րդ գլխի ա. ենթակետով, որը, ի դեպ, բառացիորեն վերցված էր խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում (1918 թ. հունվար) ընդունված «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայից», հռչակվում էր, որ «բանվորա-գյուղացիական իրավունքի աղբյուր ճանաչվում է խորհրդային օրենսդրությունը, սոցիալիստական իրավահայեցողությունը և հեղափոխական խիղճը», իսկ բ. ենթակետով՝ որպես արդարադատության հիմք, ընդունվում էր ժողովրդական դատարանը, հարկ եղած դեպքում նաև արտակարգ դատարանների անհրաժեշտությունը[2]:

Հայեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ին ընդունած դեկրետը եկավ վերջ դնելու նախկին իրավահարաբերությունները՝ Ռուսական կայսրության օրենքների ժողովածուների՝ «Հավաք-օրինաց»-ի 16 հատորներին, ինչպես նաև 1917 թ.-ից մինչև 1920 թ. ընկած ժա-

---

Верт Н., История Советского государства. 1900–1991, М., 1992, с. 112–113.

[2] ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 3, «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1922 թ.:

մանակահատվածում Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան սեյմի և Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կատարած բոլոր փոփոխություններին ու լրացումներին[1]: Ուժը կորցրած համարվեցին ՀՀ պառլամենտի և կառավարության ընդունած 1000-ից ավելի օրենքներ, ակտեր ու որոշումներ[2]: Արմատավորվեց նոր, խորհրդային իրավունք, որն այդուհետ հիմնված էր լինելու ՌՍՖԽՀ օրենսդրության վրա՝ ՀՍԽՀ ընդունած փոփոխություններով: Վերացնելով Առաջին հանրապետության նոր ձևավորվող օրենսդրությունը՝ իրավաօրենսդրական առումով, իբրև Խորհրդային Ռուսաստանի նմանակ, ՀՍԽՀ տարածքում օրենքի ուժ ստացան ՌՍՖԽՀ օրենսդրությունը և իրավակարգը՝ դրանք հարմարեցնելով ու տեղայնացնելով Հայաստանի պայմաններին ու առանձնահատկություններին: Հաստատելով նոր արդարադատություն՝ վերացվեցին Առաջին հանրապետության քառաստիճան դատարանները՝ հաշտարար, օկրուգային (շրջանային), դատական պալատ և Սենատ, ինչպես նաև ժամանակավոր հատուկ (արտակարգ) դատարանները և այլն: Դրա փոխարեն, ՌՍՖԽՀ օրինակով, Արդարադատության ժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով հիմնվեցին պրոլետարական դասակարգային դատարաններ՝ ժողովրդական դատարաններ: Դատավորները առաջ էին քաշվում դասակարգային սկզբունքով և սկզբում նշանակվում էին հեղկոմների կողմից: Հեղկոմների կառավարման շրջանում, քանի որ դեռ չկար օրենսդրություն (քրեական, դատավարական, վարչական, դատախազական հսկողություն և այլն), արդարադատություն իրականացնելիս դատավորներն առաջնորդվում էին «**սոցիալիստական ինքնագիտակցությամբ և հեղափոխական խղճով**»[3]: Եվ այս կարգախոսով էլ ընթանում էր դատավարությունը և կայացվում դատավճիռ: Հայհեղկոմի 1921 թ.

---

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 444:
[2] Հայաստանի խորհրդարանի օրենքները 1918–1920 թթ., Ե., 1998:
[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 22, ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923, էջ 219:

հունվարի 15-ի դեկրետով հիմնվեցին հատուկ դատական մարմիններ՝ **Հեղափոխական Գերագույն տրիբունալ**՝ Հայհեղկոմին կից և **Հեղափոխական տրիբունալ**՝ Արդարադատության ժողկոմատին կից: Դրանց կայացրած մահապատժի վճիռը պիտի հաստատեր Հայհեղկոմը[1]: Այս շրջանից արդեն կիրառություն է ստանում **Արտակարգ եռյակների** ստեղծումը, որը նորույթ չէր խորհրդային երկրի պատմության մեջ: ՀԺԿԽ նախագահ և Ռազմական գործերի ժողկոմ Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ 1922 թ. հունվարին ընդունվում է դեկրետ՝ դասալիքների դեմ պայքարի համար Արտակարգ եռյակներ ստեղծելու մասին: Իր գործունեության մեջ եռյակը գրեթե ոչնչով չէր սահմանափակվում. պատժում էր դասալիքներին և նրանց թաքցնողներին՝ ընդհուպ մինչև գնդակահարություն[2]: Եթե սկզբում այս օրենքը տարածվում էր զինվորական ծառայությունից խուսափող դասալիքների, ապա հետագայում՝ նաև ժողովրդի թշնամի որակվող բաղաքացիական բնակչության վրա:

Փաստորեն, մինչև 1922 թ. կեսերը Հայաստանում չի գործել քրեական հաստատուն օրենք: Արդեն 1922-1923 թթ. ընթացքում որոշ քայլեր կատարվեցին «սոցիալիստական իրավահայեցողության և հեղափոխական խղճի» վրա հիմնված խորհրդային դասակարգային արդարադատության փոփոխման և իրավունքի վրա հիմնված օրենսդրության արմատավորման ուղղությամբ: ՌՍՖԽՀ օրինակով ՀՄԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. հունիսի 29-ի որոշմամբ մտցվեց արդարադատության երկու թևերի՝ **դատական պաշտպանություն** և **դատախազական** համակարգ[3]: Արդարադատության նոր մարմին հանդիսացող դատախազական հսկողությունը ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար դարձավ միասնական: 1923 թ. հուլիսի 23-ին ՀՄԽՀ ԿԳԿ-ն ընդունեց Քրեական օրենսգիրքը՝

---

[1] ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923, էջ 223:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 136, թ. 4:
[3] ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923, էջ 224:

հիմնվելով Խորհրդային Ռուսաստանի նույնանուն օրենսգրքի վրա: Խմբագրվեց նաև Քրեադատավարական օրենսգիրքը[1]: ՆԷՊ-ի պահանջների ոգով Հայաստանում ևս մշակվեց Քաղաքացիական օրենսգիրքը և ԿԳԿ-ի 1923 թ. փետրվարի 13-ի նիստում հաստատվեց ու ապրիլ ամսից դրվեց գործողության մեջ: Նրանում սահմանվում էր պետական սեփականության գերակայությունը, խրախուսվում էր կոոպերացիաների, նաև թույլատրվում սահմանափակ ծավալով մասնավոր սեփականության հնարավորություն[2]: 1923 թ. սեպտեմբերի 23-ին ընդունվեց ՀՍԽՀ դատարանակազմության մասին կանոնադրությունը, որով վերացվեցին ժողդատավորների խորհուրդները և Արդարադատության ժողկոմատին կից գործող Հեղափոխական տրիբունալը: Դրանց գործառույթներն անցան նոր կազմակերպված **Գլխավոր դատարանին**[3]: 1923 թ. մայիսի 1-ից բացվեց ԿԳԿ-ին կից գործող ՀՍԽՀ ընդհանուր վճռաբեկ դատարան, բացվեցին նոտարական գրասենյակներ և այլն[4]: Ինչպես նկատում ենք, խորհրդային իրավաօրենսդրական ու դատական համակարգը աստիճանաբար ստանում է քաղաքացիական բնույթ, սակայն նրա դասակարգային էությունը և կախվածությունը կուսակցական ապարատից չփոխվեց: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահությունն էր նշանակում հանրապետության դատավորներին: Այսպես՝ ԿԿ-ի նախագահության 1923 թ. հունիսի 4-ի նիստում որոշվել է Ջ. Աշրաֆյանին, Հ. Գալիկյանին, Բաղդասարյանին, Ալտուրովին, Խ. Սամուելյանին նշանակել հանրապետության դատավոր[5]: Այլ խոսքով՝ ԿԿ-ի նախագահությունն է նշանակել հանրապետության դատավորներին: Այսինքն՝ կուսակցական մարմինը ոչ թե **առաջարկում** կամ, ավելի մեղմ ասած, երաշխա-

---

[1] Նույն տեղում, էջ 219:
[2] Նույն տեղում, էջ 221, Դեկրետների և որոշումների հավաքածու (Քաղաքացիական օրենսգիրք), Ե., 1923, էջ 1 և 12:
[3] Պետրոսյան Շ. Ն., Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Ե., 1961, էջ 55–57:
[4] ՀԱԱՀ, ֆ. 1, ց. 3, գ. 115, թ. 12–17:
[5] ՀԱԱՀ, ֆ. 113, ց. 3, գ. 144, թ. 74:

վորում էր որևէ մեկի թեկնածությունը, այլ ուղղակի կատարում էր դատավորների **նշանակում**: ԿԿ-ի քարտուղարությունն էր որոշում դատական ամենաբարձր մարմնի՝ ՀՍԽՀ Գերագույն դատարանի կազմը, նրա համալրման ու փոփոխման հարցերը: Օրինակ, ԿԿ-ի քարտուղարության 1926 թ. դեկտեմբերի 25-ի նիստում, քարտուղարներ՝ Աշ. Հովհաննիսյանի, Ալ. Շահսուվարյանի, Ա. Շահգելդյանի մասնակցությամբ, որոշվում է Գերագույն դատարանի նախագահ Զ. Աշրաֆյանին ազատել իր պաշտոնից և ընդգրկել Արդարադատության ժողկոմատի կոլեգիայում: Այդ նույն նիստում նաև որոշվում է ԳԴ կազմը լրացնել 5 մարդկանցով[1]: Բերենք նմանատիպ մեկ այլ փաստ. ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարության 1926 թ. մայիսի 3-ի հույժ գաղտնի գրության քաղվածքից պարզվում է, որ ԿԿ-ը լսել է Գերագույն դատարանի կազմի մասին հարցը և հաստատել է այն հետևյալ կազմով՝ Բաղդասարյան (նախագահ), Հ. Գալիկյան (տեղակալ), Ա. Տեր-Հակոբյան, Ա. Եսայան ու Ա. Խանդամիրյան: Քարտուղարության այդ նույն նիստում գլխավոր դատավորներ են հաստատվել Վ. Խարմանդարյանը (նախագահ), Գ. Ղարիբջանյանը (տեղակալ) ու ևս հինգ անդամ[2]: Նման երևույթը կարելի է որակել որպես քաղաքական մարմնի կոպիտ միջամտություն պետական իշխանության մարմնի՝ դատարանակազմության ու արդարադատության գործերին: Սա միաժամանակ խոսում է խորհրդային դատարանի կուսակցական ապարատից ուղղակի և անմիջական կախվածության մասին: Ինքնին հասկանալի է, որ նման դատարանն ու դատավորները չէին կարող անկախ և ազատ արդարադատություն իրականացնել: Խորհրդային երկրում դատահիրավական ոլորտներում արձանագրվել են բազում իրավախախտումներ ու ապօրինություններ: Հայտնի իրողություն է նաև այն, որ խորհրդային բազմազգ երկրում դատական շատ գործեր պարզապես վճռվում էին դատարանից դուրս՝ հեռակա կարգով, կուսակցական գերատեսչություններում՝ գրաթ-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 11, թ. 188–189:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 144, թ 208–209:

յունեներով, կուսմարմինների կաբինետներից հեռախոսային զանգերի միջոցով և այլն[1]: Ցավոք, սա դառը դաս պետք է համարվի նաև մեր ժամանակների համար:

Ժամանակի ընթացքում աստիճանաբար դատավորների իրավասությունները սահմանափակվեցին. նրանք զրկվեցին կասկածյալների վրա մեղադրանք հարուցելու, հետապնդումը դադարեցնելու, կարճելու և այլն հնարավորություններից: Վերոշարադրյալը հիմք է տալիս պնդելու, որ խորհրդային ամբողջ տարածքում դատական համակարգը չձևավորվեց իբրև իշխանության առանձին թև: Դատախազը և քննիչը աստիճանաբար դուրս բերվեցին դատական գերատեսչությունից: Դատախազությունը դարձավ ինքնուրույն կառավարչական մարմին: Փորձեր արվեցին սահմանազատել դատախազության և Չեկայի իրավասության շրջանակները: Չեկայի գործառույթը պետք է լիներ քաղաքական և քրեական բանդիտիզմի դեմ պայքարը՝ չմտնելով դատախազության և ընդհանրական մարմինների գործունեության ոլորտները՝ գողություն, սպանություն, բռնաբարություն և այլն: Չնայած երկիրն անցել էր խաղաղ աշխատանքի, Չեկան և ապա նրա իրավահաջորդ Պետական քաղաքական վարչությունը (ՊՔՎ) հաճախ գերազանցում էին իրենց իրավասության սահմանները: Որպեսզի պատկերը պայծառ լինի, բերենք մեկ-երկու փաստ: Բանդիտիզմի, թալանի, բնակիչներին ահաբեկելու մեղադրանքներով ՀՍԽՀ Չեկայի կոլեգիան 1922 թ. դեկտեմբերին և 1923 թ. հունվարին մահապատժի վճիռներ է կայացրել դեկտեմբեր ամսին՝ երկու, իսկ հունվարին՝ երեք հոգու հանդեպ: Երկու դեպքում էլ որոշումներն ի կատար են ածվել գիշերը[2]: Չեկայի (ՊՔՎ) իրավասության սահմանների գերազանցման մասին է փաստում հանրապետության դատախազ Լ. Վարդապետյանն իր ներկայացրած 1924/25 թթ. տարեկան հաշվետվության մեջ: Նա դա բացատրում է այն հանգամանքով, որ

---

[1] История России XX век. (1894-1939), ответст. ред. Зубов А. Б., М., 2009, с. 779–780. *Хоцей А. С.,* Теория общества, т. III /2. http//www.materialist.ksn.ru/kniga 10/s 73, php 3.

[2] «Խորհրդային Հայաստան» 4 և 27 հունվարի 1923 թ.:

մինչ այդ չեն եղել Չեկայի և դատախազության փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտեր: Հարթ չեն ընթացել նաև դատախազության և կուսկազմակերպությունների փոխհարաբերությունները: Դատախազ Լ. Վարդանյանը փաստում է, որ «Հաճախ գավկոմները ներխուժել են ինչպես դատախազության, այնպես էլ քննչական մարմինների ոլորտները»[1]: Դատախազությունն իր հատուկ ներկայացուցիչներով դատախազական վերահսկողություն էր իրականացնում ժողկոմատին հավասար իրավասություն ունեցող **Բանվորա-գյուղացիական տեսչությունում (ԲԳՏ)**[2], ինչպես նաև գավառային գործկոմներում՝ մասնակցելով դրանց նիստերին և հետևելով, որ կայացված որոշումները չհակասեն օրենքներին[3]: Դատախազությունը որոշակի կապեր ուներ նաև ՀԿ(բ)Կ ԿԿ-ին կից ստեղծված **Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի (ԿՎՀ)**[4] հետ, որը քննում էր կուսակցական և պետական բնույթի կարգապահական հարցեր: Հաշվի առնելով, որ ԲԳՏ-ն և ԿՎՀ-ն իրենց մի շարք գործառույթներում կրկնում էին իրար, այդ իսկ պատճառով, Ռուսաստանի օրինակով, 1923 թ. ԿՎՀ-ն և ԲԳՏ-ն միավորվեցին: Այդ միավորումը նպատակ էր հե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 116, ց. 4, գ. 4, թ. 31:

[2] Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանին կից գործող Պետական վերահսկիչ մարմնի փոխարեն Հայհեղկոմի 1921 թ. հունվարի 4-ի դեկրետով ստեղծվեց պետական վերահսկիչ նոր մարմին, որին դասակարգային բնույթ տալու համար կոչվեց Բանվորա-գյուղացիական տեսչություն (ԲԳՏ): ԲԳՏ-ն ուներ կառավարության դեկրետների ու որոշումների կատարումը հսկելու և վերաստուգելու, կենտրոնական և տեղական իշխանության մարմինների աշխատանքների օրինականությանը հետևելու, զանազան ապօրինությունների ու շահատակությունների դեմ պայքարելու գործառույթներ և այլն: Նրա տեսչությունները գործում էին գավկոմներին կից (տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 453–455, ՀԱԱ, ֆ. 1, գ. 1, գ. 122, թ. 164):

[3] ՀԱԱ, ֆ. 116, ց. 4, գ. 4, թ. 30–31, ֆ. 1, ց. 5, գ. 53, թ. 92–94:

[4] Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովը կուսակցության բարձրագույն վերահսկիչ մարմինն էր: Համապետական մակարդակով այն առաջին անգամ ընտրվել է Ռ-Կ(բ)Կ 10-րդ համագումարում: ԿՎՀ կարող էին ունենալ ԿԿ ունեցող կուս կազմակերպությունները: Բնականաբար ԿՎՀ ուներ նաև Հայկոմկուսը: ԿՎՀ-ն ուներ իր մարզային և նահանգային հանձնաժողովները: Նրա անդամը չէր կարող լինել տվյալ կուսկոմիտեի անդամ և չէր կարող զբաղեցնել վարչական պատասխանատու պաշտոն: ԿՎՀ հաշվետու էր կուսակցության համագումարի առաջ:

տապնդում համակարգել կուսակցական, պետական ու տնտեսական մարմինների աշխատանքները, սերտ կապ հաստատել պետական և կուսակցական վերահսկողության ղեկավար մարմինների միջև[1]: ԿՎՀ նախագահը միաժամանակ ԲԳՏ ժողկոմ էր: Միաժամանակ ԿԿ-ն ընտրում էր իր **Կենտրոնական վերստուգիչ (ռևիզիոն) հանձնաժողովը (ԿՎՀ)**: Տեղերում ևս ստեղծվում էին վերստուգիչ հանձնաժողովներ, որոնք ստուգում էին տվյալ կուսմարմնի գործերի վիճակը, տնտեսական, ֆինանսական, գույքային և այլն: ԿՎՀ կանոնադրությամբ տվյալ կուսկոմիտեի անդամը միաժամանակ չէր կարող լինել վերստուգիչ (ռևիզիոն) հանձնաժողովի անդամ[2]:

Վավերագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չի եղել հստակ տարանջատում կուսակցական, խորհրդային, գործադիր-կարգադրիչ և դատական մարմինների գործառույթների միջև: Օրինակ՝ Ն. Գ. ժողկոմատի վարչակազմակերպչական և դատական մարմինների գործառույթների միջև չկար հստակ տարանջատում: Հաճախ դատական բնույթի հարցերը լուծվում էին գավգործկոմներում, որոնք տեղի էին տալիս թյուրիմացությունների և աշխատանքային կոնֆլիկտների դատական և ներքին գործերի վարչական մարմինների միջև[3]: Դատական և վարչական բնույթի չարաշահումներ են արձանագրվել գավառամասային և գավառային գործկոմների կողմից: ՀՍԽՀ Արդարադատության ժողկոմ Դ. Շահվերդյանը և հանրապետության դատախազի տեղակալ Ի. Վարդանյանը 1923 թ. օգոստոսի 22-ին գրություն են ուղարկել ՀՍԽՀ ԿԳԿ, որում կարդում ենք. «Հաճախ նկատվում է, որ շրջանային գործադիր կոմիտեի նախագահների ու նրանց ենթակա օրգանների կողմից զանազան դեպքերի առթիվ ադմինիստրատիվ ձևով կատարվում են **բանտարկություններ** և կարճ

---

[1] ՍՍԿԿ բանաձևերում, հ. 3, 1922–1925 թթ., Ե., 1987, էջ 123:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 47, թ. 6:
[3] ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923, էջ 14:

ժամանակից հետո իրենց կարգադրությամբ արձակվում, այդպիսով՝ կատարելով դատական օրգաններին պատկանող ֆունկցիաներ»[1]: Այս երևույթը այնքան տարածված է եղել հանրապետությունում, որ նույն պատճառաբանությամբ Աշխատանքի ժողկոմ Ի. Հովսեփյանի՝ ԿԳԿ-ին ուղղված սեպտեմբերի 4-ի գրությամբ դարձյալ բողոք է հայտնվում, որ տեղերում ինքնատուրքի գանձման ենթակա ՓՕԿ-երի (Փոխադարձ օգնության կոմիտեների) անդամների վրա շրջգործկոմների կողմից կատարվում են մեծ ծրնշումներ, որի ժամանակ տեղի են ունենում նույնիսկ բանտարկություններ: Ուստի խնդրվում էր կարգադրել գավգործկոմներին, որպեսզի նրանց միջոցով դադարեցվի շրջաններում վարչական կարգով ինքնատուրքի հավաքումը[2]: Պարենտուրքի գանձումը դրժվար է ընթացել Նոր Բայազետի գավառում: Գյուղատնտեսական հարկի մթերումների ձգձգման կամ թաքցնելու պատճառով գավառի տեղական իշխանությունները դիմել են անգամ ռեպրեսիվ միջոցների: Չեկայի ամփոփագրերից մեկում արձանագրված է, որ ժամանակին հարկերը չգանձելու համար գավառային հանձնաժողովի որոշմամբ 1923 թ. աշնանը վարչական կալանքի են ենթարկվել 130 մարդ, ովքեր ի վիճակի են եղել գանձել հարկը, սակայն ժամանակին չեն վճարել: Հիշյալ անձինք ազատվել են կալանքից միայն հարկերը վճարելուց հետո[3]: ՊՔՎ 1924 թ. հոկտեմբեր ամսվա տեսության մեջ փաստվում է գյուղացիներից չափից ավելի բարձր հարկեր գանձելու մասին: Այսպես՝ Էջմիածնի գավառում, որտեղ տեղական բյուջեի հարկերը կրկնակի գերազանցել են գյուղատնտեսական հարկը, ապառքները գանձելու ժամանակ գյուղացիներին ձերբակալել են և պահել բանտարկված, մինչև որ նրանք հարկադրված են եղել վաճառել իրենց գույքը և փակել կոտակված պարտքը[4]: Քանի որ սկզբնական շրջանում գյուղխոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 104, թ. 18:
[2] Նույն տեղում, թ. 24:
[3] Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), Ե., 2013, թիվ 1, էջ 97:
[4] «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 2, часть I, М., 2001, с. 226.

հուրդները չունեին սեփական բյուջե, ուստի գյուղապարատի պահպանման ծախսերի համար գյուղացիներից գանձվում էին զանազան տեսակի ապօրինի տուրքեր: Օգտվելով գյուղական զանգվածների իրավական անգրագիտությունից՝ տեղական իշխանությունները տուրք չգանձողներին ձերբակալում էին կամ կատարում այլ բնույթի իրավախախտումներ[1]: Մինչդեռ հայտնի է, որ գյուղխորհուրդների ապարատի, դպրոցի, բուժակի և այլ ծախսերը օրենքով մտնում էին գավառամասերի բյուջեի նախահաշիվների մեջ: Արձանագրվել են դեպքեր, երբ տեղական իշխանությունների կողմից կատարվել են տարաբնույթ անօրինական ձերբակալություններ: Ինչպես կարդում ենք Հայչեկայի 1923 թ. հունիսի 9-ի մի ամփոփագրից. «...մեր շատ գավառներում նկատվում են ոչնչով չհիմնավորված ձերբակալություններ, որոնք իրականացնում են տեղամասային իշխանությունները»[2]: Տարբեր մարմինների կողմից ստացված բողոք-գրություններից հետո հետևում է ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1923 թ. հոկտեմբերի 26-ի շրջաբերական գրությունը՝ ուղղված բոլոր գավգործկոմներին և Մեղրիի շրջգործկոմին, որով պահանջվում էր վերջ տալ վարչական կարգով մարդկանց ձերբակալության ենթարկելուն և բռնի կերպով տուրք նշանակելուն[3]: Այսպիսով՝ ստացվում է, որ տեղական իշխանության մարմինները ևս կամա թե ակամա ստանձնել են վարչատստիկանական և դատական իշխանության գործառույթներ:

Ավելի ուշ տեսնում ենք, որ գավգործկոմների վարչական բաժիններն օժտվում են նոր իրավասություններով: ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1928 թ. հուլիսի 13-ի որոշումով գավգործկոմների վարչական բաժիններին իրավունք է վերապահվում քաղաքներում վարչական ներգործության միջոցներ կիրառել՝ խուլիգանական արարքների՝ ծեծի, վիրավորանքի, անպատվության և նման այլ մանր իրավախախտումների դեմ: Օրենքի ուժ ունեցող այդ ակտով դատական

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 53, թ. 92–94:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 116, թ. 14:
[3] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 104, թ. 23:

հիմնարկների գործառույթներից հանվում է Քրեական օրենսգրքով նախատեսված 98 հոդվածի 1-ին մասը և հանձնվում գավգործկոմների վարչական բաժիններին: Հոդվածի այդ մասով նախատեսվում էր 3 ամիս ազատազրկում և մինչև 300 ռուբլի տուգանք[1]: Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ գործադիր-կարգադրիչ և դատաիրավական մարմինների իրավասությունները և գործառույթները խառնված են, և հաճախ դժվար է պարզել, թե որտեղ են վերջանում գործադիր մարմնի գործառույթների սահմանները և որտեղ սկսվում՝ դատական իշխանությանը: Իսկ այդ բոլորը թելադրվում, վերահսկվում և ուղղորդվում էին ամենազոր կուսապարատի կողմից:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի օրինակով խորհրդայնացված Հայաստանում ևս ձևավորվեց միակուսակցական վարչակարգ: Առաջին մեկ տարում բարձրագույն իշխանություն ճանաչվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն կամ Հայհեղկոմը, որին փոխարինելու եկան ընտրությունների ճանապարհով ձևավորված խորհուրդները: Սակայն հեղկոմներից խորհուրդներին անցնելով՝ պետական իշխանության բովանդակության մեջ էական փոփոխություն չկատարվեց, իշխանության թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական, հստակ տարանջատում և հակակշռում տեղի չունեցավ: Պետականության կայացման ճանապարհին թեև հրատարակվեցին բազմաթիվ դեկրետներ ու որոշումներ, ընդունվեց ՀՍԽՀ Սահմանադրություն, կուսակցական-պետական ղեկավարության կողմից շարունակ խոսվում էր իշխանության թևերի տարանջատման անհրաժեշտության մասին, որ կուսակցական մարմինները չպետք է փոխարինեն խորհրդային-տնտեսական մարմիններին և այլն, սակայն այդպես էլ տեղի չունեցան օրենսդիր-կարգադիր, կառավարող-գործադիր և դատական իշխանությունների իրավասությունների ու գործառույթների հստակ սահմանազատում: Ամենամեծ խնդիրն այն էր, որ իշխանության երեք թևերում էլ իրական և

[1] «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի 1928 թ.:

փաստական իշխանությունը գործնականում պատկանում էր կոմունիստական-բոլշևիկյան կուսակցությանը, որը հաճախակի միջամտում էր պետական այս կամ այն մարմնի աշխատանքներին կամ պարզապես փոխարինում նրան: Պետական ամբողջ իշխանությունը, նաև հասարակական կյանքը փաստորեն կուսակցականացված էր: Կուսակցական-քաղաքական որևէ մարմնի ղեկավարը, որպես կանոն, միաժամանակ վարում էր պետական իշխանության որևէ կառույց: Ժամանակի ընթացքում բարձրագույն իշխանություն համարվող խորհուրդները գործնականում վերածվեցին կուսակցական ապարատի կցորդի, ըստ էության, պետության դեկորատիվ մի մարմնի: Այդ իմաստով դեկլարատիվ ու կեղծ է հնչում ՀՍԽՀ սահմանադրության 5-րդ հոդվածի ա. ենթակետում հռչակված այն թեզը, թե «Իշխանությունը ամբողջովին և բացառապես վերապահվում է բանվորներին ու գյուղացիներին և նրանց ընտրած մարմիններին»[1]: Առավել ևս խոսք չէր կարող լինել դատական իշխանության անկախության մասին: Դա նույնպես ոչնչացվեց կուսակցական մարմինների կոշտ վերահսկողության տակ: Այդպիսով՝ խորհրդային բանվորագյուղացիական համարվող երկրում ի սկզբանե ամբողջ իշխանությունը անբաժան և մենաշնորհ կերպով յուրացվեց բոլշևիկյան-կոմունիստական կուսակցության, ավելի ստույգ՝ կուսապարատի ու նրա ընտրախավի կողմից: Եվ այդ երևույթը պահպանվեց խորհրդային պետության ողջ գոյության ընթացքում:

2. *Խմբակայնությունը, ընդդիմությունը և ներկուսակցական բանավեճերը*

Խորհրդային երկրի 1920-ական թթ. հասարակական-քաղաքական և ներկուսակցական կյանքը, ի տարբերություն հետագա

---

[1] ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922, էջ 2:

տասնամյակների, բավականին հագեցած է եղել, որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով:

1) Կապիտալիզմից սոցիալիզմին անցման դժվարություններով ու շատ հարցերում անորոշությամբ, որովհետև բոլշևիկ ղեկավարությունը, այդ թվում նաև Վ. Լենինը, հստակ պատկերացում չունեին նոր կառուցվելիք սոցիալիստական ու կոմունիստական կոչվող հասարակարգի մասին[1]: Եվ սա, ինքնին, տարաբնույթ բանավեճերի լայն դաշտ էր ստեղծում: Քաղաքացիական կռիվների ավարտից հետո ակներև դարձավ ներկուսակցական տարաձայնությունների ու պայքարի սրումը կրեմլյան կուսակցական-պետական բարձրագույն ղեկավարության շրջանում: Ծավալվեցին ներկուսակցական բանավեճեր սոցիալիզմի կառուցման ուղիների, կուսակցության և արհմիությունների տեղի ու դերի, սոցիալիստական դեմոկրատիայի, ազգային և այլ հարցերի ու խնդիրների շուրջ:

2) Ներկուսակցական բանավեճերը և ակտիվ քննարկումներն ուժեղացան հատկապես Վ. Լենինի հիվանդության ու մահվանից հետո, որովհետև չկար սոցիալիզմի կառուցման հստակ հայեցակարգ: Սկզբունքային բանավեճի առարկա դարձավ այն հիմնահարցը, թե 1924 թ.-ից սկսված կապիտալիզմի համեմատական կայունացման պայմաններում պե՞տք է արդյոք բորբոքել համաշխարհային հեղափոխության հրդեհը, թե՞ հնարավոր է կապիտալիզմի շրջապատման պայմաններում սոցիալիզմի կառուցումը առանձին վերցրած մեկ երկրում, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր: Այդ բանավեճը միաժամանակ ուղեկցվում էր իշխանության բարձրագույն ղեկի մրցակցային պայքարով, որի գլխավոր դերակատարներն էին Ի. Ստալինը և Լ. Տրոցկին:

3) 1920-ական թթ. ներքաղաքական կյանքը հատկանշվեց կուսակցական վերնախավում ընթացող ներկուսակցական բուռն բանավեճերով ու հակամարտություններով, այսպես կոչված,

---

[1] Այդ մասին հանգամանորեն տես *Հակոբյան Ա.* Սոցիալիզմի լենինյան կոնցեպցիան, «Լենինյան ուղիով», Ե., 1990, N 3, էջ 20-28:

«տրոցկիստների», «Բանվորական օպոզիցիայի», «Դեմոկրատական ցենտրալիստների», 1923 թ.՝ «Եռյակի» (Լ. Կամենև, Գ. Զինովև, Ի. Ստալին) և Լ. Տրոցկու, այնուհետև 1925 թ.՝ «Նոր օպոզիցիայի» (Գ. Զինովև, Լ. Կամենև, Գ. Սոկոլնիկով, Ն. Կրուպսկայա), 1926-1927 թթ.՝ «Տրոցկիստական-զինովևական» խմբավորման (բլոկի) և վերջապես 1928-1929 թթ. «Աջ» թեքման կամ բուխարինականների դեմ պայքարի դրսևորումներով, որոնք, ինչպես հայտնի է, ավարտվեցին կուսակցության ճնշող մեծամասնությունը կազմող հիմնական թևի՝ «Լենին-Ստալինյան» գծի հաղթանակով և վերոնշյալ մնացած բոլոր թեքումների, խմբերի ու պլատֆորմների ջախջախումով: Ինչպես ՌԿ(բ)Կ-ում, այնպես էլ ՀԿ(բ)Կ-ում ստալինիզմը նույնացված է լենինիզմին, իսկ տրոցկիզմը՝ որպես թշնամական: Պետք է նկատի առնել, որ Տրոցկու և Ստալինի միջև եղել է նաև անձնական հակակրանք, որը Վ. Լենինի հատկապես մահից հետո վերածվեց միմյանց նկատմամբ փաստորեն անձնական հաշվեհարդարի: Այս երևույթները բնականաբար նմանակվել ու կրկնօրինակվել են ինչպես ազգային մյուս շրջաններում, այնպես էլ ՀՍԽՀ-ում, նրա կուսակցական ու պետական մարմիններում: Եթե անգամ Հայաստանում իրականում, օրինակ, «տրոցկիստ» չլիներ, ապա այդպիսին անպայման պետք է հայտնաբերվեր և «ջախջախվեր»:

4) Նշված ժամանակաշրջանում ՀՍԽՀ-ում տեղի էր ունենում ոչ պրոլետարական, բուրժուական ու հակահեղափոխական որակվող կուսակցությունների հետևողական բայքայման ու լուծարման գործընթաց: Դա նպաստավոր միջավայր էր ՀԿ (բ)Կ-ի համար գաղափարական և դասակարգային թշնամիների դեմ պայքարի տեսակետից: Անհրաժեշտ էր մաքրել «պրոլետարիատի դիկտատուրայի» պետության քաղաքական դաշտը արտաքին թշնամական որակվող կուսակցություններից, իսկ մյուս կողմից՝ կոմկուսի շարքերում ի հայտ եկող ներքին ընդդիմադիր խմբերից, պլատֆորմներից և ստեղծել միանման մտածող ու գործող մարդկանց ամբողջություն:

5) Նշված ժամանակաշրջանում խորհրդային երկրի հասարակական-քաղաքական ակտիվ բանավիճային մթնոլորտի համար սոցիալ-քաղաքական որոշակի հոդ էր ստեղծում Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ-ը)՝ իբրև սոցիալիզմի անցման անհրաժեշտ օղակի: Սակայն ՆԷՊ-ը մի կողմից նպաստում էր ապրանքադրամային, շուկայական հարաբերությունների աշխուժացմանը, իսկ մյուս կողմից՝ երբեմն տարընթերցումներ ու անհասկացողություններ էր առաջացնում կուսակցական ու պետական ղեկավար շրջանակներում՝ սոցիալիզմի կառուցման հեռանկարի հարցում: Բացի այդ, ինչպես արդեն ասվել է, արտասահմանում՝ հակախորհրդային շրջանակներում, կային սպասումներ, «սմենովեխական» (1921 թ. Պրահայում լույս տեսած «Սմենա վեխ»-ի ժողովածուի անունով) և այլ դրսևորումներով, թե ՆԷՊ ի կուրսը, ի վերջո, խորհրդային երկիրը կտանի վերադարձման ու հին կարգերի վերականգնման ուղիով:

6) Եվ, վերջապես, 1920-ական թթ. հասարակական-քաղաքական ակտիվ կյանքն իր արտացոլումն էր գտնում գրական կյանքի (շարժման). մշակույթի տարբեր ոլորտներում: Բանավեճեր էին ընթանում գրական-գեղարվեստական տարբեր հոսանքների միջև, տուրք տա՞լ կուսակցության կողմից առաջ քաշվող, այսպես կոչված, սոցիալիստական ռեալիզմին, գրականության և գեղարվեստի կուսակցականացմանն ու գաղափարայնացմանը, թե՞ կուսակցական-գաղափարական ոլորտադրանքից ազատ ու անկախ, ազգային երանգ ունեցող գրականությանն ու մշակույթին և այլն:

1920-ական թթ. ներկուսակցական դեմոկրատիայի ընդլայնման, երկրի հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացման տեսակետից էական խոչընդոտ հանդիսացավ Ռ.Կ (բ)Կ 10-րդ հանրագումարի (1921 թ մարտ) բանաձևը «Կուսակցության միասնության մասին», որով արգելվում էին ֆրակցիաներն ու այլակարծությունը: Համագումարի ընդունած բանաձևի 6-րդ կետում ասվում էր. «Համագումարը առաջարկում է անհապաղ ցրել

այս կամ այն պլատֆորմի հիման վրա առաջացած բոլոր խմբերը առանց բացառության և հանձնարարում է բոլոր կազմակերպություններին խստորեն հետևել, որպեսզի թույլ չտրվի որևէ ֆրակցիոն ելույթ: Համագումարի այս որոշումը չկատարողներին պետք է անպայման և անհապաղ վտարել կուսակցությունից»[1]. Ավելին, բանաձևի 7-րդ կետով խմբակայնության դեմ պայքարի նպատակով համագումարն արտոնում էր ԿԿ-ին կուսակցությունից վտարման պահանջը տարածել նաև ԿԿ-ի անդամների, անդամության թեկնածուների և վերահսկիչ հանձնաժողովի բոլոր անդամների վրա[2]: Հարց է ծագում. իսկ ո՞վ էր որոշում, թե որ ելույթն է ճիշտ, որը՝ ֆրակցիոն: Պետք է ընդունել այն տեսադրույթը, որ այս կամ այն հարցի ընկալման ու քվեարկության ժամանակ ձայների մեծամասնություն ստանալը դեռևս չի նշանակում, թե իրենք են ճշմարիտը: Հարկ է փաստել, որ հենց Վ. Լենինի առաջարկով արգելվեցին ֆրակցիաները և խմբերը ՌԿ(բ)Կ ներսում: Հայտնի է, որ այս որոշումը հետագայում հզոր զենք դարձավ Ի. Ստալինի և նրա կողմնակիցների ձեռքում՝ հաշվեհարդար տեսնելու իրենց քաղաքական ու անձնական հակառակորդների դեմ: ՌԿ(բ)Կ-ն անթույլատրելի էր համարում այլախոհությունը ինչպես ամբողջ երկրում, առավել ևս՝ իր սեփական շարքերում: Բայց և մյուս կողմից՝ խաղաղ աշխատանքի անցնելու պայմաններում համագումարը երկրի, պետության, կուսակցության կարևոր հարցերի շուրջ, իբրև ներկուսակցական կյանքի նորմ, լայն ընկալումների միջոցով **ներկուսակցական բանավեճեր** (դիսկուսիաներ) անցկացնելու հնարավորություն ընձեռեց: Սակայն պարտադիր պայմանով, որ կոլեկտիվ որոշում ընդունելուց հետո այն բոլորի կողմից պետք է, պարտադիր կարգով իրագործվեր[3]: Բնականաբար բանավեճեր են ընթացել նաև Հայկոմկուսում: «Դիսկուսիաների նպատակն է,- կարդում ենք

---

[1] ՍՄԿԿ բանաձևերում, (1917–1922 թթ.), հ. 2, Ե., 1986, էջ 442:
[2] Նույն տեղում, էջ 419 և 442:
[3] Նույն տեղում, էջ 428-429:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի պաշտոնաթերթ «Խորհրդային Հայաստանում», գլխավորապես անխնա քննադատության ենթարկել և խարազանել բյուրոկրատիզմ կոչված հիվանդությունը, որ բուն է դրել մեր մի շարք կուսակցական և խորհրդային հիմնարկություններում, մյուս կողմից էլ՝ կյանքի և գործունեության հրավիրել բանվորագյուղացիական դեմոկրատիային»[1]: Թերթը բանավեճերը դիտում էր որպես կուսակցության շարքերի, կուսակցության և պետական կառավարման համակարգի առողջացման և կատարելագործման, ճիշտ որոշումներ կայացնելու և դրանք կյանքի կոչելու միջոց. Կառավարող որևէ կուսակցության ներսում, եթե չկան մոտեցումների, տեսակետների, դիրքորոշումների բազմազանություն, դրանք հրապարակայնորեն քննարկելու հնարավորություն, ապա դժվար կլինի խոսել տվյալ կուսակցության և նրա ղեկավարած երկրի զարգացման ու հեռանկարի մասին:

Սրանք այն հիմնական նախադրյալներն ու պայմաններն էին, որոնք պարարտ հող ու միջավայր էին ստեղծում ինչպես ամբողջ խորհրդային տարածքում, այնպես էլ Հայաստանում կուսակցության ներսում և նրանից դուրս բանավեճերի, պլատֆորմների, խմբակցությունների ու խմբերի առաջացման, քննարկումների և ապա հետագայում քաղաքական հետապնդում-հալածանքների համար. Ինչպես արդեն ասվեց, ինչ որ կատարվում էր խորհրդային երկրի հսկա տարածքում բնականաբար ու պարտադրաբար, այդ նույնը կրկնօրինակվում ու պատճենահանվում էր նրա բաղադրիչը կազմող Խորհրդային Հայաստանում:

Ներկուսակցական խմբակայնության, ընդդիմության ու բանավեճերի դրսևորումները ՀԿ(բ)Կ-ում կարելի է բաժանել չորս փուլի՝ 1-ինը՝ 1921 թ 2-րդը՝ 1922 թ., 3-րդը՝ 1927 թ. և 4-րդը՝ 1930 թ. Նշվածներից ամենասուրն ու ծավալայինը համարվում էր 3-րդ փուլը: Ժամանակային առումով դրանք հիմնականում համընկնում էին Միության մակարդակով ծավալվող ներկուսակցական

[1] «Խորհրդային Հայաստան», 25 դեկտեմբերի 1923 թ.:

խմբերի ու թեքումների բանավեճերի, տրոցկիստական-զինովևական խմբավորման և «աջ» թեքման ջախջախման շրջափուլերի հետ: Հարկ է նշել, որ խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ այս հարցը, ըստ էության, շրջանցվել է կամ առավելագույնը միակողմանի է ներկայացվել, քանզի այնքան էլ նպատակահարմար չէր խոսել կոմունիստական կուսակցության միասնությունը խաթարող երևույթների մասին: Մեզանում, այսպես թե այնպես, միայն խոսվել է հայ տրոցկիստների կամ մենշևիկ, «աջ» օպորտունիստ, սպեցիֆիկ-դաշնակցական որակված-ների մասին: Այդ իմաստով, ներկայումս ՀԿ(բ)Կ ներկուսակցական կյանքի պատմության հարցերը օբյեկտիվ ու ճշմարտացի լուսաբանման կարիք ունեն:

Հայհեղկոմում և ՀԿ(բ)Կ ԿԿ-ում ծագած 1-ին տարաձայնություն-բանավեճը տեղի է ունեցել 1921 թ. հունվար-փետրվարին՝ կապված կուսակցության վարվելիք քաղաքականության հետ: Առաջ էր եկել երկու խումբ, որոնց պայմանականորեն կարելի է անվանել **կասյանական՝** Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի և **ալիխանյանական՝** ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Գ. Ալիխանյանի անուններով: Նրանք տարաձայնվում էին Հայաստանում կիրառվող քաղաքականության, ռազմակոմունիստական բռնագրավումների, բանտարկությունների, նախկին սպայության աքսորի, ՀՅԴ և մյուս այլախոհ կուսակցությունների հանդեպ մարտավարական մոտեցումների ու մեթոդների հարցերում:

Կասյանական թևը, որի մեջ մտնում էին Հայհեղկոմի անդամներ Ա. Մռավյանը, Ալ. Բեկզադյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և ուրիշներ, հանդես էր բերում համեմատաբար ավելի մեղմ ու կշռադատված մոտեցում: Նրանք դեմ էին հախուռն բռնագրավումներին, զանգվածային ձերբակալություններին: Մյուս թևը, որն ավելի մեծաթիվ էր՝ Ավիս (Ավետիս Նուրիջանյան), Ի. Դավլաթյան, Հ. Կոստանյան, Նիկ. Այվազյան և ուրիշներ, կողմնակից էր ավելի կոշտ ու անհաշտ պայքարի, «արյուն թափելու», բռնությունների քաղաքականության: Հայկոմկուսի ԿԿ-ը, Հայհեղկոմի

ծայրահեղ թևը. Հայչեկան և իշխանության մյուս մարմինները ավելի ծայրահեղ ու անհանդուրժող քաղաքական վարքագիծ էին ցուցաբերում ոչ միայն այն պատճառով, որ հաճախ հաշվի չէին առնում Հայաստանի տեղական պայմաններն ու առանձնահատկությունները, այլ նաև նրանով, որ դրանով ցանկանում էին ընդգծել իրենց առավել նվիրվածությունը լենինիզմի գաղափարներին ու կոմունիզմի գործին: Ասվածին պետք է հավելել նաև նրանց անձնական թշնամանքը այլ քաղաքական ուժերի գործիչների հանդեպ:

Ի հավելումն վերջինիս՝ դաշնակցականների հանդեպ Հայհեղկոմի կայանական թևի քննադատությամբ է հանդես եկել նույնիսկ թուրքական ռազմակալման տակ գտնվող Հայկոմկուսի Ալեքսպոլի քաղաքային կոմիտեն: ՀԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված քաղկոմի մի խումբ անդամների՝ 1920 թ. դեկտեմբերի 21-ի գրությունում մասնավորապես կարդում ենք. «... տեղեկանալով Հայհեղկոմի **փափուկ** վերաբերմունքի մասին՝ հանդեպ ոճրագործ դաշնակները, որը շատ թանկ կարող է նստել Կարմիր Հայաստանի համար, բողոքում է դորա դեմ և պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել հակահեղափոխության դեմ»[1]:

Հարցը քննարկման է դրվում ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հունվարյան պլենումում և ձայների մեծամասնությամբ ընդունվում է ՀՅԴ դեմ ուղղված երեքկետանոց բանաձև՝ անողոք պայքար մղելու և Դաշնակցությունը որպես կուսակցություն, վերացնելու վերաբերյալ, նաև ձերբակալելու ՀԾԿ աչքի ընկնող բոլոր անդամներին և այլն[2]: Ս. Կասյանը և Ա. Սռավյանը կտրականապես դեմ են արտահայտվում պլենումի այդ բանաձևին և անգամ հայտարա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 18, թ. 9:

[2] Տես ՌՍԴՊԱԱ. ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 1, Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող Վ. Ղազախեցյան, Ե., 1999, էջ 14. *Խաչատրյան Լ.*, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 61:

ռում ու դուրս են գալիս Հեղկոմի և ԿԿ-ի կազմից[1]: Խնդիրը տեղափոխվում է ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրո (Կովբյուրո): Վերջինս հավանություն է տալիս ՀԿ(բ)Կ ԿԿ-ի որոշմանը՝ ՀՅԴ կուսակցության լիակատար վերացման համար մղվող անողոք պայքարին[2]: Կովբյուրոյի անդամներ Գ. Օրջոնիկիձեի և Մ. Օրախելաշվիլիի՝ Ս. Կասյանին ուղղված փետրվարի 1-ի հեռագրով կարծիք էր հայտնվում, որ «քաղաքական իրադրությունը հրամայական պահանջում է՝ պայքարել դաշնակների կուսակցությունը ուղղակի վերացնելու»[3]: Բայց միաժամանակ Գ. Օրջոնիկիձեն զգուշացնում էր մեղմ վերաբերվել Դրոյի, Վրացյանի խմբի ու ընդհանրապես մտավորականության հանդեպ՝ թեկուզ և նրանց դաշնակցական անցյալով[4]:

Կովկասի փաստացի ղեկավար Գ. Օրջոնիկիձեն 1921 թ. օգոստոսի 12-ին Կովբյուրոյի աշխատանքների վերաբերյալ տված զեկուցման մեջ, խոսելով Հայհեղկոմում և Հայկոմկուսի ԿԿ-ում ծագած քաղաքական ճգնաժամի մասին, պարզաբանում էր, որ Հայաստանում պրոլետարիատի բացարձակ բացակայության և գյուղացիական բնակչության հետամնացության պայմաններում հրահանգ էր տրվել «շատ զգույշ քաղաքականություն վարել», «չշտապեցնել Հայաստանի կոմունիզացիան», անգամ ստեղծել կոալիցիոն կառավարություն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները և այլն[5]: Սակայն Հայկոմկուսի ղեկավար երիտասարդ թևը՝ Գ. Ալիխանյան, Ավիս, Հ. Կոստանյան, Ի. Դովլաթյան և ուրիշներ, անտեսեցին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի և անձամբ նրա ղեկավար Գ. Օրջոնիկիձեի՝ զգուշավոր քաղաքականություն վարելու դի-

---

[1] Տես ՌՍԲՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 115, թ. 1, գ. 117, թ. 1, գ. 118, թ. 1, *Ալիխանյան Մ.*, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Ե., 1966, էջ 300:
[2] *Ալիխանյան Մ.*, նշվ. աշխ., էջ 302:
[3] Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, խմբ. և կազմող Վ. Ղազախեցյան, Ե., 1999, էջ 17:
[4] ՌՍԲՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 118, թ. 1:
[5] *Օրջոնիկիձե Գ. Կ.*, Ընտիր հոդվածներ և ճառեր (1918–1937 թթ.), Ե., 1950, էջ 58:

ռեկտիվը: Արդյունքում՝ լարվածություն կուսակցության ներսում, 1921 թ. փետրվարյան իրադարձությունները և այլն:

Իրավացի են այն պատմաբանները՝ Բ. Բորյան, Գ. Գեղամյան, Կ. Սարդարյան, Յու. Հովսեփյան և ուրիշներ, ովքեր դրականորեն են գնահատում Կասյանի և Մռավյանի ավելի գուսպ դիրքորոշումը և քննադատում ծայրահեղական թևի կողմնակիցներին՝ ովքեր փաստորեն հրահրեցին Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում[1]: Կասյանական խմբի վարած գծին դեմ Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) նորանշանակ նախագահ Շ. Ամիրխանյանը ԿԿ-ին ուղղված 1921 թ. ապրիլի 27-ի գրությունում դժգոհություն է հայտնում Հեղկոմի նախագահ Ս. Կասյանից, որ արգելում է բնակարանների խուզարկություններ կատարել. «Հեղկոմի նախագահը կարծես պաշտպանության տակ է առնում սպեկուլյանտներին, ունևորներին և անգամ հակահեղափոխականներին»[2]: Նման բողոքները հող էին նախապատրաստում Ս. Կասյանի պաշտոնանկության համար:

Փետրվարյան ապստամբության ճնշումից ու Զանգեզուրի խորհրդայնացումից հետո Հայաստան գործուղված Ալ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը իրենց հեղինակությամբ կարողացան հարթել ներկուսակցական այդ առաջին բանավեճը: Պետական-կուսակցական մարմիններում կատարվեցին կադրային փոփոխություններ[3]: Ինչպես արդեն ասվել է, Հայհեղկոմը 1921 թ. մայիսի 21-ին անվանապես վերակառուցվեց արդեն խաղաղ ժամանակներին

Տես *Борьян Б.*, Армения, международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929, с. 159, *Хармандарян С. В.*, Ленин и становление Закавказской федерации 1921–1923, Е., 1969, с 79–80, Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920–1922 թթ.) Ե., 1987, էջ 17, 20-23, 51, *Ղազախնցյան Վ. Ն.*, Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006, էջ 32–33:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 123, թ. 3:

Ս. Կասյանը տեղափոխվեց Թիֆլիս և նշանակվեց Վրաստանի կոմկուսի ԿԿ-ի «Կարմիր աստղ» հայալեզու թերթի խմբագիր, 1924 թ.՝ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի ռեկտոր, 1927 թ. Անդրդաշնության ԿԳԿ-ի համանախագահ և այլն: Տես *Կարապետյան Հ. Ն.*, Մեծ պայքարի մարդիկ, գիրք 1-ին, Ե., 1963, էջ 160–166:

բնոյտշ կառավարության՝ **ժողկոմխորհի**, որը գլխավորեց Ալ. Մյասնիկյանը, իսկ Հայկոմկուսը՝ Ս. Լուկաշինը:

Սակայն 1922 թ. փետրվարից ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի Անդրերկրկոմում (Թիֆլիս) նոր աշխատանքի տեղափոխվելուց հետո Հայկոմկուսի ղեկավար շրջանում կրկին ի հայտ եկան տարաձայնություններ, ուստի և՝ խմբակայնություն (склока): Ճիշտ է նկատում վաստակաշատ պատմաբան Վ. Ղազախեցյանը, որ «Խմբակայնությունը սովորաբար սկզբունքային բնույթ չէր կրում և փաստորեն պայքար էր ղեկավար գործիչների միջև ղեկավար պաշտոններ գրավելու համար»[1]:

Մյասնիկյանի փոխարեն Ս. Լուկաշինի՝ ժողկոմխորհի նախագահ հաստատվելուց հետո վերջինիս դեմ հանդես եկավ Ն. Գ. ժողկոմ Ավիսի և նրա տեղակալ ու ՀԱՄԽ-ի նախագահության անդամ Հ. Կոստանյանի խումբը, որը նպատակահարմար էր գտնում Ս. Լուկաշինի փոխարեն այդ պաշտոնում նշանակել Ա. Միկոյանին: ՀԿ(բ)Կ ԿԿ-ում ու կառավարությունում առաջանում է լարվածություն: Հարցը փոխադրվում է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմ և ընդհուպ մինչև գլխավոր քարտուղար Ի. Ստալինին: Խնդրի կապակցությամբ Գ. Օրջոնիկիձեն 1922 թ. հունիսի 26-ին նամակ է ուղղել Ի. Ստալինին: «Թանկագին Սոսոյին» հասցեագրված այդ նամակում Օրջոնիկիձեն մասնավորապես տվել է հետևյալ պարզաբանումը. «Մյասնիկյանի՝ Հայաստանից մեկնելուց հետո Ավիսը և Հ. Կոստանյանը որոշեցին խմբակ ստեղծել ընդդեմ Լուկաշինի, իբրև թե իրենք ցանկանում են Լուկաշինի փոխարեն ժողկոմխորհի նախագահի պաշտոնում տեսնել Միկոյանին: Ես և Մյասնիկյանը մեկնեցինք Հայաստան: Պարզվեց, որ Միկոյանը ընդամենը պատրվակ էր նրանց համար: Կոստանյանին ազատեցինք պաշտոնից, որոշ փոփոխություններ կատարեցինք ԿԿ-ում: **Բոլոր հայ կոմունիստները զնում են Լուկաշինի հետևից** (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Ավիս-Կոստանյան խումբը ի վիճակի

---

[1] *Ղազախեցյան Վ. Ն.*, նշվ. աշխ., էջ 327:

չէ կառավարել ոչ միայն Հայաստանը, այլև նրա մի գավառ»[1]: Օրջոնիկիձեն միաժամանակ բարձր գնահատական է տալիս Մյասնիկյանին՝ նրան համարելով բանիմաց և տակտով անձնավորություն[2]: Այս նույն խնդրի կապակցությամբ Անդրերկոմի անդամ Հմայակ Նազարեթյանի՝ Օրջոնիկիձեին հասցեագրված մի նամակից պարզվում է, որ Ավիսը հավակնել է Ժողկոմխորհի նախագահի պաշտոնին: Սակայն Նազարեթյանի կարծիքով նա, Ավիսը նման պաշտոնի համար պիտանի չէ: Նա «թույլ է և չունի ո՛չ մտավոր և ո՛չ էլ բավարար բարոյական տվյալներ»[3]: Բերվածից հետևում է, որ ամենայն հավանականությամբ Ավիսը հավակնություն է ունեցել Ժողկոմխորհի նախագահի պաշտոնին, իսկ Միկոյանի և այլ հարցերի շուրջ խոսակցությունները ընդամենը պատրվակ են եղել:

Ավիս-Լուկաշին հակամարտությունը հարթելու նպատակով Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլին 1922 թ. հունիսի 27-ին գրություն է ուղարկել ՀԿ(բ)Կ ԿԿ, որում մտահոգություն է հայտնել կուսակցության ներսում խմբավորումներ ու տարաձայնություններ ի հայտ գալու կապակցությամբ և պահանջ դրել՝ վճռական կերպով դրանք արմատախիլ անելու վերաբերյալ: Վիճակն առողջացնելու նպատակով Անդրերկրկոմը որոշում է. ա/ հանձնարարել ՀԿԿ ԿԿ-ին անհապաղ վերացնել այդ խմբավորումները, բ/ հաստատել ԿԿ-ի հետևյալ կազմը 17 անդամ՝ սկսած Ա. Մյասնիկյանից, և 6 անդամության թեկնածու[4]: Թեև գրության մեջ չեն նշված խմբակների ու մարդկանց անուններ, սակայն հետագայում ուղարկված մեկ այլ փաստաթղթից պարզվում է, որ խոսքը հիմնականում Լուկաշինի դեմ ուղղված Ավիսի խմբի մասին է. 1921 թ. լարված են եղել նաև արդարադատության ժողկոմ Ա. Կարինյանի և կարմիր բանակի հատուկ քաղաքական վար-

---

[1] Большевистское руководство. Переписка (1912–1927), сборник документов, М., 1996, с. 258.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 259:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 49, թ. 83:

չության պետ Հ. Լազյանի հարաբերությունները: Վերջինս շուտով ազատվում է իր պաշտոնից[1]: Փաստաթղթերից մեկից պարզվում է, որ ԿԿ-ի անդամ Ավիսը վեճ է ունեցել նաև Ս. Կասյանի հետ: «Նոր Աշխարհ» ամսագրում հիմնականում Ավիսի հացեին քննադատական նյութ է տպագրվել «Զախության հիվանդությունը մեզանում» վերտառությամբ[2]: Անդրերկրկոմի նախագահությունը (քարտուղար Ա. Մյասնիկյան) 1923 թ. հունվարի 20-ին լսել է Ավիսի դիմումը (մեզ դիմումի բովանդակությունը հայտնի չէ) և որոշել. ա) Ավիսին գործուղել ՌԿ(բ)Կ ԿԿ-ի տրամադրության տակ, նրա ցանկության համաձայն՝ տալով երկամյա գործուղում. բ) նրա հացեին տպված նյութը համարել սխալ[3] և գ) հանձնարարել ՀԿ (բ)Կ ԿԿ-ին՝ պարզել Կասյան-Ավիս վեճի հանգամանքները, հարթել այն և այդ մասին հաղորդել Անդրերկրկոմ[4]: Ցավոք, կուսակցական փաստաթղթերում հաճախ չեն նշվում կուսղեկավարների միջև ծագած վեճերի ու խնդիրների ներքին հանգամանքները: Ուստի շատ հարցերում մնում է կռահել դրանց դրդապատճառներն ու շարժառիթները:

Այսպիսով՝ Ավիս-Լուկաշին վեճը հանգուցալուծվում է նրանով, որ երկու կողմի ներկայացուցիչները կանչվում են Անդրերկրկոմ: Ավիսի խումբը ջախջախվում է: Կուսակցական դեկավար պաշտոններից ազատվում են խմբակի անդամներ Հ. Կոստանյանը և Ս. Շադունցը: ԿԿ-ի կազմը թարմացվում է: Ավիսը

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 41:

[2] Տե՛ս «Նոր Աշխարհ», Թիֆլիս, 1922, գիրք 2 (սեպտեմբեր):

[3] Խնդիրն այն է, որ Ս. Կասյանն իր խմբագրած հիշյալ ամսագրում բանավիճային նյութ էր զետեղել Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան ընդհատակյա կոնֆերանսի և նրանում ընդունված բանաձևի մասին: Սակայն Ավիսը, ինչպես նաև Ս. Մարտիկյանը, Դ. Շահվերդյանը և այդ կոնֆերանսի ուրիշ մասնակիցներ պնդել են, որ խորհրդաժողովում Ս. Կասյանի ներկայացրած ձևով բանաձև չի ընդունվել և որ Կասյանն այդ հոդվածը գրել է առանց ԿԿ-ի հետ համաձայնեցնելու: Այդ կապակցությամբ Ս. Կասյանը Թիֆլիսից հրավիրվում է Երևան: ԿԿ-ի նախագահության 1923 թ. փետրվարի 6-ի նիստում նրան հանդիմանում են՝ «Նոր Աշխարհ» ամսագրում տպագրած այդ նյութի կապակցությամբ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 69, ց. 3, գ. 7, թ. 7):

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 18, թ. 15:

կանչվում է Կենտրոն՝ ԿԿ-ի տրամադրության տակ: Ինչ վերաբերում է Ա. Միկոյանին, ապա նա կուսակցական պատասխանատու աշխատանքի է ուղարկվում Դոնի-Ռոստով[1]: Նա նշանակվում է ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Հյուսիսկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար[2]:

Անդրերկրկոմի նախագահությունը, գնահատական տալով Հայաստանում գլուխ բարձրացրած խմբակայնությանը, նշում է, որ ՀԿ(բ)Կ ներսում առաջացած խմբակայնությունը գաղափարական-սկզբունքային որևէ հիմք չունի և առաջարկում էր ԿԿ-ին՝ վճռական միջոցներ ձեռնարկել վերացնելու նման դրսևորումները, ու զգուշացնում, որ դրանք կրկնվելու դեպքում պատժել կուսակցության 10-րդ համագումարի որոշումների և կանոնադրության համաձայն[3]: Այդուհանդերձ, ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարում (1923 թ. փետրվար) Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը փաստում է, որ կուսակցության մեջ եղել են անառողջ երևույթներ[1]:

ՀԿ(բ)Կ-ում ընթացած ամենասուր և տևական բանավեճերը, թերևս, տեղի են ունեցել 1927 թ., որոնք ուղղակիորեն կապված էին մայր կուսակցությունում ծավալված «**Տրոցկիստական-զինովևական**» խմբավորման ջախջախման գործընթացների հետ: Բայց մինչ այդ կուսակցության ԿԿ-ում ու կառավարությունում հաճախ դրսևորվել են խմբակային, մրցակցային կամ անձնական բնույթի թշնամանք ու հակամարտություններ, որոնք արտաքինից գաղափարական տարաձայնությունների քողի տակ գործնականում ավելի հաճախ պաշտոնակռվի են նմանվել՝ հիշեցնելով միմյանց քաղաքական անցյալը և թույլ տված սխալները: Հարկ է նշել՝ 1920-ական թթ. առաջին կեսին հանրապետության ղեկավար կազմում ամուր միջուկ էին կազմում սպեցիֆիկյան անցյալ ունեցող գործիչներ Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Աշ. Հովհան-

---

Харамандарян С. В., Ленин и становление Закавказской федерации 1921–1923, Е., 1969, с. 251.

ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 326, թ. 2:

Харамандарян С. В., նշվ. աշխ., էջ 251:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 8:

նիսյանը, Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ[1]: Եվ պետք է ընդգծել, որ **հիշյալ գործիչներին բնորոշ է եղել ազգային դիմագիծը**: Այս կապակցությամբ տեղին է երիտասարդ պատմաբան Վ. Հակոբյանի դիտարկումը, որ ՍԴԲՀԿ-ի բովով անցած Խորհրդային Հայաստանի ղեկավար գործիչները՝ Մյասնիկյանը, Լուկաշինը, Հովհաննիսյանը և այլք, կարողացան հարաբերակցորեն պահպանել իրենց ինքնուրույնությունը՝ չդառնալով ռուս, հրեա, վրացի ղեկավար գործիչների ձեռքին ՌՍԴԲԿ-ի բոլշևիկյան թևի հայ հնազանդ տարրերի նման կույր գործիք[2]: Հետագայում հատկապես Ալ. Մյասնիկյանի զոհվելուց հետո, այս աշխատանքի գործիչների դիրքերը թուլացան, և նրանք աստիճանաբար դուրս մղվեցին իրենց պաշտոններից:

Հայտնի է, որ Միության մասշտաբով 1923 թ.-ից սկսվեց Ստալին-Տրոցկի մրցապայքարը պետության բարձրագույն ղեկի համար: Բնականաբար այն պետք է իր արտահայտությունը գտներ նաև Հայաստանում: ՀԿ(բ)Կ 3-րդ համագումարում (1924 թ. մայիս) ԿԿ-ի կազմակերպական հաշվետվության մեջ ԿԿ-ի բարտուղար Աշ. Հովհաննիսյանը իբրև թերություն նշել է, որ Հայկոմկուսի ներսում ներկուսակցական դեմոկրատիան ակտիվ չէ, որ «**մենք օպոզիցիա չունեցանք** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»[3]: Ներկուսակցական կյանքի ու դեմոկրատիայի զարգացման տեսակետից, անշուշտ, այդ ինքնաքննադատությունը առողջ էր: Սակայն նրա այդ միտքը հետո պետք է ուղղվեր հենց իր դեմ, որովհետև ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարն ընդունել էր կուսակցության միասնության մասին բանաձև, որով անթույլատրելի էր համարվում

---

[1] «Սպեցիֆիկ» կոչվում էր 1903 թ. Բաքվում հիմնված Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ): Քանի որ նրա ներկայացուցիչները հաճախակի ընդգծում էին հայ բանվորների կյանքի ու պայքարի յուրահատուկ պայմանները և նրանց կազմակերպությունները ունեին զուտ ազգային կազմ, դրա համար էլ Ստ. Շահումյանի բնորոշմամբ նրանք ստացել են «սպեցիֆիկ» (յուրահատուկ) անվանումը:

[2] *Հակոբյան Վ.*, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, Ե., 2015, էջ 113:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 1, թ. 25–26:

ցանկացած ընդդիմության (օպոզիցիայի) առկայությունը կուսակցության մեջ։ Այդուհանդերձ, խորհրդահայ պատմաբան Վ. Ներկարարյանը, հենվելով Աշ. Հովհաննիսյանի հաշվետու զեկուցման վրա, մատնանշել է մի երկու «տրոցկիստ»՝ Ս. Նազարյանին և Պ. Ղազարյանին։ Վերջինիս կապակցությամբ նշում է, որ նա իբր առաջ է քաշել «**պրոլետարիատի դիկտատուրա, առանց կոմունիստական կուսակցության**»[1]։

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1925 թ. հունվարյան պլենումում տրոցկիզմի դեմ պայքարի հարցում (զեկ. Աշ. Հովհաննիսյան) արդեն խոսվում է Հայաստանում օպոզիցիայի գոյության և դրա դեմ վճռական պայքարի մասին։ «Ընկ. Տրոցկու ելույթի կապակցությամբ,- կարդում ենք պլենումի ընդունած բանաձևի 4-րդ կետում,- արձանագրելով անցյալ տարվա դիսկուսիայի ընթացքում երևան եկած մի շարք մանրբուրժուական թեքումների ու տատանումների ոեցիդիվը, թեքումներ, որոնք դեռևս լրիվ չափով վերացված չեն ՀՍԽՀ պայմաններում, ձեռք առնել նրանց դեմ վճռական պայքարի միջոցներ»[2]։ Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում եղել է ընդդիմություն, սակայն թույլ։ Օրինակ՝ հակահեղափոխական տրոցկիստի պիտակավորում են ստացել Մեթ. Նազարյանը, Պատվական Ղազարյանը և ուրիշներ[3]։ Նրանք, ովքեր այս կամ այն հարցի շուրջ անհամաձայնություն կամ քննադատական խոսք էին հայտնում, իսկույն որակվում էին «տրոցկիստ», «սպեցիֆիկ», «դաշնակ», նացիոնալիստ կամ հակահեղափոխական։ Եթե ԿԿ-ի 1925 թ. հունվարյան պլենումում խոսվել է Հայաստանում ընդդիմության գոյության և դրա դեմ վճռական պայքարի մասին, ապա, կարծում ենք, նման ձևակերպում է արվել, որպեսզի Կենտրոնին ցույց տրվի, որ իբր Հայաստանում էլ պայքար է, սկսվել տրոցկիզմի դեմ։ Բայց և պետք է փաստել, որ Հայաստա-

---

[1] *Ներկարարյան Վ. Ն.*, Հայաստանի կոմունիստական պարտիայի 3-րդ համագումարը (1924 թ. մայիս), Ե., 1958, էջ 41։

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 6, թ. 17։

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 1, թ. 165, նաև *Ներկարարյան Վ. Ն.*, նշվ. աշխ., էջ 40–41։

նում ևս եղել են Տրոցկու հետևորդներ, սակայն նրանք նկատելի թիվ չեն կազմել: Հայաստանում նկատված թեքումները թույլ են արտահայտվել: Դրանք չեն եղել այնպես ուժեղ, ինչպես Ռուսաստանում կամ նույնիսկ Վրաստանում: Մասնավորապես, Վրաստանում շարունակել է գործել ազգային թեքում ունեցող, այսպես կոչված, «բուդիստների» (Բ. Մդիվանիի կողմնակիցների)՝ Կոտե Ցինցաձեի, Լադո Դումբաձեի և Միխայիլ Օկուջավայի խմբերը: ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1926 թ. դեկտեմբերյան պլենումում լսվել է այդ խմբերի հարցերը, որոնք մեղադրվել են, այսպես կոչված, գիտավանական «Նոր օպոզիցիայի» ու տրոցկիզմի պաշտպանության դիրքերից հանդես գալու մեջ: Ինչ վերաբերում էր Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպություններին, ապա դրանցում ընդդիմության որևէ լուրջ դրսևորում չեն նկատվել[1]:

Խմբակայնության ու բանավեճերի ընդհանուր համապատկերում 1920-ական թթ. երկրորդ կեսին ավելի հաճախակի են դառնում կադրային փոփոխությունները: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1925 թ. հունիսյան ընդլայնված պլենումում որոշվեց Ս. Լուկաշինին ազատել ժողկոմսորհի նախագահի պաշտոնից և նրա փոխարեն առաջադրել Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ)-ի նախագահ, բժիշկ Սարգիս (Սաքո) Համբարձումյանին[2]: Ս. Լուկաշինի պաշտոնանկության գործում, կարծում ենք, որոշակի դեր են խաղացել նրա ինքնուրույն տեսակետներն ու արտահայտությունները: Այսպես, Լուկաշինը, հաշվի առնելով Հայաստանի յուրահատուկ պայմանները, գտնում էր, որ նախ պետք է զարգացնել գյուղատնտեսությունը և դրա հիման վրա՝ արդյունաբերությունը[3]: Հավանաբար, նման միտքը կարող էր հարիր չլինել ստալինյան նոր կուրսին: Լուկաշինի պաշտոնանկությունը, կարծում ենք, կապված էր նաև այն բանին, որ նույն թվականի մարտին իր գաղափարակից ու հայրենակից գործընկեր Ալ. Մյասնիկյանի զոհվելուց հետո նրա

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 474, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 6, թ. 49:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 1, թ. 18:

դիրքերը էապես թուլացան. ԿԳԿ-ի նախագահի թափուր մնացած պաշտոնին առաջադրվեց Ա. Կարինյանը: Վերջինս կոոպտացվեց ԿԿ ի կազմում և ներառվեց ԿԿ-ի նախագահության մեջ:

Առաջ անցնելով Ս. Լուկաշինի հետագա գործունեության վերաբերյալ միջանկյալ նշենք, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. հունվարյան պլենումում Հայկ Ազատյանը և Ռուբեն Դաշտոյանը խոսակցություն են բացել նրա անձի շուրջ: Նշվել է, որ Ս. Լուկաշինը Անդրդաշնության ժողկոմխորհի նախագահի տեղակալի պաշտոնից փոխադրվել է Մոսկվա: Սակայն նրա անձի շուրջ պտտվում են բացասական խոսակցություններ, որոնք հասել են մինչև Մոսկվա, և որ Լուկաշինի հետ կապված խնդիրը անդրադառնում է ՀԿ(բ)Կ ներկուսակցական դրության վրա[1]: Այս կապակցությամբ արխիվային գործերից մեկում՝ կազմված 1928 թ. փետրվարին, նշվում է, որ Լուկաշինը իրը յուրացրել է 300 հազար ռուբլի[2]: Դժվար է պնդել կամ հերքել նման տեղեկատվության հավաստիությունը կամ կեղծ լինելը. Ներկուսակցական խարդավանքների ու միմյանց նկատմամբ հաճախ անձնական թշնամանքի ֆոնին, մեր կարծիքով, այդ նյութը Լուկաշինին արատավորելու նպատակով սարքված կեղծիք է: Իսկ նման վստահություն չներշնչող զրպարտագիր նյութերն էլ բավական էին, որպեսզի արդեն 1930-ական թթ. երկրորդ կեսին Ս. Լուկաշինը և նրա նման շատ-շատերը բազաբական բռնաճնշումների զոհ դառնային:

Ներկուսակցական խմբակային պայքարի հաջորդ թիրախը դարձավ ԿԿ ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանը: Եթե Ռուսաստանում ներկուսակցական խմբակցային-դիսկուսիոն պայքարը ընթանում էր Գ. Զինովևի գլխավորած «Նոր օպոզիցիայի» և ապա Լ. Տրոցկու՝ «Տրոցկիստական-զինովևական» բլոկի դեմ բացահայտ անհաշտ պայքարով, ապա Հայաստանում այդ պայքար գունավորվում էր նաև «սպեցիֆիզմի, «դաշնակիզմի», «ինտերնացիոնալիզմի» և ազգայնականության դեմ պայքարի կարգախոսներով: ԿԿ-ի

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 3, թ. 2-4:
[2] Նույն տեղում, գ. 100, թ. 9:

քարտուղար Աշ. Հովհաննիսյանի գլխավոր քննադատները դարձան Ս. Երզնկյանը, Ա. Եսայանը, Հ. Նազարեթյանը, Ս. Կասյանը և ուրիշներ: Երբեմնի սպեցիֆիկ Աշ. Հովհաննիսյանը ու նրա շրջապատը մեղադրվում էին ազգայնականության, «տրոցկիզմի», «դաշնակիզմի» ու «սպեցիֆիզմի» դեմ անբավարար պայքար մղելու մեջ: Դիմակայությունը բորբոքվեց ԿԿ-ի 1927 թ. մարտյան, հատկապես հուլիսյան պլենումներում: Ստեղծված պայմաններում Աշ. Հովհաննիսյանը ստիպված հուլիսին հրաժարական տվեց: Մեկ տարի անց հարվածն ուղղվեց ԿԳԿ-ի նախագահ Ա.Կարինյանի դեմ՝ դարձյալ իբրև նախկին սպեցիֆիկ որակավորմամբ[1]:

Հայկոմկուսի համագումարների ու ԿԿ-ի պլենումների արձանագրությունների ու արխիվային վավերագիր այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ներկուսակցական կյանքի համեմատաբար բուռն ու ամենալարված շրջանը համարվում է 1926 թ. ու հատկապես 1927 թ.. Դա մեծապես կապված էր Ռուսաստանում ընթացող, այսպես կոչված, «Նոր օպոզիցիայի» և «Տրոցկիստական-գինովևական» խմբավորման (բլոկի) ջախջախման գործընթացների հետ: Այդ իմաստով Հայաստանի հասարակական-քաղաքական և ՀԿ(բ)Կ ու ՀԼԿԵՄ՝ կյանքում ևս որոշակի աշխուժություն նկատվեց: Հանդես եկան ընդդիմադիրներ, ծավալվեցին բանավեճեր, առաջացան խմբակցություններ:

Ամեն ինչ սկսվեց ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանի պաշտոնանկության գործընթացից: 1927 թ. տրոցկիզմի դեմ պայքարի համապատկերում, ինչպես արդեն ասվեց, այն ստացավ բուրժուական նացիոնալիզմի, «դաշնակիզմի», «սպեցիֆիզմի» և այլնի դեմ պայքարի երանգավորումներ: Եվ դա անուղղակի կերպով սկսեց վերագրվել ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանին և նրա շրջապատին: «... մամուլում լույս տեսած հոդվածներում, կարդում ենք Հայկոմկուսի պատմության «Ուրվագծերում»,- հաճախ անտեղի վեճեր էին հարուցվում Դաշնակցության սոցիալա-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 6, թ.18 (դարձերես):

կան ծագման ու բնույթի վերաբերյալ, մի բան, որ խանգարում էր նրա հակահեղափոխական էության մերկացմանը և կուսմասսաների ուշադրությունը շեղում էր դաշնակների գաղափարախոսության դեմ մղվող պայքարից»[1]: Այս կշտամբանքը ուղղված էր Աշ. Հովհաննիսյանին: Այս կապակցությամբ քննադատության գլխավոր թիրախ համարվեց «Նորք» հանդեսում լույս ընծայված Աշ. Հովհաննիսյանի՝ «Դաշնակցության սոցիալական ծագումը» վերտառությամբ ծավալուն բանավիճային հոդվածը, որը հեղինակի համանուն ձեռագիր աշխատության մի գլուխն էր: Պատմաբան-գաղափարախոս Հովհաննիսյանը, հենվելով ականավոր բոլշևիկ-լենինյաններ Ս. Սպանդարյանի, Ստ. Շահումյանի և մյուսների ասույթների ու դատողությունների վրա, Դաշնակցությանը համարում էր. «**կովկասահայ մանր բուրժուազիայի**» (ընդգծումը մերն է - Ա. Հ.) և դրա հետ մեկտեղ «բուրժուազիայի սոցիալական ծնունդ ու գաղափարական հենարան»[2]: Եթե «կովկասահայ բուրժուազիայի սոցիալական ծնունդ» ձևակերպումը տեղավորվում էր մարքս-լենինյան ուսմունքի ու մեթոդաբանության մեջ, ապա Դաշնակցությանը «մանրբուրժուական, գյուղացիական, ինտելիգենտական սոցիալական ծագում» վերագրելը որակվեց մարքսիզմին անհարազատ գաղափար՝ դրանից բխող մեղադրանքներով ու անցանկալի հետևանքներով:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի (Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով) 1927 թ. մարտյան միացյալ պլենումում Աշ. Հովհաննիսյանի զեկուցման առթիվ նշվել է, որ ԿԿ-ի քարտուղարությունը, այդ թվում՝ մյուս երկու քարտուղարները՝ Երեմիա Բակունցը և Ալեքսանդր Շահսուվարյանը, վատ են աշխատում: ԿԿ-ի կազմի փոփոխման հարցը բարձրացրել է Ա. Եսայանը: ԿՎՀ անդամ Մինաս Սարգսյանը քննադատել է Աշ. Հովհաննիսյանին, որ դրսից մտավորականներ է հրավիրում Հայաստան, ինչպես՝ Ավ. Իսահակյա-

---

[1] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 378:
[2] «Նորք», Ե., 1927, գիրք 1, էջ 157, 174:

նր. տիկին Զապել Եսայանը: Մասնավորապես վերջինիս մեղադրել է այն բանի համար, որ նա դաշնակների հանձնարարությամբ գնացել է Քերմանշահ և անգլիացիներին հրավիրել Բաքու, որ նրան «հարկավոր է գնդակահարել»[1]: ԿՎՀ անդամը կշտամբում է ղեկավարությանը, որ հրատարակվում են սպեցիֆիկների գործերը, Ալ. Ռուբենու կիսանդրին կանգնեցնելը այն դեպքում, երբ Ստ. Շահումյանի և Ս Սպանդարյանի արձանները դեռ չկան՝ Ար Երզնկյանը պլենումում Աշոտին մեղադրում է սպեցիֆիզմի մեջ՝ նրա «Երկու բնութագիր» գրքի կապակցությամբ[2]: Իրականում գրքում փորձ է արված համեմատել ու գնահատել «սպեցիֆիզմի տեսաբան» Ալ. Ռուբենուն (Ծատուրյանին) և «տեսական մարքսիզմի ծանր հրետանուն»՝ Ստ. Շահումյանին: Պլենումի անդամ Ա Անանյանն էլ քննադատում է Աշոտին և Բակունցին՝ օպոզիցիայի դեմ հետևողականորեն չպայքարելու համար: Աշոտն ու նրա ղեկավարած ԿԿ-ը քննադատվում են այլ մեղքերի՝ սպեցիֆիզմի, ՀՕԿ-ի հանդեպ ոչ ճիշտ քաղաքականության, 1926 թ Աղջաղալայի (Բազմաբերդ) գյուղխորհրդի քարտուղար Մ՝ Խուշոյանի սպանության գործի կապակցությամբ, Դ. Անանունին և Ց Խանզադյանին հովանավորելու և այլնի համար[4]: Իր հերթին ԿԿ-ում տարաձայնություններ են եղել Աշոտի և Կարինյանի, Շահսուվարյանի և Բակունցի միջև:

Այդ նույն պլենումում լսվել է Երեմիա Բակունցի (Ակսել Բակունցի հորեղբոր որդի) գործը և Սուրեն Երզնկյանի (Արամայիս Երզնկյանի հորեղբոր որդի) Անդրերկրկոմի պաշտոնաթերթ «Մարտակոչում» 1927 թ. փետրվարի 4-ից-11-ը (թիվ 26-ից 33-ում) տպագրված «Երկու տենդենց» վերտառությամբ ֆելիետոնատիպ հոդվածաշարում սպեցիֆիկների կարելի է հասկանալ Ա Հովհաննիսյանի ու ԿԿ-ի ղեկավար աշխատողների հասցեին

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 9:
[2] Նույն տեղում:
[3] Տես *Հովհաննիսյան Ա,* Երկու բնութագիր (Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի), Ե., 1927:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 15-16 և 19:

ուղղված մեղադրական-գրպարտչական նյութը: Սպեցիֆիկ գործիչներ Բ. Իշխանյանից, Դ. Անանունից և Ավ. Ռուբենուց (Ծատուրյան) զատ՝ հոդվածներից մեկում հարձակումներ կան նաև սպեցիֆիկյան անցյալ ունեցող Ա. Մարտունու (Մյասնիկյանի) դեմ: Հոդվածագիրը թույլ է տվել անտակտ արտահայտություններ՝ Մյասնիկյանին որակելով «սպեցիֆիկյան թերուս», որը իբր 1910-ական թթ սկզբներին «լիբերալ «Մշակ»-ում հանդես է եկել իր խակ հոդվածներով»[1]: Ս. Երզնկյանի հոդվածաշարի կապակցությամբ մարտյան միացյալ պլենումն իր ընդունած բանաձևում արձանագրում է, որ ԿԿ-ը ոչ մի չափով չի շեղվել լենինյան քաղաքական գծից: Պլենումը կտրականապես մերժում է «Մարտակոչ» թերթի էջերում տեղ գտած Ս. Երզնկյանի հոդվածների մեղադրանքները իբր թե սպեցիֆիզմի կողմը թեքվելու վերաբերյալ և լիովին միանում է Անդրերկրկոմի նախագահության և ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի նախագահությունների որոշումներին: Փաստենք, որ մինչ մարտյան պլենումը ԿԿ-ի և ԿՎՀ-ի նախագահությունների մարտի 6-ի միացյալ նիստում որոշում էին կայացրել կտրականապես մերժել Ս. Երզնկյանի կողմից իր վերջին հոդվածներում առաջ քաշած մեղադրանքը «ԿԿ-ին սպեցիֆիզմի մեջ մեղադրելու հարցում՝ այն համարելով անհեթեթ»[2]: Դրա հետ մեկտեղ՝ պլենումը արձանագրում է, որ նկատվել են թերություններ գաղափարական ճակատում[3]: Անդրերկրկոմի նախագահության մարտի 11-ի նիստում նույնպես հակահարված է տրվում Ս. Երզնկյանի՝ «Մարտակոչում» տպագրված նրա հոդվածներում տեղ գտած մեղադրանքներին:

---

[1] «Մարտակոչ», 6 փետրվարի 1927 թ. (թիվ 29): Տեղին է հիշեցնել, որ Ս. Երզնկյանի և Աշ. Հովհաննիսյանի միջև բանավեճը սկսվել էր ավելի վաղ: Ս. Երզնկյանը Անդրերկրկոմի օրգան «Մարտակոչ»-ի 1923 թ. սեպտեմբերի 5-ի համարում տպագրել էր Դ. Անանունի և «սպեցիֆիկների» հասցեին ուղղված «ֆիգուրա օդիոզա» հոդվածը: Մի քանի օր անց, ի պատասխան այդ հոդվածի, «Խորհրդային Հայաստան» թերթում քննադատական բնույթի «Բաց նամակով» հանդես էր եկել Աշ. Հովհաննիսյանը: Եվ վերջապես, Ս. Երզնկյանն էլ ի պատասխան վերջինիս «Բաց նամակին»՝ քննադատական նյութ էր տպագրել իր իսկ խմբագրությամբ Բաքվում լույս տեսնող «Հայարտուն» հանդեսում (տես «Հայարտուն», Բագու, 1925, թիվ 1 (հունիս)):

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 96, գ. 27, թ. 33, ֆ. 113, ց. 3, գ. 856, թ. 3–4:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 96:

Արդյունքում՝ նիստը որոշում է՝ թույլ տված սխալների համար Ս. Երզնկյանին հայտարարել խիստ նկատողություն և ազատել «Մարտակոչ» թերթի խմբագրակազմից, իսկ գլխավոր խմբագիր Սայգիս Խանոյանին՝ ի ցույց դնել[1]:

Այսպիսով՝ մարտյան միացյալ պլենումում սուր բանավեճեր են ընթացել, որի արդյունքում ԿԿ-ի կազմը փոքր-ինչ թարմացվել է: Սակայն պլենումում միաձայն որոշվել էր, որ կուսակցության միասնությունը պահպանելու համար նոր դիսկուսիա չբացել: Այդ մասին գրում է ԿԿ-ի անդամ Արսեն Եսայանը 1927 թ. ապրիլի 23-ին ԿՎՀ-ին ուղղված իր բողոքում: Սակայն շատ չանցած՝ մեկ այլ առիթով նա հայտնում է, որ «Երևանի կուսկազմակերպության ակտիվի նիստում Աշոտը դարձյալ հանդես է եկել և արտահայտել է ոչ թե **պլենումի միասնական տեսակետը, այլ իր անձնական տեսակետը** (ընդգծումը մերն է - Ա. Հ.), մի տեսակետ, որին դեմ է եղել պլենումի բացարձակ մեծամասնությունը»[2]: Ա. Եսայանն իր բողոք-դիմումում Աշ. Հովհաննիսյանի ելույթը համարում էր ավելի ֆրակցիոն, քան պլենումում արածը: Նա Աշոտին մեղադրում էր տրոցկիզմի, դաշնակիզմի և կուլակային տրամադրություններ սերմանելու մեջ և առաջարկում նրան ազատել պաշտոնից: Բացի Ա. Եսայանից՝ Աշ. Հովհաննիսյանի և ԿԿ-ի ղեկավար միջուկի դեմ ԿԿ-ի նախագահությանն ուղղված բողոք-դիմումով են հանդես եկել Հ. Կարոյանը, ԿԿ-ի անդամ Ար. Երզնկյանը, ԿԿ-ի անդամության թեկնածու Հովհ. Բաննահյանը և ուրիշներ[3]:

Աշ. Հովհաննիսյանի և նրա շրջանակի պաշտոնանկության հանգուցալուծումը տեղի է ունենում ԿԿ-ի և ԿՎՀ հուլիսյան պլենումում: Բողոքի ձայնը հասցվում է Անդրերկրկոմ, նրա քարտուղար Մ. Օրախելաշվիլուն և ընդհուպ Մոսկվա: ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ինֆորմացիոն բաժնի վարիչ Յու. Ռոժկովը 1927 թ. օգոստոսի 9-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված գրությամբ խնդրում է, որ շտապ կարգով

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 856, թ. 1 և 4, ֆ. 1021, ց. 2, գ. 1417, թ. 1–2:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ. 1:
[3] Նույն տեղում, թ. 5–6 և 9:

իրեն ուղարկեն ԿԿ-ի հուլիսյան պլենումի սղագրությունը և մասնավորապես ԿԿ ի անդամ ընկ. Ա. Եսայանի ու Հովհ. Բաննահյանի ելույթների նյութերը Սա ինքնին ցույց է տալիս, որ հուլիսյան պլենումն այնքան սուր բնույթ է ստացել, որ հատուկ հետաքրքրել ու անհանգստացրել է Կենտրոնին Արխիվային գործում չկան այլ մանրամասներ.

Դեռ հուլիսյան պլենումի նախօրյակին մի խումբ կուսակցական պետական գործիչներ՝ Ս. Մարտիկյանը, Ռ. Դաշտոյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ (ընդամենը 8 հոգի), հուլիսի 3-ին հանդես էին եկել հայտարարությամբ՝ նշելով կուսակցության համար ստեղծված ծանր վիճակը, կուսակցական ղեկավարության թույլ տված սխալները, որ իբր հետևողական պայքար չի մղվում դաշնակիզմի և մենշևիզմի դեմ, իսկ կուսակցության ներսում՝ տրոցկիզմի դեմ Ուստի ստեղծված վիճակը հաղթահարելու նպատակով առաջարկվում էր ՀԿ(բ)Կ ԿԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնի համար առաջադրել Ս Կասյանի թեկնածությունը[1]: Պարզվում է, որ ԿԿ ի քարտուղարի պաշտոնի նշանակման հարցում առաջացել է երկու խումբ մեկը պաշտպանում էր համնմատարար քիչ հայտնի Հայկ Հովսեփյանին, իսկ մյուսը՝ Հայհեղկոմի նախկին նախագահ Ս Կասյանին

Դեռ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1927 թ. հունիսի 10-ի նիստում լսվել է Աշոտ Հովհաննիսյանի դիմումը՝ ԿԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնից ազատելու մասին: Նախագահությունը համաձայնում է խնդրանքին և միաժամանակ դիմում է Անդրերկրկոմ՝ այդ պաշտոնում երաշխավորել ուրիշ թեկնածություն: Հասկանալի է, որ ԿԿ-ի քարտուղարի նշանակման խնդրով Անդրերկրկոմն իր հերթին պետք է դիմեր ՀամԿ(բ)Կ ԿԿ: Տևական սուր վիճաբանություններից հետո ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հուլիսյան միացյալ պլենումը բավարարում է Ա Հովհաննիսյանի «խնդրանքը» և ԿԿ-ի առաջին քարտուղար ընտրում Հայկ Հովսեփյանին.

---

[1] Նույն տեղում, գ. 85, թ. 70:
[2] Նույն տեղում, գ. 77, թ. 24-26:

Միջանկյալ նշենք, որ Հայկոմկուսի բարձրագույն ղեկավար պաշտոնից հեռացող Ա. Հովհաննիսյանի ազգային նկարագրի մասին l, վկայում այն փաստը, որ նրա անմիջական աջակցությամբ է 1924/1925 թթ. արտասահման (Եվրոպա և Ամերիկա) գործուղվել հայ մեծանուն գրող Ե. Չարենցը և անգամ 1924 թ. սեպտեմբերին Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական սեկցիայի (հատվածի) ղեկավարությանը խնդրում է «ցույց տալ հարկ եղած աջակցություն»[1]:

Դարձյալ իրադարձությունների հետադարձ (ռետրոսպեկտիվ) ընթության մեթոդի դիմելով՝ փաստենք, որ ավելի վաղ՝ մինչ Ա. Հովհաննիսյանի պաշտոնից ազատվելը, ԿԿ-ի բարտուղարներից առաջինը հեռացավ Երեմիա Բակունցը: Նրա հեռացման շարժառիթն այն էր, որ Առաջին հանրապետության շրջանում գործնական մասնակցություն էր ունեցել Զանգեզուրի իրադարձություններին: 1919 թ. մարտի վերջին Գորիսում տեղի ունեցած համազանգեզուրյան գյուղացիական 1-ին համագումարում ստեղծվել էր գավառի Ազգային խորհուրդ: Դաշնակցականների և անկուսակցականների հետ այդ խորհրդի կազմի մեջ էր մտել նաև բոլշևիկ Ե. Բակունցը[2]: 1921 թ. ամռանը՝ Զանգեզուրի խորհրդայնացումից հետո, Ե. Բակունցը ստանձնում է գավառի հեղկոմի նախագահի պաշտոնը[3]: Սակայն մինչ այդ ծավալվող դեպքերի կապակցությամբ նա հետագայում մեղադրվեց ազգայնական գիծ վարելու, 1919-1920 թթ. Զանգեզուրում դաշնակցականների հետ համագործակցելու, դաշնակ հրամանատարության հետ թուրքական գյուղերի վրա հարձակման հրաման տալու մեջ (Շուռնուխի գործողությունը): Ե. Բակունցի գործի ուսումնասիրության կապակցությամբ ստեղծվում է հանձնաժողով, 1927 թ. փետրվարի սկզբին գումարվում է ԿԿ-ի և ԿՎՀ նախագահությունների համատեղ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 50, թ. 58:

[2] *Միմոնյան Հ. Ռ.*, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996, էջ 551:

[3] *Մանդալյան Ս. Մ.*, Ռազմա-հեղափոխական կոմիտեները Հայաստանում (1917–1922 թթ.), Ե., 1961, էջ 135:

նիստ, որում զեկուցում է ԿՎՀ նախագահ Շ. Ամիրխանյանը: Հանձնաժողովը, առանձնապես էական սխալներ չտեսնելով նրա գործողություններում, միաժամանակ եզրակացնում է, որ քաղաքականապես աննպատակահարմար է նրա հետագա աշխատանքը ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարի պաշտոնում: ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլու առաջարկով Ե. Բակունցը ազատվում է իր պաշտոնից և գործուղվում ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի տրամադրության տակ[1] Իսկ Ա. Հովհաննիսյանի պաշտոնաթողությունից հետո իրենց գբաղեցրած պաշտոններից անաղմուկ հեռանում են Երևանի կոմիտեի քարտուղար Ա. Շահգելդյանը և ԿԿ-ի քարտուղար Ալ. Շահուվարյանը:

Այդ նույն ժամանակաշրջանում Ռուսաստանում ընթացող ներկուսակցական սուր ընդդիմության ու պայքարի ֆոնին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հուլիսյան միացյալ պլենումում արդեն բացահայտ ընդդիմությամբ հանդես եկան կուսակցական պատասխանատու աշխատողներ **Ռուբեն Սաֆրազբեկյանը**, **Գևորգ (Գեորգի) Փիրգուլյանը** և **Պատվական Ղազարյանը**, որոնք հրապարակեցին իրենց տրոցկիստական որակվող «Եռյակի» հռչակագիրը (դեկլարացիան): Խմբին հարող ակտիվիստներից է եղել նաև **Գայանե (Ժենյա) Արեշյանը** (որոշ փաստաթղթերում Գ. Արեշյանը ներկայացված է որպես «Եռյակի» ղեկավարներից մեկը): Ընդդիմության կողմից ելույթ է ունենում նրա ղեկավար Ռ. Սաֆրազբեկյանը: Նա շարադրում է «Եռյակի» տեսակետները և դեմ արտահայտվում պլենումում հանդես եկած ժողկոմխորհի նախագահ, ԿԿ-ի նախագահության անդամ Ս. Համբարձումյանի զեկուցման դրույթներին և դրանց առթիվ ընդունված բանաձևին:

«Եռյակի» դատապարտման ելույթով հանդես է գալիս ՀԿ(բ)Կ ԿՎՀ նախագահ Շ. Ամիրխանյանը՝ նրանց վարքագիծը բնորոշելով որպես տրոցկիստական ընդդիմության ֆրակցիոն խմբի դրսևորում: Լսվում է ընդդիմության երեք ղեկավարների (Ռ. Սաֆրազ-

[1] Այդ մասին հանգամանորեն տես Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2006, թիվ 1 (107), էջ 250–266:

բեկյանի, Գ. Փիրգուլյանի և Գ. Արեշյանի) հարցը և հավանություն է տրվում նրանց հանելու ԿՎՀ նախագահության անդամության թեկնածուի կազմից[1]: Բանավեճ ծավալելու նպատակով «Եռյակի» հոչակագիրը 1927 թ. հուլիսի 20-ին հրապարակվում է «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում: Դա հնարավորություն էր տալիս կուսբջիջներում ժողովներ հրավիրել և տեսակետներ արտահայտել: Հայտարարության մեջ նախ նշվում էր, որ վերջին ամիսներին լուրջ տարաձայնություններ են առաջացել ԿԿ-ի նախագահության, քարտուղարության և ԿՎՀ-ի միջև, որ կուսակցության մեջ խոր արմատներ է ձգել սպեցիֆիզմը, և իրենք պայքարում են կուսակցության շարքերի միասնության համար: Սակայն նրանք անընդունելի են համարում Երևանի կուսակտիվի ժողովում Ա2. Հովհաննիսյանի արտահայտած մեղադրանքը, թե իրենք կուսակցության թշնամիներ են[2]: Բերված փաստը ցույց է տալիս, որ 1920-ական թվականներին ներկուսակցական կյանքում հնարավորություն է տրվել բանավեճեր անցկացնել, բացահայտ տարակարծություններ արտահայտել, նույնիսկ հանդես գալ այլընտրանքային պլատֆորմներով:

Ավելի ուշ՝ 1927 թ. հոկտեմբերի 27-ին, ՀԿ(բ)Կ ԿՎՀ անդամներ՝ Ռ. Սաֆրազբեկյանի, Գ. Փիրգուլյանի և Գ. Արեշյանի ստորագրությամբ դիմում են ուղղել ԿՎՀ նախագահությանը հետևյալ մտահոգություններով ու պահանջներով: Նրանք մի կողմից խոսում էին ներկուսակցական դեմոկրատիայի ընդլայնման անհրաժեշտության մասին, որ կուսակցությունում չկան քննադատելու, տեսակետներ արտահայտելու, լայն քննարկումներ կազմակերպելու բավարար հնարավորություններ, չկա պայքար բյուրոկրատիզմի դեմ և այլն, իսկ մյուս կողմից՝ «ձախ» դիրքերից հայտարարում էին, որ գլուխ են բարձրացրել ազգայնականները, դաշնակ-մենշևիկները, որ ԿԿ-ում առկա են խմբավորումներ և այլն[3]: Նախա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 110, թ. 4:
[2] «Խորհրդային Հայաստան», 20 հուլիսի 1927 թ.:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 81, թ. 6, ֆ. 91, ց. 3, գ. 4716, թ. 2–5:

տեսված էր կուս համագումարի նախօրյակին՝ նոյեմբերի առաջին տասնօրյակին, անցկացնել համակուսակցական բանավեճ: Ընդդիմադիր համեմատաբար ուժեղ դրսևորումներ են նկատվել Երևանի Լենինականի և Ղազաքիլիսայի կուսկազմակերպություններում նաև կոմերիտական կառույցներում: Վերջինումս արձանագրվել են գաղտնի խմբակներ:

Ներկայացված ամփոփիչ տվյալներով կուսակցության Երևանի գավառային կազմակերպության ակտիվի 13 ժողովներում 101 կուսբջիջների մասնակցությամբ քննության են դրվել ԿԿ-ի թեզիսները: Ակտիվի ժողովներին մասնակից ընդամենը 1572 կուսանդամից 1516-ը քվեարկել է ԿԿ-ի բանաձևի օգտին, 53-ը՝ ընդդիմության և 3-ը՝ ձեռնպահ: Նշվում է, որ ակտիվ է եղել բուհական կազմակերպությունը, որի անդամներից 20-ը քվեարկել է ընդդիմության առաջարկած բանաձևի օգտին[1]: Դարալագյազի գավառում քննարկում է անցկացվել 8 կուսբջիջում: Ժողովներին ներկա են եղել 220 կուսանդամ, ելույթ են ունեցել 44 մարդ, բոլորը միաձայն քվեարկել են ԿԿ-ի բանաձևի օգտին: Դիլիջանի գավառում՝ ժողովների մասնակիցներից ընդդիմության օգտին քվեարկել են ընդամենը 4 մարդ (լրացուցիչ մանրամասներ չկան): Լենինականի կազմակերպությունում՝ 25 կուսբջիջում մասնակցել են 589 կուսանդամ: եղել է 82 ելույթ, որից 12-ը՝ ընդդիմությունից: ԿԿ-ի բանաձևի օգտին քվեարկել են 580-ը, իսկ ընդդիմության՝ 9-ը: Լոռի-Փամբակի 55 կուսբջիջների ժողովներին մասնակցել է 1003 կուսանդամ, ելույթ է ունեցել 198 մարդ, որից 13-ը՝ ընդդիմությունից, ԿԿ-ի բանաձևի օգտին քվեարկել է 985 հոգի, 9-ը՝ ընդդիմության և 2-ը՝ ձեռնպահ: Մեղրիի կազմակերպության 5 բջիջներում 119 մասնակից բոլոր կուսանդամները միաձայն քվեարկել են ԿԿ-ի բանաձևի օգտին: Նոր Բայազետի գավառում 27 կուսբջիջների ժողովներին ներկա բոլոր 432 մասնակիցները քվեարկել են ԿԿ-ի բանաձևի օգտին: Էջմիածնի կազմակերպության ընդամենը 3 բջջի 83 մասնակիցներից 79-ը քվեարկել են ԿԿ-ի օգտին, իսկ 4-ը՝

ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 113, թ. 1:

ընդդիմության[1]: Եթե ամփոփենք վերը բերված տվյալները[2], ապա ստացվում է, որ նշված գավառների կուս. կազմակերպություններում 1927 թ. նոյեմբերին ներկուսակցական դիսկուսիաների արդյունքները ամփոփելիս ընդդիմության օգտին քվեարկել են ընդամենը 79 կուս. անդամ, իսկ 5-ը՝ ձեռնպահ: Մասնակիցներից մնացած ճնշող մեծամասնությունը քվեարկել է ԿԿ-ի «հակատրոցկիստական» թեզիսների օգտին: Սակայն, մեր կարծիքով, հիմքեր կան կասկածելու, որ տեղերում քվեարկության արդյունքները կեղծված լինեն: Այստեղ կարելի է կասկածել երկու ուղղությամբ. մեկ, որ տեղական կուսակցական մարմինները հնարավոր է ընդդիմադիրների քվեարկության տվյալները խիստ նվազեցնեն կամ առհասարակ ցույց չտան, որպեսզի վերադաս մարմիններին ցույց տան, որ իբր իրենց ղեկավարած գավառներում ամեն ինչ կարգին է, օպոզիցիոներներ չկան, կամ դրանք աննշան են: Բայց, ըստ իրավիճակի, հնարավոր է, որ վերադաս մարմինների պահանջարկով առաջադրանք լինի «հայտնաբերել ընդդիմադիրներ» և ներկայացնել «լավ ցուցանիշներ»: Մենք կարծում են, որ այս երկրորդ վարկածը ավելի հաճախ գործել է հետագայում, երբ վերևից պահանջ էր իջեցվում հայտնաբերել ժողովրդի «թշնամիներին»

Բանավեճի արդյունքները ամփոփվել են ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարում (1927 թ. նոյեմբեր): Այդ շրջանում Հայաստանում ներկուսակցական ընդդիմության առկայությունը, Միության մասշտաբով տրոցկիստական-զինովևական հակակուսակցական բլոկի դեմ ընթացող սուր պայքարը նկատի ունենալով՝ ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարը կարելի է համարել 1920-ական թվականների ամենա խոշորը: Այդ մասին են վկայում համագումարի հինգ հատորից

---

[1] Նույնը, թ. 2–9:

[2] Բերված տվյալները, անշուշտ, ամբողջական չեն, որովհետև ոչ բոլոր կուսբջիջներում անցկացված դիսկուսիայի արդյունքներն են ներառված: Այսպես,օրինակ, Էջմիածնի գավկոմի նախագահության դեկտեմբերյան նիստի արձանագրության բաղվածքում նշված է, որ դիսկուսիան գավառում հաջող է անցել Ղարդուդուլիի և Աշտարակի շրջաններում, ընդդիմությանը կողմ է քվեարկել 15 մարդ. 5-ը՝ Ղարդուդուլիում, 10-ը՝ Աշտարակում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 81, թ. 15):

կազմված զեկուցումները, արձանագրությունները և հարակից նյութերը, որոնք հիմնականում վերաբերել են ներկուսակցական կյանքին, գաղափարաքաղաքական պայքարի հարցերին: Հաշվետու զեկուցման մեջ ԿԿ-ի քարտուղար Հայկ Հովսեփյանը փաստում է «տրոցկիզմը» պաշտպանող առանձին խմբերի առկայությունը և՛ կուսշարքերում, և՛ կոմերիտմիության շրջանում, և՛ արիմիություններում: Մասնավորապես նշում է, որ կոմերիտմիության մեջ եղել են գաղափարական թերումներ, ինչպես, օրինակ, Տրոցկիստական երիտասարդական խմբակը[1]: Դրանց քննադատությամբ էր, որ ՀԼԿԵՄ ԿԿ-ի նախկին (1924-1926 թթ.) քարտուղար Գուրգեն Գումեդինը (Մելիք-Դադայանը) հանդես եկավ առանձին գրքույկով[2]: ԿՎՀ-ի ընդդիմադիր անդամներ Աբեղյանը և Ղազարյանը նոյեմբերի 17-ին համագումարում հանդես են գալիս հայտարարությամբ, որում «ձախլիկ» դիրքերից քննադատում էին «Ստալինյան ֆրակցիայի հակաբոլշևիկյան սխալ քաղաքականությունը թե՛ երկրի կենտրոնում և թե՛ տեղերում»[3]: Համագումարում քննադատության հիմնական առանցքը դառնում է արդեն պաշտոնազրկված երեք «տրոցկիստ» ղեկավարների հայտարարությունը: ԿԿ-ի քարտուղար Հ. Հովսեփյանը նշում էր, որ «մինչ այս օպոզիցիայի հանդես գալը Հայկոմկուսը համարվել է ամենահանգիստ և ամենախաղաղ կուսակցությունը Այժմ դրությունը փոխվել է. տրոցկիստների ընդդիմությունը փորձում է հատուկ ֆրակցիայի դեր խաղալ, հանդես է գալիս դեկլարացիաներով[4]:

Տրոցկիստական-զինովևական ընդդիմության քննադատությամբ համագումարում հանդես է գալիս ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլին, որի ելույթի շուրջ ծավալվում է մտքերի փոխանակություն: Ընդդիմադիր թևից հանդես է գալիս «Եռյակի» անդամ Պատվական Ղազարյանը: Սակայն նրան թույլ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 1, թ. 122–123:
[2] Տես *Գումեդին Գ.*, Տրոցկիզմից դեպի մենշևիզմ, Ե., 1928:
[3] ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 15, թ. 1–2:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 4, թ. 2:

չեն տալիս, ինչպես հարկն է, ավարտելու իր խոսքը՝ աղմուկով ու բացականչություններով իջեցնում են ամբիոնից: Այնուհետև ձայն է տրվում ընդդիմադիր մյուս պատգամավոր Ժենյա (Գայանե) Արեշյանին, որ «ձախ» դիրքերից քննադատում է Օրախելաշվիլու առանձին մտքեր: Նրա ասելով՝ ԿԿ-ն իր քաղաքականությամբ նպաստում է կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը գյուղում: Դրա հետևանքով տեղի է ունենում արտադրության միջոցների կենտրոնացում, հողօգտագործման և վարձու աշխատանքի աշխուժացում: «Տրոցկիստ» համարվող ընդդիմադիրները վտանգ էին տեսնում գյուղի հետագա շերտավորման խորացման մեջ: Նրանց ձախլիկությունը երևում է նաև նրանից, որ կողմնակից են եղել վարձատրության հավասարեցման սկզբունքին: Ընդդիմության դիրքերից հանդես եկած պատգամավոր Հարոյանը, կրկնելով նախորդ ընդդիմադիր ելույթ ունեցողների միտքը, նշում էր, որ «գյուղում զարգանում է ոչ թե սոցիալիստական սեկտորը՝ գյուղատնտեսական կոոպերացիան և կոլեկտիվ տնտեսությունը, այլ ավելի շատ՝ կապիտալիստական սեկտորը և կուլակային տնտեսությունը»[2]: Ձախերը անհանգստացած էին 1925-1927 թթ. վարվող բուխարինյան՝ «հարստացե՛ք» կուրսից: Բայց շուտով Ստալինը և կուսակցության ղեկավար մեծամասնությունը հրաժարվում են բուխարինյան թեզից ու իրավիճակի թելադրանքով անցնում կուլակության վերացման և համատարած կոլեկտիվացման կուրսին, այլ կերպ ասած, փաստորեն սկսում են վարել, ըստ էության, ընդդիմության (Տրոցկի-Զինովևի) մատնանշած կուրսը: Այստեղից դժվար չէ հետևեցնել, որ Տրոցկի-Ստալին պայքարը ընթացել է ոչ այնքան գաղափարի, երկրի զարգացման հեռանկարի, սոցիալիզմին նվիրվածության շուրջ, որքան իշխանության բարձրագույն բարձերին տիրելու համար: 1920-ական թթ. ներկուսակցական կյանքի հատկանշական կողմերից մեկն այն է, որ անգամ համագումարների բարձր ամբիոններից, թեկուզ թույլ,

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 1, թ. 50:
[2] Նույն տեղում, թ. 55:

հաճախ էլ «ձախ» դիրքերից քննադատության խոսք է ինչել ստալինյան մեծամասնության, նրա վարած քաղաքականության դեմ: Մյուս կողմից՝ հայ ընդդիմությունն էլ անարդար ու անմարդկային էր համարում Տրոցկու, Զինովևի, Կամենևի և մյուսների հետ նման կերպ վարվելը, գործիչներ, ովքեր հսկայական վաստակ են ունեցել «Մեծ Հոկտեմբերի» հաղթանակի գործում:

Նմանակելով Կենտրոնին ու հրահանգավորվելով նրանց կողմից՝ հարվածի գլխավոր թիրախը համարվում էր «տրոցկիզմը» և իբրև դրա հայաստանյան դրսևորում՝ «դաշնակիզմը», «մենշևիզմը» և «սպեցիֆիզմը»: Համագումարում ելույթ ունեցողներից ոմանք փորձել են, իրենց խոսքերով ասած, «դաշնակիզմը» և «մենշևիզմը» կապել «տրոցկիզմի» հետ[1]: Եթե մենշևիզմը այս կամ այն կերպ կարելի էր կապել տրոցկիզմի հետ (դա միգուցե գալիս էր Լ. Տրոցկու մենշևիկյան անցյալից, նրա կողմից, գյուղացիության նկատմամբ քաղաքական անվստահությունից, նրա պերմանենտ (անընդհատ) հեղափոխության տեսությունից՝ առանձին վերցված մեկ երկրում սոցիալիզմի հաղթանակի անհնարինության մասին և այլն), ապա ինտերնացիոնալիստական (միջազգայնականի ջատագով) տրոցկիզմը անհիմն է կապել ազգային գաղափարներ կրող ՀՅԴ-ի հետ: Ինչ վերաբերում է «տրոցկիզմի» և «սպեցիֆիզմի» կապին, ապա պետք է ասել, որ քանի դեռ ԿԿ-ի քարտուղարը սպեցիֆիկյան անցյալ ունեցող Ա. Հովհաննիսյանն էր «սպեցիֆիզմի» մասին առանձնապես քննադատական խոսք չկար: իսկ հենց որ 1927 թ. Ա. Հովհաննիսյանը հեռանում է պաշտոնից, «տրոցկիզմի» դեմ պայքարի համատեքստում ասպարեզ է նետվում նաև «սպեցիֆիզմի» դեմ պայքարը: Դրա ամենավառ արտահայտությունը Ս. Կասյանի հայտնի աշխատությունն էր[2]: Հակասպեցիֆիկյան ուղղվածության առանձին հոդվածներով ու գրքույկներով հանդես եկան նաև Գ. Քալաշյանը, Գ. Վանանդեցին և ուրիշներ:

---

[1] ՀԱԱ. ֆ. 1, ց. 7, գ. 1, թ. 129:

[2] Տես *Կասյան Ս.*, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928:

Համագումարում հանգամանալի պարզաբանում ու գնահատական է տրվում «տրոցկիստական օպոզիցիային», նշվում է, որ այն Հայաստանում իբր հանդես է եկել 1923 թ., բայց և մինչև 1926 թ. առանձնապես ակտիվություն չի դրսևորել[1]: Այդ ժամանակահատվածում առհասարակ խոսք չի կարող լինել Հայաստանում «տրոցկիզմի» և տրոցկիստական խմբերի գոյության մասին: Վիճակը այդպես է ներկայացվել՝ ցույց տալու համար, որ իբր հենց սկզբից Հայաստանում կային տրոցկիստներ:

Հայտնի է, որ 1923 թ. երկրորդ կեսին, երբ պարզ դարձավ, որ Վ. Լենինը այլևս չի կարողանալու վերադառնալ աշխատանքի, Լ. Տրոցկին հանդես եկավ օրավուր ուժեղացող բյուրոկրատական ապարատի քննադատությամբ, մի ապարատ, որը ստեղծել էր Ի. Ստալինը: Վերջինս, իր ձեռքում կենտրոնացնելով ԿԿ-ը, ԿԿ-ի կազմբյուրոն և քարտուղարությունը, շուտով դրանք գործիք դարձրեց իր ձեռքում քաղաքական ու անձնական հակառակորդներին փուլ առ փուլ ասպարեզից դուրս մղելու, իսկ հետագայում, իր դիրքերն ավելի ամրապնդելով, դրանց հանդեպ հուշվեհարդար տեսնելու: Լ. Տրոցկու առաջադրած պայքարի դրական կողմն այն էր, որ հնարավորություն էր ստեղծում ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման, ազատ բանավեճերի: Եթե հավատանք «ԽՄԿԿ պատմության» հեղինակների պնդմանը, ապա 1920-ական թթ. առաջին կեսին գրականության և արվեստի հարցերի շուրջ անցկացված բանավեճերի ժամանակ Տրոցկին հանդես է եկել գրականության և արվեստի ապակուսականացման օգտին[2]: Նա, պայքար հայտարարելով կուսակցական, բյուրոկրատական ապարատին կուսակցության ներսում հոսանքների և խմբակցությունների ազատության համար, դրանով մարտահրավեր էր նետում ԿԿ-ի ապարատն իր ձեռքում կենտրոնացրած Ստալինի և նրա կողմնակից կենտկոմական մեծամասնության դեմ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, գ. 7, գ. 1, թ. 131:
[2] Տե՛ս История КПСС, т. 4, кн. 1, (1921–1929), М., 1970, с. 389.

Հայկոմկուսում տրոցկիզմի մասին ընդդիմության ու խմբակցության ձևով, ինչպես արդեն ասվել է, խոսք կարող է լինել 1927 թ. կեսերից։ Տրոցկիստական համարվող ընդդիմության առաջին գրավոր ելույթը տեղի է ունեցել հուլիսի սկզբին ԿԿ-ի պլենումում, երբ ընդդիմության երեք ներկայացուցիչները հանդես եկան իրենց հայտարարությամբ։ Համագումարում ՊՔՎ (Ս. Մելիք-Օսիպով) և ԿՎՀ (Շ. Ամիրխանյան) ղեկավարների ելույթներից կարելի է դատել, որ հունիսի վերջերին կուսակցության Երևանի կազմակերպության ակտիվի ժողովում տեղի է ունեցել «տրոցկիստական ընդդիմության» առաջին ելույթը։ Հայտնվում է, որ իբր կապ է եղել Երևանի և Մոսկվայի միջև։ Շ. Ամիրխանյանը գեկուցում է, որ ֆրակցիոն աշխատանքին նպաստել են 1927 թ. կեսերին Մոսկվայից ժամանած մի շարք ուսանողներ, դրանց թվում Լենինականի նախկին բանվոր, իսկ այժմ Մոսկվայի Պլեխանովի ինստիտուտի ուսանող 1919 թ. կուսանդամ Համո Սահակյանը, ովքեր կազմակերպել են ընդհատակյա ժողովներ, քննադատել են ԿԿ-ի քաղաքականությունը, տարածել են անլեգալ գրականություն, ատաչարկել են մի շարք ընկերների ստորագրել «83-ի հայտարարությունը» Լենինականի կուսկազմակերպությունից ԿՎՀ-ի կողմից բերված է 13 ընդդիմադիրների ցուցակ՝ Հ. Սահակյանի գլխավորությամբ, որը ստորագրել է «83-ի պլատֆորմի» տակ։ Ֆրակցիոն աշխատանք են տարվել հատկապես Լոռի-Փամբակի և Լենինականի կազմակերպություններում[2]։ Այսպես, օրինակ, մի փաստաթղթում տեղեկացվում է, որ դեռ օգոստոս ամսին ընդդիմություն է ի հայտ եկել Ղարաքիլիսայի երկաթուղայինների կուսբջջի անդամների

1927 թ. մայիսին Տրոցկու, Զինովևի, Կամենևի, Եվդոկիմովի և կուսակցական 83 այլ գործիչների ստորագրությամբ ԿԿ-ի քաղբյուրոյին ուղղված, այսպես կոչված, «83-ի հայտարարությամբ» պահանջ էր դրվում խմբակցությունների, խմբերի ու դիսկուսիաների ազատություն կուսակցության ներսում, ժխտվում էին սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեկ երկրում, բանվորաժողովրդական դաշինքը, կուսապարատը մեղադրվում էր բյուրոկրատիզմի, հակահեղափոխական-տերմիդորականության մեջ և այլն (տես ՍՄԿԿ տեղեկագիրք, Ե., 1984, էջ 251–254, История КПСС, т. 4, М., 1970, с. 459)։

ՀԱԱՀ, ֆ. 1, ց. 7, գ. 4, թ. 25–26, գ. 81, թ. 1–3։

շրջանում, ովքեր դիմել են իրենց կուսակցական և թեկնածու ընկերներին՝ ստորագրելու «83-ի հայտարարության» տակ: Հայտարարությունը ստորագրելուց հետո նրանց են փոխանցվել նաև այլ փաստաթղթեր՝ Վ. Լենինի կտակը, Զինովևի և Տրոցկու վերջին ելույթները մեքենագիր վիճակում: Ղարաբիլիսայի ընդդիմության ղեկավարն էր Գաբրիել Եսայանը: Հայտնվում է, որ Ղարաբիլիսայի ինտերնացիոնալ (հայ, ռուս, վրացի) կազմ ունեցող բանվորական խումբը գաղտնի ժողովներ է գումարել, կապեր է հաստատել Փամբակի, Շահալիի, Քյոլագերանի և Սանահինի կայարանների ընդդիմադիրների հետ[1]: ԿՎՀ-ի 1927 թ. սեպտեմբերի 16-ին կազմված մի գրությունում նշվում է, որ կուսակցության Լոռի-Փամբակի կազմակերպությունից մեկնկես տասնյակից ավելի անձինք (նշված են նրանց անուն-ազգանունները՝ Գ. Եսայանի գլխավորությամբ) տանում են ակտիվ ֆրակցիոն աշխատանք: Ընդդիմադիրները դժգոհություն են հայտնել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունից, իրենց ստացած աշխատավարձից, չինական հեղափոխության հարցում ԿԿ-ի վարած գծից և այլն: Ուշագրավ է, որ ընդդիմությունը գործել է ոչ թե գյուղացիական, այլ գերազանցապես բանվորական միջավայրում: Լրտեսության ու մատնությունների ճանապարհով ԿՎՀ-ն պարզել է, որ 1927 թ. նոյեմբերին Ռ. Սաֆրազբեկյանը և Գ. Եսայանը միասին եղել են Թիֆլիսում, իբր կապեր են ունեցել վրացական ընդդիմության հետ և այլն[2]:

ԿՎՀ նախնական տվյալներով ՀԿ(բ)Կ շարքերում ընդդիմադիրների թիվը կազմել է ընդամենը 78 մարդ: Դրանց թվում նշված են Ռ. Սաֆրազբեկյանը, Գ. Փիրգուլյանը, Գ. Արեշյանը, Պ. Ղազարյանը, Սեթ Նազարյանը և ուրիշներ[3]: Մեկ այլ գործում բերված է ԿՎՀ կուսեռյակի կազմած Երևանի կազմակերպության ընդդիմադիր 143 մարդկանց ութէջանոց ցուցակը՝ նրանց անկե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 9–10:
[2] ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 10, թ. 1–2, գ. 44, թ. 4–5:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 16–17:

տային տվյալներով: Այդ ցուցակում դարձյալ տեղ են գտել ընդդիմության մեզ հայտնի երեք լիդերների՝ Ռ. Սաֆրազբեկյանի, Գ. Արեշյանի և Գ. Փիրգուլյանի անունները[1]:

Ընդդիմադիր գործունեության համար ԿՎՀ-ն պատիժներ է սահմանում. ոմանց հեռացնում են կուսշարքերից, ոմանց աքսորում հանրապետությունից, մյուսներին տրվում նկատողություններ և այլն: Հատուկ գործ է կազմվում ընդդիմության լիդերներ համարվող, կուսակցության ԿՎՀ անդամներ Ռ. Սաֆրազբեկյանի և Գ. Փիրգուլյանի մասին: Մինչ այդ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարությունը 1927թ. սեպտեմբերի 26-27-ի նիստերում որոշել էր՝ ա) Ռ. Սաֆրազբեկյանին ազատել Գյուղատնտեսական բանկի վարչության նախագահի պաշտոնից և աշխատանքի ուղարկել Կ.Պոլիս՝ Անդր պետառի լիազորի պաշտոնում, բ) իսկ Գ. Փիրգուլյանին ազատել Կոմունալ բանկի վարչության նախագահի պաշտոնից և գործուղել Անդրերկրկոմի տրամադրության տակ: ԿԿ-ի նախագահությունը սեպտեմբերի 27-ի նիստում հաստատում է ԿԿ-ի քարտուղարության վերոնշյալ որոշումը և առաջարկում նրանց հոկտեմբերի 25-ից ոչ ուշ մեկնել Անդրերկրկոմի տրամադրության տակ՝ արտասահման գործուղվելու նպատակով[2]: Սակայն նրանք հրաժարվում են մեկնել՝ պատճառաբանելով, որ իրենք կանոնադրական որևէ խախտում չեն կատարել: ԿՎՀ նոյեմբերի 3-ի նիստում լսվել է այդ երկու ընկերների գործը և որոշվել ԿՎՀ կազմից ու կուսակցությունից նրանց հեռացման հարցը լսել առաջիկա պլենումում: Այնուհետև ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի նոյեմբերի 12-ի միացյալ պլենումի նիստում լսվել է Սաֆրազբեկյանին և Փիրգուլյանին ԿՎՀ կազմից հանելու և կուսշարքերից հեռացնելու մասին հարցը: Պլենումի նույն նիստում որոշվում է Անդրերկրկոմի տրամադրության տակ մեկնելու որոշումը չկատարելու համար համա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 67, թ. 1–8:
[2] ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 815, թ. 2, ց. 3, գ. 4716, թ. 8:

ձայնվել ԿՎՀ-ի որոշմանը՝ «տրոցկիստական եռյակի» լիդերներ Սաֆրազբեկյանին և Փիրգուլյանին հեռացնել կուսշարքերից[1]:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1928 թ. հունվարի 8-ի նիստում լսվել և որոշվել է՝ կուսակցությունից հեռացված հետևյալ ընդդիմադիրներին՝ Ռ. Սաֆրազբեկյանին, Գ. Փիրգուլյանին, Գաբրիել Եսայանին, Գ. Արեշյանին, Ար. Գաբլոյանին հանել ԿԳԿ-ի կազմից[2]: Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի օրինակով Հայաստանում ևս անհարկի տրոցկիստ որակվածներին կուսակցությունից հեռացնում ու շնորհազրկում էին: Հայտնի է, որ ՀամԿ (բ)Կ 15-րդ համագումարից հետո տրոցկիստները լիովին ջարդ ստացան: Նրանց առաջնորդներից մի քանի տասնյակ հոգի վտարվեցին կուսակցությունից: Ի դեպ, ՀՀ արխիվում պահպանված մի գաղտնի ամփոփագրից տեղեկանում ենք, որ 1928 թ. հունվարյան այն օրերին, երբ Լև Տրոցկին արտաքսում էին Մոսկվայից դեպի Ալմա-Աթա, ժողովրդի մի մասի մոտ հուզում է առաջացել: Նշվում է, որ Տրոցկուն Կազանյան կայարանից ճանապարհելիս հավաքված

---

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 815, թ. 2, ց. 3, գ. 4716, թ. 13: Տրոցկիստական ընդդիմությանը պատկանելու մեղադրանքով 1928 թ. մարտին Գ. Փիրգուլյանը աքսորվում է Տաշքենդ. 1929 թ. գարնանը նա Տաշքենդի համակենտրոնացման ճամբարից մեղայական նամակով դիմում է ՀամԿ(բ)Կ ԿՎՀ նախագահության, որ ինքը զղջում է իր արարքի համար, «անվերապահ հրաժարվում է ֆրակցիոն աշխատանքից», հեռանում է ընդդիմությունից, դատապարտում է Տրոցկու ելույթները, խնդրում է իրեն վերականգնել կուսշարքերը: ԿՎՀ քարտուղար Ե. Յարոսլավսկու 1929 թ. հուլիսի 3-ի գաղտնի գրությամբ Փիրգուլյանին թույլատրվում է վերադառնալ Երևան, իսկ Հայաստանի ԿՎՀ 1930 թ մարտի 30-ի որոշմամբ նա վերականգնվում է կուսշարքերում: Սակայն ԿՎՀ կուսկոլեգիայի 1933 թ. հունվարի 21-ի նիստում կրկին լսվում է Գ. Փիրգուլյանի հարցը: Նա դարձյալ մեղադրվում է «ժակոբինոիդոիսական-տրոցկիստական» հայացքների համար և վերջնականորեն հեռացվում կուսակցությունից: Նման որոշման համար հիմք է հանդիսացել այն, որ կուսակցության անդամներից մեկի (Մակինցյանի) բնակարանում ընթրիքի ժամանակ Փիրգուլյանը բաժակաճառ արտասանելիս իբր վատ է արտահայտվել Ի. Ստալինի հասցեին և կուսակցության ուղեցծի դեմ: Իսկ դրանից մի քանի օր անց խնջույքի մասնակիցներից մեկը՝ ոմն Ղազարյան ազգանունով, մատնագիր է տվել ԿՎՀ և այդ հիման վրա «տրոցկիստական արտահայտությունների» համար Փիրգուլյանը հեռացվում է կուսակցությունից: Դժվար չէ տեսնել, թե այդ ամենում որքան արհեստականություն կա: Ուշագրավ է, որ նման պրակտիկան շատ բնորոշ է դառնում արդեն 1930-ական թթ.: Հիշյալ գործի մասին հանգամանորեն տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 54, թ. 1-6, ֆ. 91, ց. 1, գ. 815, թ. 2-4, ց. 3, գ. 4716, թ. 13-14, 20, 39, 41, 55:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 15, թ. 2:

միքանիհազարանոց, հիմնականում մտավորականներից և ուսանողներից կազմված հսկա բազմությունը վանկարկել է «Կեցցե՛ Տրոցկին», «ուռա՛» և այլն: Ընդհարում է տեղի ունեցել պահպանության ուժերի հետ, որի արդյունքում ձերբակալվել է 19 մարդ[1]:

ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարը տրոցկիզմի դեմ պայքարի կապակցությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. 1/ «վճռական պայքար **տրոցկիզմի** դեմ որը հանդիսանում է գլխավոր վտանգը կուսակցության ներսում, ինչը ջուր է լցնում **մենշևիզմի և դաշնակիզմի** ջրաղացին»: 2/ «Համագումարը վճռականորեն մերժում է, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հասցեին ուղղված «սպեցիֆիզմի» և «աջ թեքման» ամեն մի մեղադրանք և ընդգծում է, որ ԿԿ-ի վարած գիծը բնավ չի շեղվել Լենինյան-բոլշևիկյան ուղուց»[2]:

ՀԿ(բ)Կ 5-րդ և ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարներից հետո, Կենտրոնից ստացված հրահանգի համաձայն, ԿՎՀ-ներում ստեղծվեցին հանձնաժողովներ՝ ընդդիմության շարքային անդամների վրա ներգործելու և «անուղղելի» տարրերին կուսակցության շարքերից մաքրելու համար: ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ը, ղեկավարվելով 15-րդ համագումարի դիրեկտիվներով, ուսումնասիրել է առավել ընդդիմադիր 6 կուսբջիջ. դրանք էին Ղարաքիլիսայի երկաթուղու, Լենինականի դեպոյի, Քյավթառուի գյուղական, Երևանի պոլիգրաֆ և «Արարատ» տրեստների ու սակրավորների զինվորական վաշտի բջիջները: ԿՎՀ «Եռյակը»՝ Մանուչարյան, Կուրղինյան, Հովհաննիսյան կազմով, ուսումնասիրելով վերոնշյալ 6 կուսբջիջները, պարզել է հետևյալը. 1928 թ մարտի 1-ի դրությամբ դրանց շարքերում հաշվում էր 440 անդամ, սոցիալական կազմի տեսակետից՝ գերազանցապես բանվոր: Տեղեկացվում է, որ հիշյալ վեց կազմակերպություններից ՀամԿ(բ)Կ 14-րդ և 15-րդ համագումարների միջակայքում կուսակցությունից հեռացվել են 17 հոգի, իսկ 6-ը ստացել են տարաբնույթ կուստույժեր[1]: Այնուհետև «Եռյակը»

ՀԱԱ. ֆ. 1, ց. 8, գ. 65. թ. 1, 4–5:
ՀԱԱ. ֆ. 1, ց. 7, գ. 5, թ. 111:
ՀԱԱ. ֆ. 1, ց. 8, գ. 65, թ. 23:
[1] Նույն տեղում, թ. 31–33:

եզրակացրել է, որ մինչև 1928 թ. մարտի 1-ի դրությամբ «օպոզիցիոն-ֆրակցիոն» հայացքների և դրանցից չհրաժարվելու համար կուսակցությունից հեռացվել են 79 անդամ և 2 անդամության թեկնածու, ընդամենը 81 մարդ., որը կազմում է ՀԿ(բ)Կ 5643 անդամների ընդամենը 1,4 տոկոսը[1]:

«Եռյակի» զեկուցագրի և այլ նյութերի հիման վրա ԿՎՀ նախագահությունը կազմել է ԿՎՀ գործունեության 1927/1928 թթ. տարեկան հաշվետվություն, որում ամփոփված են Հայաստանում «տրոցկիզմի ջախջախման» արդյունքները: Նախ ԿՎՀ-ի հաշվետվության մեջ արձանագրված է, որ ԿԿ-ի աշխատանքները ընթացել են ներկուսակցական սուր պայքարի պայմաններում (որը ճիշտ չէ), և ԿԿ-ի և ԿՎՀ ղեկավար ապարատում եղել են սկզբունքային տարաձայնություններ: Այնուհետև բերված են ամփոփ տվյալներ, որ հանրապետության վեց գավառային կազմակերպություններում բացահայտվել են ընդամենը 246 ընդդիմադիրներ. Երևանում՝ 132 մարդ., Լենինականում՝ 76, Լոռի-Փամբակում՝ 19, Էջմիածնում՝ 13, Դիլիջանում՝ 5 և Զանգեզուրում՝ 1 մարդ[2]: Ըստ հաշվետվության՝ ստացվում է, որ տրոցկիստ-ընդդիմադիրներ չեն հայտնաբերվել Նոր Բայազետի, Դարալագյազի և Մեղրիի գավառներում: Պարզվում է նաև՝ կուսակցությունից վտարվել է, 81 մարդ., որից 27-ը եղել են բանվոր, 40-ը՝ ծառայող և 14-ը՝ գյուղացի[3]: Սակայն ընդդիմադիր համարվողներից 165 հոգին 1927 թ. վերջին և 1928 թ. սկզբի առաջին մի քանի ամիսների ընթացքում հրաժարվել է ընդդիմությունից՝ ստանալով կարգապահական տարբեր տույժեր կամ պարզապես հայտարարություն են արել ընդդիմությունից հեռանալու վերաբերյալ:

Վերջում ԿՎՀ-ի ներկայացրած եզրակացության մեջ նշվում էր, որ ա/ Հայաստանի ընդդիմությունը հիմնականում եղել է,

---

[1] Նույն տեղում, թ. 35:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 598, թ. 2 և 33:
[3] Նույն տեղում, թ. 3 և 13:

տրոցկիստական և մի քանի սապրոնովական[1] և բ/ որ տեղական ծանր պայմանները նպաստել են ընդդիմության ուժեղացմանը[2]: Ասվածից հետևում է՝ ընդդիմադիր համարվածներից շատերին դժվար է «տրոցկիստ» համարել, առավել ևս «սապրոնովական», որովհետև շարքային կոմունիստները «դեցիստների» առաջնորդներից Տ. Սապրոնովի անունը հավանաբար չեն էլ լսել: Իրավիճակում ԿՎՀ-ի կազմած արձանագրություն-տեղեկանքից պարզվում է, որ նշյալ ընդդիմադիրներից շատերը դժգոհել են իրենց աշխատավարձի չափից, դրա ուշացումներից, բնակարանային ու սոցիալական ծանր պայմաններից և այլն[3]: Նրանց դժգոհություն-բողոքները չեն ունեցել քաղաքական ու գաղափարական հիմք: Բայց մյուս կողմից՝ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում ևս եղել են Տրոցկու գաղափարների հետևորդներ: Դրանք կուսակցությունից հեռացված 81 անձինք են, ովքեր չեն հրաժարվել իրենց ընդդիմադիր հայացքներից

Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) 1927-1928 թթ. ամփոփագրերից կարելի է դատել, որ ընդդիմության դրսևորումներ են նկատվել նաև առանձին գյուղական բնակավայրերում: Օրինակ, հաղորդվում է, որ Կապանի գավառամասի Արծվանիկ գյուղի հակախորհրդային տարրերը Տրոցկուն և մյուսներին կուսակցությունից հեռացնելու կապակցությամբ տարածում են սադրիչ լուրեր՝ պաշտպանելով օպոզիցիայի հայացքները՝ աշխատավարձի հավասարեցման, ազատ առևտրի, խորհուրդներում արդար ընտրությունների և այլ պահանջներով: Նույն կերպ, Սիսիանի գավառամասի Անգեղակոթ և Ղարաբիլիսա (Սիսիան) գյուղե-

---

[1] Կուսակցական գործիչներ Տ. Սապրոնովը, Ա. Բուքնովը, Ն. Օսինսկին և ուրիշներ սկսած ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարից, հանդես էին գալիս «Դեմոկրատական ցենտրալիզմի» պլատֆորմով, որի իմաստն այն էր, որ պահանջում էին կուսակցության ներսում ֆրակցիաների ու խմբերի ազատություն, դեմ էին կառավարման խիստ կենտրոնացմանը, տնտեսության միանձնյա ղեկավարմանը և այլն (տես ՍՄԿԿ տեղեկագիրք, Ե., 1984, էջ 214):

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 65, թ. 25:

[3] Նույն տեղում, թ. 27–30:

րի հակախորհրդային տարրերը պաշտպանում են օպոզիցիային[1]: Ընդդիմության դիրքորոշումն են պաշտպանել Վորոնցովկայի գավառամասի Ռիկովո գյուղի ռուս գյուղացիները: Տրոցկու առաջարկած աշխատավարձի հավասարեցման մասին պոպուլիստական տեսակետը պաշտպանելու մեջ են մեղադրվել Սամաղարի գավառամասի Աղավնատան գյուղխորհրդի նախագահն ու մի խումբ համագյուղացիներ և այլն[2]: Մեկ այլ տեղեկությամբ տրոցկիզմի մեջ է մեղադրվել Կապանի գավառամասային կոմիտեի քարտուղար Ա. Մանուկյանը, որին 1928 թ. նոյեմբերին ձերբակալում են իբր ընդհատակյա տրոցկիստական, հակախորհրդային գործունեության համար[3]:

Բացի կուսակցական բջիջներից՝ ընդդիմություն է արձանագրվել նաև կոմերիտմիության շարքերում: Դրանք տարածված են եղել Երևանի, Էջմիածնի, Լոռի-Փամբակի և Լենինականի գավառներում: Առանձնապես ակտիվ է եղել Ս. Աչոյանի գլխավորած, այսպես կոչված, «Տրոցկիստական երիտասարդական միություն» (ՏԵՄ) խումբը ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կազմակերպությունում: Երևանի կազմակերպության մեջ գործել է «տրոցկիստական պլատֆորմով» ևս մի խմբակ, որն իրեն կոչել է «Օրթոդոքս մարքսիստների» խմբակ, որը իբրև տարել է «քայքայիչ աշխատանք՝ ծածկվելով ձախ ֆրազներով»[4]: ԿՎՀ-ի հավաքած տվյալներով 1927 թ. նոյեմբերի դրությամբ ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կազմակերպությունում եղել է 29 ընդդիմադիր՝ իբրև «Տրոցկիստական երիտասարդական միություն» կամ Աչոյանի խումբ անունով[5]: ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարից հետո հետապնդումներ իրականացվեցին նաև ընդդիմադիր կոմերիտականների հանդեպ: Ֆրակցիոն աշխատանքի մեղադրանքով 1927 թ. դեկտեմբերի 3-ին կո-

---

[1] Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008, էջ 244:
[2] Նույն տեղում, էջ 245:
[3] *Մանուկյան Ա.*, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում (1920–1953 թթ.), Ե., 1999, էջ 17:
[4] «Մտորիդային Հայաստան», 27 փետրվարի 1927 թ:
[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 6–7:

մերիտմիության շարքերից հեռացվեց ՀԼԿԵՄ Լենինականի գավ-կոմի անդամ, 1924 թ -ից կուսանդամ, բանվոր Սերգո Խանոյանը[1], 1928 թ փետրվարին՝ ՀԼԿԵՄ Երևանի կոմիտեի անդամ Ս. Աչոյանը և ուրիշներ Վերջինս համարձակորեն քննադատել է կոմերիտ-միության ապարատում գլուխ բարձրացրած բյուրոկրատիզմը: Նա ձևական էր համարում կոմերիտմիության համագումարները, նրանց կազմած օրակարգն ու զեկուցումները, կոմիտեների ընտ-րությունները, որովհետև ըստ նրա՝ «մինչև համագումարը արդեն վաղուց որոշված, պատրաստ է, թե կոմիտեի հիմնական մասը ինչպիսիներից պետք է կազմվի: Այնպես որ համագումարին մնում է, ձեռք բարձրացնել և ծափահարել նրանց»[2]: Բերված մտքերը, մեր կարծիքով, կարելի է նույնությամբ տարածել նաև կուսակցա-կան ապարատի վրա: Ի դեպ, Հայաստանի կոմերիտմիության մեջ տրոցկիստական համարվող ընդդիմության ու մասնավորապես նրա ամենաակտիվ դեմքերից Ս. Աչոյանի խմբի քննադատությանն էր նվիրված ՀԼԿԵՄ ԿԿ-ի նախկին՝ 1924-1926 թթ , քարտուղար Գ. Գումեդինի գրքույկը

ԿՎՀ-ի «Եռյակի» ամփոփ տվյալներով Հայաստանի կոմերիտ-միության մեջ նշված է 85 ընդդիմադիր, նկատվել է նաև Դաշ-նակցություն կուսակցությանը հարող երիտասարդների հոսանք: Այդպիսի խմբեր հայտնաբերվել են Էջմիածնի գավառի Սամա-ղար Աղջաղալա, Գեչերլու գյուղերում, Աշտարակում, Լոռի-Փամ-բակի գավառի կոմերիտմիության Շահալիի և Ալավերդու բջիջնե-րում, Լենինականի գավառում և այլուր: Սամաղարի խմբակն ան-գամ իրեն կոչել է **դաշնոմոլ** (դաշնակցական կոմերիտմիություն), դրանից ստացել է գրականություն, այդ թվում՝ «Հուսաբեր» թերթը[1]: Էջմիածնի գավկոմի բարտուղար Եսայանի 1928 թ մի գաղտնի շրջաբերականում հայտնվում է, որ «վերջերս իրենց գավառի մի

ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 29, թ. 18, «Խորհրդային Հայաստան», 11 հոկտեմբերի 1927 թ.:
ՀԱԱ, ֆ 1, ց. 8, գ. 66, թ. 51:
Տես **Գումեդին Գ.**, Տրոցկիզմից դեպի մենշևիզմ, Ե., 1928, նաև ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 66, թ 3:
ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 6–7, ց. 8, գ. 100, թ. 10–11, ֆ. 91, ց. 5, գ. 46, թ. 2:

շարք գյուղերում կոմսոմոլիստների շրջանում բացահայտվել են տրոցկիստական անլեգալ խմբեր, որոնք կապ են հաստատել Երևանի օպոզիցիոներների հետ», նշվում է, որ Աշտարակում գործել են «Դեպի ճշմարտություն», Օշականում՝ «Երիտասարդ մարքսիստների» կոմերիտական գաղտնի խմբակներ, որոնց ծրագրերում առաջ են քաշել քաղաքական բնույթի խնդիրներ: Օրինակ՝ «Դեպի ճշմարտություն» խմբակը 1927 թ. մայիսի 27-ի ծրագրում պահանջում էր ուսումնասիրել կոմերիտական դեմոկրատիան, ՆԷՊ-ը, պարզել սոցիալիզմի հետամնացությունը, պայքարել բանվորների և գյուղացիների շահագործման դեմ, կապ հաստատել ընդդիմադիր այլ խմբակների հետ: Խմբակը նույնիսկ հարց էր բարձրացնում, թե ինչու պետք է լինի մի կուսակցություն և ոչ՝ երկու և այլն[1]: Իսկ առանձին ընդդիմադիր կոմերիտականներ իրենց հիասթափությունը և դժգոհությունը կուսակցությունից ու կոմերիտմիությունից արտահայտել են ոտանավորների ձևով[2]:

Այսպիսով՝ ամփոփելով կարելի է եզրակացնել, որ 1927/1928 թթ. հաշվետու տարում կուսակցության և կոմերիտմիության շարքերում արձանագրվել են 246+85=331 ընդդիմադիրներ՝ տրոցկիստ, սապրոնովական, դաշնակցական և այլ որակումներով Բայց և միաժամանակ, քանի՞ հազարավոր ընդդիմադիրներ են եղել կոմկուսից ու կոմերիտմիությունից դուրս կիսագաղտնի ու ընդհատակյա, որոնց հաշվառելը և հետապնդելը պարզապես անհնարին էր: Դրանց հետապնդելու ու բռնադատելու ժամանակը եկավ տասը տարի անց՝ 1930-ական թվականների կեսերին[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 46, թ. 1–3:

[2] Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 40, թ. 3–4:

[3] ԿՎՀ կուսկոլեգիայի ֆոնդի գործերից մեկում տվյալներ կան, որ «բացահայտվել են մեծ թվով նախկին «տրոցկիստներ», ովքեր ստորագրել են «83-ի պլատֆորմի» տակ: Այսպես, օրինակ, կուսակցության Երևանի կոմիտեի քարտուղար Գ. Հանեսօղլյանի և հաշվառման սեկտորի վարիչ Ե. Վարդանյանի ստորագրությամբ 1935 թ. հոկտեմբերի 13-ին Անդրերկրկոմի Ն. Գ. կոմիսարիատ է ուղարկվել «83-ի պլատֆորմը» ստորագրած 266 կոմունիստ անձանց ցուցակ: Այդ նույն գործում առկա է մեկ այլ ավելի ընդարձակ ցուցակ՝ ընդամենը 571 անձանց անուններ, ովքեր ստորագրել են «83-ի պլատֆորմի» տակ: Այստեղ խոսքը վերաբերում է միայն Եր. քաղ կոմիտեի կազմակերպությանը: Սյուս կազմակերպությունների վերաբերյալ մեր ձեռքի տակ

ՀԿ(բ)Կ 5-րդ և ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարների արդյունքներով իրականացված տրոցկիստական և այլ որակումներով ֆրակցիաների ու խմբերի բացահայտումներով և ջախջախումներով ամենևին էլ չավարտվեց պայքարը դրանց դեմ թե՛ կուսակցության ներսում և թե՛ նրանից դուրս: Ավելին, Հայկոմկուսի ներսում կրկին եղան դժգոհություն արտահայտողներ, թեև բավարար հետևողական պայքար չի մղվել «տրոցկիզմի», «սպեցիֆիզմի», «դաշնակիզմի» և այլ դրսևորումների դեմ: Հատկապես, Երևանի մի շարք կուսկազմակերպությունների պահանջով հրավիրվեց ԿԿ-ի 1928 թ. ապրիլյան պլենումը: Պլենումում քննարկվում է ԿԿ-ի վարած քաղաքական գծի հարցը: Անդրերկրկոմից պլենումին մասնակցել և ելույթներ են ունեցել Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահ Միխա Ցխակայան և Անդրերկրկոմի քարտուղար Ռուբենը (Ռ. Մկրտչյանը): Նշվել է, որ թույլ է եղել պայքարը «տրոցկիզմի», «դաշնակիզմի» ու «սպեցիֆիզմի» դեմ: Մասնավորապես, քննադատվել է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի և Երկոմի օրգան «Կոմունիստ» ամսագրում տպագրված Հովհ. (Օնիկ) Դուրգարյանի հոդվածներից մեկում Մայիսյան ապստամբության գնահատման շուրջ արտահայտված այն միտքը, որ «**գյուղացիները դաշնակների հետ միասին հարվածել են բոլշևիկներին**»[1]: Դա համարվեց անթույլատրելի սխալ: Եվ դրա քավության նոխազը պետք է դառնար ԿԿ-ը և առաջին հերթին նրա 1-ին քարտուղար Հայկ Հովսեփյանը: Իսկ մինչ այդ աշխատանքից ազատվել էին «Կոմունիստ»-ի խմբագիրը և Հայբամբակկոմի տնօրեն, հոդվածագիր Օ. Դուրգարյանը:

Պլենումը անբավարար գնահատելով ԿԿ-ի աշխատանքը՝ փոխեց ԿԿ-ի դեկավար կազմը: ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և Անդրերկրկոմի նախապես կազմած սցենարով քարտուղարներ Հ. Հովսեփյանը և Հ. Գյուլիքևխյանը ազատվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից և նրանց փոխարեն առաջադրվեցին **Հայկազ Կոստանյանի** և

տվյալներ չկան: Հասկանալի է, թե ինչի համար էին պատրաստվել նախկին «օպոզիցիոներների» այդ ցուցակները: Դրանք ուղարկվել են Անդրերկրկոմը տնօրինող Լ. Բերիայի տրամադրության տակ (տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 5, գ. 73, թ. 1–16):

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 6, թ. 4:

Աղասի Խանջյանի թեկնածությունները: ԿԿ-ի առաջին քարտուղար ընտրվեց Հ. Կոստանյանը, իսկ երկրորդ՝ Լենինգրադից նոր հրավիրված Ա. Խանջյանը[1]: ԿԿ-ի նախագահության կազմում կոոպտացվեց նաև Ս. Կասյանը: ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1928 թ. հուլիսի 7-ի նստաշրջանը բավարարեց Արտաշես Կարինյանի «դիմում-խնդրանքը»՝ իրեն ազատելու ԿԳԿ-ի նախագահի պարտականություններից, և նրա փոխարեն Անդրդաշնության ԿԳԿ-ի համանախագահ Ս. Կասյանին ընտրեց ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահ:

Ավելի վաղ ԿԿ-ի նախագահության 1928 թ. հունվարի 7-ի նիստում լսվել և որոշվել էր ՀՍԽՀ ԺՈՂԿՄԽորհի նախագահ առաջադրել Սահակ Տեր-Գաբրիելյանին: Նա այդ պաշտոնում փոխարինեց Սաքո Համբարձումյանին[2]: ԿԿ-ի նախագահության հուլիսի 2-ի նիստով Ս. Համբարձումյանը և Ա. Կարինյանը հանվեցին ԿԿ-ի նախագահության կազմից: Այս կապակցությամբ արխիվային մի գործում տեղեկություն կա, որ ժողկոմխորհի նախագահ Ս Համբարձումյանը իբր ժամանակին եղել է «սպեցիֆիկ»[3]: Այդ նույն նիստում տխրահռչակ Ամատունին (Ա. Վարդապետյանը) կոոպտացվում է ԿԿ-ի կազմում՝ որպես ԿԿ-ի բաժնի վարիչ: Իբրև պաշտոնանկությունների շարունակություն՝ ՊՔՎ-ում «անառողջ մթնոլորտի» պատճառաբանությամբ 1928 թ. դեկտեմբերին ՊՔՎ նախագահի և Ն. Գ. ժողկոմատի ղեկավարի պաշտոնից ազատվում է Սերգեյ (Սարգիս) Մելիք-Օսիպովը: Նրա փոխարեն երաշխավորվում է դրսից հրավիրված Ս. Մարգարյանի թեկնածությունը: Այդ որոշմանը դեմ է բվեարկել միայն ԿՎՀ նախագահ Շ. Ամիրխանյանը[4]:

Եվ, վերջապես, 1920-ական թթ. վերջին ինչպես Միությունում, այնպես էլ Հայաստանում հարված վերջին թիրախը դարձավ այսպես կոչված, «աջ» թերումը: Տրոցկիզմից հետո Կենտրոնի օրինակով մնում էր «ջախջախել» Բուխարին-Ռիկով-Տոմսկի «աջ

---

[1] Նույն տեղում, թ. 18:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 15, թ. 2:
[3] Նույն տեղում, գ. 100, թ. 9:
[4] Նույն տեղում, գ. 15, թ. 100, 112, 156:

օպորտունիստական կուլակային» թեքումը: ԿԿ-ի քաղբյուրոյի երեք անդամները համապատասխանաբար զբաղեցնում էին Ն. Բուխարինը՝ «Պրավդայի» գլխավոր խմբագրի, Ա. Ռիկովը՝ ժողկոմխորհի նախագահի և Մ. Տոմսկին՝ ՀԱՄԿԽ նախագահի բարձր պաշտոնները: Եթե Հայաստանում «աջ կապիտուլյանտներ» չլինեին, ապա այդպիսիք պետք է «հայտնաբերվեին»:

Մինչ այդ՝ 1920-ական թվականների կեսերին, ինչպես ասվել է, ՆԷՊ-ի պայմաններում Ստալին-Բուխարին-Ռիկով մեծամասնությունը տնտեսական քաղաքականության ոլորտում առաջնորդվում էր Բուխարինի հայտնի «հարստացե՛ք» կարգախոսով[1]: Տրոցկիստական-զինովևական ընդդիմությունը ձեռնպահ կամ դեմ էր այդ կուրսին: Սակայն երբ տրոցկիստական-զինովևական բլոկը ջախջախվեց, Ստալինի գլխավորած կենտկոմական մեծամասնությունը, մեջտեղ բերելով 1927/1928 թթ. երկրում ծագած մի քանի դժվարություններ, փաստորեն վերաստանձնեց ընդդիմության կուրսը ՆԷՊ-ի հարցում և սահմանափակեց այն: Այստեղ խնդիրը ոչ միայն հացամթերման դժվարությունն էր, այլ այն, որ գյուղի և քաղաքի շերտավորման հետագա խորացման հետևանքով (կուլակներ, նեպմաններ) գնալով նեղանում էր կուսակցության սոցիալական հենարանը:

Նպաստավոր չէր նաև ԽՍՀՄ միջազգային դրությունը. պահպանվում էր միջազգային մեկուսացումը, խոսվում էր մոտալուտ պատերազմի մասին, լարված էին հարաբերությունները Անգլիայի, Չինաստանի հետ: Փաստական տվյալներ կան, որ 1924-1927 թթ. չինական հեղափոխության ժամանակ Ստալինի հրահանգով Կոմինտերնը փաստորեն համագործակցել է հակահեղափոխական համարվող Չան-Կայ-շիի ու նրա բուրժուազգայնական Գոմինդանական կուսակցության հետ, որի արդյունքում չին շատ կոմունիստներ էին զոհվել: Այս կապակցությամբ ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ի կողմից 1928 թ. փետրվարին հավաքած Ստալինին ընդդիմադիր մի տեղեկանքում կարդում ենք, որ «Ստալինը Չինաստան է ուղարկել

[1] ՍՄԿԿ պատմություն, Ե., 1981, էջ 481:

3 մլն. ռուբլի, և այդ փողը ծախսվել է հակակոմունիստական շարժումները ուժեղացնելու, որի հետևանքով կազմակերպվել է կոմունիստների ջարդ»[1]: ԿԿ-ի Քաղբյուրոյի և Կոմինտերնի միջոցով 1926-1927 թթ. անգլիական ածխահատների շրջանում խորհրդային փողերով քաղաքական գործադուլի ու ապստամբության փորձեր արվեցին, սակայն ապարդյուն: Դրա հետևանքը եղավ այն, որ Անգլիան 1927 թ. խզեց դիվ. կապերը ԽՍՀՄ-ի հետ [2]: Բոլշևիկյան ղեկավարությունը և 3-րդ կոմինտերնը, առաջնորդվելով համաշխարհային հեղափոխության հրդեհը տարածելու կարգախոսներով, դրամով ու քարոզչությամբ դասակարգային պայքարի սադրման, հեղափոխության արտահանման արկածախնդրական փորձեր էին կատարում Գերմանիայում, Չինաստանում, Անգլիայում, եվրոպական այլ երկրներում, որոնք, սակայն, ձախողվում էին: Ստալինյան ընդդիմությունը, անշուշտ, օգտագործում էր այդ հանգամանքը:

Մյուս կողմից՝ գյուղական չքավորության վիճակը գնալով խորանում էր: Նրանց մեծամասնությունը, չունենալով բանուժ, աշխատանքի այլ միջոցներ, ցանք չէին կատարում, իրենց հողակտորը վարձակալության էին տալիս ունևոր տնտեսատիրոջը՝ կուլակին: Պետության կողմից գնման գների իջեցման հետևանքով ունևոր գյուղացին հացը թաքցնում էր, չէր մթերում և չէր վաճառում: Նման պայմաններում խնդրի լուծումը գտան ՆԷՊ-ը փակելու մեջ: Կուսակցական-պետական ապարատն անցավ հարկադրանքի՝ արտակարգ միջոցառումների «чрезвычайщина»-ի: Սկսեցին բռնագրավել ոչ միայն կուլակի, այլև գյուղմթերքների հիմնական արտադրողի՝ միջակի ունեցվածքը: Արտակարգ միջոցառումներից անմասն չի մնացել նաև Հայաստանը: Այսպես՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. մարտի 6-ի նիստում Վ. Մոլոտովի հեռագրի հիման վրա

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 100, թ. 9:

[2] Տե՛ս Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929), Ե., 2008, էջ 204–205, 208, 214–216,217–221, Политбюро ЦК РКП(б) - ВКП(б) и Европа. Решения «Особой папки», 1923–1939, М., 2001, с. 123–127, История России XX век. (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 791–792 и др.

լսվել է Հայաստանում գարնանացանի սրշավի մասին հարցը: Այդ նպատակով ստեղծվել է կենտրոնական և գավառային հանձնաժողովներ և որոշվել է հարկ եղած դեպքում հարկադրանքով վերցնել պարենի (հատկապես ֆուրաժի) ավելցուկ ունեցողների կերը պետական կայուն գներով և այդ միջոցառման ղեկավարումն ու պատասխանատվությունը դնել գավկոմների բարտուղարների և գավգործկոմների նախագահների վրա[1]:

1928 թ աշնանից այդ կուրսին ընդդիմացան Ն. Բուխարինը և նրա կողմնակիցները՝ Ռիկովը, Պյատակովը, Տոմսկին, ինչպես նաև այն ժամանակվա առաջադեմ գիտնական-տնտեսագետներ՝ Ա Չայանովը, Ն. Կոնդրատևը, Ա. Չելինչևը, Լ. Յարոշենկոն և ուրիշներ Եվ այդ դիրքորոշումը ստալինյան մեծամասնության կողմից որակվեց որպես «աջ» թեքում. Անդրկովկասում այդ թեքումը վերագրվեց, այսպես կոչված, «Միրցով-Լոմինաձե» խմբակին

Վ. Լենինի կողմից «կուսակցության սիրելի» բնորոշումը ստացած Ն Բուխարինը տակավին 1925 թ լույս տեսած «Սոցիալիզմի ուղին և բանվորագյուղացիական դաշինքը» աշխատության մեջ տեսականորեն հիմնավորում էր ՆԷՊ-ի հիման վրա մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը: Նա այդ հաղթասակի հնարավորությունը կապում էր բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման, հասարակության միջին խավերին սոցիալիստական շինարարության մեջ լայնորեն ներգրավելու, կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման, ապրանքադրամական և շուկայական հարաբերությունների լայն կիրառման, տնտեսության արդյունաբերության և գյուղատնտեսության) հաշվեկշռված զարգացման հետ՝ «չրեզվիչայշչինան» համարելով ռազմակոմունիստական տրոցկիստական մեթոդ և այլն[2]:

Մենք համաձայն չենք ներքոհիշյալ գրքի հեղինակային խմբի արտահայտած այն տեսակետին, թե Բուխարին-Ստալին բանավե-

---

ՀԱԱ. ֆ. 1, գ. 8, գ. 15. թ. 43, գ. 20, թ. 57:

Бухарин Н. И.. Путь к социализму и рабоче-крестьянский союз. М.-Л., 1925. с. 11, 15. 27 и др

ձը զուտ իշխանության համար տակտիկական վեճ էր[1]: Եթե Ստալին-Տրոցկի հակամարտությունը վերջին հաշվով կարելի էր համարել իշխանակռիվ, որովհետև Ստալինից ոչ պակաս հավակնություն (ամբիցիա) է ունեցել նաև Տրոցկին: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ հսկայական էին վերջինիս ծառայությունները Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի հաղթանակների գործում: Ուստի, ըստ ամենայնի, Վ. Լենինի արժանի փոխարինողը Տրոցկին պետք է լիներ: Սակայն Ի Ստալինին հաջողվեց իր ամենավտանգավոր մրցակցին «գաղափարապես ջախջախել», 1929 թ. արտաքսել երկրից և, ի վերջո, ԽՍՀՄ Ն.Գ.Ժ.Կ-ի գործակալ, վարձու մարդասպանի միջոցով 1940 թ. վերջ տալ նրա կյանքին:

Այլ է խնդիրը Ստալին-Բուխարին դիմակայության պարագայում: Մեր կարծիքով, մեծ վերապահությամբ սա կարելի է, համարել իշխանակռիվ: Կարծում ենք, որ Բուխարինը կուսակցական-պետական բարձրագույն ղեկին տիրանալու հավակնություն չի ունեցել: Բուխարինը և Ստալինը մարդկային ու բարոյական հատկանիշներով ևս համեմատելի չէին: Այդ իմաստով Ն. Բուխարինը շատ ավելի բարձր էր և տեսականորեն ավելի պատրաստված Նրանք բանավիճեցին ՆԷՊ-ի և գյուղացուն սոցիալիզմի մեջ ինտեգրելու հարցում: Սակայն շատ կարճ տևեց այդ պայքարը Ստալինյան մեծամասնությունը հաղթեց: Կյանքի փորձը ցույց է, տալիս, որ միշտ չէ, որ մեծամասնության տեսակետն ու որոշումն է ճշմարիտը: Խորհրդային երկրի 70-ամյա պատմության փորձը ցույց տվեց, որ փոքրամասնության մեջ հայտնված բուխարինականների տնտեսական պլատֆորմը հավանաբար շատ ավելի հեռանկարային էր ԽՍՀՄ-ը բարեփոխումների ավելի արդյունավետ ուղիով տանելու տեսակետից:

Ինչ վերաբերում է Հայաստանում բուխարինական հայացքների դրսևորումներին, ապա պետք է ասել, որ այն գրեթե չի արտահայտվել: Սակայն Հայկոմկուսի ղեկավարությունը, բնականաբար,

---

[1] История России XX век (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, с. 858.

կրկնօրինակելով Կենտրոնի որդեգրած քաղաքական կուրսը, պետք է որ «պայքար» սկսեր «աջ» թեքման դեմ, որի սոցիալական հենարանը համարվեց կուլակությունը. ՀԿ(բ)Կ 7-րդ համագումարում (1930 թ մայիս) կուսակցության ներսում «աջ» օպորտունիստական թեքման մասին զեկուցել է ԿԿ-ի բյուրոյի անդամ Թադեվոս Մանդալյանը Նա հայտնել է, որ առանձին կազմակերպություններում, հատկապես Երևանի, իբր «եղել են նման տարրեր»: Դրանցից, օրինակ, նշվում են Լուսաշխի նախագահ Ստ. Թոփչյանի և Արսեն Եսայանի անունները: Վերջինս մեղադրվել է իբրև խմբակային աշխատանք տանելու մեջ: «Աջ» օպորտունիստական թեքման մեջ է մեղադրվել նաև Լուսժողկոմ Արտավազդ (Արտո) Եղիազարյանը[1]: Համագումարից հետո նա խնդրել է ԿԿ-ին իրեն աշխատանքից ազատել և սովորելու նպատակով թույլ տալ մեկնելու Մոսկվա: Սակայն ԿԿ-ի բյուրոյի 1930 թ. օգոստոսի 30-ի նիստում մերժվում է նրա խնդրանքը[2]: Պարզվում է, որ Արտո Եղիազարյանին մեղադրել են «աջ» օպորտունիստական թեքման մեջ այն բանի համար, որ համագումարում նա հանդես է եկել քննադատական մի ելույթով, ինչը դուր չի եկել կուսակցության ղեկավարությանը[3]: Նույն կերպ, 1930 թ. աշնանը «աջ հակակուսակցական, զրպարտչական գործունեության» մեջ է մեղադրվել Դիլիջանի շրջգործկոմի նախագահ Քեթիկյանը, որի համար ԿԿ-ի բյուրոյի և ԿՎՀ-ի նախագահության նոյեմբերի 4-ի միացյալ նիստում ստանում է կուսակցական խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով, և ազատվում է գրաղեցրած պաշտոնից[4]: Այդպիսով՝ մեր ձեռքի տակ եղած տվյալներով Հայաստանում «բացահայտվել են մի քանի բուխարինական»: Սակայն իրականությունն այն է, որ եթե ԿԿ-ի ղեկավարության դեմ որևէ մեկը թեկուզ առողջ ու ազնիվ մղումներով ինքնադատական ելույթ էր ունենում, ինքնուրույն տեսակետ էր արտահայտում, ապա հաճախ նա դասվում էր ընդ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 3, թ. 61–62:
[2] Նույն տեղում, գ. 12, թ. 83:
[3] Նույն տեղում, գ. 28, թ. 37:
[4] «Խորհրդային Հայաստան», 5 նոյեմբերի 1930 թ.:

դիմության շարքը, մեղադրվում էր որևէ թերման, տվյալ դեպքում՝ «աջ» թերման մեջ և ստանում իր «արժանի պատիժը»:

Կոլեկտիվացման փուլում Հայկոմկուսի ղեկավարության համաբ. ևս քաղաքական ուղենիշ դարձավ դասակարգային պայքարի հետագա սրման մասին Ստալինի հայտնի թեզը: ՀՍԽՀ խորհուրդների 7-րդ համագումարում (1930 թ. փետրվար) պետպլանի նախագահ Աբրահամ Գուլոյանը ելույթ ունենալով նշում էր. «Ընկերնե՛ր, կոլխոզ և սովխոզ շինարարությունը կազմակերպելիս մեզ դիմադրում է մեր դասակարգային թշնամի կուլակը, որը աշխատում է խանգարել մեր սոցիալիստական շինարարությունը: Եվ այդ ժամանակ **դասակարգային պայքարը սրվում է գյուղում** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»[1]: Իսկ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարը, տուրք տալով դասակարգային պայքարի սրման մասին ստալինյան հայտնի տեսադրույթին, զարգացնում է այն միտքը, որ այդ երևույթը Հայաստանում և Անդրկովկասում դրսևորվում է **նացիոնալ-օպորտունիզմի** ձևով[2]: Այսինքն՝ Հայաստանի պայմաններում «աջ» թերում որակում ստացածները պիտակավորվում էին նաև որպես ազգայնական (նացիոնալիստ): Կարելի է ասել, որ ՀամԿ(բ)Կ 15-րդ և ՀԿ(բ)Կ 5-րդ բուռն ու բանավիճային դրսևորումներով հարուստ համագումարներից հետո, երբ հաղթանակում է ստալինյան մեծամասնությունը, ընդդիմադիր-բանավիճային միջավայը, ազատ խոսքը աստիճանաբար մարում է: Իսկ, այսպես կոչված, «աջ» թերման «ջախջախումից» հետո կուսակցական կյանքը, համագումարները, պլենումները, կուսակտիվի ժողովները դառնում են մի տեսակ միօրինակ և անհետաքրքիր: Ասվածի վառ արտահայտություններ են ՀԿ(բ)Կ 6-րդ (1929 թ. հունվար) և 7-րդ (1930 թ. մայիս) համագումարները, որոնք բովանդակության առումով բնավ համեմատելի չէին 5-րդ համագումարի հետ: Օրինակ՝ 7-րդ համագումարում, ուր հիմնական զեկուցողներն էին ԿԳԿ-ի նախագահ Ս. Կասյանը

---

[1] ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 16, թ. 5:

[2] *Չուբար Յ.*, Դաշնակցությունը երրորդ շրջանում, Ե., 1930, էջ 19:

և ԿԿ-ի քարտուղար Ա. Խանջյանը, իշխող են եղել սոցիալիզմի և կոլեկտիվացման վերաբերյալ ստալինյան կեղծ կարգախոսները, որ իբրև «գյուղացին շրջադարձ է կատարել դեպի սոցիալիզմը», որ «գնալով սրվում է դասակարգային պայքարը», որ «կուլակը, դասակարգային թշնամին կատաղի դիմադրում է» և այլն[1]: Սրանք քաղվածքներ են բերված Ա. Խանջյանի հաշվետու զեկուցումից: Դիստերը վարվում էին նախապես կազմված կաղապարված ելույթներով և բացառապես սոցիալիզմի հաղթանակի մասին ստալինյան տեսականով ու պլատֆորմով: Սա նշանակում է, որ 1920-ական թթ վերջից միակուսակցական կառավարման համակարգին զումարվում է ստալինյան միանձնյա, անբաժան ավտորիտար վարչակարգը: Որքան էլ անհեթեթ համարվի, շուտով հարվածի թիրախ է դառնում ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահ Ս. Կասյանը: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, ԿՎՀ-ի, Երկրամի և Երևանի կուսակտիվի 1930 թ. նոյեմբերի 21-ի միացյալ նիստում, որտեղ ներկուսակցական դրության մասին զեկուցել է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի քաղբյուրոյի անդամ Ս. Կիրովը և տրվել է «աջ» թեքման (Բուխարին, Ռիկով, Տոմսկի) խմբի ջախջախման վերաբերյալ գնահատական: Մտքերի փոխանակությանը մասնակցել է Ս. Կասյանը, ով քննադատել է Հայկոմկուսի ղեկավարությանը «կոլեկտիվ ղեկավարությունը խախտելու և միանձնյա ղեկավարման անցնելու համար»: Ս. Կասյանի ելույթին հակադարձում է Ամատունին: Նա դատապարտում է Կասյանի ելույթը՝ նրան մեղադրելով «աջ» օպորտունիստական թեքման մեջ: Եվ դա բավական եղավ, որ «նոյեմբերյան հեղափոխության» կազմակերպիչներից մեկը մեղադրվի «աջ օպորտունիզմին» տուրք տալու մեջ: Ինչը շուտով հիմք հանդիսացավ նրա պաշտոնանկության համար: Եվ փոխադարձ մեղադրանքների ու պաշտոնանկությունների այս շղթան ավելի սուր ձևով շարունակվեց նաև հետագայում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, գ. 10, գ. 1, թ. 15–16:
Նույն տեղում, գ. 28, թ. 47–48:
«Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի 1930 թ.:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է հետևեցնել, որ 1920-ական թթ. բավականին հագեցած են եղել հասարակական-քաղաքական և ներկուսակցական կյանքը Խորհրդային Հայաստանում, որի ազդակները, բնականաբար, գալիս էին Կենտրոնից: Երկրում գործադրվող ՆԷՊ-ի քաղաքականության, արտաքին ու ներքին բարդ իրադրության պայմաններում և միակուսակցական ավտորիտար վարչակարգի հաստատման ծանապարհին կուսակցության ներսում և նրանից դուրս ի հայտ են եկել խմբեր, խմբակցություններ, պլատֆորմներ, ընթացել են դիսկուսիաներ սոցիալիզմի կառուցման ուղիների, երկրի ու կուսակցության հետագա հեռանկարի ու ճակատագրի հարցերում: Եթե Միության կենտրոնում ընդդիմությունն ու խմբակայնությունը առանձին փուլերում ստացել են բավականին սուր բնույթ, որի գագաթնակետը կարելի է համարել Ստալին-Տրոցկի տեսական դիմակայությունը՝ սոցիալիզմի կառուցման ուղիների ու մեթոդների հարցերում, երկրի բարձրագույն ղեկի համար մրցապայքարում, ապա Հայաստանում, նմանակելով ու կրկնօրինակելով Կենտրոնին, այն դրսևորվել է համեմատաբար ավելի թույլ ձևով, որում կարելի է տեսնել նաև արհեստականություն, հաճախ սուբյեկտիվ, անձնավորված, խմբակային պայքարի ձևեր: Փաստերը ցույց են տալիս, որ Հայկոմկուսը որքան էլ որ նմանակել է, Կենտրոնին, այնուամենայնիվ Հայաստանում ևս եղել են Տրոցկու և մյուս ընդդիմադիրների հետևորդներ, ովքեր հանդես են եկել հայտարարությամբ, ստորագրել են «83-ի պլատֆորմի» տակ, վտարվել են կուսակցությունից, աքսորվել և այլն: Սակայն, իբրև առանձնահատկություն, Հայաստանում տրոցկիզմի դեմ պայքարը ստացել է «սպեցիֆիզմի», «ղաշնակիզմի», «մենշևիզմի» և ազգայնականության դեմ պայքարի երանգավորումներ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մեր կարծիքով, ոչ մի հեղինակ ավելի լավ չի բնութագրել 1920-1930-ական թվականների խորհրդային մենատիրական վարչակարգի էությունը, որքան ռուս մեծ մտածող, փիլիսոփա ու հրապարակախոս Նիկոլայ Բերդյաևը: Ուստի, իբրև գրքի ամփոփիչ վերջաբան, խոսքը փոխանցենք նրան. «Պրոլետարիատի դիկտատուրան ընդունելով և ուժեղացնելով պետական իշխանությունը՝ առաջ կբերի վիթխարի բյուրոկրատիա՝ սարդոստայնի նման պատելով ամբողջ երկիրը և իրեն ենթարկելով ամեն ինչ: Այս նոր՝ խորհրդային բյուրոկրատիան ավելի ուժեղ կլինի, քան ցարականը, կստեղծվի նոր արտոնյալ դասակարգ, որը կարող է դաժանորեն շահագործել ժողովրդական զանգվածներին: Եվ դա էլ տեղի է ունենում: Հասարակ բանվորը ամենուրեք ստանում է ամսական 75 ռուբլի, իսկ խորհրդային չինովնիկը, մասնագետը՝ ամսական 1500 ռուբլի: Եվ այս հրեշավոր անհավասարությունը գոյություն ունի կոմունիստական պետությունում: Խորհրդային Ռուսաստանը պետական կապիտալիզմի երկիր է, որը կարող է շահագործել մասնավոր կապիտալիզմից ոչ պակաս:

Եվ այդ անցման շրջանը կարող է անվերջ ձգձգվել: Իսկ իշխողները, ճաշակելով իշխանության համը, չեն ցանկանա այլևս փոխել եղածը, որը կտաներ կոմունիզմի վերջնական հաղթանակի: Իշխանության համար պայքարը դարձել է ոչ թե միջոց, այլ նպատակ: Եվ խորհրդային պետությունը դարձավ այնպիսին, ինչպիսին ցանկացած բռնակալ պետություն: Նա գործում է նույն մեթոդներով, ստով ու բռնությամբ: Սա ամենից առաջ ռազմատիկանական պետություն է»[1]: Ռուսաստանի կառավարման համակարգի պետականակենտրոն բնույթը թե՛ անցյալում և թե՛ ներկայում, մեր և շատերի կարծիքով, պետք է բացատրել ինչպես նրա աշխարհաքաղաքական պայմանների ու պատմական զարգաց-

[1] *Бердяев Н. А.*, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 105.

ման առանձնահատկություններով, այնպես էլ ռուս ժողովրդին բնորոշ սոցիալ-մշակութային հոգեկերտվածքով (մենթալիտետով):

Այսպիսով՝ ինչպես խորհրդային ողջ տարածքում, նույնպես և Հայաստանում 1920-ական թվականներին ձևավորվեց ու ավարտուն տեսք ստացավ կոմունիստական-բոլշևիկյան մենատիրական վարչակարգը իր իշխանական կառույցներով, ընտրական համակարգով, կուսակցական-բյուրոկրատական ապարատով, կառավարման մեթոդներով և այլն: Արդեն 1930-ական թվականների կեսերից սոցիալիզմի հիմքերի կառուցմամբ, կուսակցական մենատիրության և Ստալինի անձնիշխանության ու պաշտամունքի հաստատմամբ երկիրը թևակոխում է ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ: Այդ վարչակարգերը, անշուշտ, Հայաստանին ու հայ ժողովրդին պարտադրվեցին դրսից: Չնայած դրանք հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական դիմագծին բնորոշ ու հոգեհարազատ չէին, սակայն նա սոցիալ-տնտեսական ապահովության ու ազգային անվտանգության հրամայականով հարմարվեց դրանց: Խորհրդային երկրի անցած 70 տարիներին Հայաստանի ու հայ ժողովրդի դիմագծի իսկական բնութագրիչը դարձավ ոչ թե կուսակցական, բյուրոկրատական-նոմենկլատուրային արտոնյալ ու պաշտոնամոլ ընտրախավը (էլիտան), այլ արդար աշխատանքով արարող, դժվարությունները հաղթահարող և լավատեսական սպասումներով ապագային նայող հայաստանցի աշխատավորը, հայրենիքի պաշտպան զինվորը և ստեղծագործ մտավորականը:

АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН

РЕЗЮМЕ

Историко-сравнительный анализ процессов советизации в России и Армении показывает, что, несмотря на то, что они направлялись одним и тем же центром, у них были заметные отличия. Если советская власть в России была установлена путем вооруженного восстания, в котором главную роль играли выбранные Советы рабочих, солдат и крестьян, то в Армении тот же процесс произошел без восстания, мирным путем: здесь большую роль сыграло поражение Армении в турецко-армянской войне и приглашение частей Красной Армии Ревкомом Армении, который не был выбран народом. Кроме того, если в России большевики, из тактических соображений, в 1917 1918 гг. создавали временные коалиции с левыми эсерами, более лояльно относились к меньшевикам и т.д., то в Армении армянские большевики, опираясь на части Красной Армии, с первых же дней отказались создавать коалицию с какой-либо партией, хотя, по Ереванскому 1921 г. соглашению она предусматривалась, и начали проводить жесткую политику по отношению к другим политическим партиям. Уже в 1920-х гг., на примере Советской России, в Армении были выдворены с политической арены нелегально или полулегально действующие оппозиционные и боле лояльные партии. Таким образом был утвержден однопартийный, авторитарный режим.

После советизации Армении на примере Советской России была сформирована избирательная система советов и в Армении. В 1920-ых гг. в условиях большевистского однопартийного режима выборы советов ни по содержанию, ни по механизмам не соответствовали западноевропейским демократическим избирательным стандартам и критериям.

На основе устава о выборах и по конституции 1922 года в ССРА выборы были: а/ явно классовыми, в которых обеспечивались места

только для находящейся у власти партии большевиков и заслуживающих их доверие людей и социальных групп, б/ выборы были не прямыми, а многоступеньчатыми, в/ выборы были не тайными, а проводились путем открытого голосования, поднятия рук, г/ они были не всеобщими, поскольку отдельные группы и слои общества были лишены избирательного права, д/ в условиях однопартийной системы эти выборы невозможно было причислить ни к партийной, ни к мажоритарной системе выборов.

Данная избирательная система в общих чертах сохранялась до середины 1930-ых гг. К построению основ социализма и принятию конституции 1936 года был устранен институт лишения права голоса и таким образом выборам был дан некоторый демократический оттенок.

Изучение избирательных процессов показывает, что быборы всех ступеней были полностью организованы, контролировались и направлялись со стороны партийно-государственных органов: начиная с составления выборных списков и выборных коомпаний-кончая выборами депутатов и образованием местных и центральных властей. В городских и сельских выборах очень существенным было лишение прав голоса, которым определялся социальный статус данного гражданина. В отдельных случаях население проявляло заинтересованность и активность по отношению к выборам. Обычно избиратели были против того, что голосавание проводилось по составленным списков партийных и советских органов. Вместе этого они требовали индувидуального голосования, даже' закрытого. Однако по уставу выборов последнее не предусмотривалось. Эти процессы продолжались до половины 1930-х гг., до конца всеобщей коллективизации.

В середине 1920-х годов на примере Советского России система однопартийной большевистской номенклатуры сформировалась также и в Советской Армении. Известно, что в советской историографии, по политическим соображениям, о политической номенклатуре

не говорилось, и фактически было запрещено заниматься исследованием данной проблемы.

Возникновение бюрократической номенклатурной системы было обусловлено историко-политическим прошлым России и тоталитарным политическим и экономическим режимом, установленным большевиками. Был разработан единый порядок учета партийных работников и назначения на должность. Для ответственных работников были установлены специальные пайки и льготы. По степени управления все должности были разделены на три класса. Во всей стране существовало минимум четыре уровня номенклатур, каждая состояла из трех классов: 1-ой, 2-ой и 3-ей номенклатуры, т. е. всего существовало 12 классов. Одновременно номенклатуры по сфере своей работы имели отраслевую структуру, число которых в Армении достигало полтора десятка. Для лиц, включенных в номенклатуру, составлялись отдельные анкетные карты. Низшим звеном номенклатуры были уездные, а начиная с 1930 г. – районные номенклатуры. Согласно архивным материалам можно прийти к выводу, что в тот период общее количество работников, занимающих номенклатурные посты в Армянской ССР, составляло около 4200 человек. В дальнейшем эта система расширилась и усовершенствовалась. Она сохранилась до распада СССР и крушения тоталитарного строя советской власти.

После советизации Армении в 1920 г., на примере России, здесь также образовался однопартийный режим. Первый год высшей властью в Армении являлся военнореволюционный комитет (**Армревком**), на замену которого пришли **советы** образовавшиеся путем выборов. Однако в содержании государственной власти существенных изменений не произошло на ветвях законадательной, исполнительной и судебной, не осуществлялись их четкое разъединение и противовесы. Самая большая проблема состоялась в том, что в трех ветвях гос. власти (реальной и фактической) власть монопольно принадлежала коммунистической партии, которая часто вмешивалась или заменяла работы государственных органов. В течение времени

советы практически превращались в придаток партийного аппарата. Таким же образом не может идти слово о независимости судебной власти, которая также находилась под жестким контролем партийних органов. И это положение продолжалось на весь период существования советского государства.

В 1920-х годах общественно-политическая и внутрипартийная жизнь Советской Армении, в отличие от последующих десятилетий, была достаточно насыщена и формировалась из Центра (Москвы).

В условиях политики НЭП-а, сложной внешней и внутренней ситуации в стране, болезни и смерти В. Ленина, нечеткой концепции построения социализма возникли группы, фракции, проводились дискуссии по разным вопросам. Однако, в отличие от России, все это проявлялось в меньшей степени, в основном копируя Центр.

С точки зрения расширения внутрипартийной демократии, дальнейшего развития общественно-политичекой жизни страны, существенным препятствием стала формула, принятая 10-м съездом РК(б)П (март 1921 г.) «О единстве партии», согласно которой запрещались фракции и инакомыслие внутри партии. Но с другой стороны, были разрешены внутрипартийные дискуссии по важным вопросам.

Внутри Коммунистической (большевистской) партии Армении (К(б)ПА), которая имела статус областной организации РК(б)П, внутрипартийную склоку, оппозицию и дискуссии можно разделить на четыре фазы. Первая – в 1921 г., вторая – 1922 г., третья – в 1927 г. и четвертая – в 1930 г. В хронологическом порядке они в основном совпадают с фазами дискуссий групп и уклонов, проходящих на всесоюзном (СССР) уровне, разгромом троцкистко-зиновьевского блока и «правого» уклона. Само собой разумеется, что в советской историко-партийной историографии эти вопросы были обойдены или представлены однобоко, так как было нецелесообразно говорить о подобных «вредных» явлениях, нарушающих единство коммунистической партии.

Первое расхождение – дискуссия возникла в январе-феврале 1921 г., между группами, возглавляемыми председателем Армревкома С. Касяном и секретарем ЦК К(б)ПА Г. Алиханяном по вопросам военного коммунизма и политики в отношении Армянской революционной федерации (Дашнакцутюн). Касяновское крыло было за более мягкую политику, однако потерпело поражение, а С. Касян был снят с должности.

Во второй раз разногласия возникли внутри партии и правительства летом 1922 г. Народный комиссар внутренних дел Авис претендовал на должность Председателя Совнаркома (Совета народных комиссаров). Вместе со своей группой он попытался снять с должности С. Лукашина, однако это ему не удалось и он был послан в Центр – в распоряжение ЦК.

Самые острые дискуссии внутри коммунистической партии Армении имели место в 1927 г. Они были напрямую связаны с процессами разгрома «троцкистско-зиновьевской» группировки (блока), проходящими в России. Известно, что с 1923 г. во всесоюзном масштабе началась борьба между Сталиным и Троцким за управление государством. В то же самое время, в руководящем составе Армении крепкие позиции имели деятели с прошлым, связанным со «специфизмом» – Ал. Мясникян, С. Лукашин, Аш. Иоанисян и др. Однако, в марте 1925 г., после гибели Мясникяна, их положение ослабло. В июне 1925 г. С. Лукашин был освобожден от должности Председателя Совнаркома, а вскоре мишенью нападок стал Первый секретарь ЦК К(б)ПА Аш. Иоанисян. В Армении также пытались «вывести на чистую воду» троцкистов и зиновьевцев, но эта борьба получила национальный оттенок – будто бы ведется борьба с представителями «специфизма», «дашнакцутюна», «меньшевизма» и т.д.

В результате острых внутрипартийных дискуссий, в июле 1927 г. Секретарь ЦК Аш. Иоанисян и его сторонники ушли в отставку. Именно в это время, выступила явно оппозиционная группа, называемая «Тройкой», которая квалифицировалась как троцкистская, и

опубликовала свою декларацию в газете. «Тройка» публично выражала свое несогласие с внутренней и внешней политикой партии. Развернулись широкие дикуссии в городских и провинциальных партийных организациях. Результаты внутрипартийной дискуссии были обобщены на 5-ом съезде К(б)ПА (ноябрь 1927 г.). Квалифицируемые как троцкистские оппозиционные группы, которые подписались под троцкистской, так называемой «Платформой 83-х», существовали в организациях Еревана, Ленинакана, Каракилисы.

Против лидеров оппозиции было заведено специальное дело. Они были освобождены от своих должностей и исключены из рядов партии, а один из них – Г. Фиргулян, в марте 1928 г. был сослан в Ташкент.

Кроме партийных ячеек, оппозиционная деятельность велась также в рядах комсомольцев. Особенно активной была группа, возглавляемая С. Ачояном – так называемое «Молодежное троцкистское объединение» в Ереванской организации.

По официальным данным, в 1927–1928 гг. в партийных организациях республики было «разоблачено» всего 246 оппозиционеров, а в рядах комсомольцев – 85, всего 331 оппозиционер, квалифицированных как троцкисты, дашнаки, националисты и т.п.

И наконец, в конце 1920-х годов, как в Союзе, так и в Армении последней мишенью нападок стал так называемый «правый уклон». После «разгрома» троцкизма, по примеру Центра, оставалось «разгромить» совместный «правый уклон» Бухарина-Рыкова-Томского, который считался оппортунистическим и кулацким.

В 1927–1928 гг. курсу чрезвычайщины И. Сталина воспротивились Н. Бухарин и его сторонники. Последние были против прекращения НЭП-а и насильной коллективизации сельского хозяйства. По этой причине началось их преследование и низложение с должностей.

Естественно, руководство коммунистической партии Армении, повторяя политический курс Центра, должно было начать борьбу с

подобными им. В 1930г. в Армении «разоблачено всего 3 бухаринца». Однако, в действительности они не имели никакого отношения к «правому» уклону, квалифицированному как оппортунистический и кулацкий.

Итак, исследования показывают, что оппозиция и дискуссии в Армении проявлялись в относительно слабой форме, они подражали Центру и копировали его. Однако, факты указывают на то, что и в Армении были последователи Льва Троцкого. Они выступали с декларациями, подписались под «Платформой 83-х», были исключены из партии, сосланы и т.д. Тем не менее, особенностью всего этого является то, что в Армении борьба против троцкизма получила оттенок борьбы против «специфизма», «дашнакства», «меньшевизма» и национализма.

ARARAT MKHITAR HAKOBYAN

SUMMARY

The historical-comparative analysis of the processes of sovietization of Russia and Armenia shows that in spite of being directed by the same center, they had visible differences. If in Russia the establishment of the Soviet power took place with the help of elected Soviets of workers, soldiers and peasants and armed revolt, in Armenia it took place without revolt, peacefully, here a great role played the defeat of Armenians in Turkish-Armenian war and the invitation of the units of the Red Army by the Revolutionary committee of Armenia, not elected by people.

The other peculiarity of sovietization in Armenia is that unlike Russia, where the Bolsheviks set up a temporary coalition (with tactical sense) in 1917–1918, with the left Esers and were more loyal with the Mensheviks, the Armenian Bolsheviks with the support of the units of the Red Army refused to make a coalition from the beginning, with any party, though according to the Yerevan agreement it was foreseen. They began a cruel policy towards other political parties.

In the 1920s according to the example of the Soviet Russia, all the opposing and loyal parties were removed from the political scene in Armenia, and in this way one political authoritarian regime was established.

After the sovietization of Armenia the electorial system of soviets was formed on the example of Russia. In 1920-s, in conditions of one party Bolshevik regime, the elections of the soviets did not correspond to west European democratic electorial standards and criterias.

According to the temporary charter about elections in Soviet Armenia and the constitution of 1922 the elections were a/ underlined with class differenceis, discrimination.

b/ the elections were not direct, they were multistage.

c/ they were not secret, open voting system was used in them.

d/ and finally, in conditions of political monopoly of the communist party, the elections corresponded neither to the proportional nor to the majority system.

This electorial system was kept till in the middle of 1930-s, when the new constitution of the Soviet Union was approved. The Institute of the voiceless was eliminated and the electorial system became a bit more democratic.

The study of electoral procedures, show that the elections at all levels, were organized, directed and supervised by party-state institutions, beginning from preparing the electorate lists and electoral campaign until the election of the delegates and formation of local and central governmental bodies.

In the city and country elections, the deprivation of election right was an essential aspect, which was decided upon also by the social status of the said citizen. In certain cases, the population showed some interest and activity towards the elections. Usually, the voters expressed against electing a whole list of candidates. Instead, they asked to vote for individual candidates, even by close election. However, the latter was not foreseen by election regulations. These procedures continued until mid 1930-s, till the end of the vast collectivization.

In the mid-1920-s, on the example of the Soviet Union's system of one-party Bolshevik nomenclature, the same emerged also in Soviet Armenia. It is known that in Soviet literature, one were not usually speaking about usually political nomenclature for political reasons, it was also prohibited to engage in such matters. The emergence of the bureaucratic nomenclature system is due to historical and political past of the Russia and monopoly political and economic regime established by the Bolsheviks. A unified procedure for registration of party woekers and their appointment was developed. Special rations and privileges were established for responsible workers. By the degree of control all the posts were divided into three classes. Throughout the country there were at least four levels of nomenclatures, each consisting of three classes. Ist, 2nd and

3rd nomenclature i.e. there 12 classes all in all. At the same time the nomenclatures had branch structures, the number of which has reached a dozen in Armenia. For persons included in nomenclatures, some personal cards were drawn up. County, and form 1930 regional nomenclatures became lower-level nomenclatures. According to archival materials it can be concluded that in that period the total number of employees who hold positions in nomenclatures of the Armenian SSR, was about 4,200 people. This system expanded and improved in future. She remained until the collapse of the Soviet Union and communist totalitarianism. In spite of the thoughts and phsicology of nomenclature is still exists.

After the sovietization of Armenia in 1920 a single-party regime was established there alike Russia. During the first year the Military-Revolutionary Committee of Armenia (**Armrevcom**) was the supreme authority of Armenia which was farther replaced with **Soviets** (councils) constituted by elections. However, the content of the state authority was not significantly changed, the powers – legislative, executive, and judicial, were not clearly separated and balanced. The biggest problem was that the full and monopole power in all three wings really and actually belonged to the Communist Party which often interfered in or replace the functions of any state body. With time the Soviets practically turned into attachments to the Party apparatus. It was out of question that judicial power might be independent. It also was under the rigorous control of party bodies and that situation kept lasting during the whole period of existence Soviet State.

Unlike the farther decades in 1920s the social-political and party life in the Soviet Armenia was enough active and was shaped from Center (Moscow).

Several groups, fractions arose under the conditions of NEP (New Economic Policy) and due to difficult situation in and out the country, illness and death of V. Lenin, vague concept for development of socialism, discussions on various issues were conducted. However, unlike

Russia all those processes were manifested in lesser degree mainly copying Center.

The formula adopted by the 10th Congress of Russian Communist (bolshevik) Party (RC(b)P) «About Integrity of the Party» (March of 1921) turned into a significant obstacle to enlargement of the intraparty democracy and farther development of the social-political life of the country. Pursuant to that document fractions and dissidence were prohibited within the Party but on the hand the intraparty discussions on principal issued were allowed.

The intraparty strife, opposition, and discussions within the Communist (bolshevik) Party of Armenia (C(b)PA) which had the status of a regional organization of RC(b)P can be separated in four phases. The first one was in 1921, second one – in 1922, third – in 1927, and the fourth phase took place in 1930. Chronologically they mainly coincide with the phases of discussions and deviations which took place on the All-Union (USSR) level, defeat of the Trotsky-Zinoviev block and «right-wing» deviation. Needless to say that in the Soviet historic-party historiography those questions were left out or presented deficiently as talks about such detrimental phenomena which disturbed the integrity of the communist party was not proper.

The first controversy – discussion arose in January and February 1921, between two groups headed by the Chairman of Armrevcoma (Armenian Revolutionary Committee) S. Kasyan and Secretary of the Central Committee of C(b)PA G. Alikhanyan regarding military communism and policies towards the Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun). Kasyan's wing was for a milder policy but was defeated and S. Kasyan was dismissed.

Second stifle arose within the Party and Government in summer of 1922. The People's Commissar of Internal Affairs Avis claimed the post of Chairman of the CPC (Council of People's Commissars). Together with his group he tried to dismiss S. Lukashin but he did not succeed and was sent to the Centre – at the disposal of the Central Committee.

The most heated debates within the Communist Party of Armenia took place in 1927. They were directly connected with the processes of defeat of «Trotsky-Zinoviev» group (block) held in Russia. It is known that since 1923 an All-Union struggle arose between Stalin and Trotsky for control over the highest helm. At the same time, figures whose past related to «spetsifizm» occupied strong position in the management of Armenia, e.g. Al. Myasnikyan, S. Lukashin, Ash. Hovhannisyan and others. However, in March 1925, after the death of Myasnikyan their position was weakened. In June, 1925 S. Lukashin was dismissed from the post of Chairman of the CPC and soon the first secretary of the C(b)PA Ash. Hovhannisyan became the target of attacks. In Armenia too they tried «to dig out» supporters of Trotsky and Zinoviev but this fight had received national color – allegedly is struggle against the representatives of «spetsifizm», «Dashnaktsutyun», «Mensheviks», etc.

As a result of pointed intraparty debates in July 1927 the Secretary of the Central Committee Ash. Hovhannisyan and his supporters resigned. Just at that time an evidently opposition group called «Troyka» which was classified as a Trotskyist one took the stage and published its declaration in a newspaper. «Troyka» publicly expressed his disagreement with the domestic and foreign policy of the Party. Broad discussions launched in urban and provincial party organizations. The results of intraparty discussions were summarized at the 5th Congress of the C(b)PA (November 1927). Opposition groups which were qualified as Trotskyist, who signed the Trotskyist so-called «Platform of 83» existed in the organizations of Yerevan, Leninakan, Gharakilisa.

A special case was brought against the opposition leaders. They were dismissed and expelled from the party. One of them, G. Firgulyan, in March 1928 was exiled to Tashkent.

In addition to the party nuclea the opposition activities were carried out among Young Communists. An especially active group, so-called «Trotskyist Youth Association» in Yerevan organization was led by S. Achoyan.

According to official data, in 1927-1928 246 opposition members were «exposed» in Party organizations of the Republic and 85 in among the Young Communists, in total 331 opposition members qualified as Trotskyist, Dashnak, nationalist, etc.

Finally, in the late 1920s, the so-called «Right-wing Deviation» become the latest target of attacks both the Soviet Union and Armenia. After the «defeat» of Trotskyism, the joint Bukharin-Rykov-Tomsky «Right-wing Deviation» which was considered as opportunistic and expressing interests of kulaks (prosperous farmers) remained to be destroyed following the example of the Center.

In 1927–1928 N. Bukharin and his supporters stood up against the Stalin course of overall emergency. They were against the termination of NEP and forced collectivization of agriculture. For that reason, they were subjected persecutions and displacements.

Naturally, the leadership of the Communist Party of Armenia had to start a struggle with alike persons following the policies of the Centre. In 1930 Armenia «exposed only 3 supporters of Bukharin». However, in reality they had no relation to the «Right-wing deviation» qualified as an opportunistic and kulak.

Thus, researches show that the opposition and discussions were manifested in Armenia in a relatively weak form, they imitated and copied the Centre. However, actually there were followers of Leon Trotsky in Armenia. They made statements, signed the «Platform of 83», were expelled from the Party, exiled, etc. Nevertheless, the struggle against Trotskyism obtained in Armenia shade of struggle against «spetsifizm», «dashnaktsutyun», «menshevism» and nationalism as its special feature.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

1.1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ),

Ֆ. 1, ց. 1, գ. 20, գ. 39, գ. 43, գ. 48, գ. 58, գ. 85, գ. 122, գ 123. ց. 2, գ. 1, գ. 2 գ. 5, գ. 26, գ. 35, գ. 40, գ. 49, գ. 60, գ. 75. գ. 139, ց. 3, գ. 1, գ. 7, գ 18, գ. 27, գ. 50, գ. 115, գ. 116, ց. 4, գ. 1, գ. 17, գ. 50, ց. 5, գ. 1, գ. 6, գ 37, գ 53, գ. 58, ց. 6, գ. 11, գ. 17, գ. 47, գ. 60, գ. 82. գ. 84. գ. 169, գ. 171, գ. 172, գ 298, գ. 474, ց. 7, գ. 1, գ. 4. գ. 5. գ. 16. գ. 27. գ 77. գ. 79. գ 81. գ. 85, գ. 90, գ. 103. գ. 108. գ. 110, գ. 113, գ. 167, գ. 176, գ. 177, ց. 8. գ. 3. գ. 6. գ 15. գ 20, գ. 65. գ. 66, գ. 69, գ. 100, ց. 9, գ. 39, գ. 163. ց. 10, գ. 1, գ. 3. գ 12. գ 28. գ. 84. գ. 128, գ. 133, գ. 143:

Ֆ. 91, ց. 1. գ. 815, ց. 2, գ. 5, գ. 6, գ. 115, ց. 3. գ 4716, ց 5. գ 10. գ 15 գ. 29. գ. 40. գ. 44, գ. 46, գ. 67, գ 73. ց. 9. գ 54

Ֆ 102, ց. 1. գ. 9.

Ֆ. 103, ց. 1. գ. 34:

Ֆ. 112. ց. 1, գ. 1, գ. 15, գ. 41, գ. 49. գ. 51, գ. 104. գ. 182, գ. 187. գ. 190. գ 1746. գ. 2318. ց. 2, գ. 74, գ. 85. գ. 90. գ. 133, գ. 134. գ 188. ց. 3, գ. 8. գ 16 ց 6. գ. 2, գ 9 37. 43. 72. 91. 114. 168. 207. 251. 268. ց. 8. գ 7 ց. 8c, գ. 7. գ 213.

Ֆ 113. ց 1. գ 1ա. ց 3. գ. 1. գ. 5. գ 128. գ. 114. գ 144. գ 145. գ. 405. գ 598. գ. 602. գ 842. գ. 856. ց. 5. գ 1. գ. 2, գ. 5. ց 39. գ. 136:

Ֆ 114. ց. 1. գ. 67. ց. 2. գ 17. ց. 2c, գ. 18

Ֆ 116. ց 1. գ. 4. գ. 5. գ 26. գ 310. ց. 3. գ 7. գ 44. գ 60. գ 62. ց 4 գ 4

Ֆ 121. ց. 1. գ. 11:

Ֆ 143. ց. 3. գ 31:

Ֆ 199. ց. 1. գ. 14:

Ֆ. 200. ց. 1. գ. 560. ց. 2. գ. 101

Ֆ 488. ց. 1. գ 10. գ. 25:

Ֆ. 1022. ց. 2, գ. 1417. ց. 5, գ. 326

Ֆ 1456. ց 1. գ. 244. գ. 245·

Ֆ 1457. ց. 1. գ. 237

Ֆ. 4050, ց 1, գ 6:

1.2. Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ (ՌՍՔՊՊԱ),

Ֆ. 85, ց. 14, գ. 22, գ. 30, գ. 33, գ. 34, գ. 115, գ. 117, գ. 118:

2 Գրականություն

ա) հայերեն

2.1. Աբրահամյան Հ., Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցության ՀՀ-ում՝ որպես ժողովրդավարության կարևոր գործոն (1991-2012), Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես), Ե., 2013:

2.2. Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Ե., 1966:

2.3. Աղայան Է. Ռ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ղ–ֆ, Ե., 1976:

2.4. Ամիրխանյան Շ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920 թ.), Մ., 1926:

2.5. Բենկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Ե., 1981:

2.6. Գնոցեն Ա. Ի., Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. 2, Ե., 1950:

2.7. Գումենին Գ., Տրոցկիզմից դեպի մենշևիզմ, Ե., 1928:

2.8. Դաղբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947:

2.9. Դեկրետների և որոշումների հավաքածու (Քաղաքացիական օրենսգիրք), Ե., 1923:

2.10. Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922 թթ., Ե., 1967:

2.11. Ժամհարյան Գ., Առօրեականության պատմության բովանդակությունն ու խնդիրները, Հայոց պատմության հարցեր, (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2012:

2.12. Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 33, Ե., 1980:

2.13. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 34, Ե., 1981:

2.14. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 35, Ե., 1981:

2.15. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 39, Ե., 1982:

2.16. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 41, Ե., 1982:

2.17. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 43, Ե., 1982:

2.18. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 44, Ե., 1982:

2.19. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Ե., 2007:

2.20. Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Ե., 1935:

2.21. **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թ., Ե., 2002:
2.22. **Կոսյան Ս.**, Սպենցիֆիկները և սպենցիֆիզմը, Թիֆլիս, 1928:
2.23. **Կարապետյան Հ. Ն.**, Մեծ պայքարի մարդիկ, գիրք 1-ին, Ե., 1963:
2.24. **Կիտուր Ա.**, Պատմություն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան (1887–1962), հատ Ա, Պէյրութ, 1962:
2.25. Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ. և կազմող Ղազախեցյան Վ. Ն., Ե., 1999:
2.26. **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010:
2.27. **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ., Ե., 2005:
2.28. **Հակոբյան Ա., Սարգսյան Ա.**, Հայոց պատմություն, Ե., 2010:
2.29. **Հակոբյան Վ.**, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, Ե., 2015:
2.30. Հայ ժողովրդի պատմություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967:
2.31. Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008:
2.32. Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967:
2.33. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Ե., 1998:
2.34. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ե., 2005:
2.35. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., (քաղաքական պատմություն), Ե., 2000:
2.36. Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920–1922 թթ.) Ե., 1987:
2.37. Հայկ. ՍՍՌ օրենքների ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1938 թ. դեկտեմբեր), Ե., 1963:
2.38. Հայկ. ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկ. ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու (1920- 1938 թթ.), Ե., 1963:
2.39. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Ե., 1983:
2.40. Հայոց պատմություն (նախագահ Բարխուդարյան Վ.), հ. 4, գիրք 1-ին, Ե., 2010:
2.41. Հայոց պատմություն. 1900–1939, նյութերի ժողովածու (Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Սահակյան Ռ., Գասպարյան Ռ.), Ե., 1993:
2.42. **Հայրապետյան Ա.**, Լատիներեն-հայերեն բացատրական բառարան, Ե., 2005:
2.43. **Հարությունյան Հ. Մ.**, Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Ե., 2015:

2.44. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Ե., 1974:
2.45 ՀՅԴ կազմակերպական կանոններ, Ե., 1919:
2.46. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանությունն հայրենանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960:
2.47 **Հովհաննիսյան Ա. Գ.**, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1923:
2.48. **Հովհաննիսյան Ա.**, Երկու բնութագիր (Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի), Ե., 1927:
2.49. ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921:
2.50 ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920-1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923.
2.51 ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարը (արձանագրությունը), Ե., 1922:
2.52. ՀՍԽՀ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Ե., 1922:
2.53 **Ղազախնցյան Վ. Ն.** Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:
2.54 **Ղազախնցյան Վ. Ն.**, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմություն 1920–1929 թթ., Ե., 1975:
2.55 **Մանուկյան Ա. Ա.**, Քաղաքական կուսակցությունների լուծարումը խորհրդային Հայաստանում 1920-ական թթ. (ատենախոսության սեղմագիր), Ե., 2012:
2.56. **Մանուկյան Ա. Ս.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում (1920-1953 թթ.), Ե., 1999:
2.57 **Մանուկյան Ա. Ս.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Ե., 2002:
2.58. **Մարքս Կ., Էնգելս Ֆ., Լենին Վ.**, Պրոլետարիատի դիկտատուրայի մասին, Ե., 1981:
2.59. Մեծ Հոկտեմբերի ուղիով (հոդվածների ժողովածու), Ե., 1977:
2.60 **Յակոբեան Ա.**, Համառոտ պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977:
2.61 **Նազարյան Վ. Ռ.**, Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922 թթ.), Ե., 1974:
2.62. **Ներկարարյան Վ. Ն.**, Հայաստանի կոմունիստական պարտիայի 3-րդ համագումարը (1924 թ. մայիս), Ե., 1958:
2.63 **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Ե., 2002:
2.64 **Նժդեհ Գ.**, Հատընտիր, Ե., 2006:
2.65 **Շանթ Լ.**, Մեր անկախությունը, Ե., 2011:

2.66. **Ոսկերչյան Ա.**, Հայ մարքսիստական ընկալության հիմնախնդիրները. Ե., 1962:
2.67. **Զարենց Եղիշե**, Երկերի ժողովածու, հ. 1, 2, Մոսկվա, 1922:
2.68. **Զուբար Յև.**, Դաշնակցությունը երրորդ շրջանում, Ե., 1930:
2.69. **Պետրոսյան Ե. Ն.**, Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Ե., 1961:
2.70. Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902–1921 թթ.), Ե., 1960:
2.71. **Սահակյան Ս. Մ.**, Ռազմա-հեղափոխական կոմիտեները Հայաստանում (1917–1922 թթ.), Ե., 1961:
2.72. **Սարգսյան Կ.**, Պատմություն և իրականություն, Ե., 1991:
2.73. **Սիմոնյան Հ. Ռ.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996:
2.74. **Սիմոնյան Հ. Ռ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:
2.75. ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, (1917–1922 թթ.), հ. 2, Ե., 1986, հ. 3, (1922 1925 թթ.), Ե., 1987:
2.76. ՍՄԿԿ պատմություն, 5-րդ հրատ., Ե., 1981:
2.77. ՍՄԿԿ տեղեկագիրք, Ե., 1984:
2.78. **Սուքիասյան Հ.**, ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գործունեությունը 1920–1922 թթ., (ատենախոսություն), Ե., 2009:
2.79. **Ստալին Ի.**, Համառոտ կենսագրություն, Ե., 1949:
2.80. **Ստեփանյանց Ս.**, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994:
2.81. **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. հ. Ե, Բէյրութ, 1966:
2.82. **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993:
2.83. **Տասնապետեան Հ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890–1924), Աթէնք, 1988:
2.84. Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան, Ե., 2003:
2.85. **Օրջոնիկիձե Գ. Կ.**, Ընտիր հոդվածներ և ճառեր (1918–1937 թթ.), Ե., 1950:
2.86. **Ֆելիքյան Հ. Հ.**, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Ե., 1970:

բ) ռուսերեն

2.87. «Большевистское руководства. Переписка (1912-1927)», сборник документов, М., 1996.

2.88. «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 1-8, М., 2001-2004.
2.89. «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 1, часть I, М., 2001.
2.90. «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 2, часть I, М., 2001.
2.91. «Сталинское Политбюро в 30-е годы», М., 1995.
2.92. Арутюнов А., Досье Ленина без ретуши. Документы. Факты. Свидетельства, М., 1999.
2.93. Бегунов Юрий, Тайная история масонства, М., 2007.
2.94. Белади Ласло, Краус Томаш, Сталин, Л., 1990.
2.95. Бердяев Н. А., Истоки и смысл русского коммунизма, М., 1990.
2.96. Бердяев Н., Судьба России, М., 1990.
2.97. Большая Советская энциклопедия, 3-я изд., т. 18, М., 1974.
2.98. Большая Советская энциклопедия, т. 7, М., 1972.
2.99. Большевистское руководство. переписка (1912–1927), сборн. док., М., 1996.
2.100. Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929.
2.101. Бухарин Н. И., Путь к социализму и рабоче-крестьянский союз, М.-Л., 1925.
2.102. Верт Никола, История Советского государства 1900–1991, М., 1992.
2.103. Восленский М. С., Номенклатура. Господствующий класс Советского Союза, Бонн, 1980, М., 1991.
2.104. Геноцид армян (док. и ком.), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005.
2.105. Гимпельсон Е. Г., Из истории строительства Советов (ноябрь 1917 г. – июль 1918 г.), М., 1958.
2.106. Гимпельсон Е. Г., НЭП и советская политическая система, М., 2000.
2.107. Гимпельсон Е. Г., Советский рабочий класс 1918–1920 гг., М., 1974.
2.108. Дворецкий И. Х., Латинско-русский словарь, М., 1976.
2.109. Декреты Советской власти, т. 1, М., 1957.
2.110. Декреты Советской власти, т. 2, М., 1959.
2.111. Ивницкий Н. А., Коллективизация и раскулачивание в начале 30-х годов. По материалам Политбюро ЦК ВКП(б) и ОГПУ, М., 1996.
2.112. Ирошников М. А., Создание советского центрального государственного аппарата. (октябрь 1917 г. – январь 1918 г.), М., 1966.
2.113. История Коммунистической партии Советского Союза, отв. ред. Безбородов А. Б., М., 2014.
2.114 История КПСС, т. 4, кн. 1 (1921–1929 гг.), М., 1970.

2.115. История Отечество. Краткий очерк, вып. 2, М., 1992.
2.116. История России XX век (1894–1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009.
2.117. **Калинин Г. С.**, Великая Октябрьская социалистическая революция и создание Советского государства, М., 1959.
2.118. Коммунистическая партия Армении в цифрах и документах, 1920–1980, Е., 1980.
2.119. **Латышев А. Г.**, Рассекреченный Ленин, М., 1996.
2.120. **Морозов Б. М.**, Создание и укрепление советского государственного аппарата (ноябрь 1917 г. – март 1919 г.), М., 1957.
2.121. Непролетарские партии России. Урок истории, под ред. И. Минца, М., 1984.
2.122. **Нефедов В. Н.**, Номенклатура империи: исследования кризиса, Нижний Новгород, 1994.
2.123. **Николаевский Б. И.**, Тайные страницы истории, М., 1995.
2.124. **Олех Г. Л.**, Партийная машина РКП(б) в начале 20-х годов, Новосибирск, 1995.
2.125. **Орджоникидзе Г. К.**, Избранные стати и речи, М., 1939.
2.126. **Орлов А. С.** и др., История России, М., 2000.
2.127. **Орлов А. С.** и др., Хрестоматия по истории России, М., 2009.
2.128. **Павлов Д. Б.**, Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 – середина 1950-х гг., М., 1999.
2.129. **Павлова И. В.**, Сталинизм, Новосибирск, 1994.
2.130. Победа Великой Октябрьской социалистической революции, сборник документов, М., 1957.
2.131. Политбюро ЦК РКП(б) – ВКП(б) и Европа. Решения «Особой папки», 1923–1939, М., 2001.
2.132. Политическая история Российского государства, под ред. Ш. М. Мунчаева, М., 1998.
2.133. Политические партии России. История и современность, под ред. проф. Завелева А. И. и др., М., 2000.
2.134. Протоколы центрального комитета РСДРП/б/. август 1917 – февраль 1918, М., 1958.
2.135. Советская историческая энциклопедия, т. 4, М., 1963.
2.136. **Старцев В. И.**, Немецкие деньги и русская революция, СПБ., 2006.
2.137. Страницы истории КПСС. Факты, Проблемы, Уроки, под ред. проф. Купцова В. И., М., 1988.
2.138. **Трукан Г. А.**, Путь к тоталитаризму, М., 1994.

2.139 Туфанов Е. В., Формирование советской политической системы в 1917-1920 гг., (диссертация к.и.н., автореферат), Рязан, 2013.

2.140. Хармандарян С. В., Армянская ССР в первый год Новой экономической политики (1921 1922), Е., 1955.

2.141. Хармандарян С. В., Ленин и становление Закавказской федерации 1921-1923, Е., 1969.

2.142 Четвертый (Объединительный) съезд Р.С. – Д. Р. П., М., 1934.

2.143. Щетинов Ю. А., История России XX век, М., 1999.

2.144 Эльчибекян А. М., От ревкомов к советам (создание советов в Армении), Ер., 1976.

3 Հոդվածներ

ա) հայերեն

3.1 Հակոբյան Ա., Սոցիալիզմի լենինյան կոնցեպցիան. «Լենինյան ուղիով», Ե., 1990, N 3:

3.2. Ղազախնցյան Վ. Ն., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, (Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), Ե., 2011, թիվ 1):

3.3 Սատունի Կ., Փետրվարյան ապստամբությունը, «Հայրենիք»,Պոսթրն, 1925, թիվ 12 (հոկտեմբեր):

3.4 Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, տես Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2009, թիվ 1:

բ) ռուսերեն

3.5. Гимпельсон Е. Г., Политическая система и НЭП: неадекватность реформ, «Отечественная история», РАН, М., 1992, N 2.

3.6 Гимпельсон Е. Г., Путь к однопартийной диктатуре, «Отечественная история», РАН, М., 1994, N 4-5.

3.7 Земцов Б. Н., Конституционные основы большевистской власти (первая советская Коституция 1918 г), (см. «Отечественная история», М., 2006, N 5).

3.8. Медушевский А. Н., Причины крушения демократической республики в России 1917 года, «Отечественная история», М., 2007, N 6.

3.9 Павлов Б. В., Становление контроля партийной номенклатуры над правоохранительной системой в 1921-1925 годах, «Вопросы истории», М., 2004, N 1.

3.10 Гимпельсон Е. Г., Путь к однопартийной диктатуре, «Отечественная история», РАН, М., 1994, N 4-5.

4. Պարբերական մամուլ

ա) հայերեն

4.1. «Բանբեր Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Ե., 2006, 2013:
4.2. «Դրոշակ», Պարիզ, 1929, 1930:
4.3. «Ժողովուրդ», Երևան, 1920:
4.4. «Լուսա», Երևան, 1918:
4.5. «Լուրիրդային Հայաստան», 1921, 1922, 1923, 1925, 1926, 1928, 1927, 1930:
4.6. «Հայաստանի աշխատավոր», Ե., 1919:
4.7. «Հայարտուն», Բաւզու, 1925:
4.8. «Հայրենիք», Պոսթըն, 1925:
4.9. «Նոր Աշխարհ», Թիֆլիս, 1922:
4.10. «Նորք», Երևան, 1927, գիրք 1:
4.11. «ՎԷՄ», Ե., 2010:

բ) ռուսերեն

4.12. «Вопросы истории», М., 2004.
4.13. «Отечественная история», М., 1992, 1994, 2006, 2007, 2008.
4.14. «Правда», М., 1989.

5. Համացանցի նյութեր

5.1. www.dissercat.com/content/modernizatsionnye-protsessy-y-rossit-sotsiokulturnyeaspekty
5.2. Авторханов А. Г., Происхождение партократии, т. 1, Франкфурт-на-Майне, 1973 (Constitutions.ru /archives/ N 4571.
5.3. Восленский М. С., Номенклатура. Господствующий класс Советского Союза, М., 1991. // www.lib.ru /Politolog/ Woslenski J. txt. p. 12.
5.4. Восленский М. С., Номенклатура. Господствующий класс Советского Союза, М., 1991. // www.lib.ru /Politolog /, Woslensi J. txt, p. 10.
5.5. Хоцей А. С., Теория общества, т. III /2. http//www.materialist.ksn.ru/kniga 10/s 73. php3.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբեղյան, 310
Ազատյան Հայկ, 190, 298, 304
Ալիխանյան Գևորգ, 189 190, 197, 211, 262, 287 289
Ալտուրով, 273
Ադայան Էդ., 174
Ադասի, 190
Ամատունի, տե՛ս Վարդապետյան Ա.,
Ամիրխանյան Շավարշ Մեհրաբի, 237, 238, 290, 306, 314 325
Այվազյան Նիկ., 287
Անանյան Ա., 301
Անանուն Դ., 301, 302
Անդրեև Ա., 217
Աշրաֆյան Ջ., 273, 274
Աչոյան Ս., 321, 322
Ավիս, տե՛ս Նուրիջանյան Ավետիս
Ավտորխանով Ա., 32, 175
Արեշյան Գայանե (Ժենյա), 238, 306, 307 311, 315, 316, 317
Աքսելրոդ Պ., 84,

Բալյան Վահան, 38,
Բակունց Ակսել, 163, 301,
Բակունց Երեմիա, 157, 226, 235, 300, 301, 305, 306
Բաղդասարյան Ս., 144
Բաղդասարյան, 273, 274
Բաղդասարյան Ս., 65, 259
Բանանցյան Իվան (Հովհ.), 142, 304,
Բեգունով Յու., 21,
Բեկզադյան Ա., 51, 65, 74, 195, 255, 257, 287
Բերդյաև Նիկոլայ, 16, 24, 25, 28, 181, 334
Բերիա Լ., 185, 324
Բիրյուկով, 168,
Բոբրիշչև-Պուշկին Ա., 96,
Բոնչ-Բրուևիչ Վ., 183,
Բորյան Բ., 42, 290
Բուբնով Ա., 36, 320
Բուխարին Ն.Ի., 18, 72, 126, 182, 326, 328, 329, 332

Գաբլոյան Ար., 317
Գալիկյան Հ., 273, 274
Գավրով Սերգեյ, 20
Գեղամյան Գ., 290
Գերցեն Ա., 15, 22
Գյուլիքևխյան Հ., 191, 324
Գորբունով Ն., 183
Գուլոյան Աբրահամ, 331
Գումեդին (Մելիք-Դադայան) Գուրգեն, 310, 322
Գրիգորյան Հ., 151
Գրիգորյան, 242

Դան Ֆ., 84

Դաշտոյան Ռոբեն, 171, 249, 298, 304
Դենիկին Անտոն, 95, 98
Դգնունի Դանիել, 87, 192,
Դավլաթյան Ի., 65, 257, 287, 289
Դումբաձե Լադո, 297
Դուրգարյան Հովհ. (Օնիկ), 324.
Դրո, 39, 51, 56, 74, 80, 81, 255, 289

Եղիազարյան Արտավազդ (Արտո), 330
Եղիազարյան Եղ., 50
Ենուկիձե Ա., 137
Եսայան Ա., 190, 191
Եսայան Ա., 274
Եսայան Ա., 299, 300
Եսայան Աղասի, 254, 257
Եսայան Արսեն, 303, 304, 330
Եսայան Գաբրիել, 315, 317
Եսայան Զապել, 301
Եվդոկիմով, 314
Երզնկյան Արամայիս, 65, 301
Երզնկյան Սուրեն, 299, 301, 302, 303

Զադորկին, 162
Զավարյան Նուշիկ, 81
Զաքարյան Հովհ., 141
Զինովև Գ. Ե., 30, 34, 70, 182, 283, 298, 311, 312, 314, 315

Էլչիբեկյան Հ., 67
Էնգելս Ֆ., 23

Թովմասյան Գ., 190
Թորոսյան Սահակ, 97
Թոփչյան Ստ., 330

Ժդանով Ա., 185,

Իշխանյան Բ., 302,
Իոֆֆե Ա., 118, 185,
Իսահակյան Ավ., 300,

Լազիմիր Պ., 71,
Լազյան Հ., 293,
Լալայան, 190,
Լերեդև-Պոլյանսկի Պ., 89,
Լեգրան Բ., 39, 50, 53, 56, 74, 75, 77, 81, 255,
Լենին Վ. Ի., տես Ուլյանով Վլադիմիր
Լուկաշին (Սրապիոնյան) Սարգիս, 31, 90, 143, 183, 190, 262-264, 290-295, 297, 298
Լունաչարսկի Ա., 30, 42

Խալիլ փաշա, 59
Խանդամիրյան Աբրահամ, 40, 255, 259, 274
Խանզադյան Ց., 301
Խանդյան Սարգիս, 158
Խանդյան Սերգո, 322

Խանջյան Ադասի, 171, 217, 325, 332
Խաչին Ա., 190, 200
Խարմանդարյան Վ., 274
Խուշոյան Մ., 301
Խուրշուդյան Լ., 59

Կազանովիչ Լ., 126, 149, 150, 185, 221
Կալինին Մ. Ի., 137, 182
Կամենև Լ.Բ., 69, 70, 283, 312, 314
Կամկով Բ., 71,
Կասյան Ս., 39, 51, 53, 63, 64, 65, 74, 257, 258, 287, 290, 293, 299, 304, 312, 325, 332
Կարաբեքիր Ռ., 55
Կարկին Վ., 71
Կարինյան Արտաշես, 190, 292, 295, 298, 299, 301, 325,
Կարոյան Հ., 303
Կերենսկի, 70
Կիրով Ս., 59, 185, 332
Կյուչնիկով Յու., 96
Կոզլով Ն., 225
Կոյոնտայ Ա., 35
Կոչակ Ա., 95
Կոնդրատև Ն., 328
Կոստանյան Հայկազ, 65, 287, 289, 291, 293, 325
Կույբիշև Վ., 183, 185
Կուրդինյան Նարիման, 142, 240, 318
Կուրսկ Դմ., 205
Կոմիենկո Ն., 205
Կրասնով Պյոտր, 70
Կրեստինսկի Ն. Բ., 182, 183, 184
Կրուպսկայա Ն., 283

Հախումյան Գևորգ, 203, 204
Հակոբյան Վ., 295
Համբարձումյան Սարգիս (Սաքո), 127, 203, 226, 297, 306, 325
Հանեսաջանյան Գևորգ, 142, 154, 155, 241, 323
Հմայակ, 169
Հովհաննիսյան Աշոտ, 65, 86, 87, 90, 145, 150, 190, 192, 203, 216, 220, 225, 263, 274, 294-296, 298-307, 312
Հովհաննիսյան, 318
Հովսեփյան Խ., 278
Հովսեփյան Հայկ, 191, 304, 310, 324
Հովսեփյան Յու., 290
Հովսոյան Արշ., 144

Ղազախսեցյան Վյ., 41, 48, 291, 256
Ղազարյան Արշակ, 97
Ղազարյան Լ., 264
Ղազարյան Պ., 296
Ղազարյան Պատվական, 296, 306, 310, 315, 317

Ղազարյան Միսակ, 169
Ղազարյան, 310
Ղարաբեկյան Սիք., 115, 195
Ղարիբջանյան Գ., 247

Մալենկով Գեորգի, 185, 250
Մակինցյան Պ., 295
Մամդալյան Թադևոս, 330
Մանուկյան Ա., 321
Մանուկյան Արամ, 189
Մանուչարյան, 318
Մարգարյան Ս., 325
Մարտիկյան Ս., 293, 304
Մարտով Յու., 76, 84
Մարտունի (Մյասնիկյան) Ա., 38, 66, 86, 111, 115, 143, 197, 210, 262, 264, 272, 290-295, 297, 302
Մարքս Կ., 23, 28, 165,
Մդիվանի Բ., 50, 55, 297
Մեռուշևսկի Անդրեյ, 14
Մելիք Եր., 191
Մելիքյան Արշավիր, 47
Մելիքյան Ռ., 88, 89
Մելիք-Օսիպով Սերգեյ (Սարգիս), 314, 325
Մեհրաբյան Գրիգոր, 203, 216
Միլեր Եվգ., 95
Միլյուտին Վ., 70
Միկոյան Ա., 185, 291, 292, 294
Միրզոյան, 225, 235
Մկրտչյան Հ., 88
Մկրտչյան Պապիկ Գրիգորի, 244
Մկրտչյան Ռ., 324
Մոլոտով Վ., 126, 183, 185, 205, 221, 328
Մուրադյան, 202
Մռավյան Ա., 74, 183, 190, 257, 287, 288, 290

Յարոշենկո Լ., 328
Յարոսլավսկի Ե., 317
Յուդենիչ Ն., 95

Նազարեթյան Հմայակ, 292, 299
Նազարյան Ս., 296
Նազարյան Սեթ, 315, 296
Նազարյան Վ., 62, 63, 64, 142
Նարիմանով, 52
Ներկարարյան Վ., 296
Ներսիսյան Արշակ, 51
Ներսիսյան Ս., 143
Նժդեհ Գ. 5, 77
Նիկոլաևսկի Բորիս, 205, 206
Նիկոլայ 1-ին, 13
Նոգին Վ., 70
Նուրիջանյան Ավետիս, 39, 65, 74, 111, 115, 257, 287, 289, 291-293

Շադունց Ս., 293
Շահգելդյան Արամ, 191, 242, 274, 306

Շահմուրադյան Աշոտ, 142
Շահումյան Ստ., 295, 300, 301
Շահուտվարյան Ալեքսանդր, 216, 226, 274, 300, 301, 306
Շահվերդյան Ալ., 158
Շահվերդյան Դ., 277, 293
Շանթ Լ., 19
Շլյապնիկով Ա., 35
Շուտով, 168

Ոսկանյան Ի., 65
Ոսկերչյան Արտաշես, 88,

Չայանով Ա., 328
Չայկովսկի Ն., 95
Չան-Կայ շի, 326
Չարենց Եղիշե, 18, 89, 90, 163, 202, 305
Չկինչև Ա., 328
Չիչերին, 52
Չուբար Եղիա, 86, 331

Պարզյան Գագիկ, 202, 259
Պետրոս Մեծ (1-ին), 20, 212
Պետրոսյան Շ., 63, 64
Պետրոսյան Ս., 200, 262
Պելեսանով Գ. Վ., 14, 47
Պյատակով, 328
Պոլյանսկի, 190
Պոտրեսով Ա., 84
Պռոշյան Պռոշ, 71

Ռասկովսկի Ֆ., 185
Ռիկով Ա., 70, 208, 326, 328, 332
Ռյազանով Դ., 35
Ռոժկով Յու., 303
Ռուբենի (Ծատուրյան) Ալ., 301, 302

Սահակյան Համո, 314
Սամուելյան Խ., 273
Սապրոնով Տ., 36, 320
Սարատիկյան Հովսեփ, 238
Սարգսյան Մինաս, 300
Սարդարյան Կ., 59, 290
Սաֆրազբեկյան Ռուբեն, 261, 306, 307, 315, 316, 317
Սեպուհ, տե՛ս Ներսիսյան Արշակ
Սիմոնյան Հր., 79
Սլկունի Միրուշ, 200
Սոկոլնիկով Գ., 69, 283
Սպանդարյան Ս., 300, 301
Սպինոզա Բ., 254
Սպիրիդոնովա Մ., 71
Ստալին Ի., 9, 18, 19, 21, 22, 30, 31, 36, 52, 53, 95, 125, 176, 182-186, 188, 197, 205, 221, 265, 282, 283, 285, 291, 311, 313, 314, 317, 326, 329, 331, 333, 335
Ստեփանյան Ներսիկի, 81

Վայդեմայեր Ի., 23
Վանանդեցի Գ., 313

Վարդանյան Ա., 200
Վարդանյան Ե., 323
Վարդանյան Ի., 277
Վարդանյան Լ., 276
Վարդապետյան Ա., 325, 332
Վարդապետյան Լ., 275
Վոսլենսկի Միխայիլ, 176, 177
Վորոշիլով Կ., 185,
Վրանգել Պյոտր, 95-97
Վրացյան Ս., 39, 58, 75, 289

Տատյան Հայրապետ, 127, 203, 238
Տեր-Գաբրիելյան Սահակ, 40, 51, 74, 287, 325
Տեր-Գրիգորյան Վ., 89, 90
Տեր-Հակոբյան Ա., 274
Տեր-Ռուբինյան Գ., 86
Տերտերյան Հ., 39, 74
Տոմսկի Մ., 35, 221, 326, 328, 329, 332
Տրիֆոնով Վ., 55
Տրոցկի Լ., 282, 283, 298
Տրոցկի Լև, 18, 22, 29, 30, 31, 52, 54, 60, 69, 70, 72, 143, 182, 184, 198, 297, 311-315, 317, 318, 320, 321, 333

Ցինցադզե Կոտե, 297

Ուլյանով Վլադիմիր, 16, 18, 19, 22, 24-28, 31-35, 41, 51-54, 57, 61, 62, 69-71, 76, 93, 95, 109, 118, 121, 122, 143, 159, 165, 181-185, 194, 202, 213, 282, 283, 285, 313, 315, 328, 329
Ուստրյալով Ն., 96
Ուվարով Սերգեյ, 13

Փիրգուլյան Գևորգ (Գեորգի), 306, 307, 315-317

Քալաշյան Գ., 313
Քաջազնունի Հովհաննես, 97
Քեթիկյան, 330

Օկուջավա Միխայիլ, 297
Օհանյան, 160
Օհանջանյան Բ., 191
Օհանջանյան Հ., 50, 81
Օսինսկի Ն., 36, 320
Օրախելաշվիլի Մ., 289, 292, 303, 306, 310, 311
Օրջոնիկիձե Գ., 52, 53, 54, 55, 62, 75, 77, 185, 289, 291, 292

Ֆելերյան Հ., 86

Авис, 340
Алиханян Г., 340
Ачоян С., 341

Бухарин Н., 341

Иоанисян Аш., 340

Касян С., 340,

Ленин В., 339,
Лукашин С., 340

Мясникян Ал., 340

Рыков, 341

Сталин И., 340, 341

Томски, 341
Троцки Лев, 340, 342

Фиргулян Г., 341

Achoyan S., 347
Alikhanyan G., 346
Avis, 346

Firgulyan G., 347

Hovhannisyan Ash., 347

Kasyan S., 346

Lenin V., 345
Lukashin S., 346, 347

Myasnikyan Al., 347

Stalin, 347

Trotsky, 346, 347

Zinoviev, 346, 347

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԷՈՒԹՅԱՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. Մենիշխանության առաջացման պատմաքաղաքական նախադրյալները 12

2. Պրոլետարիատի՞, թե՞ կուսակցության դիկտատուրա .. 23

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐ

1. Ռուսաստանի և Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկությունները 45

2. Հեղկոմների և խորհուրդների՝ որպես իշխանության ձևերի բնույթի ու բովանդակության հարցերը 59

3. Կոալիցիոն իշխանության հարցը Ռուսաստանում և Հայաստանում 68

4. Վերաբերմունքը մամուլի և մշակույթի ազատության հարցերում 83

5. Կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների հարաբերությունները միակուսակցական կառավարման համակարգի հաստատման ճանապարհին 92

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1. Ընտրական համակարգի ձևավորումը 105

2. Ընտրական գործընթացները 130
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ
1. Նոմենկլատուրայի առաջացման նախադրյալները և առաջին քայլերը 174
2. Հարվածային փայեր ու արտոնություններ: Կուսակցական և անկուսակցական պատասխանատու աշխատողներ 193
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
1. Ձևավորման գործընթացը: Նոմենկլատուրայի մակարդակները 220
2. Նոմենկլատուրայի ճյուղային կառուցվածքը 229
3. Գավառային նոմենկլատուրա 238
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ: ԽՄԲԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԸ
1. Պետական իշխանության թևերի սահմանազատման հարցը 252
2. Խմբակայնությունը, ընդդիմությունը և ներկուսակցական բանավեճերը 281
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 334
РЕЗЮМЕ 336
SUMMARY 343
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 349
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 358

ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-ԱԿԱՆ ԹԹ.)

АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН

СТАНОВЛЕНИЕ ОДНОПАРТИЙНОГО РЕЖИМА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920-е ГОДЫ)

ARARAT MKHITAR HAKOBYAN

ESTABLISHMENT OF ONE-PARTY REGIME IN SOVIET ARMENIA (1920'S)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 22.04.2016 թ.
Տպաքանակը՝ 120 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[3500 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0450032

Б
102448